

ՄԵՏԱՐԱՆԻ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ
Գ - ՅԻՄՈՒՐ ԽՈՍԵՓԻՐ



ԱՒԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Գ

ՅԻՄՈՒԿ ԲՐԻՍՏՈՒԻ ԽՍՈՒԵՐՈՐ

ՎԱՀԷՆ ԵՎ ՍՎԱԾԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ
ՄԻ
2020

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivacian

sivacian@sympatico.ca

**Ազատ զգացեք ձեր շրջանակին դրկել, բազմացնել,
տպել ու բաժնել ձրիաբար:**

**Գրութիւնը որեւէ փոփոխութեան ենթարկել կամ
տպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիլուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

15 – 2200 Markham Rd. Scarborough ON M1B2W4
Tel : 416-292-9394

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9 AM – 5 PM

ՆԱԽՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս 'ի Լուսոյ (Ա)	2013
Լոյս 'ի Լուսոյ «Բ» - Ջարթօնք	2015
Լոյս 'ի Լուսոյ «Գ» - Տիեզերական Օրէնքները	2017
Խոկում	2017
Աւետարանի խորհուրդները - հատոր Ա. Յիսուսի կեանքէն դրուագներ	2018
Աւետարանի խորհուրդները - հատոր Բ. Յիսուսի առակները	2018
Աւետարանի խորհուրդները - հատոր Գ. Յիսուս Քրիստոսի խօսքերը	2020
Խորհրդածութիւններ	2019
ՈՏԱՆԱԲՈՐՆԵՐՈՒ ՀԱԲԱՔԱԾՈՅ Կենցաղալոյս	2014
Կենցաղալոյս (Ա, Բ, Գ)	2019

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Աւետարանի խորհուրդները - հատոր Դ.
Յովհաննու և Թովմասի Աւետարանները 2020-21

Հեղինակին բոլոր հրատակութիւնները
մատչելի են առցանցային դրութեամբ:

Ձանոնք ներբերման հասցէ.

<http://www.luysilusoc.ca>

Հեղինակին ե-փոստի հասցէն.

sivacian@sympatico.ca



ՀՆՈՐՀԱԿԱՎՈՒԹԻՒՆ

Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս նաեւ երախտագիտութեան զգացումները կը յայտնեմ, այս աշխատանքի պատրաստութեան ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով եւ թելադրութիւններով գործս դիւրացնող մի քանի բարեկամներու:

Աղօթարար եմ որ Աստուած իրենց պարգեւէ առողջութիւն եւ արեւշատութիւն:

*

Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ բոլոր անոնց, որոնք գիրքիս մէջ գործածուած լուսանկարները հայթայթած են:

Աղօթարար եմ,

որ Աստուծոյ օրհնութիւնները անոնցմէ անպակաս ըլլայ:



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

*Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
նաեւ եկեղեցական ժամերգութիւններէ
մէջբերումները աւնուած են
հետեւեալ աղբիւրներէ.*

ԱՍՏՈՒՎՈՒՄ ԵՎ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ

ԸՍՏ

**ՃՇՊԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՊՏԵԱՅ ՄԵՐՈՑ Ի ՀԵՎԵՆԿԱՎԱՆ
ՀԱՄԱՏԱՐՄԱՌՅՆ ԲԱՊԻԷ Ի ՀԱՅԿԱՎԱ ՔԱՐԵԱՌ
1805 Ի ՎԵՆԵՏԻԿ ՈՒՄԾԻ
Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԵՐՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ**



ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԱՍՏՈՒՎՈՒՄ ԵՎ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԱՀԱՅՅԵՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ



ԱՂՕԹԱՐԱՏԵԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ

**ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆԸ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆԸ
ՇԱՐԱԿԱՆԸ
ԱՂՕԹԸ
ՏԱՂԸ
ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱՆԳՈՒՇԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ
1929**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ «Ա»

- Էջ
- 3- Հեղինակին Հրատարակումները
- 4- Շնորհակալումին
- 5- Ծանօթումին
- 6- Բովանդակումին «Ա»
- 10- Բովանդակումին «Բ»
- 10- - Մատթեոսի Աւետարան
- 11- - Մարկոսի և Յովհաննու Աւետարաններ
- 12- - Ղուկասի Աւետարան
- 13- Կենսագրական
- 14- Ծնողացս
- 15- Ձօն Ատային
- 16- - Մայր մը «Բ» - ոտանաւոր
- 17- - Յառաջաբան
- 34- - Աստիճանաւոր - ոտանաւոր
- 35- Ա - Յիսուս Քրիստոսի Խօսքերը
- 37- - Յիսուսի Փորձումները
- 40- - Ապաշխարումին և Արքայութիւն Երկնից
- 44- - Լէրան Քարոզը և Հշմարիտ Երանումները
- 51- - Տխրութեան և Երջանկութեան Միջոցները
- 54- - Աշխարհի Ազը և Լոյսը
- 56- - Օրէնքը և Արդարութիւնը
- 58- - Բարկութեան Մէղքը
- 61- - Շտովեան մեղքը և
- 62- - Ամուսնալուծում
- 64- - Երդումի Մասին
- 65- - Վրէժխնդրութեան մասին
- 66- - Թշնամիները սիրել
- 68- - Ողորմութեան մասին
- 70- - Հշմարիտ Աղօթքը - Տէրունական աղօթքը
- 76- - Ծոմնապաշտութեան Մասին
- 81- - Երկնային Գանձեր
- 82- - Մարմնին Հրազը
- 84- - Երկու Տիրոջ Ծառայել
- 85- - Աստուծոյ Խնամակալութիւնը
- 96- - Դասելու Մասին
- 98- - Թագոն և Սուրբ Գիտումին
- 99- - Խնդրել ու Ստանալ
- 103- - Լսել Աստուծոյ Խօսքը ու Կիրարկել

- 105- - Ծառը եւ Իր Պտուղը
- 108- - Հշմարիտ Հաւատքը
- 111- - Մեռելները Թաղէն Մեռելները
- 112- - Ո՛վ է Մայր եւ Ո՛վ է Եղբայր
- 113- - Հաւատքին Որակը
- 115- - Ո՛վ է Հայրը եւ Ո՛վ է Որդին
- 117- - Ի՞նչ է Մեր Սորվելիքը
- 119- - Յիսուսի Պատուէրները
- 123- - Որմէ՞ Վախնալ
- 126- - Հատուցում
- 128- - Զօրութիւնը եւ Անարգանքը
- 132- - Սերը եւ Մեղքը
- 133- - Սուրբ Օրուան Հարցը
- 135- - Բաժանումը Աւերում է - Աններեղի Մեղքը
- 138- - Աններեղի Մեղքը
- 141- - Մեղքին Բազմանալը
- 143- - Առակներուն Նպատակը
- 144- - Հին եւ Նոր Հշմարտութիւններ
- 146- - Աստուածային Պատուիրան թէ Աւանդութիւն
- 148- - Ի՞նչ Բան Մարդը կը Պղծէ
- 151- - Հաւատքի եւ Հպարտութեան Փորձութիւնը
- 154- - Յիսուսի Էութիւնը
- 157- - Փրկութեան Միջոցը
- 163- - Հաւատքին Զօրութիւնը
- 168- - Ո՛վ է Մեծը
- 171- - Գայթակղութեան Մեղքը
- 176- - «Եղբօր» Մեղքը
- 178- - Ամուսնութիւն եւ Ամուսնալուծման Մասին
- 181- - Ինչպէս Արժանանալ Յափտենական Կեանքին-Ա
- 188- - Տուրքի Հարցը
- 190- - Ի՞նչ է Յարութիւնը
- 193- - Ինչպէս Արժանանալ Յափտենական Կեանքին-Բ
- 194- - Ո՛վ է Քրիստոս
- 196- - Ո՛վ Վարդապետ է եւ Ո՛վ Հայր է
- 198- - Կեղծագործութեան Դատապարտութիւնը
- 209- - Տաճարին Աւերումը
- 210- - Տառապանքներ եւ Հալածանքներ
- 213- - Աւերումներ եւ Քրիստոսի Յայտնութիւնը
- 218- - Ժամանակը Հասկնալ
- 220- - Ոչ Ոք Գիտէ Օրն ու Ժամը
- 223- - Վերջին Դատաստանը
- 227- - Խաղաղութիւն թէ՛ Սուր ու Բաժանում
եւ Աշակերտ Ըլլալու Գինը

- 234- - Հակարակորդին Հեռ Համաձայնիլ
236- - Մեղքերուն Հատուցումը
238- - Նեղ Դուռը - Կատարելութեան Ուղին
241- - Բուժել Շաբաթ Օրով
242- - Խոնհարութիւն եւ Հիւրասիրութիւն
244- - Մարդը Աշխարհին Աղը
245- - Նիւթապաշտ թէ՛ Աստուածապաշտ
247- - Ծառայի մը Պարտականութիւնը
 եւ Կատարելութեան Ուղին
253- - Ընդունակ Անօթներ
256- - Մարդ Ինչո՞ւ Կ'անտեսէ Հոգեկանը
257- - Տաճարին Պղծումը
260- - Հիանդութիւնները եւ Մեղքը
261- - Քրիստոսը Դաւանիլ
263- - Պարտականութիւն ու Խնամակալութիւն
268- - Հրեշտակները Աստուծոյ Չօրութիւնը
269- - Տաճարը Քակել ու Վերականգնել
270- - Վերափն Ծնունդը
279- - Յիսուս եւ Սամարացի Կինը
287- - Որդիին Հեղինակութիւնը
291- - Յիսուս Քրիստոսի Վայցոյթիւնը
296- - Հայր Աստուծոյ Կամօքը
 եւ Քրիստոս Կեանքի Հայրը
306- - Յիսուս կը Քարոզէ Հայր Աստուծոյ Փառքը
308- - Յիսուս Քրիստոսն է Մեսիան
309- - Կենարար Ջուրի Գետեր
310- - Դատել թէ Չդատել
311- - Քրիստոս Աշխարհի Լոյսը
313- - Ըլլալ Վարէն թէ Վերէն
316- - Ըլլալ Ազատ թէ Գերի
323- - Աստուած Տեսնել ու Հանչնալ
326- - Հոգեկան Կուրութիւն
329- - Քրիստոս Բարի Հովիւր
333- - Իմաստութեան Լոյսը եւ Խաւարամտութիւնը
334- - Մարդուն Անձը՝ Յորենի Հատիկը
337- - Յիսուս Քրիստոս «Լոյսին» Յայանութիւնը
340- - Մարդ Ինչի Կարեւորութիւն կու Տայ
 եւ Ինչ Բան Կ'անտեսէ
343- - Յիսուսի ՏուածՆոր Պատկերանը
344- - Աստուծոյ Տան Բնակարանները
351- - Քրիստոս «Դուռը» Ս. Հոգիի Չօրութեան
358- - Հշմարիտ Որթատունկը
367- - Աշխարհի Ատելութիւնը

- 371- - Ս. Հոգիին Գործը և Տիրութիւն ու Ուրախութիւն
378- - Աշխարհի Վրայ Յաղթութիւն
381- - Յիսուսի Աղօթքը
- 386- - Կանթեղը - ոտանաւոր
- 387- - Վերջաբան և Խորհրդածութիւններ
387- Ի՞նչ է Քրիստոնէութիւնը
397- Ի՞նչ է Կրօնքը և Ի՞նչ Պէտք է Ըլլայ
403- Բ - Յաւերածական
405- - Վազգէն Ա. Կաթողիկոսի Պատգամները
407- - Գարեգին Խաչատուրեան Պատրիարքի Խօսքը
408- - Աստուծոյ Ծառայելը
409- - Կոմիտասի Խօսքը Մանկիկ Վաճառքին
411- - Մաշտոան Կարօտը - ոտանաւոր
412- - Երկուորեակ Սաղմերը
414- - Խորհուրդներ Տալայ Լամայէն - Ա
416- - Խորհուրդներ Տալայ Լամայէն - Բ
417- - Մեղուն և Հանճը
420- - Միութեան Օրէնքը
424- - Ծաղկազարդի Խորհուրդին Ընդմէջէն
429- - Կու Գան ու Կ'երթան - ոտանաւոր
431- - Մարդը և Իր Անշատականութիւնը
432- - 24 Պատկերազարդ Խորհրդածութիւններ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ «Բ»

ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐ

Մասթէնս		Մասթէնս	
Գլուխ եւ Հասար	Էջ	Գլուխ եւ Հասար	Էջ
Դ :4,7,10	37	ԺԲ :33-37	106
Դ :17	40	ԺԲ :48-50	233
Ե :3-12	44	ԺԳ :10-12,35	143
Ե :13-16	246,54	ԺԳ :51-52	144
Ե :17-20	56	ԺԵ :1-9	146
Ե :21-26	58	ԺԵ :10-20	148
Ե :25-26	234	ԺԵ :22,25-28	151
Ե :27-30	61	ԺԶ :2-3	218
Ե :31-32	62	ԺԶ :6	153
Ե :33-37	64	ԺԶ :13-20	154
Ե :38-42	65	ԺԶ :22-28	157
Ե :43-48	66	ԺԷ :19-20	163
Զ :1-4	68	ԺԸ :1-5	168
Զ :5-15	70	ԺԸ :6-9	171
Զ :16-18	76	ԺԸ :15-20	176
Զ :19-21	81	ԺԸ :21-22	174
Զ :22-23	82	ԺԹ :3-12	178
Զ :24	84	ԺԹ :9	62
Զ :25-34	85	ԺԹ :13-15	248,168
Է :1-5	96	ԺԹ :16-26,29-30	181
Է :6	98	Ի :16	181
Է :7-12	99	Ի :25-28	168
Է :13-14	238,103	ԻԲ :19-22	188
Է :15-19	105	ԻԲ :23-33	190
Է :21-23	238	ԻԲ :34-39	193
Ը :22	111	ԻԲ :40	193
Թ :4-5	260	ԻԲ :41-46	194
Թ :13	117	ԻԳ :8-12	196
Թ :14-17	78	ԻԳ :13-28	198
Ժ :5-14,16	119	ԻԳ :29-36	205
Ժ :24-25	108	ԻԴ :1-2	209
Ժ :26-31	123	ԻԴ :3-14	210
Ժ :32-33	261	ԻԴ :15-28	213
Ժ :34-39	227	ԻԴ :29-31	216
Ժ :40-42	126	ԻԴ :32-35	218
ԺԱ :1-8	133	ԻԴ :36-44	220
ԺԱ :12-19	245,128	ԻԵ :31-46	223
ԺԱ :25-32	263		
ԺԱ :43-45	141		
ԺԲ :7-8	133,255		
ԺԲ :10-14	133		
ԺԲ :25-30	135		

Մարտոս

Գլուխ եւ Հասար	Էջ
Ա :15,17	250
Բ :17,21-22	253
Բ :18-22	78
Բ :27-38	255
Գ :1-6	133, 255
Գ :28-29	138
Գ :32-35	233
Դ :10-12	143
Է :1-3	146
Է :14-23	148
Է :24-30	151
Ը :12	256
Ը :14-21	153
Ը :27-30	154
Ը :31-39	157
Թ :13-28	163
Թ :32-36	168
Թ :38-40	167
Թ :40	126
Թ :41-47	171
Թ :49	54, 244
Ժ :1-12	178
Ժ :11-12	62
Ժ :15	181
Ժ :13-16	188, 248
Ժ :17-31	181
Ժ :35-45	168
ԺԱ :17	257
ԺԲ :13-17	188
ԺԲ :18-27	190
ԺԲ :28-34	193
ԺԲ :35-37	194
ԺԲ :38-39	196
ԺԲ :40	198
ԺԳ :1-2	209
ԺԳ :3-13	211
ԺԳ :24-27	216
ԺԳ :28-31	218
ԺԳ :32-37	220
ԺԴ :38	258

Յովազանես

Գլուխ եւ Հասար	Էջ
Ա :51	268
Բ :18-19	269
Գ :1-21	270
Դ :6-38	279
Ե :19-29	287
Ե :30-47	291
Զ :40	94
Զ :25-66	296
Է :16-24	306
Է :28-29,33-34	308
Է :37-39	309
Ը :7,10-11	310
Ը :12-19	311
Ը :21-29	313
Ը :30-47	316
Ը :51,54-58	323
Թ :35-41	326
Ժ :24-30,33-38	329
ԺԱ :9-10	333
ԺԲ :23-26	334
ԺԲ :27-36	337
ԺԲ :37-50	340
ԺԳ :34-35	343
ԺԴ :1-14	344
ԺԴ :15-31	351
ԺԵ :1-17	358
ԺԵ :18-27	367
ԺԶ :1-4	369
ԺԶ :5-16,20-24	371
ԺԶ :25-33	378
ԺԷ :1-26	381



ՂՈՒԿԱՍ	
Գլուխ ԵՒ Հասար	Էջ
Դ :4,8,12	37
Ե :33-39	78
Զ :5-11	133
Զ :20-23	44
Զ :24-31	51
Զ :29-30	65
Զ :26-28,32-36	64
Զ :37-48,41-42	96
Զ :39-40	108
Զ :43-45	106
Զ :46-47	110
Է :9	113
Է :24-35	128
Է :47-48	132
Ը :9-12	143
Ը :21	112
Թ :18-21	154
Թ :22-27	157
Թ :37-44	163
Թ :46-48	168
Ժ :21-22	115,263
Ժ :25-28	193
ԺԱ :2-4	70
ԺԱ :9-13	99
ԺԱ :23	135
ԺԱ :24-26	141
ԺԱ :34-36	82
ԺԱ :44	193,196
ԺԱ :47-51	205
ԺԲ :1-3	207
ԺԲ :4-7	123
ԺԲ :8-9	261
ԺԲ :22-31	85
ԺԲ :33-34	81
ԺԲ :54-56	218
ԺԲ :57-59	234
ԺԳ :1-5	236
ԺԳ :24	103
ԺԳ :22-30	238
ԺԴ :1-6	241
ԺԴ :7-14	242
ԺԴ :26	180
ԺԴ :25-33	227
ԺԴ :34-35	54, 244

ՂՈՒԿԱՍ	
Գլուխ ԵՒ Հասար	Էջ
ԺԶ :13	84
ԺԶ :14-17	245
ԺԶ :18	62
ԺԷ :1-4	174
ԺԷ :5-6	113
ԺԷ :7-10	247
ԺԷ :20-21	216
ԺԷ :26-30,34-36	220
ԺԸ :15-17	248
ԺԸ :18-30	181
Ի :20-26	188
Ի :27-40	190
Ի :39-42	198
Ի :41-44	194
Ի :45-46	196
ԻԱ :5-6	209
ԻԱ :7-19	210
ԻԱ :25-28	216
ԻԱ :29-33	218
ԻԱ :34-36	249
ԻԲ :18	365
ԻԲ :24-30	168




ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղոյն Արամեան-Ոննճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ճօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ըստանտօք գաղթած էն Թորոնթօ, Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**-ին վկայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա Հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ճօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ հրատարակած է արդիւնք իր Հետազօտութիւններուն եւ **2007**-ին ալ դասագիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:



Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թագաւոր Եկեղեցոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ: Ուրար կրեւու իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնթ Գաթրիսկի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մին ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննասինդիր բնութիւնը զինք մղած է Հետազօտութեան՝ ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



ՄԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
ԺԻՐԱՅԻ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ



«Դուք աղեղն եղաք, ուրիշ Ձեր ջանքերը իբր սյուրիդ նեճեր
դուրս արձակուեճան:

Աղեղնախորը աւշոխի ճնաքոխ իր թիրախը ԿԵ ՏԵԱՆԷ ԵՒ ԱՂԵՂԸ
ՉՕՐԱՒՈՐ ԿԵՐՊՈՎ ԿԵ ԴՐԿԷ, ՈՐՊՈՒՄԻ ԻՐ ՆԵՏԵ ԱՐԱԳ ԵՒ ՀԵՊՈՒՆ
ԵՐԹԱՅ:

Աղեղնախորի Ձեռքին՝ Ձեր ԴՐԿՈՒՄԸ ՈՐԱՆՈՒԹԵԱՄԸ ԵՂԱՒ
ՈՐԵԱՆ ՈՐ ԱՆ ԱՎՅՈՂ ՆԵՏԵ ԿԵ ՍԻՐԷ, ՆՈՂՆԵԱՆ ԱՂ ՀԱՍՏԱՏ ԱՂԵՂԸ»:

(յարասուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գիրքէն)



1955-2010



**Մյուս աշխատհորհուր չը շօսեմ
վարամեռնիկ կողակիծիմ՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-Ի
անթառամ ՅԻՇԱՏԱԿԻՆ:**





ՄԱՅՐ ՄԸ «Բ»

Մայր մը՝

Աստուծոյ բարձրագոյն ստեղծագործութիւնը:

Մայր մը՝

Աստուծոյ թանկագին նուէրը մանուկներուն:

Մայր մը՝

Անձնուրացութեան օրինակը:

Մայր մը՝

Անուն մը սիրոյ, Հաւատքի եւ վստահութեան:

Մայր մը՝

Որուն ժպիտը ծաղկած բնութեան նման է:

Մայր մը՝

Որուն կաթիլ մը արցունքը դժոխքը կը բերէ:

Մայր մը՝

Երբ ուրախ է, Աստուած ալ ուրախ է:

Մայր մը՝

Երբ տխուր է, Աստուած ալ տխուր է:

Մայր մը՝

Երբ բարկանայ, Աստուած ալ բարկացած է:

Վ. Ս.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա

Այս հատորը նախորդ երկու հատորներուս շարունակութիւնն է: Առաջին հատորը կը ներկայացնէր այն ինչ որ Յիսուս մեզի սորվեցուց իր ապրած կեանքով եւ իր արարքներով: Երկրորդ հատորը Յիսուսի անուղղակի՝ առականերով մեզի սորվեցուցածները կը ներկայացնէր: Այս երրորդ հատորն ալ Յիսուսի ուղղակի՝ իր ըսած խօսքերով, յորդորներով մեզի սորվեցուցածները կը ներկայացնէ: Թէ նախորդ երկու հատորներուս մէջ, ինչպէս նաեւ այս երրորդ հատորին մէջ բազմաթիւ կրկնութիւններ կան: Այդ կրկնութիւնները բոլորն ալ նպատակաւոր են: Աս եւ նման նիւթեր կարդալ եւ գիրքին պարունակութիւնը ըմբռնել, յիշել եւ իւրացնել բաւականի դժուար է, նամանաւանդ երբ մեր միտքերը առաջուց արդէն նախապաշարուած են զանազան հաւատալիքներով:

Ինչպէս նախորդ հատորներուն յառաջաբանին մէջ ալ գրուած էր, Յիսուս Քրիստոս երկու բնոյթ ունէր, թէ՛ մարդկային եւ թէ՛ Աստուածային: Հետեւաբար Ան երբեմն խօսած էր իբր մարդ, եւ երբեմն ալ իբր Աստուած: Այս հատորին մէջ ալ երբ գրուած է. «Յիսուս ըսաւ», կը նշանակէ, թէ Յիսուս մարդն է որ այդ խօսքը ըսած է: Իսկ եթէ գրուած է. «Քրիստոս ըսաւ», կը նշանակէ, թէ Աստուած՝ Քրիստոս Յիսուսի միջոցաւ է որ խօսած է:

Յիսուս նոյնիսկ իր խօսքերով շատ անգամ բացայայտ չէ արտայայտուած եւ իր ըսածները վերացական եւ փոխաբերական իմաստներ ունին:

Բ

Նիւթ մը սորվիլ շատ դիւրին է երբ անձը կ'ընդունի թէ ինք այդ նիւթին մասին ոչինչ գիտէ: Բայց եթէ անձը կը կարծէ, թէ ինք այդ նիւթին մասին ամէն ինչ գիտէ, կամ նուազագոյն այն ինչ որ իրեն պիտոյ է գիտէ, այդ անձին համար, այդ նիւթին նկատմամբ նորութիւններ սորվեցնել շատ դժուար կ'ըլլայ, չըսելու համար անկարելի կ'ըլլայ: Սորվիլ կարելի կ'ըլլայ երբ անձը բաց միտք մը ունի եւ ինք միշտ ճշմարտութիւնը կը փնտռէ:

Ընդհանուր բնութեան մէջ «մագնիսական քաշողութեամբ» մը անոր բոլոր պարունակութիւնը իրար կը յարին եւ մէկ են: Այդ մագնիսական քաշողութիւնը մեր գիտակցութենէն կամ փորձառութենէն կը խուսափի: Եւ այդ Ս. Հոգիի ներկայութիւնն է: Որքան որ այս իրողութեան մէջ ամէն անհատ իր անհատական ծիրը ունի, ան նաեւ մաս եւ բաժինն է ընդհանուրին եւ բնաւ անջատ չէ: Եւ ի՞նչ է անհատականութիւնը եթէ ոչ անպատին մէջի կրկներեւոյթի (mirage) մը, կամ երազի մը նման անցողակի հիւր մը: Անհատը չի հասկնար, թէ իր կեանքը կրկներեւոյթ կամ երազ մըն է եւ գայն ճշմարտութիւն կարծելով կը կեդրոնանայ ամբողջական Ենթակային առարկայացուած անցեալ, ներկայ եւ ապագայի երեւոյթին վրայ, որոնք չնչին եւ ողորմելի գաղափարներ են: Այս հիման վրայ, մարդ իր խաւարամտութեամբ ինքզինք կը սահմանափակէ: Այդ սահմանափակումը պատճառ կ'ըլլայ, որ ինք հետեւեալ երեք «մեղքերը» գործէ:

ա- Աստուած իմ, Դուն ամենուրեք ես, բայց ես Քեզ միայն «հոս» (տաճարին մէջ) կը պաշտեմ:

բ- Աստուած իմ, Դուն ձեւ եւ կերպ չունիս, բայց ես միայն Քու այս կերպդ կը պաշտեմ:

գ- Աստուած իմ, Դուն փառաբանութեան պէտք

չունիս, բայց ես միշտ կ'աղօթեմ եւ Քեզ կը
փառաբանեմ:

Միթէ Յիսուս Քրիստոս ալ նոյնը չըսա՞ւ:

«Ո՛չ ամէնայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր,
մոցէ յարձայո-լեի-ն երկնից, այլ որ ասնէ
պնամս Ըօր իմոյ որ յերկինսն է»: (Մարգէն Է:21)
«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՝ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ
երկինքի թագաւորութիւնը, հասկան՝ որ կը գործադրէ
իմ երկնաւոր Հօրս կամքը»:

«... Ամէն ամէն ասե՛մ լի որ Հասարակայն յիս
պարտա պոր ես գործեմ, ե- նա՛ գործեսցէ ե-
մեծամեծս է՛ս իան պնոյնս գործեսցէ ... »:
(Յովհաննոս ԺԳ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի.
Ան որ կը հաւատայ ինծի, ի՛նք ալ պիտի ընէ այն
գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր
պիտի ընէ, ...»:

*Յիսուս մեզի ներկայացուց եւ սորվեցուց իր
երկնաւոր Հօրը՝ Աստուծոյ կամքը: Ան, այս երկու
համարներով, մեզի նաեւ սորվեցուց ճշմարիտ
պաշտամունքը, եւ ճշմարիտ հաւատքը: Յիսուս չըսաւ
զիս պաշտեցէք, այլ Ան բացայայտ կ'ըսէր, թէ պարտ
ենք մենք ալ իրեն նմանիլ եւ իր ըսածներուն հաւատալ
եւ զանոնք կիրարկել: Հարկ է, որ Յիսուս Քրիստոս
պաշտենք, բայց ճշմարիտ պաշտամունքը իր
սորվեցուցածները գործադրելն է եւ ոչ միայն Տէր Տէր
ըսելը: Պաշտամունքը սրտէն բղխող «անուշուրթիւնն» է:
Աս տարբեր իմացականութիւն մըն է, որ պարզ
իմացականութիւնը զայն չի կրնար հասկնալ, որով-
հետեւ ան ամբողջովին տարբեր ուղղութիւն մըն է:*

*Աստուած գտնելու միջոցը կը կարօտի մարդուն
զգացական, իմացական եւ գործնական կարողութիւն-*

Ներու՛ն միականութեամբ արտայայտութեան: Հետեւաբար մարդուն ստացած «գիտութիւնը» պաշտամունքը ճշգրիտօրէն կատարելը կ'ապահովէ: Աստուած իր մէջ յայտնաբերելու տենչանքը, կ'արտայայտէ իր Աստուծոյ նկատմամբ ունեցած զգացումներուն որակը, որ զինք կը մղէ գործունէութեան, որ կը ցոլացնէ իր կենցաղը եւ ապրելակերպը, որոնք պիտի իրականացնեն այդ տենչանքը: Կարելի է Աստուած «տեսնել» միայն նուիրեալի մը աչքով: Այդ աչքը «հոգեւոր աչքն» է: Նուիրումը ճշմարիտ պաշտամունքն է: Պաշտամունքն ալ վստահութենէ յառաջ կու գայ: Արդեօք ո՞րքան Յիսուսի կը վստահինք: Իսկ եթէ կը վստահինք, պէտք չէ՞ որ մեր կենցաղը այդ վստահութիւնը, հետեւաբար պաշտամունքը ցոլացնէ: Ճշմարիտ հաւատքն ալ պաշտամունքի երեւոյթ մըն է: Հետեւաբար առանց հաւատքի պաշտել անկարելի է: Ուր վստահութիւն կայ, հոն նաեւ համբերութիւն գոյութիւն կ'ունենայ: Հաւատք եւ համբերութիւն անհրաժեշտ են Աստուած գտնելու համար: Իսկ այդ փորձառութիւնը անձին կու տայ իմաստութիւն եւ գիտութիւն տեսնելու եւ ճանչնալու ճշմարտութիւնը: Ընդհանուր առմամբ քիչ մը գիտութիւն կ'աւելցնէ յոխորտանքը, բայց վերոյիշեալ փորձառութեան տուած գիտութիւնը կ'անհետացընէ յոխորտանքը եւ անձին կու տայ գոհունակութիւն, յաջողութիւն, գեղեցկութիւն, առողջութիւն եւ երանութիւն: Մարդուն եւ Աստուծոյ միջեւ միայն մէկ արգելք մը կայ, ան ալ մարդը ինքն է:

Կարելի է քնացող անձ մը արթնցնել, բայց ի՞նչպէս «արթնցնել» անձ մը որ կը կարծէ ու կը պնդէ թէ «արթուն» է:

«...արի որ ննջեսո՞ր, է- կանգնեա՛ց 'ի մեռելոց,
է- լուսաւորեսցէ սքե՛զ Բրիսրոս»: (Եփեսացիս
Ե:14)

« ...Արթը նցիր, դուն որ կը քնանաս եւ կանգնես մեռելներէն ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ»:

Եթէ ուսեալ անձ մը հեզ եւ խոնարհ չէ, կը նշանակէ թէ ան իսկական «ուսեալ» մը չէ: Միայն այն անձը որ յոխորտանք չունի կարող է հեզ եւ խոնարհ ըլլալ: Յոխորտանքը անձը թէ՛ կը խռովեցնէ եւ թէ՛ անկայուն կ'ընէ: Յոխորտանքը եսասիրութիւն կ'արծարծէ եւ անձն ալ իր ճշմարիտ հոռութիւնը կը մոռնայ: Ո՞վ է իր ճշմարիտ հոռութիւնը: Երբ ինք Ջայն «գտնէ», աւելի ճիշդ է ըսել Անոր գոյութեան անդրադառնայ, այն ատեն Աստուած կը «տեսնէ» թէ՛ իր մէջ եւ թէ՛ բոլոր աշխարհին մէջ: Այն ատեն կը հասկնայ, թէ որեւէ բանի վնասել Աստուծոյ «վնասել»՝ Աստուծոյ դէմ անարգանք եւ մեղք է: Ուր եսասիրութիւն կայ հոն նուիրում գոյութիւն չի կրնար ունենալ: Ուր աշխարհիկ ցանկութիւններ կան, հոն պաշտամունք գոյութիւն չի կրնար ունենալ: Ուր ազահոռութիւն կայ, հոն երջանկութիւն գոյութիւն չի կրնար ունենալ:

Դիւրին չէ անձի մէջ հաւատք արծարծել: Հաւատքը իմացականութեամբ կարելի չէ ձեռք ձգել: Իմացականութիւնը կարելի է մեզի հաւատալիքներ տալ (beliefs), բայց ոչ հաւատք (faith): Հաւատքը ուղղակի փորձառական գիտութեան հետեւանքն է: Մեր հասկացողութեան որակը կախեալ է այն անձէն, որ մեզի կը ջանայ սորվեցնել: Անոնք, որոնք իմացականութեամբ կը քարոզեն, կ'ազդեն մեր իմացականութեան վրայ եւ կը կարողանան մեզ հրապուրել, բայց կարճ ժամանակ յետոյ տուեալները կը «չողիանան» եւ կ'անհետանան: Անոնք, որոնք զգացականօրէն կը քարոզեն, կ'ազդեն մեր զգացականութեան վրայ եւ նոյնիսկ մոլորած խաղաղութիւն մը գտած ըլլալու զգացումը կու տան: Դժբախտութիւնը այն է, թէ այս երկու քարոզչութիւններու եղանակներն ալ կարող են մեզի տալ ճշմարտութիւնը գտած ըլլալու գաղափարը: Անոնք մեր միտքե-

ըը զանազան հաւատալիքներով կը գրաւեն, որով միտքերը կը գոցեն ու հոգեւոր ճանապարհին մէջ մեր յառաջացման արգելք կը հանդիսանան: Իսկ Յիսուս քարոզեց իր էութենէն, հետեւաբար իր կեանքին եւ իր քարոզներուն՝ սորվեցուցածներուն ազդեցութիւնն ալ կ'ըլլայ մեր էութեան վրայ, որով կ'ըլլան մնայուն: Խորհիլ եւ գիտնալ իրարմէ շատ տարբեր բաներ են: Յիսուս մեզի սորվեցուց, թէ մեր կեանքին նպատակը Աստուած գտնելն է: Ուրեմն պէտք չէ՞ որ մեր կեանքին մէջ ալ աս ըլլայ մեր էութեան առաջնակարգ փափաքը:

Մարդիկ յաճախ կը ջանան ուժով եւ սուրով ուրիշներուն վրայ տիրապետել: Նման միջոցառումով միայն կարելի է զանոնք նուաճել եւ իրենց կամքը անոնց պարտադրել: Բայց կարելի չ'ըլլար վստահութիւն, հաւատք եւ յարգանք ձեռք ձգել: Իսկ Յիսուսի նման, միայն սէր եւ ողորմածութեամբ վստահութիւն եւ հաւատք կարելի է արծարծել եւ սիրտերը գրաւել: Կարելի է անձեր դրամով հրապուրել եւ սիրաշահիլ, բայց այն անձը, որ Յիսուս Քրիստոսի նման, դրամին կարեւորութիւն չի տար, ի՞նչպէս սիրաշահիլ: Այդ կարելի է միայն սիրով եւ ողորմածութեամբ: «Սիրտ» մը սիրաշահելու համար նման «սիրտի» մը պէտք կայ: Իսկ Աստուած «սիրաշահելու» համար անհրաժեշտ է լրիւ նուիրում:

Յիսուս մեր վարդապետն ու ուսուցիչն է եւ մենք ալ իր աշակերտները: Որպէսզի իր սորվեցուցածները կարողանանք պատշաճ կերպով սորվիլ, պարտ ենք մեր խորհելակերպը փոխել եւ յարմարիլ իր խորհելակերպին: Աշակերտը լաւագոյնս կը սորվի երբ ուսուցչին եւ աշակերտին միտքերը իրարու համապատասխան են: Այն աշակերտը, որ պրպտող միտք մը ունի եւ յաճախ հարցում կը հարցնէ, լաւագոյնս կը սորվի: Ուսուցիչը յաճախ աշակերտը քննութեան կ'ենթարկէ:

Աշակերտը պարտ է միշտ ճշմարտութենէն չհեղիւնոյնիսկ երբ զանազան հրապուրիչ եւ գրաւիչ կացութիւններ զինք փորձութեան մատենն: Ուսուցիչը, աշակերտը այդ քննութիւններուն կ'ենթարկէ, որպէսզի յայտնաբերէ աշակերտին իսկական բնոյթը: Կան անձեր, որոնք արտաքնապէս կարող են իրենց եսասիրութիւնը պահել: Անոնք իրենց «Ես»-երուն այնպէս մը կ'ապուած են, որ ամէն ինչ խեղաթիւրուած կը տեսնեն եւ կարող չեն սխալը ճիշդէն զանազանել: Մարդիկ կը տեսնեն եւ կը դատեն մակերեսայինը եւ զայն առաքինութիւն կը կոչեն: Ինքզինքնին սուտերով կը շրջապատեն: Եթէ նոյնիսկ ճշմարտութիւնը իրենց յայտնուի, զայն չեն ընդունիր եւ զայն սուտ կը համարեն: Անոնք, որոնք աշխարհիկ յարումներ եւ զգացումներ ունին չեն կրնար ճշմարտութիւնը տեսնել: Յիսուսի բոլոր սորվեցուցածները, առանց զանոնք խեղաթիւրելու, պէտք է բացարձակ վստահութեամբ ընդունինք եւ գործադրենք, որովհետեւ Ան ամենագէտ եւ ամենաիմաստ է: Ամէն անձ իր մէջ ունի անհուն կարողութիւններ: Ահա՛, աս էր, որ Յիսուս մեզի կը սորվեցնէր, նաեւ կը սորվեցնէ ինչպէս օգտագործել այդ կարողութիւնները:

«Լինիջի՛վ առնելի՛վ Բանին եւ մի՛ լսելի՛վ միայն
Համարեաջի՛վ յանչինս: Գի եթէ ո՛վ լսող միա՛յն
իցէ Բանին՝ եւ ոչ առնելի նման է նա մարդոյ
որ պշո՛ցեալ Հայեցի՛ր ընդ երեսս իւր՝ որ Ձնանիցին՝
ի Հայելւոջ. զի Հայեցեալ երեսս զին՛վն եւ
զան՛ց արար, եւ անդէն մոռացաւ թէ որպիսի ո՛վ
էր: Իսկ որ յառեալ ՚ի կարարեալ՝ օրէնս ասպոտ-
թեանն Հայեցի եւ ՚ի նմին կացցէ ո՛չ եղե-
նա լսող մոռացութեան, այլ առնելի՛ր Գործոյն:

Նա՛յ յառնելն իրո՞ւմ շրջի երանելի՛: Ելել Ե՛կ
կամիցի կրօնաոր լինել, ե- ո՛չ սանձաճարեացե
պէս- ի-ր այլ պատշտեցո-ցանիցե պիտրոն ի-ր
այնպիսո-յն վայրապա՛ր ե կրօնաորո-շի-նն: Կրօնա-
որո-շոյ ե- ՚ի Ըօրե՛ ա՛յս ե այցելո- լինել որժոյ
ե- այրեաց ՚ի նեղո-շեանց անարա՛յ պահել
պանձն յաշխարհէ՛»: (Թ- ո- ղը Յակոբայ Լ: 22-27)

«Սակայն խօսքը գործադրողներ եղէք, եւ ո՛չ միայն
լսողներ՝ դուք ձեզ խաբելով: Արդարեւ, եթէ մէկը
միայն լսէ խօսքը ու չգործադրէ, կը նմանի մարդու
մը՝ որ հայելիի մէջ կը դիտէ իր բնական երեսը,
որովհետեւ կը դիտէ ինքզինք ու կ'երթայ, եւ խկոյն
կը մոռնայ թէ ի՛նչպէս էր: Բայց ա՛ն որ ակնկառոյց
կը նայի ազատութեան կատարեալ Օրէնքին ու կը
կենայ անոր մէջ,- ո՛չ թէ մոռացկոտ լսող մը ըլլալով,
հապա՛ գործը կատարող մը,- երանելի պիտի ըլլայ իր
ըրածին մէջ: Եթէ մէկը կը կարծէ կրօնասէր ըլլալ ու
չի սանձեր իր լեզուն, այլ կը խաբէ իր սիրտը, անոր
կրօնասիրութիւնը փուճ է: Աստուծոյ եւ Հօրը առջեւ՝
մաքուր եւ անարատ կրօնասիրութիւնը ա՛յ է,- այցելել
որբերուն եւ այրիներուն՝ իրենց սուսականքին մէջ, ու
ինքզինք անբիծ պահել աշխարհէն»:

*Նամանաւանդ հոգեւոր նիւթերու նկատմամբ ան-
կարելի է անձի մը պարզ բառերով հասկացողութիւն
տալ: Անձին համար աւելի բարձր մտակարողութիւն
մը պէտք է, որ այդ բառերուն թազուն իմաստները
յայտնաբերէ: Ասոր կ'ըսեն «հոգեւոր աչքով» տեսնել,
որպէսզի բառերուն բուն իմաստները իրեն համար
հասկնալի ըլլան, ապա թէ ոչ անոնք կ'ըլլան պարզապէս
հաւատալիքներ, որոնք իր կեանքին մէջ որեւէ
օգտակարութիւն չեն ունենար:*

«Բայց դու՛ն՝ մի պո՛ղ կոշե՛լ վարդապետ պի մի ե
Յեր ո-սո-ցիչ... Ե- մի կոշեցի՛ն ո-սո-ցիչ, պի

«...սուրբ յէր Քրիստոսն է» : (Մատթէոս ԻԳ : 8,10)
«բայց դուք Ռաբբի մի՛ կոչուիք՝ վասն զի ձեր
Ուսուցիչը մէկ է՝ այսինքն Քրիստոս : ... Եւ դուք
ուսուցիչներ մի՛ կոչուիք՝ վասն զի ձեր Ուսուցիչը մէկ
է՝ այսինքն Քրիստոս» :

Հետեւաբար նման հայեացքով մը պարտ ենք
մեկնաբանել եւ հասկնալ մեր Վարդապետին՝ Յիսուս
Քրիստոսի սորվեցուցածները : Քրիստոս, Յիսուսի մի-
ջոցաւ, շատ բան սորվեցուց, բայց Քրիստոս ամէն
անհատի ճշմարիտ էութիւնն է եւ նոյնիսկ այսօր մեզի
կը սորվեցնէ, եթէ պատրաստ ենք զինք մտիկ ընել :
Կարելի է մենք զմեզ խաբել, բայց կարելի չէ Քրիստոս
խաբել, հետեւաբար ըստ այնմ խորհինք, խօսինք եւ
գործենք :

«Մի՛ խաբի՛, Աստուած ո՛չ արհամարհի : Զի՛

չոր ինչ սերմանէ մարդ զնոյն եւ անյեացէ՛» :

(Պատգամայիտ .9 :7-8)

«Մի՛ խաբուիք՝ Աստուած չի ծաղրուիր, որովհետեւ ի՛նչ
որ մարդ կը սերմանէ՝ զայն ալ պիտի հնձէ» :

Այս ուղղութեամբ յաջողութեան համար
հետեւեալ եօթ ազդակները կարեւոր են :

ա- Սերտ վճռականութիւն մը անհրաժեշտ է :
Պարտ ենք ընդունիլ կեանքի բոլոր պատահարները
առանց յուսահատելու՝ հոգ չէ թէ անոնք ըլլան հաճելի
կամ տառապալից : Ընդունիլ այլոց մեզի նկատմամբ
զաղափարները, անոնք ըլլան լաւ կամ վատ : Համայն
մարդկութիւնը, ընդհանուր առմամբ, կարելի է երեք
խումբերու բաժնել :

- Անոնք, որոնք որեւէ պատասխանատուութիւն
չեն առներ :

- Անոնք, որոնք պատասխանատուութիւն կ'առ-
նեն, բայց երբ դժուարութիւններու եւ փորձութիւն-
ներու հետ դէմ-առ-դէմ կու գան, կը յուսահատին եւ
չեն յարատեւեր :

- Անոնք, որոնք անխախտելի վճռականութեամբ մը կը յարատեւեն, հակառակ այն բոլոր դժուարութիւններուն որոնց կ'ենթարկուին եւ իրենց ստանձնած պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնը իր ւաւարտին կը հասցնեն: Հետեւաբար մենք ալ պարտ ենք նման վճռականութեամբ մը յարատեւել, մինչեւ որ յաջողինք:

բ- Ճշմարտութեան հասնելու միջոցը հասկնալ եւ որեւէ ջանք ու կարողութիւն չինսայել, մինչեւ որ նպատակակէտին հասնինք:

գ- Վարդապետին՝ Յիսուս Քրիստոսի հանդէպ բացարձակ սէր եւ յարգանք ունենալ եւ Զինք պաշտել: Քրիստոսն է, որ անձին խաւարամտութիւնը պիտի փարատէ:

դ- Անձը պարտ է իր մտային հաւասարակչութեանը պահել առանց ստորադասութեան կամ գերադասութեան զգացումներու եւ առանց որեւէ վախի:

ե- Ինքնագոյնութեամբ անհրաժեշտ է: Անձը պարտ է իր բոլոր խորհուրդները եւ զգացումները զսպել, ինչպէս նաեւ իր ցանկութիւնները, յարումները եւայլն:

զ- Ուտեստեղէնը պէտք է օգտակար ըլլայ թէ՛ մարմնին, թէ՛ մտքին եւ թէ՛ հոգիին համար: Միսը մարմնին օգտակար կրնայ ըլլալ, բայց միտքին եւ հոգիին համար լաւ չէ:

է- Կատարելութեան ուղիէն չչեղիլ:

Կեանքին նպատակը Աստուածայայտնութիւնն է, իսկ մարդուն նպատակն ալ իր կեանքի ընթացքին իր մէջ Աստուածայայտնութիւնը իրականացնելն է: Ահա աս էր, որ մեր անցեալի մեծերը հասկցած, սորված եւ սորվեցուցած էին: Ինչո՞ւ մեր անցեալի մեծերէն Ներսէս Շնորհալիւն, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Տաթեւացին եւ շատ մը ուրիշներ սուրբ կը կոչենք: Իրենք այն ինչ որ սորվեցան՝ հասկցան, մեզի փոխանցե-

ցին մեր Աստուածատուր եկեղեցւոյ միջոցաւ: Իբր օրինակ նկատողութեան առնենք եւ ուսումնասիրենք Ներսէս Շնորհալիի գրած Գիշերային ժամերգութեան մէջի «Առաւօտ լուսոյ» երգին միայն առաջին վեց տուները: Առաջին տունը հետեւեալն է.

«Առաւօտ լուսոյ,

Արեգակն արդար,

Աւ իս լոյս ծագեա»:

Այս բառերով Շնորհալին Աստուծոյ Երրորդութիւնը կը ներկայացնէ եւ մեր կեանքին նպատակը: Երբ «Առաւօտ լուսոյ» բառերը կը կարդանք, շատեր կը կարծեն թէ անոր իմաստը «առտուան լոյսն» է: Երգին մէջ չէ գրուած «Լոյս առաւօտոս», այլ «Առաւօտ լուսոյ»: Առաւօտը օրուան սկիզբն է, հետեւաբար հոս այդ բառը գործածուած է փոխաբերական իմաստով, այսինքն մատնանշելու համար սկիզբ մը: Իսկ ի՞նչի սկիզբը: Լոյսին սկիզբը: Լոյսը զօրութիւն կը ներկայացնէ ինչպէս նաեւ գիտութիւն, հետեւաբար գիտակցութիւն եւ Աւետարանին մէջ գրուած է. «Աստուած Լոյս է»: Հետեւաբար ակնարկը Հայր Աստուծոյ համար է, որ ամէն ինչի սկիզբն է եւ ամէն ինչ իրմէ բղխած: Երկրորդ տողին մէջ կը կարդանք. «Արեգակն արդար»: Արեգակը Աստուծոյ լոյսն է: Այդ բառն ալ հոս փոխաբերական իմաստով գործածուած է: Արեգակը կը ներկայացնէ Աստուծոյ կենսատու զօրութիւնը, այսինքն Ս. Հոգին: Միթէ կենսաբանները (biologists) չե՞ն ըսեր. «Առանց արեւի աշխարհի վրայ կեանք գոյութիւն պիտի չունենար» (տես նաեւ Ա. Հատորին մէջ էջեր 46-50): Արեգակը նաեւ ներկայացուած է իբրեւ արդար: Ճիշդ ասոր համար էր որ Յիսուս մեզի ըսաւ. «Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»: Հետեւաբար ինչ մեղք որ կը գործենք Ս. Հոգիի դէմ, այդ մեղքերուն յառաջ բերած բոլոր արդար հատուցումներուն պիտի

ենթարկուինք: Նման հասկացողութեամբ ամենեւին պէտք չէ դժգոհինք մեր կեանքի անբաղձալի պատահարներուն համար, որովհետեւ մեր կեանքի բոլոր պատահարները՝ լաւ ու վատ, մենք կերտած ենք: Երրորդ տողին մէջ կը կարդանք. «Առ իս Լոյս ծագեալ»: Ս. Հոգիին այդ լոյսը, որ մեր մէջ, ինչպէս նաեւ ընդհանուր ստեղծագործութեան մէջ, ծագած է եւ կը ծագի Որդի Աստուծոյն՝ Քրիստոսն է: Քրիստոս ամէն անհատի «հոգին» էութիւնն է: Բայց մարդ իր խաւարամտութեամբ եւ եսասիրութեամբ կը խափանէ այդ լոյսին իր մէջ եւ իր միջոցաւ լրիւ յայտնութիւնը: Այս տողով Շնորհալին մեզի կը ներկայացնէ նաեւ մեր կեանքին նպատակը, որ է Քրիստոս լրիւ յայտնաբերել մեր մէջ: Աղերսանք մըն է, որ այդ Լոյսը լրիւ ծագի մեր մէջ: Ճիշդ է, թէ Քրիստոսի այդ բարձր գիտակցութեան (Christ consciousness) յափշտակութիւնը Աստուծմէ է, բայց մենք զմեզ պարտ ենք այդ բարձր գիտակցութեան յափշտակուելու արժանի ընել: Միթէ մեր գիտակցութիւնը Աստուծոյ անհուն գիտակցութեան մեր սահմանափակած փոքր մէկ մասնիկը չէ՞: Այդ բարձր գիտակցութեան յափշտակութիւնը Քրիստոսի յայտնութիւնն է անձին մէջ: Ինչպէս մարդ կարող չէ ինքզինք քնացնել, բայց ինքզինք կը պատրաստէ քնանալու, նմանապէս ալ մարդ կարող չէ գիտակցութեան բարձր մակարդակի մը իր յափշտակութիւնը իրականացնել, քանզի այդ Աստուծմէ է, բայց մարդ կարող է ինքզինք այդ յափշտակութեան պատրաստել: Այսինքն մարդ կարող է իր բնոյթը, հետեւաբար իր կենցաղը, փոխելով ինքզինք արժանի ընել այդ բարձր գիտակցութեան: Ինչպէս քունը առանց անձին ջանքերուն անոր գիտակցութիւնը ակնթարթի մը մէջ արթուն մակարդակէն ակելի ցած քունի մակարդակի, կամ քունի մակարդակէն ալ արթուն մակարդակի կը յափշտակէ, նմանապէս

գիտակցութեան մեր արթուն կոչած մակարդակէն շատ աւելի բարձր մակարդակի յափշտակութիւնն ալ կ'ըլլայ ակնթարթի մը մէջ ըստ Աստուծոյ կամ քին:

Երգին երկրորդ տունը հետեւեալն է.

«Բղխումն 'ի Հօրէ,

Բղխեա 'ի Հոգւոյս,

Բան քեզ 'ի Հաճոյս»:

Առաջին տողը «Բղխումն 'ի Հօրէ» դարձեալ կը ներկայացնէ Ս. Հոգին՝ Աստուծոյ զօրութիւնը, որ Հօրմէն բղխած է: Երկրորդ տողը «Բղխեա 'ի Հոգւոյս»-ը աղերսանք մըն է, որ Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւնը մեր մէջ ալ բղխի եւ հոսի: Մեր մէջ ալ Ս. Հոգիի զօրութիւնը մեր ներքին Քրիստոսէն կը բղխի: Միթէ Քրիստոս իր աշակերտներուն չըսա՞ւ. «Ձեզի Ս. Հոգին պիտի ղրկեմ» եւ աշակերտները Պենտեկոստէի օրը Ս. Հոգիի զօրութեան արժանացան եւ իրենց բոլոր էութիւնով ցնցուեցան ու բարձր գիտակցութեան յափըշտակուեցան: Երրորդ տողը «Բան քեզ 'ի Հաճոյս»-ը կը թուի ներկայացնել Աստուած փառաբանելու մեր խօսքերը: Նոյն ատեն այդ տողերը ակնարկ մըն են մեր կենցաղին, որ պէտք է հաճելի ըլլայ Աստուծոյ: Պէտք է մոռնանք թէ խօսքերը յառաջ կուգան խորհուրդներէ եւ տեղի կու տան արարքներու: Հետեւաբար այս տողն ալ խոստում մըն է Աստուծոյ, որ պիտի ջանանք մեր կենցաղը եւ մեր բնոյթը Աստուծոյ հաճելի ընել: Երրորդ տունն է.

«Գանձդ ողորմութեան,

Գանձիդ ծածկելոյ,

Գլտող զիս արա»:

Գանձ բառը գործածելով Շնորհալին կը մատնանըչէ արժէքաւոր գանձի մը ներկայութիւնը: Հարկաւ, այդ Գանձը Քրիստոսի ներկայութիւնն է մեր մէջ: Եւ այդ Գանձը՝ Քրիստոս, ողորմած է եւ ներողամիտ:

Պէտք է մոռնալ, թէ Որդւոյն դէմ գործուած մեղքը ներելի է: Հետեւաբար մեզի կը մնայ միայն այդ մեղքին անդրադառնալ եւ մեր հայեացքը փոխել: Երկրորդ տողը «Գանձիդ ծածկելոյ»-ն ակնարկ մըն է այն իրողութեան թէ Քրիստոսի ներկայութիւնը մեր ցած գիտակցութեան մակարդակին պատճառաւ մեր գիտակցութենէն ծածկուած է եւ նոյնիսկ տեղեակ անգամ չենք, թէ կարողութիւնը ունինք այդ Գանձը՝ Քրիստոս մեր մէջ յայտնաբերել եւ այդ Գանձին շնորհած բարձր գիտակցութեան արժանանալ: Երրորդ տողը դարձեալ աղերսանք մըն է, որ մեզ արժանի ընէ այդ Գանձը գտնելու, այսինքն Քրիստոս մեր մէջ յայտնաբերելու:

Զորրորդ տունը հետեւեալն է.

«Դուռն ողորմութեան,

Դաւանողիս բաց,

Դասեցոյ վերնոցն»:

Առաջին տողը «Դուռն ողորմութեան»-ը ակնարկ մըն է մեր ներքին Քրիստոսի, որ «դուռն» է Ս. Հոգիի զօրութեան հոսքին մեր մէջ: Ս. Հոգիի զօրութիւնը երբ պատշաճ կերպով եւ առատապէս հոսի անձէն ներս, բոլոր Ֆիզիքական եւ մտային հիւանդութիւններ, զգացումներ, յուզումներ կ'անհետանան: Ինչպէս վերել երկրորդ տունին մեկնաբանութեան մէջ յիշուած է, միթէ Քրիստոս չէ՞ որ Ս. Հոգիի զօրութեան հոսքը կ'արտօնէ: Երկրորդ տողը «Դաւանողիս բաց»-ը աղերսանք մըն է, որ Քրիստոս Ս. Հոգիի զօրութեան հոսքին դուռը բանայ: Բայց որպէսզի այդ «դուռը» բացուի անձը պարտ է նախ Քրիստոս դաւանող ըլլայ: Քրիստոս դաւանիլ պարզապէս «ես Յիսուս Քրիստոսի կը հաւատամ» ըսել, բայց միւս կողմէ ալ իր «Ես»-էն եկած բոլոր յորդորներուն համաձայն ապրիլ չէ, այլ ինչպէս Յիսուս մեզի յորդորած էր «Ես»-ը ամբողջովին անտե-

սե լն է: Ապա թէ ոչ ողորմութեան դուռը չի բացուիր եւ յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւնը մեր մէջ չի հոսիր: Ըստ Յիսուսի սորվեցուցածներուն առանց «Շ»-ը անտեսելու յաւիտենական կեանքի արժանանալ կարելի չէ: Այս տունին երրորդ տողը «Դասեցոյ վերնոցն» է: Հոս բացայայտ կ'ըմբռնենք անձին բարձր գիտակցութեան յափշտակուելու գաղափարը: Դարձեալ աղերսանք մըն է, որ դասաւորուինք, այսինքն արժանի ըլլանք աւելի բարձր գիտակցութեան մը, որ ամփոփուած է «վերնոցն» բառին մէջ: Հինգերորդ տունն է.

«Գրեակ միութիւն,

Եղելոց խնամող,

Եւ ինձ ողորմեա»

Վերեւ ներկայացուած առաջին տունին մէջ ինչպէս Աստուծոյ երրորդութիւնը նկարագրուած էր, այս տունին առաջին տողն ալ կը մատնանչէ այդ Երրորդութեան միականութիւնը: Այսինքն երեք ըլլալով հանդերձ Աստուած մէկ է: Հետեւաբար բոլոր ստեղծագործութիւնը Աստուծոյ արտայայտութիւնը ըլլալով նաեւ կը ներկայացնէ միականութիւնը: Երբ այս տողը կ'երգենք պէտք է հասկնալ թէ մեր կարծեցեալ այն բոլոր զանազանութիւնները, որ ընդհանուր առմամբ կը հաւատանք իրարմէ անջատ եւ անկապակից ըլլալ, բոլորն ալ մէկ են եւ նոյն միականութեան զանազան արտայայտութիւններն են: Այս տունին յաջորդ երկու տողերը կը յայտնեն, թէ Աստուած է, որ կը խնամէ բոլոր ստեղծագործութիւնը եւ կը ներկայացնէ մեր աղերսանքը, որ Աստուած մեզի ողորմի եւ մեզ իր խնամքէն չզրկէ: Հարկաւ պէտք է գիտնալ թէ Աստուծոյ խնամքը անընդհատ կը տեղայ բոլորին վրայ՝ թէ բարիներուն եւ թէ չարերուն: Այս կէտը շատ բացայայտ շեշտուած է Աւետարանին մէջ: Բայց մարդն է, որ ինք ինքզինք ընդունակ չ'ընէր Աստուծոյ շնորհներուն:

Վեցերորդ տունը եւ այս մեկնաբանութեան վերջին տունը հետեւեալն է.

«Չարթիր Տէր յօգնել,

Չարթոյ ըզթմրեալս,

Չուարթնոց նմանիլ»:

Այս տունին երեք տողերն ալ մէկական աղերսանքներ են: Մեր ներկայ արթուն կոչած գիտակցութեան մակարդակն ալ իսկութեան մէջ տարբեր «երազի» մակարդակ մըն է եւ իսկական արթնութիւնը վերեւ յիշուած բարձր գիտակցութեան յափշտակուիլն է եւ Յիսուս Քրիստոսի նմանիլն է (Christ consciousness): Աղերսանքը Աստուծոյ օգնութիւնը խնդրելն է, որպէսզի յաջողինք Քրիստոս մեր մէջ յայտնաբերել: Երկրորդ տողը բացայայտ կ'ընէ, թէ մեր գիտակցութեան մակարդակը շատ ցած է, որով մեր ուղեղը թմրած է եւ կարող չենք այդ բարձր գիտակցութեան փորձառութիւնը ունենալ: Աղերսանքը այդ թմրութենէն՝ քունէն, երազէն արթննալու համար է: Այս տունին վերջին տողն ալ կը ներկայացնէ նման զարթօնքի մը հետեւանքը, այսինքն նմանիլ անոնց, որոնք արթնցած են այսինքն նմանիլ Յիսուս Քրիստոսի:

Այս «Առաւօտ Լուսոյ» երգին մնացեալ տուներն ալ բոլորը իրարմէ աւելի հիանալի են: Անոր 36 տուներուն մեկնաբանութիւնը կրնայ տարբեր գիրքի մը նիւթը ըլլալ:

Եթէ եկեղեցիի արարողութիւններէն՝ ժամերգութիւններէն եւ Ս. Պատարագէն այս դասերը պիտի չսորվինք, որպէսզի զանոնք կիրարկենք մեր կեանքերուն մէջ, ի՞նչ օգուտ կ'ունենայ մեզի...:

* * *

Գ

Այս գիրքիս բովանդակութիւնը կը ներկայացնէ իմ այսօրուայ խորհելակերպը, մտածելակերպը: Նկատի ունենալով որ ամէն ինչ հիմնուած է օրուայ փորձառութիւններու վրայ, կարելի է յառաջիկային տարբեր ձեւով ալ արտայայտուիմ:

Այսքան էջերուն մէջ եթէ կան ուշադրութենէ վրիպած սխալներ, ընթերցողին ներողամտութեան կ'ապաւինիմ:

* * *

Դ

Գլուխ Բ - «Յաւելուածական» բաժնի մէջ տեղադրուած գրութիւնները իմս չեն, համացանցէն առնուած եւ իմ կողմէ հայերէնի թարգմանուած գրութիւններ են, որոնց մէկ մասին հեղինակները յայտնի չեն:



Իմաստովիւն Հօր Յիսուս, տո՛ւ ր ինձ իմաստովիւն՝
զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն
ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛՛ վիս.
եւ ողորմեա՛՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

* * *



ԱՍՏԻՃԱՆԱԲՈՐ

Իրականացումները ցանկութեան,
Գաղտնի վայրէն զգայնութեան,
Հաճելի, անձին անհատականութեան,
Կու տան զգացումը **ուրախութեան:**

Մարդու խաղաղութիւնը մտային,
Ներածին բնոյթէն իր հոգիին,
Հաճելի, ընդհանուր էութեան անձին,
Կու տայ **երջանկութիւն** մը ուժգին:

Բայց այն ատեն երբ ինք կը յաջողի
Հաղորդակցիլ Հետ ներքին Քրիստոսի,
Ինք կ'ըլլայ Աստուծոյ Համար Հաճելի
Կը ստանայ **երանութիւն** մը Հիանալի:
Վ.Ս.



- Ա -

ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ԽՕՍՔԵՐԸ



ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԽՕՍՔԵՐԸ ՅԻՄԱՐ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

«...Գրեալ է՝ Բէ ոչ Հացի- միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանի- որ ելանէ՝ ՚ի Բերանոյ Լսարո-ձոյ»: «...Գրեալ է՝ Բէ ոչ փորձեսցես սէր Լսարո-աձ ին»:

«...Երբ յերս իմ սարանայ. սի Գրեալ Տեառն Լսարո-ձոյ ին-մ երկիր պագցես, ե- սնա միայն պաշտեսցես»: (Մարբէնոս Դ:4,7,10)

«Գրուած է. Միայն Հացով չէ որ մարդը պիտի ապրի, Հապա ամէն խօսքով՝ որ կ'ելլէ Աստուծոյ բերանէն»:

«Դարձեալ գրուած է. Մի՛ փորձեր Տէրը՝ քու

Աստուածդ»: «Ետե՛ւս գնա, Սատանայ՛, որովհետեւ

գրուած է. Տէրո՛ջ՝ քու Աստուծոյդ երկրպագէ, ու միայն զի՛նք պաշտէ»:

(Տես նաեւ Ղուկաս Դ:4, 8, 12)

Աւետարանէն առնուած վերեւի մէջբերումին մէջ նկատի առնուելիք երեք կէտեր կան: Անոնցմէ առաջինը մարդուն ապրելու համար անհրաժեշտ եղածներուն մասին է:

Մարդ արարած Ֆիզիքական մարմին մը ունի, որ հողէն շինուած է, այսինքն նիւթէ (matter) կազմուած է, հետեւաբար գոյատեւման համար կը կարօտի նիւթի: Յիսուս այս «նիւթ»-ը մատնանշած է «Հացիւ» բառով: Հացը ամենակենսական ուտեստեղէնն է:

Բայց եւ այնպէս, ըստ Յիսուսի հետեւեալ խօսքին. «այլ ամենայն բանիւ որ ելանէ՝ ՚ի բերանոյ Աստուծոյ», պարտ ենք նկատի առնել նաեւ մարդուն թէ՛ մտային թէ՛ ալ զօրութեան «մարմին»-ները: Այս հիման վրայ, Յիսուսի բոլոր սորվեցողցածները կ'ըլլան սնունդ՝ մեր մտային մարմնին, որպէսզի կերտենք միտք մը, որ կը հնազանդի մեր ներքին Քրիստոսին, քան թէ մեր

«Ես»-ին: Մարդ նման միտքով ինքզինք կը պատրաստէ յաւիտենական կեանքին: Եւ ահա՛, միայն այն ատեն է որ ան ճշմարիտ կեանքը կ'ապրի եւ ոչ թէ իր ստեղծած պատրանքային կեանքը: Թէ ինչ կը վերաբերի անհատին զօրութեան մարմնին, Աստուծոյ բերնէն ելած «բան»-ը (խօսքը) Ս. Հոգիի զօրութիւնն է: Ս. Հոգիի զօրութիւնը մարդուն կենսատու զօրութիւնն է, որ իրեն թէ՛ կեանք, թէ՛ ալ գիտակցութիւն կու տայ: Հետեւաբար երբ մարդուն միտքը կեդրոնացած ըլլայ իր ներքին Քրիստոսի վրայ, անկէ կը ստանայ Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւնը: Քրիստոս «դուռ»-ն է անհատէն ներս Ս. Հոգիի զօրութեան հոսքին: Այսօր նոյնիսկ գիտութիւնը փաստած է, թէ նիւթը յառաջ եկած է զօրութենէն: Հետեւաբար, երբ անհատը կը կարողանայ իր մէջ բարձր որակով Ս. Հոգիի ներգործման, նոյնիսկ իր Ֆիզիքական մարմինը «նիւթ»-ով կերակրելու կարիքը չ'ունենար, որով զօրութիւնը կարող է նիւթի փոխուիլ եւ Ֆիզիքական մարմինը առողջ պահել: Միթէ Յիսուս զօրութիւնը նիւթի փոխելով անգամ մը հինգ հազար, ուրիշ անգամ մըն ալ չորս հազար հոգի չկերակրե՞ց: Յիսուս անապատին մէջ միայն Ս. Հոգիի զօրութեամբ քառասուն օր առողջ չապրեցա՞ւ: Յիսուս այս օրինակներով մեզի ցոյց տուաւ, սորվեցուց զօրութեան նիւթի փոխուիլը: Միթէ բոլոր հիւանդութիւններուն պատճառն ալ մեր մէջ զօրութեան պակասը չէ՞:

Սկիզբի մէջբերումին մէջ նկատի առնուելիք երկրորդ կէտը հետեւեալն է. «Թէ ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո»: Մարդ ի՞նչպէս կրնայ Աստուած փորձել: Մարդ իր ունեցած ուժերը եւ կարողութիւնները՝ Ֆիզիքական, մտային կամ իմացական, երբ կ'օգտագործէ եսասիրութեամբ, հպարտութեամբ, ատելութեամբ ..., գիտակցաբար կամ անգիտակցաբար, կը նկատուի Աստուած փորձել: Պէտք չէ մոռնալ թէ Աստուծոյ կենսատու

գորութիւնն է որ իրեն շնորհած է այդ ուժերը եւ կարողութիւնները: Յիսուս տէր էր շատ մը կարողութիւններու, որ մենք չենք կրնար նոյնիսկ մեր երազներուն մէջ իսկ այդ մակարդակին հասնիլ: Յիսուս այդ կարողութիւնները օգտագործեց ոչ եսասիրութեամբ, ոչ հպարտութեամբ եւ ոչ ալ ատելութեամբ, այլ միայն՝ այլասիրութեամբ եւ ուրիշներու օգտին համար:

Մէջբերումին մէջ նկատի առնուելիք երրորդ կէտն ալ հետեւեալն է. «Երթ յետս իմ սատանայ. զի գրեալ Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, եւ զնա միայն պաշտեսցես»: Յիսուսի այս խօսքին առաջին մասը ցոյց կու տայ, թէ մենք ալ պարտ ենք իրեն նման անտեսել մեր «Ես»-ը՝ սատանան: Յիսուս բազմիցս յորդորած է անտեսել «Ես»-ը, որոնք արձանագրուած են չորս Աւետարաններուն մէջ: Երբ մենք չենք անտեսեր մեր «Ես»-ը եւ կը հետեւինք եւ կ'ազդուինք «Ես»-էն եկած յորդորներուն, ցանկութիւններուն, յուզումներուն, մեր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան եսասիրութեամբ: Մենք ալ, նման կենցաղով մը երկրպագած կ'ըլլանք մեր «Ես»-ին՝ սատանային: Յիսուսի այս խօսքին վերջին մասն ալ ճիշդ աս է, որ կը մատնանշէ՝ երկրպագել ու պաշտել միայն Աստուած եւ չերկրպագել «ուրիշ աստուծոյ» մը՝ մեր «Ես»-ին՝ սատանային, որպէսզի նաեւ զայն պաշտած չըլլանք:



ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԵՐԱՆԻՑ

«...Ապաշխարեցէ՛ք՝ պի մերչեա՛լ է արդայո՞ւթիւն
երկնից» : (Մարթէոս Դ:17)

«Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի թագաւորութիւնը
մօտեցած է»:

Յիսուսի այս կարճ նախադասութեան մէջ կան
երկու յատկանշական կէտեր: Առաջինը «ապաշխարել»-
ն է, իսկ երկրորդը՝ «մերձեա՛լ է արքայութիւն երկնից»-ը:

Նախ վերլուծենք, թէ ի՞նչ է ապաշխարութեան
իմաստը: Ընդհանուր առմամբ մարդիկ կը կարծեն թէ
ապաշխարելը, իրենց գործած մեղքերուն անդրադառ-
նալ, մեղայի գալ եւ խոստանալ դարձեալ նոյն մեղ-
քերը չգործել է: Բայց դժբախտաբար, մարդ իր կեան-
քի ընթացքին, կը շարունակէ մեղք գործել, բազմիցս
անգամ ապաշխարել եւ բազմիցս անգամ ալ եկեղեցի
երթալ ու հաղորդութիւն առնել: Անտարակոյս, ճշմար-
իտ ապաշխարութեան համար որպէս առաջին քայլ,
այդ անդրադարձը շատ կարեւոր է եւ անհրաժեշտ:

Յիսուսի ըսած «ապաշխարել»-ը այդքանով չի
վերջանար: Ապաշխարել բառը կու գայ «աշխարել»
(աշխար[հ]ել) բառէն: «Ապ» նախադաս մասնիկով բառը
կ'ունենայ բոլորովին հակառակ իմաստ մը, ինչպէս
երջանիկին «ապ» նախադաս մասնիկը կցելով կ'ունե-
նանք դժբախտ, տարաբախտ իմաստով ապերջանիկը:
Ուրեմն ապաշխարելուն բուն իմաստը մենք զմեզ
աշխարհիկ հետապնդումներէ ձերբազատելն է: Մարդ
արարած իր «Ես»-ին ազդեցութեան տակ աշխարհի
պատրանքայինին կապուած, ինչպէս նաեւ իր «Ես»-ին
ստեղծած խորհուրդ, զգացում, յուզում եւ ցանկութիւն-
ներուն ենթակայ, կը կարծէ թէ աշխարհը եւ իր
Փրկիչ փական կեանքն են միակ ճշմարտութիւնը: Ըստ
իր կրօնքին տուեալներուն ան յաճախ կը կրկնէ թէ՛
«միակ ճշմարտութիւնը Աստուածն է», բայց ան իր

կենցաղով յայտնի կ'ընէ, թէ ինք իր ըսածին չի հաւատար կամ անոր բուն իմաստը չէ հասկցած: Այս հիման վրայ մարդ ենթակայ «երկուութեան» զանազանութեան գաղափարին, ինքզինք կը տեսնէ ուրիշներէ անջատ: Ահա՛, աս է որ մարդուն մէջ կը յառաջացնէ եսասիրութիւն: Երբ մարդուն անհատականութիւնը կը յարի իր ժխտական բեւեռին՝ իր «Ես»-ին, ինք ալ կ'ըլլայ եսասէր եւ կը գործէ բոլոր մեղքերը որոնք կը ծագին «Ես»-էն: Յիսուսին ըսած ապաշխարելը մարդուն իր ազատ կամքով ընտրելն է իր անհատականութեան դրական բեւեռը եւ ըստ այնմ ապրիլ՝ ըստ Աստուծոյ՝ ներքին Քրիստոսի կամքին: Ինք կ'ըլլայ այլասէր՝ մարդասէր, անձնուէր, ուրիշներու բարօրութեան հոգ տանող, եւ իր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան ըստ Աստուծոյ կամքին: Այս ալ բոլորին բացայայտ կ'ըլլայ անհատին վարած կենցաղէն, որովհետեւ ան այլեւս կը մոռնայ բազմազանութիւնը եւ կը տեսնէ միականութիւնը: Միայն այն ատեն է, որ մարդ կը կարողանայ արժանանալ «երկինք»-ի՝ Աստուծոյ թագաւորութեան: Յիսուս բազմիցս տարբեր բառերով ալ յորդորած է անտեսել «Ես»-ը:

Ինչպէս վերեւ յիշեցինք, Յիսուսի խօսքին երկրորդ յատկանշական կէտը «զի մերձեալ է արքայութիւն երկնից»-ն է: Աշակերտները կարծեցին թէ կարճ ժամանակէ մը յետոյ Քրիստոսի երկրորդ գալուստը պիտի ըլլայ եւ բարիները, ինչպէս նաեւ իրենք եւս, «վեր»՝ երկինք պիտի յափշտակուին: Այդ սպասուած մօտալուտ յափշտակումէն ի վեր երկու հազար տարի անցաւ: Երկինքի թագաւորութեան մօտեցած ըլլալը կարելի է երկու տարբեր անկիւններէ դիտել եւ ըսուածը ըստ այնմ ըմբռնել եւ հասկնալ:

Յիսուս թէ ի՞նչ իմաստով օգտագործած է «մօտեցած է» բառերը, վստահօրէն չենք կրնար ըսել, սակայն

կը կարծենք, թէ «ժամանակ»-ի իմաստով չէ գործածած: Մտորել կը ներկայացնեմ եզրակացութիւն մը, թէ Յիսուս ի՞նչ իմաստով օգտագործած է «մօտեցած է» բառերը:

Վայրկեանի մը համար ենթադրենք թէ Յիսուս այդ բառերը «ժամանակ»-ի իմաստով գործածեց: Ի՞նչպէս կ'ըլլայ որ երկու հազար տարի է եւ տակաւին իր ըսածը չէ իրականացած: Յիսուս իր մէջ յայտնաբերած էր Քրիստոսի՝ Աստուծոյ գիտակցութեան մակարդակը: Այդ անհուն գիտակցութեան համար, ժամանակը գոյութիւն չունի: Որքան գիտակցութեան մակարդակը բարձրանայ, ժամանակն ալ այնքան կամաց կ'ընթանայ: Գիտունները կ'ըսեն թէ աշխարհ միլիոնաւոր տարիներէ ի վեր գոյ է եւ բարեշրջումն ալ կամաց կամաց մինչեւ մարդուն ստեղծագործութեանը հասած է: Մարդուն ուղեղը ստեղծագործութեան մէջ ամենագեղեցիկ եւ ամենակարող գործարանն է: Մարդուն այդ ուղեղային կարողութիւնն է որ մարդուն պիտի տայ բարձր գիտակցութեան մակարդակ եւ զայն արժանի ընէ Աստուծոյ թագաւորութեան: Բայց աւա՛ղ, մարդ տակաւին չէ սորված իր ունեցած ուղեղին բոլոր կարողութիւնները օգտագործել: Որովհետեւ Ֆիզիքական բարեշրջումը աւարտած էր եւ մարդուն կը մնար միայն սորվիլ իր ուղեղը պատշաճ կերպով գործածել, Յիսուս ըսաւ, թէ մօտեցած է Աստուծոյ թագաւորութիւնը, այսինքն շատ չէ մնացած: Պէտք չէ մոռնալ թէ ժամանակը Աստուծոյ համար տարբեր կ'ընթանայ, իսկ մեզի համար բոլորովին տարբեր: Աստուծոյ համար անցեալ եւ ապագայ գոյութիւն չունին: Ամէն ինչ ներկային մէջ կ'ըլլայ: Իսկ մեզի համար ճիշդ հակառակը: Միթէ Յիսուս վերջին ընթրիքով անուղղակի չակնարկեց, թէ աստղագիտութեան «Ջրկիրի» շրջանին մարդիկ պիտի հաղորդուին Քրիստոսի հետ (տես Ա.

Հաստը էջեր **101-104**):

Եթէ «մօտեցած է»-ին իմաստը ժամանակի համար չէ, այն ատեն ի՞նչի համար է: Յիսուս այլուր, ուրիշ բառերով ըսած է, թէ Աստուծոյ թագաւորութիւնը չի գար դուրսէն երեւցած բաներով, այլ ան ձեր ներսիդին է: Ուրեմն եթէ Աստուծոյ՝ երկինքի թագաւորութիւնը մեր ներսիդին է, իմաստալից չ'ըլլար նկատել թէ «մօտ»-ը «միջոց»-ի իմաստով ըսուած է եւ ոչ թէ «ժամանակ»-ի: Ան որ մեր ներսիդին է, մեզի ամենէն մօտ բանն է: Հետեւաբար մեզի կը մնայ միայն մեր մտային ուղղութիւնը փոխել եւ անդրադառնալ թէ Աստուծոյ թագաւորութիւնը արդէն մեր մէջն է: Այդ մտային ուղղութեան փոփոխութիւնն ալ, ինչպէս վերեւ գրուած է ճշմարիտ ապաշխարութիւնն է: Փոխանակ մեր միտքերը կեդրոնացած ըլլալու աշխարհիկ շլացուցիչ «սա», «դա (տա)» եւ «նա»-յի վրայ, ան պէտք է կեդրոնացուած ըլլայ ներքին Քրիստոսին վրայ:



ԼԵՐԱՆ ՔԱՐՈՉՈՐ ԵՒ ՃՇԱՐԻՏ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԵՐԸ

«Երանի աղվարաց Ըոգոսով, սի նոցայ է արվայո-բիւն էրկնից» :

«Երանի սգա-որաց, սի նոգա միխիւարեացին» :

«Երանի Հեւոց, սի նոգա Ժառանգեացեն սիւրկեր» :

«Երանի Վարդեւեալ է- Ժարասի իցեն արդարո-բեան, սի նոգա յագեացին» :

«Երանի ողորմաց, սի նոգա ողորմո-բիւն Գրցեն» :

«Երանի այնոցիկ՝ որ սորէ էն սրտի-վ, սի նոգա սլարո-աթ րեացեն» :

«Երանի խաղաղարաց, սի նոգա որդիվ Արո-ժոյ կոչեացին» :

«Երանի որ Հալաթել իցեն վասն արդարո-բեան, սի նոցա է արվայո-բիւն էրկնից: Երանի է Յեւ՝ յորժամ նախարիցեն սլեւ է- Հալաթեացեն, է-ասիցեն սամեանյն Բան շար սլենջ սո-ր՝ վասն իմ: ցեթացել է- ուրախ լերո-վ. սի վարձի Յեր Բաւո-մ էն յերկնա. ...» (Սարբեոսի Ե:3-12)

«Երանի՛ Հոգևով աղքատներուն, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է»:

«Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք պիտի միխիթարուին»:

«Երանի՛ Հեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը»:

«Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան»:

«Երանի՛ ողորմածներուն, վասն զի անոնք ողորմութիւն պիտի գանեն»:

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

«Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, վասն զի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին»:

«Երանի՛ անոնց՝ որ Հալածուած են արդարութեան համար, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է: Երանի՛ է՛ ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը Հալածեն եւ սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր վրայ ինծի համար: Յնձացէք եւ ուրախ եղէք, վասն զի ձեր վարձքը շատ է երկինքը. ...»:

(Տես նաեւ Ղուկաս 9:20-23)

Յիսուս լեբրան քարոզին մէջ երանելի կոչեց բոլոր անոնք, որոնք վերոյիշեալ յատկութիւնները ունէին: Այն անձը որ երանելի է, կը նշանակէ թէ ինք երանութեան մէջ է: Իսկ միայն անոնք, որոնք յաւիտենական կեանքին արժանացած Աստուծոյ թագաւորութեան մէջըն են, կրնան երանութեան փորձառութիւնը ունենալ: Հետեւաբար Յիսուս «լեբրան քարոզ»-ի այս «երանի»-ներով մեզի կը սորվեցնէ յաւիտենական կեանքը ժառանգելու միջոցը: «Լոյս ի Լուսոյ» գիրքիս մէջ այս երանիներուն բացատրութիւնը տրուած է (էջեր 131-140): Հոս անոնց ամփոփումը եւ մանր չափով աւելի ընդլայնած հասկացողութեամբ մը պիտի ներկայացուի:

«Երանի՛ աղէտոտաց ...»

Մարդ երբ կարող չէ իր առօրեայ պէտքերը հոգալ, ան շատ դիւրութեամբ կը հասկնայ թէ ինք նիւթապէս աղքատ է: Այս աղքատութենէ ազատելու համար ալ չարաչար կ'աշխատի: Բայց մարդ զբաղ աշխարհիկ հետապնդումներով, շատ անգամ լուր անգամ չունի թէ հոգեկան կեանք մը գոյութիւն ունի: Նոյնիսկ անոնք, որոնք հոգեկան կեանքի մասին իմացած են, անոնք ալ նոյն աշխարհիկ հետապնդումներով, անտեղեակ են թէ այդ հոգեկան կեանքին մէջ իրենք «հոգիով աղքատ» են: Այն անձը որ ինքզինք աղքատ չի նկատեր, որեւէ ջանք չ'ըներ որպէսզի այդ աղքատութեան վերջ տայ: Բայց անոնք որոնք կ'անդրադառնան իրենց հոգեկան աղքատութեան, անոնք երանելի են, որով հոգեպէս «հարստա-

նալու» համար ջանք կ'ընեն: Որեւէ ջանք ապարդիւն չի մնար, կը վարձատրուի: Անձն ալ կ'ըլլայ երանելի: Ուրեմն Յիսուսի ըսած «հոգիով աղքատները» անոնք են, որոնք անդարդարձած են իրենց հոգեկան աղքատութեան եւ այդ ուղղութեամբ ալ կ'աշխատին մաքարել «հոգեկան հարստութիւն», այսինքն կը հետապնդեն կատարելութեան ուղին:

«Երանի սգա-որայ ...»

Այն երանելի սգաւորները անոնք են, որոնք գիտեն, թէ յաւիտեանկան կեանքը կորսնցուցած են ու այդ պատճառով ալ սուգ կը բռնեն: Ան որ կը սգայ, նաեւ իր կորուստին համար կու լայ: Եւ այդ լացին յառաջ բերած արցունքը կ'ըլլայ ճշմարիտ ապաշխարութեան արցունքի կաթիլը, որ մարդուն կողմէ, Աստուծոյ տրուած ամենաթանկագին նուէրն է:

«Երանի Հեզոյ ...»

Հպարտութիւնը մահացու մեղքերուն ամենէն վտանգաւորն է, որովհետեւ ան անձին իր «Ես»-ին կապուածութիւնը ցոյց կու տայ: Ինչպէս Յիսուս անպատին մէջ անտեսեց Իր «Ես»-ը՝ սատանան, նոյնպէս մենք ալ պարտ ենք անտեսել մեր «Ես»-ը: Յիսուս բազմիցս յանձնարարած է անտեսել «Ես»-ը: Հեզու-թիւնը եւ խոնարհութիւնը, հպարտութեան հակադրական առաքինութիւններ են, որոնք նշաններ են, թէ անձը կարողացած է իր «Ես»-ը անտեսել: Աշխարհը Աստուծոյ ստեղծագործութիւնն է եւ Աստուած ալ՝ Ինք իր ստեղծագործութեան մէջ ամենուրեք: Այս հիման վրայ աշխարհը մաս կը կազմէ Աստուծոյ «մարմինն»: Հեզ եւ խոնարհն ալ կ'ըլլայ Աստուծոյ ժառանգորդ, հետեւաբար կը ժառանգէ երկիրը, այսինքն մէկ կ'ըլլայ միականութեան հետ եւ կը լուծուի Աստուծոյ մէջ: Միթէ Աւետարանին մէջ գրուած չէ՞. «Նոյն ինքն Հոգին վկայէ Հոգւոյս մերում, եթէ եմք որդիք. ապա եւ

Ժառանգք. Ժառանգք Աստուծոյ՝ եւ ժառանգակիցք
Քրիստոսի»:

«Լրանի խղցելեալ եւ Ժարաւի ...»

Որպէսզի անհատը կարողանայ Քրիստոսի ժառանգակից ըլլալ եւ յաւիտենական կեանքը ժառանգել, պարտ է ինքն ալ այդ փափաքը ունենալ: Այդ փափաքին որակը պարտ է նմանիլ սովահարի մը իր անօթութիւնը եւ անապատին մէջ պապակած մարդու մը իր ծարաւը յագեցնելու փափաքի մակարդակին: Իսկ արդարութիւնը Ս. Հոգիի արդարութիւնն է: Այս հիման վրայ անձն ալ իր կեանքի բոլոր պատահարները՝ լաւ ու վատ, առանց վարանումի կ'ընդունի իբրեւ Աստուծոյ կամքը, որովհետեւ ան Աստուծոյ արդարութիւնը կը ներկայացնէ:

«Լրանի ողորմաշաց ...»

Անոնք, որոնք իրենց կեանքի պարտականութիւնը լիովին կը կատարեն կ'ըլլան երանելի: Եթէ կը հաւատանք, թէ Աստուած իր ստեղծագործութեան մէջ ամենուրեք է, ինչպէս վերեւ գրուած է, ընդհանուր ստեղծագործութիւնն ալ պէտք է ներկայացնէ «Աստուծոյ մարմինը»: Միթէ ամէն մի անհատ ալ իր ընդհանուր մարմնին մէջ ամենուրեք ներկայ չէ՞: Այս հիման վրայ ամէն մի անհատ ստեղծագործութեան մէջ՝ «Աստուծոյ մարմնին» մէջ «բջիջ» մըն է:

Ինչպէս մեր մարմնի ամէն մի բջիջը կը գործէ յօգուտ ամբողջ մարմնին առողջութեան ու գոյատեւման համար, մինչեւ իսկ ինքնագոհ կ'ըլլայ յօգուտ մարմնին: Նմանապէս բոլոր անոնք, որոնք ողորմած են հանդէպ ընդհանուր ստեղծագործութեան եւ ինքնագոհ կը ինամեն բոյս, անասուն եւ ընկերութեան բոլոր կարօտեալ անդամները, կ'ըլլան երանելի: Ահա՛, աս է իմաստը ճշմարիտ նուիրեալին: Ըստ Յիսուսի սորվեցուցածներուն մարդ ինչ որ ցանէ ան ալ կը հնձէ:

Ուրեմն երբ ինք ողորմածութիւն կը «ցանէ», ողորմածութիւն ալ կը «հնձէ»:

«Երանի այնոցիկ՝ որ սո՛ւրբ են սրբի-վ . . .»

Ընդհանուր առմամբ մարդ կը կարծէ թէ «սուրբ սիրտ» ունենալ կը նշանակէ բարի զգացումներ ունենալ: Անտարակոյս բարի զգացումներ ունենալ օգտակար է եւ գնահատելի: Բայց Յիսուսի ըսած «սուրբ սիրտ»-ը խորհուրդներէ եւ զգացումներէ սրբուած միտքն է: (Եբրայերէն լեզուին մէջ «միտք» բառը նշանակող բառ մը գոյութիւն չունի՝ անոնք «սիրտ» բառը կ'օգտագործեն նաեւ իբրեւ «միտք») Միտքը կը գործէ ուղեղի միջոցաւ եւ տեղի կու տայ խորհուրդներու: Երբ միտքը կը գործէ սրտի միջոցաւ տեղի կու տայ զգացումներու եւ յուզումներու: Երբ մարդ կը կարողանայ «սուրբ սիրտ» կերտել իր ներքին Քրիստոսի հետ կը հաղորդակցի, այսինքն «Աստուած կը տեսնէ»: Ամէն գիշեր խորունկ քունի մէջ մարդուն միտքը «սուրբ» է, այսինքն սրբուած բոլոր զգացումներէ, յուզումներէ եւ խորհուրդներէ: Այդ պարագային անհատը կը հաղորդակցի իր ներքին Քրիստոսի հետ եւ Անկէ կը ստանայ յաւելեալ Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը, որով երբ առաւօտուն արթննայ կազդուրուած կ'ըլլայ: Բայց ինք այս բոլորը կ'ընէ այնքան ցած գիտակցութեան մակարդակի մը վրայ, որ ինք այդ բոլորէն անտեղեակ է:

Իսկ Յիսուսի ըսածը՝ «սուրբ սիրտ» ունենալ, կը նշանակէ նոյնը ընել, երբ անձը արթուն կոչուած աւելի բարձր գիտակցութեան տէր է: Երբ անձը ոչ թէ ինչպէս խորունկ քունի մէջ անգիտակցաբար, այլ երբ արթուն է գիտակցաբար «սուրբ սիրտ» կերտէ, կը գիտակցի իր ներքին Քրիստոսի՝ Աստուծոյ հետ իր հաղորդութեան եւ կը «տեսնէ» Աստուած: Այն ատեն այդ անձը կ'ըլլայ երանելի, որով ան կ'ապրի յաւիտենականութեան մէջ: Ճիշդ այս պատճառով ըսուած է. «խորունկ քունը

անգիտակից խոկումն է, իսկ խոկումը՝ գիտակից խորունկ քունը»: «Մուրբ սիրտ» կերտելու համար անձը պարտ է յաճախ աղօթէ: Բայց այս աղօթքը Աստուծո՞ւ է աս ու ան խնդրելը չէ, այլ ան աղօթքին ամենավեճ ձեւը՝ խոկալն է, որ կ'ըլլայ բացարձակ լուռթեան մէջ: Երբ անձը կը յաջողի «սուրբ սիրտ» կերտել, իր գիտակցութիւնը զբաղեցնող ոչ խորհուրդներ, ոչ զգացումներ եւ ոչ ալ յուզումներ գոյութիւն կ'ունենան: Գիտակցութիւնն ալ անզբաղ կը գիտակցի ինք իրեն: Մարդուն գիտակցութիւնը Աստուծոյ գիտակցութեան փոքր մէկ մասնիկն է: Բայց երբ ան կը գիտակցի գիտակցութեան, կ'անդրադառնայ գիտակցութեան անհունութեան եւ կը տեսնէ՝ կը հասկնայ ճշմարտութիւնը եւ նաեւ կը հասկնայ թէ ան ինչ որ առաջուց ճշմարտութիւն կը կարծէր՝ իր առօրեայ աշխարհիկ կեանքը, ան միայն երազ մը, պատրանք մըն է: Իսկ ճշմարտութիւնը Աստուած չէ՞: Միթէ չե՞նք ըսեր միակ ճշմարտութիւնը Աստուածն է: Արդեօք կ'ըսենք, բայց մեր ըսածին մենք չե՞նք հաւատար: Միանգամայն, մեր մէջ գիտակցութեան ներկայութիւնը Աստուծոյ ներկայութիւնը չէ՞: Աստուած միշտ մեր մէջ է, մեզի կը մնայ միայն այդ ճշխարտութեան անդրադառնալ:

«Երանի խաղաղարարաց . . .»

Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞ ըսած. «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ»: Երբ անձը կը յաջողի գիտակցաբար իր ներքին Քրիստոսին հետ հաղորդուիլ, ինք կ'ըլլայ Աստուածայայտնութեան միջոց Յիսուսի նման: Միթէ Յիսուս չէ՞ ըսած. «աշակերտը պէտք է իր վարդապետին նման ըլլայ», ինչպէս նաեւ. «երկնաւոր Հօր նման կատարեալ ըլլայ»: Միայն այն ատեն մարդ կարող է ճշմարիտ խաղաղութիւն արծարծել: Քրիստոսի իր մէջ յայտնութեամբը անձն ալ կը կոչուի Աս-

տուժոյ որդի: Ամէն ինչ՝ ամէն մարդ Աստուծոյ որդի է, բայց միայն անոնք, որոնք կը կարողանան Քրիստոս իրենց մէջ լրիւ յայտնաբերել, անոնք արժանի կ'ըլլան մարդոց կողմէ Աստուծոյ որդի կոչուելու: Յիսուս նաեւ ըսած է. «Համարիք եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր, ո՛չ, ասե՛մ ձեզ, այլ բաժի՛նա»: Յիսուսի այս երկու խօսքերը կը թուին հակասական ըլլալ: Այս երկրորդը աշխարհի տուած խաղաղութիւնն է: Յիսուս Քրիստոս աշխարհիկ խաղաղութիւնը տալու համար չէր եկած: Մարդիկ ընդհանուր առմամբ աշխարհիկ խաղաղութեան մասին կը խորհին: Երանելի է ան, որ կարող է տալու Աստուծոյ խաղաղութիւնը:

«Երանի որ Հալաթել իցեն ...»

Հոգեւոր կեանքի կապակցութեամբ համայն մարդկութիւնը կը թուի դէպի «արեւմուտք» երթալ: Բոլոր անոնք, որոնք կը հետապնդեն կատարելութեան ուղին, չեն հետեւիր մեծամասնութեան ընթացքին: Հետեւաբար կարելի է ըսել թէ անոնք դէպի «արեւելք» կ'երթան, դէպի «արեւ»՝ Աստուածային Լոյսին: Ընդհանուր առմամբ մեծամասնութիւնը միշտ հալածած է փոքրամասնութիւնները, որովհետեւ զանոնք համարած է աւելորդ, ոչ համակերպող, տարբեր՝ հետեւաբար վտանգաւոր: Իսկ ճշմարտութիւնը այն է թէ անոնք կը հետապնդեն արդարութիւնը: Հակառակ հալածանքներուն յառաջ բերած դժբախտութիւններուն, անոնք երանելի են, որովհետեւ անոնք կ'արժանանան երկինքի թագաւորութեան: Հալածանքները ընդունիլ կը նշանակէ նաեւ Աստուծոյ կամքը ընդունիլ ու «պարտքերը» վճարել, այսինքն առաջուց ցանած հունտերուն հունձքերը քաղել եւ անոնց տուած դասերը սորվիլ եւ արժանանալ երկինքի թագաւորութեան:

ՏՆՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ մԻՅՈՋՆԵՐԸ

«Բայց վա՛յ չե՛ս մեծարանցո՛ւ. սի՛ ընկալայ՛ի՛ զմեծի-
Թարո՛ւթիւն չե՛ր: Վա՛յ չե՛ս որ յաճեալսդ է՛ի այ-
ժըմ, սի՛ չաղցիցե՛ի. վա՛յ չե՛ս որ թիժաղի՛իդ այ-
ժըմ, սի՛ աճայցե՛ի եւ լայցե՛ի: Վա՛յ չե՛ս՝ յորժամ
Բարի՛ սահիցեն սչե՛նջ ամենայն մարդիկ, սի՛ ա՛յդ-
պէս առնէին սո՛ւր մարգարեիցն Հարէ՛ նոցա: Այլ
չե՛ս ասեմ որ լսե՛իդ. սիրեցե՛ի՛ զԲշնամիս չե՛ր, Բա-
րի արարե՛ի՛ արեւեաց չե՛րոց: Օրհնեցե՛ի՛ զանիծիշս
չե՛ր. աղ՛ճ արարե՛ի՛ ՚ի վերայ նեղչաց չե՛րոց: Որ
Հարկանէ զթնօր ի՛ն, մարո՛ նմա եւ զմե՛սն. եւ որ
Հանէ ՚ի ի՛ն զԲաճկոն ի՛ն, մի՛ արգելո՛ւր ՚ի նմանէ
եւ զՀապիկս: Ամենայնի՛ որ խնդրե՛ի ի՛ն ի՛ն՝ որո՛ւր,
եւ զոր ինչ Հանէ ո՛ի ՚ի ի՛ն՝ մի՛ պահանջե՛ր: Եւ
որպէս կամի՛ թէ արասցեն չե՛ս մարդիկ, ա՛յնպէս
արասջի՛ եւ դո՛ւ չե՛ս: (Ղո՛ւկա՛ս .Զ:24-31)

«Բայց վա՛յ ձեզի՛ Հարուստներուդ, որովհետեւ ունեցա՛ծ
էք ձեր միսիթարութիւնը: Վա՛յ ձեզի՛ որ կուշտ էք,
որովհետեւ պիտի անօթե՛նաք. վա՛յ ձեզի՛ որ հիմա կը
խնդաք, որովհետեւ պիտի սգաք ու լաք: Վա՛յ ձեզի՛
երբ մարդիկ լաւ խօսին ձեր մասին, որովհետեւ իրենց
Հայրերը ա՛յդպէս կ'ընէին սուտ մարգարէներուն: Բայց
կը յայտարարեմ ձեզի՛ որ մտիկ կ'ընէք. Սիրեցի՛ք ձեր
Թշնամիները, բարի՛ք ըրէք ձեզ ատողներուն, օրհնեցի՛ք
ձեզ անիծողները, աղօթեցի՛ք ձեզ պախարակողներուն
Համար: Եթէ մէկը զարնէ այտիդ, մի՛ւսն ալ մօտեցուր
անոր. եթէ առնէ Հանդերձը քեզմէ, մի՛ արգիլել որ
առնէ բաճկոնդ ալ: Տո՛ւր ամէն մարդու՝ որ քեզմէ
կ'ուզէ, ու քու բաներդ առնողէն մի՛ պահանջեր
զանոնք: Ի՛նչպէս կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի,
նո՛յնպէս ալ դուք ըրէք անոնց»:

Ըստ Աւետարաններու գրութիւններուն, Յիսուսի

խօսքերը ուղղուած են այդ օրուայ հրեաներուն: Բայց պէտք է ըմբռնուի, թէ իր բոլոր խօսքերը միանգամայն ուղղուած են ընդհանուր մարդկութեան եւ ի զօրու են բոլոր ժամանակներու համար:

Վերելի մէջբերումին առաջին մասին մէջ, Յիսուս «վայ» կու տայ բոլոր անոնց, որոնք իրենց նիւթական, իմացական, գիտական կամ այլ հարստութեամբ ինքզինքնին բաւարարուած կը նկատեն: Պետք է հասկնանք թէ այդ հարստութիւնները ժխտական՝ վատ կամ վնասակար բաներ չեն: Ընդհակառակը անոնք Աստուծոյ կողմէ մարդուն տրուած շնորհքներ են: Բայց մարդ երբ իրեն տրուած այդ հարստութեան կը կապուի ու անոնցմով կը հպարտանայ եւ զանոնք միայն եսասիրութեամբ կ'օգտագործէ, Յիսուսի ըսած «վայ»-ին արժանի կ'ըլլայ:

Բայց վերոյիշեալ հարստութիւններէ շատ աւելի կարեւոր է մտային հարստութիւնը: Այսինքն խորհուրդներու զգացումներու եւ յուզումներու հարստութիւնը, որոնք զբաղեցնելով մարդուն միտքը եւ հետեւաբար անձին յայտնաբերած գիտակցութիւնը, չեն արտօներ, որ անձը կարողանայ իր գիտակցութեան մակարդակը բարձրացնելով Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնէ: Այդպիսի անձ մըն ալ Յիսուսին ըսած «վայ»-ին արժանի կ'ըլլայ, որովհետեւ ան իրեն տրուած կեանքը վատնած կ'ըլլայ, փոխանակ զայն օգտագործելու իր կեանքին բուն նպատակը՝ Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնելու համար: Յիսուս նաեւ «վայ» կու տայ անոնց, որոնք ուրիշներու կողմէ կը մեծարուին: Որովհետեւ ան որ մեծարանք կը սպասէ կը նշանակէ թէ հպարտ է: Այս «վայ»-երով Յիսուս եսասիրութեան եւ հպարտութեան դէմ կ'արտայայտուի: Ան նաեւ կը խօսի աշխարհի եւ աշխարհիկ ցանկութիւններու կապուածութեան դէմ: Մարդ «ինչ որ ցանկ ան ալ կը հնձէ»,

ուստի Յիսուս գանոնք դարձեալ կը զգուշացնէ իրենց բռնած ընթացքին իրենց վրայ բերելիք անբաղձալի պատահարներուն համար:

Լերան քարոզին մէջ Յիսուս երանի ըսած էր սգաւորներուն համար, որուն բացատրութիւնը վերել տրուած է: Յիսուս իր այս խօսքով կ'ըսէ, թէ բոլոր անոնք, որոնք «աշխարհին» կապուած են, օր պիտի գայ որ սգան: Ընդհանուր առմամբ իր այս խօսքը առնուած է ժխտական իմաստով՝ իբրեւ պատիժ: Բայց կարելի է նաեւ գայն մեկնաբանել իբրեւ դրական խօսք մը: Գուցէ Յիսուս ուզած է ըսել, թէ օր մը անոնք ալ պիտի անդրադառնան իրենց գործած սխալին եւ իրենց կորսնցուցած յաւիտենական կեանքին համար պիտի սգան: Միթէ ընդհանուր ստեղծագործութիւնը կամաց կամաց չ'ընթանար դէպի լրիւ Աստուածայայտնութիւն: Այս հիման վրայ Յիսուս կը յանձնարարէ ճիշդ կենցաղը:

Մէջբերումին երկրորդ մասին մէջ ալ Յիսուս կը ներկայացնէ կատարելութեան ուղիին համար համապատասխան կենցաղը: Յիսուս ցոյց կու տայ ճշմարիտ նուիրեալի կեանքը՝ չդատել որեւէ մէկը իր գործած նոյնիսկ վատ արարքին համար եւ անոր գործած այդ արարքը ընդունիլ որպէս Աստուծոյ կամքը: Ինչպէս նաեւ անոնց մեզի տուած դժուարութիւններուն եւ ցաւերուն համար որեւէ հակազդեցութիւն ցոյց չտալ: Հետեւաբար Ան կ'ըսէ. «սիրէ քու թշնամիդ»: Յիսուս կը յորդորէ սիրել բոլորը, օգնել բոլորին անխտիր, մէկ խօսքով ըլլալ այլասէր քան թէ եսասէր:



ԱԵՆԱՐԿԻ ԱՊԵ ԵՒ ԼՈՅՍ

«Դուք է՛ք առ երկրի. ե՛րբե առն անճամի՝ ի՞նչ
յառեցի. ո՛չ իմի՛նչ ապրեցե աշխարհիս, թայց
ե՛րբե ընկեանու արքայիս՝ եւ կողան լինել ՚ի մարտ-
կանէ: Դուք է՛ք լոյս աշխարհի. ո՛չ կարե խաղա՛ն
թափշել՝ որ ՚ի վերայ լերին կայցէ: Եւ ո՛չ լոցա-
նէն ճրագ՝ եւ դնէն ընդ Գրոսանաս, այլ ՚ի
վերայ աշխանակի. եւ լո՛յս ցայ ամենեցոն՝ որ ՚ի
ցանն իցեն: Լոյնդէս լոսասորեացե լոյս յեր առա-
ջի մարտկան, որդէս սի ցեպեն սգորթս յեր Բա-
րեա, եւ փասասորեացեն սգայր յեր որ յերկինս
է»: (Մատթէոս Ե:13-16)

«Դո՛ւք էք երկրի աղը. եթէ աղը կորսնցնէ իր համը,
ինք ինչո՞վ պիտի աղուի: Անկէ ետք ո՛չ մէկ
ազգեցութիւն կ'ունենայ, հապա դուրս կը նետուի եւ
կը կորսուտուի մարդոց ոտքին տակ: Դո՛ւք էք աշխարհի
լոյսը. քաղաք մը՝ որ լերան վրայ կը գտնուի, չի
կրնար պահուիլ: Ու ճրագը չեն վառեր եւ դներ
գրուանի տակ, հապա՛ աշտանակի՛ վրայ, որ լուսաւորէ
բոլոր տան մէջ եղողները: Զեր լոյսը ա՛յնպէս թող
փայլի մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը եւ
փառաբանեն ձեր Հայրը՝ որ երկինքն է»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԴ:34-35 եւ Մարկոս Թ:49)

*Յիսուս մարդկու թեան համար կ'ըսէ. «դուք էք
երկրի աղը», որովհետեւ մարդ ստեղծագործութեան
գագաթնակէտը՝ կեանքին «համ»-ն է, որովհետեւ ան
կարողութիւնը ունի իր գիտակցութեան մակարդակը
բարձրացնել մինչեւ Քրիստոսի գիտակցութեան մա-
կարդակը եւ աշխարհը վերածել դրախտի: Մարդու
միջոցաւ է, որ Քրիստոսի «Լոյս»-ը պիտի փայլի աշ-
խարհի վրայ: Իսկ համայն մարդկութիւնը ի՞նչ կ'ընէ:
Քրիստոս իր մէջ ունենալով հանդերձ չ'արտօներ որ
Քրիստոս իր մէջ յարու թիւն առնէ՝ Իր քունէն արթըն-*

նայ ու Աստուծոյ «Լոյս»-ը փայլի եւ իրմով բոլորին տեսանելի ըլլայ: Յիսուս ինք իր մէջ այդ «Լոյս»-ը յայտնաբերելով մեզի ցոյց տուաւ, թէ նման արարք մը մարդու համար կարելի էր իրականացնել: Երբ մարդ իր գիտակցութեամբ այդ բարձր մակարդակին կը հասնի, ինք գիտակից կ'ըլլայ ճշմարտութեան միականութեան եւ այլեւս չի կապուիր աշխարհիկ պատրանքային բազմազանութեան եւ իր «Ես»-ը բոլորովին կ'անտեսէ: Ուստի իր բոլոր խորհուրդ, խօսք ու գործքերն ալ կ'ըլլան ըստ իր ներքին Քրիստոսի կամքին: Հետեւաբար անոնք բոլորն ալ կ'ըլլան «բարի» գործեր: Այդ «Լոյս»-ին յայտնութիւնը Աստուածայայտնութիւնն է անձին մէջ: Աստուածայայտնութեամբ ալ Աստուծոյ փառքը յայտնուած կ'ըլլայ: Ահա՛, աս է մարդուն կեանքին բուն նպատակը: Իսկ մենք տարուած մեր «Ես»-էն, նոյնիսկ չենք գիտեր թէ մեր ճշմարիտ էութիւնը՝ մեր հոգին, ան որ կեանք կու տայ մեր մարմնին եւ գիտակցութիւն՝ մեր միտքին, Քրիստոսի ներկայութիւնն է մեր մէջ: Կան նոյնիսկ յարանուանութիւններ, որոնք Յիսուս Քրիստոս իրենց մէջ կը հրաւիրեն կարծելով թէ Ան դուրսէն պիտի գայ: Քրիստոս Աստուծոյ թագաւորութեան մէջ է եւ ըստ Աւետարանի եւ Յիսուսի խօսքերուն՝ Աստուծոյ թագաւորութիւնն ալ՝ մեր մէջ:

Քրիստոսի Լոյսը մեր բոլորին մէջ վառ է, բայց մենք մեր բռնած ընթացքով եւ վարած կենցաղով, զայն դրած կ'ըլլանք գրուանի մը տակ եւ չենք արտօներ, որ այդ լոյսը յայտնուի: Այդ լոյսը այն գանձն է, որ Յիսուս իր առականերուն մէկուն մէջ ըսաւ: Այդ գանձը արտին մէջ պահուած էր: Արտին տէրը որ չէր գիտեր անոր գոյութիւնը, արտը ծախեց: Իսկ ան որ գիտէր, իր բոլոր ինչքերը ծախեց, որպէսզի կարենայ արտը գնել: Մենք ալ պէտք չէ՞ նոյնը ընենք: Անտեսել աշխարհայինը որպէսզի այդ ներքին «գանձ»-ը՝ Լոյսը գտնենք:

ՕՐԷՆՔԸ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

«Այ՛ն՝ Համարիչ է՞լէ եկի լո՛-ժանել զօրէնս կամ
զմարգարէս • ո՛չ եկի լո՛-ժանել՝ այլ լնո՛ւ: Ամէն
ասեմ յեզ մինչեւ անցցեն երկինչ էւ երկիր,
յո՛րս մի՛ որ նշանախեց մի է, ո՛չ անցե
յօրինացն էւ ՚ի մարգարէից՝ մինչեւ ամենայն
եղիցի: Որ ո՛չ լո՛-ժցե մի ինչ ՚ի պարտաւանացս
յայացանէ ՚ի փոփոսնց, էւ ուսուսցե այնպէս
զմարտիկ, փոփոս կոշեացի յարէայոթեան երկնից:
Իսկ որ արասցէ՛ էւ ուսուսցէ, նա՛ մեծ կոշեացի
յարէայոթեան երկնից: Բայց ասեմ զի է՞լէ ո՛չ
առաւելոցոս արդարութիւն յեր առաւել լան
զդարացն էւ զփարիսեցոց ո՛չ միանիցէ՛լ
յարէայոթեան երկնից» : (Մարգէնս Ե:17-20)

«Այ՛ն՝ կարծէք թէ եկայ՝ աւրելու Օրէնքը կամ Մարգարէ-
ները՝ Եկայ ո՛չ թէ աւրելու, Հապա՛ գործադրելու: Որով-
հետեւ ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի: Մինչեւ որ
երկիրքն ու երկիրը անցնին, Օրէնքէն յովտ մը կամ
նշանագիր մը պիտի չանցնի՝ մինչեւ որ բոլորն ալ կա-
տարուին: Ուրեմն ո՛վ որ այս ամենափոքր պատուիրան-
ներէն մէկը լուծէ եւ մարդոց ա՛յնպէս սորվեցնէ, անիկա
ամենափոքր պիտի կոչուի երկինքի թագաւորութեան
մէջ: Բայց ո՛վ որ գործադրէ ու սորվեցնէ, անիկա մեծ
պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ: Որովհետեւ
կը յայտարարեմ ձեզի: Եթէ ձեր արդարութիւնը չգերա-
զանցէ դպիրներու եւ Փարիսեցիներու արդարութիւնը,
բնա՛ւ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը»:

**Յիսուս Իր այս խօսքերով բացայայտօրէն կը
յայտարարէ, թէ Ինք նոր կրօնք մը չիմանելու նպատակը
չունէր: Իր նպատակը գործադրել էր այն բոլոր օրէնք-
ները, որ առաջուց մարգարէները սորվեցուցած էին:
Այդ օրէնքներն են որ կը կազմեն այն ինչ որ մենք
կրօնք կը կոչենք: Այդ օրէնքները Աստուծոյ դրած**

տիեզերական օրէնքներն են, այսինքն Ս. Հոգիի զօրութեան օրէնքները: Երբ մարդկութեան տարբեր՝ մարդկային օրէնքներով, կրօնք մը կը քարոզուի եւ կ'ուսուցուի, այդ կ'ըլլայ Աստուծոյ կամքին հակառակ: Հետեւաբար անոնք, որոնք այդ փոփոխութիւնները եւ քարոզչութիւնները կ'ընեն կ'ըլլան ամենափոքր Աստուծոյ թագաւորութեան մէջ: Բայց ըստ Յիսուսի, Աստուծոյ թագաւորութիւնը մեր ներսիդին է: Ասոր իմաստը այն է թէ անոնք չեն կարողանար Աստուծոյ թագաւորութեան փորձառութիւնը ունենալ ու կը զրկուին նաեւ անոր շնորհած երանութենէն: Անոնք կը զրկուին այդ երանութենէն, որովհետեւ իրենց ըրածը «արդարութիւն» չէ: Յիսուս օրինակ տուաւ այն օրուայ դպիրները եւ Փարիսեցիները, որոնք բազմապատիկ անպէտ օրէնքներով այլափոխած էին Աբրահամի, Մովսէսի եւ մարգարէներուն սորվեցուցած Աստուածապաշտութիւնը: Եթէ Յիսուս նոր կրօնք մը չքարոզեց, ո՞ր կէ ծագում առաւ Քրիստոնէութիւնը: Ան ծագում առաւ երրորդ հարիւրամեակի սկզբնաւորութեան Կոնստանդիանոս կայսրին հովանաւորութեամբ, ընդհանուր առմամբ յենելով Պօղոսի գրութիւններուն, անոնց ալ մեծամասնութեամբ մակերեսային հասկացողութեամբը, փոխանակ հետեւելու Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղիին: Յիսուս իր աշակերտներուն պատուիրեց կատարելութեան ուղին քարոզել բոլոր աշխարհին եւ ոչ թէ նոր կրօնք մը: Իսկ անոնք, որոնք կը գտնեն իրենց կրօնքին մէջ Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղին եւ զայն կ'ապրին, իրենք որպէս օրինակ, անուղղակիօրէն զայն կը սորվեցնեն հանրութեան: Անոնք մեծ պիտի ըլլան Աստուծոյ թագաւորութեան մէջ, այսինքն փորձառութիւնը պիտի ունենան «միականութեան» եւ Աստուծոյ երանութեան, որով Քրիստոս պիտի յայտնուի անոնցմով:

ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԵՊԸ

«Լոսարոս-է պի սասցաս առաջնոցն. թէ մի՛ սպանաներ. պի որ սպանանիցէ՛ պարտական լիցի դատաստանի: Այլ էս սսեմ էթէ ամենայն որ քարկանայ եղբօր իրոսմ դարատարդոսց, պարտաոր լիցի դատաստանի: Ես որ սսիցէ ցեղբայր իր յիմար, պարտաոր լիցի սրենի: Ես որ սսիցէ ցեղբայր իր մորոս, պարտաոր լիցի ՚ի Գեճէն Հրոյն: Եթէ մարոցանիցէս պարտարագ ին՚ ՚ի վերայ սեղանոյ, էս անդ յիշիցէս՝ էթէ եղբայր ին՚ ոտնիցի ինչ ինչ պէ՛ն, թող պարտարագն ին՚ առաջի սեղանոյն. էս էրթ նախ Հաշրեաց ընդ եղբօր ին՚, էս սողս էկէալ մարոսջիւր պարտարագն ին՚: Լէ՛ր իրաասխոհ ընդ ոտխի ին՚ վաղագոյն, մինչդէտ իցէս ընդ նմա՝ ՚ի Տանապարհի. Գոցէ մարնիցէ պէ՛եզ ոտխն դատաորի, էս դատաորն դաւճի, էս արկանիցիս՝ ՚ի քանոց: Ամէն սսեմ ի՛եզ, ո՛չ էլանիցէս անորի, մինչէս Հարոցանիցէս պյեդին նախարակիցին» : (Մարթէոս Ե : 21-26)

«Լսեր էք թէ ըսուեցաւ նախնիքներուն. Մի՛ սպաններ: Ո՛վ որ սպաննէ, արժանի պիտի ըլլայ դատաստանի: Բայց էս կը յայտարարեմ ձեզի. Ո՛վ որ զուր տեղը բարկանայ իր եղբօր դէմ՝ արժանի պիտի ըլլայ դատաստանի: Ո՛վ որ սպուշ ըսէ իր եղբօր՝ արժանի պիտի ըլլայ ստեանի դատապարտութեան: Ո՛վ որ յիմար ըսէ իր եղբօր՝ արժանի պիտի ըլլայ գեհեմի կրակին: Ուրեմն եթէ քու ընծադ գոհասեղանին վրայ բերես, ու հոն յիշես թէ եղբայրդ բան մը ունի քեզի դէմ, հոն ձգէ ընծադ՝ գոհասեղանին առջեւ. նախ զնա՝ հաշտուէ՛ եղբօրդ հետ, էս անիս ստեմ եկուր՝ որ մատուցանես ընծադ: Ծուստով համաձայնէ քու ոտխիդ հետ, մինչ ճամբան էս անոր հետ՝ որ-

պէսզի Հակառակորդը չյանձնէ քեզ դատաւորին, ու դատաւորը՝ ոստիկանին, եւ բանտը չնետուիս: Ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի: Բնա՛ւ դուրս պիտի չելլես անկէ՝ մինչեւ որ վճարես վերջին նաքարակիտը»:

Յիսուս իր այս խօսքերով կը թուի բարկուլթեան մասին սորվեցնել: Ան նախ բարկուլթիւնը կը նմանցնէ սպանուլթեան ասրելի արարքին եւ զայն կը դնէ նոյն մակարդակի վրայ: Միթէ սպանուլթիւնը ասրելի բարկուլթեան մը յառաջ բերած արարքը չէ՞: Եթէ բարկուլթիւն չըլլայ, սպանուլթիւն ալ գոյուլթիւն պիտի չ'ունենար: Բարկուլթիւնը «Ես»-էն կը ծագի ինչ որ արդիւնքն է դատելու եւ վիրաւորուած ըլլալու գաղափարին: Աս ծագում կ'առնէ այն իրողութենէն, թէ անհատը իրեն կեանքի լաւ կամ վատ պատահարներուն իր ստեղծած ճակատագրին արդիւնքները ըլլալը չէ հասկցած: Հետեւաբար վատ պատահարը կատարողն ալ կը համարէ թշնամի ու կը բարկանայ: Նոյնիսկ ոեւէ մէկը համարել «ապուշ» դատելու, բարկուլթեան եւ եսասիրութեան նշան է: Իսկ եթէ մեր բոլոր կեանքի պատահարները ընդունինք որպէս Աստուծոյ կամքը եւ մեր բոլոր ցանած հունտերուն հունձքերը, արդեօք կարելի է՞ որ բարկանանք ոեւէ անձի մը գործած որեւէ մի արարքին համար:

Ինչպէս Յիսուս իր «Ես»-ը վերջնականապէս խաչին վրայ գոհեց, մեր սեղան բերած գոհն ալ մեր «Ես»-ն է, որ պարտ ենք գոհել: Մարդ կը կարողանայ իր «Ես»-ը գոհել եթէ ինք անոր կապուած չէ: Բայց երբ ուրիշ մը կը դատենք եւ անոր հանդէպ որեւէ ժխտական զգացում մը կ'ունենանք, կը նշանակէ թէ մենք տակաւին մեր «Ես»-ին կապուած ենք: Յիսուս կը յանձնարարէ նախ հաշտուիլ բոլոր անոնց հետ, որոնք դատած ենք եւ ոխ մը ունինք անոնց հանդէպ, բայց ամենէն կարեւորը անձին հաշտուիլն է ինքն իրեն հետ, ինչպէս նաեւ իր անցեալին հետ: Իր խօսքին վերջին մասն ալ ցոյց կու տայ մեր բոլոր ժխտական խորհուրդ, խօսք ու արարք-

Ներուն մեզի տալիք «պատիժ»-ը: Որով անոնք բոլորը մեր ցանած հունտերն են եւ պարտ ենք այդ պարտքերը վճարել՝ հունձքերը քաղել: Միթէ Յիսուս նաեւ չէ՞ ըսած. «Ս. Հոգիի դէմ դործուած մեղքերը աններելի են»: Հետեւաբար մեզի համար շատ աւելի օգտակար պիտի ըլլայ այդ վատ հունտերը չցանել: Այսինքն սկիզբէն չնեղուիլ եւ ամէն ինչի հետ՝ լաւ ու վատ, հաշտուիլ, եւ զանոնք ընդունիլ որպէս Աստուծոյ կամքը, որովհետեւ անոնք բոլորն ալ իսկապէս Աստուծոյ կամքն են:



ՀԱՌԹԵԱՆ ՄԵՊԵՐ ԵՒ ԱՍՈՒՄԱՆՈՒԹՈՒՄ

«Լաւարո՞ւք զի ասացաւ. Մի՛ շնար: Բայց ես՝
ասեմ թէ ամենայն որ Հայր ՚ի կին մարդ առ ՚ի
ցանկանալոյ նմայ, անորէն շնացաւ ընդ նմա ՚ի
որդի իրո՞ւմ: Եթէ ակն չո՞ աջ Բայթագղեցո՞ւ-
ցանէ պէտք, խլեա պնա՞ եւ ընկեա ՚ի չէն. զի
լաւ է չէպէ թէ մի յանդամոց չոց կորիցէ, եւ մի
ամենայն մարմնոր չո անկանիցի ՚ի Գեւեան: Եւ
եթէ աջ յեռն չո Բայթագղեցո՞ւցանէ պէտք, Հայր
պնա՞ եւ ընկեա ՚ի չէն. զի լաւ է չէպէ թէ մի
յանդամոց չոց կորիցէ, եւ մի ամենայն մարմնոր
չո արկանիցի ՚ի Գեւեան»: (Մատթեոս Ե: 27-30)

«Լսեր էք թէ ըսուեցաւ. Շնութիւն մի՛ ընել: Բայց ես
կը յայտարարեմ ձեզի. Ո՛վ որ կը նայի կնոջ մը՝ անոր
ցանկալու Համար, արդէ՛ն անիկա իր սիրտին մէջ շնու-
թիւն ըրած է անոր Հետ: Ուստի եթէ աջ աչքդ կը գայ-
թակղեցնէ քեզ, Հանէ՛ վայն ու նետէ՛ քեզմէ. որովհե-
տեւ աւելի օգտակար է քեզի՛ որ անդամներէդ մէկը կոր-
սուի, բայց ամբողջ մարմինդ չնետուի գեւեանը: Եթէ աջ
ձեռքդ կը գայթակղեցնէ քեզ, կտրէ՛ վայն ու նետէ՛ քեզ-
մէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՛ որ անդամներէդ
մէկը կորսուի, ու ամբողջ մարմինդ չնետուի գեւեանը»:

**Շնութիւնը սեռային հաճոյքներով մտքին նախա-
գըրաւումն է: Երբ միտքը ֆիզիքական հաճոյքները կը
հետապնդէ «սուրբ սիրտ» կերտելու համար ազատ չ'ըլ-
լար: Եւ ահա՛, սա է մեղքը: Ոչ թէ ֆիզիքական սեռային
յարաբերութիւնը ինքնին մեղք է: Ան Աստուծոյ դրած
օրէնքն է եւ Աստուած զայն հաճելի ըրած է, ապա թէ ոչ,
ոչ ոք զաւակ պիտի ունենար եւ բարեշրջումը՝ ստեղծա-
գործութիւնն ալ պիտի դադրէր յառաջանալէ: Սեռային
յարաբերութիւնները անհրաժեշտ են զաւակ ունենալու
համար: Ճիշդ ասոր համար Յիսուս կ'ըսէ, թէ առանց**

արարքին, նոյնիսկ մտային ցանկութիւնը մեղք է: Արարքը մեղք է եթէ անոր նպատակը միայն հաճոյքն է եւ չի ծառայեր ծննդագործութեան նպատակին: Կարելի է, որոշ անձեր ըսեն. «Եթէ արարքը երկու անձերու հաւանութեամբ է, ինչո՞ւ մեղք համարուի»: Սեռային յարաբերութիւնը բարձր որակով զօրութեան վատնում է: Միթէ արարքին վերջաւորութեան անձերը սպառած եւ ուժասպառ չե՞ն զգար: Այդ զօրութիւնը իրենց Ս. Հոգիէն ստացած կենսատու զօրութեան մաս կը կազմէ եւ այդ զօրութիւնը վատնուած կ'ըլլայ մէկ վայրկեանի հաճոյքի մը համար: Իսկ եթէ նպատակը ծննդագործութիւնն է, զօրութիւնը վատնուած չ'ըլլար եւ նոր կեանքի մը աշխարհ մուտքին համար ծառայած կ'ըլլայ: Մարդուն կեանքին նպատակը իր ստացած Ս. Հոգիի զօրութիւնը վատնել չէ, այլ՝ անոր որակը բարցրածն է: Միթէ Յիսուս իր ամբարած զօրութեան այդ բարձր որակը ցոյց չտուա՞ւ իր այլակերպութեան ատեն:

Յետոյ Յիսուս կը յանձնարարէ կտրել ու նետել այն անդամը, որ անձը կը զայթակղեցնէ: Հարկաւ իր այս ըսածը պէտք չէ բառացի իմաստով առնենք: Վստահաբար Յիսուս Քրիստոս ամենեւին պիտի չ'ուզէր, որ անձ մը կուրանայ կամ առանց ձեռքի մնայ: Յիսուսի ըսած կտրել նետելը Ֆիզիքականը չէ, այլ՝ մտայինը: Իսկ եթէ հարցը կը վերաբերի սեռային յարաբերութեան, եթէ անձը կարող չէ գրգռանիլթերուն (hormones) յառաջ բերած ցանկութիւնները կառավարել, իրեն համար աւելի լաւ կ'ըլլայ ներքինի ըլլալ, քան թէ «մեղաւոր»:

ԱՄՈՒՍԱՎՈՒԹՈՒՄ

«Ապովէն ասացաւ, թէ որ արշակեցէ պէին իւր՝
դասցէ նմա պարշականն: Ի՞նչ էս ասեմ յեզ, եթէ
ամենայն որ արշակէ պէին իւր առանց բանի

պոռնկութեան, նա Կայ նմա շնայ. էս որ
պարշակեալն առնէ՝ շնայ» : (Մատթէոս Ե:31-32)
«Նաեւ ըսուեցաւ. Ո՛վ որ արձակէ իր կինը՝ թող տայ
անոր ամուսնալուծումի վկայագիր մը: Բայց ես կը
յայտարարեմ ձեզի. Ո՛վ որ կ'արձակէ իր կինը՝ առանց
պոռնկութեան պատճառի՝ ի՛նք շնութիւն ընել կու տայ
անոր, եւ ո՛վ որ կ'ամուսնանայ արձակուածին հետ՝
շնութիւն կ'ընէ»:

(Տես նաեւ Մատթէոս ԺԹ:9, Գուկաս ԺԶ:18 եւ Մարկոս Ժ:11-12)

Յիսուսին այս խօսքերուն իմաստը բացայայտ է:
Հետեւաբար յաւելեալ բացատրութեան չի կարօտիր:
Միայն բաւ է ըսել թէ ամուսնութիւնը՝ պսակի արարող-
ութիւնը եկեղեցւոյ խորհուրդներէն մին է եւ պէտք չէ
հարեւանցի հասկացողութեամբ եւ որոշումով, ինչպէս
նաեւ զգացական դրդումներով այս սուրբ խորհուրդին
մօտեցուի: Այն ատեն է, որ ամուսնալուծումն ալ ապա-
գայի արարք մը կ'ըլլայ: Ինչպէս Յիսուս կ'ըսէ կայ
բացառիկ պարագայ՝ պոռնկութիւն, այդ պարագային
ամուսնալուծումը անհրաժեշտ կ'ըլլայ: Յիսուս «շնու-
թիւն» բառը օգտագործած է, որովհետեւ արու շուները,
առանց խտրութեան, սեռային յարաբերութիւններ կ'ու-
նենան բազմաթիւ էգ շուներու հետ: Ճիշդ ասոր համար
մարդուն մտային սեռային նախագրաւումը շնութիւն
կոչուած է: Աստուած մարդուն տուած է իմաստութիւն,
ինչպէս նաեւ դատելու եւ զատելու կարողութիւն:
Հետեւաբար անձերը պարտ են իրենց շնորհուած այս
կարողութիւնները օգտագործել եւ ըստ այնմ որոշել
պսակի խորհուրդը ստանալ: Պսակի խորհուրդը
ստանալու համար երկու կողմերն ալ Աստուծոյ խօսք
կու տան մինչեւ մահ իրարու հաւատարիմ ըլլալ:
Ամուսնալուծումն ալ այդ խօստումը դրժելն է:

(Տես նաեւ էջ 178)



ԵՐԴՈՒՄԻ ՄԱՍԻՆ

«Դարձեալ լուսորոտի պի սասայա- սաւաջնոցն. մի՛ երդնոցոս սոսր, Բայց Հարոսպես Տեանն պերդոսնն ին: Այլ ես սսեմ յեպ՝ սմեմե-ին մի երդնու- մի՛ յերկինս՝ պի աթոս- է Ասորո-ժոյ. ե- մի՛ յերկիր՝ պի պարոսանդան է ոգից նորս. ե- մի՛ յերոսասղեմ՝ պի իաղաի է մեժի արվայի: Ե- մի՛ ՚ի Գլոսն ին երդնոցոս, պի ո՛չ կարես մաս մի սպիրակ սառնել՝ կամ Թոսն: Այլ եղիցի յեր Բան, այոն՝ այո, ե- ոչն՝ ո՛չ. պի սեւելն իան ՚ի շարեն է»: (Մարթեոս Ե:33-37)

«Լսեր էք դարձեալ թէ ըսուեցաւ նախնիքներուն. Սուս եր- դում մի՛ ըներ, Հապա Հատուցանէ՛ Տէրոջ ըրած երդումնե- րդ: Բայց ես կը յայտարարեմ ձեզի. Երբեք երդում մի՛ ը- նէք, ո՛չ երկիրքի վրայ՝ որ Աստուծոյ գաՀն է, ո՛չ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատուանդանն է, ո՛չ Երուսա- ղէմի վրայ՝ որ Մեծ Թագաւորին քաղաքն է, ո՛չ ալ գլու- խիդ վրայ երդում ըրէ, որովՀետեւ Հես կրնար մէ՛կ մազ ճերմկցնել կամ սեւցնել: Հապա ձեր խօսքը ըլլայ՝ այո՛ն՝ այո՛, եւ ո՛չը՝ ո՛չ. սակէ սեւիլին յառաջ կու գայ Չարէն»:

Այս խօսքով Յիսուս երդում ընելու դէմ կը խօսի: Այն անձը, որ ընդհանուր առմամբ ճշմարտութիւնը չի խօսիր, դիմացինը համոզելու համար երդում ընելու պէտքը կը զգայ: Յիսուս այս խօսքերով կը յորդորէ միշտ ճշմարտութեան ծառայելը: Երկրորդ դաս մը ես կայ, ան ալ բոլոր ստեղծագործութեան Աստուծոյ ար- տայայտութիւնը ըլլայն է: Միթէ չե՞նք ըսեր. «բոլոր տիեզերքը Աստուծոյ մարմինն է»: Հետեւաբար երբ անձ մը երդում ընէ որեւէ բանի վրայով, միայն Աս- տուծոյ վրայ է որ երդում ըրած կ'ըլլայ: Աստուած ճշմարտութիւնն է: Նամանականդ եթէ ըրած երդումն ալ իրողութիւնը ծածկելու համար ըլլայ, պատիժն ալ մեծ կ'ըլլայ:

ՎՐԷԺԽԱՊՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Լոսարոս-ի պի ասացաւ. ական ընդ ական, Ես
արամն ընդ արաման: Եյլ Ես ասեմ յԵս, մի կալ
Հակառակ շարին: Եյլ Եթէ ո՛վ աթիցէ ասորակ
յաջ թնօր ին՝ դարձո նմա Ես պմեան: Ես որ
կամիցի ո՛վ դարել Ես առնուլ պշատիկս ին, Թող
'ի նա Ես պբաճկոն ին: Ես որ արարարՀակ
վարիցէ պէեպ մոռն մի, Երթ ընդ նմա Ես Եր-
կոս: Որո՞մ խնդրէ 'ի ի՛նչ ցոր. Ես որ կամի
փոխ առնուլ 'ի ի՛նչ՝ մի դարձոցաներ պերեաս»:
(Մարթէոս Ե:38-42)

«Լսեր էք թէ ըսուեցաւ. Աչքի տեղ՝ աչք, եւ ակուայի
տեղ՝ ակուայ: Բայց ես կը յայտարարեմ ձեզի. Չարին մի՛
դիմադրեր. Հապա ո՛վ որ ապտակէ աջ այտիդ, դարձո՛ւր
անոր միւսն ալ: Եթէ մէկը ուզէ դատ վարել քեզի Հետ
ու բաճկոնդ առնել, թո՛ղ տուր անոր Հանդերձդ ալ: Եւ
ո՛վ որ ստիպէ քեզ մղոն մը երթալ, դնա՛ անոր Հետ
երկու մղոն: Տո՛ւր քեզմէ ուզողին, ու երես մի՛
դարձներ անկէ՝ որ կ'ուզէ փոխ առնել քեզմէ»:

(Տես նաեւ Ղուկաս 9:29-30)

*Հին կտակարանին մէջ հրեաներուն ընդհանուր
հասկացողութիւնը այն էր թէ վրէժխնդրութիւնը ար-
տօնեալ էր եւ որպէս պատշաճ հակազդեցութիւն իրենց
դէմ գործուած վատ արարքի մը համար: Այս հիման
վրայ անոնք նաեւ Աստուած ներկայացուցած են իբրեւ
վրէժխնդիր Աստուած մը: Այս բոլորը կը ծագի անոնց
խաւարամտութենէն:*

*Յիսուս անոնց Աստուծոյ մասին ունեցած բոլոր
սխալ հասկացողութիւնները շտկելու համար եկաւ:
Յիսուսի այս խօսքերը կը թուին շարունակութիւնը
ըլլալ նոյն Աւետարանին նոյն գլուխին մէջ ըսած եւ
վերեւ ներկայացուած խօսքին (տես վերեւ էջ 58): Հոն*

Յիսուս սպանութիւնը իբրեւ օրինակ օգտագործած էր, իսկ հոս՝ վրէժխնդրութիւնը: Եթէ մարդ ընդունի թէ ամէն ինչ, որ կը պատահի, Աստուծոյ կամ քն է, արդեօք պատճառ կը մնա՞յ վրէժ լուծելու: Իսկ եթէ անձը ընդունի թէ բոլորս ալ ստեղծագործութեան՝ «Աստուծոյ մարմնին» մէջ մէկական բջիջներ ենք, միթէ պէտք չէ՞, որ խորհինք, խօսինք ու գործենք ընդհանուր մարմնին օգտին համար: Աս ալ չի՞ նշանակեր խորհիլ, խօսիլ ու գործել այդ մարմնին մէջի միւս բոլոր «բջիջ»-ներուն օգտին համար հոգ չէ, թէ մեր խաւարամտութեան արդիւնք, զանոնք նկատենք բարեկամ կամ թշնամի: Միայն ան որ կը սիրէ բոլորը, կը սիրէ Աստուած: Այս հիման վրայ Յիսուս նաեւ ըսած է հետեւեալ խօսքերը նկատմամբ թշնամիներուն:

ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ՄԻՐԵԼ

«Լոսարո՛ւ՛ մտա՛նք զի ասացաւ. Սիրեսցես զքնկեր ինձ, եւ ասացես զբշնամին ինձ: Եւ ինչ ես ասեմ Սիրեսցէ՛ք զբշնամին յեր. օրհնեսցէ՛ք զանիժիշտ յեր. Բարի արարէ՛ք ասելեաց յերոց. եւ աղօթա՛ն ՚ի վերայ այնոցիկ՝ որ լլկեն զքեզ եւ Հաւաժեն: Զի եղբջի՛ք որդի՛ք Հօր յերոյ որ յերկինսն զի զարեգակն իւր ծագէ ՚ի վերայ շարաց եւ Բարեաց եւ ամբէ անյրեւ ՚ի վերայ արդարոց եւ մեղաորաց: Զի եթէ սիրեսցէ՛ք զայնոսիկ որ սիրեն զքեզ՝ զի՞նչ վարձի՛ք իցեն, ո՞չ ասպէ՛նք եւ մատաարձ զնոյն Գործեն: Եւ եթէ ցոյցէ՛ք միայն ողջոյն Բարեկամաց յերոց՝ զի՞նչ աւելի ասնէ՛ք. Ո՞չ ասպէ՛նք մատաարձ եւ մեղաորձ զնոյն Գործեն: Երդ՝ եղերո՛ւ՛՛ զո՛ւ՛ կարարեա՛լ լի՛, որպէս եւ Հայրն յերկնաոր կարարեա՛լ է»: (Մատթեոս Ե:43-48)

«Լսեր էք թէ ըստեցաւ. Սիրէ՛ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ: Բայց ես կը յայտարարեմ ձեզի. Սիրեցէ՛ք ձեր թըշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարի՛ք ըրէք անոնց՝ որ կ'ատեն ձեզ, եւ աղօթեցէ՛ք անոնց համար որ կը պախարակեն ու կը հալածեն ձեզ՝ որպէսզի ըլլաք ձեր երկնաւոր Հօր որդիները. որովհետեւ իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ, եւ անձրեւ կը դրկէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ անարդարներուն վրայ: Որովհետեւ եթէ դուք սիրէք ձեզ սիրողները, ի՞նչ վարձատրութիւն կ'ունենաք. մաքաւորներն ալ նոյնը չե՞ն ըներ: Ու եթէ բարեւէք միայն ձեր եղբայրները, ի՞նչ աւելի կ'ընէք ուրիշներէն. մաքաւորներն ալ նոյնը չե՞ն ըներ: Ուրեմն դուք կատարեալ՝ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

(Տես նաեւ Ղուկաս Զ:26-28, 32-36)

Յիսուս անգամ մը եւս կը շեշտէ հրեաներուն խաւարամտութեան հետեւանք իրենց ընդունած օրէնքը՝ «սիրէ ընկերդ եւ ատէ թշնամիդ», իբրեւ ճշմարտութիւն: Իսկ Յիսուս կը յորդորէ երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլալ: Ինչպէս երկնաւոր Հայրը իր «արեւը կը ծագեցնէ»՝ իր շնորհները կը տեղացնէ թէ՛ բարիներուն եւ թէ՛ չարերուն, ինչպէս նաեւ թէ՛ արդարներուն եւ թէ՛ անարդարներուն վրայ, մենք ալ պարտ ենք նոյնը ընել, եթէ կը բաղձանք երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլալ: Աստուծոյ շնորհները բոլորին համար է, միայն մեզմէ կախեալ է, թէ մենք զմեզ ընդունակ անօթներ կ'ընենք թէ ոչ:

Հոս յարմար է ըսել թէ իբրեւ հայ հպարտ ենք ազգովին առաջին Քրիստոնեայ ազգը ըլլալու: Բայց իբրեւ Քրիստոնեայ ազգի մը անդամներ, ինչ չափով Յիսուսի սորվեցուցածներուն կը հետեւինք: Կը սիրե՞նք անոնք, որոնք մեր թշնամիին կը համարենք, կ'աղօթե՞նք անոնց համար, կ'օգնե՞նք անոնց: Ապա թէ ոչ մեր լրագիրներուն մէջ յաճախ ժխտական արտայայտութիւններ կ'ունենանք: Ե՞րբ պիտի հետեւինք Յիսուսի վերեւի յորդորներուն:

ՈՊՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Զգո՛ւ յձ լեբո՛ւնդ ողորմո՞ւթեան յերո՞ւմ՝ մի՛ առնել առաջի մարդկան. որպէս թե՛ ՚ի ցոյց ինչ նոցա. Գո՛ցե՛՛ եւ վարձս ո՛չ ընդո՞ւնիցիդ ՚ի Ըօրէն յերմե՛՛ որ յերկինսն է: Ե՛յլ յորժամ առնիցես ողորմո՞ւթիւն, մի՛ Ըարկաներ փո՛ղ առաջի ի՞նչ, որպէս կեղծա՛որովն առնեն ՚ի ժողովո՛րդըս եւ ՚ի Ըրապարակս, որպէս զի փառա՛սորեսցին ՚ի մարդկանէ: Ըմէն ասեմ յեզ՛՝ ա՛յն իսկ էն վարձի նոցա: Ե՛յլ դո՛ւ յորժամ ողորմո՞ւթիւն առնիցես, մի՛ Գիտասցե յախ ի՞նչ զորժե՛՛ աջ ի՞նչ. որպէս զի եղիցի ողորմո՞ւթիւնն ի՞նչ թաժո՞ւն. եւ Ըայրն ի՞նչ որ Կեսանէ ՚ի Թաժո՞ւն՝ Ըարո՞սցե ի՛նչ յայտնապէս»: (Մարթեոս Զ:1-4)

«Զգուշացե՛ք որ ձեր ողորմութիւնը չընէք մարդոց առջեւ՝ տեսնուելու համար անոնցմէ. այլ ապէս՝ վարձատրութիւն չէք ունենար ձեր Հօրմէն՝ որ երկինքն է: Ուրեմն երբ ողորմութիւն ընես, փող մի՛ հնչեցներ առջեւդ, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններուն ու փողոցներուն մէջ՝ որպէսզի փառաւորուին մարդոցմէ: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Անոնք ունեցած կ'ըլլան իրենց վարձատրութիւնը: Իսկ դո՛ւն՝ երբ ողորմութիւն ընես՝ ձախ ձեռքդ թող չգլխնայ աջ ձեռքիդ ի՛նչ տալը, որպէսզի քու ողորմութիւնդ գաղտնի ըլլայ. եւ քու Հայրդ՝ որ կը տեսնէ գաղտնիքը՝ բացայայտիցն պիտի հասուցանէ քեզի»:

Աստուծոյ ողորմութիւնը առատապէս կը տեղայ մեր բոլորին վրայ, սակայն մենք, մեր խաւարամտութեան հետեւանք, անգիտակցաբար կը մերժենք անոնք: Մենք ալ պարտ ենք ողորմած ըլլալ բոլորին հանդէպ: Տրուած ողորմութիւնը պէտք չէ հպարտութեամբ եւ մեծարուելու նպատակաւ ըլլայ, որովհետեւ հպարտութիւնը «Ես»-էն կը ծագի եւ եսասիրութեան նշան է:

Նման եսասիրութիւն Ս. Հոգիի գօրութեան՝ շնորհնե-
րուն մեր հութենէն ներս հոսքը կը կասեցնէ, հետեւա-
բար հոգեկան կեանքի մէջ՝ կատարելութեան ուղիին
մէջ յառաջացման արգելք կ'ըլլայ: Յիսուս երբ կ'ըսէ.
«մի գիտասցէ ձախ քո վինչ գործէ աջ քո», ըսել կ'ուզէ,
թէ ողորմութիւն տուողը ողորմութիւն տալէն յետոյ
պէտք է նոյնիսկ մոռնայ, թէ ողորմութիւն ըրած է,
քան թէ նոյնիսկ միայն ինք իրմով հպարտ զգայ:



**«ՈՂՈՐԴԵԱ ԻԱՁ ԱՍՏՈՒԾ,
ԸՍՏ ԱԵԾԻ ՈՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՔՈՒՄ,
ԸՍՏ ԲԱՉՈՒՄ ԳԹՈՒԹԵԱՆ ՔՈՒՄ,
ՔԱԿԵԱ ՉԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՄ
ԻՄ»
(Մաճուս Ծ:1)**

ՃՇԱՐԻՏ ԱՊՈԹՔՈՒՆ - ՏԵՐՈՒԿԱԿԱՆ ԱՊՈԹՔՈՒՆ

«Եւ յաղօթես կայցես, մի՛ լինիցիս որպէս կեղծա-
որդն. զի սիրեն ՚ի ժողովորդս եւ յանկիւնս Ըրա-
պարակաց կա՛լ յաղօթս, որպէս զի երեւեացին մարդ-
կան: Ամէն ասե՛մ յեզ՛ ա՛յն իսկ եւ զարձի նոցա:
Այլ դո՛ւ յորժամ կայցես յաղօթս, մո՛տ ՚ի սէն-
եակ ին: Եւ փակեա՛ զդո՛ւրս ին, եւ կա՛ց յաղօ-
թըս սո՛ւ Ըայր ին ՚ի թաթո՛ւկ. եւ Ըայրն ին որ
դեւանել ՚ի թաթո՛ւկ, Ըարո՛ւսցէ ի՛նչ յայրնապէս:
Եւ յորժամ կայցէ՛ յաղօթս, մի՛ շարակո՛ւն լի-
ցի ի իճրէւ զԸեթանոսն. զի Ըամարին թէ՛ ՚ի թա-
զո՛ւմ խօսի՛ց իրեանց լսելի լինիցին: Արդ՛ մի՛
նմանիցէ՛ նոցա. զի Գիդէ Ըայրն յեր զինչ
պիտոյ է յեզ, մինչչէ՛ յեր խնդրեա՛լ ինչ իցէ
՚ի նմանէ: Եւ արդ՛ ա՛յապէս կացէ՛ զդո՛ւ յաղօ-
թըս: Հա՛յր մեր որ յերկինս: Սո՛ր թէ եղբցի անուն
ին: Եկեացէ՛ արեւոյն-թիւն ին: Եղբցին կամէ՛ ին որ-
պէս յերկինս եւ յերկրի: ԶԸա՛ց մեր Ըանապա-
զորդ դո՛ւր մեզ այօր: Եւ թո՛ղ մեզ զպարգիս
մեր, որպէս եւ մե՛ ի թողո՛ւմէ մերոց պարգապա-
նաց: Եւ մի՛ դանիր զմեզ ՚ի փորձո՛ւթիւն: Այլ
փրկեա՛ զմեզ ՚ի շարէն: Զի ին է արեւոյն-թիւն եւ
զդո՛ւ թիւն եւ փա՛ռ յա՛րգեանս. ամեն: Զի եթէ
թողո՛ցո՛ւ մարդկան զյանցանս նոցա, թողցէ՛ եւ
յեզ Ըայրն յեր երկնա՛որ: Ապա թէ՛ ո՛չ թողո՛ցո՛ւ
մարդկան զյանցանս նոցա, եւ ո՛չ Ըայրն յեր
թողցէ զյանցանս յեր»: (Մարթէոս Զ: 5-15)

«Երբ աղօթես՝ նման մի՛ ըլլար կեղծաւորներուն՝ որոնք կը սիրեն աղօթել՝ կայնելով ժողովարաններուն մէջ ու հրապարակներուն անկիւնները, որպէսզի երեւնան մարդոց: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի: Անոնք ունեցած կ'ըլլան իրենց վարձատրութիւնը: Իսկ դո՛ւն՝ երբ աղօթես՝ մտի՛ր ներքին սենեակդ, գոցէ՛ դուռդ, եւ աղօթէ՛ Հօրդ՝ որ գաղտնի տեղ կը գտնուի: ու Հայրդ՝ որ կը տեսնէ գաղտնիքը՝ բացայայտօրէն պիտի Հատուցանէ քեզի: Երբ աղօթէք, շատախօս մի՛ ըլլաք Հեթանոսներուն պէս՝ որովհետեւ կը կարծեն թէ պիտի ընդունուին՝ իրենց շատ խօսելուն Համար: Ուրեմն մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ձեր պէտքերը՝ դեռ դուք չիւնդրած իրմէ: Ուստի դուք ասպէս աղօթեցէք: Հայր մեր՝ որ երկինքն ես, քու անուղ սուրբ ըլլայ: քու թագաւորութիւնդ գայ: քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ: Մեր ամէնօրեայ Հացը՝ մեզի տո՛ւր այսօր: մեզի ներէ՛ մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն: ու մեզ մի՛ տանիր փորձութեան՝ Հապա մեզ ազատէ՛ Չարէն: որովհետեւ քո՛ւ կը ես թագաւորութիւնը, գօրութիւնը եւ փառքը յաւիտեան: ամէն: Արդարեւ եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի պիտի չներէ ձեր յանցանքները»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԱ:2-4)

Յիսուս այս խօսքերով բուն աղօթքին ինչ ըլլալը կը սորվեցնէ: Այս խօսքերուն ամենայտկանչական մասը հետեւեալն է. «մտիր ներքին սենեակդ, գոցէ դուռդ, եւ աղօթէ Հօրդ»: Յիսուս, այս խօսքով, խոկալն է, որ կը նկարագրէ: Մարդիկ անընդհատ կ'աղօթեն Աստուծո՛վ խնդրելով աս ու ան: Յիսուս բացայայտ կ'ըսէ, թէ Աստուած գիտէ թէ մեզի ի՞նչ պէտք է, հետեւաբար կը թելադրէ շատախօս չ'ըլլալ: Խոկալը աղօթքին ամենավեհ եւ լռելեայն ձեւն է: Որովհետեւ Յիսուս շատ լաւ գիտէր թէ մարդուն միտքը, անընդհատ ճիւղէ ճիւղ ցատկող կատղած կապիկի մը նման, անընդհատ խորհուրդէ խորհուրդ կը ցատկէ: Որպէսզի մարդ կարողանայ իր միտքը կեղերոնացնել իր ներքին Քրիստոսի՝ Աստուծոյ

վրայ կու տայ տէրունական աղօթքը: Դժբախտաբար շատ անգամ մարդ այդ աղօթքը գոց սորված, շրթունքով կ'ըսէ բայց միտքը զբաղ զանազան խորհուրդներով հոն չէ ուր իր մարմինն է: Անձնապէս ականատես եղած եմ մեր եկեղեցւոյ ժամերգութեան ընթացքին, կղերականին Տէրունական աղօթքը ըսած միջոցին ուրիշ կարգադրութիւններ ընելով զբաղ ըլլալուն: Նման ձեւով աղօթել կը գոհացնէ միայն աւանդութիւնը եւ հոգեկան գետնի վրայ ոչ մէկ օգուտ կ'ունենայ: Տէրունական աղօթքին պարունակութիւնը իսկութեան մէջ կը ներկայացնէ յաջող խոկումին արդիւնքը: Տէրունական աղօթքին ընդարձակ մեկնաբանութեան համար տես «Լոյս ի Լուսոյ» գիրքիս «Ի՞նչ է Աղօթքը» խորագրեալ է. գլխուն վերջին մասը «Տէրունական Աղօթք» էջ 195-210: Հոս աւելի հակիրճ եւ թագուն իմաստները մատնանշող մեկնաբանութիւն մը պիտի ներկայացուի:

Սորբէ եղեցի անոն խո:

Աստուած ներկայ ըլլալով ընդհանուր ստեղծագործութեան մէջ ստեղծագործութիւնն ալ պարտ է որ ներկայացնէ Աստուծոյ «մարմին»-ը: Աստուծոյ մարմինը մէկ է, հետեւաբար ստեղծագործութիւնն ալ կը ներկայացնէ միականութիւնը: Դժբախտաբար մարդ տարուած պատրանքային զանազանութենէ կը կարծէ թէ ամէն ինչ իրարմէ անջատ է: Մարդ նաեւ ամէն ինչի անուն մը տուած է: Բայց եթէ ճշմարտութիւնը միականութիւնն է, մարդուն տուած այդ բոլոր անունները Աստուած կը ներկայացնէ, որովհետեւ ամէն ինչ Աստուծոյ արտայայտութիւններն են: Աստուած սուրբ է: «Քու անուանդ սուրբ ըլլայ» աղերսանքին իմաստը Աստուծմէ խնդրել է յաջող խոկումի արդիւնք Աստուծմէ շնորհուիլ բարձր գիտակցութիւն, որ կը նշանակէ անձին իր գիտակցութեամբը յափշտակուիլ Քրիստոսի բարձր գիտակցութեան: Այդ բարձր գիտակցութեամբ անձն ալ

կը հասկնայ՝ կը գիտնայ՝ կ'անդրադառնայ ամէն ինչի միականութեան: Այն ատեն բոլոր անունները իրեն համար կ'ըլլան սուրբ: Եթէ մարդուն միտքը զբաղ «ապականած» է բազմաթիւ խորհուրդներով, կարելի չէ իրեն համար տեսնել՝ հասկնալ Աստուծոյ «անուան» սրբութիւնը: Միայն մաքրուած միտքը՝ «սուրբ սիրտը» կարող է Աստուծոյ սրբութիւնը տեսնել: Հետեւաբար «Անունդ սուրբ ըլլան» տենջանք մըն է մտքին ղեկը ձեռք առնելու եւ «սուրբ սիրտ» կերտելու:

Եկեացէ՛ արվայո-թիւն ինձ:

Ըստ Յիսուսի սորվեցուցածներուն Աստուծոյ թագաւորութիւնը մեր ներսիդին է: Ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ թագաւորութիւնը կը ներկայացնէ: Հետեւաբար ստեղծագործութեան մէջ ամէն ինչ Աստուծոյ թագաւորութեան մէջն է: Բայց մարդ արարած կարծելով թէ պատրանքը ճշմարտութիւնն է, չ'անդրադառնար ճշմարտութեան, որպէսզի վայելէ Աստուծոյ թագաւորութիւնը: Յաջող խոկումին արդիւնքը գիտակցութեան մակարդակի բարձրացումով անդրադառնալ է այդ ճշմարտութեան: Այն անձը որ կը յաջողի այդ անդրադարձը ունենալ կը վայելէ Աստուծոյ թագաւորութիւնը, որովհետեւ կ'ապրի յաւիտենական կեանքը:

Եղիցին կամի ինձ որպէս յերկինս եւ յերկրի:

Երբ խոկալով անհատը կը կարողանայ «սուրբ սիրտ» կերտել, խորհուրդներէ, զգացումներէ եւ յուզումներէ սրբուած միտք մը, ինք կը հաղորդակցի իր ներքին Քրիստոսի հետ եւ կ'անտեսէ իր «Ես»-ը: Ինք կը գործէ ըստ իր անհատականութեան դրական բեւեռին, քան թէ այն ինչ որ ինք կ'ընէր առաջուց ապրիլ ըստ իր անհատականութեան ժխտական բեւեռին, որ հաղորդակցութեան մէջ է իր «Ես»-ին՝ սատանային հետ: Երբ ինք այլեւս կը խորհի, կը խօսի ու կը գործէ ըստ իր անհատականութեան դրական բեւեռին, որ հաղորդակ-

ցուլթեան մէջ է իր ներքին Քրիստոսին հետ, ինք ամէն ինչ կ'ընէ ըստ Աստուծոյ կամ քին:

ԶԼս'ց մէր Հանապապոսրդ Գո'ւր մեզ այսօր:

Քրիստոս ըսած է. «Ես եմ դուռը»: Հետեւաբար երբ անհատը կը գործէ ըստ իր ներքին Քրիստոսի կամ քին, ինք նաեւ անկէ կը ստանայ յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւն, որ իր կենսատու զօրութիւնն է: Եւ անհա աս է իր «հանապազօրդ հաց»-ը:

Եւ Թո'ջ մեզ պարտիս մեր, որպէս է- մեկ Թողո-մէ մերոց պարտապանաց:

Երբ անհատը յաջող խոկումի արդիւնք բարձր գիտակցութեան մակարդակով միականութեան փորձառութիւնը կ'ունենայ, ինք կը հասկնայ ամէն ինչի Աստուծոյ կամ քը ըլլալը: Ինչպէս քնացող եւ երազող անձ մը երբ արթննայ կ'անտեսէ երազի մէջի ամէն ինչ, նմանապէս միականութեան փորձառութիւնը ունեցողն ալ կ'անտեսէ եւ կը մոռնայ ամէն ինչ, որ ինք առաջուց կարեւորութիւն տուած էր: Բոլոր անոնք, որոնք իրեն «պարտական» էին, կը մոռցուին ինչպէս նաեւ անոնց պարտքերը: Երբ անհատը այդ հասկացողութեան հասած է կը մոռցուի նաեւ իր բոլոր «պարտք»-երը, որովհետեւ անոնց բոլորն ալ կը պատկանէին պատրանքին՝ երազին:

Եւ մի' Գանիբ զմեզ 'ի փորձութիւնն:

Անձը միականութեան փորձառութիւնը ունենալով հանդերձ դարձեալ կարող է պատրանքին բարիլ եւ հին զգացում, յուզում եւ ցանկութիւններու ազդեցութեան ենթարկուիլ: Եւ աս է փորձութիւնը: Ոչ թէ Աստուած մեզ փորձութեան կը տանի, այլ մենք զմեզ փորձութեան կը տանինք եւ աս փափաք մըն է մնալ միականութեան գիտակցութեան մէջ, քան թէ վերադառնալ պատրանքային զանազանութեան գիտակցութեան մակարդակին:

Այլ փրկեա՛ զմեզ ՚ի շարէն:

Խնդրել է Աստուծոյ՝ ներքին Քրիստոսի օգնութիւնը, որպէսզի կարողանանք անտեսել մեր «Ես»-ը՝ «չար»-ը եւ յարիլ դէպի ներքին Քրիստոսին: Քրիստոս այս ուղղութեամբ պատրաստ է մեզի օգնելու եթէ մենք զմեզ այդ օգնութեան արժանի կ'ընենք:

Իսկ Յիսուսի այս խօսքերուն վերջին մասն ալ դարձեալ կը մատնանշէ «ինչ որ ցանես ան կը հնձես»-ը: Որքանով մենք ներենք, նոյնքանով ալ մենք կը ներուինք: Իսկ եթէ բնաւ ներելու պէտք չունենանք, որովհետեւ ոչ մէկը դատած եւ յանձաւոր նկատած ենք, այն ատեն ալ մենք ալ ներուելու կարիքը չենք ունենար: Աս միայն կարելի կ'ըլլայ երբ ամէն ինչ կ'ընդունինք իբրեւ Աստուծոյ կամքը: Իսկ երբ նման մակարդակի գիտակցութեան մը հասած ենք, մեր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան ըստ Աստուծոյ կամքին: Հետեւաբար կարիք կը մնա՞յ ներուելու:



ԾՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Եւ յորժամ պահիցել՝ մի՛ լինի՛ ի բրեւ պիտի ծառայողսն որ պահեալի որ ապահանեն պերեսս իրեանց, որպէս պի երեւեսցին մարդկան թէ պահիցեն: Ամեն ասե՛մ յեւ, այն իսկ են վարչի նոցա: Այլ որո՛ յորժամ պահիցես, օ՛ժ պիտի ինձ ինձ անձ պերեսս ին, պի մի՛ երեւեսցիս մարդկան ի բրեւ պահողս. այլ Ըօր ինձ ՚ի թաթո՛ւկ. եւ Հայրն ին որ պիտանէ ՚ի թաթո՛ւկ, Հարո՛սցէ՛ ին»:
(Մարգէէոս .Չ : 16-18)

«Երբ ծոմ պահէք, սրտումերես մի՛ ըլլաք՝ կեղծաւորներուն պէս. որովհետեւ իրենց երեսները կը խաթարեն, որպէսզի երեւան մարդոց թէ ծոմ կը պահեն: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ասոնք ունեցած կ'ըլլան իրենց վարձատրութիւնը: Բայց դո՛ւն՝ երբ ծոմ պահես՝ օծէ՛ գլուխդ ու լուս՛ երեսդ, որպէսզի չերեւնաս մարդոց՝ ծոմ պահողի պէս, Հապա քու Հօրդ՝ որ գաղտնի տեղ կը գտնուի: Եւ քու Հայրդ՝ որ կը տեսնէ գաղտնիքը, պիտի Հատուցանէ քեզի»:

Յիսուս, իր այս խօսքերով, անգամ մը եւս կը շեշտէ հպարտութեան գոհ չըլլալ: Երբ ծոմապահութեան մասին կը խօսինք, ընդհանուր առմամբ զայն ուտեստեղէնէ ինքնագրկում կը համարենք: Մեր եկեղեցին ինքնագրկում ու ինքնագրկում կերտելու նպատակաւ ունի թէ՛ «պահք»-ի եւ թէ՛ ծոմապահութեան շրջաններ՝ ամէն տաղաւարէ առաջ: Ասոնց մէջէն բոլորին ծանօթը Զատիկէն առաջուայ եօթ շաբթուայ «պահք»-ի շրջանը եւ Աւագ շաբթուայ վերջին երեք օրուայ ծոմապահութիւնն է, որ իր աւարտին կը հասնի Զատիկուայ պատարագին վերջաւորութեան ստացուած հաղորդութեամբ:

Ինչո՞ւ ծոմապահութիւն եւ ինչի՞ կը ծառայէ ծոմապահութիւնը: Ծոմապահութիւնը պարզապէս ինքնագրկում կերտելու համար որդեգրուած մարզանք մըն

է: Անտարակոյս ան ունի առողջապահական առաւելու-
թիւններ: Յիսուսի ակնարկած ծոմապահուածիւնը ուտե-
լը կամ չուտելը չէ: Ան ուտեստեղէնէ հեռացում չէ այլ՝
հեռացում ամէն տեսակ աշխարհիկ հետապնդումներէ,
նա մանաւանդ հեռացում անձին իր «Ես»-էն: Այս
ուղղութեամբ պատշաճ է Եսայեայ մարգարէին հետեւ-
եալ պատուէրը մէջբերել:

«Ն զսայնոյնի պահս ընդրեցի՝ ասէ Տէր: Եյլ լո՛յժ
զկնճիոն անիրաւոթեան. ինկեա՛ս զխարտա- խոթիւն
բռնոթեան զաճառաց իոց: Երջակեա՛ս զնեղեալս
բողոթեամբ, եւ զամենայն մորճակս անիրաւոթեան
պարտեա՛ս: Ի՞րդեա՛ս ինչցելոց զճաց իո, եւ
զաղձաքս անյարկս քա՛ր ՚ի քոն իո. եթէ քեաննիցես
զմեղէս՝ զԳեցոցանիջի՛ր, եւ յընդանեաց զաւակի իոյ՝
զակն մի՛ արկանիցես: Յայնժամ թաւալեացի կանոն
լոյս իո, եւ բժշկոթիւն իեզ զաղձաղակի ճասցե. եւ
Գնասցե՛ առաջի իո արդարոթիւն իո, եւ քա՛ս ո՛վն
Լսարո՞շոյ զիւե- քակեացին»: (Եսայեայ՝ՕԸ:6-8)

«Իմ ընդունած ծոմապահութիւնս՝ Անիրաւութեան կապե-
րը քակելը, Լուծին կապերը թուլցնելը, Հարստահարու-
թիւն կրողները ազատ թողուլը, Ամէն լուծ կտրելը,
Հացդ անօթիին բաժնելը, Թափառական տնանկները
տունը ընդունիլը, Մերկ մը հագուեցնելը Ու մարմինը
անտեսելն է: Այն ատեն քու լոյսը առաւօտի պէս պիտի
ծագի Ու բժշկութիւնը շուտով պիտի յայտնուի: Քու
արդարութիւնը քու առջեւէդ պիտի երթայ Ու Տէրոջը
փառքը քու հետեւէդ քեզ պիտի պաշտպանէ»:

Հետեւաբար ճշմարիտ ծոմապահութիւնը մեր գործած
մեղքերէն ձերբազատուիլն է: Մեր «Ես»-էն եկած յոր-
դորներէն ձերբազատուիլն է: Բառին պարզ իմաս-
տովը, Եսասիրութենէ ձերբազատուիլն է, որ ծագում
կու տայ այլասիրութեան՝ մարդասիրութեան եւ
Աստուածապաշտութեան:

«Յայնժամ մատենան առ նա աշակերտդն Յովհաննանո՛ւ եւ ասեն. Ընդէ՞ր մե՛կ եւ փարխտեցի՞ն պահեմի՞ յաճախ, եւ ի՞նչ աշակերտդո՞ւն չ պահեն: Եւ պնտոսա Յիսոսա. Մի ելի՛ւ մա՞րդ ինչ իցէ մանկանց առագաստի աո՛գ առնո՛ւ՝ մինչ փեսայն ընդ նոցա՛ իցէ. այլ եկեացեն առո՛ր յորժամ Բարձրի՛ն նոցանէ փեսայն, եւ ապա՛ պահեացեն: Ոչ ո՛վ արկանէ՛ կայերոց անիսի՛ն զերայ Հնացեալ Յորձոյ. պի առնո՛ւ ելանէ պրոտիւն նորա՛ն ի Հանդերձէն եւ ե՛ս շար պարասոսմն լինի: Եւ ո՛չ արկանեն Գինի նո՞ր ՚ի ցիկն Հինս. ապա լիւ ո՛չ ցիկն պարասոսին, եւ Գինին Հեղոս, եւ ցիկն կորնչի՛ եւ այլ արկանեն Գինի նո՞ր ՚ի ցիկն նորո, եւ երկո՞վն պահին»: (Մատթէոս Թ:14-17)

«Այն ատեն Յովհաննէսի աշակերտները եկան անոր եւ ըսին. «Ինչո՞ւ մենք ու Փարխեցիները յաճախ ծոմ կը պահենք, իսկ քու աշակերտներդ չեն պահեր»: Յիսուս ըսաւ անոնց. «Միթէ կարելի՞ է՞ որ Հարսնեւորները սգան, քանի փեսան իրենց հետ է: Բայց օրերը պիտի գան՝ երբ փեսան պիտի վերցուի իրենցմէ: ա՛յն ատեն ծոմ պիտի պահեն: Ո՛չ մեկը կը ձգէ նոր լաթի կտոր մը հին հանդերձի մը վրայ, որովհետեւ անիկա որ անոր լրումին համար դրուած է՝ կը քաշէ հանդերձը, ու պատուածքը աւելի գէշ կ'ըլլայ: Ո՛չ ալ նոր գինին կը դնեն հին տիկերու մէջ. այլապէս՝ տիկերը կը պատուին, ե՛ւ գինին կը թափի, ե՛ւ տիկերը կը կորսուին: Հապա նոր գինին կը դնեն նո՞ր տիկերու մէջ, ու երկուքն ալ կը պահուին»:

(Տես նաեւ Ղուկաս Ե:33-39 եւ Մարկոս Բ:18-22)

Յիսուսի այս խօսքերը կարեւոր ազդարարութիւն մըն են հանրութեան եւ նա մանաւանդ այսօրուայ «քրիստոնէաներուն»: Անտարակոյս Յովհաննէսի աշակերտներուն հարցումը ուտեստեղէնի ծոմապահութեան համար էր: Յիսուս այդ առիթը չփախցուց եւ դաս մը

տուաւ: Հարկաւ կարելի է այդ բոլորը իր բառացի իմաստով առնել եւ վերագրել Յիսուսի ներկայութեան եւ ապագայի՝ համբարձումէն ետքի բացակայութեան: Երբ Յիսուս կ'ըսէ. «Մի եթէ մա՛րդ ինչ իցէ մանկանց առագաստի սո՛ւգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոցա՛ իցէ» («Միթէ կարելի՞ է՝ որ հարանեւորները սգան, քանի փեսան իրենց հետ է»): Այս խօսքով Յիսուս կ'ուզէ ըսել, թէ երբ մարդուն անհատականութիւնը իր ներքին Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ է, հետեւաբար ձերբազատուած իր «Ես»-էն, այլեւս պէտք չունի ծոմապահութեամբ ինքնագապումի «մարգանք»-ին: Իսկ երբ կ'ըսէ. «այլ եկեսցեն ատուք՝ յորժամ բարձցի՝ ի նոցանէ փեսայն, եւ ապա՛ պահեսցեն», Յիսուս կ'ուզէ ըսել, թէ ոմանք ետքայլ պիտի ընեն եւ դարձեալ պիտի կապուին իրենց «Ես»-ին: Այն ատեն, իրենց «Ես»-ը անտեսելու համար, պիտի պարտաւորուին իրենք զիրենք դարձեալ մարգելու:

Մէջբերումին վերջին մասը շատ յատկանշական է: Յիսուս կ'օգտագործէ «հին հանդերձ»-ի եւ «հին տիկ»-ի օրինակը: Անոնք կը ներկայացնեն «հին»՝ խաւարամիտ եւ եսասէր մարդը իր անբաղձալի կենցաղով: «Նոր լաթը» եւ «նոր գինին» կը ներկայացնեն կատարելութեան ուղին եւ Յիսուսի սորվեցուցած թագուն գիտութիւնները: Եթէ անպատրաստից մարդը այդ գիտութիւններուն կը տիրանայ, որ կը համապատասխանէ «նոր լաթը հին հանդերձին վրայ ձգել»-ուն, կամ «նոր գինին հին տիկերու մէջ դնել»-ուն, ան աւերներ կը գործէ: Այլ, «նոր գինին կը դրուի նոր տիկերու մէջ»: Նոր «տիկ»-ը կը ներկայացնէ նոր մարդը, այն անձը որ ճշմարիտ վերստին ծնունդ ունեցած է: Այլ ոչ, թէ յաճախ իմացուած, բեռնի ծամոց, «վերստին ծնունդ»-ները: Վերստին ծնունդ ունենալ կը նշանակէ «Ես»-ը ամբողջովին անտեսել եւ ապրիլ ըստ ներքին Քրիստոսի կամ քին: Այսօրուայ շատ մը «քրիստոնէաներն» ալ

Կը շարունակեն իրենց եսասիրական կենցաղը, բայց ինքզինքնին փրկուած կը համարեն, կամ պատարագին հաղորդութիւն առնելով սրբացած ըլլալ: Եթէ մարդը եւ իր կենցաղը չեն փոխուած այդ երեւոյթները անօգուտ են եւ ապագայ կործանումի պատճառ:



ԵՐԱՆԱՅԻՆ ԳԱՆՁԵՐ

«Ա՛յ՛ Գանձե՛կ յե՛ս յերկրի: Խոր ցեց է՝ ո՛չ
ուրիճ ապականեն, է՝ ուր Գողէ՛ ական Ըսրանեն
է՝ Գողանան: Այլ Գանձեցե՛կ յե՛ս Գանձս
յերկինս, ուր ո՛չ ցեց է՝ ո՛չ ուրիճ ապականեն,
է՝ ո՛չ Գողէ՛ ական Ըսրանեն է՝ Գողանան: Զի
ուր Գանցէ՛ յեր էն, ա՛նդ է՝ սիրտէ՛ յեր լիցին»:
(Մարդեոս .Զ:19-21)

«Երկրի վրայ գանձեր մի՛ դիպէք ձեզի, ուր ցեցը եւ
ժանգը կ'ապականեն, ու գողերը պատ կը ծակեն ու
կը գողնան: Հապա երկի՛նքը գանձեր դիպեցէք ձեզի,
ուր ո՛չ ցեցը եւ ո՛չ ժանգը կ'ապականեն, ու ո՛չ
գողերը պատ կը ծակեն եւ գողնան: Որովհետեւ ձեր
գանձը ո՛ւր որ է, ձեր սիրտն ալ հո՛ն պիտի ըլլայ»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԲ:33-34)

*Յիսուս այս խօսքերով մեզ կը զգուշացնէ
աշխարհիկ ցանկութիւններէ: Որովհետեւ այն ինչ բան,
որ մարդ իրեն համար արժէքաւոր կը նկատէ, ինք
անոր կը կապուի: Նա մանաւանդ նիւթական հարստու-
թիւնը շատերու համար եղած է իրենց ստեղծած կուռ-
քը, գորս անոնք կը պաշտեն: Ազահութիւնը նիւթապաշ-
տութիւն է: Իսկ երկինքի գանձը գիտակցութեան
մակարդակի բարձրացումն է, որով մարդ կարող է
ձշմարտութիւնը տեսնել եւ իր ներքին գանձը՝ Քրիս-
տոս յայտնաբերել:*



ՄԱՐՄԻՆ ԾՐԱԳԸ

«Ղրաֆ մարմնոյ ակն ելէ ակն ին ասար է, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի: Ապա թէ ակն ին չա՛ր է՝ ամենա՛յն մարմինն խաւարին եղիցի: Իսկ արդ՝ ելէ լոյսդ որ ՚ի շէշ է՝ խաւար է՝ խաւարն՝ ո՞րչափ էս»: (Մարթէոս .9:22-23)

«Մարմինն ճրագը աչքն է. ուրեմն եթէ աչքդ պարզ է, ամբողջ մարմինդ լուսաւոր կ'ըլլայ: Բայց եթէ աչքդ չար է, ամբողջ մարմինդ խաւարամած կ'ըլլայ. ուրեմն եթէ քու մէջդ եղած լոյսը խաւար է, ա՛լ ո՛րքան է այդ խաւարը»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԱ:34-36)

Յիսուս երբ կ'ըսէ. «Մարմինն ճրագը աչքն է», ակնարկը Ֆիզիքական աչքին համար չէ, այլ՝ «երրորդ»՝ հոգեկան աչքին համար է: Ոմանք կ'ըսեն «սրտի աչքով տեսնել»: Երբ այդ «երրորդ» աչքը «պարզ» ըլլայ, այսինքն ազատ զանազան բարդ խորհուրդներէ, զգացումներէ ու յուզումներէ, ինչ որ կը համապատասխանէ կերտուած «սուրբ սրտին», Ս. Հոգիի զօրութիւնը առատօրէն կը ներգործէ անձին զօրութեան մարմնէն ներս, հետեւաբար կ'ըլլայ «լուսաւոր»: Իսկ «չար աչքը» ան է, որ զբաղ «Շս»-ին յառաջ բերած խորհուրդ, զգացում ու ցանկութիւններով ինչպէս նաեւ եսասիրութեան յառաջ բերած մահացու մեղքերով, չ'արտօներ որ Ս. Հոգիի զօրութիւնը առատօրէն ներգործէ: Անձն ալ կ'ըլլայ խաւարամիտ: Կը կարծուի, թէ Ֆիզիքական գետնի վրայ, ուղեղին մաս կազմող կոնագեղձը (pineal gland) կը համարուի այդ «երրորդ աչք»-ը: Այդ գեղձին արտադրած որոշ բաղադրութիւնն է, որ անհատին կու տայ աւելի բարձր գիտակցութեան մակարդակ ունենալու կարողութիւնը: Հարկաւ, աս Ֆիզիքական արտայայտութիւնը արդիւնքն է յաւելեալ Ս. Հոգիի զօրութեան հոսքին, որ անձին կարելիութիւնը կու տայ աւելի

պատշաճ կերպով օգտագործել իր ուղեղը:

Որպէսզի «հոգեկան աչք»-ը բացուի անձը պարտ է ինքզինք պատշաճ կերպով հոգեպէս պատրաստել: 1960-1970-ներուն շատեր զանազան հոգեշարժական բաղադրուածիւններ (ինչպէս LSD, DMT, ինչպէս նաեւ Հարաւային Ամերիկայի «Շաման»-ներուն օգտագործած Ayawasca-ն) սպառելով արուեստական միջոցառումներով «բացին» իրենց «հոգեկան աչք»-ը ու «տեսան»՝ փորձառութիւնը ունեցան ճշմարտութեան, բայց որովհետեւ անձնապէս պատրաստ չէին եւ միայն տէր էին ցած գիտակցութեան մակարդակի, չհասկցան իրենց ունեցած փորձառութեան իմաստն ու կարեւորութիւնը եւ իրենց անձին աւելի վնաս հասցուցին քան թէ օգուտ: Երբ այդ «երրորդ»՝ «հոգեկան աչք»-ը մեր ներքին Քրիստոսի կողմէ կը «բացուի», անոր յառաջ բերած փորձառութեան հասկացողութիւնն ալ ինքնաբերաբար կը տրուի, որովհետեւ այդ հասկացողութիւնը յայտնաբերուած բարձր գիտակցութեան մակարդակի հետեւանքն է: Յած գիտակցութեան տէր խաւարամիտ մը, կարելի է զմայլի իր ունեցած փորձառութեան, բայց այդ իրենն ոչ մէկ օգուտ կ'ունենայ: Ան, որովհետեւ այդ փորձառութիւնը հմայիչ կը գտնէ, յաճախ նոյն բաղադրութիւնները կ'օգտագործէ եւ ի վերջոյ իր ուղեղը կը վնասէ: Ան ոչ միայն կարող չ'ըլլար բարձր գիտակցութիւն կերտելու, այլ կը կորսնցնէ նաեւ իր մտային կարողութիւնները եւ իր իմացականութիւնը:



ԵՐԿՈՒ ՏԻՐՈՋ ԾԱՌԱՅԷԼ

«Ոչ ո՛վ կարէ երկո՛ց տէրանոց շահաւայել. կամ
սմին ապրիցէ եւ սմեւան օրրիցէ, կամ սմին մեծա-
րիցէ՝ եւ սմեւան արհամարիցէ. ոչ կարէ՛լ Աս-
տուծոյ շահաւայել եւ մամոնայի» : (Մատթէոսի Զ: 24)
«Ոչ մէկը կրնայ ծառայել երկու տիրոջ. որովհետեւ
կամ պիտի ստէ մէկը եւ սիրէ միւսը, կամ պիտի յարի
մէկուն ու արհամարհէ միւսը: Չէք կրնար ծառայել
Աստուծոյ եւ մամոնային»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԶ:13)

Ձանազան գիրքերու մէջ այս համարը բազմիցս
օգտագործած եմ: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ
երկուութեան վրայ հիմնուած է. «բարի-չար, մեծ-պըզ-
տիկ, քաջ-վախկոտ ...»: Մարդուն անհատականութիւնն
ալ ունի երկու բեւեռներ: Ժխտական բեւեռը հաղոր-
դակցութեան մէջ է իր «Ես»-ին՝ սատանային հետ, իսկ
դրական բեւեռն ալ՝ իր ներքին Քրիստոսին: Մարդ իր
խորամանկութեամբ կը ճոճի այդ երկու բեւեռներուն
միջեւ: Ան երբեմն կ'ըլլայ եսասէր, երբեմն ալ Աստուա-
ծապաշտ: Յիսուսի ըսածը այն է, թէ յաւիտենական
կեանքի արժանանալու համար՝ Աստուծոյ թագաւորու-
թիւնը ժառանգելու համար, նման կենցաղ մը անյար-
մար է: Յիսուս բազմիցս ըսած է ամբողջովին անտեսել
«Ես»-ը: Ան որ կը սիրէ իր «Ես»-ը (Աւետարանին մէջ
գրուած է. «իւր անձ»-ը), պիտի կորսնցնէ զայն՝ իր
անհատականութիւնը:

Այս հիման վրայ մարդուն որոշումը պէտք է վըճ-
ուական ըլլայ եւ ան պարտ է անտեսել ու մոռնալ իր
«Ես»-ը, ինչպէս Յիսուս անապատին մէջ ըսաւ. «Երթ
յետս իմ սատանայ»: Երբ մարդ կը յաջողի անտեսել իր
«Ես»-ը, այն ատեն իր բոլոր խորհուրդ, խօսք ու
արարքները կ'ըլլան ըստ Աստուծոյ՝ Քրիստոսի կամքին
եւ իր ընդհանուր կեանքն ալ կ'ըլլայ անընդհատ Աստ-
ուածապաշտութիւն:

ԱՍՏՈՒԹՅՈՂ ԽՍԱՄԱՎԱԼՈՒԹԻՒՄԸ

«Վասն այդորիկ ասե՛մ մի՛ Հոգայէ վասն ոգոց յերոց՝ զինչ ուրիցէ՛ կամ զինչ ըմպիցէ՛. եւ մի՛ վասն մարմնոց յերոց՝ թէ զինչ ագանիցի՛. ո՞չ ապա-
վէն ոգի՛ առաւել է ինչն զկերակո՛ւր՝ եւ մարմինն ինչն զհանդերձ: Հայեցարո՛ւ ՚ի Թոշոննս երկնից՝ զի ո՛չ վարեն եւ ո՛չ հնչեն, եւ ո՛չ ժողովեն ՚ի շրեմարանս. եւ Հայրն յեր երկնա՛որ կերակրէ՛ զնոսս: Ո՞չ ապավէն դո՛ւ յառաւել է ինչն զնոսս: Իսկ արդ ո՞ ՚ի յէնջ առ Հոգա՛լ իրո՛ւմ՝ յաւելո՛ւ կարիցէ ՚ի Հասակ եւր կանգոն մի: Եւ վասն Հանդերձի զի՞ Հոգայէ: Հայեցարո՛ւ ՚ի շոշանն վայրենի՛ ո՛րպէս ասէ. ո՛չ ջանայ, եւ ո՛չ նիւթէ՛: Եւեմ յեզ՝ զի եւ ո՛չ Առդովմովն յամենայն ՚ի փառան իրո՛ւմ զԳեցա՛ իբրեւ զմի՛ նոցանէ: Իսկ իթէ զխո՛րն ՚ի վայրի, որ այսօր է եւ զաղի՛ ՚ի Հնոց արկանի, Եսդո՛ւս ա՛յնպէս զԳեցոցանէ. որչափ եւս առաւել զյեզ թերահաւարի: Մի՛ այսո՛ւտիւ Հոգայցէ՛ եւ ասիցէ՛. Զինչ կերիցո՛ւ կամ զինչ արբոցո՛ւ՝ կամ զինչ զԳեցոցո՛ւ: Զի զա՛յդ ամենայն Հեթանոսի խընդրեն. ինչպիսի Գիբի՛ Հայրն յեր երկնա՛որ թէ ողորո՛յ է յեզ այդ ամենայն: Ինդրեցէ՛ նախ զարգայո՛ւթին Եսդո՛ւս թոյ եւ զարդարո՛ւթին նորա, եւ այդ ամենայն յաւելցի՛ յեզ: Մի՛ այսո՛ւտիւ Հոգայցէ՛ վասն զաղո՛ւ զի զաղին վասն ի՛ւր Հոգացի. շա՛ր է առորն շա՛ր իւր»: (Մարթեոս Զ: 25-34)

«Ուստի կը յայտարարեմ ձեզի. Մի՛ մտահոգուիք ձեր անձին մասին՝ թէ ի՛նչ պիտի ուտէք կամ ի՛նչ պիտի խմէք՝ ո՛չ ալ ձեր մարմիններուն մասին՝ թէ ի՛նչ պիտի հագնիք. մի՞թէ անձը աւելի չէ՞ կերակուրէն, ու մարմինը՝ Հագուստէն: Նայեցէ՛ք երկինքի թռչուններուն, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, ո՛չ ալ կը ժողովեն ամբարի մէջ. բայց ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք: Դուք աւելի չէ՞ք արժեք անոնցմէ: Հիմա ձեզմէ ո՞վ կընայ մտահոգուելով՝ կանգո՛ւն մը աւելցնել իր հասակին վրայ: Եւ ինչո՞ւ կը մտահոգուիք Հագուստի մասին. նկատեցէ՛ք դաշտի շուշանները, թէ ի՛նչպէս կ'աճին. ո՛չ կ'աշխատին ու ո՛չ կը մտնեն: Բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: Ուստի եթէ դաշտի խոտը, որ այսօր կայ եւ վաղը փուռը կը նետուի, Աստուած ա՛յնպէս կը հագուեցնէ, հապա ո՛րչափ աւելի ձե՛զ, թերահաւատներ: Ուրեմն մի՛ մտահոգուիք՝ ըսելով. «Ի՞նչ պիտի ուտենք», կամ՝ «Ի՞նչ պիտի խմենք», կամ՝ «Ի՞նչ պիտի հագնինք» քանի որ Հեթանոսները կը փնտռեն այդ բոլոր բաները. որովհետեւ ձեր երկնաւոր Հայրը զիտէ թէ այդ բոլոր բաները պէտք են ձեզի: Բայց նախ խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնն ու անոր արդարութիւնը, եւ այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի: Ուստի մի՛ մտահոգուիք վաղուան համար, որովհետեւ վաղուան օրը պիտի հոգայ իրեն համար. բաւական է օրուան իր անձկութիւնը»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԲ:22-31)

Այս խօսքերով Յիսուս Քրիստոս բացայայտ կ'ընէ մարդոց բռնած ներկայ կենցաղը եւ այն նպատակը որուն համար իրենք ստեղծուած են: Յիսուսի այս խօսքերուն իմաստը հասկնալ դժուար չէ: Մարդ պարտ է հաւատք ունենալ Աստուծոյ վրայ, թէ մեր կեանքի ամէն մէկ ըոպէին ինքն է, որ մեզ կը խնամէ: Երբ երախայ ենք՝ մեր մօր կերպարանքով, երբ մանուկ ենք՝ մեր մօր եւ հօր կերպարանքներով, երբ պատանի պարմանուհի ենք՝ մեր հօր եւ մօր կերպարանքով, երբ դպրոցը կ'ուսանինք՝ մեր ուսուցիչներու կերպարանքով, ընտանեկան կեանքի մէջ՝ կնոջ կամ ամուսինի կերպարանքով ...: Այս խօսքերուն բուն իմաստը այն է

Թէ մարդ պարտ է ընդունիլ իր կեանքի բոլոր պատահարները՝ լաւ կամ վատ, որովհետեւ անոնք բոլորն ալ Աստուծոյ կամքն են եւ մեզ խնամելու ձեւը: Գուցէ շատեր համաձայն չըլլան այս դաղափարին: Ըստ անոնց տեսակէտին Աստուած բարի է ու սէր, որով մարդոց վատ պատահար չի տար: Այս հայեացքը ճիշդ է, բայց պէտք չէ մոռնալ թէ մարդ արարած ինք իր ճակատագրին ճարտարապետն է եւ իր կերտած կենցաղով կը կերտէ ճակատագիր մը, որով ապագային անոր յառաջ բերած հաճելի կամ անբաղձալի պատահարներուն կ'ենթարկուի: Մարդիկ իրենց խաւարամտութեան հետեւանք այդ պատահարները Աստուծոյ տնօրինած պարզեւ կամ պատիժները համարած են: Պարտ ենք ընդունիլ մեր կեանքի բոլոր լաւ ու վատ պատահարները, որովհետեւ անոնք բոլորն ալ մենք կերտած ենք: Անոնք կը թուին ըլլալ ինքնադաստիարակութիւն մը: Որովհետեւ մարդուն ճշմարիտ էութիւնը՝ հոգին Քրիստոսն է, մարդն ալ անոնք վերագրած է Աստուծոյ տուած հատուցումներուն: Դաստիարակութիւնը զանազան ձեւեր ունի: Ասոնց մաս կը կազմէ ուսուցումը: Յիսուս ջանաց սորվեցնել կատարելութեան ուղին եւ ներկայ կեանքի ընթացքին յաւիտենական կեանքի տիրանալու միջոցը: Ըստ մարդկային խաւարամտութեան դաստիարակութեան ուրիշ մէկ ձեւն ալ անձին մէջ պատիժի վախ արծարծել կամ պարզելի յոյս տալն է: Այս նպատակով ալ անցեալին մանուկները կը ծեծէին՝ անոնց գործած չարութիւններուն համար: Թէպէտեւ, ընդհանուր առմամբ այդ ծեծը սէրէ յառաջ կու գար, որպէսզի անոնք սորվին կատարեալ ըլլալ եւ չարութիւն չընել: Այս հիման վրայ ալ մարդիկ կը համարեն, թէ իրենց կեանքի բոլոր պատահարները Աստուծոյ սէրէն յառաջ կու գան: Անտարակոյս լաւերը բոլորն ալ մեր հանգիստին ու վայելքին համար են, իսկ վատերն ալ՝ մեր սորվելիք

դասերը: Ճիշդ է թէ Աստուած սէր է, հետեւաբար Աստուած չի պատժեր: Որովհետեւ Աստուած մարդուն տուած է ազատ կամք, ինք չի միջամտեր եւ կ'արտօնէ որ մարդը պարտադրուի իր կերտած պարտքերը ուշ կամ կանուխ վճարել ու դասը սորվիլ:

Աստուծոյ փափազն է, որ բոլորս ալ կատարեալ ըլլանք ու վայելենք յաւիտենական կեանքը եւ անոր տուած երանութիւնը: Այսինքն ապրինք «Աստուծոյ թագաւորութեան մէջ»: Երբ մարդ արարած իր միտքը զբաղ կը պահէ իր ապագային՝ «ուտելիքին», «խմելիքին», «հագնելիքին» ... համար, միտքը ազատ չ'ըլլար «սուրբ սիրտ» կերտելու եւ յաւիտենական կեանքի արժանանալու: Անշուշտ ասիկա չի նշանակեր որ ան ընկերութեան մէջ իր մաս եւ բաժինը պիտի չբերէ եւ իր այս կեանքի պարտականութիւնը լիովին պիտի չկատարէ՝ այլասիրութեամբ յօգուտ բոլորին:

Այս հանգրուանին, որպէսզի գրուածները սխալ չհասկցուին եւ ներկայացուած գաղափարները ճիշդ հայեացքով ըմբռնուին, պիտի փափագէի հետեւեալ գրութիւնը ներկայացնել: Ինչպէս վերեւ գրուած է, կան դաստիարակելու զանազան ձեւեր: Մանուկներուն միտքը տակաւին լրիւ չէ կազմուած: Միտքը կը սկսի կազմուիլ եօթ տարեկանին: Ճիշդ ասոր համար մայրս կ'ըսէր. «Եօթ տարեկանէդ ետք ըրած չարութիւններդ Աստուած այլեւս մեղք կը համարէ»: Ես ալ մինչեւ եօթերորդ տարեդարձս տունը չարութիւն ըրի եւ տարեդարձիս եւ յաջորդող օրերուն սուրբի պէս նստայ: Ահա աս է մանուկի մը հասկացողութիւնը: 14 տարեկանին պատանիին միտքը լրիւ կազմուած է, բայց ոչ՝ իր իմացականութիւնը: Հետեւաբար մանուկը կարող չէ իմացածին բուն իմաստը կամ կարեւորութիւնը հասկընալ: Այս հիման վրայ անցեալին եւ նոյնիսկ այսօր կ'օգտագործուի, իբրեւ դաստիարակութիւն, պատիժի

վախը կամ վարձատրութեան յոյսը: Մեծի վախն ալ
օգտագործուած է անցեալին եւ նոյնիսկ անոր Հին
Կտակարանին մէջ Ս. Գրային հանգամանք տրուած է:

«Որ խնայէ՛ ՚ի Գաւազան՝ աքեայ պորտի իւր-
իակ որ ախրէն՝ խնամով խրատէ»: (Լուսկայ ԺԳ:24)
«Գաւազանին խնայողը իր որդին կ'ստէ, բայց զայն
սիրողը վուժով կը խրատէ»:

«Մի խնայեալ խրատել պողպատ պի լիւ Ըարկանեա
պնա Գաւազանա՝ ոչ մեռանի: Դո՛ւ Ըարկանեա
պնա Գաւազանա, Բայց պանջն նորա սրբէա ՚ի
մահոռանէ»: (Լուսկայ ԻԳ:13-14)

«Մանուկէն մի՛ կանցներ պատիժը, որով հետեւ եթէ
զայն գաւազանով ծեծես՝ չի մեռնիր. Թէեւ դուռն զայն
գաւազանով կը ծեծես, բայց անոր անձը դժոխքէն
կ'ազատես»:

«Խրատեա պորտի վո՛ւ եւ ԸանԳոսպէ պէեպ, եւ
դոսպէ պաւոր անջին վոռմ»: (Լուսկայ ԻԹ:17)
«Խրատէ՛ քու որդիդ՝ որպէսզի քեզ հանգստացնէ, եւ քու
անձդ գուարձացնէ»:

Մանուկին յետոյքին ապտակ մը մեծ հասկացո-
ղութիւն կու տայ: Բայց եւ այնպէս կան ծնողքներ,
որոնք վայրագութեամբ կը ծեծեն իրենց գաւազանները:
Երբ միտքը լրիւ հասունցած է, ծեծը այն ատեն անդար-
մանելի հետքեր կը ձգէ: Նամանաւանդ պատանեկան
տարիքին գաւազաները այլեւս ամենեւին պէտք չէ ծեծի
ենթարկել: Խօսքով հասկցնելու ժամանակը հասած է:
Յատկապէս այսօր, նա մանաւանդ արեւմուտքի մէջ,
զաւակ ծեծել հակաօրինական է եւ ենթակայ պատիժի:
Արդեօք նման հասկացողութիւն մը մարդուն մէջ, որոշ
չափով, գիտակցութեան մակարդակի բարձրացում մը
կը ներկայացնէ: Մեծը կը համարուի վայրագութիւն
եւ անզօրութեան նշան: Մեծը ինչպէս նաեւ վախը
անհատին վրայ կը ձգեն հոգեբանական հետքեր, որոնք

երբեմն ալ կ'ըլլան անդարմանելի :

Դաստիարակութեան նպատակը պատիկը Ֆիզիքապէս ցաւցնել է՛, այլ՝ անոր «Ես»-ը «կոտրել»-ն է: Մանուկին տալ այն գաղափարը թէ՛ իր մայրը կամ հայրը իր ըսածին կամ ըրածին համար նեղուած են: Դաստիարակութեան ժխտական ձեւերուն նպատակը մանուկին սորվեցնել է, թէ՛ իր կեանքի ընթացքին իր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքները եթէ ներդաշնակ չեն տիեզերական օրէնքներուն, որ «Աստուծոյ կամքը» կը կոչենք, պիտի ունենան իրենց հակազդեցութիւնները, որոնց պարտ ենք ենթարկուիլ: Հոգեբանները կը թելադրեն պատիկին բացատրել, քան թէ ծեծել: Բայց դժբախտաբար մանուկները հասկնալու կարողութիւնը չունին: Ըստ Հին Կտակարանին, Աստուած ներկայացուած է իբրեւ պատժող Աստուած մը, որ մեր գործած մեղքերուն համար պատշաճ պատիժ կու տայ: Այս հիման վրայ Աստուած նաեւ կ'ըլլայ վրէժխնդիր: Յիսուս եկաւ մարդոց այս հասկացողութիւնը փոխելու եւ անոնց հասկցնելու թէ ի՞նչ է եղածը, այն ինչ որ իրենք «պատիժ» կը համարեն: Բայց դժբախտաբար հին Հրեաներուն տեսակէտը կը շարունակուի նաեւ այսօր՝ մեզի հասցուած «քրիստոնէութեամբ»: Կը թուի թէ համայն մարդկութիւնը հոգեկան զետնի վրայ տակաւին մանուկ է եւ չունի հասկացողութեան ու սորվելու կարողութիւն: Մարդ արարած իրեն ըսուածները կամ իր կարգացածները կը հասկնայ կամ կ'ըմբռնէ ըստ իր հասկացողութեան մակարդակով, որ կախեալ է իր յայտնաբերած գիտակցութեան մակարդակէն: Յիսուս բազմիցս մեզի սորվեցուց, թէ Աստուած սէր է եւ սէրը չի պատժեր: Ճիշդ է թէ Ան երբեմն օգտագործեց Հրեայ ժողովուրդին հասկնալու մակարդակին համապատասխան նախադասութիւններ: Բայց նոյն ժամանակ Յիսուս ըսաւ թէ բոլոր գործուած մեղքերը, թէ՛

Հօր եւ թէ՛ Որդւոյն դէմ ներելի են: Միայն Ս. Հոգիի դէմ գործուած մեղքը աններելի է: Այս խօսքերով Յիսուս մեզի կը սորվեցնէր «պատիժ»-ին ինչ ըլլալը: Ս. Հոգին Աստուծոյ զօրութիւնն է: Ամէն զօրութիւն զինք կառավարող իր ուրոյն օրէնքները ունի: Մարդն ալ այդ զօրութեան արդիւնքն է: Հետեւաբար երբ կը գործենք զօրութեան օրէնքներուն աններդաշնակօրէն, կ'ենթարկուինք այդ զօրութեան հակազդեցութիւններուն: Այս հասկացողութեամբ արդեօք կարելի է՞ «Աստուած պատժեց» ըսել: Մեզի կը մնայ Աստուծոյ զօրութեան՝ Ս. Հոգիի օրէնքներուն ներդաշնակ կենցաղ մը կերտել, որպէսզի մեր կեանքն ալ ըլլայ «հաճելի»՝ ըլլանք դրախտի մէջ քան թէ՛ դժոխքի: Զօրութեան՝ Ս. Հոգիի օրէնքները Հայր Աստուծոյ կողմէ դրուած անխախտելի օրէնքներ են: Միթէ կացութիւնը նոյնը չէ՞ երբ բնագիտութեան օրէնքներուն դէմ կը գործենք: Արդեօք կարելի է՞ երկրորդ յարկի պատշգամէն դուրս ցատկել, եւ վար չիյնալ ու մեր մարմնոյն զանազան մասերը չվնասել: Երբ կոտորածներ պատահին արդեօք պիտի ըսէի՞նք, թէ Աստուած մեզ պատժեց: Մենք ենք ստեղծողը թէ՛ դրախտը եւ թէ՛ ալ դժոխքը: Յիսուս մեզի սորվեցուց կատարելութեան ուղին: Այս ուղին ալ Ս. Հոգիի զօրութեան՝ տիեզերական օրէնքներու համապատասխան ու ներդաշնակ ապրիլն է: Այս կենցաղը անձին համար կը ստեղծէ դրախտը՝ հո՛ս, աշխարհի վրայ: Տիեզերական օրէնքներու դէմ աններդաշնակ գործունէութեան յառաջ բերած հակազդեցութիւններն ալ անձին համար կը ստեղծեն դժոխքը: Հոգեկան գետնի վրայ համայն մարդկութիւնը տակաւին մանուկ է, հետեւաբար լաւ ու լրիւ չի հասկնար Աւետարանին մէջի Յիսուսի սորվեցուցածները եւ պատշաճ կերպով ալ չի դաստիարակուիր: Միթէ այսօրուայ քարոզիչներն ալ իրենց խաւարամտութեամբ տակաւին չեն

օգտագործեր մահուանէ վերջի «յաւիտենական դժոխք»-ի վախը եւ կամ «յաւիտենական դրախտ»-ի յոյսը իբր «Աստուածային դաստիարակութիւն»:

Մէջբերումին վերջին մասը կը ներկայացնէ մարդու կեանքին նպատակը: Յիսուս կ'ըսէ. «Խնդրեցէք նախ զարգայութիւն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա»: Ուրեմն մեր առաջին գործը պէտք է ըլլայ «խնդրել Աստուծոյ թագաւորութիւնը»՝ Աստուածայայտնութիւնը մեր մէջ իրականացնել, իսկ երկրորդն ալ՝ մեր կեանքի մէջ ամէն ինչ ընդունիլ իբրեւ Աստուծոյ արդարութիւնը: Երբ մարդ փորձառութիւնը կ'ունենայ Աստուծոյ հետ հաղորդուելու, կ'ըլլայ երանութեան մէջ, արդեօք այլեւս որեւէ բանի կարիքը կ'ունենա՞յ: Ինք կը լուծուի Աստուծոյ մէջ, կ'ըլլայ մաս եւ բաժին միականութեան: Ամէն մարդու հոգին իր մարմնին մահէն ետք մէկ կ'ըլլայ Աստուծոյ հետ, բայց անգիտակցաբար: Այլեւս ուղեղ չկայ յայտնաբերելու իր առաջնայ ունեցած գիտակցութիւնը: Բայց անգամ մը երեւակայեցէք երբ այդ միութիւնը կ'ըլլայ Քրիստոսի արթնութեամբ՝ գիտակցաբար, ի՛նչ երջանկութիւն եւ ի՛նչ երանութիւն: Ահա՛, այն ատեն է, որ մարդուն անհատականութիւնն ալ յարութիւն կ'առնէ:

Գուցէ այս հանգրուանին պատշաճ կ'ըլլայ անհատականութեան յարութեան մասին կարճ տեղեկութիւն մը տալ: Ամէն մարդու ճշմարիտ էութիւնը իր հոգին է: Այդ հոգին Աստուծոյ ներկայութիւնն է: Ան Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Այս հիման վրայ Ս. Գիրքի մէջ գրուած է.

«Ո՛չ գիտէ՛լ ե՞նչ Կաճար է՛լ Լսարանոյ, եւ
Ըոգի Լսարանոյ Բնակեալ է 'ի Յեզ» (Լ. Կորնթացիս Գ:16)
«Զէ՞ք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ
Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»:

Եթէ մեր մարմինները Աստուծոյ տաճարներ են,

Աստուած ալ պէտք է ըլլայ իր տաճարին մէջ: Այս հիման վրայ ալ անհատին հոգին, իր մէջ Աստուծոյ ներկայութիւնն է: Հոգին է, որ անհատին կու տայ կեանք եւ գիտակցութիւն: Քրիստոսի մեր մէջ ներկայութեամբ բոլորս ալ կ'ըլլանք Աստուծոյ որդիները:

«Ես ասացի թէ ասորո՞ւս իցէ՛, կամ որդի՞

Բարձրելոյ ամենե՛լեան»: (Սաղմոս 2Լ:6)

«Ես ըսի. «Դուք աստուածներ էք. Դուք բոլոր Ամենաբարձրին որդիներն էք»»: (Սաղմոս 2Բ:6)

«Սոյն ինչն Ըոգին վկայէ Ըոգոյս մերո՞ւմ,
Եթէ եմ՛ որդի՞. ապա ես ժառանգո՞ւլ. ժառանգո՞ւլ
Լսորո՞ւս՝ ես ժառանգակիցո՞ւլ Քրիստոսի»:

(Հոգմայեցիս Ը:16-17)

«Նոյնիքն Հոգին վկայութիւն կու տայ մեր հոգիին հետ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. Եւ եթէ զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... »:

Ստեղծագործութեան «վեց օրուայ» ստեղծագործութիւններուն համար գրուած է. «ու Աստուած տեսաւ որ բարի է»: Ստեղծագործութեան «եօթերօրդ օրը» վերջին արարքը մարդուն անհատականութիւն տալ էր: (Եբրայերէն «Նէֆս» բառը թէ՛ «չունչ» եւ թէ՛ «անհատականութիւն կը նշանակէ»:) Բոլոր անասուններն ալ շունչ ունին, բայց միայն մարդն է, որ անհատականութիւն ունի: Անհատականութեան համար չէ գրուած, թէ ան բարի էր: Մարդու անհատականութիւնը փոխաբերաբար ներկայացուած է իբրեւ Լուսաբեր հրեշտակը: Լուսաբեր կը նշանակէ «Լոյսը բերող»: Մարդուն անհատականութիւնն ալ մարդուն մէջ Աստուծոյ Լոյսը՝ Քրիստոսը յայտնաբերու միջոցն է: Բայց Լուսաբեր ուզեց Աստուծոյ գահը նստիլ, որ կը նշանակէ. մարդուն «Ես»-ն ալ ուզեց մարդը կառավարել, քան թէ Քրիստոս յայտնաբերել: Մարդուն հոգին՝ անոր զօրութեան մար-

մինը, Աստուծոյ զօրութեան մէկ մասնիկն է հետեւաբար անմահ է: Մարդուն մարմնին մահէն վերջ, հոգին կը միանայ եւ կը լուծուի Աստուծոյ զօրութեան մէջ: Մարդ այս բոլորէն անգիտակից է, որով մարդուն անհատականութիւնն ալ մարմնին հետ կը մեռնի կ'անհետանայ: Հետեւեալ համարին իմաստն ալ ահա՛, աս է:

«Զի թոշակն մեղաց մահ է.» : (Հոովմայեցիս Զ:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»:

Բայց երբ մարդ կը հաւատայ Յիսուս Քրիստոսի եւ կը հասկնայ Անոր սորվեցուցածները ու կը կիրարկէ զանոնք իր կեանքին մէջ՝ կ'ընթանայ կատարելութեան ուղիէն, կը կերտէ կատարեալ կենցաղ մը եւ Յիսուսի պատուիրածին համաձայն կ'ըլլայ կատարեալ:

«Արդ եղբր՝ — է դո՛ւ — է կատարեալ է, որպէս է —

Ըսյրն յեր երկնաոր կատարեալ է» : (Մատթէոս Ե:48)

«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

Կատարեալ մարդուն «Ես»-ը այլեւս չի նստիր Աստուծոյ գահին վրայ: Այդ «Ես»-ը՝ անհատականութեան ժխտական բեւեռը, լրիւ կ'անտեսուի անհատին կողմէ եւ անհատը կը յարի իր անհատականութեան դրական բեւեռին՝ Քրիստոսի: Քրիստոս անհատին մէջ կը բանայ «դռները» զօրութեան հոսքին եւ անձը կը յափշտակուի բարձր գիտակցութեան եւ կը գիտակցի ու կը տեսնէ՝ կը հասկնայ միականութիւնը զանազանութեան մէջ: Երբ ան թողու իր մարմինը զայն կ'ընէ գիտակցաբար, որովհետեւ հասկցած է, թէ զանազանութիւնը ճշմարտութիւն չէ այլ միայն «երազ» մը կամ «պատրանք» մը: Հոս յարմար է յիշել Քրիստոսի ըսածը.

«Այս էն կամէ Հօր իմոյ. պի ամենայն որ րեսանիցե՛ս զորո՛ր է — Հաւատացե՛ ի նա, ընկալցե՛ս զիւնան յաւիտեանականս է — էս՝ յարոցե՛ց անս յաւոսն յեդնոս» : (Յովհաննոս Զ:40)

«Որովհետեւ զիս զրկողին կամքը աս' է, որ ո՛վ որ տեսնէ Որդին ու Հաւատայ իրեն՝ ունենայ յաւիտենական կեանքը. ես ալ պիտի յարուցանեմ զայն՝ վերջին օրը»:

Անհատին համար «վերջին օրը» իր մարմնոյն մահուան օրն է: Միթէ ամէն անհատի համար իր մահուան օրը իրեն համար աշխարհի վերջը չէ՞: Բայց Հայր Աստուծոյ կամքը ան է, որ ով որ «տեսանիցէ զորդի»՝ յայտնաբերէ Քրիստոս իր մէջ, կ'արժանանայ յաւիտենական կեանքի, որ ներկային մէջն է եւ ոչ մահէ ետք՝ դարեր ետք մարմնին յարութիւնով՝ վերամարմնացումով: Իսկ Քրիստոսի ըսած. «ես՝ յարուցից զնա»-ն ալ անհատականութեան յարութիւնն է: Անհատը կը գոյատեւէ զօրութեան եզրին մէջ իր հոգին շղթայուած իր անհատականութեան հետ եւ կը նմանի Յիսուս Քրիստոսի: Իր «հոգին» ալլեւս չի վերամարմնանար եւ այս անգամ իր անհատականութեան յարութեամբ գիտակցաբար կ'ըլլայ մաս եւ բաժին Աստուծոյ: Ահա՛, աս է Աստուծոյ թագաւորութեան արժանանալ: Աս ալ կը համապատասխանէ Յայտնութեան գիրքին մէջի հետեւեալ համարին.

«Որ յաղթէ՝ արարից զնա սին ցաճարի
Աստուծոյ իմոյ, եւ արտախա ալ մի եւս ելցէ.
Եւ Գրեցից 'ի վերայ նորա զանուն Աստուծոյ
իմոյ, ...»: (Յայտնութիւն Գ:12)

«Ան որ կը յաղթէ, գանիկա իմ Աստուծոյս տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ ու ալ դուրս պիտի չելլէ: Անոր վրայ իմ Աստուծոյս անունը պիտի գրեմ ...»



ԴԱՏԵՂՈՒ ՄԱՍԻՆ

«Մի՛ դատե՛ք՝ պի՛ մի՛ դատեցի՛ք: Զ՛ի որով դատաստանա՛ս դատե՛ք՝ դատելո՛ց է՛վ. եւ որով շահով շահե՛ք՝ շահեացի՛ ձեզ: Զ՛ի՞ տեսանեա՛ս պշիղ յական՝ եղբօր խոյ, եւ՝ ՚ի խո՛մ ական՝ պերանդո՛ր ո՛չ նշմարեա՛ս: Ասմ՝ պի՛րդ տեսա՛ս ցեղբայր խո. Թո՛ղ Հանի՛ց պշիղդ յականէ՛ խո՛մմէ. եւ աճա՛սասի՛ն ՚ի խո՛մ ականդ՝ Գերան՛ն կայ: Ա՛յ զԺա՛որ՝ Հան՛ն նախ պերանդո՛ր յականէ՛ խո՛մմէ, եւ ապա՛ Հայեացեա՛ս Հանել՝ պշիղն յականէ՛ եղբօր խոյ: (Մատթէոս Լ:1-5)

«Մի՛ դատեք, որպէսզի չդատուիք: Որով Հետեւ ի՛նչ դատաստանով որ դատեք՝ ան՛վ պիտի դատուիք, եւ ի՛նչ չափով որ չափեք՝ ան՛վ պիտի չափուի ձեզի: Եւ ինչն ի՞նչ կը տեսնես եղբորդ աչքին մէջի շիւղը, ու չես նշմարեր քո՛ւ աչքիդ մէջի գերանը: Կամ ի՛նչ պէս կրնաս ըսել եղբորդ. Թո՛յլ տուր որ Հանեմ աչքիդ շիւղը, երբ աճա՛ս գերան կայ քո՛ւ աչքիդ մէջ: Կեղծաւոր, նախ Հանի՛ քո՛ւ աչքէդ գերանը, եւ ա՛յն ատեն յատկ պիտի տեսնես Հանելու Համար շիւղը եղբորդ աչքէն»:

(Տես նաեւ Ղուկաս Զ:37-38, 41-42)

Վերեւի մէջբերումը Յիսուս Քրիստոսի ուրիշները դատելու առնչութեամբ մեզի տուած զգուշացման յորդորն է: Եթէ անձ մը ուրիշի մը խօսքը կամ արարքը կը դատէ եւ կը նկատէ թէ անոնք վատ են, այդ կը նշանակէ թէ ինք արդէն իսկ գիտէ որ այդպիսի խօսք կամ արարք վատ են: Հետեւաբար, երբ ապագային ինք նման արտայայտութիւն մը ունենայ կամ արարք մը գործէ, կը նշանակէ թէ ինք ինչ որ կ'ընէ կամ կ'ըսէ վատ ըլլալը գիտակցաբար ըրած է: Ինք պիտի ենթարկուի այն հակազդեցութեան ինչ որ ինք ցոյց տուած էր: Ուրիշներու գործած վատ արարքները պարտ ենք ընդունիլ որպէս «Աստուծոյ կամքը» եւ ջանանք սորվիլ այդ արարքներուն մէջ թագնուած դասերը: Այս հաս-

կացողութեամբ արդեօք որեւէ մէկը դատելու կարիքը կը մնա՞յ: Անտարակոյս, այս գաղափարին հակառակողներ պիտի ըլլան եւ պիտի շարունակեն դատել եւ իրենք գիրենք պիտի նկատեն չարագործին զոհը: Մարդ կը դատէ ըստ իր հասած գիտակցութեան մակարդակին: Գիտակցութեան մակարդակը որքան բարձրանայ անձին ուրիշներու խօսք ու արարքները դատելու փափաքն ալ այդքան կը նուազի եւ կը հասնի տեղ մը, որ ինք միայն ինքզինք կը դատէ եւ իրմէ զատ ոչ ոք: Իսկ եթէ անձը վատ խօսք ու արարք մը ընէ, առանց գիտնալու թէ ինչ որ կ'ընէ վատ է, դատաստանի չենթարկուիր: Որով իրեն եղած նոյն արարքն ալ վատ պիտի չհամարէր եւ պիտի չդատէր: Երբ անձը անընդհատ իր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներուն համար ինքզինք կը դատէ, այն ատեն կը տեսնէ «իւր աչքին մէջի գերան»-ը՝ իր սխալները: Երբ ան կը յաջողի զանոնք մէկ առ մէկ շտկել եւ իր բնոյթը փոխել (եւ ահա աս է ճշմարիտ վերստին ծնունդը), այն ատեն ինք «սուրբ սիրտ» կերտելու ճամբան կը բանայ: Առանց բնոյթի փոփոխութեան եւ փոխան մահացու մեղքերու առաքինութիւններ կերտելու, մարդ կարող չ'ըլլար «սուրբ սիրտ» կերտել, հոգ չէ թէ որքան ժամանակ կու տայ աղօթելու՝ խոկալու: Երբ ան «գերանը իր աչքէն հանէ»՝ իր բնոյթը փոխէ, այն ատեն իր դէմ վատ խօսք ու արարք գործողը չի դատեր, այլ միայն կ'ուզէ անոր օգնել: Առ նուազն կ'աղօթէ իր չարագործին համար, որպէսզի Աստուած անոր ալ պարգեւէ իմաստութիւն եւ ան ալ տեսնէ իր գործածին վատ ու սխալ արարք մը ըլլալը: Ահա՛, աս է նաեւ իմաստը «եղբօրդ աչքէն շիւղը հանելուն»: Միթէ Յիսուս ալ Զինք խաչողներուն համար չաղօթե՞ց:



ԹԱԳՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՏՈՒԹԻՒՄ

«Ա՛յ՛ Կրայէ՛ Կարճո-՛րի-ն՛ շանց, ե- մի՛ արհանե՛վ
ԿմարԳարի՛ր յե՛ր առ-աջի՛ խոսքաց, Կ՛ի մի՛ առ ո՛րն
՛ոյնիցէն Կնոսա, ե- Կարձեալ երԳիԶո-ցանիցէ՛ն
Կձեզ: (ՄարԴեոս Է:6)

«Սուրբ բանը մի՛ տաք շուներուն, ու ձեր մարգարիտները
մի՛ նետէք խոզերուն առջեւ, որպէսզի չկոխկռտեն զանոնք
իրենց ոտքերուն տակ, եւ դառնալով չբզբտեն ձեզ»:

*Ըստ Յիսուսի այս խօսքերուն, բացայայտօրէն
յայտնի է, թէ Յիսուս Աստուծոյ թագաւորութեան խոր-
հուրդին (mystery) թագուն՝ գաղտնի գիտութիւնը կը սոր-
վեցնէր իր աշակերտներուն, որպէսզի անոնք եւս կարե-
նային Աստուծոյ թագաւորութեան փորձառութիւնը
ունենալ: Յիսուս բացայայտօրէն կը շեշտէ, թէ ինք
թագուն գիտութիւնը հասարակութեան միայն առակ-
ներու ձեւով կու տար, որպէսզի բոլոր անոնք, որոնք
այդ թագուն գիտութիւնը ստանալու պատրաստ չէին,
հետեւաբար արժանի չէին ճշմարտութիւնը լսելու, լսե-
լով հանդերձ գայն չհասկնան: Յիսուս իր վերելի խօսքե-
րով իր աշակերտները կը զգուշացնէ, որպէսզի անոնք
ալ անխոհեմութեամբ այդ գիտութիւնը հանրութեան
չպարզեն եւ միայն արժանի անձերու փոխանցեն: Այս
նպատակով ալ Յիսուս յաճախ առակներով կը խօսէր:
Յիսուսի առակներուն եթէ ոչ բոլորին գէթ մեծամաս-
նութեան նպատակը յայտնաբերել է Աստուծոյ թագա-
ւորութեան թագուն գաղտնիքները: «Աւետարանի Խոր-
հուրդները - Բ - Յիսուսի Առակները» գիրքիս «Յառա-
ջաբան»-ին մէջ (էջեր 15-19, 28-38) ընդարձակօրէն ներկա-
յացուած է, թէ ինչու Յիսուս հանրութեան չէր պարզեր
այդ թագուն գիտութիւնը: Վերելի մէջբերումին մէջ
Յիսուս օգտագործելով «սրբութիւն» եւ «մարգարիտ»-
ի նման բառեր կը յայտնէր իր սորվեցուցածին սուրբ,
թանկագին եւ արժէքաւոր գիտութիւն մը ըլլալը:*

ԽԱՌԻԷԼ ՈՒ ՍՏԱՍԱԼ

«Խնդրեցէ՛ք՝ եւ ցոյցի՛ յեւ, Հայցեցէ՛ք՝ եւ Գրքի՛ն, Բախեցէ՛ք՝ եւ Բացցի՛ յեւ: Զի ամենայն որ խնդրե՛րէ՛ առնո՛ւ, եւ որ Հայցէ՛ Գրանէ՛, եւ որ Բախէ՛ Բացցի՛ նմա: Ո՞ր էցէ՛ ՚ի յեւջ մարդ՝ ցոր խնդրեցէ՛ որդի իւր Հաց, միջէ՛ շա՛ր ցոյցէ նմա. եւ կամ խնդրեցէ՛ յոհն, միջէ՛ օ՞չ ցոյցէ նմա: Երդ՝ ելէ՛ դո՛ւ՛ն որ շարժդ ե՛կ՝ Գիտէ՛ յարգեա՛ն Բարեա՛րաց՝ որդեաց յերոց, ո՛րչափ է՛ա առաւել Հայրն յեր որ յերկինս է ցոյցէ Բարեա՛ն ա՛յնոցիկ որ խնդրե՛ն զնա: Զամենայն զոր միանգամ կամիջի՛ն՝ թէ արասցեն յեւ մարդիկ՝ ա՛յնպէս եւ դո՛ւ՛ն արարէ՛ ձեռնոցա՛ն. զի ա՛յս իսկ եւն օրէնդն եւ մարգարէ՛ք»:

(Մատթէոս Է:7-12)

«Եւ կամ խնդրեցէ՛ յոհ, միջէ՛ կարի՞ճ ցոյցէ նմա»:

(Ղուկաս ԺԷ:12)

«Խնդրեցէ՛ք՝ ու պիտի տրուի ձեզի. փնտռեցէ՛ք՝ ու պիտի գտնէք. դուռը բախեցէ՛ք՝ ու պիտի բացուի ձեզի: Որովհետեւ ո՛վ որ խնդրէ՛ կը ստանայ, ո՛վ որ փնտռէ՛ կը գտնէ, եւ ո՛վ որ դուռը բախէ՛ պիտի բացուի անոր: Զեզմէ՛ն ո՞վ է այն մարդը, որմէ՛ եթէ իր որդին Հաց ուզէ՛ քար կու տայ անոր. կամ եթէ՛ ձուկ ուզէ՛ միթէ՛ օ՞ճ կու տայ անոր: Ուրեմն՝ եթէ՛ դո՛ւ՛ք՝ որ չար էք՝ գիտէք բարի նուէրներ տալ ձեր գաւազներուն, ո՛րչափ աւելի ձեր Հայրը՝ որ երկինքն է, բարի՛ բաներ պիտի տայ անոնց՝ որ կը խնդրեն իրմէ՛: Ուրեմն՝ ամէն ինչ որ կ'ուզէք՝ որ մարդիկ ընեն ձեզի, դո՛ւ՛ք ալ այնպէս ըրէք անոց, որովհետեւ սարկա՛ն է Օրէնքն ու Մարգարէները»:

«Կամ եթէ՛ Հաւկիթ ուզէ՛ միթէ՛ կարի՞ճ պիտի տայ անոր»:

«Ուրեմն՝ եթէ՛ դո՛ւ՛ք՝ որ չար էք՝ գիտէք ձեր գաւազներուն բարի նուէրներ տալ, ո՛րչափ աւելի ձեր Հայրը երկինքն Սուրբ Հոգին՝ պիտի տայ անոնց՝ որ կը խնդրեն իրմէ՛»:

(Ղուկաս ԺԱ:13)

(Տես նաեւ Ղուկաս ԺԱ:9-13)

Յիսուս Քրիստոսի վերելի խօսքերը մակերեսային հայեացքով մը նկատի առնուելուն համար շատ անգամ սխալ հասկցուած են: Այդ հիման վրայ ալ մարդիկ իրենց «Ես»-էն եկած ցանկութիւններու ցանկ մը իրենց աղօթքներուն մէջ կը ներկայացնեն: Աստուած Ալատտինին լապտերէն ելլող ճինը (ոգին) չէ, որ մեր բոլոր անպէտ փափազները իրականացնէ: Յիսուսի ըսած «Խնդրեցէ՛ք՝ եւ տացի՛ ձեզ»-ը ակնարկութիւն է Աստուծոյ թագաւորութեան խընդրուելուն եւ ոչ եսասիրական ցանկութիւններուն: Մեր բոլոր փափաքները, որոնք ներդաշնակ են տիեզերական օրէնքներուն, կ'իրականանան: Բայց այս իրականացման համար ալ անձը իր պատշաճ ջանքը պէտք է թափէ եւ ոչ թէ միայն խնդրէ, սպասէ եւ յուսայ: Այս խնդրանքներու իրականացումն ալ Քրիստոսի ըսած յաջորդ խօսքին՝ «Հայցեցէ՛ք՝ եւ գտջի՛ք»-ը հասկնալու ճամբան կը բանայ: Ըսուած «փնտռեցէ՛ք ու պիտի գտնէք»-ն ալ, ակնարկ մըն է այն ջանքին, որ անհրաժեշտ է «գտնելու»՝ ստանալու համար: Իսկ եթէ Քրիստոսի ակնարկութիւնը Աստուծոյ թագաւորութեան համար է, մեր «փնտռտուք»-ին առարկան ալ պետք է ըլլայ Աստուծոյ թագաւորութիւնը: Ըստ Յիսուս Քրիստոսի սորվեցուցածին, Աստուծոյ թագաւորութիւնն ալ մեր ներսիդին է: Հետեւաբար այդ փնտռտուքն ալ պէտք է ըլլայ խոկալով եւ ներհայեցողութեամբ: Քրիստոսի երրորդ խօսքն ալ հետեւեալն է. «բախեցէ՛ք՝ եւ բացցի՛ ձեզ»: Ուրիշ առիթներով Քրիստոս նաեւ ըսած է. «Ես եմ դուռը»: Հետեւաբար, Քրիստոս, որ ամէն անձի ճշմարիտ էութիւնն է, կը թուի նաեւ անձին մէջի Ս. Հոգիի կենսատու զօրութեան հոսքին «դուռ»-ը ըլլալ: Քրիստոս ըսած է. «Ես եմ դուռը», որովհետեւ ամէն անձի իր ներքին Քրիստոսն է, որ կը բանայ զօրութեան դռները՝ խակրաները, որպէսզի Ս. Հոգիի զօրութիւնը արատապէս ներգործէ

անձին ներս: Բացուելիք դռները Ս. Պատարագի միջոցին սարկաւազին ըսած «Համբարձեք իշխանք զըրունս ձեր 'ի վեր, Համբարձցին դրունք յաւիտենից եւ մտցէ թագաւոր փառաց»-ին մէջ նշուած դռներն են: «Դռնբացէք»-ի արարողութենէն ալ այս դռները՝ խակրաները բանալը պարտ ենք սորվիլ եւ մեր կեանքերուն մէջ կիրարկել: Անձին ստացած Ս. Հոգիի զօրութեան որակէն կախեալ է իր ստացած բոլոր շնորհները: Անոնք բոլորն ալ Հետեւանքն են անձին կերտած բարձր գիտակցութեան մակարդակին: Անձին Քրիստոսի «դուռ»-ը բախելուն իմաստն ալ այն է, թէ ինք իր անհատականութեան ժխտական բեւեռը՝ «Ես»-ը անտեսելով յարիլը դէպի իր անհատականութեան դրական բեւեռին՝ Քրիստոսի: Նման արարքով ալ ինք բախած կ'ըլլայ Քրիստոսի «դուռը»: Նման պարագայի անհատին բոլոր փափագները կ'ըլլան ըստ իր ներքին Քրիստոսին կամքին: Եթէ իր փափագները կը ներկայացնեն Աստուծոյ կամքը, արդեօք կարելի է⁶, որ անոնք չիրականանան: Եւ ահա՛, աս է «բախելուն» ու «բացուելուն» իմաստը:

Վերեւի մէջբերումին մնացեալ մասին մէջ Յիսուս բաղդատութիւններ կը ներկայացնէ զանազան օրինակներով, ինչպէս «հացը եւ քարը», ինչպէս «հաւկիթը ու կարիճը»: Ան բաղդատութիւնը կ'ընէ մարդոց եւ Աստուծոյ միջեւ: Աստուած մարդիկ «չար» կը համարէ, որովհետեւ մարդիկ ընդհանուր առմամբ եսասէր են: Եթէ «չար» մարդը իր զաւակին բարի բաներ կուտայ, որքան աւելին կու տայ երկնային Հայրը, որ բարի, սուրբ ու սէր է:

Անգամ մը եւս Յիսուս կը յիշեցնէ, թէ մարդուն կենցաղը՝ խորհուրդ, խօսք ու արարքներն են որ կ'որոշեն ներկայացուած փափագներուն իրականացումը: Հետեւաբար Ան կ'ըսէ. «Չամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ անյայտ եւ դժւար

արարէ՞ք նոցա. զի ա՛յս իսկ են օրէնքն եւ մարգարէք»:
Այս մէջբերումին մէջ, Յիսուսի այս վերջին խօսքը կը
համապատասխանէ «ինչ որ ցանես, ան ալ կը հնձես»-ին:
Իսկ երբ Ան կ'ըսէ. «որովհետեւ ասիկա է Օրէնքն»,
ակնարկ մըն է վերեւ յիշուած տիեզերական
օրէնքներուն, որոնք թէ՛ Յիսուս եւ թէ՛ մարգարէները
քարոզած էին:



Լսել Աստուծոյ Խօսքը ու Կիրարկել

«Եւ նա՛ ասէ. Նա՛ Երանի՛ այնպիսի է, որ լսէն
զբանն Լսարո-ժոյ, Եւ անիցէն» : (Ղուկաս ԺԷ : 28)

«Իսկ ինք ըսաւ. «Մա՛նաւանդ երանի՛ անոնց, որ կը լսեն
Աստուծոյ Խօսքը ու կը պահեն» :

«Մտէ՛՛վ ընդ նեղ դո-ռն. Վանի ընդարշա՛կ է
դո-ռն՝ Եւ Համարշա՛կ Ճանապարհն՝ որ ցանի ՚ի
կորո-սոյ, Եւ Բազմ՛-մէ էն որ մրանէն ընդ նա :
Քանի անշո-ւկ է դո-ռն՝ Եւ նե՛ղ Ճանապարհն՝ որ
ցանի ՚ի կէանս, Եւ սակա՛ւ էն որ Բրանէն զնա » :
(Մարթէոս Է : 13-14)

«Նե՛ղ դունէն ներս մտէք. որովհետեւ լայն է այն դուռը,
եւ ընդարձակ՝ այն ճամբան, որ դէպի կորուստ կը տանի,
ու շատ են անոնք՝ որ կը մտնեն անկէ. որովհետեւ նեղ է
այն դուռը, եւ անձուկ՝ այն ճամբան, որ դէպի կեանք կը
տանի, ու քիչ են անոնք՝ որ կը գտնեն զայն» :

(Տես նաեւ Ղուկաս ԺԳ:24)

Վերելի առաջին մէջբերումին իմաստը կը թուի շատ պարզ ըլլալ: Այս հիման վրայ շատեր անընդհատ Ս. Գիրքը կը կարդան, որպէսզի հմուտ ըլլան Աստուծոյ «բան»-ին՝ խօսքին: Ուրիշներ ալ Աւետարանը կը քարոզեն: Հեռատեսիլէն կը տեսնենք բազմաթիւ քարոզիչներ, որոնց նպատակը կը թուի Աստուծոյ «բան»-ը՝ խօսքը հանրութեան իմացնել: Իսկ կան յարանուանութիւններ, որոնք կը ջանան այլ կրօնքներու պատկանողները քրիստոնէացնել՝ կրօնափոխ ընել՝ իրենց հաւատացած ձեւով՝ որպէս իրենց պատկանած յարանուանութեան անդամ: Անտարակոյս անհրաժեշտ եւ օգտակար է Ս. Գիրքը կարդալ: Նաեւ օգտակար կրնայ ըլլալ քարոզներ մտիկ ընել: Բայց եթէ քարոզիչները, իրենք կարդացած ըլլալով հանդերձ, չեն «լսած»՝ հասկցած Աստուծոյ խօսքը, արդիւնքը կ'ըլլայ. «երբ կոյրը կ'առաջնորդէ կոյրը երկուքն ալ փոսը կ'իյնան»: Բայց պէտք չէ

մոռնանք, թէ ըստ Յիսուսի ըսածին, մեր վարդապետը՝ ուսուցիչը Քրիստոսն է, որ մեր ներսիդին է: Մարդ պէտք է սորվի Անոր «մտիկ ընել»: Հետեւաբար Յիսուսի ըսած «երանին» անոնց համար է, որոնք իրենց անհատականութեան դրական բեւեռին համաձայն կ'ապրին, ըստ Քրիստոսի կամքին: Անոնց դռները պիտի բացուին եւ Ս. Հոգիի շնորհները պիտի ստանան՝ ներառեալ իմաստութիւնը: Իմաստութիւնն ալ անձին կը յայտնէ Ս. Գիրքին մէջ գրուածներուն թագուն իմաստները: Այդ թագուն գիտութիւնը անհրաժեշտ է, բայց ան պէտք չէ մնայ միայն իմացական գետնի վրայ, այլ անոնք պէտք է կիրարկուին անձին կեանքին մէջ: Երբ անձը, հասկնալով Աստուծոյ «բան»-ը՝ խօսքը, կ'որոշէ զայն «պահել»՝ կիրարկել իր կեանքին մէջ, ինք կը փոխուի իր խորհելակերպով, իր վարմունքով, իր հայեացքով ու իր կենցաղով: Այն անձը, որ կը յաջողի նման արարքով իր բնոյթը փոխել, այն ատեն է որ ան կ'ըլլայ Յիսուսի վերեւ ըսած երանելին:

Այս փոփոխութիւնը անձին մէջ կը ներկայացնէ վերեւի մէջբերումներուն երկրորդին մէջ գրուածները: Որովհետեւ դժուար է անձի մը համար իր բնոյթը փոխել, իր «Ես»-ը բոլորովին անտեսել եւ եսասիրութենէ ձեռքազատուիլ: Հետեւաբար «նեղ» է այդ «դուռը»: Մարդ արարած ամէն բանի մէջ միշտ կը ջանայ նեղութենէ խուսափիլ եւ ամէն ինչի դիւրին ճամբան կը զատէ: Այս հիման վրայ Յիսուս ըսած է. «ընդարձակ է դուռն՝ եւ համարձակ ճանապարհն»: Բայց անոնք մեզ կը տանին դէպի հոգեկան «կորուստ»: Բայց առանց «նեղ դրան» տուած դժուարութեան եւ այդ դժուարութիւնները յաղթահարելու համար անձին տարած բոլոր ջանքերուն, յաջողութիւնը կարելի չ'ըլլար: Շատ դիւրին է ըսել. «կը հաւատամ հետեւաբար փրկուած եմ», բայց շատ դժուար է կիրարկել բնոյթի փոփոխութիւնը եւ ըստ այնմ ապրիլ:

ԾԱՌԵ ԻՐ ՊՏՈՒՄԸ

«Զգո՛ւյ՛ լերո՛ւն է՛ն սո՛ր մարգարէիցն՝ որ Գան
առ Յեզ Ըանդերձեռն է՛ն ոչխարաց, եւ՝ ՚ն երէկոյն է՛ն
Գա՛յլէ՛ յափշտակոզէ՛: Ի՛ պրոզո՛յ նոցա թանիջի՛ն է՛
սնոսա: Մի՛թէ՛ իաղեցէ՛ն ՚ն փշոց խաղող՝ կամ ՚ն
դաստակէ թո՛ւ: Ա՛յսպէս ամենայն թառ թարի՛
պրո՛ւզ թարի առնէ, եւ թա՛ռ չար պրո՛ւզ չա՛ր
առնէ: Ո՛չ կարէ թառ թարի՛ պրո՛ւզ չա՛ր
առնել, եւ ո՛չ թառ չար՝ պրո՛ւզ թարի՛ առնել:
Ամենայն թառ՝ որ ոչ առնէ պրո՛ւզ թարի,
Ըստանի եւ՝ ՚ն Ըո՛ւր արկանի: Ապա՛ ՚ն պրոզո՛յ
նոցա թանիջի՛ն է՛ սնոսա»: (Մարթէոս Է: 15-19)

«Զգուշացի՛ք սուտ մարգարէներէն, որոնք կու գան ձեզի
ոչխարի Ըանդերձերով, բայց ներսէն՝ յափշտակող
գայլեր են: Իրենց պտուղէ՛ն պիտի ճանչնաք գանոնք:
Միթէ՛ փուշերէն կը քաղէ՞ն խաղող, կամ տատակէն՝
թուղ: Այսպէս ամէն բարի ծառ՝ լաւ պտուղ կը բերէ,
եւ վատ ծառ՝ չար պտուղ կը բերէ: Բարի ծառը չի
կրնար չար պտուղ բերել, ո՛չ ալ վատ ծառը՝ լաւ
պտուղ բերել: Ամէն ծառ որ լաւ պտուղ չի բերեր, կը
կտրուի ու կը նետուի կրակը: Ուրեմն՝ իրենց պտուղէ՛ն
պիտի ճանչնաք գանոնք»:

«Կամ արարէ՛ն է՛ սթառն թարի՛ եւ սպրո՛ւզ նորա
թարի, կամ արարէ՛ն է՛ սթառն չար՝ եւ սպրո՛ւզ
նորա չար. ինչպէ՛ն ՚ն պրոզո՛յ անրի թառն ճանա-
շի: Օ՛նո՛ւնդ է՛ իժեց, սի՛ն արդ կարեցէ՛ն է՛ թարիս
խօսել՝ որ չարէ՛ր է՛ն. ինչպէ՛ն ՚ն յաւելո՛ւսածո՛յ
սրբի խօսի՛ թերան: Մարդ թարի՛ ՚ն թարի՛ Գան-
ձոց սրբի իրոյ Ըանէ՛ սթարիս: Եւ՝ մարդ չար՝
՚ն չա՛ր Գանձոց սրբի իրոյ Ըանէ՛ սթարիս: Բայց

ասե՛մ թէ՛ ընդ ամենայն դասարկ թանի պոր խօսի-
ցին մարդիկ, որացեն Համա՛ր յառօրն դասասոր-
նի: **Ջի՛ն՛ի** թանից շոց՛ արդարասցիս, ե-՛նի թանից
շոց՛ պարդառօրեացիս»: (Մարթէոս ԺԲ: 33-37)

«Կա՛մ լա՛ւ սեպեցէք ծառը, ու անոր պտուղը լա-
կ՛ըլլայ, կա՛մ վա՛տ սեպեցէք ծառը, եւ անոր պտուղը
վատ կ՛ըլլայ: որովհետեւ ծառը կը ճանչցուի իր
պտուղէն: Իժերո՛ւ ծնունդներ, ի՞նչպէս կընաք՛ չար
ըլլալով՝ բարի բաներ խօսիլ: որովհետեւ բերանը կը
խօսի սրտին լիութենէն: Բարի մարդը իր սրտին բարի
գանձէն կը հանէ բարի բաներ՝ իսկ չար մարդը իր
սրտին չար գանձէն կը հանէ չար բաներ: Բայց կը
յայտարարեմ՝ ձեզի: Ամէն դատարկ խօսքի համար՝ որ
մարդիկ կը խօսին՝ հաշիւ պիտի տան դատաստանին
օրը: որովհետեւ քու խօսքերէ՛դ պիտի արդարանաս, եւ
քու խօսքերէ՛դ պիտի դատապարտուիս»:

(Տես նաեւ Ղուկաս Զ:43-45)

*Այս երկու մէջբերումները մեծամասնութեամբ
նոյն գաղափարը կը ներկայացնեն: Առաջինին մէջ
Յիսուս կը զգուշացնէ սուտ մարգարէներէն: Անոնք
Աստուծոյ խօսքը՝ Ս. Գիրքի պարունակութիւնը կը քա-
րողեն եւ անոնց կու տան խեղաթիւրուած բացատրու-
թիւն մը: Անոնց ներկայացուցածները մակերեսային
տրամաբանութեամբ մը կը թուին ճիշդ ըլլալ: Բայց
երբ կարող ըլլանք իրենց ապրելակերպը ու կենցաղը
տեսնել, այն ատեն յայտնի կ'ըլլայ իրենց քարոզչու-
թիւններուն պատշաճութիւնը: Հեռատեսիլի բազմա-
թիւ քարոզիչներու վատ վարմունքները բացայայտուե-
ցան օրուայ լուրերէն: Անոնց մեծ մասը կը թուի քարո-
զել երկնային Աստուծոյ, բայց կը պաշտէ դրամը: Յոյց
տալու համար Յիսուսի հետեւեալ խօսքին. «Միթէ քաղի-
ցէն՝ ՚ի փռոց խաղող՝ կամ ՚ի տատասիւթ թուզ: Այսպէս
ամենայն ծառ բարի՝ պտո՛ւղ բարի առնէ, եւ ծա՛ռ չար
պտո՛ւղ չա՛ր առնէ: Ո՛չ կարէ ծառ բարի՝ պտուղ չա՛ր
առնել, եւ ո՛չ ծառ չար՝ պտուղ բարի՛ առնել» իմաստը,*

ներկայացնենք օրինակներով: Կար այր եւ կին հեռատեսիլի հանրածանօթ քարոզիչ գոյգ մը: Օր մը իմացուեցաւ, թէ մարդը գեղծարարութեամբ ձերբակալուած եւ բանտարկուած է եւ իրենց լուսցարանի ծորակները ոսկիէ շինուած էին: Երբ քարոզչութիւնը կեցաւ կիսն ալ ամուսնալուծուեցաւ: Ուրիշ քարոզիչ մը բողոքողի մէջ բռնուեցաւ: Հեռատեսիլէն քարոզչութեան միջոցին արցունքները աչքերէն վազելով ըսաւ թէ սատանան ընել տուած էր եւ ներողութիւն խնդրեց եւ շարունակեց քարոզչութիւնները մինչեւ որ երկրորդ անգամ եւս նման մեղքով բռնուեցաւ: Երբ քարոզողին կենցաղը չի համապատասխաներ իր ըսածներուն, յայտնի կ'ըլլայ որ անձը որքան որ ալ խելացի կամ պերճախօս ըլլայ, ան տակաւին հոգեկան գետնի վրայ խաւարամիտ է: Իսկ եթէ խաւարամիտ է իր քարոզածն ալ խաւարամտութիւն է: Երկրորդ մէջբերումին մէջ Յիսուս բացայայտ կ'ընէ, թէ մեր բոլոր խօսքերը ծագում կ'առնեն մեր «սիրտերու լիութենէն»: «Միտ»-ը փոխաբերական իմաստով կը ներկայացնէ միտքը: Հետեւաբար մարդն ալ կը խօսի իր ունեցած մտային որակին եւ իր ենթագիտակցութեան մէջ դրուած տեղեկութիւններուն համաձայն: Այդ տեղեկութիւնները կը կազմեն մարդուն բնոյթը: Յիսուս օգտագործած է. «Սրտին մէջի բարի կամ չար գանձերը», որոնք կը ներկայացնեն մարդոց բարի կամ չար՝ վատ բնոյթները: Ամէն անձի հոգին իր ներքին Քրիստոսն է, որ անձին կու տայ իր գիտակցութիւնը, որով Քրիստոս ալ գիտակից կ'ըլլայ անձին բոլոր խորհուրդ ու խօսքերուն: Այդ գիտակցութիւնը մեր զօրութեան մարմնին մէջ մեր դրած տեղեկութիւնը՝ թրթռացումի յաճախականութեան փոփոխութիւնն է: Այդ ալ կը կերտէ մեր ճակատագիրը, հետեւաբար կ'ըլլայ մեր դատաստանը:

ՃՇԱՐԻՏ ՀԱՄՏԵՐ

«Ասա՛ց եւ ասակ մի աս նոցա. Մի՞նէ կարեցե՞
կոյր կո՛րի՛ ասաջնորդել, ոչ աղաչէն երկո՞վին
՚ի խորխորասր անկանիցին. Ո՛չ է աշակերտ լա՛-
վան զվարդապետի իւր. ամենայն կարարեալն՝
եղիցի իբրեւ զվարդապետի իւր» : (Ղուկաս Գ : 39-40)
«Առակ մըն ալ ըսաւ անոնց. «Կոյրը կրնա՞յ առաջնոր-
դել կոյրը. միթէ երկո՞ւքն ալ փոքր պիտի չիլնան» : Աշա-
կերտը իր վարդապետէն գերիվեր չէ. բայց ամէն կա-
տարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ :
(Տես նաեւ Մատթէոս Ժ:24-25)

Այս համարին մէջ երկու յատկանշական կէտեր
կան: Առաջինը բացայայտ է: Ակնարկը այն քարոզիչ-
ներուն համար է, որ չեն հասկցած Յիսուսի ըսածներուն
մէջ թագնուած իմաստասիրութիւնները եւ անոնց բուն
իմաստները: Երբ Յիսուս կ'ըսէ «կոյր», անտարակոյս
ակնարկը Փրզիքական կուրուժեան համար չէ, այլ՝
հոգեկան: Աս, որուն մասին վերեւ ակնարկած էինք,
այսինքն «երրորդ»՝ «սրտի աչքով» տեսնել՝ հասկնալն է:
Անոնք որոնք բառացի իմաստով կ'ըմբռնեն Յիսուս
Քրիստոսի սորվեցուցածները, կը համարուին հոգեպէս
«կոյր» ըլլալ: Երբ անոնք իրենց հասկցած ձեւին համա-
ձայն կը քարոզեն եւ շատեր կը համոզեն եւ կ'ունենան
հետեւորդներ, «կոյրը» «կոյրերը» առաջնորդած կ'ըլլայ:
Անոնց սխալ ըմբռնումին հետեւանք ալ թէ՛ առաջնոր-
դողին եւ թէ՛ հետեւորդներուն վախճանը անբաղձալի
պիտի ըլլայ: Այս համարին երկրորդ մասը Յիսուսի սոր-
վեցուցածներուն մէջ ամենակարեւորն է: Երբ կը հետե-
ւինք հոգեպէս «կոյր» վարդապետի մենք ալ կը նմա-
նինք անոր եւ կ'ըլլանք հոգեպէս «կոյր»:

«Ո՛չ է աշակերտ ասաւել ինչ զվարդապետի, եւ
ո՛չ թառայ ինչ զպէր եւր: Շատ իցէ աշակեր-

որին՝ ելել եղեցի իՔրե- պարդապետի ի-ր, ե- ծա-
ռային՝ իՔրե- պաշտի ի-ր» : (Մաթթեոս Ժ:24-25)

«Աշակերտը գերիվեր չէ իր վարդապետին՝ ո՛չ ալ ծառան՝ իր տիրոջմէն: Բաւական է աշակերտին՝ որ իր վարդապետին պէս ըլլայ՝ ու ծառային՝ իր տիրոջ պէս»:

Բոլոր անոնք, որոնք իրենք զիրենք Յիսուսի աշակերտ կը համարեն եւ կ'ընդունին Քրիստոս իբրեւ իրենց վարդապետը, ահաւասիկ Յիսուսի այս խօսքը՝ վարդապետին կողմէ իր աշակերտին տրուած ամենակարեւոր եւ ամենաթանկագին պատգամն է: Այս հիման վրայ Քրիստոս հսկայական պարտականութիւն մը կու տայ իր աշակերտներուն. իրեն նմանիլ: Աշակերտին համար իր վարդապետին՝ Քրիստոսի նմանելու միակ միջոցն ալ Զայն՝ որ անհատին ճշմարիտ էութիւնը՝ հոգին է, յայտնաբերել է իր անձին մէջ: Ինչպէս Յիսուս նաւուն մէջ կը քնանար, Քրիստոս ալ մեր մէջ կը ննջէ: Աշակերտին նպատակը պէտք է ըլլայ իր ներքին Քրիստոսը արթնցնել, ինչպէս աշակերտները արթնցուցին նաւուն մէջ քնացող Յիսուսը: Անհատը այն ատեն կը հասկնայ Քրիստոսի հետեւեալ խօսքին իմաստը. «Իսաղաղութիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ ձեզ»: Երբ Յիսուս արթնցաւ, աշակերտներուն վախի պատճառ ծովուն վրայ փոթորիկը միթէ չխաղաղեցուց եւ անոնց ալ իր Աստուածային խաղաղութիւնը չտուաւ: Իսկ երբ աշակերտը չի նմանիր իր վարդապետին, եթէ նոյնիսկ քանիցս կրկնէ, թէ ինք Յիսուսի կ'աշակերտէ, ճշմարտութիւնը այն է որ ինք իր «Ես»-ին՝ սատանային կ'աշակերտէ եւ հետզհետէ ինք իր կենցաղով կը նմանի անոր: Միթէ Քրիստոս այլուր չէ՞ ըսած. «Ճառը իր պտուղէն կը ճանչցուի»: Այս խօսքով Քրիստոս նաեւ մեզի կը սորվեցնէ մեր կեանքին բուն նպատակը, եթէ իսկապէս կը հաւատանք իրեն եւ մենք զմեզ կը համարենք իր աշակերտը ըլլալ: Ուրեմն այս կեանքին

նպատակը պէտք է ըլլայ կերտել այնպիսի կենցաղ մը, որու շնորհիւ կարելի կ'ըլլայ հասնիլ Քրիստոսի բարձր գիտակցութեանը եւ նմանիլ իրեն: Իսկ մենք ի՞նչ կ'ընենք: Միայն զինք կը պաշտենք, փոխանակ ջանալու իրեն նմանիլ: Ի հարկէ Քրիստոս պէտք է պաշտենք: Յաջորդ համարին մէջ Յիսուս բացայայտ կ'ընէ, թէ ի՞նչ է Քրիստոս պաշտելը: Ասիկա «Տէր, Տէր» ըսել չէ, այլ իր բոլոր սորվեցուցածները մեր կեանքի ընթացքին կիրարկելն է: Այսինքն իրեն նմանիլ: Միայն այն ատեն Ձինք պատշաճ կերպով պաշտած կ'ըլլանք:

«Զի՞ կոչել զիս՝ Տէր՝ Տէր, եւ զոր ասեմն ո՛չ ասնել: Լմենայն որ գայ առ իս, եւ լսէ զբանս իմ՝ եւ ասնէ զնոսա, ցոցի՛ց յեզ ո՛ւմ նման է»:

(Ղուկաս .9:46-47)

«Ինչո՞ւ Տէ՛ր, Տէ՛ր կը կոչէք զիս, բայց չէք գործադրեր ինչ որ կ'ըսեմ: Ո՛վ որ կու գայ ինձի, կը լսէ իմ խօսքերս ու կը գործադրէ զանոնք, ցոց տամ ձեզի թէ որո՞ւ կը նմանի»:

Այս համարը կը ներկայացնէ ճշմարիտ «քրիստոնէութիւնը»: Երբ Յիսուս Քրիստոսի սորվեցուցածները չենք գործադրեր, ապարդիւն են մեր պաշտամունքները, եկեղեցի յաճախելը, ժամերով «աղօթելը» եւ յաճախ «Փառք քեզ Տէր» ըսելը: Երբ Քրիստոս կ'ըսէ. «Ամենայն որ գայ առ իս, եւ լսէ զբանս իմ՝ եւ առնէ զնոսա» ահնարկ մըն է անհատին անտեսելը իր «Ես»-ը եւ յարիլ իր անհատականութեան դրական բեւեռին եւ հաղորդակցիլ իր ներքին Քրիստոսի հետ եւ ապրիլ ըստ Քրիստոսի կամքին քան թէ իր «Ես»-ին կամքին: Երբ Յիսուս կ'ըսէ. «ցուցի՛ց ձեզ ո՛ւմ նման է», դարձեալ կը կրկնէ այն ինչ որ վերեւ ըսած էր. «Մառը իր պտուղէն յայտնի կ'ըլլայ»: Այսինքն երբ անձը կը գործէ ըստ իր ներքին Քրիստոսի կամքին, հոգեկան գետնի վրայ անոր հասած մակարդակը յայտնի կ'ըլլայ իր կենցաղէն՝ խորհուրդ, խօսք ու գործքերէն: Անձն ալ կը սկսի նմանիլ Քրիստոսի:

ՄԵՌԵԼՆԵՐԸ ԹԱՊԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ

«Լսէ ցնա Յիսուս. Ե՛կ պէնի իմ, եւ թո՛յլ ցոտս
մեռելոցն թաղել պմեռեալս իւրեանց» : (Մարթէոս
Ը : 22)

«Յիսուս ըսաւ անոր. «Հետեւէ՛ ինծի, եւ թո՛ղ
մեռելներուն՝ թաղել իրենց մեռելները»:

Յիսուս այս խօսքը ըսաւ իր աշակերտներէն
մէկուն, որ կը փափագէր իրեն հետեւիլ, բայց նախ
ուզեց երթալ ու իր մահացած հօր մարմինը թաղել:
Այս խօսքերով Յիսուս բացայայտ կ'ընէ, թէ կարելորդ
մարմինը չէ, այլ է անձին հոգին: Երբ հոգին Ֆիզի-
քական մարմինը կը թողու այդ մարմինը՝ դիակը ոչ
մէկ արժէք ու կարելորդութիւն կ'ունենայ: Իսկ մենք
այդ մարմնին մեծ կարելորդութիւն կու տանք: Ֆիզիքա-
կան մարմինը հողէն եկած է եւ հողին ալ պիտի վերա-
դառնայ: Շատ աւելի յատկանշական է վերելի նախադա-
սուլթեան երկրորդ մասը. «Թո՛յլ տուր մեռելոցն թաղել
զմեռեալս իւրեանց»-ը: Ուրեմն, դիակին արժէք տալ
խաւարամտութեան նշան մըն է: Իսկ խաւարամիտն ալ
հոգեպէս մեռած է: Հետեւաբար «մեռելները» կը թաղեն
իրենց մեռելները: Ուրեմն ան, որ հոգեպէս արթուն է,
անոր հետաքրքրութիւնը «կեանք»-ն է ու կը հետեւի
«կեանք»-ին՝ Քրիստոսի եւ չի զբաղիր մեռելներով՝
խաւարամտութեամբ:



Ո՛՛՛՛՛ Է ՄԱՅՐ ԵՒ Ո՛՛՛՛՛ Է ԵՊԵՄՅՐ

«Եւ ասէ զնոսա. Մայր իմ եւ Եղբարդ իմ սո՛՛խ
են, որ զբանն Աստուծոյ լսեն՝ եւ առնեն»:
(Ղուկաս Ը:21)

«Իմ մայրս ու իմ եղբայրներս անո՛նք են, որ կը լսեն
Աստուծոյ խօսքը եւ կը գործադրեն զայն»:

Այս խօսքով Յիսուս չ՛անտեսեր իր հարազատները,
այլ Ան ըսել կ՛ուզէ թէ համայն մարդկութիւնը քոյր եւ
եղբայր են: Բայց զժբախտաբար մարդիկ իրենց
խաւարամտութեան հետեւանք միականութիւնը չեն
տեսներ եւ կը կարծեն, թէ զանազանութիւնը ճշմար-
տութիւն մըն է: Երբ Յիսուս կ՛ըսէ. «որ զբանն Աստուծոյ
լսեն՝ եւ առնեն», կը յայտարարէ թէ անոնք որոնք
կատարելութեան ուղիէն կ՛ընթանան, այսինքն կ՛ըմբռո-
նեն Յիսուսի տուած թագուն գիտութիւններուն իմաս-
տը եւ զանոնք կը գործադրեն, կը կերտեն աւելի բարձր
գիտակցութիւն ու կը հասկնան բոլորին միականու-
թիւնը եւ կ՛ըլլան մէկ ընտանիք՝ Քրիստոսով: Ամէն
անհատի հոգին Քրիստոսն է: Եւ ահա՛, աս է բուն իմաս-
տը «եկեղեցի»-ին: Բոլոր հաւատացեալները կ՛ըլլան
մէկ «ընտանիք» զորս «եկեղեցի» կը կոչուի:



ՀԱՄԱՏՔԻՆ ՈՐԱԿԸ

«Լ՛մէն ասե՛մ յեզ՛ թէ ե- ո՛չ յԽորայելե՛ր՝ այսչափ

Ըստ-արս Գրի՛» : (Ղուկաս Լ:9)

«Զեզի կը յայտարարեմ թէ Իսրայէլի մէջ անգամ ես
չգտայ ա՛յսչափ մեծ հաւատք»:

Յիսուս Քրիստոս լրիւ յայտնաբերած էր Աստուած, հետեւաբար ինք համայն մարդկութիւնը կը համարէր իր հարազատները: Միթէ ամէն անձի ճշմարիտ էութիւնը՝ հոգին Աստուծոյ որդին՝ Քրիստոս չէ՞: Միթէ Ս. Գիրքին մէջ «Դուք բոլորդ Աստուծոյ որդիներ էք» չէ՞ գրուած: Այս հիման վրայ Յիսուս ամենեւին խարութիւն չդրաւ ազգերու, կամ կրօնքներու միջեւ: Վերեւի համարը ասոր ցայտուն մէկ օրինակն է, ուր Յիսուս կը յայտարարէ թէ հեթանոս կոչուած Հռովմէացի բոլոր Հրեաներէն աւելի հաւատք ունէր: Այս հիման վրայ կարեւորը մարդոց շինած կրօնքներուն հետեւիլը չէ, այլ հաւատք ունենալ է Աստուծոյ վրայ: Ճշմարիտ հաւատքը (faith) չէ այն բոլոր հաւատալիքները (beliefs), որոնք կը կարծենք թէ ճշմարիտ են, այլ Յիսուս Քրիստոսի բոլոր սորվեցուցածները հասկնալ, ըմբռնել եւ կիրարկելն է՝ միանգամայն բացարձակ վստահութեամբ ընդունիլ մեր կեանքի բոլոր պատահարները իբր Աստուծոյ կամքը եւ անհրաժեշտ արարքներ մեր հոգեկան գետնի վրայ յառաջացման:

«Ե- ասեմ աստե՛տալէն ցՏէր. Յա-ե՛լ մեզ Ըստ-արս :

Ե- ասե՛ Տէր. Եթէ ո-նիցի՛վ Ըստ-արս ինն պճա՛ր մանանոյ, ե- ասիցե՛վ Թըթեն-ո՛յս այսմի՛կ. Խլե՛ս ց ե- րնկեաց ՚ի Զոփո-, ե- Հնապանդեացի՛ յեզ՛» :

(Ղուկաս ԺԷ:5-6)

«Առաքեալները ըսին Տէրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»: Տէրը ըսաւ. «Եթէ մանանիսի Հատիկի չափ հաւատք ունե- նայիք, կրնայիք ըսել այս թթենիին. Արմատսիսի՛լ եղիր եւ անկուէ՛ ծովուն մէջ. ան ալ պիտի հնազանդէր ձեզի»»:

Հաւատքը (faith) պէտք է ըլլայ վճռական եւ ոչ ենթակայ տատամսումի: Որեւէ գործի մէջ նոյնիսկ ամենափոքր տատամսում յաջողութեան արգելք կը հանդիսանայ եւ պատճառ կ'ըլլայ անոր ճախողութեան: Հաւատքը, այն հաւատալիքները (beliefs) չեն որ մարդ իմացածներէն ինք մտայնօրէն զանոնք կ'իւրացնէ եւ իր ենթագիտակցութեան մէջ կը տեղաւորէ: Անոնք կը կազմեն նաեւ անձին բնոյթը: Անհատը կը կարծէ, թէ իր ամբարած հաւատալիքները, իր «հաւատք»-ը կը ներկայացնեն: Ինք կ'ըսէ, թէ հաւատք ունի եւ այդ հիման վրայ ալ ասդին ու անդին «հաւատք» կը քարոզէ: Հաւատքը անձնական փորձառութեամբ կարելի է ձեռք ձգել: Աշակերտութեան շրջանը անձին կը սորվեցնէ անձնական փորձառութեամբ իր ըրածին տալիք դերական արդիւնքին վրայ հաւատք ունենալ: Ահա աս է մասնագիտութիւնը: Իսկ հոգեկան կեանքի մէջ այդ փորձառութիւնը Քրիստոս կը շնորհէ Իր աշակերտին:



Ո՛Վ Է ՀԱՅՐԸ ԵՒ Ո՛Վ Է ՈՐԴԻՆ

«Ի նմին ժամո՛ւ՝ ցնձացա՛ւ Յիսուսս Ըոգուովն սրբով
Եւ ասէ. Գոհանա՛մ պէ՛էն Հայր, Տէր երկնից եւ
երկրի, պէ թափկեցեր պայս յիմասարնոց եւ՝ ՚ի Գեր-
նոց, եւ յայրնեցեր պայս Կուսարոց. Այո՛ Հայր, պէ
ա՛յսպէս Հաճոյ էղէս ասաջի ին: Ամենայն ինչ
Կուսա՛ւ ինչ ՚ի Ըօրէ իմմէ. եւ ո՛չ ո՛վ Գերբէ թէ
ո՛վ է որդի, եթէ ոչ՝ Հայր, եւ ո՛ է Հայր՝ եթէ
ոչ՝ որդի, եւ ո՛մ կամիցի՛ որդին յայրնել:»

(Ղուկաս Ժ:21-22)

«Այդ նոյն ժամուն՝ Յիսուս Հոգիով ցնձաց եւ ըսաւ.
«Կը ներբողեմ քեզ, Հայր՝ Տէր երկինքի ու երկրի, որ
այս բաները ծածկեցիր իմաստուններէն եւ խելացիներէն,
ու յայտնեցիր երախաներո՛ւն: Այո՛, Հայր, որովհետեւ այս-
պէս Հաճելի եղաւ քու առջեւդ: Ամէն բան յանձնուե-
ցաւ ինծի՛ իմ Հօրմէս, ու ո՛չ մէկը գիտէ թէ ո՛վ է
Որդին, բայց միայն՝ Հայրը, եւ թէ ո՛վ է Հայրը, բայց
միայն՝ Որդին, եւ ա՛ն՝ որուն Որդին վառվաքի յայտնել:»:

Յիսուս «ցնձացա՛ւ Հոգևովն սրբով»: **Այդ ցնծու-
թիւնը անձին մէջ Քրիստոսի յայտնութեան եւ բարձր
որակով յաւելեալ Ս. Հոգիի զօրութեան հոսքին ար-
դիւնքն է: Ան Աստուածային Երանութեան վայելումն է:
Ան կու տայ անհասկնալի գոհունակութիւն մը, այդ
պատճառով ալ Յիսուս ըսաւ. «Գոհանա՛մ պէ՛էն Հայր»:**

Այս մէջբերումին երկրորդ մասը սխալ հասկացո-
ղութիւններու տեղի տուած է: Երբ Յիսուս կ'ըսէ. «զի
ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ՚ի գիտնոց, եւ յայտնեցեր
զայս տղայոց», մարդիկ կը կարծեն թէ Աւետարանը
ուսումնասիրել եւ ջանալ Յիսուսի սորվեցուցածները
հասկնալ եւ անոնց մէջ թազնուած իմաստասիրութիւն-
ները գտնել սխալ մօտեցում մըն է եւ այդ պատճառով
ալ վատ աչքով կը նային այն անձերուն, որոնք կը

պրպտեն: Անոնց տեսակէտը պարզապէս «հաւատալ ու փրկուիլ» է: Բայց եթէ անձը չի գիտեր թէ ի՞նչի պիտի հաւատայ, ինչ օգուտ ունի հաւատալը: Ըստ անոնց այս ըմբռնումին, կը թուի թէ Յիսուս կը հակասէ Ս. Հոգիի շնորհներուն: Միթէ իմաստութիւնը Ս. Հոգիի շնորհը չէ՞: Ս. Գիրքին մէջ բազմիցս նշուած է իմաստութեան օգտին մասին: Ըստ Հին Կտակարանին, ստեղծագործութեան սկիզբը իմաստութիւնն էր, որով իր գոյացումով ընդհանուր ստեղծագործութիւնը իմաստութեամբ յառաջացաւ: Յիսուս իր հետեւեալ խօսքով. «զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ՚ի գիտնոց» կ'ըզէ ըսել, թէ մարդ իր մտային զօրութեամբ եւ խորհելու կարողութեամբ կարող չէ Աստուած գտնել: Այս կարողութիւնները երբ կ'օգտագործուին Աստուած գտնելու համար որպէս միջոց, անոնք միտքը զբաղ կը պահեն: Զբաղ միտքն ալ ազատ չէ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս՝ Աստուած գտնելու, աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել իր ներքին Քրիստոսի՝ իր ճշմարիտ էութեան փորձառութիւնը ունենալու: Բայց երբ միտքը երախայի միտքի նման պարզ է եւ ոչ զբաղ զանազան խորհուրդներով՝ յուշերով, ցանկութիւններով ու գիտելիքներով, այն ատեն անձը կարող կ'ըլլայ «սուրբ սիրտ» կերտել եւ իր ճշմարիտ էութեան փորձառութիւնը ունենալ: Եւ ահա՛, աս է իմաստը «եւ յայտնեցեր զայս սղայոց»-ին:

Վերելի մէջըբերումին վերջին մասն ալ շատ իմաստալից է: Ստեղծագործութեան՝ Փիզիքական աշխարհին մէջ Քրիստոս՝ Աստուծոյ Որդին, Աստուծոյ ներկայութիւնն է: Ոչ ոք գիտէ Որդին, կամ աւելի ճիշդ է ըսել, Որդոյն՝ Քրիստոսի փորձառութիւնը ունեցած է, հետեւաբար ոչ ոք կը ճանչնայ Որդին՝ Քրիստոս: Որովհետեւ ստեղծագործութեան մէջ Որդին՝ Քրիստոս Աստուծոյ յայտնութիւնն է, ուրեմն Հայրը զայն գիտէ: Մարդ եթէ իր ճշմարիտ էութիւնը՝ իր հոգին՝ Քրիստոս

չի գիտեր, ի՞նչպէս կրնայ գիտնալ Հայրը: Քանզի, Քրիստոս՝ Որդին յայտնութիւնն է Հօր, հետեւաբար Որդին՝ Քրիստոս գիտէ նաեւ Հայրը: Երբ անձը կը յաջողի երախայի միտքի պարզութեամբ կարողանալ «սուրբ սիրտ»՝ մաքրուած միտք մը կերտել, կը յաջողի գիտակցիլ իր ներքին Քրիստոսին: Այն ատեն Որդին Քրիստոս կը յայտնուի անոր, կամ ըստ Յիսուս Քրիստոսի խօսքին. «Եւ ում՝ կամիցի՛ որդին յայտնելը»:

Յաջորդ համարին մէջ Յիսուս կ'ըսէ. «Երթայք ուսարո՛ւք»: Ուսանիլ կը նշանակէ գիտութիւն անբարել: Աս կը թուի վերելի համարին մակերեսային եւ բառացի հասկացողութեան հակասել, ուր ճշմարտութիւնը պահուած էր գիտուններէն եւ իմաստուններէն եւ յայտնուած տղայոց: Յիսուս ամենեւին չի հակասեր իր խօսքերուն: Ան միայն կը թուի հակասել նախկին ըսածին անոնց համար, որ Յիսուսի ըսածներուն նկատմամբ միայն մակերեսային բառացի հասկացողութիւն մը ունին: Յիսուս յաջորդական տողերով յայտնի կ'ընէ, թէ ինչ է մեր սորվելիքը:

Ի՞ՆՉ Է ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔԸ

«Լըթայ՛ ռ-սարո՛ւ՛, զինչ Զողորմո՞ւթիւն կամիմ,
ե- ոչ զսո՛ւ: Զի ո՛չ եկի կոչել զարդարո՞ւ ալ
զմեղա-ո՛րս»: (Մատթէոս Թ: 13)

«Գացէ՛ք, սորվեցէ՛ք թէ ի՞նչ ըսել է. կարեկցութի՛ւն կ'ուզեմ, ու ո՛չ թէ գոհ. որովհետեւ ես եկայ կանչելու ո՛չ թէ արդարները, հապա մեղաւորները՝ ապաշխարութեան»:

Յիսուս աշխարհ եկաւ մեզի՛՝ բոլոր մեղաւորներուն կատարելութեան ուղին սորվեցնելու համար: Կատարելութեան ուղիէն ընթանալ կարելի է միայն ապաշխարութեամբ, որ կը նշանակէ աշխարհիկ պատրանքային շլացուցիչ հետապնդումներէ ձերբազատուիլ: Արդարները մեղաւոր չեն եւ գիտեն կատարելութեան ուղին, հետեւաբար Յիսուսի սորվեցուցածները

արդարներուն համար չէին: Կատարելութեան ուղիին առաջին հանգրուանը Աստուածպաշտութիւնն է: Բայց Աստուածպաշտութիւնը պարզապէս «ես Աստուած կը սիրեմ ու կը պաշտեմ» ըսել չէ, կամ Կիրակի օրերը եկեղեցի երթալ չէ, այլ ընդհանուր ստեղծագործութիւնը սիրելն ու խնամելն է: Ստեղծագործութիւնը կը ներկայացնէ «Աստուծոյ մարմին»-ը եւ ահա՛, աս է Աստուածպաշտութիւնը՝ խնամել Աստուծոյ մարմինը: Ահա՛, աս է իմաստը հետեւեալ խօսքին. «Չողորմութիւն կամիմ, եւ ոչ զզոհ», այսինքն կարեկից ըլլալ հանդէպ բոյսի, անասունի եւ առանց խտրութեան ոեւէ ուրիշ անձի մը: Աստուծոյ ուզածը Աստուած պաշտելու նպատակով կամ Աստուած զոհ ձգելու նպատակով տաճարներուն մէջ զոհի անուան տակ անասուններ մեռցնել չէ:



ՅԻՍՈՒԻ ՊԱՏՈՒԵՐԱԵՐԸ

«Զնոսա երկոգրասանեանն առաքելաց Յիսուս, որպարեւապէս նոցա էւ սակ. Ի ճանադարճ Հելթանոսաց մե՛ երթայցէ՛, էւ ՚ի խաղաղ սամարացոց մե՛ մրաննիցէ՛: Եւլ երթա՛յ՛ առաւել առ ոչխա՛րան կորոսեալս րան Իսրայելի: Եւ իճրէ երթայցէ՛ խարոզեցէ՛ էւ առացէ՛, թէ մերջեա՛լ է արդայոսութիւն երկնից: ԶՀիւանդոս թշուկեցէ՛, զբորոքըս արթեցէ՛, զդեռս Հանէ՛. Յրե՛ առէ՛ էւ Յրե՛ րոտէ՛ Սե՛ սրանայ՛ ոսկի, էւ մե՛ արժաթ, էւ մե՛ պղնձ ՚ի Գոգրիս յեր: Սե՛ պարկ ՚ի ճանադարճ. էւ մե՛ երկոս Հանդերձս. մե՛ կօշիկս. մե՛ ցոպ: Զի արժանի՛ է մշակն կերակրոյ իրոսմ: Յոր խաղա՛ մրաննիցէ՛ կամ ՚ի Գեղ Հարցաննիցէ՛ թէ ո՞ է ՚ի նմա արժանի. էւ ա՛նդ լինիջի՛ մինչէւ ելաննիցէ՛ անոր: Եւ իճրէ մրաննիցէ՛ ՚ի րոնն, ող- ջո՛յն րաջի՛ նմա՛ էւ սասաջի՛. Ողջոյն րանս այամիկ: Եթէ իցէ րոնն արժանի, եկեացէ՛ ողջոյնն յեր ՚ի վերայ նորասպա թէ ո՛չ իցէ արժանի, ողջոյնն յեր առ յե՛ պարձոցի: Եւ որ ո՛չ ընկալցի զՅիսու՛ էւ ո՛չ լոտեցէ թանից յերոց, իճրէ ելաննիցէ՛ ՚ի խաղաղէն յայնմանե, թօթափեաջի՛ զփոշին յորից յերոց: Եւսասառիկ էս առաքելմ զՅիսու իճրէ զոչխա՛րս ՚ի մեջ Գայլոց. եղերո՛ւն յայոսուէրէ իորագեղո՛ղ, էւ իճրէ զօջս, էւ միամիտի՛ իճրէ զաղաննիս»:

(Մարթէոս Ժ: 5-14, 16)

«Յիսուս զրկեց այս տասներկուքը եւ պատուիրեց անոնց. «Սե՛ երթաք Հեթանոսներու ճամբայէն, ու մի՛

մտնէք Սամարացիներու որեւէ քաղաք, այլ մանաւանդ
գացէ՛ք Իւրայելի տան կորսուած ոչխարներուն: Երբ եր-
թաք՝ քարոզեցէ՛ք եւ ըսէ՛ք: Երկինքի թագաւորութիւնը
մօտեցած է: Բուժեցէ՛ք հիւանդները, մաքրեցէ՛ք բորոտ-
ները, հանեցէ՛ք դեւերը. ձրի՛ ստացած էք, ձրի՛ տուէք:
Մի՛ ունենաք ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ ու ո՛չ պղինձ՝ ձեր
գօտիներուն մէջ. ո՛չ ճամբորդութեան համար պարկ, ո՛չ
կրկին բաճկոն, ո՛չ կօշիկ, ո՛չ գաւազան. որովհետեւ
գործաւորը արժանի է իր կերակուրին: Երբ քաղաք մը
կամ գիւղ մը մտնէք, տեղեկացէ՛ք թէ ո՛վ է արժանա-
ւորը անոր մէջ, եւ մնացէ՛ք անոր քով՝ մինչեւ որ մեկ-
նիք անկէ: Երբ տուն մտնէք, բարե՛ւ տուէք անոր: Եթէ
այդ տունը արժանի է, ձեր բարեւը թող գայ անոր
վրայ. իսկ եթէ արժանի չէ, ձեր բարեւը թող վերա-
դառնայ ձեզի: Եթէ մէկը չընդունի ձեզ ու մտիկ
չընէ ձեր խօսքերը, երբ մեկնիք այդ տունէն կամ քա-
ղաքէն, թօթուեցէ՛ք ձեր ոտքերուն փոշին: Ահա՛ կը զըր-
կեմ՝ ձեզ իբր ոչխարներ՝ գայլերու մէջ. ուրեմն խորա-
գէ՛տ եղէք օձերու պէս, եւ աննենգ՝ աղաւնիներու պէս»:

*Յիսոսի այս խօսքերը առաքեալներուն տրուած
պատուէր են: Առաջին հերթին կը թուի թէ Յիսուս
խտրութիւն կ'ընէ երբ կ'ըսէ «Ի ճանապարհ չեթմանտաց
մի՛ երթայցէք, եւ ՚ի քաղաք սամարացոց մի՛ մտանիցէք: Այլ
երթա՛յք առաւել առ ոչխարսն կորուսեալս տան Իսրայելի»:
Տրուած պատուէրը կը թուի ըսել միայն Հրեայ ժողո-
վուրդին քարոզել: Բայց այս հասկացողութիւնը մակե-
րեսային է եւ սխալ ընթռնում: Անկարելի է, որ Յիսուս՝
Աստուծոյ յայտնութիւնը, ազգերու կամ կրօնքներու
միջեւ խտրութիւն ընէ: Նախ վերլուծենք, թէ Յիսուս
Քրիստոս ինչ կ'ըսէ: Իր առաջին պատգամը «Նեթանոս-
ներու ճամբայէն մի երթաք»-ն է: Ընդհանուր առմամբ
կը կարծենք, թէ անոնք, որոնք Հրեաներուն կրօնքին
չեն պատկանիր Նեթանոս կը կոչուին: Այս ըմբռնումն
ալ սխալ է: Նեթանոսները անոնք են, որոնք Աստուծոյ
չեն հաւատար, կամ եթէ նոյնիսկ կը հաւատան, կը խե-
ղաթիւրեն իրենց կրօնքը եւ կատարելութեան ուղիէն
չեն յառաջանար: Ուրեմն Յիսուսի պատգամը այն է,*

Թէ չխեղաթիւրել իր սորվեցուցած կատարելութեան ուղին եւ միայն այդ քարոզել: Ուրեմն ի՞նչ է քարոզչու թիւնը: Բացատրել Աստուծոյ թագաւորութեան «մօտ» ըլլալը, այսինքն Աստուծոյ թագաւորութեան անձին մէջը ըլլալը: Յիսուս Քրիստոսի երկրորդ պատուէրը «Սամարացիներու որեւէ քաղաքը չմտնել» է: Ասոր իմաստը հասկնալու համար պարտ ենք հասկնալ, թէ ովքեր են Սամարացիները: Անոնք Սամարիա նահանգը հաստատուած ոչ-Հրեայ օտարազգիներ են, որոնք յետագային կրօնափոխութեամբ Հրէական կրօնքը որդեգրած են: Եթէ կը հաւատանք, թէ առանց Աստուծոյ կամքին տերեւ մը իսկ չի շարժիր, ուրեմն Աստուծոյ կամքը պէտք է եղած ըլլար, որ անոնք տարբեր կրօնքի մը մէջ ծնած էին: Մարդ կրօնափոխ կամ դաւանափոխ կ'ըլլայ, երբ ոչ իր հին կրօնքը կամ դաւանանքը լաւ մը հասկցած է եւ ոչ ալ նորը պիտի կարենայ հասկնալ: Հետեւաբար աւելորդ է անոնց քարոզել, որովհետեւ պիտի չըմբռնեն ըստածներուն իմաստը ու կարեւորութիւնը: Իսկ երբ Յիսուս Քրիստոս կ'ըսէ Իսրայելի տան կորստած ոչխարներուն, ըսել չ'ուզեր գացէք Հրեայ ժողովուրդին քարոզեցէք: Իսրայել անունը, ըստ Հին կտակարանի, առաջին անգամ տրուեցաւ Յակոբին, որ Աստուծոյ «հասնելու» համար պայքարեցաւ: Ուրեմն երբ Յիսուս Քրիստոս կ'ըսէ Իսրայելի կորստած ժողովուրդին, ակնարկութիւնը անոնց համար է, որոնք ներքնապէս կը պայքարին Աստուած գտնելու համար, բայց անկարող են, որով՝ կորստած: Աշակերտները ասոնց պիտի սորվեցնեն կատարելութեան ուղին եւ Աստուծոյ թագաւորութեան իրենց ներսը ըլլալը: Եւ ի՞նչ է աշակերտներուն ընելիք բուն քարոզչութիւնը: Անոնց օգնել, զանոնք բուժել եւ այս բոլորը ընել առանց հատուցման: Այսինքն չհահագործել ժողովուրդը, որովհետեւ «ձրի՛ առէք՝ եւ ձրի՛ տուք»: Իսկ այսօրուայ

Քարոզիչները ամէն ինչ կ'ընեն փոխան դրամի: Այսօր նոյնիսկ «եկեղեցի»-ները Սուրբ Խորհուրդներուն մեծ մասը կու տան փոխան նիւթական հատուցումի: Յիսուս Քրիստոսի յաջորդ պատուէրը իրենց ապրուստին մասին չմտահոգուիլ է. որովհետեւ «Չի արժանի՛ է մշակն կերակրոյ իւրուն»: Այդ «կերակուր»-ը յայթայթողն ալ Աստուած է: Միթէ մեր «Ճաշակեսցուք» աղօթքին մէջ ալ չենք ըսեր «պատրաստեալ է մեզ ի Տեարնէ»: Ամէն ինչ Աստուծմէ է՝ իր պատշաճ կերպով եւ իր պատշաճ ժամանակին: Ինչպէս Յիսուս այլուր ըսած է «ձեր մարգարիտները խոզերուն մի՛ տաք», նմանապէս հոս ալ կ'ըսէ միայն արժանի եղողներուն տուէք «Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ՛ ողջոյնն ձեր՛ ի վերայ նորա»: Իսկ եթէ զիրենք չընդունին եւ իրենց խօսքերը մտիկ չընեն Յիսուս Քրիստոս կը պատուիրէ «Թօթափես՛յիք զփոշին յոսից ձերոց»: Որովհետեւ անոնք, որոնք առաքեալներուն քարոզչութիւնը պիտի չընդունին, չազդուելու համար ալ հակառակ քարոզչութիւն պիտի ընեն:

Աւետարանէն առնուած վերելի մէջբերումին մէջի Յիսուսի վերջին խօսքը «Ահաասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս՝ ի մէջ գայլոց. եղերո՛ւք այսուհետեւ խորագէտք, եւ իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղանիս» շատ յատկանշական է: Յիսուս գիտէր, թէ առաքեալները բարի են, խորամանկութիւն եւ նենգութիւն չունին, կրնան շատերու հալածանքին ենթարկուիլ, որով «գայլ»-երու մէջ «ոչխար»-ներ են: Յիսուս վերելի մէջբերումին մէջ առաքեալներուն ըսած «ուրեմն խորագէ՛տ եղէք օձերու պէս, եւ միամիտ՝ աղանիներու պէս» նախադասութեամբ անոնց կը պատուիրէ ուշիմ ըլլալ եւ կեդրոնացած նպատակին վրայ, ինչպէս օձը բացարձակ ուշադրութեամբ կը հետապնդէ իր որսը՝ առանց մտացրութեան եւ աղանիի նման ալ ըլլալ մէկ մտքի վրայ: Առաքեալներուն տրուած բոլոր խրատները եւ յորդորները նաեւ մեզի համար են:

ՈՐԱԷ՞ ՎԱԽԱՎ

«Մի՛ այսու-Հեգե- երկնշիցի՛ն ՚ի նոցանէ: Բի՛ն ՚ն ինչ է ՚ի Զաժո-կ՛ որ ոչ յայտնեցի, է- Գաղարնի՛ որ ոչ Զանիցի: Բոր ասեմ յե-ս ՚ի Խա-արի՛ ասա-ցէ՛ն ՚ի լո՛յս: է- սոր լսիցե՛ն յո-նկանէ՛ խարոսե-ցէ՛ն ՚ի վերայ րանեա՛ց: է- մի՛ երկնշի՛ն յայնցա-նէ՛ որ սղանանէն սմարմին, է- սորն ո՛չ կարէն սղանանէ: Լյլ երկերո՛ւն զո-ն առա-եւ յայնմա-նէ՛ որ կարողն է սորն է- սմարմին կորո-սանել ՚ի Գե-Հենի: Ո՞չ սղանէն երկո- ճնճող-կէ զան-Գի՛ միջ վաճառ-ին, է- ՚ի նոցանէ յերկիր ո՛չ անկ-ցի առանց Ըօ՛ր յերոյ: Լյլ յեր է- ամենայն իսկ Հեր՛ Գլխոյ թո-եալ է: է- արդ՛ մի՛ երկնշիցի՛ն՝ սի լա՛- էն ինչ սղա-սմ ճնճող-կս»։ (Մարթեոս Ժ:26-31)

«Ուրեմն մի՛ վախաք անոցմէ, որովհետեւ ոչինչ կայ ծածկուած՝ որ պիտի չյայտնուի, ու գաղտնի՝ որ պիտի չգիտցուի: Ինչ որ կ'ըսեմ ձեզի խաւարի մէջ՝ խօսեցէ՛ք գայն լոյսի մէջ, եւ ինչ որ կը լսէք ականջի մէջ՝ քարոզեցէ՛ք տանիքներուն վրայ: Մի՛ վախաք անոցմէ՛ որ մարմինը կը սպաննեն ու չեն կրնար անձը սպաննել: այլ մանաւանդ վախցէ՛ք անկէ՛ որ կրնայ անձը եւ մարմինը կորսնցնել գեհեմին մէջ: Երկու ճնճողուկ չե՞ն ծախուիր մէկ դանդի: սակայն անոցմէ ո՛չ մէկը գետին կ'իչնայ առանց Հօր կամքին: Բայց ձեր գլուխին բոլոր մագերն ալ համրուած են: Ուրեմն մի՛ վախաք, որովհետեւ դուք շատ ճնճողուկներէ աւելի կ'արժէք»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԲ:4-7)

Յիսուս այս խօսքերը իր առաքեալներուն ըսաւ երբ զանոնք քարոզելու ու հիւանդները բուժելու զըրկեց: Նաեւ անոնց ըսած էր թէ անոնք իրենց քարոզչու թիւններուն համար պիտի հալածուին: Յիսուս Քրիստոսի այս խօսքերուն մէջ նկատի առնուելիք մի

քանի յատկանշական կէտեր կան: Նախ նկատողութեան առնենք հետեւեալը. «Չի ո՛չ ինչ է 'ի ծածով՝ որ ոչ յայտնեցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանփցի»: Ստեղծագործութեան բոլոր նպատակը Աստուածայայտնութիւնն է: Յիսուս իր առաքեալներուն սորվեցուց Աստուածայայտնութեան գաղտնիքները՝ թագուն գիտութիւնը: Միանգամայն, միթէ չե՞նք ըսեր. «միակ ճշմարտութիւնը Աստուածն է»: Հետեւաբար Յիսուսի ըսածը այն է, թէ հակառակ մարդկութեան ընդգրկած վատ կենցաղին ու իրեն տրուած բուն պարտականութեան նկատմամբ իր անտարբերութեան, ուչ կամ կանուխ, ճշմարտութիւնը՝ Աստուած պիտի յայտնուի եւ այդ թագուն գիտութիւնն ալ հանրութեան պիտի յայտնուի: Երբ Յիսուս կ'ըսէ. «Չոր ասեմ ձեզ 'ի խաւարի ասացէք 'ի լո՛յս. եւ զոր լսիցէք յունկանէ՛ քարոզեցէք 'ի վերայ տանեա՛ց», ըսել կ'ուզէ. այն ինչ որ ձեզի սորվեցուցի իբր գաղտնիք, տուէք նաեւ հանրութեան: Առաջին հերթին կը թուի այս գաղտնիքը տալ ամէնուն, նա մանաւանդ երբ կ'ըսէ. «քարոզեցէք 'ի վերայ տանեա՛ց», բայց ճշմարտութիւնը այն է, որ երբ Յիսուս իր աշակերտներուն պատգամ կու տար պատուիրեց միայն ընդունակ եղողներուն քարոզել եւ նոյնիսկ յանձնարարեց իրենց կոչիկներուն փոշիները անգամ թոթուել եւ հեռանալ անոնցմէ, որոնք ընդունակ չէին:

Յաջորդ նկատի առնուելիք կէտը հետեւեալն է. «Եւ մի՛ երկնչիք յայնցանէ՛ որ սպանանեն զմարմին, եւ զոգի ո՛չ կարեն սպանանել: Այլ երկերո՞ւք դուք առաւել յայնմանէ՛ որ կարողն է զոգի եւ զմարմին կորուսանել 'ի գե՛հնի»: Այս խօսքով բացայայտ կ'ըլլայ թէ կարեւորը մարմինը չէ: Հակառակ մեծամասնութեան հաւատացածին թէ իրենց մարմինն իրենք են, անհատը իր մարմինը չէ: Ան իր մարմինը գործածողն է: Ճիշդ է թէ մարմինը իրեն կը պատկանի բայց ան ինքը չէ: Ինչպէս

ինքնաշարժ գործածող անձ մը չի նկատեր թէ ինքնաշարժը ինքն է, այլ ինք միայն զայն օգտագործողն է Ա-էն մինչեւ Բ-էն ճամբորդելու համար: Նմանապէս մարդուն մարմինն ալ իր «կառք»-ն է զինք փոխադրելու համար Ա-էն՝ ծնունդէն մինչեւ Բ-էն՝ մահ: Ուրեմըն մարդ ինչո՞ւ վախնայ մարմինը մեռցնողէն: Բայց երբ անձը կատարելութեան ուղիէն կը շեղի եւ իր «Շա»-ը կը զատէ իբրեւ իր վարդապետը, որ կարող է զինք առաջնորդել կենցաղի մը, որ յառաջ կը բերէ ճակատագիր մը տառապանքի, որով ինք կ'ըլլայ գեհնի մէջ եւ մարմնին մահուան հետ կը մեռնի նաեւ իր անհատականութիւնը՝ անձը: Ըստ Յիսուս Քրիստոսի այլուր ըսածին, այն անձը որուն անհատականութիւնը կը յարի իր ներքին Քրիստոսի, Քրիստոս անոր պիտի տայ յաւիտենական կեանք եւ վերջին օրը՝ մարմնոյն մահուան օրը, յարութիւն անոր անձին՝ անհատականութեան:

Մէջբերումին վերջին մասն ալ ակնարկութիւն մըն է, թէ բոլոր պատահարները Աստուծոյ կամքն են եւ պարտ ենք զանոնք ընդունիլ ուրախութեամբ եւ առանց դժգոհելու: Աստուած միշտ լաւագոյնը կը բաղձայ մեզի համար: Երբեմն մենք ենք, որ կը կերտենք անբաղձալի ճակատագիր եւ կ'ենթարկուինք անոր յառաջ բերած անբաղձալի պատահարներուն: Նոյնիսկ այդ անբաղձալի պատահարներուն նպատակը բարի է, որովհետեւ մեզի ցոյց կու տան մեր սխալները եւ սորվելիք դասերը: Բայց անձը պարտ է ուշիմ ըլլալ որպէսզի դասը սորվի իր սխալներէն եւ դարձեալ նոյն սխալները չգործէ:



ՀԱՏՈՒԾՈՒՄ

«Որ ընդոռնիս պչեպ՝ պիս ընդոռնի, եւ որ պիս ընդոռնի՝ ընդոռնիս պատափի՝ շնն իմ: Որ ընդոռնիս պարգարէ յանոն մարգարէի, պիս՝ ընդ մարգարէիս ատցէ: Եւ որ ընդոռնիս պարգար յանոն արդարո՞յ՝ պիս՝ ընդ արդարո՞յ ատցէ: Եւ որ արբուսցէ միտմ՝ ՚ի փոփրկանցս յայսցանէ թաշակ մի ջո՞ր ցորոր միայն յանոն աշակերտի, ամէն ասէ՛մ յեպ, ո՛չ խորոսացէ պարզս իւր»: (Մարքէոս Ժ: 40-42)

«Ան որ ձեզ կ'ընդունի՝ զիս կ'ընդունի. եւ ան որ զիս կ'ընդունի՝ զիս դրկողը կ'ընդունի: Ան որ մարգարէ մը կ'ընդունի՝ մարգարէի անունով, մարգարէի վարձատրութիւն պիտի ստանայ. ու ան որ արդար մը կ'ընդունի՝ արդարի անունով, արդարի վարձատրութիւն պիտի ստանայ: Եւ ո՛վ որ այս պզտիկներէն մէկուն միայն գաւաթ մը պաղ ջուր խմցնէ՝ աշակերտի անունով, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի՝ ընա՛ւ իր վարձատրութիւնը պիտի չկորսնցնէ»:

(Տես նաեւ Մարկոս Թ: 40)

Քրիստոս իր այս խօսքերով մեզի «Հատուցում»-ի օրէնքը կը ներկայացնէ (ան որ արեւելեան կրօնքներու մէջ «քարմա» կը կոչուի): Յիսուս տարբեր բառերով ալ նոյն գաղափարը յայտնած է. «Ինչ որ ցանես ան կը հնձես»-ը: Անոնք, որոնք առաքեալները կ'ընդունին, կ'ընդունին նաեւ անոնց քարոզչութիւնը, եւ ըստ այնմ կը կերտեն իրենց կենցաղը, այսինքն կը յառաջանան կատարելութեան ուղիէն: Անոնք, որոնք կ'ընթանան առաքեալներու քարոզած կատարելութեան ուղիէն, ինչ որ Յիսուս իրենց սորվեցուցած էր որպէս Աստուծոյ կամքը, ընդունած կ'ըլլան Քրիստոսի կամքը, հետեւաբար՝ ընդունած Քրիստոս: Անոնք «մտիկ կ'ընեն» իրենց ներքին Քրիստոսին եւ ոչ իրենց «Ես»-ին: Որովհետեւ Քրիստոսի՝ Աստուծոյ Որդւոյն, կամքն ալ իր Հօր

կամ քն է, ընդունած կ'ըլլան նաեւ Հայր Աստուած, որ զրկած է իր Որդին: Ամէն անհատ պատասխանատու է իր ամէն մի խորհուրդ, խօսք ու արարքին: Այս բոլորը կը ձեւաւորեն անձին՝ ոգիին՝ զօրութեան մարմնին թրթռացումի յաճախականութեան որակը, որ իրեն կը քաշէ համապատասխան ու ներդաշնակ յաճախականութիւն ունեցող լաւ պատահարներ, որոնք կ'ըլլան իր բոլոր մարդասէր արարքներուն վարձատրութիւնը: Իսկ եթէ ինք եղած է եսասէր, իրեն ենթարկուած պատահարներն ալ կ'ըլլան համապատասխան իր կենցաղին:



ՉՕՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՍԱՐԳԱՆԵՐ

«Բայց յառաջ Յովհաննոս մկրտչի մինչե-
ցայժամ՝ արվայոթիւն երկնից թռնադարպի, ե-
թո՛ւնի յափշտակէն սնա: Բանսի ամենայն օրէնդ
եւ մարգարէի մինչեւ Յովհաննոս մարգարէացան:
Եւ եթէ կամի՛ ընդոտնիլ՝ նա՛ է Եղիա՝ որ Գալո-
ցըն է: Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուծիցէ՛: Ո՛ր-
մանկեցոցից սազօս սայս. նմա՛ն է մանկոոց՝
որ նսրիցին ՚ի Հրատարակս, կարդայցեն սրնկերս
իւրեանց, եւ ասիցեն. Փողոս Հարա՛յ յեզ՛ եւ ո՛չ
կա՛նաւեցէ՛, ողբացա՛յ յեզ՛ եւ ո՛չ կոթեցարո՛ւ:
Եւն Յովհաննէս, ո՛չ ուրէր եւ ո՛չ ըմպէր. եւ
ասեն՝ դէ՛ւ Գոյ ՚ի նմա: Եւն որդի մարդոյ՝
ուրէ՛ եւ ըմպէ. եւ ասեն, աՀա այր կէրօղ եւ
արբէցօղ, թարեկամ մա՛խաւորա՛ց եւ մեղաւո-
րաց: Եւ արդարացա՛ւ իմաստութիւն յորդոոց
իւրոց»: (Մատթէոս ԺԷ:12-19)

Ու Յովհաննէս Մկրտիչին օրերէն մինչեւ Հիմա՝ երկինքի
թագաւորութիւնը ոյժով կ'առնուի, եւ ուժեղները կը
յափշտակեն զայն. որովհետեւ բոլոր Մարգարէներն ու
Օրէնքը մարգարէացան մինչեւ Յովհաննէս: Եթէ կ'ուզէք
ընդունիլ՝ անիկա՛ է Եղիան՝ որ սխաի գար: Ա՛ն որ
ականջ ունի լսելու՝ թող լսէ: Բայց որո՞ւ նմանցնեմ
այս սերունդը: Կը նմանի մանուկներու, որոնք
Հրապարակները նստելով՝ կը գոչեն իրենց ընկերներուն
եւ կ'ըսեն. Սրինգ նուագեցինք ձեզի՛ ու չպարեցիք՝
ողբացինք ձեզի՛ ու չհեծեծեցիք: Որովհետեւ Յովհաննէս
եկաւ, ո՛չ կ'ուտէր եւ ո՛չ կը խմէր, ու կ'ըսէին. Դեւ
կայ անոր մէջ: Մարդու Որդին եկաւ, կ'ուտէ եւ կը
խմէ, ու կ'ըսեն. ԱՀա՛ շատակեր ու գինեսէր մարդ մը,
մաքաւորներու եւ մեղաւորներու բարեկամ: Բայց
իմաստութիւնը արգարացաւ իր զաւակներով»:

(Տես նաեւ Ղուկաս Է:24-35)

«Լ- ամենայն ժողովուրդն իբրև լուսան, ե- մաշ-
ուս-որձն, արդարացուցի՛ն՝ զԼսարու-աթ. զի մկրտե-
ցան ՚ի մկրտութի-անն Յովհաննոս: Իսկ փարիսե-
ցիձն ե- օրինականձն, զխորհուրդն Լսարու-աթոյ
անարգելցի՛ն յանձինս ի-րեանց, զի ո՛չ մկրտեցան
՚ի նմանէ»: (Ղուկաս Է:29-30)

«Երբ ամբողջ ժողովուրդն ու մաքսաւորները լսեցին՝ ար-
դարացուցին Աստուած՝ որ Յովհաննէսի մկրտութեամբ
մըկրտուեցան: Բայց Փարիսեցիներն ու օրինականները
անարգելցին Աստուծոյ ծրագիրը իրենց հանդէպ՝ անկէ
չմկրտուելով»:

**Աւետարանի վերեւի գրութեան մէջ կան մի քանի
ուշագրաւ կէտեր: Ասոնց առաջինը երկինքի թագաւո-
րութեան արժանանալու միջոցն է: Յովհաննէս իրմէ
առաջ եկող մարգարէներէն տարբեր էր: Ան, որքան որ
ալ մարգարէացաւ, նաեւ մկրտելով Ս. Հոգիի զօրու-
թիւն տուաւ ժողովուրդին: Միթէ ջուրին փոխաբերա-
կան իմաստը Ս. Հոգիի զօրութիւնը չէ՞: Այս հիման
վրայ, երկինքի թագաւորութեան արժանանալու մի-
ջոցն ալ Ս. Հոգիի զօրութիւնը ստանալով կ'ըլլայ: Ս.
Հոգիի յաւելեալ զօրութիւնը մարդուն մէջ, անոր կու
տայ աւելի բարձր գիտակցութեան մակարդակ, հե-
տեւաբար կարողութիւն «տեսնելու» ճշմարտութիւնը՝
միականութիւնը: Յիսուս Յովհաննէսի նման չմկրտեց
իր աշակերտները, որովհետեւ Ան իր մէջ լրիւ յայտնա-
բերած էր Քրիստոսը, որով ինք իրմէ զօրութիւն
փոխանցեց անոնց, առանց փոխաբերական ջուրի օգնու-
թեան: Միթէ Յիսուս Քրիստոս չդարմանե՞ց, կոյրը,
կաղը, հիւանդը ու նոյիսկ յարուց մեռեալները: Ահա՛,
աս է «երկինքի թագաւորութիւնը զօրութեամբ առ-
ներ»-ին իմաստը: Ուժեղները անոնք են, որոնք իրենք
զիրենք Ս. Հոգիի զօրութիւնը ստանալու ընդունակ
անօթներ կ'ընեն: Իսկ անոնք, որոնք չեն «մկրտուիր»,**

աւելի ճիշդ է ըսել ընդունակ չեն ըլլար Ս. Հոգիի զօրութեան, անարգած կ'ըլլան Աստուծոյ ծրագիրը: Այդ ծրագիրը մարդուն համար Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնելով Աստուծոյ թագաւորութիւնը՝ դրախտը իրականացնել է հոս՝ աշխարհի վրայ: Վերեւի մէջըբերումի մէջի «ուժեղները կը յափշտակեն զայն» արտայայտութիւնը ակնարկ մըն է անհատին, իր գիտակցութեամբ, շատ աւելի բարձր՝ Քրիստոսի, գիտակցութեան մակարդակին յափշտակուելուն:

Երկրորդ յատկանշական կէտը «Եւ եթէ կամիք ընդունիլ՝ նա՛ է Եղիա՝ որ գայլոցն է» նախադասութիւնն է, ինչ որ ցոյց կու տայ, թէ Յովհաննէս Մկրտիչ Եղիա մարգարէի վերամարմնացումն էր: Ընդհանուր առմամբ «քրիստոնեայ կրօնք»-ին մէջ վերամարմնացման մասին ոչինչ կ'ըսուի: Վեցհարիւրական թուականներուն վերամարմնացման գաղափարը վերջնականաբար կը վերցուի: Կը կարծէին, թէ միայն մէկ անգամ ապրելու եւ անոր ալ, պարագայի համաձայն, դժոխքով շարունակուելու գաղափարին տուած վախը եթէ ժողովուրդը իւրացնէ, զանոնք կառավարել աւելի դիւրին կ'ըլլայ: (տես «Լոյս Ի Լուսոյ (Ա)» գիրքի «Ի՞նչ է վերամարմնացումը» խորագրեալ Թ. գլուխը (էջ277)):

Երրորդ յատկանշական կէտն ալ «Եկն Յովհաննէս, ո՛չ ուտեր եւ ո՛չ ըմպեր. եւ ասեն՝ դէ՛ւ գոյ՛ ի նմա: Եկն որդի մարդոյ՝ ուտէ՛ եւ ըմպէ. եւ ասեն, ահա այր կերօղ եւ արբեցօղ բարեկամ մաքսաւորա՛յ եւ մեղաւորաց» նախադասութիւնն է: Երբ մարդ պատրաստ չէ կատարելութեան ուղիէն ընթանալու, որովհետեւ ինք եսասիրութեամբ կ'ապրի եւ սիրահարուած է իր «Ես»-ին, հազարումէկ պատճառ պիտի գտնէ անարգելու եւ նսեմացնելու բոլոր անոնք, որոնք կը հետապնդեն ու կը քարոզեն կատարելութեան ուղին: Այս գաղափարը տրուած է հետեւեալ խօսքերով. Յովհաննէս, որ ծոմ կը բռնէր,

անոր համար ըսին իր մէջ «գեւ ունի»: Իսկ Յիսուս, որ ծոմ չէր բռներ, իրեն համար ըսին «շատակեր ու գինեակ»: Եւ Յիսուս զանոնք կը նմանցնէ մանուկներու: Մանուկներն ալ անգիտակից են եւ չեն հասկնար ճշմարտութիւնը: Պատճառաբանողները որքան ալ ուսեալ եւ խորամանկ ըլլան, հոգեկան գետնի վրայ մանուկներ են:



ՄԷՐԸ ԵՒ ՄԵՊԸ

«Վասն որոյ ասե՛մ չե՛ս. Թողեա՛լ լիցին ամա իւր
Բապտիսմի, զի յո՛յժ սիրեալս: Գի որո՞ւմ շա՛ր Թողոս-
ցո՞ւ՝ շա՛ր սիրէ, եւ որո՞ւմ սակա՞ւ՝ սակա՞ւ: Եւ
ասէ ամա. Թողեա՛լ լիցին չե՛ս մեղէ չե՛ս»: (Ղուկաս
Լ: 47-48)

«Ասոր բազմաթիւ մեղքերը ներուած են՝ որովհետեւ շատ
սիրեց. բայց ան՝ որուն քիչ կը ներուի՝ անիկա քիչ կը
սիրէ: Եւ ըսաւ անոր. «Քու մեղքերդ ներուած են»»:

**Յիսուսի այս խօսքը շատ պարզ խօսք մըն է, սա-
կայն Յիսուսի բոլոր սորվեցուցածներուն խտացումն է:
Մարդ արարած զժբախտաբար յաճախ կ'ենթարկուի
կացութիւններու, երբ ան գիտակցաբար կամ անգիտակ-
ցաբար կը մեղանչէ: Եւ ի՞նչ է միջոցը մեղքերու
թողութեան: Այդ միջոցը սէրն է, սիրելն է: Միթէ
Աստուած սէր չէ՞: Ուրեմն սիրել կը նշանակէ Աստուած
յայտնաբերել: Հարկաւ պէտք է հասկնալ, թէ աս սէրը
եսասիրութիւնը չէ, այլ ան մարդասիրութիւնն է:
Ճշմարիտ սէրը Աստուածապաշտութիւն է: Ընդհանուր
տիեզերքը Աստուծոյ «մարմին»-ն է: Հետեւաբար ճշմա-
րիտ սէրն ալ Աստուած սիրելն է: Աստուած սիրելն ալ
ստեղծագործութեան մէջ ամէն ինչ՝ նիւթ, բոյս, անա-
սուն, բոլոր մարդիկը՝ ընկեր, հարազատ, բարեկամ,
օտար կամ թշնամի, սիրելն է: Իսկ սիրել կը նշանակէ
գործնականօրէն այդ սէրը ցոյց տալ, այսինքն խնամել,
կարեկցիլ, օգնել նոյնիսկ գոհուիլ: Միթէ Յիսուս նոյնը
չըրա՞ւ: Պէտք չէ՞ որ իրեն նմանինք: Ինչ որակով որ կը
սիրենք, նոյն որակով ալ մեր մեղքերը կը ներուին: Երբ
մեղք կը գործենք, մեր զօրութեան յաճախականու-
թիւնը կը նուազեցնենք: Իսկ երբ սիրով կը գործենք,
զօրութեան յաճախականութիւնը կը բարձրացնենք, որ
կը չէզոքացնէ ցած յաճախականութիւնները:**

ՍՈՒՐԲ ՕՐՈՒԱՆ ՀԱՐՅՈՆ

«Եւ այնպէս էր մի՛ որոյ յեւնի իւր Գոսայեալ էր: Հարցին ցնա՛ եւ ասեն, ե՞րբ պա՞րտ իցէ՛ ՚ի շաճաթո՛ւ Բո՛ւ Բժշկէլ, պի շարախօսեացէ՛ն պնամանէ: Եւ նա՛ ասէ պնոսա. Ո՞վ իցէ՛ ՚ի յեւնի մարտ՝ որոյ իցէ ոչ խար մի, եւ անկանիցի այն՝ ՚ի խորխորա՛յ ՚ի շաճաթո՛ւ. մի՞րէ ո՞չ ունիցի եւ յարոցանիցէ պնա: Իսկ արդ ո՞րչափ եւս՝ առատել է մարտ ինն պոչխար. ապա ուրեմն պա՛րտ է ՚ի շաճաթո՛ւ Բարե՛ս Գործէլ: Յայնժամ ասէ պայրն. Չգեա՛ պչեուն ի՞նչ, եւ նա յգեաց՝ եւ եղէ ո՞ղջ իճբէւ պմեան: Իսկ փարիսեցիքն ելեալ արդատն խորհո՛ւրդ արարին պնամանէ՛ թէ որպէս կորոցեն պնա»: (Մարթէոս ժԲ: 10-14)

«Զի պէ՛ր է շաճաթո՛ւ որդին մարտոյ»: (Մարթէոս ժԲ: 8)

«Հոն մարդ մը կար, որուն ձեռքը չորցած էր: Ամբաստանելու համար գինք՝ Հարցուցին անոր. «Արտօնուած է բուժել Շաբաթ օրը»: Ան ալ ըսաւ անոնց. «Զեզմէ ո՞վ է այն մարդը, որ եթէ ոչխար մը ունենայ եւ ան փոսի մէջ իյնայ Շաբաթ օրը, չի բռներ ու վեր չի հաներ գայն: Հետեւաբար մարդը ո՞րչափ աւելի կ'արժէ ոչխարէն: Ուրեմն արտօնուած է բարիք գործել Շաբաթ օրը»: Այն ատեն ըսաւ այդ մարդուն. «Երկարէ՛ ձեռքը»: Ան ալ երկարեց, եւ առողջացաւ միւսին պէս: Իսկ Փարիսեցիները դուրս ելլելով՝ խորհրդակցեցան անոր դէմ թէ ի՛նչպէս կորսնցնեն գայն»:

«Որովհետեւ մարդու Որդին տէրն է Շաբաթին»:

(Տես նաեւ Մատթէոս ժԲ: 1-8, Ղուկաս Զ: 5-11 եւ Մարկոս Գ: 1-6)

Ըստ այս համարներուն Յիսուս բժշկութիւն մը կը կատարէ: Որովհետեւ այդ բժշկութիւնը Շաբաթ օրով կ'ընէ, Հրեաներուն համար մեծ խնդիր կ'ըլլայ, «սուրբ օրուայ» պղծում կը համարուի: Հրեաները, ինչպէս

Նաեւ տարբեր վայրեր տարբեր կրօնքներու հետեւողներ բազմաթիւ անպէտ օրէնքներով իրենց կրօնքները կը խեղադիւրեն եւ ժողովուրդին վրայ աւելորդ եւ անօգուտ պատասխանատուութիւններ եւ պարտականութիւններ կը բեռնաւորեն: Երբ Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Չի տէր է շաբաթու որդին մարդոյ», ըսել կ'ուզէ, թէ մարդուն էութիւնը՝ իր ներքին Քրիստոս շաբթուան բոլոր օրերուն, ներառեալ Շաբաթ օրուան, տէրն է: Երբ անձը կը գործէ ըստ իր ներքին Քրիստոսի կամքին, իր բոլոր արարքներն ալ կ'ըլլան բարի, որովհետեւ անոնք բոլորն ալ կ'ըլլան ըստ Աստուծոյ կամքին: Հրեաներուն համար Շաբաթ օրը իսկ մեզի՝ Քրիստոնեաներու համար Կիրակի օրը եւ Իսլամներուն համար ալ Ուրբաթ օրը «սուրբ օր» նշուած են: Այդ «սուրբ օրը» դրուած է, որպէսզի մարդ գոնէ շաբաթը անգամ մը իր անհատականութիւնը ձեռքբաւտէ իր «Ես»-էն եւ յարի իր ներքին Քրիստոսին եւ անոր կամքին համաձայն գործէ: Ճշմարտութիւնը այն է թէ մարդ ամէն օր պարտ է Շաբաթի՝ «սուրբ օրուայ» պէս գործէ: Յիսուս Շաբաթը չէր պահեր, որովհետեւ Իրեն համար ամէն օր նման էր Շաբաթ օրուան: Ան միշտ կը գործէր միայն ու միայն Քրիստոսի՝ Աստուծոյ կամքին համաձայն, հետեւաբար Իր բոլոր արարքներն ալ բարի էին: Իսկ մենք ի՞նչ կ'ընենք: Կիրակի օր մէկ երկու ժամ եկեղեցի կ'երթանք եւ մնացեալ ժամանակը կը գործենք ըստ մեր «Ես»-ին կամքին: Բացառութիւնները միշտ յարգելի են: Այսօր նոյնիսկ եկեղեցի երթալու սովորութիւնն ալ կը կորսուի: Ժողովուրդին նոյնիսկ մէկ առ հարիւրը եկեղեցի չ'երթար: Այս հիման վրայ ի՞նչ պէտք է ըլլանք. «Շաբաթ»-ը պահող, թէ ոչ իւրաքանչիւր օրը Շաբաթ նկատելով գործող, մեր «Ես»-ին հետեւող, թէ ոչ մեր ներքին Քրիստոսին:

ԲԱԺԱՆՈՒԹ ԱԲԵՐՈՒԹ Է - ԱՆԱԵՐԵԼԻ ՄԵՈՐ

«Ի՞բրեւ գիտա՛ց Յիսուսս՝ սխորհուրդս նոցա՛ ասէ ցնոսս. Ամենայն Թագաորութիւնն Բաժանեալ յանձն իւր՝ աւերի՛. Եւ ամենայն խաղաղ կամ ցոռն Բաժանեալ յանձն իւր՝ ո՛չ կացցէ: Եւ Եթէ սարանայ սասարանայ Հանէ, յանձն իւր Բաժանեցաս. արդ՛ սխորհրդ կացցէ Թագաորութիւնն նորա: Եւ Եթէ Ես Բէտղսէ Բոնուս Հանեմ ստեա՛ որդիդն յեր ի՞նչ Հանիցեն. վասն այնորիկ նովա՛ Եղիցին յեր դասարարդ: Ապա Եթէ Հոգեօվ Աստուծոյ Հանեմ Ես ստեա՛, որեմն Հասեալ է՛ ի վերայ յեր արեւոյութիւնն Աստուծոյ: Սամ սխորհրդ կարէ ո՞վ մտանել ՚ի ցոռնն Ազօրի՛ Եւ ստործիսն նորա յափշտակել. Եթէ ոչ նա՛ ի կողիցէ ստորն, Եւ ստա ստուսն նորա յափշտակիցէ: Որ ո՛չ ընդ իս է՛ Հակասակ իմ Եւ որ ո՛չ ժողովէ ընդ իս՝ ցրուէ՛: Սասն այտորիկ ասեմ ամենայն մեղի Եւ Հայրոցութիւնի թողցին մարդկան, Բայց ստորոցն Հայհոյութիւնն մի թողցի: Եւ որ ո՞վ ասիցէ Բան ստորոց մարդոց՝ թողցի նմա. Բայց որ ստորոցն սրբոց ասիցէ՛ մի թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի, Եւ մի՛ ՚ի Հանդերձիւնն»: (Ստորեւ ժԻ: 25-32)

«Յիսուսս գիտնալով անոնց մտածումները՝ ըսաւ անոնց. «Ինքնիր դէմ բաժնուած որեւէ թագաւորութիւն՝ կ'աւերի, եւ ինքնիր դէմ բաժնուած որեւէ քաղաք կամ տուն՝ չի կրնար կենալ: Եթէ Սատանան՝ դուրս Հանէ Սատանան, բաժնուած է ինքնիր դէմ. ուրեմն անոր թագաւորութիւնը ի՞նչպէս պիտի կենայ: Ու եթէ Բէտղս-վեբուսով կը Հանեմ դեւերը, ձեր որդիները ինչո՞վ կը Հանեն. ուստի անոնք պիտի ըլլան ձեր դատաւորներ:

Բայց եթէ եւ Աստուծոյ Հոգիով կը Հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ Թագաւորութիւնը Հասած է ձեր վրայ: Կամ մէկը ի՞նչպէս կրնայ մտնել ուժեղ մարդու մը տունը եւ յափշտակել անոր կարասիները, եթէ նախ չկապէ աչդ ուժեղ մարդը, եւ ա՛յն ատեն կողոպտէ անոր տունը: Ա՛ն որ ինծի Հետ չէ՝ ինծի Հակառակ է՝ եւ ա՛ն որ ինծի Հետ չի ժողվեր՝ կը ցրուէ: Ուստի կը յայտարարեմ ձեզի. Ամէն տեսակ մեղք ու Հայհոյութիւն պիտի ներուի մարդոց, բայց Սուրբ Հոգիին դէմ եղած Հայհոյութիւնը պիտի չներուի մարդոց: Ո՛վ որ խօսք մը ըսէ մարդու Որդիին դէմ՝ պիտի ներուի անոր՝ բայց ո՛վ որ խօսի Սուրբ Հոգիին դէմ՝ պիտի չներուի անոր՝ ո՛չ այս աշխարհին մէջ եւ ո՛չ դպիքի մէջ»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԱ.23)

Այս մէջբերումը կը ներկայացնէ Յիսուսի պատասխանը անոնց, որոնք Ձինք Սատանային զօրութեամբ դիւահարներէն դեւերը հանելով կ'ամբաստանէին: Յիսուս այս առիթը չփախցուց եւ կարեւոր դաս մը տուաւ հանրութեան: Ինք, իբրեւ անոնց ամբաստանութեան պատասխան օգտագործեց Սատանային օրինակը: Բուն տրուած դասը Իր հետեւեալ խօսքին մէջն է. «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի. եւ ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ո՛չ կացցէ»: Այս հիման վրայ երկվայրկեան մը մտածենք եւ քննենք մեր Ս. Եկեղեցին եւ անոր ներկայ վիճակը: Ան ինքնիր դէմ բաժնուած է, հետեւաբար ըստ Յիսուսի ըսածին, ան աւերման, կործանումի ճամբուն վրայ է: Եթէ մենք զմեզ կը համարենք քրիստոնեայ եւ Յիսուսի աշակերտ եւ Անոր սորվեցուցածներուն հետեւող ու զանոնք կիրարկող, պէտք չէ՞, որ այս ներկայ վատ կացութիւնը «բուժենք»: Իսկ եթէ կացութիւնը փոխելու նպատակը չունինք, գոնէ ինքզինքնիս չխաբենք մենք զմեզ քրիստոնեայ կոչելով: Այս տեսակէտը միայն մեր եկեղեցւոյ համար չէ, այլ՝ ընդհանուր Քրիստոնէութեան համար է՝ իր զանազան յարանուանութիւններով եւ հաւատալիքներով: Ան նոյնիսկ ի զօրու է բոլոր այն

կրօնքներուն համար, որոնք մարդոց միջեւ զատողութիւն՝ խտրութիւն եւ իրարու հանդէպ ատելութիւն կը յառաջացնեն: Աստուած մէկ է եւ բոլոր կրօնքներն ալ նոյն Աստուածն է որ կը պաշտեն, հոգ չէ թէ տարբերտարբեր անուններով կը ճանչնան Զայն:

Յիսուս Քրիստոս երբ «դեւ կը հանէր», այդ կը նշանակէ թէ Ան մարդուն զօրութեան մարմինն ցած յաճախականութիւնները կ'անհետացնէր, զանոնք փոխարինելով իրմէ անոնց տուած բարձր յաճախականութիւն ունեցող զօրութեամբ: Բարձր զօրութեամբ ալ մարդուն գիտակցութեան մակարդակը կը բարձրանայ եւ իր մտային հիւանդութիւնն ալ կը բուժուի: Մարդուն նախկին ունեցած ցած որակով զօրութիւնն ալ իր «Յս»-ին՝ Սատանային պատճառաւ գոյացած էր: Ամէն անձ ինք պատասխանատու է զինք կազմող զօրութեան որակէն: Հետեւիլ միայն «Յս»-ին մարդը ժամանակի ընթացքին կը դարձնէ դիւահարի: Իսկ հետեւիլ միայն ներքին Քրիստոսի, մարդը կը դարձնէ սուրբի: Համայն մարդկութիւնը, ընդհանուր առմամբ, կը ճոճի երկուքին միջեւ եւ անտարակոյս կ'ենթարկուի իր կերտած զօրութեան յաճախականութեան յառաջ բերած ճակատագրին եւ անոր պատճառովն ալ երբեմն կ'ենթարկուի լաւ եւ երբեմն ալ՝ վատ պատահարներու:

Այս մէջբերումին վերջին մասը ճիշդ այս ճակատագրական պատահարներն է որ կը մատնանչէ: Մարդուն զօրութեան մարմինը Աստուծոյ զօրութեան՝ Ս. Հոգիի արտայայտութիւնն է: Ս. Հոգիէն ինչ որակի զօրութիւն կը ստանանք այդ մեզմէ կախեալ է: Երբ Զօրութեան օրէնքներուն դէմ կը գործենք, կ'ենթարկուինք անոնց հակազդեցութեան՝ մեր կեանքի վատ պատահարներուն եւ ահա՛, Ս. Հոգիի դէմ գործուած մեղքին աններելի ըլլալուն իմաստն ալ աս է:

ԱՆՆԵՐԵԼԻ ՄԵՊԸ

«Ամէն ասեմ յեւ, պի ամենայն ըողոյի որդոց մարդկան մէջէ՛ եւ ՀայԵոյութիւնէ՛ որչափ եւ ՀայԵոյեացեն, Բայց որ ՀայԵոյեացէ պԵոգին սորբ, ոչ ունիցի ըողութիւն յաւիտեան, այլ պարտապան լիցի յաւիտենիցն մէղաց» : (Մարկոս Գ:28-29)
«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ ամէն մեղք պիտի ներուի մարդոց որդիներուն եւ ՀայԵոյութիւնները՝ որչափ որ ՀայԵոյեն. Բայց ով որ Սուրբ Հոգիին դէմ ՀայԵոյէ, յաւիտեան թողութիւն պիտի չունենայ, Հապա յաւիտեան կան դատաստանին պարտաւոր պիտի ըլլայ»:

Ձանազան գիրքերուս եւ զանազան յօդուածներուն մէջ բազմիցս մէջբերած եւ մեկնաբանած եմ այս վերեւի երկու համարները: Մարդ արարած նախ պէտք է հասկնայ, թէ Աստուած ոչ ոք կը դատէ եւ ոչ ոք ալ կը պատժէ: Աստուծոյ շնորհքները կը տեղան բոլորին վրայ անխտիր՝ թէ՛ բարիներուն, թէ՛ ալ չարերուն:

Ս. Հոգին Աստուծոյ զօրութիւնն է, ինչ որ ամբողջական բնագիտութիւնը (quantum physics) այսօր «մութ զօրութիւն» (dark energy) կը կոչէ, որովհետեւ տակաւին չէ գիտցուած այդ զօրութեան բնոյթը: Բայց այսօր շատ լաւ գիտենք, որ թէ՛ ըստ Ս. Գիրքի եւ թէ՛ ալ ըստ գիտնականներուն, համայն տիեզերքը իր մէջի աստղախումբերով, աստղերով, մոլորակներով եւ լուսիններով յառաջ եկած է այդ Ս. Հոգիի զօրութեամբ: Ինչ որ այսօր անջրպետի մէջ մարդուս համար տեսանելի է եւ մենք զայն տիեզերք կ'անուանենք, անջրպետին հազիւ 5%-ն է: Կայ նաեւ, առ այժմ մեզի համար անտեսանելի «նիւթ» մը, իր քաշողական ոյժով, որ անջրպետին 25%-ը կը կազմէ: Անջրպետին մնացեալ մասը՝ 70%-ը, կը պարունակէ այդ «մութ զօրութիւն»-ը: Գիտնականները կ'ըսեն, թէ տիեզերքը տակաւին կ'ընդլայնի ու կը տարածուի: Աստղախումբերը իրարմէ կը հեռանան,

որուն պատճառը այդ «մուժ զօրուժիւն»-ն է: Աս կը նշանակէ, թէ Ս. Հոգին տակաւին անընդհատ կը բղխի Աստուծմէ: Քանի որ ամէն ինչ Ս. Հոգիի զօրութեամբ յառաջ եկած է, տրամաբանական է եզրակացնել, թէ ամէն ինչ ենթակայ է Ս. Հոգիի զօրութեան զանազան օրէնքներուն: Ամէն զօրութիւն զինք կառավարող իր ուրոյն օրէնքները ունի: Ստեղծագործութիւնը կառավարող Հայր Աստուծոյ դրած օրէնքներն ալ Ս. Հոգիի անխախտելի տիեզերական օրէնքներն են: Մարդ ալ նոյն զօրութեան արդիւնքն է: Իր մարմինը հողէ՝ նիւթէ կազմուած է, նիւթն ալ՝ Ս. Հոգիի զօրութեանն: Մարդուն իր հոգին Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է, որ Ս. Հոգիի զօրութեան Ֆիզիքական արտայայտութիւնն է:

Այս հիման վրայ պարտ ենք հասկնալ վերելի մէջբերումին մէջի Յիսուսի ըսածը: Երբ մարդ արարած կը գործէ բնութեան որեւէ օրէնքին դէմ, ինք կ'ենթարկուի անոր հակազդեցութեան: Կարելի չէ գլուխը ջուրին տակ մխրձել եւ շարունակել շնչել, կամ երկրորդ յարկի պատշգամէն դուրս քալել եւ վար չիջնալ: Մարդ բնութեան այս օրէնքները լաւ գիտէ եւ կը ջանայ անոնց դէմ չգործել, որպէսզի հակազդեցութեան՝ «պատիժ»-ի չենթարկուի: Նոյնիսկ անասունները անգամ շատ լաւ գիտեն այս օրէնքները: Դժբախտաբար մարդիկ տակաւին լաւ չեն գիտեր Ս. Հոգին կառավարող շատ մը տիեզերական օրէնքները եւ յաճախ այդ օրէնքներուն դէմ կը գործեն, հետեւաբար կ'ենթարկուին անոնց հակազդեցութիւններուն, որ ինք զանոնք կը նկատէ Աստուծմէ իրեն տրուած պատիժ կամ վատ ճակատագիր: Յիսուս մեզի սորվեցուց կատարելութեան ուղին՝ Ս. Հոգիի տիեզերական օրէնքներուն հետ ներդաշնակօրէն ապրիլ: Վերելի Յիսուսի խօսքին իմաստը այն է, թէ երբ մեր կենցաղը այդ օրէնքներուն հետ աններդաշնակ է եւ մեր խորհուրդ,

Խօսք ու արարքները այդ օրէնքներուն դէմ են, մենք կ'ըլլանք մեղանշած եւ կ'ենթարկուինք անոնց հակազդեցութիւններուն: Ահա՛, աս է Ս. Հոգիի «հայհոյել»-ը եւ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքին աններելի ըլլալուն իմաստը: Մարդ արարած Իր խորհուրդ, խօսք ու արարքներով կ'որոշէ, թէ ինչ որակով Ս. Հոգիի զօրութիւն պիտի ստանայ: Ինչ չափով ընդունակ անօթ մը պիտի ըլլայ: Իր կերտած կենսատու զօրութեան թրթռացումի յաճախականութեամբ ալ կ'ենթարկուի անոնց ներդաշնակ լաւ կամ վատ պատահարներուն, որոնք կը կազմեն վերեւ յիշուած հակազդեցութիւնները: Մարդ իր ճակատագրին ճարտարապետն է եւ փախուստ չկայ անկէ: Ըստ աւետարանին, մինչեւ վերջին «լուծան» պարտ է «վճարել»:



Մեղքիւ Բաճառաւը

«Այլ յորժամ այսն պիղծ էլանիցէ՛ ՚ի մարդոյ՝
ըրջի ընդ անջրդին Գեղիս, խնդրէ Հանգիսոյ՝ Ե-
ո՛ւ շ Բրահնէ: Յայնժամ ասէ. Դարձայ ՚ի Գո-
նիմ՝ ուսրի էլին: Եւ էկեալ Բրահնէ պարապո՛րդ
մախրեալ էւ յարդարեալ: Յայնժամ Երթայ էւ
առնո՛ւ ընդ իւր՝ Է՛թն այլ այսս շարագո՛նյնս
ձան պինձն, էւ մտեալ բնակէ՛ անդ. էւ լինի
յեղին մարդոյն այնորիչ շա՛ր ձան պառաջինն:
Լ՛յնպէս Եղիցի էւ ապրիս այսմիչ շարի»: (Մարգէնոս ԺԲ:43-45)

«Երբ անմաքուր ոգին դուրս կ'ելլէ մարդէ մը՝ կը շրջի
անջուր տեղեր, Հանգատութիւն կը փնտռէ, ու չի
գտներ: Այն ատեն կ'ըսէ. Վերադառնամ իմ տուն՝
ուրկէ ելայ: Կու գայ եւ կը գտնէ գայն՝ պարապ,
աւուած ու զարդարուած: Այն ատեն կ'երթայ՝ եւ
կ'առնէ իրեն Հետ եօթը ուրիշ ոգիներ՝ իրմէ ասելի չար՝
ու մտնելով Հոն կը բնակին. եւ այդ մարդուն վերջին
վիճակը կ'ըլլայ առաջինէն ասելի գէշ: Ա՛յսպէս պիտի
ըլլայ այս չար սերունդին ալ»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԱ:24-26)

Առաջին հերթին կը թուի, որ մարդուն թէ՛ մար-
մինը թէ՛ ալ միտքը կը կառավարուի ուրիշ անհատակա-
նութեան մը կողմէ, որոնք մարդիկ «ոգի» կը կոչեն:
Երբ Յիսուս կ'ըսէ «անմաքուր՝ պիղծ ոգին» ակնարկ մը
կ'ընէ մարդուն կերտած ցած զօրութեան յաճախակա-
նութեան: Երբ մարդուն տրուի բարձր որակով զօրու-
թիւն եւ անձը «բժշկուի», բայց եթէ ան ճշմարտապէս
չէ ապաշխարած եւ իր կենցաղը չէ փոխած, իր ապագայ
վիճակն ալ շատ ասելի վատ կ'ըլլայ: Եօթ այլ ոգիները
կը ներկայացնեն եօթ մահացու մեղքերը: Այս ուղղու-
թեամբ նկատի առնենք այժմէական ցայտուն օրինակ
մը: Անհատ մը ինքզինք բախտախաղի մոլի կը դարձնէ

եւ ժամանակի ընթացքին իր բոլոր հարստութիւնը կը կորսնցնէ: Թշուառ վիճակի կը մատնուի եւ կը սկսի մուրալ: Բարեկամներ բարեսիրութեամբ անոր կ'օգնեն՝ տուն տեղ կու տան, սակայն եթէ անձը իր դասը չէ սորված ու կենցաղը չէ փոխած, իր ստացած օգնութիւնն ալ կը վատնէ եւ իր վիճակը աւելի վատ կ'ըլլայ, ինք իր բարեկամներն ալ կը կորսնցնէ: Նմանապէս երբ անձ մը թմրեցուցիչ բաղադրութիւններու մոլին կը դառնայ, եթէ հիմնականօրէն ան չի փոխեր իր խորհելակերպը եւ կենցաղը, որեւէ նիւթական օգնութիւն որ ան ստանայ, զայն դարձեալ կը մսխէ յաւելեալ քիմեական բաղադրութիւն ծախու առնելով: Իր այս ընթացքը զինք աւելի վատ վիճակի կը մատնէ, ան կ'ենթարկուի ուղեղային վնասի, նոյնիսկ իր գործածած բաղադրութեան չափը փախցնելով ալ կրնայ մահանալ:

Աշխարհի վրայ մարդուն պարտականութիւններէն մին գթասիրտ ըլլալն է եւ բոլորին օգնող: Բայց օգնողն ալ պարտ է ուշիմ ըլլալ, որպէսզի իր կատարած օգնութիւնը անհատին օգտակար ըլլայ, քան թէ վնասակար: Միայն անոնք որոնք արժանի են օգնութիւն ստանալու, անոնց պէտք է օգնութիւն տրուի: Ան չի նշանակեր որ ամէն մուրացող օգնութեան պէտք ունի: Ազահ անձի մը օգնելով ժամանակի ընթացքին զայն նաեւ տէր կ'ընենք ծուլութեան մահացու մեղքին: Ազահութեան վրայ կ'աւելնայ նաեւ ծուլութեան մեղքը: Ահա՛, «իւրմէ աւելի չար ուրիշ ոգիներուն» իմաստն ալ աս է եւ մեղքերը կամաց կամաց կը բազմապատկուին:



ԱՌԱՎԱԵՐՈՒՄ ԵՄ

«Եւ մարտնչեալ աշակերտքն ասէն ցնա. Ընդէ՞ր
առակօ՛վ խօսիս ընդ նոսա: Մա պարասխանի ետ
էւ ասէ՛ ցնոսա. Բանսն յեզ րոտեալ է Գիտել
պարտուորտս արշայոթեանն երկնից, էւ նոցա
չէ՛ րոտեալ: Գի ոյր Գոցէ՛ րացի՛ նմա էւ
յաւելցի, էւ ոյր ոչն Գոցէ՛ էւ սոր ունիցին
Բարձրի՛ նմանէ: (Մարտեոս ԺԳ:10-12)

«Աշակերտները մօտենալով՝ ըսին իրեն. «Ինչո՞ւ
առակներով կը խօսիս անոնց»: Ինք ալ պատասխանեց
անոնց. «Քանի որ ձեզի՛ տրուած է գիտնալ երկիրքի
թագաւորութեան խորհուրդները, բայց անոնց տրուած
չէ: Որովհետեւ ո՛վ որ ունի անոր պիտի տրուի ու առա-
տութեան մէջ պիտի ըլլայ. իսկ ո՛վ որ չունի, ունեցածն
ալ անկէ պիտի առնուի»:

«Գի լցցի ասացեալն ՚ի մարտարէէ. Բացից առակօ՛վ
սքեբան իմ, Բողեցի՛ց սքաթկեալսն ՚ի աշխարհի»:
(Մարտեոս ԺԳ:35)

«Որպէսզի իրագործուի մարգարէին միջոցով ըսուած խօս-
քը. «Առակներով պիտի բանամ բերանս, եւ պիտի արտա-
յայտեմ աշխարհի հիմնադրութեանն ի վեր ծածկուած
բաները»»:

(Տես նաեւ Ղուկաս Ը:9-10 եւ Մարկոս Դ:10-12)

Այս համարներուն նկատմամբ այստեղ շատ երկար
բացատրութիւն պիտի չգրեմ: Ընդարձակ տեղեկութիւն
եւ մեկնաբանութիւն տրուած է «Աւետարանի Խոր-
հուրդները Բ. Յիսուսի առակները» հատորիս յառաջա-
բանին մէջ (չէր 15-38): Յիսուս սորվեցուց Աստուծոյ
թագաւորութեան խորհուրդները, այսինքն Հայր Աս-
տուծոյ դրած Ս. Հոգիի զօրութիւնը կառավարող օրէնք-
ները: Պատշաճ չէր զանոնք անպատրաստից եսասէր
մարդոց տալ, այլ տալ միայն անոնց, որոնք իրենց
կերտած բարձր գիտակցութեամբ պիտի կարողանային
հասկնալ ըսուածներուն մէջ թագնուած խորհուրդները:

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԸՇԱՍՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

«Լսէ ցնոսա Յիսուս. Իմացարո՞ւմ զայս ամենայն :
Ըսէ՛ն ցնա. Ըյո Տէր: Եւ նա ասէ ցնոսա. Վասն
այսորիկ ամենայն որպիսի աշակերտեալ արժայոտութեան
երկնից, նմա՛ն է առն ցրանոտեառն՝ որ Հաննէ՛ ՚ի
Գանձէ իրմէ զնո՛ր եւ զՀին» : (Մարթէոս ԺԳ: 51-52)
«Յիսուս ըսաւ անոնց. «Հասկցա՞ք այս ամէնը: Ըսին
անոր. «Այո՞՝ Տէր»: Ան ալ ըսաւ անոնց. «Ասոր Համար
ամէն դպիր՝ որ աշակերտ եղած է երկինքի
Թագաւորութեան՝ նման է տանտիրոջ մը՝ որ իր գանձէն
կը Հանէ նորն ու Հինը»»:

*Յիսուս, իր վերելի խօսքերէն առաջ ալ, Աստուծոյ
Թագաւորութեան գանձ մը ըլլալը մի քանի առակներ-
ով սորվեցողցած էր: Յիսուս, որովհետեւ իր նիւթերը
միշտ թագնուած ձեւով կը սորվեցնէր, այդ պատճառով
ալ միշտ հարց կու տար թէ ըսուածներուն բուն իմաս-
տը հասկցած էին: Երբ անոնք դրական պատասխան կու
տային, Յիսուս, այս անգամ ալ, այդ թագուն գիտու-
թիւնը հասկցողներուն վիճակած պարտականութիւնը
եւ պատասխանատուութիւնը, կը սորվեցնէր: Անոնք,
որոնք երկինքի թագաւորութեան «աշակերտ» եղած են,
այսինքն անոնք, որոնք կը ձգտին արժանանալ երկին-
քի թագաւորութեան, կը նմանին «տանտիրոջ»: Ի՞նչ է
«տանտիրոջ»-ին իմաստը: «Տանտէր»-ը ընտանիքին պե-
տն է, հետեւաբար իր ընտանիքին բոլոր անդամներուն
բարելաւումը ապահովելու հսկայական պատասխանա-
տուութիւնը եւ պարտականութիւնը ունի: Այն աշակեր-
տը, որ հասկցած է երկինքի թագաւորութեան իմաստը,
նման «տանտիրոջ», ընդհանուրի բարելաւման նկատ-
մամբ հսկայական պարտականութիւն եւ պատասխանա-
տուութիւն ունի: Միթէ չե՞նք ըսած որ ընդհանուր
ստեղծագործութիւնը Աստուծոյ մարմինը կը ներկայա-
ցընէ: Հետեւաբար, զայն՝ ստեղծուած ամէն ինչ, խնամել*

եւ բարեխաւել «երկիրնքի թագաւորութեան իմաստը հասկցած» անհատին պարտականութիւնն է: Ուրեմն ի՞նչպէս իրականացնել այդ պարտականութիւնը: Յիսուս ասոր պատասխանն ալ կու տայ. «գանձէն հանել նորն եւ հինը»: Ի՞նչ է այս նախադասութեան իմաստը: Յիսուս Աստուծոյ թագաւորութիւնը բազմիցս ներկայացուցած է իբրեւ գանձ: Ան նաեւ ըսած է, թէ Աստուծոյ թագաւորութիւնը մեր ներսն է: Հետեւաբար Աստուծոյ թագաւորութեան գանձը անձին հոգին՝ Քրիստոսըն է: Ուրեմն աշակերտին պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնն ալ իր ներքին Քրիստոսը իր անձին մէջ յայտնաբերելն է: Ուրեմն ի՞նչ է իմաստը «հին եւ նոր»-ին: Միակ ճշմարտութիւնը Քրիստոսն է եւ ճշմարտութիւնը «հին» եւ «նոր» չունի: Մարդ արարած ժամանակի ենթակայ է եւ ընդհանուր առմամբ կը կարծէ թէ անցեալը եւ ապագան ճշմարտութիւններ են: Ինք կը խորհի, թէ ինչ որ անցեալին ունեցած էր «հին» է եւ ներկային կամ ապագային ունենալիքն ալ «նոր» է: Այս հիման վրայ ան նաեւ կը կարծէ, թէ յաւիտենականութիւնը անվերջ ժամանակ է: Իր ներքին գանձը՝ Քրիստոս ժամանակին ենթակայ չէ, հետեւաբար յաւիտենական է: Ըստ մարդուն հասկացողութեան, Ան անցեալին ալ նոյնն էր, ներկային ու ապագային մէջն ալ նոյնն է՝ անփոփոխ, որովհետեւ ժամանակի ենթակայ չէ: Ուրեմն «հին»-ը եւ «նոր»-ը երկուքն ալ նոյնն են: Բայց այս բառերով Յիսուս կը սորվեցնէ նաեւ յաւիտենական կեանքին ինչ ըլլալը: Մարդ արարած Փիզիքայէս միայն ներկային մէջ կ'ապրի, բայց մտայնօրէն ան հազուադիւտօրէն ներկան կ'ապրի: Անոր միտքը զբաղ անցեալի յուշերով եւ ապագային իրականանալիք ցանկութիւններով, անընդհատ ներկան կ'անտեսէ: Յաւիտենական կեանքը մտայնօրէն ներկային մէջ ապրելն է՝ միտքը կեդրոնացած Քրիստոսի վրայ:

ԱՍՏՈՒԾԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆ ԹԷ ԱՎԱՆԿՈՒԹԻՒՄ

«Յայնժամ մարեան առ Յիսուս՝ որ յԼերոսսողեմէ մարեիսեցիկն էր դուրսէ՛ր էր ասէն: Ընդէ՛ր աշակերտրդն ին անցանէն զաւանդոտելեամբ ժերոցն. զի ո՛չ լուսնան ան զՅիսուս յորժամ Հայոց որդին: Սա պարասխանն էր՝ էր ասէ ցնոսա. Ինչ որով՝ ընդէ՛ր անցանէ՛ր զպարոտիքանան Լարոտոյ՝ զասն Յերոյ աւանդոտելեան: Զի Լարոտա՞ ասաց. Պարոտե՛ս զՀայր ին էր զմայր: Եւ որ Բամբասէ զՀայր կամ զմայր՝ մահո՛ւն զախճանեացի: Եւ որով ասէ՛ր. Որ ասիցէ ցՀայր իր կամ զմայր իր, թէ պարարա՞ր է՝ զոր յինէն օգրիցիս, էր ո՛չ պարոտիցէ զՀայր իր էր զմայր իր. էր խորէ՛ր զԲանն Լարոտոյ զասն Յերոյ աւանդոտելեանն: Կէ՛ղժատորէ՛ Բարո՛ւն զարժարեացաւ՝ ի վերայ Յեր Եսայի՛ էր ասէ: Ժողովորդս այս շրթամբէ՛ր պարոտէ զին, էր սիրորէ իրեանց Հեռացեալ մեկուսի՛ է յինէն: Զոր պաշտէն զին. ուսուցանէն զարդաստեղարոտելեան՝ զմարդկան պարոտելեալս»: (Մարիէոս ԺԵ: 1-9)

«Այն ատեն Յիսուսի եկան դպիրներ ու Փարիսեցիներ, որոնք Երուսաղէմէն էին, եւ ըսին. «Ինչո՞ւ քու աշակերտներդ զանց կ'ընեն նախիքներուն աւանդութիւնը, քանի որ Հեն լուար իրենց ձեռքերը՝ երբ Հաց կ'ուտեն»: Ինք ալ պատասխանեց անոնց. «Հապա դո՛ւք ինչո՞ւ զանց կ'ընէք Աստուծոյ պատուիրանը՝ ձեր աւանդութեան պատճառով: Արդարեւ Աստուած պատուիրեց. Պատուէ՛ Հայրդ ու մայրդ. եւ ո՛վ որ անիծէ իր Հայրը կամ մայրը, մահո՛ւմ թող վախճանի: Բայց դուք կ'ըսէք. Ո՛վ որ իր Հօր կամ մօր ըսէ թէ ի՛նչ օգուտ որ պիտի ստանաս ինձմէ՛ Աստուծոյ տալիք ընծայ է, եւ իր Հայրը կամ մայրը չպատուէ՛ ազատ է: Ա՛յսպէս՝ անվաւեր դարձուցած էք Աստուծոյ պատուիրանը՝ ձեր աւանդութեան պատճառով: Կեղծաւորնէ՛ր, Եսայի ճի՛շդ մարգարէացաւ

ձեր մասին՝ ըսելով. Այս ժողովուրդը միայն չըթուներ՝ կը պատուէ զիս, բայց իրենց սիրտը հեռու է ինձմէ. եւ պարապ տեղը կը պաշտեն զիս՝ մարդոց պատուէրները սորվեցնելով իբր վարդապետութիւն»:

(Տես նաեւ Մարկոս է:1-13)

Դպիրներուն եւ Փարիսեցիներուն ըրած դիտողութեան, Յիսուսի տուած պատասխանը շատ բացայայտ է: Բայց պէտք է կարծենք թէ Յիսուսի ըսածները միայն այն օրուայ Հրեաներուն յատուկ են, այլ՝ այսօր մեզի եւս: Յիսուսի ըսածներէն յայտնի է, թէ Հրեաները իրենց կրօնքին տուած ճշմարտութիւնները խեղադիւրելով յարմարցուցած էին իրենց վատ կենցաղին: Այսօր մենք՝ Քրիստոնեաներս, ինչպէս նաեւ իսլամները նոյնը կ'ընենք: Կան բազմաթիւ յարանուանութիւններ զանազան հաւատալիքներով՝ օրէնքներով: Շատ դիւրին է ըսել. «Ես կը հաւատամ Յիսուսի, որ Աստուծոյ որդին է եւ մեր մեղքերուն համար մեռաւ, հետեւաբար փրկուած եմ եւ պիտի ունենամ յաւիտենական կեանք»: Զարմանալին ան է, որ յաւիտենական կեանքը պիտի դայ ապագային: Անոնք կապուած աշխարհի «սա», «դա» եւ «նա»-ին կարող չեն ինքզինքնին ձերբազատել աշխարհէն: Անոնք տակաւին կ'երկրպագեն իրենց «Ես»-ին: Երանի այդքան դիւրին ըլլար յաւիտենական կեանքի արժանանալ: Մարդիկ ընդհանուր առմամբ «զանց կ'ընեն» Աստուծոյ պատուիրանները եւ կը հետեւին իրենց ստեղծած զանազան հաւատալիքներուն: Այն անձը, որ կը յաջողի «սուրբ սիրտ» կերտել, կը տեսնէ Աստուած եւ կը յաջողի իր ներքին Քրիստոսը յայտնաբերել: Ներկայ քրիստոնեաներն ալ զանազան աւանդութիւններու՝ հաւատալիքներու պատճառաւ Աստուծոյ պատուիրանները խեղադիւրելով, զանոնք «դարձուցած են անվաւեր»: Անոնք «չըթուներով կը պատուեն» Աստուած, բայց «իրենց սիրտը հեռու է» Աստուծմէ: Անոնց այդ հաւատալիքները՝ «մարդոց պատուէրները կը սորվեցնեն իբր վարդապետութիւն»:

ԻՆՁ ԲԱՆ ՄԱՐԴՈ ՎԵ ՊՈԾԷ

«Եւ կոչեցեալ առ ինձն զժողովո՞րդսն՝ ասէ ցնոսս .
Լուսարո՞ւի՛ եւ ՚ի միտ առեի: Ո՛չ որ ինչ մտանէ ընդ
Քերան՝ պղծե՛լ զմարդ, այլ որ ինչ ելանէ ՚ի Քերա-
նոյ՝ ա՛յն պղծե՛լ զմարդ: Յայնժամ մատուցեալ աշա-
կերդացն նորա՝ ասէն ցնա . Պիտե՞ս՝ զի փարիսե-
ցի՞ն իՔրեւ լուսն զբանն՝ Բայթագղեցի՛ն: Սա պա-
րասխանի ետ նոցա՝ եւ ասէ . Լմե՛նայն որոնկ՝ զոր
ո՛չ րնկեաց Հայր իմ երկնաւոր, խլեացի՛: Թո՛ղ
որո՛ւ զնոսս . կո՛յրի՛ եմ՝ կո՛րաց առաջնորդի՛: Այր
կորի՛ յորժամ առաջնորդե՛լ՝ սխալե՛, եւ երկո՞ղին
՚ի խորխորայր անկանին: Պարասխանի ետ նմա Պե՛ր-
րոս եւ ասէ . Մեկնեա՛ մեզ զառակս զայս: Լսե՛ Յի-
սուս . Տակաւին՝ եւ դո՛ւ զանմիտի՛ կի, եւ ո՛չ
իմանայի՛ . եթե՛ ամենայն որ մտանէ ՚ի Քերան,
յորովայն երթայ՝ եւ արբա՛վս ելանէ: Իսկ որ ելանէ
՚ի Քերանոյ ՚ի սրբե՛լ անտի Բայ . եւ ա՛յն պղծե՛լ
զմարդ: Զի՛ ՚ի սրբե՛լ ելանէն խորհորդի՛ շարի,
սպանո՞ւթիւնի, շնո՞ւթիւնի, պոռնկո՞ւթիւնի, Բո-
ղո՞ւթիւնի, սոսո՞ւթիւնի, Հայհոյո՞ւթիւնի:
Ը՛յս ամենայն ե՛ որ պղծե՛լ զմարդ, այլ անլուսայ Յե-
սու՛ի ոտի՛ն ո՛չ պղծե՛լ զմարդ»: (Մատթեոս ԺԵ: 10-20)
«Եւ բազմութիւնը կանչելով իրեն՝ ըսաւ անոնց . «Լսե-
ցե՛ք ու հասկցե՛ք . ո՛չ թի՛ ինչ որ կը մտնէ բերանը՝ կը
պղծէ մարդը, հապա ինչ որ կ'ելլէ բերանէն՝ անիկա՛ կը
պղծէ մարդը»: Այն ատեն իր աշակերտները մօտեցան եւ
ըսին իրեն . «Գիտե՞ս թի՛ Փարիսեցիները գայթակղեցան,
երբ լսեցին այդ խօսքը»: Ան ալ պատասխանեց . «Ամէն
սուսկ՝ որ իմ երկնաւոր Հայրս չէ սնկած, պիտի խուլի:
Թողուցե՛ք զանոնք . իրենք կոյր են, ու կոյրերու առաջ-

նորը: Եթէ կոյրը առաջնորդէ կոյրը, երկուքն ալ փոքր պիտի լընան»: Պետոս ըսաւ անոր. «Բացատրէ՛ մեզի այս առակը»: Յիսուս ըսաւ. «Դո՞ւք ալ տակաւին անխելք էք. չէ՞ք հասկնար թէ ամէն ինչ որ կը մտնէ բերանը, կը պարուակուրի փորին մէջ, ու կը ձգուի արտաքնոցը: Իսկ ինչ որ բերանէն դուրս կ'ելլէ՝ սիրտէ՛ն յառաջ կու գայ, եւ անիկա՛ կը պղծէ մարդը: Որովհետեւ սիրտէ՛ն կ'ելլեն չար մտածումներ, սպանութիւններ, շուտթիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ ու հայհոյութիւններ: Ասո՛նք են որ կը պղծեն մարդը, բայց անկուայ ձեռքով հաց ուտելը՝ չի պղծեր մարդը»:
(Տես նաեւ Մարկոս Է:14-23)

Նոր կտակարանէն առնուած այս մէջըբերումին մէջ նկատողութեան առնելիք մի քանի կէտեր կան: Հրէական կրօնքին մէջ բազմաթիւ անպէտ օրէնքներ կան: Բոլոր կրօնքներն ալ ունին նման անպէտ օրէնքներ: Այս օրէնքներուն մեծամասնութիւնը դրուած են ժողովուրդին առօրեայ կեանքին մէջ անոնց օգտին համար: Անոնք կրօնքին մաս կազմած են որպէսզի ժողովուրդը անոնց հետեւի: Ճշմարտութիւնը այն է, թէ անոնք Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղիին հետ ոչ մէկ կապ ունին: Այժմէական ցայտուն օրինակ մըն է կաթողիկէ եկեղեցւոյ անդամներուն Ուրբաթ օրերը ձուկ ուտելու եւ միս չուտելու օրէնքը: Օրէնքը միջնադարուն դրուած էր որպէսզի Փորթուկալցի ձկնորսներ կարողանային իրենց ապրուստը ապահովել: Երբ ծովերուն մէջ այլեւս ձուկ չէ մնացած, կամ ինչ որ մնացած է սնդիկով ապականած է, մի քանի տարի առաջ յարմար նկատուեցաւ այդ օրէնքը չեղեալ նկատել: Հրեաներն ալ ուտեստեղէնի նկատմամբ զանազան օրէնքներ ունին, որոնք դրուած էին հիւանդութիւններու առաջը առնելու նպատակով: Պէտք է հասկնանք թէ այս օրուայ արուեստագիտութեան յառաջդիմութիւնը հին ժամանակներուն գոյութիւն չունէր, ինչպէս սառնարանը: Խոզի միսէն ձարակախտ (Trichinosis) հիւանդութեամբ կը վարակուէին, հետեւաբար խոզի միսը արգիւրուած

էր: Յիսուս ինք այդ անպէտ օրէնքները չէր գործադրեր: Ուրեմն Յիսուսի ըսածը այն է, թէ այն ինչ որ մարդ կ'ուտէ զինք չի պղծեր այլ՝ այն ինչ որ բերնէն կ'ելլէ՝ այսինքն իր խօսքերը զինք կը պղծեն: Մարդուն ըսածները եւ գործած արարքները նախ կը կազմաւորուին իբրեւ խորհուրդ: Մարդուն խորհուրդներն ալ կը համապատասխանեն իր բնոյթին: Մարդ իր բնոյթը ինք կը կերտէ իր ենթագիտակցութեան մէջ դրած տեղեկութիւններով՝ հաւատալիքներով, որոնք մեծ մասամբ կապակցութիւն անգամ չունին ճշմարտութեան հետ: Մարդուն բնոյթին տէր ենթագիտակցութեանէն եկող այդ խորհուրդ, խօսք ու արարքներն ալ Յիսուս կը կոչէ «սիրտէն յառաջ կու գայ»: Յիսուս նաեւ կու տայ շարք մը «չար մտածումներու» օրինակներ:

Փարիսեցիներուն համար այդ օրէնքները աւելի կարեւոր էին, քան թէ ներքին սրբութիւնը, որով այդ էր որ ժողովուրդին կը պարտադրէին: Անոնք իրենց բուն կրօնքին իմաստը չէին հասկցած: Յիսուս ասոնց համար կ'ըսէ. «Թո՛ղ սուք զնոսա. կո՛յրք են՝ կուրաց առաջնորդք: Կոյր կուրի յորժամ առաջնորդէ սխալէ, եւ երկոքին՝ ի խորխորատ անկանին»: Չարմանալին այն է, որ նոյնիսկ Յիսուսի առաքեալները, որոնք Հրեայ կրօնքին կը հետեւէին, չի կրցան ըստածին հաւատալ եւ ուզեցին, որ ըստածին իմաստը Յիսուս իրենց բացատրէ: Երբ մարդուն բնոյթը արդիւնքն է իր ենթագիտակցութեան մէջ տեղադրուած խեղադիրուած հաւատալիքներուն, ինքը պիտի ըլլայ «տունկ» մը, որ «երկնաւոր Հայրը» չէ տնկած, հետեւաբար պիտի «խլուի», այսինքն արժանի պիտի չըլլայ յաւիտենական կեանքի: Ամէն անձ պարտ է իր բնոյթը փոխել եւ զայն ներդաշնակել Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղիին հետ:

ՀԱՄՏԵՐ ԵՒ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

«Եւ աճա՛ կին մի թանանացի՛ ՚ի սաճմանաց անորի նոցա՛ ելեալ, աղաղակէ՛ր եւ սուէր. Ողորմեա՛ց ինչ Տէր որդի Դաւիթի, դոստոր իմ՛ շարաշա՛ր այսաճարի: ... Եւ նա մարտօցեալ, երկն՛ը պահանէր նմա եւ սուէր. Տէր օգնեա՛ ինչ: Պարասխանի եդ նմա եւ սուէ. Ո՛չ է քարոտէ՛ առնուլ զճա՛ց մանկանց՛ եւ արկանել շանց: Եւ նա սուէ. Եյո՛ Տէր, թանայի եւ շո՛ւնէ կերակրին՛ ՚ի փշրանաց անկելոց ՚ի սեղանոց ցեառն իւրեանց: Յայնժամ պարասխանի եդ նմա Յիսուս, եւ սուէ. Ո՛վ կին դոս՛ մեծ եմ ճաւարտէ՛ ինչ, եղիցի՛ ինչ՛ որդեա եւ կամիս: Եւ քօշկեցա՛՝ դոստոր նորա ՚ի նմին ժամոս: (Մարգէնոս ԺԵ:22, 25-28)

«Եւ աճա՛ քանանացի կին մը, այդ Հողամաթերէն ելած, կը պրուար անոր. «Ողորմէ՛ ինծի, Տէ՛ր, Դաւիթի՛ որդի, աղջիկս սաստիկ կը չարչարուի դեւէն»: ... Բայց անիկա եկաւ՝ երկրպագեց անոր եւ ըսաւ. «Տէ՛ր, օգնէ՛ ինծի»: Ան ալ պատասխանեց. «Լաւ չէ առնել զաւակներուն հացը ու նետել շուներուն»: Անիկա ալ ըսաւ. «Այո՛, Տէ՛ր. սակայն շուները կը կերակրուին իրենց տիրոջ սեղանէն ինկած փշրանքներով»: Այն ատեն Յիսուս պատասխանեց անոր. «Ո՛վ կին, մեծ է հաւատքդ. թող ըլլայ քեզի՛ ինչ որ կ'ուզես»: Եւ նոյն ժամուն անոր աղջիկը բժշկուեցաւ:»

(Տես նաեւ Մարկոս Է:24-30)

Երիտասարդութեան տարիներէս ի վեր Աւետարաններէն մի քանի համարներ եւ դրուագներ ուշադրութիւնս գրաւած էին եւ պատճառ եղած խորհրդածութեան: Վերելի մէջբերումն ալ անոնցմէ մին էր: Ըստ գրուածին բառացի իմաստին, Յիսուս միայն Հրեայ ժողովուրդին փրկութեան համար եկած էր եւ այլ կրօնքներու պատկանողներուն խոր կը նայէր՝ եթէ ոչ

ատել լուծեամբ: Քանանացի կի՛նը, որ Մարկոսի Աւետարանին մէջ ներկայացուած է իբրեւ «փիւնիկ-ասորի ցեղէն հեթանոս կի՛ն մը», կը թուի ենթարկուիլ անարգանքի, երբ Յիսուս անուղղակիօրէն զայն կը կոչէ «չուն»: Չէի կարողացած այս գաղափարը եւ Յիսուս Քրիստոսի Աստուածային սիրոյ եւ Աստուածային ողորմածութեան յայտնութիւնը ըլլալու գաղափարին հետ հաշտեցնել: Անտարակոյս այդ իմ սխալս էր, որովհետեւ այն ատեն տակաւին Աւետարաններուն պարունակութիւններուն միայն բառացի իմաստը կ'ըմբռնէի եւ ոչ վերացականը:

Քրիստոս ամէն անհատի հոգին է, անկապակից անոնց պատկանած ցեղին կամ կրօնքին: Հետեւաբար անկարելի է, որ Յիսուս, որ Քրիստոսի յայտնութիւնն էր ատէր ոեւէ անձ: Երբ Յիսուս կը խօսէր, Քրիստոսն էր, որ կը խօսէր Յիսուսի բերնով: Ուրեմն ի՞նչ է այս դրուագին իմաստը: Նախ պէտք է ըսել, թէ Յիսուս Քրիստոս ոչ կ'ատէր եւ ոչ ալ խոր կը նայէր այս հեթանոս կնոջ: Ինք աս փաստեց Իր ողորմածութեամբ՝ բուժելով անոր աղջիկը: Այս արարքով Ան նաեւ փաստեց, թէ ինք միայն Հրեայ ազգին համար չէր եկած: Ուրեմն ինչո՞ւ Յիսուս այդ բոլորը ըսաւ կնոջ: Նպատակը ստուգել էր թէ կի՛նը արժանի էր Իր ողորմութիւնը ընդունելու, թէ՛ ոչ: Քրիստոս ամենուն հոգին է, Ան ամէն անհատի մէջ անոր գիտակցութիւնն է, հետեւաբար Ան ամենագէտ է: Ուրեմն, Յիսուս Քրիստոս արդեօք պէտք ունէ՞ր փաստել կնոջ արժանելիութիւնը: Ոչ, Քրիստոս արդէն գիտէր, բայց Իր նպատակը մեզի սորվեցնելն էր, թէ Աստուծոյ ողորմութիւնը ստանալու համար պարտ ենք հեզ եւ խոնարհ ըլլալ, առանց հպարտութեան: Կի՛նը նոյնիսկ ընդունեց, բաղդատամբ Հրեայի մը, իր «չուն»-ի պէս ցած մակարդակի վրայ ըլլալը: Ան հպարտութեան

ոչ մէկ արտայայտութիւն ցոյց տուաւ: Ամէն տեսակի հպարտութիւն «Ես»-էն կու գայ: Հպարտութեան չգոյութիւնն ալ նշան է անհատին կողմէ իր «Ես»-ին անտեսումը: Միթէ այլուր Յիսուս չէ ըսած. անտեսել «Ես»-ը: Ահա՛, աս էր, որ այս դրուագին մէջ, Յիսուս ուզեց մեզի սորվեցնել:

«Ասէ ցնոսա Յիսուս. Տեսէ՛ ի եւ զԳ՞ՅՂ լերո՞ւի
'ի խմորոյ սադուկեցոցն եւ փարիսեցոց:
(Մարքէոս Ժ:Գ:6)

«Յիսուս ըսաւ անոնց. «Ուշադիր եղէք՝ զգուշացէ՛ք
Փարիսեցիներու եւ Սադուկեցիներու խմորէն»:

(Տես նաեւ Մարկոս Ը:14-21)

Յիսուսի այս խօսքն ալ կը հաստատէ վերելի՛ նախկին գրութեան եզրակացութիւնը, թէ պէտք չէ հպարտութիւն ունենանք: Յիսուս մեզ կը զգուշացնէ չըլլալ Փարիսեցիներուն ու Սադուկեցիներուն նրման: Անոնք իրենց կրօնական զանազան օրէնքներուն հետեւելով իրենք զիրենք արդարացեալ կը համարէին: Արդարացած ըլլալու այս զգացումը պարզապէս հպարտութեան զգացումի արտայայտութիւն մըն է: Հպարտութիւնը «Ես»-էն կու գայ, հետեւաբար նշան մըն է, թէ անհատը տակաւին իր «Ես»-ին կապուած է: Ըստ Յիսուսի սորվեցուցածին անձ մը երկու տիրոջ՝ թէ՛ «Ես»-ին եւ թէ՛ Քրիստոսին, չի կրնար ծառայել: Նոյնիսկ այսօր, քրիստոնէական որոշ յարանուանութիւններու անդամներ իրենք զիրենք փրկուած նկատելու զգացումը ունին, ինչ որ յառաջ կու գայ իրենց «Ես»-ին ազդեցութենէն: Այս ալ դարձեալ հպարտութեան տարբեր մէկ երեւոյթն է:



ՅԻՍՈՒՄ ԷՈՒԹԻՒՆ

«Եւ ելեալ Յիսուս ՚ի կողմանս Փիլիպպեայ կե-
սարեայն, Հարցանէ՛ր ցաշակերբան՝ եւ ասէր. Զո՞
ով ասէնս զինէն մարտիկն՝ թէ իցէ որդի մարդո՛ս :
Եւ նո՛վս ասէն. Ոմն՝ զՅովհաննէս մկրտիչ, եւ
այլէ՛ զԵղիա՛, եւ կէսով՝ զԵրեմիա, կամ զմի ո՛վ
՚ի մարգարէիցն : Ըսէ ցնոսա Յիսուս. Իսկ զո՞ով զո՞
ով ասէ՛վ զինէն թէ իցեմ : Պատասխանի եր նմա
Սի՛մոն Պե՛տրոս՝ եւ ասէ. Դո՛ւ ես Քրիստոսն որ-
դի Ըստո՞ժոյ կենդանոյ : Պատասխանի եր Յի-
սուս՝ եւ ասէ ցնա. Երանի՛ ՛վեզ Սի՛մոն որդի
Յովնանոս, զի մարմինս եւ արինն ո՛չ յայտնեաց
՛վեզ՝ այլ Հա՛յր իմ որ յերկինս է : Եւ ես՝ ՛վեզ
ասեմ. զի դո՛ւ ես զլեմ, եւ ՚ի վերայ այդր զինի
շինեցից զէկեղեցի իմ, եւ դրո՞նէ՛ դժոխոց զնա
մի՛ յաղթաւարեացեն : Եւ որայ ՛վեզ զսխալանս արեւո-
յո՞թեան երկնից. եւ զոր միանգամ կապեացես յերկ-
րի, եղիցի կապեա՛լ յերկինս. եւ զոր արձակեացե՛ս
յերկրի, եղիցի արձակեա՛լ յերկինս : Յայնժամ ասադ-
եա՛ց աշակերբացն, զի մի՛ ումե՛վ ասացեն՝ թէ
նա՛ է Քրիստոսն : (Մատթեոս Ժ. Զ : 13-20)

«Երբ Յիսուս կ'երթար Փիլիպպոսի կեսարիային երկրամա-
սը՝ Հարցուց իր աշակերտներուն. «Մարդիկ ի՞նչ կ'ըսեն,
ո՞վ եմ ես՝ մարդու Որդին» : Անոնք ըսին. «Ոմանք կ'ը-
սեն թէ Յովհաննէս Մկրտիչն ես, ուրիշներ՝ Եղիան, ու-
րիշներ ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը» : Ըսաւ
անոնց. «Իսկ զո՞ւք ի՞նչ կ'ըսէք, ո՞վ եմ» : Սիմոն Պետրոս
պատասխանեց. «Դուն Քրիստո՛սն ես, ապրող Աստուծոյ
Որդին» : Յիսուս ըսաւ անոր. «Երանի՛ քեզի, Սիմոն, Յով-
նանի՛ որդի. որովհետեւ ո՛չ թէ մարմինն ու արիւնը

յայտնեցին քեզի ասիկա, հասա իմ Հայրս՝ որ երկինքն է: Ես ալ կը յայտարարեմ քեզի. Դուն Պետրոս ես, եւ այս վէմին վրայ պիտի կառուցանեմ իմ եկեղեցիս, ու դժոխքին դռները պիտի չյաղթեն անոր: Երկինքի թագաւորութեան բանալիները պիտի տամ քեզի, եւ ի՛նչ որ երկրի վրայ կապես՝ երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ, ու ի՛նչ որ երկրի վրայ արձակես՝ երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ»: Այն ատեն աշակերտներուն պատուիրեց՝ որ ո՛չ մէկուն ըսեն թէ ինք Քրիստոսն է: **(Տես նաեւ Ղուկաս Թ:18-21 եւ Մարկոս Ը:27-30)**

Յիսուսին Պետրոսի հետ ունեցած այս խօսակցութեան հետեւանք քրիստոնէութեան մէջ Հոռովմէական կաթողիկէ եկեղեցին ինքզինք կը համարէ առանձնաշընորհեալ, որովհետեւ ան հիմնուած է Պետրոս առաքեալի քարոզչութեամբ: Նման հայեացք մը որոշ չափով կը նսեմացնէ միւս առաքեալներուն առաքելութիւնը: Անտարակոյս այսպիսի հայեացք մը սխալ է:

Վերլուծենք այս համարներուն պարունակութիւնը: Նախ, երբ Յիսուս իր աշակերտներուն հարց կու տայ, թէ մարդիկ ի՞նչ կ'ըսեն իր մասին, այդ պահուն ինքզինք կը համարէ «մարդու Որդի»: Աշակերտներուն ըսածներն ալ ցոյց կու տան թէ այդ օրուայ Հրեայ ժողովուրդին, եթէ ոչ բոլորը, գոնէ որոշ մէկ մասը կը հաւատային վերամարմնացման կարելիութեան: Ժողովուրդէն անհատներ կը կարծէին, թէ Յիսուս նախկին մարգարէներէն մէկուն վերամարմնացումն էր: Շատեր կ'ըսեն թէ Եղիա չէր մահացած եւ հրեղէն կառքով «երկինք» բարձրացած էր, հետեւաբար կարող էր վերադառնալ: Բայց Յիսուս սկիզբէն չյայտուեցաւ իբրեւ չափահաս մարդ: Շատ լաւ գիտենք Յիսուսի ծնունդը:

Յիսուս իրեն համար յաճախ ըսած է «մարդու Որդի»: Իսկ ուրիշներ իրեն համար ըսած են «Աստուծոյ Որդի»: Երբ Պետրոս հարցումին կը պատասխանէ, կ'ըսէ. «Դո՛ւ ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանոյ», Յիսուս անոր չի հակասեր եւ կ'ըսէ, թէ Հայր Աստուած այս

ճշմարտութիւնը անոր յայտնած էր: Յիսուս՝ մարդու Որդին, Քրիստոսը իր մէջ լրիւ յայտնաբերած էր, հետեւաբար Պետրոսի ըսածն ալ այդ յայտնութեան իր գիտակից ըլլալն էր: Իր այս գիտութիւնն ալ իր կերտած բարձր գիտակցութեան հետեւանքն էր: Անձին գիտակցութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է Իր «տաճար»-ին մէջ: Աստուծոյ տաճարն ալ, ըստ Յիսուս Քրիստոսի սորվեցուցածներուն, մարդը ինքն է: Ըստ Ս. Գիրքին ամէն մարդ Աստուծոյ որդին է, բայց մենք Յիսուսի նման Հօր հաճելի Որդիները չենք: Յիսուս նաեւ ըսած է, թէ պարտ ենք Իրեն նմանիլ եւ երկնաւոր Հօր նման կատարեալ ըլլալ, ան ինչ որ Ինք նոյնը ընելով մեզի ցոյց տուաւ:

Երբ Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Եւ 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ», կը յայտարարէ, թէ իր աշակերտները՝ իր սորվեցուցած կատարելութեան ուղին զատողները, Քրիստոս իրենց մէջ յայտնաբերելու ձգտումով եւ պատշաճ գիտութեամբ զայն իրականացնողները պիտի կազմեն ճշմարիտ եկեղեցին: Պետրոսի յայտնուած ու անոր ունեցած այդ անդրադարձը պիտի ըլլայ ճշմարիտ եկեղեցւոյ վէմը: Երկինքի թագաւորութեան «բանալիները» Քրիստոսի յայտնութիւնն է անձին մէջ: Երբ Յիսուս կ'ըսէ. «Եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն», կը յայտարարէ թէ բոլոր անոնց համար, որոնք կը յաջողին կատարելութեան ուղիին մէջ կը յարին իրենց ներքին Քրիստոսին, դժոխքին դռները, որ անձին «Ես»-ն է, պիտի չկարողանայ իր կամքը անձին պարտադրել: Ա՛յն անհատը, որ կը յաջողի Քրիստոս յայտնաբերել իր մէջ, պիտի կարողանայ Յիսուսի նման մեղաւորներուն մեղքերը ներել: Միթէ Յիսուս չէ՞ ըսած, թէ Իր ըրածներէն աւելի մեծ բաներ կրնանք ընել:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅԸ

«Եւ աստեալ զնա մեկոսն՝ Պէտրոսի, սկսաւ կա-
գել ընդ նմա՝ եւ ասել. Բաւ լիցի զեզ Տէր, մի՛
եղիցի զեզ այդ: Եւ նա դարձեալ՝ ի Պէտրոս՝ ասէ.
Ե՛րբ յե՛րա իմ ասյրանայ, ԳայլնաԳղոս-բիւն իմ եւ-
զի ո՛չ խորհիս դո՛ւ զաստատոյան, այլ մարդ-
կան: Յայնժամ Յիսուս ասէ՛ ցաշակերդան իւր-
Եթէ ո՛վ կամիցի զկնի իմ Գալ ուրասցի՛ զանձն, եւ
ասցէ՛ զնաշ իւր՝ եւ եկեսցէ զկնի իմ: Զի որ կա-
միցի՛ զանձն իւր կեցոցանել՝ կորոսցէ՛ զնա. եւ
կորոսցէ զանձն իւր վասն իմ՝ Գրցէ՛ զնա: Զի՞նչ
օգրիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի,
եւ զանձն իւր ցո՛ւտայի: Ամ զի՞նչ ցացէ մարդ
փրկանս ընդ անձին իւրոսմ: Զի Գալո՛ց է որդի
մարդոց փառօվ Ըօր իւրոյ՝ Հանդերձ Հրեշտակօվ
իւրովի, եւ յայնժամ Հաստատցէ՛ իւրախնշիւր
ըստ Գո՛րծս իւր: Ամէն ասէ՛մ Զի իցեն ոմանի
ի սոցանէ՛ որ աստ կան. որի ո՛չ ճաշակեսցեն
զմա՛մ՝ մինչեւ ցեասնիցեն զորդի մարդոց եկեալ
արխայոս-բեամբ իւրով»: (Մատթէոս Ժ.Գ: 22-28)

«Պետրոս մէկդի առաւ զինք՝ եւ սկսաւ յանդիմանել
զինք՝ ըսելով. «Ամենեւին՝ Տէ՛ր այգ բանը չպատահի՛
քզիք»: Ինք ալ դառնալով՝ Պետրոսի ըսաւ. «Ետե՛ւս գնա՛
Սատանայ՝ դուն գայթակղութիւն ես ինձի. որովհետեւ
ո՛չ թէ Աստուծոյ բաները կը մտածես՝ Հապա՛ մարդոց
բաները»: Այն ատեն Յիսուս ըսաւ իր աշակերտներուն.
«Եթէ մէկը ուզէ գալ իմ ետեւէս՝ թող ուրանայ ինք-
զինք՝ վերցնէ իր խաչը՝ ու հետեւի ինձի: Որովհետեւ
ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն՝ իսկ
ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինձի Համար՝ պիտի գտնի
զայն: Քանի որ մարդ ի՞նչ օգուտ կ'ունենայ՝ եթէ չսկի

ամբողջ աշխարհը բայց կորսնցնէ իր անձը. կամ՝ մարդ ի՞նչ փրկանք պիտի տայ իր անձին փոխարէն: Որովհետեւ մարդու Որդին պիտի գայ իր Հօր փառքով՝ իր հրեշտակներուն հետ՝ եւ այն ատեն պիտի հասուցանէ իւրաքանչիւրին՝ իր գործերուն համեմատ: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Հոս ներկայ եղողներէն կան ոմանք՝ որ մահ պիտի չհամտեսեն՝ մինչեւ որ տեսնեն մարդու Որդին՝ եկած իր թագաւորութեամբ»:

(Տես նաեւ Ղուկաս Թ:22-27 եւ Մարկոս Ը:31-39)

Այս մէջըբերումը կը ներկայացնէ Յիսուսի, Երուսաղէմի մէջ իր կրեւիք չարչարանքներուն, սպաննութեան եւ յարուսթեան մասին իր աշակերտներուն տուած տեղեկութենէն վերջ ունեցած խօսակցութիւնը, ինչպէս նաեւ սորվեցուցած դասը:

Առաջին դասը Պետրոսին ըրած առարկութեան Յիսուսին տուած պատասխանն է: Ընդհանուր առմամբ մարդ կը ջանայ իր կեանքի վատ պատահարներէն խուսափիլ: Իսկ երբ չկարենայ խուսափիլ, ան կը դժգոհի եւ ինքզինք անբախտ կը համարէ: Մարդ չէ հասկցած թէ բոլոր լաւ ու վատ պատահարներ Աստուծոյ կամքն են, հետեւաբար մարդ պարտ է զանոնք ընդունիլ: Յիսուս այս տեսակէտին նկատմամբ բացայայտօրէն կը շեշտէ թէ Աստուծոյ կամքէն փախուստ, Աստուծոյ կամքին հակառակ գործել գայթակղութիւն է: Նոյնիսկ փախուստ առաջարկողն ալ կը կոչէ «սատանայ»: Սատանայ կոչուած այդ անձը նոյն այն անձն է, որուն նախապէս ունեցած մէկ արտայայտութեան՝ հասկացողութեան հիման վրայ պիտի կազմուէր Քրիստոսի եկեղեցին: Երբ Յիսուս կ'ըսէ. «զի ո՛չ խորհիս դու զսատուածոյսն, այլ մարդկա՛ն», կը նշանակէ որ Պետրոս կապուած իր «Յս»-ին, կը տեսնէ միայն պատրանքայիւր եւ չի տեսներ ճշմարտութիւնը՝ Աստուածայինը: Պետրոսի այս կացութիւնը կը ներկայացնէ համայն մարդկութեան բռնած ընթացքը՝ ճոճիլ իր անհատականութեան երկու բեւեռներուն միջեւ:

Յիսուսի տուած երկրորդ դասը Իր հետեւեալ խօս-

քըն է. «Եթէ ոք կամիցի զկնի իմ՝ գալ ուրասցի՛ զանձն, եւ առցէ՛ զխաչ իւր՝ եւ եկեսցէ զկնի իմ: Չի որ կամիցի՛ զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ՛ զնա. եւ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ՛ զնա»: Եթէ անհատ մը ճշմարտապէս կը փափագի կատարելութեան ուղիէն ընթանալ դէպի Քրիստոս, պարտ է ուրանալ իր անձը: Ի՞նչ կը նշանակէ անձը ուրանալ: Կը նշանակէ «Ես»-ը ամբողջովին անտեսել: Այս հիման վրայ անձին բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան ըստ Աստուծոյ՝ իր ներքին Քրիստոսի կամքին, քան թէ իր «Ես»-ին: Յիսուս անպատին մէջ, քառասուն օր յետոյ փորձուեցաւ սատանայէն՝ իր «Ես»-էն: Ան անտեսեց իր «Ես»-ը ու ըսաւ. «Երթ յետս իմ՝ սատանայ»: Յիսուս այսպէսով մեզի շատ ցայտուն, շատ հասկնալի օրինակ մը տուաւ: Անհատը իր «անձ»-ը ուրանալէ վերջ պարտ է իր «խաչը վերցնել եւ Յիսուսի հետեւիլ»: Ի՞նչ է իմաստը «խաչը վերցնել»-ուն: Ասիկա երկու իմաստ ունի: Առաջինը. Մարդուն «խաչը» իր կեանքի բոլոր պատահարներն են: Այդ պատահարները իր կերտած ճակատագրին պատճառովն են: Անձը պարտ է բոլորը ընդունիլ որպէս Աստուծոյ կամքը եւ չդժգոհիլ: Ասիկա իր ցանած բոլոր հունտերուն հունձքերը քաղելն եւ ընդունիլն է: Երկրորդը. Անհատը պարտ է Յիսուսի նման իր «Ես»-ը մահուան դատապարտել եւ զայն խաչին գամել, որպէսզի իր ներքին Քրիստոս յարութիւն առնէ՝ իր մէջ յայտնուի: Պատարագի ընթացքին խորանը զոհի սեղանն է: Հոն ներկայացուածը Յիսուսի կատարած զոհողութիւնն է: Այս խորհուրդէն մեր առնելիք դասը այդ խորանին վրայ մեր «Ես»-ը զոհելն է: Յիսուսի յաջորդ խօսքն ալ շատ յատկանշական է: Որովհետեւ ան որ իր «անձ»-ը՝ «Ես»-ը կ'ուզէ փրկել, կը նշանակէ թէ ան տակաւին իր «Ես»-ին կապուած է եւ ինքզինք անկէ չէ ձերբազատած: Հետեւաբար անկարելի է, որ այդ անձը փրկուի: Փրկու-

Թիւնը նուէր մըն է տրուած բոլոր անոնց, որոնք կը յաջողին ամբողջովին անտեսել իրենց «Շս»-ը, կը կատարեն իրենց վիճակած պարտականուլթիւնը եւ տրուած պատասխանատուութիւնը անշուշտ ընթանալով կատարելութեան ուղիէն՝ ըստ իրենց ներքին Քրիստոսի կամքին: Մարդուն կեանքին նպատակը պէտք է որ «փրկութիւն»-ը ըլլայ, այլ՝ միայն իրեն տրուած պարտականութիւնը, որ է կատարել Աստուծոյ կամքը: Քրիստոնէութեան կարգ մը աղանդներուն, որոնք յաճախ կը խօսին փրկութեան մասին եւ կը համարեն իրենք զիրենք փրկուած, հոգ է թէ ինչ հիման վրայ, բացայայտօրէն յայտնի կ'ընեն թէ իրենք տակաւին իրենց «Շս»-ին կապուած են: Միթէ այս տեսակէտը չի՞ հակասեր Յիսուսի վերելի ըսածին: Կարելի է՞ խորհիլ, թէ անոնք իրապէս փրկուած են: Երբ Քրիստոս ակնարկելով մարդը կ'ըսէ. «եթէ կորսնցնէ իր «անձ»-ը ինծի համար, պիտի գտնէ զայն», ըսածը այն է թէ երբ մարդուն անհատականութիւնը կը գործէ ըստ իր դրական բեւեռին, հետեւաբար իր ներքին Քրիստոսի կամքին, որ մատնանշուած է «ինծի համար» բառերով եւ բոլորովին անտեսելով ժխտական բեւեռը ու «Շս»-էն եկած բոլոր խորհուրդ ու ցանկութիւնները, մատնանշուած «կորսնցնէ իր անձը» բառերով, Յիսուսի բացատրութեամբ «պիտի գտնէ զայն»: Այս վերջին երեք բառերուն իմաստը եւ սորվեցուցածը անզուգական է: Աւետարանին մէջ այլուր նաեւ գրուած է Յիսուս Քրիստոսի ուրիշ մէկ խօսքը «ինծի եկեք եւ վերջին օրը յարութիւն պիտի առնէք եւ յաւիտենական կեանք պիտի տամ ձեզի»: Այս վերջին օրը անհատին մահուան օրն է: Երբ մարդ մը կը մեռնի, ընդհանուր առմամբ, իր մարմինն է, որ կը մեռնի: Իր հոգին անմահ է եւ բնաւ պիտի չմեռնի: Բայց մարմնին հետ մարդուն անհատականութիւնն ալ կը մեռնի: Եւ ահա՛, Յիսուս Քրիստոսի ըսածը այն է թէ

մարմնին մահուան օրը անհատականութիւնը յարու-
թիւն պիտի առնէ եւ պիտի արժանանայ յաւիտենական
կեանքի: Յաւիտենական կեանքն ալ ժամանակի դրու-
թենէ դուրս ըլլալն է, գիտակցաբար Աստուծոյ հետ
ըլլալն է: Ամէն մարդ միշտ Աստուծոյ հետ է, բայց,
դժբախտաբար անգիտակցաբար: Իր այս խաւարամտու-
թեան պատճառով ալ ի գուր կը տառապի: Իսկ երբ
մարդ գիտակցաբար Աստուծոյ հետ կ'ըլլայ, այն ատեն
է, որ Աստուածային երանութեան փորձառութիւնը
կ'ունենայ եւ զայն կը վայելէ:

«Չի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն
շահեսցի, եւ զանձն իւր տուժեսցի» խօսքով Յիսուս
Քրիստոս կը յայտնէ, թէ ընդհանուր մարդկութեան
բռնած ընթացքը սխալ է: Մարդ արարած իր «Ես»-էն
եկած ցանկութիւններով կը ձգտի ստացուածքներ
ունենալ եւ անոնց տիրանալու համար ալ իր կեանքը կը
վատնէ: Եթէ ան աշխարհի ամենահարուստ անձը ըլլայ
եւ ամէն ուզածը կարողանայ ունենալ, անոնք գուցէ
կարճ ժամանակի մը համար իր աշխարհիկ կեանքը
բարեկաւեն: Բայց անոնք բոլորն ալ ժամանակաւոր են:
Երբ անհատը մեռնի բոլորն ալ կը կորսուին: Անհատը
այդ բոլոր ժամանակաւոր հաճոյքներուն համար իր
կեանքը վատնած կ'ըլլայ: Իր մարմնին մահուան հետ
անձն ալ կը մեռնի, կ'երթայ: Եւ այդ անձը ամենեւին
յաւիտենական կեանքի փորձառութիւնը պիտի չունե-
նայ: Ահա՛, աս է «անձը կորսնցնել»-ուն իմաստը:

Քրիստոսի յաջորդ խօսքը. «Չի գալո՛ց է որդի
մարդոյ փառօք Հօր իւրոյ»-ն է: «Որդի մարդոյ»-ն
մարդուն հոգին՝ անհատին մէջ Քրիստոսի ներկայու-
թիւնն է: «Որովհետեւ մարդու Որդին պիտի գայ իր
Հօր փառքով» կը նշանակէ անձին մէջ Աստուածայայտ-
նութիւնը: Այս Աստուածայայտնութիւնը կարելի է
միայն անոնց, որոնց «գործերը» «համեմատ» են եւ

արժանի այդ Աստուածայայտնութեան: Ամէն մարդ պարտ է ենթարկուիլ իր ճակատագրին յառաջ բերած պատահարներուն, որոնք բոլորն ալ «համեմատ» են իր կենցաղին՝ գործած «գործերուն»:

Աւետարանէն առնուած վերեւի մէջբերումին վերջին նախադասութիւնն ալ շատ յատկանշական է: Ընդհանուր առմամբ քրիստոնեաներ կը կարծեն, թէ մահէն յետոյ, երկար ժամանակ վերջ, երբ աշխարհին վերջը գայ, Քրիստոս ամպերուն վրայէն «երկինք»-ի մէջ պիտի յայտնուի եւ «բարի»-ները վեր՝ երկինք պիտի յափշտակէ: Յիսուս այլուր ըսած է, թէ Աստուծոյ թագաւորութիւնը դուրսէն երեւցած բաներով չի գար: Վերեւի մէջբերումին մէջի Յիսուսի ըսածը անգամ մը եւս կը վաւերացնէ այդ գաղափարը: Յիսուս կ'ըսէ. «Չի իցեն ոմանք՝ ի սոցանէ՝ որ աստ կան. որք ո՛չ ճաշակեսցեն զմահ՝ մինչեւ տեսանիցեն զորդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով»: Եթէ Քրիստոս՝ «մարդու Որդին» ապագային օր մը, պիտի գայ, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ Յիսուս ըսէ. «հոս կան ոմանք, որ մահ պիտի չհամտեսեն՝ մինչեւ որ տեսնեն մարդու Որդին եկած իր թագաւորութեամբ»: Վստահաբար երկու հազար տարի առաջ ապրող անձ մը տակաւին այսօր ողջ չէ եւ չ'ապրիր: Շատ լաւ գիտենք թէ բոլոր անոնք, որոնք այդ ատեն Յիսուսի հետ էին, բոլորն ալ մեռած են: Յիսուսի առաքեալներուն նահատակութեան պատմութիւններուն բոլորն ալ յայտնի են: Բայց, միանգամայն, Յիսուսի բոլոր խօսքերն ալ ճշմարտութիւն են: Ուրեմն ինչպէ՞ս հաշտեցնել երկու գաղափարները, որոնք կը թուին հակասական ըլլալ: Ճշմարտութիւնը այն է, թէ անոնք հակասական չեն: Աստուած յայտնուեցաւ Ստեփանոսին, անոր մահէն առաջ, երբ ան կը նահատակուէր: Ուրեմն Քրիստոսի վերստին գալուստը ամէն անձի համար իւրայատուկ է եւ կախեալ իր կենցաղէն:

ՀԱՄԱՏԵՐԻ ՉՕՐՈՒԹԻՒՆ

«Եւ նա՛ ասէ ցնոսա՛ . Վասն թերահաւատութեան յերոյ : Ըմեն ասէ՛մ յեզ, եթէ ունիցի՞ ճաւարս խնս՛ւմս՛ որ մանանխոյ, ասասջի՞ լերինս այսմիկ՛ փոխեա՛ց ասորի անդր, եւ փոխեսցի՛ . եւ ո՛չինչ անճնարին լիցի յեզ : Բայց ա՛յս ասգ ո՛չ ի-ի՞ իւնէ, եթէ ոչ՛ արօթի-ի՛ եւ պաճովի : (Մարթէոս ԺԷ:19-20)

«Յիսուս ըսաւ. «Ձեր թերահաւատութեան պատճառովքանի որ ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. եթէ մանանեխի հատիկի չափ հաւատք ունենաք, պիտի ըսէք այս լերան. “Փոխադրուէ՛ ասկէ հոն”, ու պիտի փոխադրուի, եւ ոչինչ անկարելի պիտի ըլլայ ձեզի : Սակայն այս տեսակը ուրիշ բանով դուրս չ’ելլեր, բայց միայն աղօթքով ու ծոմապահութեամբ» :

(Տես նաեւ Ղուկաս Թ:37-44 եւ Մարկոս Թ:13-28)

Յիսուս այս խօսքերը իր աշակերտներուն մարդու մը լուսնոտ (epileptic – ուղեղային ֆիզիքական հիւանդութիւն՝ որ անցեալին հիւանդը դիւահար կը կոչէին եւ կը հաւատային թէ դուրսէն ոգի մը գայն գրաւած է) որդին բժշկելէ վերջ ըսաւ : Աշակերտները փորձած էին գայն բժշկել, բայց՝ ճախողած : Յիսուս կը մատնանչէ, թէ աշակերտներուն ճախողութեան պատճառը իրենց թերահաւատութեան հետեւանք էր : Թերահաւատութեան պատճառն ալ հաւատքի պակասն էր : Մանանեխի հատիկը հոնտերուն մէջ ամենապզտիկն է : Հետեւաբար Յիսուս կը յայտարարէ, թէ եթէ նոյնիսկ քիչ մը հաւատք ունենանք մեր ուզածին եւ ըրածին վրայ, մեր ընտրած բոլոր ձեռնարկները յաջողութեամբ կը պսակուին : Բայց շատ անգամ մարդիկ կը վարանին իրենց կարողութեան վրայ, ինչպէս նաեւ Աստուծոյ օգնութեան վրայ : Նոյնիսկ ամենափոքր վարանումը նշան է անհաւատութեան, հետեւաբար ձեռնարկն ալ կը ճախողի : Յիսուսի տուած օրինակը բոլորիս համար անկարելի կը թուի : Ինչպէ՞ս

կարելի է լեռ մը փոխադրել: Յիսուսի ըսած ձեռով լեռը փոխադրել անկարելի է բոլոր անոնց համար, որոնք Ս. Հոգիի զօրութիւնը կառավարող օրէնքները չեն գիտեր: Պէտք չէ մոռնանք, թէ նիւթը՝ լեռը զօրութենէ կազմուած է: Մարդ, նոյնիսկ իր ներկայ ցած գիտակցութեան մակարդակով, եթէ հաւատայ, թէ կարող է լեռը փոխադրել, այդ ուղղութեամբ կ'աշխատի: Կ'առնէ բահը եւ բրիչը եւ աման աման կամաց-կամաց լեռը կը փոխադրէ: Ան որ ինք իր վրայ հաւատք ունի, թէ կարող է ընել, կ'աշխատի իր ամբողջ կեանքի ընթացքին եւ կը յաջողի: Շատ հաւանական է, որ բոլոր գիտողներ զինք խենթ համարեն:

Երբ Յիսուս կ'ըսէ. «Բայց այս ազգ ո՛չ իւրք ելանէ, եթէ ոչ աղօթիւք եւ պահովք», կ'ուզէ յայտնել, թէ նման բժշկութիւն մը ընելու համար անձը պարտ է պահեցողութեամբ աղօթել: Յիսուս իր գործած բոլոր բժշկութիւնները կը կատարէր հիւանդին իրմէ բարձր որակով զօրութիւն փոխանցելով: Հիւանդութեան պատճառը Ս. Հոգիի՝ կենսատու զօրութեան ցած հոսքին հետեւանքն է: Յիսուսը ալ մարդուն Ս. Հոգիի դէմ գործած մեղքին հետեւանքն է: Գործուած մեղքերը կը փակեն մեր մարմնին զօրութեան կեդրոնները՝ խակրաները, եւ չեն արտօներ զօրութեան մուտքը: Երբ Յիսուս կը տեսնէր, որ անձը իր հիւանդութենէն դասը սորված էր եւ նոյն մեղքերը պիտի չգործէր, իր ողորմածութեամբ իրմէ զօրութիւն կը փոխանցէր հիւանդին եւ այդ զօրութեամբ ալ հիւանդը կը բուժուէր: Անոնց ցած յաճախականութեամբ զօրութիւնն ալ ինք անոնցմէ իրեն կը փոխանցէր: Ահա՛, աս է Յիսուսի մեր մեղքերուն համար չարչարուելուն իմաստը: Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են: Այդ մեղքերը հետեւանքն են եւ ենթակայ զօրութեան օրէնքներուն: Եթէ ոչ մեղաւորը, ողորմած ուրիշ անձ մը պարտ է այդ պարտքերը

«վճարել»: Որպէսզի անձ մը կարողանայ Յիսուսի նման զօրութեամբ բուժել, նախ ինք պէտք է իր մէջ ամբարած ըլլայ բարձր որակով զօրութիւն: Որովհետեւ Յիսուսի աշակերտները պահեցողութեամբ աղօթք չէին ընէր, ինչպէս Յիսուս ըրած էր անապատին մէջ, անոնք այդ զօրութիւնը չունէին, հետեւաբար չկարողացան լուսնոտ տղան բուժել: Աւետարանին մէջ շատ անգամ մատնանշուած է Յիսուսի յաճախ մեկուսանալը եւ աղօթելը: Այս պահեցողութեամբ աղօթելը խոկումն է: Խոկումի միջոցին անհատը սուրբ սիրտ կը կերտէ, այսինքն միտք մը առանց խորհուրդներու եւ առանց զգացումներու, այն ատեն է որ ան կը կարողանայ իր էութեան՝ Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ մտնել եւ Անկէ Ս. Հոգիի զօրութիւնը ստանալ: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ դուռը»: Ամէն անհատի ներքին Քրիստոսն է, որ կը բանայ անոր զօրութեան կեդրոնները, որպէսզի Ս. Հոգիի զօրութիւնը առատօրէն հոսի անձէն ներս: Ըստ Աւետարանին Ս. Հոգիի զօրութիւնը՝ բարիքները՝ շնորհները առատօրէն կը հոսին բոլորին վրայ, թէ՛ բարիներուն եւ թէ՛ չարերուն: Բայց մեզմէ կախեալ է, թէ ինչ չափով կ'օգտուինք անկէ:

«Եւ իբրեւ եմոսոս նա՛ ի քոսն, աշակերտէն ասան-
չինն Հարցին ցնա. Մե՛ն՝ ընդէ՞ր ո՛չ կարացա՛ն Հա-
նել ցնա: Եւ ասել ցնոսա. Եյդ ազգ՝ ո՛չ ի-ի՛ն էլանէ,
եթէ ոչ պա՛հօ՛ն է աղօթի-ն»: (Մարկոս Թ: 27-28)
«Երբ ինք տուն մտաւ, իր աշակերտները առանձին
հարցուցին իրեն. «Մե՛նք ինչո՞ւ չկրցանք հանել զայն»:
Ըսաւ անոնց. «Այդ տեսակը կարելի չէ ուրիշ բանով
հանել, բայց միայն աղօթքով ու ծոմապահութեամբ»:

Յիսուս յաճախ կը բուժէր հիւանդներ եւ դիւա-
հարներ: Բոլոր Փիզիքական հիւանդութիւնները հետե-
ւանքն են կենսատու զօրութեան մարմնին զանազան
մասերուն մէջ անհաւասար թափանցման: Այս անհաւա-

սարութեան պատճառն ալ մարդուն իր խորհուրդ, խօսք ու արարքներն են: Դիւահարութեան հարցն ալ մարդուն մտքին տկարութեան հետեւանքն է, որ այսօր մտային հիւանդութիւն կը կոչուի: Եօթը մահացու մեղքերը, որոնք նշուած են մեր եկեղեցւոյ «խոստովանանք»-ին մէջ, կը կասեցնեն Ս. Հոգիի կենսատու զօրութեան հոսքը անձին զօրութեան մարմնին զանազան խակրաներէն՝ զօրութեան կեդրոններէն ներս: Մարդ եօթը հիմնական խակրաներ ունի եւ եօթը մահացու մեղքերուն ամէն մէկը կը համապատասխանէ այդ եօթը խակրաներէն մէկուն եւ կ'արգիլէ զօրութեան հոսքը անկէ ներս: Աս կ'ըլլայ խակրան գոցելով: Ներքին Քրիստոսն է, որ այդ խակրաները կը բանայ: Ճիշդ ասոր համար ալ Քրիստոս ըսած է. «Ես եմ դուռը»: Երբ Յիսուս կը բուժէր Փիզիքական կամ մտային հիւանդութիւններ, Ան իրմէ անոնց կը փոխանցէր յաւելեալ բարձր որակով զօրութիւն: Նման բուժում մը ընելու համար անձը ինք պէտք է բարձր որակով զօրութիւն ամբարած ըլլայ: Ս. Հոգիի զօրութիւն ամբարեւն ալ կ'ըլլայ միայն աղօթքով եւ ծոմապահովութեամբ: Աղօթքն ալ խոկումն է: Աւետարանին մէջ յաճախ կը կարդանք, թէ Յիսուս լեռ ելաւ աղօթելու եւայլն: Աշակերտները ոչ ծոմ կը պահէին եւ ոչ ալ կը խոկային: Հետեւաբար անոնք Յիսուսի նման բարձր որակով զօրութիւն չունէին եւ չկարողացան դիւահարը բուժել:

Յաջորդ մէջբերումը կը յայտնէ զօրութեան մասին վերեւ գրուածները:

«Եւ նա ասէ. Ս' արգելուի՜ գնա. գն ո՛չ ո՛վ է որ ասնէ գորո-թի-նա յանո-ն իմ, եւ կարեցէ Բայճոյել գին: Զի որ ո՛չն է ընդ մեզ Բակառակ, 'ի մէ՛ր կոյս է. Եւ որ ո՛վ արբոցէ Յեզ Զոր Բաթակա- կա- յանո-նա յայս, Թէ դո-ւ՛ իրխարոսի՛ էի,

ամեն ասե՛մ չե՛զ՝ մի՛ կորոսացե՛ պլարձա իր» :

(Մարկոս Թ: 38-40)

«Մի՛ արգիլե՛ք գայն, որովհետեւ չկայ մէկը՝ որ իմ անունովս հրաշք գործէ, ու կարենայ շուտով գլխ անիծել. ան՝ որ մեզի հակառակ չէ, մեր կողմէն է: Ա՛ն որ ձեզի գաւաթ մը ջուր խմցնէ իմ անունովս, քանի որ դուք Քրիստոսի կը պատկանիք, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Անիկա իր վարձատրութիւնը պիտի չկորսնցնէ»:

Երբ աշակերտները դիտողութիւն ըրին, թէ իրենց հետ չըջող անձ մը կը բուժէր եւ անոր արգիլած էին բուժել: Քրիստոս վերելի պատասխանը կու տայ: Ան, որ կը բուժէ զօրութեամբ է, որ կը բուժէ: Իսկ ան այդ զօրութիւնը իր ներքին Քրիստոսի միջոցաւ ստացած է, հետեւաբար ինչպէս կարելի է, որ այդ անձը Յիսուս Քրիստոսի հակառակ ըլլայ: Որովհետեւ ան Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը Քրիստոսէն ստացած է, Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «առնէ զօրութիւնս յանուն իմ»: Իսկ ան, որ ուրիշի մը կ'օգնէ, ոչ իր անձնական շահուն համար, նոյն չափով ալ ան կը վարձատրուի:



Ո՛վ Է ՄԵԾԸ

«Յայնժամ առաջ մատենան աշակերտին առ Յիսուս՝ եւ ասէն. Ո՛վ իցէ ՚ի մէնջ մեծ յարգայտութեան երկնից: Եւ խոշեաց առ ինչն Յիսուս մանակ մի, կացո՛յց զնա ՚ի մէջ նոցա, եւ ասէ. Ամէն ասե՛մ յեւ, եթէ ոչ դարձջի՛շ, եւ լինի՞ջի՛ իբրեւ զմանկորի, ո՛չ մտանիցէ՛լ յարգայտութեան երկնից: Երբ՝ որ խոնարհեցո՛ցանէ զանձն իբրեւ զմանուկս զայս, նա՛ է մեծ յարգայտութեան երկնից: Եւ որ ո՛չ ընկալցի մանուկ մի՝ այսպիսի յանուն իմ. զի՛նք ընդոռնի»: (Մատթէոս ԺԷ:1-5)

«Նոյն ժամուն աշակերտները եկան Յիսուսի քով ու ըսին. «Ո՛վ է մեծագոյնը երկիրքի թագաւորութեան մէջ»: Յիսուս ալ կանչեց իրեն մանուկ մը, կայնեցուց զայն անոնց մէջսեղ, եւ ըսաւ. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Եթէ դարձի չզաք ու մանուկներու պէս չըլլաք՝ բնա՛ւ պիտի չմտնէք երկիրքի թագաւորութիւնը: Ուրեմն ո՛վ որ կը խոնարհեցնէ ինքզինք՝ այս փոքր մանուկին պէս՝ անիկա՛ է մեծագոյնը երկիրքի թագաւորութեան մէջ. եւ ո՛վ որ կ'ընդունի այսպիսի մանուկ մը՝ իմ անունովս՝ զի՛նք կ'ընդունի»:

(Տես նաեւ Մատթէոս ԺԹ:13-14, Ղուկաս Թ:46-48 եւ Մարկոս Թ:32-36)

«Յիսուս կոշեաց զնոսա առ ինչն, եւ ասէ՛ Գրիգէ՛լ՝ զի իշխանի՛ աշխարհի տիրեն նոցա, եւ մեծամեծ շին իշխեն նոցա: Ո՛չ այնպէս իցէ եւ ՚ի յերո՛ւմ միջի. Այլ որ կամիցի ՚ի յէնջ մեծ լինել՝ եղիցի յեր ոչաշարունակ: Եւ որ կամիցի ՚ի յէնջ առաջին լինել՝ եղիցի յեր շատա՛կ: Որպէս որդի մարդոյ ո՛չ էկն ոչաշարուն առնուլ, այլ ոչաշարէ՛լ. եւ որալ զանձն իւր փրկանա փոխանակ Բաւմայ»:
(Մատթէոս Ի:25-28)

«Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք եւ ըսաւ. «Գիտե՞ք թէ Աեթանոսներուն իշխանները կը տիրապետեն անոնց վրայ, ու մեծամեծները կ'իշխեն անոնց վրայ: Բայց այդպիսի թող չըլլայ ձեր մէջ. հապա ձեզմէ ո՛վ որ ուզէ մեծ ըլլալ՝ անիկա ձեր սպասարկուն թող ըլլայ, ու ձեզմէ ո՛վ որ ուզէ գլխաւոր ըլլալ՝ անիկա ձեր սարուկը թող ըլլայ ինչպէս մարդու Որդին եկաւ ո՛չ թէ սպասարկութիւն ընդունելու, հապա՝ սպասարկելու եւ իր անձը փրկանք տալու շատերու համար»:

(Տես նաեւ Մարկոս Ժ:35-45 եւ Ղուկաս ԻԲ:24-30)

Աւետարանի վերեւի երկու մէջբերումները հեզու-
թեան, խոնարհութեան, հնազանդութեան եւ անմեղու-
թեան նկատմամբ Յիսուսի սորվեցուցած դասը կը ներ-
կայացնեն: Եւ ասա՛, այս առաքինութիւններն են որ
անհատը «երկիրքի թագաւորութեան» արժանի կ'ընեն:
Առաջին մէջբերումին մէջ Յիսուս մանուկի մը անմե-
ղութիւնը եւ խոնարհութիւնը կ'օգտագործէ: Մանուկ-
ները անմեղ են մինչեւ եօթ տարեկան, որովհետեւ ա-
նոնց ուղեղը տակաւին լրիւ չէ կազմուած, հետեւաբար
անոնց միտքն ալ անկատար ըլլալով անոնք տրամաբա-
նելու կարողութիւնը չունին: Անոնք նաեւ լրիւ հնա-
զանդ են իրենց ծնողքին առանց ըմբոստութեան: Հակա-
ռակ որ մենք լրիւ կազմուած միտք մը եւ իմացակա-
նութիւն մը ունինք եւ կարողութիւնը տրամաբաներու
եւ ըստ այնմ դատելու եւ զատելու, պարտաւոր ենք մա-
նուկներու նման անմեղ ըլլալ եւ մեր երկնաւոր Հօր՝
ծնողքին, հնազանդ եւ նաեւ խոնարհ ըլլալ: Երբ կ'ըսենք
անմեղ ըլլալ, կը նշանակէ եօթը մահացու մեղքերէ
ձերբազատուած ըլլալ: Իսկ հնազանդութիւնն ալ մեր
կենցաղով՝ կեանքին բոլոր փուլերուն մէջ, Յիսուս
Քրիստոսի սորվեցուցած կատարելութեան ուղիէն ըն-
թանալ կը նշանակէ: Խոնարհութիւնն ալ «Ես»-էն եւ
եսասիրութենէ ձերբազատուած ըլլալն է: Հետեւաբար
մարդասէր ըլլալ, ինչպէս նաեւ՝ կարեկից: Որեւէ հպար-
տութիւն, նոյնիսկ կատարելութեան ուղիէն ընթացած

ըլլալու հպարտութիւնը, նշան մըն է, որ անհատը տակաւին իր «Շս»-ին կապուած է, որովհետեւ ամէն տեսակի հպարտութիւն «Շս»-էն կու գայ:

Երկրորդ մէջբերումը կը հաստատէ առաջինին մէջ գրուածները: Երբ մարդ ճշմարիտ կատարելութեան ուղին կը գատէ եւ ոչ՝ «բերնի ծամոց»՝ կարծեցեալ կատարելութեան ուղին, ինք յաւելեալ զօրութեան կ'արժանանայ եւ կարողութիւններու տէր կ'ըլլայ, որոնք մենք գերմարդկային կը համարենք: Այս հայեացքը սխալ է: Ճշմարտութիւնը այն է, թէ մենք կապուած աշխարհի եւ աշխարհիկ ցանկութիւններուն, չենք ձգտիր եւ չենք հետապնդեր կատարելութեան ուղին, չենք մտներ նեղ դուռէն: Հետեւաբար նաեւ վերոյիշեալ այդ կարողութիւններուն չենք կարողանար տէր ըլլալ: Յիսուս յաջողեցաւ նման կարողութիւններու տէր ըլլալ: Բայց մենք կ'ըսենք, թէ ան Աստուծոյ Որդի էր եւ մենք չենք: Այս հայեացքն ալ սխալ է եւ կը հակասէ Յիսուսի սորվեցուցածներուն: Յիսուս ինք ըսած է, թէ մենք կարող ենք իր ըրածներէն աւելի մեծ գործեր ընել: Յիսուս «հեթանոսներուն իշխանները», իբրեւ օրինակ կու տայ որոնք իրենց տրուած «ուժ»-ը ժողովուրդին վրայ իշխելու համար կ'օգտագործեն: Յիսուս կը զգուշացնէ, թէ երբ կարողութիւններու տէր ըլլանք, հեթանոսներուն իշխաններուն նման չըլլանք ու զանոնք եսասիրութեան համար չօգտագործենք: Նոյնիսկ, Յիսուս, անապատին մէջ, իր ունեցած կարողութիւններով բոլոր աշխարհին տիրանալու փորձուեցաւ: Բայց Յիսուս իր «Շս»-էն եկած բոլոր ցանկութիւնները անտեսեց եւ կատարելութեան ուղին գատեց եւ մարդասիրութեան, ողորմածութեան եւ ինքնագոհողութեան կենցաղով մը ապրեցաւ: Յիսուս մեզի ալ մեր կեանքի ընթացքին նոյնը ընել՝ ծառայութեան եւ մարդասիրութեան կենցաղ կերտել կը թելադրէ :

ԳԱՅԹԱԿՈՒԹԵԱՆ ՄԵՊԸ

«Եւ որ ոչ Գայթաճոյեցոսցէ՛ զմի՛ ՚ի փոխրկանցս յայտցանէ յի՛ս Հաւարացելոց, լա՛ւ է նմա՛՛ ելիէ կաշիցի երկան՝ ի շոյ ընդ տարանոց նորա՛՛ եւ ընկողմեցի՛ ՚ի խորս Զոզոս: Վա՛յ աշխարհի Գայթաճոսթեանց Հա՛րկ է Գա՛լ Գայթաճոսթեանց Բայց վա՛յ մարդոցն այնմիկ յոյր յեռն Գայցէ Գայթաճոսթիան: Ելիէ յե՛ռն ի՞նչ կամ որն Գայթաճոյեցոսցանէ զի՛ւզ, Հա՛ր զնա՛՛ եւ ընկեա՛՛ ՚ի ի՛նչ. լա՛ւ իցէ ի՛ւզ՝ միայնեանի՛ կամ կառ մտանել՛ ՚ի կեանս, իան իէ երկոս յեռոս եւ երկոս որս ունիցիս, եւ անկանել ՚ի Հորն յաւիտենից: Եւ ելիէ ա՛կն ի՞նչ Գայթաճոյեցոսցանէ զի՛ւզ, խլեա՛՛ զնա եւ ընկեա՛՛ ՚ի ի՛նչ. լա՛ւ իցէ ի՛ւզ միականի՛ մտանել՛ ՚ի կեանս, իան երկոս աշս ունել՛՛ եւ անկանելի՛ ՚ի Գեհեն Հրոյն: (Մարթէոս ԺԲ:6-9)

«Ո՛վ որ գայթակղեցնէ մէկը այս պգտիկներէն՝ որոնք ինծի կը Հաւատան, աւելի օգտակար պիտի ըլլար անոր՝ որ իշու ջաղացքի քար մը կախուէր իր վիզէն, ու ծովուն անդունդը ընկղմէր: Վա՛յ աշխարհի գայթակղութիւններու պատճառով. որովհետեւ Հարկ է որ գայթակղութիւնները գան, բայց վա՛յ այն մարդուն՝ որուն միջոցով գայթակղութիւնը կու գայ: Ուրեմն եթէ ձեռքդ կամ ոտքդ կը գայթակղեցնէ քեզ, կտրի՛՛ գայն ու նետի՛՛ քեզմէ. աւելի լաւ է քեզի՛՛ կա՛ղ կամ պակասաւոր մտնել կեանքը, քան երկու ձեռք կամ երկու ոտք ունենալ եւ նետուիլ յաւիտեանական կրակին մէջ: Եթէ աչքդ կը գայթակղեցնէ քեզ, Հանի՛՛ գայն ու նետի՛՛ քեզմէ. աւելի լաւ է քեզի՛՛ մէ՛կ աչքով մտնել կեանքը, քան երկու աչք ունենալ եւ նետուիլ գեհենի կրակին մէջ»:

(Տես նաեւ Մարկոս Թ:41-47)

Յիսուսի այս խօսքերը ազդարարութիւն մըն է բոլոր անոնց, որոնք սխալ եւ մրցակցական հոգեբանու-

Թիւն մը կը քարոզեն կամ կը սորվեցնեն: Յիսուսի այս խօսքերը կարելի է մի քանի հարթակի վրայ վերլուծել:

Առաջին հերթին ասիկա բոլոր ծնողներուն տրուած ազդարարութիւն մըն է: Ծնողքները մանուկին առաջին ուսուցիչներն են: Մանուկ մը ամենեւին սուտ չի խօսիր: Բայց միշտ հանդիպած ենք մանուկներու, որոնք սուտ խօսած են: Պատճառը այն է որ մէկը այդ մանուկին սուտ խօսիլ սորվեցուցած է ուղղակի կամ անուղղակի կերպով, այսինքն մանուկին օրինակ ըլլալով: Հարկաւ հարցը միայն սուտ խօսիլը չէ, այլ գողնալ, վնաս տալ եւայլն: Նման արարքներ մանուկին բնոյթը կը վատթարացնեն եւ զայն իր կեանքի տեւողութեան դայթակղութեան կ'ենթարկեն: Այս հիման վրայ զայն դայթակղեցնողը պատասխանատու է եւ մեղաւոր:

Երկրորդ ազդարարութիւնը կ'երթայ ընդհանուր ընկերութեան եւ անոնց կառավարիչներուն: Երբ դըպրոցներու մէջ ուսանողներուն մրցակցութիւն եւ անհատականութիւն կը յառաջացնեն, կը փոխեն պատանիներուն բնոյթը եւ զանոնք աւելի եսասէր կ'ընեն: Նամանակահատուկ մէջ ներկայ դաստիարակութեան դրութիւնը նման հասկացողութեան մը վրայ հիմնուած է: Ասոր մաս կը կազմեն նաեւ թէ՛ կառավարական եւ թէ՛ մասնաւոր (private) դպրոցները: Նման դաստիարակութիւն մը անհատը եսասիրութեան կը վարժեցնէ: Եթէ ընտանիքը եւ եկեղեցին պատշաճ հակասութիւն ցոյց չեն տար անհատին բնոյթն ալ կը վատանայ:

Յիսուսի ազդարարութիւնը կ'երթայ նաեւ հոգեւոր դասուն: Չափահաս մարդիկ հոգեւոր ճանապարհին մէջ մանուկներ են: Անոնք, որոնք Յիսուսի սորվեցուցածները կը խեղադիւրեն եւ Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղին փնտռող խեղճ ժողովուրդին «ինծի հաւատացէք» ըսելով զանոնք դէպի անդունդ կ'առաջնորդեն, պատասխանատու պիտի ըլլան: Մեր

օրերուն քարոզուած քրիստոնէութիւնը, նամանաւանդ աւետարանիչներու (preachers) կողմէ, Յիսուսի սորվեցուցածներէն շատ հեռու է: Անոնց մէկ մասը իրենց անձնական նիւթական շահերուն համար ժողովուրդը կը խաբեն, իսկ մէկ մասն ալ կը կարծեն, թէ իրենց քարոզած սխալ վարդապետութիւնը ճիշդ է, որովհետեւ իրենք ալ ուրիշներէ սորված են եւ անձնապէս Աւետարանին մէջ գրուածներուն խորքը չեն թափանցած: Անոնց հետեւող ժողովուրդն ալ կարծելով թէ փրկուած են կը շարունակեն իրենց «Ես»-ին երկրպագել: Ըստ Յիսուսի ըսածին շատ աւելի լաւ է բնաւ չսորվեցնել եւ բնաւ չքարոզել, քան թէ սխալ եւ գայթակղեցուցիչ քարոզչութիւններ ընել:

Յիսուսի ազդարարութեան նշաւակ չորրորդ խումբըն ալ կատարելութեան ուղին զատողներն են: Մարդուն «Ես»-ը յաճախ զանազան ցանկութիւններով անհատը իր ընտրած ուղիէն կը խոտորեցնէ: Այս պատճառով ալ Յիսուս անհատին կը յանձնարարէ ծայրահեղ լուծում՝ «կաղանալ» կամ «կուրանալ», որպէսզի գայթակղութիւնը չըլլայ: Ճշմարտութիւնը այն է, թէ այս Ֆրզիքական հատումները պէտք չէ բառացի նկատի առնուին: Անոնք կը մատնանշեն աչալրջութիւն եւ ուշիմութիւն որպէսզի անձը չենթարկուի գայթակղութեան:

«Ասայ եւ աս աշակերտսն իւր. Ո՛չ է մարթ շահալ
Գայթակղութեան. Բայց վայ անմահի է՝ յոյր յետն
Գայցել: Լա՛ւ էր նմա՛ թէ վէ՛մ երկանախա՛ր կախեր
սարսանոցէ նորա, եւ անկաներ ՚ի Թ՛ով, ինն թէ
Գայթակղեցո՛ցանիցէ սմի ո՛վ ՚ի փոխկանցս յայսցան
նէ: ԶԳո՛յ չ կայելէ անչանց: Եթէ մեղիցէ եղբա՛յր
ձո, սասորեա՛ նմա: Եւ եթէ ասաշխարիցէ, Թո՛ղ նմա:
Եւ եթէ եւթն անգամ մեղիցէ ինչ, եւ եւթն անգամ

Գարշի՛ն ի՛նչ է՛ւ ե՛ւ ասիցէ՛՛ ապաշխարեմ, Ռոդցէ՛ս նմա՛» :

(Ղուկաս ԺԷ:1-4)

«Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Անկարելի է որ գայթակղութիւններ չգան. բայց վա՛յ անոր, որուն միջոցով կու գան: Աւելի օգտակար պիտի ըլլար անոր, որ իշու ջաղացքի քար մը կախուէր իր վիզէն ու ծովը ձգուէր, քան թէ գայթակղեցնէր այս պատիկներէն մէկը: Ուշադի՛ր եղէք դուք ձեզի: Եթէ եղբայրդ մեղանչէ քեզի դէմ՝ յանդիմանէ՛՛ գայն. ու եթէ ապաշխարէ՛՛ ներէ՛՛ անոր: Եթէ օրը եօթն անգամ մեղանչէ քեզի դէմ, եւ օրը եօթն անգամ վերադառնայ քեզի ու ըսէ՛՛ կ'ապաշխարեմ, ներէ՛՛ անոր»:

(Տես նաեւ Մատթէոս ԺԸ: 21-22 եւ Մարկոս Թ: 41)

Գայթակղութիւնները մարդիկ մոլորեցնող եւ անոնց սխալ կամ սուտ հաւատալիքներ տուող քարոզչութիւնները ու վարդապետութիւններն են: Այսօր կան բազմատեսակ աղանդներ եւ յարանուանութիւններ, որոնց հաւատալիքները, բոլորն ալ մեծամասնութեամբ իրարմէ կը տարբերին: Անոնց բոլորն ալ ճիշդ չեն կրնար ըլլալ: Հետեւաբար անոնց ջախջախիչ մեծամասնութիւնը գայթակղեցուցիչ են, որովհետեւ անոնք անձը կատարելութեան ուղիէն կը հեռացնեն: Այդ քարոզչութիւնները պարզ, անմեղ եւ անուս միտքերը, հաւատալիքներով գրաւելով զանոնք կը շեղեն կատարելութեան ուղիէն: Յիսուս գուշակեց, թէ այս գայթակղութիւնները տեղի պիտի ունենային: Յիսուս շատ լաւ գիտէր անձնական շահու համար տկարները շահագործելու մարդկային մտայնութիւնը՝ բնոյթը: Գայթակղութեան պատճառ եղող անձերուն համար Յիսուս «վայ» կու տայ: Ի՞նչ է այս «վայ»-ին իմաստը: Այն անձը, որ գայթակղութեան պատճառ կ'ըլլայ եւ արգելք կը հանդիսանայ, որ իր գայթակղեցուցած անձը յաւիտենական կեանքի արժանանայ, այդ իսկ պատճառով ինք ալ ամենեւին պիտի չարժանանայ յաւիտենական կեանքի: Մարդ ինչ որ ցանկ ան ալ կը հնձէ: Արեւելքի մէջ ասոր

«Քարմա»-ի օրէնք կ'ըսուի: Իսկ եթէ իր այս աշխարհիկ կեանքի ընթացքին ինք ամենեւին յաւիտենական կեանքի արժանի պիտի չըլլայ, իր կեանքն ալ վատնուած պիտի ըլլայ: Որովհետեւ աշխարհիկ կեանքին նպատակը յաւիտենական կեանքի արժանանալն է:


Յիսուս կ'ըսէ. «Չգո՛յշ կացէք անձանց»: Հետեւաբար պարտ ենք զգոյշ ըլլալ եւ չտարուիլ ասոր ու անոր քարոզչութիւններէն: Պէտք չէ մոռնալ, թէ ըստ Յիսուսի ըսածին, մեր միակ վարդապետը՝ ուսուցիչը մեր ներքին Քրիստոսն է: Մեզի կը մնայ միայն անկեղծօրէն փափաքիլ գիտնալ ու սորվիլ: Քրիստոս կը սորվեցնէ եւ ճամբան ցոյց կու տայ անոնց, որոնք յաւիտենական կեանքին արժանանալու միջոցը չգիտնալնուն համար կը սգան եւ նման հաց փնտռող սովահարի մը, յաւիտենական կեանքը կը փնտռեն: Միթէ Յիսուս, իր լերան քարոզին մէջ չէ՞ ըսած:

«Երանի սգաւորաց, զի նո՛վա մխիթարեացին: ...

Երանի վաղցելեալ եւ ծարաւի իցեն արդարո՞ւթեան, զի նո՛վա յագեացին»: (Մատթէոս Ե:4,6)

«Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք պիտի մխիթարուին: ... Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան»:

Այս վերեւի մէջբերումին վերջին մասին մէջ Յիսուս ներողամտութիւն եւ անընդհատ ներել կը սորվեցնէ: Այսինքն ոխակալ չըլլալ: Յիսուս ինք կը սորվեցնէ կատարելութեան ուղին՝ վերեւ ներողամտութիւնը, իսկ յաջորդ մէջբերումին մէջ ալ հաւատք առ Աստուած: Տես նաեւ Աւետարանէն յաջորդ մէջբերումը:



«ԵՊՐՈՒ» ՄԵՊԸ

«Եթէ մեղեցեալ չէ՞ս եղբայր չե՞ս, ե՛րբ յանդերմանեալս՝ սուսնս՝ յորժամ դո՛ւ ես նա՛ մեկայն իցե՛վ։ Եթէ լուսեցեալ չէ՞ս, շահեցա՛ր չէ՞ս եղբայր չե՞ս, ո՛չ լուսեցեալ չէ՞ս, ա՛ն ընդ չէ՞ս մի ես՝ կամ երկուս։ Կի՛նք քերական երկուց ես յերեց վկայեց Հասարակացի՛ ամենայն թան։ Իսկ ես թէ նոցա՛ ո՛չ լուսեցեալ, ասասջե՛ր յեկեղեցո՛ջ։ Ապա թէ ես եկեղեցո՛յն ո՛չ լուսեցեալ, եղեցի չէ՞ս իբրեւս զԵրեմիայն՝ սուսնս՝ սուսնս՝։ Ամէն ասե՛մ կի՛նք զարեւոյտե՛լ յերկրի՛ն՝ եղեցեալս՝ զԵրեմիայն, ես զարեւոյտե՛լ յերկրի՛ն՝ եղեցեալս՝ զԵրեմիայն։ Իարձեալ ասե՛մ եթէ երկուս՝ ինչե՛ն զմեկսնս՝ յերկրի վասն ամենայն իրաց, կի՛նք ես խնդրեացեն՝ եղեցի նոցա՛նք Հօրե իմմէ որ յերկրիսն է։ Զի ո՛ր իցեն երկուս՝ կամ երե՛վ ժողովեալ յանուսն իմ, ա՛նդ եմ ես ի մէջ նոցա»։

(Մատթեոս ԺԳ:15-20)

«Եթէ եղբայրդ մեղանչէ քեզի դէմ, գնա՛ եւ ըսէ՛ իրեն իր յանցանքը՝ երբ դուն ու ան միմեկ էք։ Եթէ մտիկ ընէ քեզի՛ շահեցա՛ր եղբայրդ։ Բայց եթէ մտիկ չընէ քեզի, ա՛ն քեզի հետ մէկ կամ երկու հոգի եւս, որպէսզի ամէն խօսք Հաստատուի երկու կամ երեք վկաներու բերանով։ Եթէ անոնց ալ մտիկ չընէ, ըսէ՛ եկեղեցիին. իսկ եթէ եկեղեցիին ալ մտիկ չընէ, թող ըլլայ քեզի հետմտի ու մաքսաւորի պէս։ Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ի՛նչ որ կապէք երկրի վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկինքի մէջ, եւ ի՛նչ որ արձակէք երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ։ Դարձեալ կը յայտարարեմ ձեզի. Եթէ ձեզմէ երկու հոգի Համաձայնին երկրի վրայ՝ որեւէ բան խնդրելու, պիտի ըլլայ անոնց իմ Հօրմէս՝ որ երկինքն է։ Որովհետեւ ուր որ երկու կամ երեք հոգի Հաւաքուած ըլլան իմ անունովս, ես հոն եմ՝ անոնց մէջ»։

Յիսուսի այս խօսքերէն նախ պէտք է հասկնանք, թէ «եղբայր»-ը որեւէ ուրիշ անձ մըն է եւ ոչ ան, որուն հետ նոյն հայրն ու մայրը ունինք: Այլուր Յիսուս ըսած է, թէ եօթանասուն բազմապատկեալ եօթ անգամ պարտ ենք ներել մեր եղբայրը: Յիսուսի այս յորդորը անոնց համար է, որ չեն զղջար իրենց գործած սխալին համար:

Յիսուս նախատինքի, անարգանքի, վնասի ենթարկուած անձին կը յանձնարարէ նախ յանցանք գործողին հետ առանձինն խօսիլ: Եթէ յանցաւորը իր յանցանքը չընդունի, երկու վկաներու ներկայութեան անգամ մը եւս խօսիլ: Եթէ այս պարագային ալ կացութեան մէջ փոփոխութիւն չըլլայ դիմել եկեղեցիին՝ հաւաքակա-նութեան: Եթէ հաւաքականութիւնն ալ ստուգէ մեղան-չումը եւ մեղանչողը տակաւին չընդունի իր յանցանքը, Յիսուս կը յանձնարարէ այդ անձին հետ յարաբերու-թիւնը խզել: Կը թուի թէ Յիսուսի այս խօսքին վրայ է, որ մեր այսօրուայ դատարանային դրութիւնը հիմնուած ըլլայ: Դատարանի մէջ ալ կարելի է հարց մը փաստել երկու վկաներով: Անոնք պէտք չէ սուտ վկաներ ըլլան:

Յիսուսի ըսած երկրորդ յորդորն ալ համագոր-ծակցութիւնն է: «Տիեզերական Օրէնքները» գիրքիս մէջ (էջ 109) «Ընկերակցութեան Օրէնքը» խորագրեալ բաժնին մէջ նշած էի, թէ երբ երկու կամ երեք հոգի նոյն նպատակին համար գործեն, իրենց հաւաքական ուժը՝ կարողութիւնը երեք-չորս անգամով կը գերա-զանցէ անձերուն անհատական կարողութիւններուն գումարը: Յիսուս ալ այս տիեզերական օրէնքն է, որ կը մատնանշէր երբ ըսաւ. «Եթէ երկու՝ ՚ի ձէնջ միաբանիցէ՛ն յերկրի վասն ամենայն իրաց, զինչ եւ ինդրեսցեն՝ եղիցի՛ նոցա ՚ի Հօրէ իմմէ որ յերկինս է»: Քրիստոս ամէն ան-հատի էութիւնն է, երբ երկու կամ երեք հոգի հաւաք-ուին ու յիշեն Քրիստոս (իմ անունովս) կ'անդրադառ-նան Քրիստոսի իրենց մէջ ներկայութեան:

ԱՄՈՒՍԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄՈՒՍԱԼՈՒԹԱՆ ՄԱԽԻՆ

«Եւ մատուցեալ առ նա փարիսէցիքն, փորձէին զնա՝
եւ ասէին, եթէ արժասն իցէ ումէ՛ յարձակել զկնի
իւր, ըստ ամենայն զնաստ: Պատասխանի՛ ետ նոցա
եւ ասէ. Չիցէ՞ ընթերցեալ յեր՛ թէ որ Հասարար-
եացն ՚ի սկզբանէ՛ արո՛ւ եւ է՛ զարար զնոսա՛ եւ աս-
սէ: Վասն այսորիկ թողցէ այր՛ զհա՛յր եւ զմա՛յր՛
եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկո՛վ-
եան ՚ի մարմին մի: Եղա ուրեմն ո՛չ էն երկուս՛ այլ
մի՛ մարմին: Երդ՛ զոր Ետրուած զոգեաց, մարդ՛
մի՛ մեկնեացէ: Եսէն ցնա. Իսկ Մովսէս ընդէ՞ր
պատուիրեաց մեզ ցա՛լ թողի՛ մեկնելոյ՛ եւ արձա-
կել: Եսէ ցնոսա. Մովսէս՛ զասն խորասրբորութեան
յերոյ Հրամայեաց յեզ արձակել զկանայս յեր. այլ
ի սկզբանէ՛ ո՛չ եղէւ այնպէս: Բայց ասէ՛ մ յեզ, զի
ամենայն որ արձակէ զկնի իւր՛ եւ ո՛չ զասն պոռն-
կութեան, եւ ասնիցէ այլ՛ շնայ, եւ որ
զարձակեալն ասնէ՛ շնայ: Եսէ՛ն ցնա աշակերտի
իւր. Եթէ ա՛յդ պէս ինչ զնա իցէ ընդ ա՛յր եւ
ընդ կնի, լաւ է՛ շամոսնանալ: Եւ նա՛ ասէ
ցնոսա. Ո՛չ ամե- նե՛վեան թաւական էն ա՛յդմ
թանի, այլ որոց ցոտա՛լ է: Չի էն ներթիւնի՛
որ յորովայնէ՛ մօր իրեանց ծնան ա՛յնպէս: Եւ
էն ներթիւնի՛ որ ՚ի մարդկանէ՛ եղէն ներթիւնի՛:
Եւ էն ներթիւնի՛ որ զանձինս իրեանց արարին
ներթիւնիս զասն արժա- յութեան երկնից: Որ
կարօղն է ցանել՛ ցացի» : (Մարթեոս ԺԹ: 3-12)

«Փարիսեցիները մօտեցան անոր եւ փորձեցին զայն՝ ըսելով. «Արտօնուած է, որ մարդ մը արձակէ իր կինը՝ որեւէ պատճառի համար»: Ան ալ պատասխանեց անոնց. «Ձէ՞ք կարդացեր թէ ան՝ որ սկիզբէն ստեղծեց, արու եւ էգ ստեղծեց զանոնք, ու ըսաւ. Այս պատճառով մարդը պիտի թողու հայրն ու մայրը, եւ պիտի յարի իր կնոջ, ու երկուքը պիտի ըլլան մէկ մարմին: Հետեւաբար ա՛լ երկու չեն, հապա՛ մէկ մարմին. ուրեմն մարդը թող չգատէ ինչ որ Աստուած իրարու միացուցած է»: Ըսին իրեն. «Հապա ինչո՞ւ Մովսէս պատուիրեց ամուսնալուծումի վկայագիր տալ եւ արձակել»: Ըսաւ անոնց. «Մովսէս ձեր սրտին կարծրութան համար արտօնեց ձեզի՝ որ արձակէք ձեր կիները. բայց սկիզբէն այնպէս չէր: Սակայն կը յայտարարեմ ձեզի. Ո՛վ որ կ'արձակէ իր կինը՝ առանց պոռնկութեան պատճառի, ու կ'ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ: Եւ ո՛վ որ արձակուածին հետ կ'ամուսնանայ՝ շնութիւն կ'ընէ»: Իր աշակերտները ըսին իրեն. «Եթէ այդ է պարագան մարդուն եւ իր կնոջ միջեւ, օգտակար չէ ամուսնանալ»: Բայց ինք ըսաւ անոնց. «Բոլորը չեն ընդունիր ասիկա՝ հապա անոնք՝ որոնք՝ որոնց սրուած է: Որովհետեւ կան ներքինիներ, որոնք այդպէս ծնան՝ իրենց մօր որովայնէն. կան ներքինիներ, որոնք մարդոցմէ՛ ներքինի եղան. ու կան ներքինիներ, որոնք իրենք զիրենք ներքինի ըրին՝ երկինքի թագաւորութեան համար: Ո՛վ որ կրնայ ընդունիլ՝ թող ընդունի»»:

(Տես նաեւ Մարկոս Ժ:1-12)

Այս մէջբերումին առաջին մասը ամուսնալուծումի մասին է եւ բացայայտ է որով յաւելեալ բացատրութեան չի կարօտիր: Բայց երկրորդ մասը, երբ աշակերտները կ'ըսեն. «Եթէ այդպէս ինչ փնաս իցէ ընդ այր եւ ընդ կին, լաւ է՝ չամուսնանա՛լ», Յիսուս կը պատասխանէ ըսելով, թէ ամէն մարդ չ'ընդունիր՝ կարող չէ ներքինի մնալ: Միայն անոնք, որոնց «տրուած է»: Ամուսնութիւնը կը կազմէ ընտանիք ինչպէս նաեւ զաւակներ, հետեւաբար շատ մը պատասխանատուութիւններ: Անոնք արգելք կը հանդիսանան, որպէսզի անձը կարողանայ իր կեանքի բուն պարտականութիւնը կատարել, որ է իրականացնել Աստուածայայտնութիւնը

իր մէջ եւ աս կ'ըլլայ երկինքի թագաւորութեան համար: Միթէ չէ՞ գրուած.

«Եթէ ո՛վ գա՛յ աս իս, եւ ո՛չ արեւայ պահայր
իւր եւ պահայր, եւ պէ՛ն եւ պորտիս, եւ
պեղբա՛յրս եւ պէորս, նա՛ եւ պա՛ննն եւս իւր,
ո՛չ կարէ իմ աշակէ՛րոյ լինել»: (Ղուկաս ԺԳ:26)
«Եթէ մէկը ինծի գայ՝ բայց չստէ իր հայրն ու
մայրը, կինը եւ գաւակները, եղբայրներն ու քոյրերը,
նաեւ իր անձը, չի կրնար իմ աշակերտս ըլլալ»:

Այս նպատակին համար ալ անոնք իրենք զիրենք
ներքինի կ'ընեն, որպէսզի յաւելեալ պատասխանատու-
ութիւններ զիրենք չհեռացնէ իրենց կեանքի բուն
նպատակէն: Ներքինի ըլլալուն առաւելութիւններէն
մին ալ ան է, որ անձը արդէն իր մարմնին մէջ ներ-
գործած կենսատու զօրութիւնը սեռային յարաբերու-
թիւններով չի վատներ: Աստուածայայտնութիւնը իրա-
կանացնելու համար մարդ պարտ է բարձր որակով Ս.
Հոգիի կենսատու զօրութեան հոսքին արժանանալ եւ
հարկաւ նաեւ զայն չվատներ:

Պատշաճ է նաեւ հակիրճ բաձատրութիւն մը տալ
Յիսուսի «Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ՝ մի՛ մեկնես-
ցէ» խօսքին մասին: Ամուսնանալու համար անհատներ
ընդհանուր առմամբ զիրար կը գտնեն ըստ իրենց զօրու-
թեան մարմնին թրթռացումի յաճախականութեան
ներդաշնակութեան: Նման յաճախականութիւններ իրար
կը քաշեն եւ իրար կը յարին: Զօրութեան մարմինը Ս.
Հոգիի կենսատու զօրութիւնն է եւ մարդուն մէջ՝ իր
հոգին եւ Քրիստոսի ներկայութիւնը: Հետեւաբար
անոնց ամուսնութիւնը՝ միացումն ալ կ'ըլլայ ըստ
Աստուծոյ կամ քին:

(Տես նաեւ էջ 61)



ԻՆՉՊԷԱ ԱՐԺԱՆԱՆԱԼ ՅԱԻՏԵԱԿԱՆ ԿԵԱՆՔԻԱ

«Եւ ահա, մաքրուցեալ ոմն առ նա՛ սաէ. Վարդապետի գր թարի՛ սընչ թարի Գործեցից՝ սի ընդոռնիցիմ սկեանան յաւրդեմականս: Եւ նա՛ սաէ ցնա. Զի՞ Ըարցանես սի սբարոյ, մի՛ է թարի. եթէ կամիս՝ ի կեանան յաւրդեմականս մտանել, պահեա՛ ստարոսիքանան: Ըսէ ցնա. Զո՞րս: Ըսէ ցնա Յիսոս. Զմի՛ սպանաներն, էւ մի՛ շնար, էւ մի՛ Գողանար, էւ մի՛ սոսոր վկայեր, պարտեա՛ սհասյր ի ս էւ սհասյր. էւ սիբեացես սընկեր ի ս իբրէս սա՛նչն ի ս: Ըսէ ցնա պարանիս. Զայտ սմեմայն պահեցի՛ ի մանկութենէ իմմէ. արդ՛ ի՞նչ ինչի՛ պակաս իցեմ: Ըսէ ցնա Յիսոս. Եթէ կամիս կարարեա՛լ լինել, էրբ ղաճատեա՛ սընչս ի ս՝ էւ րո՛ւր սղխարաց, էւ ոռնիցիս Գանչս յերկի՛նս, էւ է՛կ սկնի իմ: Իբրէս լոսս պարանիս սբանն, Գնաց րրրմեա՛լ, սի ոռնէր սրացոսածս թասոսմս: Ըսէ Յիսոս սաշակերդան. Ըմէն սսե՛մ սի դժոսարա՛ս մրցեմեծարոսնն յարժայոսթիսն երկնից: Դարձեալ սսե՛մ դիսրի՛ն է մասլոսյ մտանել ընդ ծա՛կ սաղան, իան մեծարան յարժայոսթիսն Ըսրոսծոյ մտանել: Իբրէս լոսս սաշակերդին՝ սարմացա՛ն յոյժ, էւ սսեմ. Իսկ՛ ո՞ կարիցե ստրել: Հայեցա՛ս ի նոցս Յիսոս՝ էւ սսե. Ըս՛ ի մարդկանէ՛ սյտ սնկա՛ր է, սյլ սս յԸսրոսծոյ սմեմայն ինչ սորասոր: . . . Եւ սմեմայն որ ո՛վ էթող սրոսն, կամ սեղթոսյրս, կամ սկոյրս, կամ սհասյր, կամ սկիսն,

կամ պարտիս, կամ պարտարակա վասն անո-ան իմոյ,
Հարի-բարպարիկ արցէ՛ եւ պէնանան յարիբենականս
ժարանգեացէ: Բայն՝-ով եղիցին արաշինի յեղինի,
եւ յեղինի արաշինի»: (Մարգեհոս ԺԹ: 16-26, 29-30)
«Լ՛յաղէս եղիցին յեղինի արաշինի, եւ արա-
շինի՝ յեղինի: Զի Բայն-ով եւ կոշեցեալի՛ եւ աս-
կա՛-ի եւ ընդդեմալի»: (Մարգեհոս Ի: 16)

«Մէկը մօտենալով՝ ըսաւ անոր. «Բարի՛ վարդապետ, Ի՞նչ
բարիք գործեմ՝ որ ունենամ յաւիտեանական կեանքը»: Ան
սլ ըսաւ անոր. «Ինչո՞ւ բարի կը կոչես զիս. մէկէ՛ն
գատ բարի չկայ, որ Աստուած է: Եթէ կ՛ողգես մտնել
կեանքը՝ պահէ՛ պատուիրանները»: Ըսաւ անոր. «Որո՞նք»:
Յիսուս պատասխանեց. «Սպանութիւն մի՛ ըներ, շնութիւն
մի՛ ըներ, գողութիւն մի՛ ըներ, սուտ վկայութիւն մի՛
տար, պատուէ՛ Հայրդ ու մայրդ, եւ սիրէ՛ ընկերդ քու
անձիդ պէս»: Երիտասարդը ըսաւ անոր. «Պահած եմ այդ
բոլորը՝ պատանութենէս ի վեր. տակաւին Ի՞նչ կը պակ-
սի ինձի»: Յիսուս ըսաւ անոր. «Եթէ կ՛ողգես կատարեալ
ըլլալ՝ գնա՛, ծախէ՛ ինչքդ եւ տո՛ւր աղքատներուն, ու
գանձ պիտի ունենաս երկինքը. ապա հետեւէ՛ ինձի»: Երբ
երիտասարդը լսեց այս խօսքը՝ տրամած գնաց, որովհե-
տեւ շատ ստացուածք ունէր: Յիսուս ըսաւ աշակերտ-
ներուն. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Հարուստը
դժուարութեամբ պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը:
Դարձեալ կը յայտարարեմ ձեզի. Աւելի դիւրին է որ
ո՛ւղտը անցնի ասեղին ծակէն, քան թէ Հարուստը մտնէ
Աստուծոյ թագաւորութիւնը»: Երբ աշակերտները լսեցին՝
չտիպեցանք ազնեցան եւ ըսին. «Ուրեմն ո՞վ կրնայ փրկ-
կուի»: Յիսուս նայելով անոնց՝ ըսաւ. «Ատիկա անկարե-
լի է մարդոց քով, բայց ամէն բան կարելի է Աստուծոյ
քով»: ... «Ո՞վ որ թողուցած ըլլայ տուներ, եղբայրներ,
քոյրեր, Հայր, մայր, կին, գաւակներ, կամ արտեր՝ իմ
անունիս Համար, պիտի ստանայ Հարիւրապատի՛կը եւ
ժառանգէ յաւիտեանական կեանքը: Բայց շատ առաջին-
ներ պիտի ըլլան յետին, ու յետիններ՝ առաջին»:
«Այսպէս՝ յետինները պիտի ըլլան առաջին, եւ
առաջինները՝ յետին. որովհետեւ կանչուածները շատ
են, բայց ընտրուածները՝ քիչ»:

(Տես նաև Դուկաս ԺԸ:18-30 եւ Մարկոս Ժ:17-31)

«Ամէն ասէ՛մ որ ո՛չ ընկալցի զարեայո՛ւթիւն
Լսարո՛շոյ իբրեւ զմանուկ, ո՛չ մտցէ ՚ի նա»:
(Մարկոս Ժ:15)

«Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ո՛վ որ
չընդունի Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ
մանուկի մը պէս, բնա՛ւ պիտի չմտնէ անոր մէջ»:

Աւետարանէն այս երեք մէջբերումները Աստուծոյ
թագաւորութեան արժանանալու ձեւերուն, կերպերուն
կը վերաբերին: Նախ շատ յատկանշական է Յիսուսի
ունեւոր երիտասարդին տուած պատասխանը, երբ ան
Զինք կը կոչէ «բարի վարդապետ»: Յիսուս կ'ըսէ. «Ձի՛
հարցանես զիս զբարոյ, մի՛ է բարի»: Իր այս խօսքով
Յիսուս կ'ակնարկէ միայն իր մարդկային բնոյթին եւ
կ'ըսէ, թէ բարին միայն մէկ է ան ալ Աստուած է:
Յիսուս իր քարոզչութեան ընթացքին ինքզինքին
համար միշտ «մարդու որդի» ըսած է:

Երկնային՝ յաւիտենական կեանքի արժանանալու
համար Յիսուս երիտասարդին կը յանձնարարէ պատ-
ուիրանները պահել, այսինքն կենցաղի եւ բնոյթի փո-
փոխութիւն կերտել եւ կատարելութեան ուղիէն ընթա-
նալ: Բայց կը թուի, թէ յաւիտենական կեանքի արժանա-
նալու համար այսքանը բաւարար չէ: Երբ երիտասարդը
կը յայտարարէ, թէ ինք բոլոր պատուիրանները կը
պահէ, Յիսուս կ'ըսէ. «Եթէ կամիս կատարեա՛լ լինել էրթ
վաճառեա՛ զինչս քո՝ եւ սո՛ւր աղքատաց, եւ ունիցիս
գանձս յերկի՛նս, եւ ե՛կ զինի իմ»: Ուրեմն կատարելու-
թեան ուղին չի նշանակեր միայն պատուիրանները պա-
հել այլ այդ ուղիին մաս կը կազմէ նաեւ բոլոր աշխար-
հիկ կապուածութիւններէ ձերբազատուիլը: Երիտասար-
դը հարուստ ըլլալով չկարողացաւ ձերբազատուիլ իր
հարստութենէն ու տրամեցաւ: Ան պատուիրանները
պահելով հանդերձ յաւիտենական կեանքին չարժանա-

ցաւ: Նեղ է դուռը կատարելութեան ուղիին:

Երբ երիտասարդը հոնկէ տխուր մեկնեցաւ, Յիսուս իր աշակերտներուն հետեւեալը ըսաւ. «դիւրի՛ն է մալխոյ մտանել ընդ ծա՛կ ասղան, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել»: Յիսուսի այս խօսքը մեծ իմաստ ունի: Ճիշդ է, թէ Յիսուս երիտասարդին նիւթական հարստութեան պատճառով այս խօսքը ըսաւ, բայց եթէ մարդ իր ճակտի քրտինքով այդ հարստութեան տիրացած է, այդ ամենեւին մեղք չէ: Կարեւորը այն է, թէ մարդ այդ հարստութիւնով ի՞նչ կ'ընէ: Զայն հանրութեան օգտին համար կ'օգտագործէ՞: Հարուստ ըլլալ մեղք չէ, բայց հարստութեան կապուած ըլլալ մեղք է: Գուցէ «մեղք» է ըսելը սխալ է: Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել, թէ յաւիտենական կեանքի համար «արգելք» է: Աշխարհիկ որեւէ կապուածութիւն յաւիտենական կեանքի արժանանալու արգելք մըն է: Նշուած հարստութիւնը միայն նիւթական հարստութեան համար չէ, այլ է նաեւ՝ մտային հարստութեան: Մտային հարստութիւնը խորհուրդներու եւ զգացումներու հարստութիւնն է: Ամենավեհ աղօթքին՝ խոկումին նպատակն ալ միտքը ձերբազատել է բոլոր խորհուրդներէ եւ զգացումներէ: Ասալ կարելի է «սուրբ սիրտ» կերտելով, որ բոլոր խորհուրդներէ եւ զգացումներէ սրբուած միտքն է: Սուրբ սիրտով ալ մեր մէջ Քրիստոսի յարուցեան կ'արժանանանք: Յիսուս իր արարքներով ալ Քրիստոսի մեր մէջ յայտնուելուն կապակցութեամբ մեզի դաս մը տուաւ: Օր մը, երբ իր աշակերտները լիճին վրայ կը նաւարկէին, ինք ալ նաւուն մէկ անկիւնը կը քնանար: Փոթորիկի պահուն աշակերտները օգնութեան համար Զինք արթնցուցին: Մեր մարմիններն ալ նաւ են, որոնց մէջ Քրիստոս կը քնանայ: Մենք ալ պարտ ենք մեր ներքին Քրիստոսը իր քունէն արթնցնել: Ահա՛, աս է Յիսուսի իր այդ արարքով մեզի սորվեցուցած դասը՝

Քրիստոսի անհատին մէջ յայտնութեան իրականացումը: Երբ աշակերտները Յիսուսի ըսածներուն վրայ հարց կու տան. «Իսկ ո՞ր կարիցէ ապրե՞լ»: Յիսուսի պատասխանը շատ հետաքրքրական կ'ըլլայ: Ան կ'ըսէ, թէ այդ անկարելի է մարդուն համար, բայց Աստուծոյ համար ամէն ինչ կարելի է: Ուրեմն յաւիտենական կեանքի արժանանալու համար Յիսուսի այս խօսքէն ի՞նչ պէտք է հասկնանք: Մարդ իր ջանքերով անկարող է յաւիտենական կեանքի արժանանալ, ուրեմն մարդուն համար ի՞նչպէս կարելի պիտի ըլլայ «փրկութիւն»-ը: Շատեր կ'ըսեն. «Յիսուս Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ եւ կը հաւատանք թէ ինք Աստուծոյ Որդի է, հետեւաբար փրկուած ենք»: Կան նաեւ յարանուանութիւններ, որոնք կ'ըսեն թէ վերստին ծնունդ ունեցած են, հետեւաբար՝ փրկուած: Այս մտածելակերպը ծագում կ'առնէ Յիսուսի Նիկոդեմոսին ըսած «Եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ թագաւորութիւնը» խօսքէն: Նիկոդեմոս օրէնքի մարդ մըն էր: Անոր միտքը բազմաթիւ օրէնքներով զբաղ, ան կարող չէր ինքզինք անոնցմէ ձերբազատել եւ «սուրբ սիրտ» կերտել: Ուստի երբ Յիսուս «վերստին ծնունդ» ըսաւ, ուզեց մատնանշել բոլոր անպէտ օրէնքներէն ձերբազատուած ամբողջովին տարբեր խորհելակերպ մը կերտել: Զարմանալին այն է, թէ Յիսուս հարուստ երիտասարդին «պէտք է վերստին ծնանիս» չըսաւ, այլ ըսաւ. «ունեցածդ ծախէ եւ աղքատներուն բաժնէ ու հետեւէ ինձի»: Ամենէն զարմանալին այն է, թէ քրիստոնէական ոչ մէկ յարանուանութիւն հիմնուած է Յիսուսին հարուստ երիտասարդին տուած ըստ այս յորդորին: «Կը հաւատամ, հետեւաբար փրկուած եմ» ըսել դիւրին է, բայց մեր ունեցած ինչքերէն եւ հարստութենէն ձերբազատուիլ դժուար է: Որովհետեւ մարդ կապուած է աշխարհի շլացուցիչ հաճոյքներուն եւ ինչքերուն:

Մեր բուն նիւթէն այս կարծ շեղումէն յետոյ, այժմ նկատողութեան առնենք մարդուն իր ջանքերով յաւիտենական կեանքի արժանանալու անկարողութեան հարցը: Ուրեմն մարդ ի՞նչպէս պիտի փրկուի: Յիսուս ըսաւ. «Առ 'ի մարդկանէ՛ այդ անկա՛ր է, այլ առ Աստուծոյ ամենայն ինչ զօրակոր»: Ուրեմն Յիսուսի ըսածին իմաստը ի՞նչ է: Երբ մարդ «սուրբ սիրտ» կերտելով կը յաջողի Քրիստոս իր անձին մէջ յայտնաբերել, այն ատեն իր բոլոր խորհուրդները, խօսքերը եւ արարքները ըստ Քրիստոսի կամքին կ'ըլլան: Քրիստոսի համար անկարելի բան չկայ, հետեւաբար յաւիտենական կեանքն ալ Քրիստոսի կամքով կ'ըլլայ: Ճիշդ ասոր համար անոնք, որոնք փրկութեան կը ձգտին ամենեւին փրկութիւն պիտի չգտնեն: Որովհետեւ մարդու կեանքին նպատակը փրկութիւնը չէ, այլ՝ Յիսուսի նման իր անձին մէջ Աստուածայայտնութիւնը իրականացնելն է: Փրկութիւնը Աստուծոյ նուէրն է բոլոր անոնց, որոնք կեանքի ընթացքին իրենց կեանքին բուն նպատակը կը յաջողին իրականացնել:

Յիսուս կը շարունակէ սորվեցնել, թէ ի՞նչ է ճշմարիտ ձերբազատութիւնը: Ատիկա բոլոր կապերուն վերջ տալն է: Այդ կապերը կրնան ըլլալ իմացական (հաւատալիքներ եւ խորհելակերպ, որոնք կը պարտին վերստին ծնունդի), զգացական (կապուածութիւն եղբօր, քրոջ, հօր, մօր, կնօջ, զաւկին) եւ նիւթական (տուններ, արտեր ...): Կարելոր է նաեւ այս բոլորէն ձերբազատուիլ «Իր անունին համար», այսինքն, անձին իր մէջ Քրիստոս յայտնաբերելու համար: Համայն մարդկութիւնը Քրիստոս իր մէջ յայտնաբերելու «կանչուած է», որովհետեւ մարդկութեան նպատակը Աստուածայայտնութիւնն է: Բայց «ընտրուածները շատ քիչ են», որովհետեւ մարդ կապուած է աշխարհին:

Մարկոսի Աւետարանէն վերեւի երրորդ մէջբերու-

մը Աստուծոյ թագաւորութեան արժանանալու տուեալները կ'ամփոփէ. մանուկի մը նման ըլլալ: Մանուկները, իրենց ծնողաց ենթակայ, ըստ անոնց կամքին կ'ապրին, իրենց վերաբերեալ անձնական ոչինչ ունին: Անոնք այդ կացութիւնը յօժարաբար կ'ընդունին: Մենք ալ պարտ ենք նման հայեացքով Աստուծոյ թագաւորութիւնը ընդունիլ եւ յօժարաբար ըստ Աստուծոյ կամքին ապրիլ:



ՏՈՒՐԻ ՀԱՐՅՈՒ

«Յո՛ւցէ՛ք ինչ պարահեղանակներ: Եւ նո՛յա մա-
րոցին նմա պարահեղանակներ: Եւ սա՛ն պնոցա՛. Ո՞ր
է պարահեղանակ ա՛յս՝ կամ Գո՛ր: Այլն՝ կայսեր: Յայն-
ժամ սա՛ն պնոցա՛. Երթա՛յք՝ որո՛ւք պարահեղանակ-
ներ, եւ պարահեղանակ՝ Ապարահեղանակ: Ի՞նչու՛ լո՛սան՝
պարահեղանակ. եւ թողնա՛ն պնա եւ Գնացին»:

(Մարտի 19-22)

«Յո՛յց սուէք ինձի սուրբին դրամը»: Անոնք դահեղանակ
մը բերին իրեն: Ըսաւ անոնց. «Որո՞ւնն են այս
պարահեղանակ ու գրութիւնը»: Ըսին անոր. «Կայսրին»: Այն
ատեն ըսաւ անոնց. «Ուրեմն ինչ որ կայսրինն է՝ սուէք
կայսրին, եւ ինչ որ Աստուծոյ է՝ Աստուծո՛յ»: Երբ
լսեցին՝ զարմացան, ու թողուցին զայն եւ գացին»:

(Տես նաեւ Ղուկաս Ի:20-26 եւ Մարկոս ԺԲ:13-17)

Առաջին հերթին, Յիսուսի այս խօսքերուն իմաս-
տը շատ պարզ է եւ կը թուի բացայայտ ըլլալ: Ինչ
տուրք, որ պարտ ենք կառավարութեան տալ, պէտք է
տանք: Եթէ ընդունինք թէ մեր կեանքի բոլոր պատա-
հարները Աստուծոյ կամքն են, մեզի վիճակած տուրքն
ալ պէտք է Աստուծոյ կամքը ըլլայ: Շատեր յաճախ կը
ջանան իրենց վիճակած տուրքը նուազեցնել, երբեմն
օրէնքի սահմաններուն մէջ, երբեմն հնարամիտ հաշուա-
կալութեամբ եւ երբեմն ալ խարդախութեամբ: Մարդ
ուշադիր պէտք է ըլլայ: Ան երբեմն կարող է կառա-
վարութիւնը խաբել, բայց ո՛չ Աստուծո՛ւ: Իր այդ խաբէ-
ական խորհելակերպը եւ արարքը արդէն իր զօրու-
թեան մարմնին վրայ ազդեցութիւն ունեցած են, եւ իր
առջեւ ալ՝ խափանած կատարելութեան ուղին: Հրեանե-
րը կայսրին վճարուած տուրքը անարդար կը համարէ-
ին: Մարդկային նեղ հայեացքով աշխարհի վրայ շատ
բաներ կը թուին անարդար ըլլալ: Բայց մեծաշխարհ-
եան չափով ամէն ինչ կատարեալ է եւ ամենաարդար:

Վերելի մեկնաբանութիւնը շատ պարզ եւ տրամաբանական է: Բայց այդ խօսքը շատ աւելի լուրջ վերացական իմաստ մը եւս ունի: Ինչպէս վերել մատնանը շուած է, այն ինչ որ մարդ իր կեանքին մէջ կ'ընէ, անոր յառաջ բերած ազդեցութիւնը իր կեանքի լաւ կամ վատ պատահարները կ'որոշէ: Երբ մարդ աշխարհիկ ցանկութիւններով եւ իր խորհուրդ, խօսք ու արարքներով կատարելութեան ուղիէն կը շեղի, ինք ալ կը ստանայ անոնց յառաջ բերած «տուրք»-ը: «Կայսրը» աշխարհը կը ներկայացնէ եւ մարդուն ժխտական կենցաղը, իսկ «Դահեկան»-ին վրայի կայսրին պատկերն ալ՝ անհատին ժխտական կենցաղը: «Դահեկան»-ն ալ, որ իբր տուրք պէտք է տալ, անհատին ստացած «տուրք»-ը՝ իր կեանքի ժխտական պատահարները կը ներկայացնէ: Իսկ երբ անձը իր խորհուրդ, խօսք ու արարքներով կ'ընթանայ կատարելութեան ուղիէն, ան Աստուծոյ իր տուրքը տուած կ'ըլլայ եւ իր տուածին փոխարէն ալ Աստուծոյ շնորհները՝ իր կեանքի դրական պատահարները կը ստանայ: Յիսուսի խօսքը. «Երթա՛յք՝ սո՛ւք զկայսեր՝ կայսեր, եւ զԱստուծոյ՝ Աստուծոյ» կը նշանակէ այն ամէն ինչի որ մարդ արարած կ'ենթարկուի իր կեանքի ընթացքին, իրեն վիճակածն է՝ իր տալիք «տուրք»-ը:



ԻՆՉ Է ՅԱՐՈՒԹԻՒՆ

«Յայնմ առաջ մարեանն առ նա Սարգսկեցիքն, որ ասէին՝ Բէ շի՛վ յարութիւնն. Հարցին ցնա՛ւ եւ ասէն. Վա՛րդապետ՝ Մովսէս ասաց. Եթէ ո՛վ մեռցի անորոքի, արասցէ զկինն նորա եղբայր իւր, եւ յարոսցէ զսասկ եղբօր իւրոսմ: Եթէ՛ն առ մեզ եղբայր իւրն. առաջինն՝ արար կին՝ եւ մեռաւ. եւ զի ո՛չ ունէր զսասկ, եթող զկինն իւր եղբօր իւրոսմ: Սոյնպէս եւ երկրորդն՝ եւ երրորդն, մինչէտ ցէ՛լն երորդն: Յետ ամենեցուն մեռաւ եւ կինն: Երդ՝ ՚ի յարութեանն ո՛յր յիւրանցն եղցի՛ն նա՛ կին. զի ամենեկին կալան զնա կին: Պարասխանի՛ եր նոցա Յիսոսա՛ւ եւ ասէ. Մա՛լորտալէ՛ ո՛չ Գիբեղ զԳիբրա եւ ո՛չ զչօրութիւն Լարոսթոյ: Զի՛ն ՚ի յարութեանն ո՛չ կանայա առնէն՝ եւ ո՛չ արանց լինին, այլ եւ իբրեւ զհրեշտակս յերկինս: Բայց զասն յարութեան մեռելոց շեցէ՞ ընթերցեալ զասացեալն յեզ յԼարոսթոյ: Ե՛ս եմ Լարոսաթ Եբրաւամոս, Լարոսաթ Իսաւակայ եւ Լարոսաթ Յակովբայ. եւ չէ՛ Լարոսաթ՝ Լարոսաթ մեռելոց՝ այլ կենդանեաց»: (Մարտէոս ԻԲ: 23-33)

«Նոյն օրը անոր քով եկան Սաղուկեցիները, որոնք կ'ըսէին թէ յարութիւն չկայ, ու Հարցուցին անոր. «Վարդապետ, Մովսէս ըսաւ. Եթէ մէկը մեռնի առանց զաւակի, անոր եղբայրը թող ամուսնանայ անոր կնոջ հետ, եւ զարմ Հանէ իր եղբօր: Ուրեմն եօթը եղբայրներ կային մեր քով: Առաջինը ամուսնացաւ ու վախճանեցաւ, եւ զարմ չունենալուն Համար՝ իր կինը թողուց իր եղբօր: Նմանապէս ալ երկրորդն ու երրորդը՝ մինչեւ եօթներորդը: Ամենէն ետք կ'ինն ալ մեռաւ: Ուրեմն, յարութեան

ատեն՝ այդ եօթնէն որո՞ւն կիրն պիտի ըլլայ. որովհե-
տեւ բոլորն ալ ունեցան զայն իբր կին»: Յիսուս պատաս-
խանեց անոնց. «Դուք մոլորած էք. ո՛չ Գիրքերը գիտէք, ոչ
ալ Աստուծոյ զօրութիւնը: Քանի որ յարութեան ատեն՝
ո՛չ կ'ամուսնանան եւ ո՛չ ամուսնութեան կը տրուին, հա-
պա երկիրքի մէջ՝ Աստուծոյ հրեշտակներուն պէս են:
Բայց մեռելներուն յարութեան մասին չէ՞ք կարդացեր
Աստուծոյ ձեզի ըսուած խօսքը. Ե՛ս եմ Աբրահամի Աստ-
ուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը: Աստ-
ուած մեռելներուն Աստուածը չէ, հապա՛ ողջերուն»:

(Տես նաեւ Ղուկաս Ի:27-40 եւ Մարկոս ԺԲ:18-27)

*Մաղուկեցիները, որոնք յարութեան չէին հաւա-
տար, իրենց այս հարցումով կարծէք Յիսուսը կը ծաղ-
րէին: Թէեւ հարցումին նպատակը ծաղրել էր, սակայն
անոնք այս հարցումով յարութեան նկատմամբ իրենց
հասկացողութիւնն ալ յայտնած կ'ըլլային: Այդ հասկա-
ցողութիւնը հետեւեալն է: Մարդ, մահէն ետք, մարմի-
նով յարութիւն պիտի առնէ եւ անվերջ ժամանակ
պիտի շարունակէ իր «աշխարհիկ կեանքը» «երկիրք»-ի
մէջ առանց աշխատելու, շարունակական հաճոյքներու
եւ երջանկութեան մէջ ապրելով, կամ ալ՝ դժոխքային
կեանքը՝ «դժոխք»-ի մէջ անվերջ տառապանքով: Դժ-
բախտաբար, այսօր իսկ, քրիստոնեաներուն մեծամասնու-
թեան յաւիտենական կեանքի նկատմամբ յայեցողու-
թիւնը այս է: Անոնց համար յարութիւնը տեղի պիտի
ունենայ երբ աշխարհին վերջը գայ, շատ հաւանաբար
դարեր կամ հազարամեակներ վերջ:*

*Յարութիւնը, մարդուն անհատականութեան յա-
րութիւնն է, որ իր մարմնին մահուան օրը կ'ըլլայ եւ
յարութեան արժանացողներուն մարմինն ալ չի փոխի
եւ չի տարբադադրուիր, այլ երեք օրուայ մէջ նիւթէն
զօրութեան կը փոխուի ու կ'անհետանայ: Անոնք որոնք
կը կարողանան Քրիստոս իրենց մէջ յայտնաբերել,
անոնք յարութեան կ'արժանանան եւ Աստուծոյ կը
միանան: Անոնք երանութեան մէջ կ'ըլլան: Իսկ անոնք,*

որոնք յարույթեան արժանի չեն, անոնց անհատականութիւնն ալ մարմնին հետ կը մեռնի եւ կ'անհետանայ: Բայց մարդու հոգին անմահ է եւ կը վերամարմնանայ: Ոգիին մէջի անցեալի տեղեկութիւնները կ'որոշեն յաջորդ վերամարմնացումի պատահարները: Անոնք երբեմըն «հաճելի» են եւ երբեմն ալ՝ տառապալից: Արդեօք ինչո՞ւ որոշ անձերու աշխարհիկ կեանքը կը թուի դժոխք ըլլալ: Բոլոր վերամարմնացումները որոշ չափով դժոխք են, որովհետեւ անոնց բոլորն ալ Աստուծոյ երանութենէն զրկուած են: Բայց վերամարմնացումը առիթ մըն է, որ անձը անգամ մը եւս կարելիութիւնը ունենայ իր մէջ իր կեանքին բուն նպատակը՝ Աստուծայայտութիւնը իրականացնել՝ Յիսուսի նմանի եւ Երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլայ:

Ըստ շատերու յաւիտենականութիւնը անվերջ ժամանակ մըն է: Այս հայեացքն ալ սխալ է: Միայն Աստուած յաւիտենական է, որովհետեւ Ան ոչ սկիզբ ունի եւ ոչ ալ վախճան: Աստուած ժամանակի ալ ենթակայ չէ եւ ժամանակի մէջն ալ չէ, այլ ժամանակը Աստուծոյ մէջն է: Ճիշդ ասոր համար հայերը Աստուած կը ներկայացընեն «Է» տառով, որ էական բային ներկայ ժամանակ երրորդ դէմքն է: Որովհետեւ Աստուած ժամանակի ենթակայ չէ, որով միայն ներկային մէջն է: Հետեւաբար ներկան ալ յաւիտենական է: Այս հիման վրայ յաւիտենական կեանքն ալ անկարելի է որ ապագային մէջ ըլլայ: «Անցեալ» եւ «ապագայ» ժամանակին մաս կը կազմեն, իսկ յաւիտենականութիւնը ժամանակի դրութենէ դուրս ըլլալն է, Աստուծոյ հետ մէկ ըլլալն է: Իսկ եթէ յաւիտենական կեանքը ապագային պիտի չըլլայ, կը նշանակէ թէ ան պէտք է ներկային մէջ ըլլայ: Եթէ մենք հիմա յաւիտենական կեանքի չենք արժանանար, մահէն վերջ ամենեւին պիտի չարժանանանք:

ԻՆՉՊԷԱ ԱՐԺԱՆԱՆԱԼ ՅԱԻՏԵԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ-Բ

«Եւ աւա՛յ յարեաւ ոմն օրինական՝ փորձէ՛ր զնա եւ
ասեր. Վարդապետի՛ զի՞նչ Գործեցից՝ զի զկեանսն
յաւիտենականն ժառանգեցից: Եւ նա՛ ասէ ցնա.
Յօրէնն զի՞նչ Գրեալ է, ո՞րպէս ընթեւանոս: Նա
պարասխանի եր՛ էւ ասէ. Սիրէացես զՏէր Լսոր-
ոսա՞ ին յամենայն սրբէ ին՝ մմէ, եւ յամենայն
անշնէ ին՝ մմէ, եւ յամենայն զօրոթեանէ ին՝ մմէ,
եւ յամենայն մրաց ինց. եւ զընկեր ին իբրեւ-
զանշն ին: Եւ ասէ ցնա. Ուղի՛ զ երոսր զպարաս-
խանից, զա՛յ յարա՛ւ՝ եւ կեցցե՛ս: (Ղոսկաս Ժ: 25-28)
«Ահա՛ օրինական մը կանգնեցաւ, ու փորձելով զայն՝
ըսաւ. «Վարդապետ, ի՞նչ ընեմ՝ որ ժառանգեմ յաւիտե-
նական կեանքը»: Ան ալ ըսաւ անոր. «Ի՞նչ գրուած է
Օրէնքին մէջ, ի՞նչ պէս կը կարգաս»: Ան ալ պատասխա-
նեց. «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածը՝ ամբողջ սիրտովդ, ամ-
բողջ անձովդ, ամբողջ զօրութեամբդ եւ ամբողջ միտքո-
վդ, ու ընկերդ՝ քու անձիդ պէս»: Ինք ալ ըսաւ անոր.
«Շիտա՛կ պատասխանեցիր, ըրէ՛ ատիկա՛ ու պիտի ասլրիս»:

«Յա՛յ յա երկոս պարոսիքանն ամենայն օրէնի՛ էւ
մարգարէի՛ կախեալ կան»: (Մարթէոս ԻԲ: 40)

«Այս երկու պատուիրաններէն կախուած են ամբողջ
Օրէնքն ու Մարգարէները»:

(Տես նաեւ Մարկոս ԺԲ: 28-34 եւ Մատթէոս ԻԲ: 34-39)

Այս համարներուն նկատմամբ ընդարձակ մեկնա-
բանութիւն մը պիտի չգրեմ այստեղ, քանի որ ան
գրուած է «Աւետարանի Խորհուրդները Բ. Յիսուսի
Առակները» խորագրեալ գիրքիս «Յառաջաբան»-ին
մէջ (էջեր 19-28): Հոս բաւ է ըսել, թէ ընդհանուր
ստեղծագործութիւնը Աստուծոյ մարմինն է: Հետեւա-
բար Աստուած սիրել ստեղծագործութեան մէջ ամէն
ինչ սիրել է:


Ո՛ւ է Քրիստոս

«Եւ ՚ի ժողովել փարիսեցոցն, Էււա՛րց ցնոսա Յիսուս՝ Եւ ասէ: Զիա՛րդ ըստ յի յէս վասն Քրիստոսի, ո՞յր որդի է: Լսեն ցնա. Դասել՛: Լսէ ցնոսա Յիսուս. Իսկ զիա՛րդ Դասել Շոգո՛ւն կոչէ զնա Տէր, Եւ ասէ: Լսաց Տէր ցՏէր իմ. Սինար ընդ աջմէ իմմէ, մինչէւ եդից զըշնամիս ին պարոսանդա՛ն որից իոց: Իսկ ելէ Դասել՛ զնա Տէր կոչէ, զիա՛րդ որդի նորս իցէ: Եւ ո՛չ ո՛վ կարէր րալ նմա պարասխանի բան մի. Եւ ո՛չ իշխէր ո՛վ յայնմ օրէ Լարցանել զնա Եւ ո՛չ ինչ»: (Մարքէոս ԻԲ:41-46)

«Երբ Փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. «Քրիստոսի մասին (Այսինքն՝ Օծեալին՝ Մեսիային) ի՞նչ է ձեր կարծիքը. որո՞ւ որդին է»: Ըսին իրեն. «Դաւիթի՛»: Յիսուս ըստ անոնց. «Հապա ի՞նչ պէս Դաւիթ Հոգեով գայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ. Տէրը ըստ իմ Տէրը ըսա. «Քաղմէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեմ ոտքերուդ»: Ուրեմն եթէ Դաւիթ գայն Տէր կը կոչէ, ի՞նչ պէս ան իր որդին կ'ըլլայ»: Ո՛չ մէկը կրնար խօսքո՛վ մը պատասխանել անոր: Այդ օրէն ետք՝ ո՛չ մէկը կը յանդգնէր բան մը հարցնել անոր»:
(Տես նաեւ Ղուկաս Ի:41-44 եւ Մարկոս ԺԲ:35-37)

Յիսուսի այս խօսքերը կը բացայայտեն Իր հայեացքը նկատմամբ Քրիստոսին: Հրեաները կը սպասէին Մեսիային գալուտտին եւ կը հաւատային, թէ ան պիտի գար Դաւիթի սերունդէն: Երբ Յիսուս կը հարցնէ. «ո՞յր որդի է», Ան «որդի» բառը կը գործածէ սերունդի նպատակով: Շատ լաւ գիտենք թէ Մեսիան Դաւիթին որդին չէր: Յիսուս Դաւիթի սերունդէն եկող Մեսիան էր: Բայց եթէ զրաբար մէջըբերումին նայինք, Յիսուս Մեսիայի մասին ոչինչ կը հարցնէ այլ միայն Քրիստոսի մասին: Յիսուսի ըսածները եթէ վերլուծենք պիտի

տեսնենք, թէ Յիսուս իրարմէ կը զանազանէ Մեսիան եւ Քրիստոսը: Քրիստոս Աստուծոյ Որդին է: Ան Աստուծոյ ներկայութիւնն է ընդհանուր ստեղծագործութեան մէջ: Ճիշդ իր այս գիտութեան եւ հասկացողութեան համար Դաւիթ Զայն Տէր կոչած էր: Իրմէ ետք իր սերունդէն եկող մէկը ինք ամենեւին տէր պիտի չի կոչէր: Քրիստոս ամէն անհատի հոգին է: Յիսուս Դաւիթի ցեղէն մարդու Որդի էր: Աս անուրանալի է, որովհետեւ Աւետարաններուն մէջ Յիսուս ինք իրեն համար յաճախ «մարդու Որդի» ըլլալով ակնարկած է: Ահա՛, աս է իմաստը Յիսուսին մարդկային բնոյթին: Բայց Յիսուս իր մէջ լրիւ յայտնաբերած էր Աստուծոյ Որդին՝ Քրիստոս, հետեւաբար Յիսուս Քրիստոս նաեւ ունէր Քրիստոսի Աստուածային բնոյթը: Անտարակոյս պարտ ենք պաշտել Յիսուս Քրիստոս: Ան Աստուծոյ յայտնութիւնն է աշխարհի վրայ: Բայց պէտք է հասկնանք, թէ Քրիստոս ամէն անհատի հոգին է, հետեւաբար պէտք չէ՞, որ մեր ընդհանուր կեանքի ընթացքին, մեր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ ըլլան մէյմէկ պաշտամունք առ Քրիստոս, հոգ չէ թէ Ան տակաւին լրիւ յայտնուած չըլլայ մեր մէջ: Ահա՛, աս է սիրել Աստուած եւ սիրել «եղբայր»-դ: Եթէ ամէն մարդ նման հայեացքով մը վարուի ամէնուն հետ, չէ՞ք խորհիր, թէ դրախտը վերահաստատած կ'ըլլանք աշխարհի վրայ: Նման կենցաղ մը բարձր գիտակցութեան մակարդակի կը կարօտի եւ անձը ամբողջովին ձերբազատուած իր «Ես»-էն՝ եսասիրութենէն: Ահա՛, աս էր, որ Քրիստոս Յիսուսի միջոցով մեզի սորվեցուց:



Ո՞՞՞՞ ՎԱՐՈՒԱՊԵՏ Է ԵՒ Ո՞՞՞՞ ՀԱՅՐ Է

«Բայց դու՛ն՝ մե՛ն՝ զու՛րկ կոչե՛լ վարդապետ, զի մե՛ն՝ Ե
 յեր ուսուցիչ, Եւ ամենե՛ղին դու՛ն՝ եղբա՛րդ է՛լ:
 Եւ Հայր՝ մե՛ն՝ կոչե՛լ յեզ յերկրի. զի յեր՝ մե՛ն՝ Է
 Հայր՝ որ յերկինսն է: Եւ մե՛ն՝ կոչիցի՛լ. զի ուսու-
 ցիչ յեր՝ Բրիստոս է: Եւ մե՛ն՝ յե՛նչ եղիցի յեր
 սպասաւոր: Որ Բարձրացոցանէ զանձն՝ խոնարհե-
 ցի՛, Եւ որ խոնարհեցոցանէ զանձն՝ Բարձրացի»:
 (Մարգէէոս ԻԳ:8-12)

«Բայց դուք մի՛ կոչուիք ռաբբի, որովհետեւ մէ՛կ է ձեր
 Ուսուցիչը՝ Քրիստոս, եւ դուք բոլորդ եղբայր էք: Ու
 երկրի վրայ ո՛չ մէկը կոչեցէք ձեր Հայրը, որովհետեւ
 մէ՛կ է ձեր Հայրը՝ որ երկինքն է: Եւ դուք մի՛ կոչուիք
 ուսուցիչ, որովհետեւ մէ՛կ է ձեր Ուսուցիչը՝ Քրիստոս:
 Ու ձեր մէջէն մեծագոյնը՝ ձեր սպասարկուն թող
 ըլլայ: Ո՛վ որ բարձրացնէ ինքզինք՝ պիտի խոնարհի, իսկ
 ո՛վ որ խոնարհեցնէ ինքզինք պիտի բարձրանայ»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԱ:44, Ի:45-46 եւ Մարկոս ԺԲ:38-39)

Յիսուս անգամ մը եւս իր այս խօսքերով մեզի կը սորվեցնէ Քրիստոսի մասին: Մարդուն սորվելու կարողութիւնը իր գիտակցութեան մակարդակին հետ սերտ կապ ունի: Անոնք, որոնք ցած գիտակցութեան մակարդակ ունին, նոյնիսկ եթէ իմանան կամ կարդան ըսուած կամ գրուած խօսքերը, չեն կրնար ըմբռնել անոնց բուն իմաստը: Այս հայեացքը կը վերաբերի նամանաւանդ Աւետարաններուն մէջի գրութիւններուն, որովհետեւ անոնց մեծամասնութեան մէջ թագնուած վերացական կամ փոխաբերական իմաստները հասկնալու համար ճիշդ մեկնաբանութեան կը կարօտի: Մարդուն գիտակցութիւնը իր մէջ Քրիստոսի ներկայութիւնն է: Ինչ աստիճանով, որ Քրիստոս յայտնուած է անձին մէջ այն աստիճանով ալ անձը կը յայտնաբերէ գիտակցութեան մակարդակ: Միթէ չէ՞ ըսուած. «Իմաստութիւնը Ս. Հո-

գրի շնորհներէն մին է»։ Հետեւաբար, այս հիման վրայ մեզի հասկացողութիւն տուողը մեր ներքին Քրիստոսն է։ Ուրեմն Յիսուս ըսաւ.«մի՛ զոք կոչէք վարդապետ, ... զի ուսուցիչ ձեր՝ Քրիստոս է», որեւէ մէկը ուսուցիչ մի կոչէք, որովհետեւ ձեր ուսուցիչը Քրիստոսն է։ Բոլոր մարդիկ միայն իրարու եղբայր են, նոյնիսկ անոնք, որոնք ուսուցիչ կը կոչենք ու մեզի կը սորվեցնեն։ Ոչ մէկ ուսուցիչ կարող է բան մը սորվեցնել, եթէ աշակերտին ներքին Քրիստոսը անոր հասկացողութիւն չտայ։ Քրիստոս ալ անհատին հասկացողութիւն կու տայ եթէ անհատը ինքզինք արժանի ըրած է այդ գիտութեան։ Պէտք չէ մոռնալ, թէ ամէն անհատի ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է։ Հետեւաբար երբ անհատը արժանի է որոշ գիտութեան, սորվեցնողն ալ ինքնաբերաբար իր կեանքին մէջ կը յայտնուի, որովհետեւ Քրիստոս՝ «ուսուցչին» էութիւնը, զայն կը բերէ աշակերտին, կամ աշակերտը կը տանի «ուսուցչին»։ Մարդիկ առանց այս ճշմարտութիւնը հասկնալու նման կացութիւն մը կը կոչեն բախտ, հանդիպում կամ զուգադիպութիւն։ Ճշմարտութիւնը այն է, թէ ան, որ մարդիկ զուգադիպութիւն կը կոչեն, Քրիստոսի կամքն է։ Այս հիման վրայ ոչ մէկ անձ պէտք չէ նաեւ ինքզինքին ուսուցչի հովեր տայ եւ ինքզինք բարձրէն «տեսնէ»։ Յիսուս նաեւ բացայայտ կ'ըսէ, թէ ան որ ինքզինք կը բարձրացնէ պիտի խոնարհի եւ ան, որ ինքզինք կը խոնարհեցնէ պիտի բարձրանայ։ Իրողութիւնը այն է, թէ՛ սորվեցնողին եւ թէ՛ սորվողին էութիւնները՝ երկուքն ալ Քրիստոսն են։ Մեզի կը մնայ միայն հետաքրքրուիլ եւ ուզել սորվիլ։ Նոյնիսկ աս ալ բաւ չէ, այլ նաեւ պարտ ենք մենք զմեզ արժանի ընել այն ինչ, որ սորվիլ կ'ուզենք։ Իսկ եթէ իսկապէս ուզենք սորվիլ եւ նաեւ արժանի ըլլալ, բնաւ պէտք չէ մտահոգուինք, թէ ով պիտի սորվեցնէ։ Քրիստոս գիտէ եւ մեզի հետ է։

ԿԵՂՈՍՈՐՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՄ

«Վա՛յ յեւ դարայ եւ փարիսեցոց կեղծա-որաց .
վի փակելի վարձայութիւն երկնից աստի մարդկան .
դու՛ն ո՛չ մտանելի, եւ որոց մտանելն՝ չգրա՛յի թոյլ
մտանել: Վա՛յ յեւ դարայ եւ փարիսեցոց կեղծա-
որաց . վի ոտիւն վարձայն այրեաց . պարճատանօղ
երկարելի վաղօթն՝ վասն վի ասելի դատարան ըն-
դունիցի: Վա՛յ յեւ դարայ եւ փարիսեցոց կեղ-
ծա-որաց . վի յաթիղ ընդ թող եւ ընդ ցամաղ՝ աս-
նել եկամտոց մի . եւ յորժամ լինիցի, ասնելի վնաս
որդի զԵհեմի՛ կրկին եւս ինն վճեւ: Վա՛յ յեւ
աստիորդի կոյրի . վի ասելի՛ որ երդնո՛ր ՚ի ցա-
ճարն՝ չէ՛ ինչ, թայց որ երդնո՛ր յակին որ ՚ի ցա-
ճարին է՛ արժան է: Սորո՛սի եւ կոյրի՛ վիճչ մեծ
է, ոակին՝ ելել ցաճարն որ արբէ՛լ զոակին: Եւ որ
երդնո՛ր ՚ի սեղանն՝ չէ՛ ինչ, թայց որ երդնո՛ր ՚ի պա-
րարագն, որ ՚ի զերայ նորա է՛ արժան է: Յի-
մա՛րի եւ կոյրի՛ վիճչ մեծ պարարագն, ելել սե-
ղանն՝ որ արբէ՛լ զպարարագն: Իսկ արդ՛ որ երոտ-
ի նա՛՛ եւ յամեկայն որ ՚ի զերայ նորա է: Եւ որ
երդնոտ-ի ցաճարն, երդնոտ-ի նա՛՛ եւ ՚ի թնա-
կիչն նորա: Եւ որ երդնոտ-ի յերկինս, երդնո-
յաթոտն Լարոտոյ՛ եւ յայն որ նապին ՚ի զերայ
նորա: Վա՛յ յեւ դարայ եւ փարիսեցոց կեղծա-ո-
րաց . վի ցաատնորդի՛ վանանոտն եւ պատիւն եւ
վշտման, եւ թողելի վշտանր ժանր օրինացն՝ պար-
պատան, եւ պողորմութիւն, եւ պատարա . պայս

արժան էր ասանել՝ ես պայն՝ շքողո՞ւլ: Առաջ-
նո՞րդի կոյրի, որ պժողոպեա լեամէի, ես պոպոս
կլանէի: Ասոյ յեպոպրայ ես վարիսեցոոց կեղծա-
որայ. սի արէիէ պարպաիին պժապակին ես պակա-
աաակի, ես ՚ի ներիոյ լի՛ են յաիշրակո-լեամէ
եա անխառնո-լեամէ: Փարիսեցի՛ կոյր՝ արէա՛ նախ
պների՛ն թապակին ես պակաաակին, սի լինիցի
եա արպաիինն նոոա սորի: Ասոյ յեպոպրայ ես
վարիսեցոոց կեղծաորայ. սի նամն էի Գերեզմանայ
թուելոց, որ արպաիոյ երե-ին Գեղեցիկի, ես ՚ի ներ-
իոյ լի՛ են ասկերոի մեաելոց, ես ամենայն պղծա-
լեամէ: Աոյնայեա ես դո-ի՛ արպաիոյ երե-իի
մարդկան արդարի, ես ՚ի ներիոյ լի՛ էի կեղծաո-
րո-լեամէ ես անօրենո-լեամէ»: (Մարշէա ԻԳ: 13-28)
«Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ
կը գոցէք երկիրքի թագաւորութիւնը մարդոց առջեւ.
գո՛ւք չէք մտներ, ու մտնողներուն ալ թոյլ չէք տար՝ որ
մտնեն: Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ եւ Փարիսեցի-
ներ, որ կը լաիէք այրիներուն տուները, ու իբր պատըր-
ուակ՝ աղօթքը կ'երկարէք. ուստի աւելի՛ խստութեամբ
պիտի դատուիք: Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ եւ
Փարիսեցիներ, որ կը շրջիք ծով ու ցամաք՝ մէկը նորա-
հաւատ ընելու, եւ երբ ըլլայ՝ գայն ձեզմէ երկու ան-
գամ աւելի գեհեհի որդի կ'ընէք: Վայ ձեզի, կոյր
առաջնորդներ՝ որ կ'ըսէք. Ո՛վ որ երդում կ'ընէ սաճա-
րին վրայ՝ բան մը չէ, բայց ո՛վ որ երդում կ'ընէ տա-
ճարի ոսկիին վրայ՝ պարտաւոր կ'ըլլայ: Յիմարներ ու
կոյրեր, ո՞րը մեծ է, ոսկի՞ն թէ սաճարը, որ կը
սրբացնէ ոսկին: Նաեւ կ'ըսէք. Ո՛վ որ երդում կ'ընէ
գոհասեղանին վրայ՝ բան մը չէ՝ բայց ո՛վ որ երդում
կ'ընէ գոհասեղանին վրայի ընծային վրայ՝ պարտաւոր
կ'ըլլայ: Յիմարներ ու կոյրեր, ո՞րը մեծ է, ընծա՞ն թէ
գոհասեղանը, որ կը սրբացնէ ընծան: Ուրեմն, ո՛վ որ
երդում կ'ընէ գոհասեղանին վրայ, երդում կ'ընէ անոր

վրայ ու անոր վրայ եղած բոլոր բաներուն վրայ: Եւ ո՛վ որ երդում կ'ընէ տաճարին վրայ, երդում կ'ընէ անոր վրայ ու անոր մէջ բնակողին վրայ: Եւ ո՛վ որ երդում կ'ընէ երկիրքի վրայ, երդում կ'ընէ Աստուծոյ գահին վրայ ու անոր վրայ բազմողին վրայ: Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը վճարէք անանուխին, սամիթին ու չամանին տասանորդը, բայց կը թողուք Օրէնքին աւելի ծանր բաները՝ իրաւունքը, կարեկցութիւնն ու հաւատքը. ասո՛նք պէտք է ընէիք, եւ զանոնք չձգէիք: Կո՛յր առաջնորդներ, որ կը քամէք մթղուկը ու կը կլլէք ուղտը: Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը մաքրէք գաւաթին ու պնակին դուրսի՝ կողմը, բայց ներսէն լեցուն են յափշտակութեամբ եւ անիրաւութեամբ: Կո՛յր Փարիսեցի, նախ մաքրէ՛ գաւաթին ու պնակին ներսի՝ կողմը, որպէսզի անոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ: Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը նմանիք ծեփուած գերեզմաններու, որոնք արդարեւ դուրսէն գեղեցիկ կ'երեւնան, բայց ներսէն լեցուն են մեռելներու ոսկորներով ու ամէն տեսակ անմաքրութեամբ: Նոյնպէս դուք դուրսէն արդար կ'երեւնաք մարդոց, իսկ ներսէն լի էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ:

(Տես նաեւ Ղուկաս ԺԱ:44, Ի:39-42 եւ Մարկոս ԺԲ:40)

Յիսուսի այս խօսքերը կը թուի թէ՛ ուղղուած ըլլան այն օրուայ «կղերականաց» դասակարգին, բայց ճշմարտութիւնը այն է, թէ՛ Յիսուս այս խօսքերը կ'ողողէ բոլորիս: Յիսուսի տուած «վա՛յ»-երը կը ներկայացնեն մարդոց բռնած ընթացքը: Յիսուս իր օգտագործած առաջին «կեղծաւոր» ածականով կը յայտնաբերէ իր տուած «վայ»-երուն բուն պատճառը՝ կեղծաւորութիւնը: Մարդ միշտ կը ջանայ լաւ երեւալ հանրութեան կողմէ եւ յարգուիլ, հետեւաբար իր բոլոր ժխտական արարքները թաքուն կը պահէ, կամ իր խորհելակերպը՝ իր հաւատացածը եւ իր արարքները իրարու չեն համապատասխաներ: Պատշաճ է ամէն մի «վա՛յ»-ը զատ-զատ ուսումնասիրել:

Ասոնց առաջինն է. «Վա՛յ ձեզ ... զի փակեք զարքայութիւն երկնից առաջի մարդկան. դուք ո՛չ մտանք, եւ որոյ

մտանեն՝ չտա՛յք թող մտանեք: Բառացի իմաստով «վա՛յ»-ը կը թուի ըստած ըլլալ կղերական դասուն համար: Երբ մարդ եսասիրութեամբ կը վարուի եւ իր անձնական շահուն համար ուրիշներ կը շահագործէ եւ սուտ ու սխալ տեղեկութիւն կու տայ, որպէսզի այդ անհատին արարքները իրեն համար շահաբեր ըլլան, «վա՛յ»-երու կ'ենթարկուի: Նա մանաւանդ անոնք, որոնք որոշ հեղինակութիւն ունին ուրիշ անձի վրայ կ'օգտագործեն այդ հեղինակութիւնը եւ ուրիշներուն վատ օրինակ կ'ըլլան, հետեւաբար ալ աւելի «վա՛յ»-երու կ'արժանանան: Իրենց վատ՝ խաբէական ընթացքը արգելք կը հանդիսանայ կատարելութեան ուղիին մէջ: Դժբախտաբար անոնք նաեւ ուրիշներուն ալ կը սորվեցնեն ժխտական վարմունք, որ զանոնք ալ կը հեռացնէ կատարելութեան ուղիէն:

«Վա՛յ ձեզի, ... որ կը լափէք այրիներուն տուները, ու իբր պատրուակ՝ աղօթքը կ'երկարէք. ուստի աւելի՛ խստութեամբ պիտի դատուիք»: Դարձեալ, աս ալ ազահու-թեան եւ անձնական շահի համար մտահոգ ըլլալ ձեւացընել կը նշանակէ: Անտարակոյս աղօթքի մասը կը վերաբերի կղերականաց դասուն: Սակայն այսօր ունինք զանազան աղանդներ, որոնց ինքնակոչ քարոզիչները երկար աղօթքներ կ'ընեն որպէսզի աւելի հետեւորդ որսան եւ անոնց նիւթական օժանդակութենէն իրենք օգտուին: Անհատական գործերու մէջ ալ, երբ անձը բարձր վճարում պահանջելու նպատակով կատարած գործին համար տրամադրած ժամանակամիջոցը դիտումնաւոր կերպով կ'երկարէ, կամ այն տպաւորութիւնը կ'ուզէ տալ, թէ կատարած գործը բաւական խրթին է, կ'ենթարկուի Յիսուսի «Վա՛յ»-ին:

«Վա՛յ ձեզ ... զի յածիք ընդ ծով եւ ընդ ցամաք՝ առնել եկամուտ մի. եւ յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեւեռնի՝ կրկին եւս քան զձեզ»: Այս «վա՛յ»-ը կը թուի

տրուած ըլլալ, բոլոր անոնց, որոնք կը ջանան ուրիշ անձ մը կրօնափոխ կամ դաւանափոխ ընել: Մարդիկ կարծելով, թէ իրենց կրօնքը կամ իրենց հաւատացած ձեւը միակ ճիշդ ձեւն է, կը ջանան ուրիշներ ալ որսալ: Անոնց մեծ մասը զայն կ'ընեն իրենց անձնական շահին համար եւ, դժբախտաբար, այդ կ'ընեն իրենց նախապէս որսացած անձերու օգտագործումով: Անոնք ալ կարծելով, թէ իրենց ըրածը Աստուածահաճոյ արարք մըն է, յօժարաբար գործիք կ'ըլլան անոնց վատ արարքին: Անոնց վարդապետութեան հիմքը եսասիրութիւնն է, որով իրենց հետեւորդներուն մէջ, ուղղակի կամ անուղղակիօրէն եսասիրութիւն կը յառաջացնեն: Մեր օրերու փրկուածներու աղանդը այժմէական օրինակ մըն է: Միթէ «ես փրկուած եմ» ըսելը եսասիրութեան օրինակ չէ՞: Այդ կը նշանակէ, թէ անձը իր «Ես»-ին կապուած է: Միթէ Յիսուս չէ՞ ըսած. «Ան, որ կ'ուզէ իր անձը փրկել, պիտի կորսնցնէ զայն»:

«Այ՛ն ձեզ՝ ... զի ասէք՝ որ երդնու 'ի տաճարն՝ չէ՛ ինչ, բայց որ երդնու յոսկին որ 'ի տաճարին Է արժան է ...»: Յիսուս այս երդումի օրինակը կ'օգտագործէ որպէսզի մեզի սորվեցնէ, թէ ինչ բան «սուրբ» է: Մենք ալ նման հայեացքով պարտ ենք վարուիլ: Եթէ հարցը առնենք միայն երդում ընելու մասին, այլուր Յիսուս ըսած է բնաւ երդում չընել եւ մեր «այո»-ն ըլլայ այո եւ «ոչ»-ն ալ՝ ոչ: Յիսուս այլուր ըսած է. «ձեր մարմինները Աստուծոյ տաճարներն են»: Յիսուս իր այս խօսքին մէջ Հրեաներուն ըսած Փիզիքական տաճարով կը մատնանչէ մարդուն թէ՛ Փիզիքական եւ թէ՛ զօրութեան «մարմին»-ները, որոնք Աստուծոյ տաճարն են եւ Քրիստոսի ներկայութիւնը: Փիզիքական մարմինը զօրութեան մարմնին Փիզիքական արտայայտութիւնն է: Իսկ «ոսկին» ալ անձին մէջ մարդուն անհատականութիւնը: Մարդուն անհատականութիւնը թանկագին է,

որովհետեւ Աստուածայայտնութեան համար անհրաժեշտ է: Մարդ կը պաշտէ իր անհատականութիւնը՝ «Ես»-ը եւ կ'անտեսէ ներքին Քրիստոսը: Ճշմարտութիւնը այն է, թէ ընդհանուր ստեղծագործութիւնը, ներառեալ ամէն մի անհատ կը գոյատեւէ Աստուծոյ մէջ, հետեւաբար տաճարն ալ Աստուած է: Հետեւաբար, թէ՛ տաճարը եւ թէ՛ ալ «ոսկի»-ն մէկ են: Միթէ չե՞նք ըսեր. «ստեղծագործութիւնը Աստուծոյ մարմինը կը ներկայացնէ: Ինչպէս մեր մարմնին ամէն մէկ բջիջը մարմնին մէջ է, նմանապէս ամէն մի անհատ Աստուծոյ մարմնին մէջ «բջիջ» մըն է: Ուրեմն տաճարին մէջինը՝ ոսկին, սրբացնողը տաճարն է: Իսկ մարդուն անհատականութիւնն ալ սրբացնողը իր հոգին՝ Քրիստոսն է, որ «տաճար»-ն է ուր անհատականութիւնը կը գոյատեւէ: Այս սրբացումն ալ կ'ըլլայ Քրիստոսի յայտնութեամբ անձին մէջ: Բայց որովհետեւ մարդ ազատ կամք ունի, ինք պէտք է իր ազատ կամքով ուզէ եւ իրականացնէ այդ սրբացումը՝ Քրիստոսի յայտնութիւնը իր մէջ: Իսկ մենք խաւարամտութեամբ պատրանքը ճշմարտութիւն կարծելով, կը կապուինք մեր «Ես»-ին, քան թէ յարինք դէպի Քրիստոս: Զոհասեղանը մեր ներքին Քրիստոսն է եւ սեղանին վրայի զոհն ալ մեր «Ես»-ը: Այս հիման վրայ ամէն անձ պարտ է ամէն ինչի հետ վարուիլ այն ձեւով որ ինք պիտի վարուէր Աստուծոյ հետ: Ամէն անձ նաեւ պարտ է լրիւ յանձնուիլ իր ներքին Քրիստոսին եւ իր «Ես»-ը զոհել՝ դամել խաչին:

«Վայ՛ ձեզ դպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց. զի տասանորդէ՛ք զանանուխ եւ զսամիթ եւ զչաման, եւ թողէք զծանր ծանր օրինայն՝ զդատաստան, եւ զողորմութիւն, եւ զհաւատս. զայս արժա՛ն էր առնել՝ եւ զայն՝ չթողի՛ւք»: Յիսուս այս խօսքով դարձեալ կը մատնանշէ մարդուն զատած «լայն» ճամբան, փոխանակ «նեղ» ճամբուն՝ կատարելութեան ուղիին: Երբ անձ մը հոգեւոր կեանքի կը ձգտի,

չատ դիւրին է մի քանի օրէնքներու հետեւիլ եւ ինքզինք սրբացած նկատել: Բայց բուն հոգեւոր կեանքը Աստուծոյ «լոյս»-ը ու սէրը յայտնաբերել եւ զայն հանրութեան բաշխել է: Ահա՛, աս է ճշմարիտ պաշտամունքը եւ ոչ թէ հետեւիլ մի քանի կրօնական օրէնքներու:

Վերելի մէջբերումին մէջ Յիսուս բացայայտ է երբ կ'ըսէ բոլորին իրաւունք տալ, կարեկից ըլլալ եւ հաւատք ունենալ: Յատկապէս հաւատք ունենալը Աստուծոյ վստահիլն է: Մեր կեանքի բոլոր պատահարները Աստուծոյ կամքն են եւ այդպէս ալ պէտք է ըլլան: Կը կարծուի, թէ եկեղեցի երթալով, պահք բռնելով, հաղորդութիւն առնելով եւ նուիրատուութիւն ընելով կրօնական պարտականութիւնը կատարուած կ'ըլլայ: Ճիշդ է, կրօնական պարտականութիւնը կատարուած կ'ըլլայ, բայց ոչ հոգեւոր կեանքի՝ Աստուծոյ հանդէպ եղած պարտականութիւնը: Սխալ հասկացողութիւն պէտք չէ ըլլայ, պահքը, հաղորդութիւնը եւ եկեղեցի երթալ շատ կարեւոր արարքներ են: Բայց եթէ անհատը զանոնք կ'ընէ միայն առ ի սովորութիւն եւ ներքին փոփոխութիւն մը չ'ունենար, բոլորն ալ ի զուր են: Յիսուս կը մատնանչէ, թէ կարեւորը կրօնական օրէնքները չեն այլ կատարելութեան ուղին՝ Աստուածահաճոյ կենցաղը: Իսկ «որ զմօղուկս քամէք, եւ զուղտս կլանէք» խօսքով Յիսուս կ'ամբարպնդէ իր ըսածը, այսինքն ան որ կարեւոր չէ՝ «մօեղին», կարեւորութիւն կու տաք, իսկ ան որ կարեւոր է՝ «ուղտը» կուլ կու տաք՝ կ'անտեսէք:

«Վայ՛ ձեզ ... զի սրբէք զարտաքին զբաժակին եւ զսկաւառակի եւ 'ի ներքոյ լի՛ են յափշտակութեամբ եւ անխառնութեամբ»: «Վայ՛ ձեզ ... զի նման էք գերեզմանաց բերդոյ, որ արտաքոյ երեւին գեղեցիկք, եւ 'ի ներքոյ լի՛ են ոսկերօք մեռելոյ, եւ ամենայն պղծութեամբ»:

Այս երկու «վայ՛»-երը կ'ամփոփեն կեղծազործութիւնը, այսինքն երեւիլ այնպէս, ինչպէս որ չենք: Մարդ

ամենամեծ կեղծաւորութիւնը ինք իրեն դէմ կ'ընէ: Երբ կը ջանայ հանրութեան լաւ երեւալ, կը կարծէ, թէ ինք որոշ մակարդակի մը հասած է: Ասիկա իր «Յս»-ին խաբեբայութեանը արդիւնքն է: Երբ մարդ նիւթապէս կը հարստանայ, կը կարծէ, թէ կեանքին մէջ յաջողած է: Ճշմարիտ կեանքի յաջողութիւնը կ'ըլլայ միայն այն ատեն, երբ անձը իր կեանքի բուն պարտականութիւնը լրիւ կը կատարէ, կեանքին մէջ իրեն տրուած բոլոր պատասխանատուութիւնները կը ստանձնէ եւ բացարձակ ինքնագոհողութեամբ զանոնք իր կարողութեան սահմաններուն մէջ ամենալաւ կերպով կը կատարէ: Իր պատասխանատուութիւնները աշխարհի վրայ ամէն ինչ խնամելն է, իսկ իր պարտականութիւնն ալ՝ Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնել:

«Վա՛յ յեւ դարաց եւ փարիսէացոց կեղծաւորաց. զի շինէ՛ք զշիրիմս մարգարէից, եւ զարդարէ՛ք զգլխերեւմանս արդարոց: Եւ ասէ՛ք՝ Եթէ ես՛ք յառաւանս Ըարցն մերոց ո՛չ Ըաղորդեալ արեան մարգարէիցըն: Եպա ուրեմն վկայէ՛ք զանձանց՝ Եթէ որդի՛ք է՛ք այնոցիկ՝ որ կոյրորէին զմարգարէան: Եւ դուք՛ք լցէ՛ք զշափ Ըարցն յերոց: Օ՛ յէ՛ Ձնս՝ նորդ իժից, զիս՛րդ փախնացուք՝ ՚ի դարաստանէ Գեղեանի: Վասն այդորիկ՝ աւաստիկ ես ասալէ՛մ աս յեւ մարգարէս, եւ իմաստունս, եւ դպիրս. ՚ի նոցանէ ոպանանիցե՛ք, եւ ՚ի խաշ Ըանիցե՛ք, եւ ՚ի նոցանէ քանջիցե՛ք ՚ի ժողովորդս յեր, եւ Ըալաթիցե՛ք ՚ի խաղալէ՛ք ՚ի խաղալ: Որպէս զի եկեսցէ ՚ի վերայ յեր ասեւնայն արի՛ւն արդար Ըեղեալ յերկրի. յարեւելն Աբելի՛ արդարոց մինչեւ ցարի՛ւնս Զատա-

րիայ որդեգրող Բարախեայ՝ զոր սպանել է ընդ մեջ Գա-
ճարին եւ սեղանոյ: Ամեն ասե՛մ եկեացէ՛ այն ամե-
նայն ՚ի վերայ ապրիս այսորիկ»: (Մարգեևոս ԻԳ: 29-36)
«Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ ու Փարիսեցիներ, որ
կը կառուցանէք մարգարէներուն տապանները եւ կը
զարդարէք արդարներուն գերեզմանները, ու կ'ըսէք. Եթէ
մեր Հայրերուն օրերը ըլլայինք՝ անոնց հետ կամակից
չէինք ըլլար մարգարէներուն արիւնին թափուելուն: Հե-
տեաւար դո՛ւք կը վկայէք ձեր մասին, թէ որդիներն
էք անոնց՝ որ կը սպաննէին մարգարէները: Ուստի դո՛ւք
ալ ձեր Հայրերուն չափը լեցուցէք: Օձե՛ր, իժերո՛ւ ծնունդ-
ներ, ի՞նչպէս պիտի խուսափիք գեհե՛նի դատապարտու-
թենէն: Ուստի ա՛հա՛ ես կը ղրկեմ ձեզի մարգարէներ եւ
խմատուններ ու դպիրներ: Անոնցմէ ոմանք պիտի սպան-
նէք եւ խաչէք, ոմանք ալ պիտի խարազանէք ձեր ժողո-
վարաններուն մէջ ու հալածէք քաղաքէ քաղաք: Որպէս-
զի ձեր վրայ գայ երկրի վրայ թափուած ամբողջ արդար
արիւնը, արդար Աբելի արիւնէն մինչեւ Բարաբիայի որ-
դիին՝ Չաքարիայի արիւնը, որ սպաննեցիք տաճարին եւ
գոհասեղանին միջեւ: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձե-
զի: Այս բոլոր բաները պիտի գան այս սերունդին վրայ»:
(Տես նաեւ Ղուկաս ԺԱ: 47-51)

Աւետարանին այս մէջբերումը նախորդին շարու-
նակութիւնն է: Յիսուս իր այս խօսքերով դարձեալ
բացայայտ կ'ընէ, թէ նման կեղծաւոր կենցաղ մը անձը
պիտի ենթարկէ պատշաճ պատիժի: Երբ ան կ'ըսէ.
«Օձք՝ ծնունդք իժից», ահնարկը մարդուն «Ես»-ին է:
Մարդուն «Ես»-ը սատանան է: Միթէ սատանան օձի
կերպարանքով չխաբե՞ց Եւան: Երբ մարդուն անհատա-
կանութիւնը կը յարի դէպի իր «Ես»-ը եւ կը խորհի, կը
խօսի ու կը գործէ ըստ «Ես»-ին կամքին, ինք ալ կ'ըլ-
լայ օձ՝ սատանայ: Յիսուս «օձ»-ը փոխաբերաբար կը
գործածէ զանոնք անձնասէր եւ եսասէր կոչելու նպա-
տակաւ: Յիսուս նաեւ կը մատնանչէ այն բոլոր մեղքե-
րը, որ անոնք գործած են ու պիտի գործեն: Այս հիման
վրայ ալ անոնք բոլորն ալ պիտի ենթարկուին իրենց

գործած մեղքերուն յառաջ բերած հակազդեցութիւններուն, որոնք իրենց կրելիք պատիժները կ'ըլլան: Ինչպէս Յիսուս ըսաւ, Հրեայ ազգը իր գործած մեղքերուն համար երկու հազար տարի ցիրուցան եղաւ, նմանապէս մենք՝ Հայերս ալ ցիրուցան եղանք մեր գործած մեղքերուն համար: Արդեօք կեղծաւորութեան կեանք մըն էր ընդհանուր Հայութեան կենցաղը: Արդեօք մեր դասը սորված ե՞նք, ապա թէ ոչ պոռոտախօսութիւնները եւ կեղծաւորութիւնները տակաւին կը շարունակուին: Աստուած ողորմի մեզի: Բայց եթէ մենք զմեզ չփոխենք, Աստուծոյ ողորմութիւնն ալ մեզ չի գտներ:

«... Սախ՝ զԳ՛ո՛յշ լեբո՛ւն անձանց ՚ի խմորոյ
ասորո՛ւկեցո՛ոցն, որ է կեղծաւորո՛ւթիւն: Զի
ո՛շինչ է ՚ի թաթո՛ւկ՝ որ ոչ յայտնեացի, ե-
Գաղտնի՛ որ ո՛չ թանկոյի: Վասն զի զոր ինչ
ասիցէ՛ն ՚ի խաւարի, լսելի լիցի ՚ի լ՛ոյս: Եւ զոր
յո՛ւնկանէն խօսեցարո՛ւն ՚ի շրեմարանս, խարոյճո-
ցի ՚ի վերայ ցանեաց:» (Ղուկաս ԺԲ:1-3)

«Զգուշացէ՛ք Փարիսեցիներու խմորէն, որ կեղծաւորութիւնն է: Որովհետեւ ոչինչ կայ ծածկուած՝ որ պիտի չյայտնուի: Ուստի ինչ որ ըսիք խաւարին մէջ՝ պիտի լսուի լոյսին մէջ, եւ այն որ խօսեցաք ներքին սենեակներուն մէջ՝ պիտի հրապարակուի տանիքներուն վրայ:»

Յիսուսին այս խօսքերը, ասկէ առաջուան երկու մէջբերումներուն թէ՛ շարունակութիւնն են, թէ՛ ալ Իր մեզի տուած յորդորը եւ զգուշացումը: Անտարակոյս զգուշացումը կեղծաւորութեան դէմ է: Յիսուս նաեւ կը յայտարարէ, թէ ոչինչ անյայտ կը մնայ եւ ուշ կամ կանուխ կը յայտնուի: Շատեր կը կարծեն, թէ իրենց սուտերը գաղտնի կը մնան եւ ժամանակի ընթացքին կը մոռցուին: Աչխարհի վրայ կարելի է, այս հայեացքը ճիշդ ըլլայ, նոյնիսկ կարելի է, որ անձը իր սուտը

մոռցած ըլլայ, բայց ժամանակի ընթացքին բոլորը կը յայտնաբերուին: Կարելի է անհատը ըսէ. «Հոգս ըլլար, ես մեռնելէս վերջ սուտիս յայտնուիլը ինծի վնաս մը չի կրնար ունենալ»: Ան միշտ կը մոռնայ, թէ իր հոգին անմահ է եւ ինք իր մէջ զօրութեան «մարմին» մը ունի, որ իր մէջ տեղեկութիւն կը պարունակէ: Զա՛յն ոգի կը կոչենք: Մարդուն Ֆիզիքական մարմնին մահուան օրը իր ոգին դէմ-առ-դէմ կու գայ իր կեանքի բոլոր սուտերուն հետ որ իր մէջ պարունակած տեղեկութիւններուն մաս կը կազմէ ու ինք կը զղջայ, որովհետեւ գիտէ իր վճարելիք պարտքերը՝ պատիժը:



ՏԱՃԱՐԻՆ ԱԿԵՐՈՒՄ

«Եւ ելեալ արքայն Յիսուս ՚ի Կաճարէն՝
Գնա՛յր. Եւ մարեան աշակերտքին ցո-ցանէ՛լ նմա
սշինո-աթս Կաճարին: Եւ նա՛ պարասխանի՛ Եր-
Եւ ասէ ցնոսա. Տէսանիցէ՞ք սայր ամենայն,
ամէն ամէն ասե՛մ ո՛չ մնասցէ սայր ինքն՝ ՚ի

ինքն զրայ որ ոչ լակտեացի»: (Մարթէոս ԻԴ:1-2)
«Երբ Յիսուս՝ տաճարէն դուրս ելլելով՝ կը մեկնէր,
աշակերտները գացին անոր քով՝ ցուցնելու անոր
տաճարին շէնքերը: Յիսուս ըսաւ անոնց. «Ձէ՞ք տեսներ
այդ բոլորը. ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Քար
քարի վրայ պիտի չմնայ, ամէնը պիտի քակուի»:

(Տես նաեւ Ղուկաս ԻԱ:5-6 եւ Մարկոս ԺԳ:1-2)

*Անտարակոյս այս երկու համարներուն իմաստը
չատ պարզ ըլլալ կը թուի: Յիսուս Քրիստոս ամենագէտ
ըլլալով գուշակեց Երուսաղէմի տաճարին կործանումը,
որ տեղի ունեցաւ եօթանասունական թուականներուն:
Բայց պէտք է մոռնալ, թէ Յիսուս այլուր ըսած էր.
«այս տաճարը պիտի փլցնեմ եւ երեք օրէն վերականգ-
նեմ»: Մարդ արարած ընդհանուր առմամբ հպարտ է իր
Փիզիքական մարմնով եւ անոր կարողութիւններով:
Աշակերտներուն տաճարին շէնքերը Յիսուսին ցուցնել-
ուն իմաստը այդ հպարտութիւնն է: Միթէ մարդուն
մարմինը Աստուծոյ տաճարը չէ՞: Հետեւաբար Յիսուս
կ'ըսէ թէ մարմինը, որով մարդ այդքան հպարտ է,
պիտի կործանի ու կորսուի: Մարմինը մահկանացու է:
Երուսաղէմի տաճարին կործանումով Աստուած չազ-
դուեցաւ միայն տաճարը փլաւ եւ անհետացաւ: Երբ
տաճարը Աստուծոյ չի ծառայեր այլեւս անոր գոյու-
թեան կարիք չկայ: Հրեաները պղծած էին զայն եւ
կ'օգտագործէին իրենց անձնական շահերուն համար:
Նմանապէս մարդուն մարմինն մահովն ալ անոր հոգին
բնաւ չազդուիր: Երբ մարմինը այլեւս հոգիին չի ծառա-
յեր, հոգին ալ զայն կը թողու՝ կը կործանէ:*

ՏԱՍՊԱՆՔՆԵՐ ԵՒ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ

«Եւ մինչդեռ նսրէր 'ի լեռինն Չիբէնեաց, մարտան առ նա աշակերտէն առանձինն՝ էւ ասէն. Ըստ՝ մեզ՝ էրբ լինիցի այդ, էւ կամ պի՞նչ նշան իցէ իոյոյ Բայապեանն, էւ վախճանի աշխարհիս: Պարասխանի եր Յիսուս՝ էւ ասէ ցնոսս. ԶԳո՛յՅ լեռո՞ւ զԳոցէ ոչ պէտք խաբիցէ: Զի թառո՞մէ Բայցեն յանուան իմ, էւ ասիցեն՝ թէ է՛ս էմ Քրիստոսն, էւ պառո՞մս մուրեցոցանիցեն: Լուսնո՛ց էի պարերազմո՞նս՝ էւ պամբասո պարերազմաց. ԶԳո՛յՅ լեռո՞ւ զմի՛ խոո՞ վեաջի, պի պարք է լինել այնմ ամենայնի, այլ շէ՛ր է կարարած: Յարիցէ՛ ազգ յազգի վերայ, էւ թագա՞որո՞թիւն 'ի թագա՞որո՞թեան. էւ եղիցին սո՛վի էւ սրածո՞թիւնի, էւ ասանո՞թիւնի 'ի րեղիս րեղիս: Սակայն էւ այն ամենայն՝ սկի՛ պէն է երկանց: Յայնժամ մարտնեացեն պէտք 'ի նեղո՞թիւն, էւ սղանանիցէ՛ն պէտք էւ եղիջի յարեցեալի յամենայն ազգաց վասն անոսան իմոյ: Եւ յայնժամ Բայթագղեացէ՛ն թառո՞մի, էւ պիմեանս մարտնեացեն՝ էւ արեացէ՛ն պիմեանս: Եւ թառո՞մ սոոք մարտարէի յարիցեն, էւ պառո՞մս մուրեցոցան: Եւ վասն թառոմանալոյ անօրէնո՞թեանն, ցամա՛իեացի՛ սէր թառոմաց: Բայց որ Համբերեացն 'ի սպար, նա կեցցէ՛: Եւ իարոպեացի՛ ասեղարանս արիւայո՞թեան ընդ ամենայն րիւսերոս՝ 'ի վկայո՞թիւն ամենայն Հեթանոսաց. էւ սպա՛ իկեացէ կարարած»: (Մարթեոս ԻԳ: 3-14)

«Ու երբ ան նստած էր Ձիթենիներու լեռը, աշակերտները գացին իրեն՝ առանձին, եւ ըսին. «Ըսէ՛ մեզի, ե՞րբ պիտի ըլլայ ատիկա, ու ի՞նչ պիտի ըլլայ նշանը քու գալուստիդ եւ աշխարհի վախճանին»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ձգուչացէ՛ք որ ո՛չ մէկը մոլորեցնէ ձեզ: Որովհետեւ շատե՛ր պիտի գան իմ անուովս եւ ըսեն. Ե՛ս եմ Քրիստոսը, ու պիտի մոլորեցնեն շատերը: Պիտի լսէք պատերազմներու մասին, եւ պատերազմներու տարածայնութիւններ. գգուչացէ՛ք՝ որ չվրովիք, որովհետեւ պէ՛տք է որ այս ամէնը ըլլայ, բայց դեռ վախճանը չէ: Որովհետեւ ազգ ազգի դէմ պիտի ելլէ, ու թագաւորութիւն՝ թագաւորութեան դէմ. եւ տեղ-տեղ սովեր, ժանտախտներ ու երկրաշարժներ պիտի ըլլան: Սակայն ատե՛ք բոլոր ցաւերուն սկիզբն են: Այն ատեն պիտի մատնեն ձեզ տառապանքներու, պիտի սպաննեն ձեզ, ու բոլոր ազգերուն ատելի պիտի ըլլաք իմ անուովս Համար: Եւ այն ատեն շատե՛ր պիտի գայթակղին՝ պիտի մատնեն գիրար ու պիտի ատեն գիրար: Շա՛տ սուտ մարգարէներ պիտի ելլեն, եւ պիտի մոլորեցնեն շատերը: Անօրէնութեան բազմանալուն Համար՝ շատերո՛ւն սէրը պիտի պողի: Բայց ո՛վ որ սովայ մինչեւ վախճանը՝ անիկա՛ պիտի վրկուի: Այս արքայութեան աւետարանը պիտի քարոզուի ամբողջ երկրագունդին մէջ՝ իբր վկայութիւն բոլոր ազգերուն, եւ այն ատեն վախճանը պիտի գայ»:

(Տես նաեւ Ղուկաս ԻԱ:7-19 եւ Մարկոս ԺԳ:3-13)

Յիսուսի տաճարին կործանումին գուշակութենէն վերջ աշակերտները հարցուցին, թէ այդ երբ պիտի պատահի: Շատ հետաքրքրական են այս վերելի մէջբերումը եւ երկու յաջորդող մէջբերումները: Երեքն ալ իրարու շարունակութիւններ են: Աշակերտներուն հարցումէն այնպէս կը թուի, թէ անոնք աշխարհի վախճանին գալուստը մօտ ատենէն կ'ակնկալէին: Յիսուս այնպէս մը կը պատասխանէ, որ միջոց մը Ան Երուսաղէմի կործանումին մասին եւ աշակերտներուն կրելիք տառապանքներուն, չարչարանքներուն ու սպանութեան մասին կը թուի խօսիլ: Բայց միանգամայն Ան նաեւ կը թուի խօսիլ աշխարհի կործանումին մասին: Յիսուս կը գուշակէ նաեւ շատերուն մեր օրերու ըրած սուտ քա-

ըողզուլթիւնները, որոնք պիտի մոլորեցնեն ժողովուրդը: Միթէ այսօր չկան բազմաթիւ «քրիստոնեայ» աղանդներ, որոնք բոլորն ալ կը թուին ճշմարտութիւնը՝ Քրիստոս քարոզել: Անոնք կը խօսին Քրիստոսի անունով: Բարեբախտաբար տակաւին իրենք զիրենք Քրիստոս չեն հռչակած: Իսկ պատերազմները անընդհատ կը շարունակեն ինչպէս երկու հազար տարի առաջ, հիմա եւս: Դժբախտաբար ներկայ դարուս գիտութեան յառաջացումով պատերազմները աւելի սաստկացած են եւ կարող հսկայական աւերներ գործել, հիւլէական ռումբով ալ աշխարհ կործանել եւ անբնակելի դարձնել: Ժողովրդավարութեան եւ օրէնքի անուան տակ կառավարութիւններ ժողովուրդը կը քնացնեն: Իսկ ճշմարտութիւնը այն է, թէ անօրէնութիւնը՝ խաբէբայութիւնը թէ անհատներու եւ թէ կառավարութիւններու գործունէութեան մէջ գլխաւոր տեղ կը գրաւէ: Անտարակոյս ասոր պատճառն ալ անձնասիրութիւնը եւ եսասիրութիւնն է: Իսկ երբ անհատը անձնասէր է ինք սէր չունենար ոեւէ ուրիշ անձի մը նկատմամբ, աս է իմաստը երբ Յիսուս կ'ըսէ. «ցամաքեսցի՛ սեր բազմաց»: Երբ Յիսուս կ'ըսէ. «Եւ քարոզեսցի՛ աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս՝ ՚ի վկայութիւն ամենայն Հեթանոսաց. եւ ապա՛ եկեսցէ կատարած», շատեր կը կարծեն, թէ իրենց պարտականութիւնն է իրենց պատկանած աղանդին հասկցած քրիստոնէութիւնը համայն աշխարհի քարոզել: Կարծէք անոնք կը սպասեն աշխարհի վախճանը եւ զայն աւելի կանուխ բերելու համար միսիօնարութիւններ կ'ընեն եւ կը ջանան այլ կրօնքներու հետեւողները կրօնափոխ ընել: Յիսուս նոր կրօնք մը չսորվեցուց, այլ՝ կատարելութեան ուղին եւ ասա՛, այդ է արքայութեան աւետարանը եւ ոչ իրենց կարծեցեալ «քրիստոնեայ» կրօնքը: Փորձել ոեւէ մէկը կրօնափոխ ընել՝ Աստուած անարգել է:

ԱՒԵՐՈՒՄԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՅՏՈՒԹԻՒՆ

«Արդ՝ յորժամ Կրիստոսի զարթոնքի և անարթնության, որ ասեցեալն է՝ յեռն Դանիէլի մարգարէի. զի կայցէ՛ր Կրիստոսն արթնութեան. որ ընթեռնան՝ ՚ի մի՛ր ասցէ: Յայնժամ որ ՚ի Հրեասոսանի իցեն՝ փակեցեն ՚ի լերինս. եւ որ ՚ի Կանիս կայցէ, մի՛ իջցէ ասնու ինչ ՚ի Կանի իւրմէ. եւ որ յանդի իցէ, մի՛ դարձցի յեղս ասնու զչորչս իւր: Բայց զայ՛ն իցէ յղեաց եւ սքանդուաց յառաջն յայնոսիկ: Յաղօթս կայցէ՛ զի մի՛ լինիցի փակոսոսն յեր ճմերանի, եւ մի՛ ՚ի շաբաթոս: Զի եղիցի յայնժամ ներդրութիւն մե՛ծ, որպէսզի ո՛չ եղէ իսկզբանէ արարածոց աշխարհի մինչեւ ցայժմ, եւ ո՛չ այլ լիցի: Եւ եթէ ո՛չ կարճելն ասո՛ր զն այնո՞վիկ, ո՛չ աղբը ամենայն մարմին. Բայց զասն ընդերլոցն՝ կարճեացն ասոր զն այնո՞վիկ: Յայնժամ՝ թէ ո՞վ ասիցէ Յեզ՝ անասանի ասոր է Քրիստոսն կամ անդ, մի՛ ճանաչայցէ: Զի յարիցեն ասոր զքրիստոս զեւ ասոր մարգարէի, եւ Կայցեն նշանս մեծամեծս եւ արուեստս, մինչ մուրեցոցանել՝ թէ ճանար ինչ իցէ՛ եւ զընդերալսն: Ահա յառաջագոյն ասացի Յեզ: Ապա թէ ասիցեն Ահասանի յանապատի է, մի՛ ելանիցէ՛. եւ թէ անա՛ յըջտեմարանս է, մի՛ ճանաչայցէ: Զի որպէս փայլակն որ ելանէ յարեւելից՝ եւ երեւի մինչեւ յարեմոսոս, ասնպէս եղիցի Գալուսոսն որդոց մարդոց: Զի ուր Գեշն իցէ, անդոր ժողովեացին արթնութիւն» : (Մարթէոս ԻԳ:15-28)

«Ուրեմն երբ սուրբ տեղը հաստատուած տեսնէք աւերողին պղծութիւնը, - որու մասին Դանիէլ մարգարէին միջոցով խօսուած է, - (ո՛վ որ կարգայ՝ թող հասկնայ,) այն ատեն Հրէաստանի մէջ եղողները լեռնէ՛րը թող փախչին: Ա՛ն որ տանիքին վրայ է՝ թող չիջնէ իր տունէն որեւէ բան առնելու, եւ ա՛ն որ արտին մէջ է՝ թող չվերադառնայ իր հանդերձները առնելու: Բայց վա՛յ այդ օրերը յղի եղողներուն ու ծիծ տուողներուն: Ադ օթեցէ՛ք՝ որ ձեր փախուստը ձմեռը չըլլայ, ո՛չ ալ Շաբաթ օրը. քանի որ այն ատեն այնպիսի՛ մեծ տառապանք պիտի ըլլայ, որուն նմանը՝ աշխարհի ակիզքէն մինչեւ հիմա եղած չէ, ո՛չ ալ պիտի ըլլայ: Եթէ այդ օրերը չկարճնային, ո՛չ մէկ մարմին պիտի փրկուէր. բայց ընտրեալներուն համար այդ օրերը պիտի կարճնան: Այն ատեն եթէ մէկը ըսէ ձեզի. Ահա՛ հո՛ս է Քրիստոսը, կամ. Հո՛ն է, մի՛ հաւատաք: Որովհետեւ սուտ Քրիստոսներ ու սուտ մարգարէներ պիտի ելլեն, եւ ցոյց պիտի տան մեծ նշաններ ու սքանչելիքներ, որպէսզի՛ եթէ կարելի ըլլայ՝ մոլորեցնեն ընտրեալներն իսկ: Ահա՛ նախապէս ըսի ձեզի: Ուրեմն եթէ ըսեն ձեզի. Ահա՛ անապատին մէջ է, մի՛ երթաք. կամ. Ահա՛ ներքին սենեակներուն մէջ է, մի՛ հաւատաք: Քանի որ ինչպէս փայլակը կ'ելլէ արեւելքէն ու կ'երեւնայ մինչեւ արեւմուտք, այնպէս պիտի ըլլայ մարդու Որդիին գալուստը: Որովհետեւ ո՛ւր որ դիակ կայ, հո՛ն պիտի հաւաքուին արծիւները:»

Յիսուսի այս խօսքերը վաւերացումներն են նախորդ մէջբերումին մէջ ըսածներուն: Ըստ երեւոյթի, Յիսուս անգամ մը եւս կ'ակնարկէ Հրէաստանի կործանումին եւ հրեաներուն քաշելիք տառապանքին մասին, որովհետեւ կ'ըսէ. «Եւ մի՛ ՚ի շաբաթու»: Հրեաները շաբաթը սուրբ կը պահեն, հետեւաբար բնաւ պէտք չէ որեւէ գործ ընեն: Երբ Յիսուս կ'ըսէ. «Արդ՝ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածոյն», կը կարծենք, թէ Ան Երուսաղէմի մասին կ'ըսէ: Աշխարհաբար թարգմանութեան մէջ նաեւ աւելցուած է «սուրբ տեղը» բառերը: Հետեւաբար Սուրբ տեղն է որ պիտի աւերի ու պղծուի: Հրեաները եւ ինչու չէ որոշ չափով ալ մենք Երուսաղէմը կը նկատենք «սուրբ տեղ»: Ծշմարտութիւնը այն է թէ սուրբ տեղը

մարդուն հոգին է, ինչպէս նաեւ իր անհատականութիւնը՝ Լուսաբեր հրեշտակը, որ կ'աւետէր «Լոյս»-ին գալուստը՝ Քրիստոսի յայտնութիւնը անձին մէջ: Բայց երբ թշնամին՝ անձին «Ես»-ը, կը պղծէ այդ սուրբ տեղը, անձն ալ կ'ըլլայ եսասէր: Լուսաբեր հրեշտակին անկումըն ալ անհատին անհատականութեան աւերումն է եւ անոր մէջ այլեւս սրբութիւն չի մնար եւ կ'ըլլայ սատանայ: Այս հիման վրայ անհատին կրելիք տառապանքներն ալ կ'ըլլան անհեղինակ: Յիսուսին կարագրած «փախուստը» մեզ՝ հայերու հի՞ յիշեցներ մեր ժողովուրդին ենթարկուած տառապանքը հարիւր եւ հինգ տարի առաջուայ աքսորին ժամանակ: Մարդ միշտ իր ցանած հունտերուն հունձքը պարտ է քաղել: Երբ ինք կ'ըլլայ «սատանայ», այն ատեն ինք ալ կը գտնուի դժոխքի մէջ: Հետեւաբար տառապանքն ալ կ'ըլլայ իր ընկերը:

Յիսուսի յաջորդ սորվեցուցածը Քրիստոսի «երկրորդ գալուստին» մասին է: Ան կ'ըսէ. «Չի որպէս փայլակն որ ելանէ յարեւելից՝ եւ երեւի մինչեւ յարեւմուտս, ա՛յնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ»: Աւելի պատշաճ պիտի ըլլայ Յիսուսի ըսած այս նախադասութեան մեկնաբանութիւնը ընել յաջորդ մէջբերումին հետ, որովհետեւ անոնք իրարու շարունակութիւն են: Իբրեւ այդ մեկնաբանութեան պատրաստութիւն պարտ ենք հասկընալ, թէ Ստեղծագործութիւնը Աստուծոյ «մարմինն»ն է: Աստուած «Լոյս» է: Մենք ալ քանի որ ստեղծագործութեան մէջ ենք, ենք նաեւ այդ «Լոյս»-ին մէջ: Աստուծոյ Որդին Քրիստոս մեր հոգին է եւ մեր կեանքը՝ «Լոյս»-ը: Ահա աս է իմաստը Արեւազալի ժամերգութեան մէջ ի երգին «Լոյս ի Լուսոյ» բառերուն:

«Վաղվաղակի յեփ նեղութեան առուրցն այնոցիկ՝
արեգակն խաարեացի՛ եւ լուսին՝ ո՛չ րացէ պոյս
իւր. եւ ասրեղէ՛ անկցի՛ն յերկնից եւ սօրոտութեան՛

երկնից՝ շարժեսցին: Եւ ասպա՛ երեւեացի նշան որդե-
 ոոյ մարդոյ յերկնս. եւ յայնժամ կոծեսցին ամե-
 նայն ասպի՛ երկրի: Եւ ցեացեն զորդի մարդոոյ եկ-
 եա՛լ ՚ի վերայ ամոոոց երկնից զօրո՞ւթեամբ՝ եւ փա-
 ոօ՛ւ թաւմօ՛ւ: Եւ ասա՛նէեացէ զԵրեւոյանս իւր փողով
 մեծաւ, եւ ժողովեացեն զընտրեալս նորա՛ ՚ի շորից
 Հողմոոց՝ ՚ի ժադա՛ց երկնից մինչեւ՝ ՚ի ժադա նոոցա՛ » :
 (Մարտիոս ԻԳ: 29-31)

«Եւ այդ օրերու տառապանքէն անմիջապէս ետք արեւը
 պիտի խաւարի ու լուսինը պիտի չտայ իր փայլը. աստ-
 դերը պիտի իյնան երկինքէն, երկինքի գօրութիւնները
 պիտի սարսին, եւ ա՛յն ատեն մարդու Որդիին նշանը պի-
 տի երեւնայ երկինքի մէջ: Այն ատեն երկրի բոլոր տոհ-
 մերը պիտի Հեծեծեն, ու պիտի տեսնեն մարդու Որդին՝ որ
 կու գայ երկինքի ամպերուն վրայ, գօրութեամբ ու մեծ
 փառքով: Եւ ան պիտի զրկէ իր Հրեշտակները բարձրա-
 ձայն փողով, ու պիտի Հաւաքեն իր ընտրեալները Հորս
 Հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը»:

(Տես նաեւ Ղուկաս ԻԱ:25-28 եւ Մարկոս ԺԳ:24-27)

«... ոչ Գայ արժայոթիւնն Լսորո՞ւթոյ խորանօ՛ւ .
 եւ շասիցեն թէ ա՛հա-ասիկ ասոք է՝ կամ անոք, զի
 ա՛հա արժայոթիւնն Լսորո՞ւթոյ ՚ի ներդա՛ ՚ի յեւ է » :
 (Ղուկասոս ԺԷ: 20-21)

«... Աստուծոյ թագաւորութիւնը դրո՛ւն երեւցած
 բաներով չի գար: Օր մըն ալ պիտի չըսեն թէ 'Ահա
 Հոս է', կամ 'Ահա' Հոն', վասն զի Աստուծոյ թագաւո-
 րութիւնը ձեր ներսն է»:

*Նախորդ մէջբերումին վերջաւորութիւնը եւ այս
 մէջբերումը իրարու շարունակութիւն են: Մատթէոսի
 Աւետարանին մէջ գրուած ին Համաձայն ընդհանուր առ-
 մամբ քրիստոնեաներուն մեծամասնութիւնը կը հաւա-
 տայ, թէ Յիսուս Քրիստոս աշխարհի վերջաւորութեան
 ամպերուն վրայէն հրեշտակներու փողերու հնչումով*

պիտի գայ ու բարիները վեր՝ երկինք պիտի յափշտակէ: Եւ այդ պիտի ըլլայ Քրիստոսի երկրորդ գալուստը: Անտարակոյս այս հայեացքը հիմնուած է Յիսուսի ըսածներուն բառացի հասկացողութեան վրայ: Բայց Յիսուս այդ խօսքերը անոնց բառացի իմաստով չէ ըսած այլ՝ անոնց վերացական՝ փոխաբերական իմաստովը: Այս հայեացքին ճիշդ ըլլալը կը հասկնանք հետեւեալ երկու կէտերէն: Նախ Յիսուս չ'ըսեր Քրիստոսի գալուստը, այլ կ'ըսէ Որդի մարդոյ գալուստը: Իսկ ալ աւելի համոզիչ կէտը Ղուկասի Աւետարանէն առնուած վերեւի յաւելեալ մէջըբերումն է: Հոն բացայայտ գրուած է, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը դուրսէն երեւցած բաներով չի գար, այլ կը թուի թէ ան անձնական ներքին փորձառութիւն մըն է, որ փայլակի մը նման անհատին ամբողջ հոլթիւնը կը գրաւէ: Այս փորձառութիւնը պարզապէս անդրադարձ մըն է: Մարդու որդին՝ մարդուն իր մօրմէն ծնունդը, իր ներքին Քրիստոսի առաջին գալուստն է: Միթէ մարդուն հոգին իր մէջ Քրիստոսի ներկայութիւնը չէ՞: Իսկ Քրիստոսի յայտնութիւնը մարդուն մէջ Քրիստոսի երկրորդ գալուստն է: Իր մարմնային ծնունդով մարդուն գալուստն ալ իր առաջինն է, բայց Քրիստոսի իր մէջ լրիւ յայտնութեամբ ան կ'ունենայ ճշմարիտ «վերստին ծընունդ» եւ կ'արժանանայ մարդու Որդիին երկրորդ գալուստին: «Երկրորդ գալուստ»-ը իւրաքանչիւր անհատին կու գայ այն ատեն երբ ան արժանի՝ է՝ «բարի»: Միթէ բարիները չէին, որ երկինք պիտի յափշտակուէին «երկրորդ գալուստին»՝ Աստուծոյ Թագաւորութեան գալուստին: Յափշտակութիւնը ակնթարթի մը մէջ գիտակցութեան մակարդակի բարձրացումն է, որով անձը կ'ունենայ վերեւ նշուած անդրադարձը Ան այդ անդրադարձը կ'ունենայ որովհետեւ ան առաջին անգամ ըլլալով ճշմարտութիւնը կը տեսնէ եւ կը հասկնայ:

ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՍԿԱԱԿ

«Ի Դսլենո՛յ անտի ուսարո՛ւնէ՝ զսուանն. զի յորժամ նորա ոստին կանդաստին, եւ ցերեւն ցցուիցի, Գիտէ՛ն թէ մե՛ր չ է ամառն: Սոյնպէս եւ դու՛ն՝ յորժամ արեանիցէ՛ն զս՛յս ամենայն, Գիտաս՞ջն՛ է թէ մեր չ է՛ ի դուրս: Ամեն ասե՛մ չեզ՛ եթէ ո՛չ անցցե՛ աշտս այս, մինչեւ ամենայն եղիցի: Երկինն է երկիր անցցեն, եւ թանն էմ մե՛ անցցեն»:
(Մարթէոս ԻԴ:32-35)

«Թգեհիէ՛ն սորվեցէք առակ մը. երբ անոր ոստերը կակուղանն եւ տերեւները ցցուին՝ կը հասկնաք թէ ամառը մօտ է: Նո՛յնպէս դուք՝ երբ տեսնէք այս բոլոր բաները, գիտցէ՛ք թէ մօտ է՛ դուներուն քով: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ այս բոլոր բաները ըլլան: Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնա՛ւ պիտի չանցնին»:
(Տես նաեւ Ղուկաս ԻԱ:29-33 եւ Մարկոս ԺԳ:28-31)

«Ասաց եւ ցժողովորդան. յորժամ արեանիցէ՛ն ամալ թագեալ յարեամտից, իսկո՛յն ասէ՛ն թէ անչրեւ Գայ, եւ լինի՛ այնպէս. եւ յորժամ հարսաշնչեալ, ասէ՛ն թէ խորշակ լինի, եւ լինի՛ այնպէս: Կե՛ղծաւորն՝ զերեսս երկնի եւ երկրի Գիտէ՛ն փորձել, իսկ զժամանակս զայս զիս՞րդ ո՛չ փորձէ՛ն»:
(Ղուկաս ԺԲ:54-56)

«Նաեւ ըսաւ բազմութիւններուն. «Երբ տեսնէք ամալ մը՝ արեւմուտքէն ելած, իսկոյն կ'ըսէք. Անձրեւ պիտի գայ, եւ արդարեւ կ'ըլլայ: Ու երբ հարաւային հովը փչէ, կ'ըսէք. Տաք պիտի ըլլայ, եւ այդպէս կ'ըլլայ: Կեղծաւորներ, գիտէ՛ք երկրի ու երկինքի երեսը քննել, հազա ի՛նչպէս չէք քննել այս ժամանակը»:
(Տես նաեւ Մատթէոս ԺԶ:2-3)

**Այս երկու օրինակներուն նպատակը նոյնն է:
Յիսուս այս երկու օրինակները կ'օգտագործէ ցոյց**

տալու համար մարդուն վախճանը: Երբ մարդ կը գործէ եսասիրութեամբ եւ անկէ յառաջ եկած զանազան անբաղձալի յատկութիւններով յայտնի կ'ըլլայ իրեն գալիք տառապանքները, այդ ալ ոչ շատ ուշ: Մեր մարդկային տեսանկիւնէ կը կարծենք թէ շատեր վատ կը վարուին եւ չեն պատժուիր: Պէտք չէ մոռնալ, թէ Աստուծոյ համար ժամանակ գոյութիւն չունի: Իսկ անոնք որոնք լի սիրով, կարեկից բոլորին, ինքնագոհ եւ օգնող կ'արժանանան երկրորդ գալուստին, նա մանաւանդ երբ անոնք նաեւ կը կարողանան «սուրբ սիրտ» կերտել, կը տեսնեն Աստուած, անոնց համար երկրորդ գալուստը մօտ է: Որովհետեւ Յիսուս Քրիստոս միշտ ճշմարտութիւնը խօսած է, Իր խօսքերը յաւիտեան կը մնան: Նոյնիսկ եթէ քրիստոնեայ կրօնքը աշխարհէն վերնայ, Յիսուս Քրիստոսի խօսքերը միշտ պիտի մնան:

Այս մէջբերումին մէջ նկատողութեան առնուելիք կէտ մը եւս կայ: Այս կէտն ալ Յիսուսի ըսած յաջորդ նախադասութիւնն է. «եթէ ո՛չ անցցէ ազգս այս, մինչեւ ամենայն եղիցի»: Շատ լաւ գիտենք թէ վերեւի բառացի հասկացողութեամբ երկրորդ գալուստը տակաւին չէ եղած, որովհետեւ աշխարհին վերջը տակաւին չէ եկած: Բայց Յիսուսի օրով հոն գտնուող սերունդը այլեւս անցած դացած է: Աս ալ փաստ մըն է, որ Յիսուսի ըսածները պէտք չէ բառացի իմաստով առնենք: Ստեփանոս նախասարկաւազը, որ այն օրուայ սերունդին կը պատկանէր, երբ ան կը քարկոծուէր, չմեռած Աստուծոյ թագաւորութիւնը տեսաւ: Աս ալ փաստ մըն է, թէ Աստուծոյ թագաւորութիւնը կու գայ ամէն անհատի իր պատշաճ ժամանակին, ըստ Աստուծոյ կամքին, կախեալ անձին արժանիքէն: Յաջորդ մէջբերումն ալ կը շեշտէ այն իրողութիւնը, թէ երկրորդ գալուստի՝ Քրիստոսի յայտնութեան երբ ըլլալը ոչ ոք գիտէ, բացի Հայր Աստուծմէ:

ՈՉ ՈՔ ԳՐՏԷ ՕՐԱ ՈՒ ԺԱՄԸ

«Բայց վասն առարն այնորիկ է- ժամո, ո՛չ ո՛վ
Գրիէ. ո՛չ Հրեշտակէ՛ երկնից, է- ո՛չ որդի՛ Բայց
միայն Հա՛յր: Այլ որպէս առարէն Նոյի, նո՛յնպէս
էղիցի Գալուստան որդւոյ մարդոյ: Զի որպէս էին
յառարան որ յառա՛ջ իան զՋրհեղեղն, ուրէին է-
ըմպէին, կանա՛յս առնէին է- արա՛նց լինէին, մին-
չէ- յորն՝ յորո՛ւմ էմո՛ր Նո՛յ՛ի ցապանն, է- ո՛չ
Գրիպային՝ մինչէ- էկն Ջրհեղեղն է- էբա՛րձ զամե-
նեաին: Ա՛յնպէս էղիցի է- Գալուստան որդւոյ մար-
դոյ: Յայնժամ թէ իցեն երկո՛ւ յաԳարակի, մին առ-
նոցո՛ւ է- մեան թողոցո՛ւ: Եւ էթէ երկո՛ւ առայ-
ցեն՝ ի մի երկանս, մին առնոցո՛ւ է- մեան թողոցո՛-
ցո՛ւ: Արթո՛ւն կայէ՛վ՝ զի ո՛չ Գրիէ՛վ յորո՛ւմ ժա-
մո՛ Տէրն յեր Գայ: Զայն Գրիպա՛ջի՛, էթէ
Գրիէ՛ր ցանոցէր՝ յորո՛ւմ պաճո՛ւ Գող Գայ,
ակէր՝ է- ո՛չ ցայր ակա՛ն Հապանել զբանն
իւրոյ: Վասն այնորիկ է- դո՛ւ՛կ՝ էղերո՛ւ՛կ պար-
բասդէ, զի յորո՛ւմ ժամո՛ ո՛չ ակն ունիցի՛վ՝
Գա՛յ որդի մարդոյ»: (Մարթէոս ԻԴ: 36-44)

«Իսկ այդ օրն ու ժամը՝ ո՛չ մէկ մարդ գիտէ, ո՛չ ալ
երկինքի հրեշտակները եւ ո՛չ Որդին, հապա՛ միայն իմ
Հայրս: Բայց ինչպէս Նոյի օրերուն պատահեցաւ, այն-
պէս ալ պիտի ըլլայ մարդու Որդիին գալուստը: Որովհետեւ
ինչպէս Ջրհեղեղէն առաջ եղած այն օրերը՝ կ՛ուսեին,
կը խմէին, կ՛ամուսնանային եւ ամուսնու-
թեան կու տային, մինչեւ այն օրը՝ երբ Նոյ մտաւ տա-
պանը, ու չգիտցան՝ մինչեւ որ Ջրհեղեղը եկաւ եւ քչեց
տարաւ բոլորը, այնպէս ալ պիտի ըլլայ մարդու Որդիին
գալուստը: Այն ատեն եթէ երկու մարդիկ արտի մը մէջ

ըլլան, մէկը պիտի առնուի եւ միւսը մնայ. ու եթէ երկու կիներ ջաղացքին մէջ աղան, մէկը պիտի առնուի եւ միւսը մնայ: Ուրեն արթնն կեցէք, որովհետեւ չէք գիտեր թէ ձեր Տէրը ո՛ր ժամուն պիտի գայ: Բայց սա՛ գիտցէք թէ եթէ տանուտէրը գիտնար թէ գիշերուան ո՛ր պահուն գողը կու գայ, արթուն կը կենար եւ չէր թոյլատրեր՝ որ ծակեն իր տունը: Ուստի դո՛ւք ալ պատրաստ կեցէք, որովհետեւ մարդու Որդին պիտի գայ այնպիսի ժամու մը՝ որ դուք չէք ակնկալեր»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԷ:26-30, 34-36 եւ Մարկոս ԺԳ:32-37)

Ինչպէս նախորդ մէջբերումին մեկնաբանութեան մէջ գրուած է այդ օրը մարդ չի գիտեր: Պէտք է հասկնանք, թէ Յիսուսի խօսքերէն այս մէջբերումին մէջ նկատողութեան առնուելիք երկու կէտեր կան: Մին աշխարհի վերջն է, իսկ միւսը Քրիստոսի երկրորդ գալուստը: Ընդհանուր մարդկութեան բռնած ընթացքին հետեւանք աշխարհի վրայ տեղի պիտի ունենայ մեծածաւալ բնական աղէտներ: Անոնք պատճառ պիտի ըլլան անտանելի տառապանքներու: Յայտնութեան գիրքին մէջ ալ գրուած են նման գուշակութիւններ՝ անդարմանելի հիւանդութիւններ, ջրհեղեղներ, երկրաշարժեր, սովեր, երաշտներ ...: Նաեւ պէտք է մոռնալ, թէ «Ջրկիրի դարաշրջանը» հարիւր քառասուն տարի յետոյ պիտի սկսի: (Տես «Աւետարանի Խորհուրդները Ա. - Յիսուսի կեանքէն դրուագներ» գիրքիս մէջ էջեր 101-104): Այս տառապանքները եւ աղէտները հասկցնելու համար Ան կ'օգտագործէ Նոյի ժամանակուան ջրհեղեղը իբրեւ օրինակ: Այսօրուայ աշխարհի ջերմութեան բարձրացումը պատրաստութիւններն են գալիք աղէտներուն: Դրժբախտաբար մարդիկ տակաւին չեն փոխեր իրենց կենցաղը: Երբ բնութեան զօրութիւններու ներդաշնակութիւնը կը խանգարուի եւ որոշ վճռական կէտը կ'անցնի, աղէտներն ալ կը պատահին: Ճշգրտօրէն ոչ մէկը գիտէ այդ ժամը: Բնութեան զօրութիւններուն օրէնքները Հայր Աստուծոյ դրած օրէնքներն են, հետեւաբար

միայն Աստուած գիտէ թէ երբ այդ վճռական սահմանը կ'անցնի եւ ներդաշնակութիւնը՝ կշիռը կը կորսուի:

Այս մէջբերումին երկրորդ մասը կը վերաբերի «Քրիստոսի երկրորդ գալուստին»: Որովհետեւ ասանհատական է եւ ոչ հանրային, Յիսուս կը մատնանշէ. «մին առնուցու եւ մեան թողուցո՛ւ»: Անհատին համար աշխարհի վերջը իր մարմնին մահուան օրն է: Մարդ չի գիտեր, թէ մահը իրեն երբ պիտի գայ, հետեւաբար Յիսուս կը յանձնարարէ միշտ պատրաստ ըլլալ: Ան փոխաբերաբար կ'օգտագործէ տանուտէրին եւ գողին օրինակը: Նոյնիսկ բոլոր անոնք, որոնք կատարելութեան ուղիէն կ'ընթանան չեն գիտեր, թէ երբ պիտի արժանանան իրենց մէջ Քրիստոսի յայտնութեան: Աս կ'ըլլայ միայն Հայր Աստուծոյ կամքով: Մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ «Արեւագալ»-ի ժամերգութեան իմաստը եւ նպատակը Հայր Աստուծմէ խնդրել է Քրիստոսի «Լոյս»-ին մեր մէջ յայտնութիւնը: Յարմար կը նկատեմ Արեւագալի ժամերգութեան Լոյս ի Լուսոյ երգին չորս տուններուն առաջին նախագասութիւնը ինչպէս նաեւ բոլորին վերջին նախագասութիւնը, որոնք չորսն ալ նոյնն են, հոս ներկայացնել: Այս երգին մէջ Հայր Աստուած, Որդին Աստուած եւ Ս. Հոգին Աստուած ներկայացուած են իբրեւ Լոյս եւ Լոյսին մէջ Լոյս:

Լոյս, արարիչ լուսոյ, առաջին ըյս. բնակեալը՝ ի ըյս
յանմատոյց, Հայր երկնաւոր, ...

Լոյս, ՚ի լուսոյ ծագումն, արեգակն արդար. անճառ
ծընունդ Հօր Որդի. ...

Լոյս, ՚ի Հօրէ բղխումն, աղբիւր բարութեան, Հոգիդ
սուրբ Աստուծոյ. ...

Լոյս, երբեակ եւ մի անբաժանելի սուրբ
Երրորդութիւն, ...

... ծագեայ ՚ի Հոգիս մեր ըզըյս քո իմանալի:

ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՍԱՆԸ

«Եւ յորժամ եկեացե որդի մարդոյ փառօղ իւրողէ՛
եւ ամենայն Ըրեշտակէ ընդ նմա, յայնժամ նար-
ցի՛ յաշնոփառաց իւրոց, եւ ժողովեացին առա-
ջի նորա ամենայն աշտէ, եւ մեկնեացե զնոսա՛ ՚ի
միմեանց, որպէս Ըողիւս զի մեկնէ զաւորիս յայժ-
եաց, եւ կացոսցե զաւորիսն ընդ աջմէ՛ իւրմէ
եւ զայժիսն՝ ՚ի Յաիմէ: Յայնժամ ասասցէ՛ թագա-
որն զայնոսիկ որ ընդ աջմէն իցեն. Եկա՛յն է
օրհնեալէ Ըօր իմոյ, ժառանգեցէ՛ ի զպարասար-
եալ յեզ արէյոթիւնն իսկզբանէ աշխարհի: Զի
վաղցեայ՝ եւ երո՛ւ է ինչ ուրեւ. ժարասեցի՛ եւ
արթոցեի ինչ. օրա՛ր էի՛ եւ ժողովեցեի զիս.
մերկ՝ եւ զգեցոցեի զիս. Ըիւանդ էի՛ եւ քեա-
եի զիս. ՚ի քանդի էի՛ եւ եկի՛ ի առ իս: Յայնժամ
պարասիսանի քացեն նմա արդարէն եւ ասասցեն.
Տեր՝ Երբ քեաաի զիւզ վաղցեալ՝ եւ կերակրե-
ցաի, կամ ժարասի՛ եւ արթոցաի: Երբ քեաաի
զիւզ օրար՝ եւ ժողովեցաի, կամ մերկ՝ եւ զգե-
ցոցաի: Երբ քեաաի զգեզ Ըիւանդ՝ կամ ՚ի
քանդի, եւ եկաի առ իւզ: Պարասիսանի քացե
թագաորն՝ եւ ասասցե ցնոսա. Ըմէն ասե՛մ յեզ,
որովԸեքեւ արարեի միում յեզբարցս այսոցիկ
փոխկանց՝ ինչ արարեի: Յայնժամ ասասցէ՛ եւ
ցայնոսիկ՝ որ ընդ աԸեկէն իցեն. Երթա՛յն յինէն՝
ա՛նիժեալէ ՚ի Ըորն յաիքեանկան, որ պարասար-
եալ է ասպանայի եւ Ըրեշտակաց նորա: Զի

ժողովուրդը՝ եւ՝ ո՛չ երբեք ինչ որ-որեւէ, ժարատեղի՝
եւ՝ ո՛չ արժողութիւններ. օրհնութիւններ՝ եւ՝ ո՛չ ժողովուրդ-
ներէն ո՛րեւէ, մերկ էի՝ եւ՝ ո՛չ պարտաւորութիւններ,
Հիւանդներ՝ եւ՝ ՚ի Բանդեր՝ եւ՝ ո՛չ արեւելի ո՛րեւէ:
Յայնժամ պարտաւորութիւններ չուրեք եւ՝ նոյնքան՝ եւ՝ աստու-
ածներ. Տէր՝ ե՞րբ արեւելի ո՛րեւէ ժողովուրդը՝ կամ ժա-
րատի, կամ օրհնութիւն, կամ մերկ, կամ Հիւանդ, կամ
՚ի Բանդեր, եւ՝ ո՛չ պարտաւորութիւններ ո՛րեւէ: Յայնժամ
պարտաւորութիւններ չուրեք եւ՝ աստուածներ. Ամեն աս-
տուած յետեւ, որովհետեւ ո՛չ արարելի միտքով ՚ի փոփո-
կանցս յայտնուեալ, եւ՝ ո՛չ ինչ արարելի: Եւ՝ երբեք-
ցեալ նոյնքան ՚ի արեւելի ո՛րեւէ յայտնուեալ, եւ՝ ար-
արարելի ՚ի կեանքի յայտնուեալ»: (Մատթ. 13:31-46)
«Երբ մարդու Որդին գայ իր փառքով՝ եւ բոլոր սուրբ
հրեշտակները իրեն հետ, այն ատեն պիտի բազմի իր
փառքի գահին վրայ: Բոլոր ազգերը պիտի հաւաքուին
անոր առջեւ, ու պիտի գատն ոչխարները այծերէն: Ոչ-
խարները պիտի կեցնէ իր աջ կողմը, իսկ այծերը՝ ձախ
կողմը: Այն ատեն թագաւորը պիտի ըսէ իր աջ կողմը
եղողներուն. Եկէ՛ք իմ Հօրս օրհնածները, ժառանգեցէ՛ք
այն թագաւորութիւնը, որ պատրաստուած է ձեզի հա-
մար՝ աշխարհի հիմնադրութենէն ի վեր: Որովհետեւ անօ-
թեցայ՝ եւ ուտելիք տուիք ինծի, ծարաւցայ՝ ու խմցուցիք
ինծի, օտարական էի՝ ներս ընդունեցիք զիս, մերկ էի՝
հագուեցուցիք զիս, հիւանդ էի՝ այցելեցիք ինծի, բանտի
մէջ էի՝ եկաք ինծի: Այն ատեն արդարները պիտի
պատասխանեն անոյ. Տէ՛ր՝ ե՞րբ տեսանք քեզ անօթեցած՝
եւ կերակրեցինք, կամ ծարաւցած՝ ու խմցուցինք. ե՞րբ
տեսանք քեզ օտարական՝ եւ ներս ընդունեցինք, կամ
մերկ՝ ու հագուեցուցինք. ե՞րբ տեսանք քեզ հիւանդ
կամ բանտի մէջ՝ ու եկանք քեզի: Թագաւորը պիտի
պատասխանէ անոյ. Ճշմարտապէս կը յայտարարեմ
ձեզի. «Քանի իմ այս եղբայրներուս փոքրագոյններէն
մէկուն ըրիք՝ ինծի՛ ըրիք»: Այն ատեն պիտի ըսէ նաեւ

իր ձախ կողմը եղողներուն. Հեռացէ՛ք ինձմէ, անիծեալներ, յաւիտենական կրակին մէջ՝ որ պատրաստուած է Չարախօսին եւ իր Հրեշտակներուն համար: Որովհետեւ անօթեցայ՝ ուտելիք չտուիք ինծի, ծարաւցայ՝ չխմցուցիք ինծի, օտարական էի՝ ներս չընդունեցիք զիս, մերկ էի՝ չհագուեցուցիք զիս, հիւանդ ու բանտի մէջ էի՝ չայցելեցիք ինծի: Այն ատեն անոնք ալ պիտի պատասխանեն. Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ անօթեցած, կամ ծարաւցած, կամ օտարական, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ, եւ չպատարկեցիրք քեզի: Այն ատեն պիտի պատասխանէ անոնց. Ճշմարտապէս կ'ըսեմ ձեզի. «Քանի ատոնց փոքրագոյններէն մէկուն չըրիք՝ ինծի՛ ալ չըրիք»: Ասոնք պիտի երթան յաւիտենական պատուհասին, իսկ արդարեւրը՝ յաւիտենական կեանքին»:

Յիսուսի այս խօսքերը ընդհանուր առմամբ առնուած եւ մեկնաբանուած են անոնց բառացի իմաստներով: Անտարակոյս մարդ իր ապրած կենցաղին՝ խորհուրդ, խօսք ու արարքներուն համար պիտի դատուի եւ դատողութեան համաձայն ալ պիտի զատուի եւ դասաւորուի «ոչխարներու» կամ «այծերու» իմբակին մէջ եւ ապագան ալ ըստ այնմ պիտի որոշուի: Ո՞վ է դատողը: Մարդուն մարմինը մահկանացու է, բայց հոգին՝ անմահ: Մարդու Որդին» անհատին հոգին՝ իր ներքին Քրիստոսն է: Ուրեմն մարդուն հոգին, որ անհատին ճշմարիտ էութիւնն է, զինք կը դատէ: Այդ դատաստանը ամենաարդարն է, որովհետեւ մարդ առանձինն ինք զինք կը դատէ, առանց իր «Ես»-ին խաբեբայական միջամտութեան, որովհետեւ մարդուն «Ես»-ն ալ իր մարմնին հետ մեռած է եւ անհետացած: Մարդուն ընդհանուր կեանքը իր մէջի բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներով ակնթարթի մը մէջ, շարժանկարի ժապաւէնի մը նման, իրեն կը ներկայանայ եւ մարդն ալ իր գործած ամենաչնչին մեղքէն մինչեւ ամենալուրջ մեղքին համար կը զղջայ եւ ինք իրեն կ'որոշէ պատշաճ վերամարմնացում: Եթէ ինք «այծ» եղած է յաջորդ կեանքը կ'ըլլայ «դժոխք»: Իսկ եթէ ինք «ոչխար» եղած է,

կեանքն ալ կ'ըլլայ «դրախտ» եւ արժանիներն ալ կ'արժանանան յաւիտենական կեանքի:

Այս մէջբերումին երկրորդ մասը Յիսուսի սորվեցողացած դասն է, թէ մարդ ինչ պէտք է ընէ, որպէսզի ան «ոչխար» ըլլայ եւ ոչ «այծ»: Իր այս խօսքերով Յիսուս շատ պարզօրէն մեզի կը սորվեցնէ Աստուածապաշտութիւնը: Մարդ արարած ընդհանուր առմամբ կը կարծէ, թէ Աստուածապաշտութիւնը եկեղեցի երթալ, մոմ վառել եւ հաղորդութիւն առնել է: Ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ արտայայտութիւնը՝ Լոյսն է: Այն հիման վրայ ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ «մարմին»-ն է: Հետեւաբար Աստուածապաշտութիւնն ալ սիրել, ինամել եւ պահպանել է Աստուծոյ «մարմին»-ը: Բայց այդ մարմինը կը պարունակէ բազմաթիւ «բջիջներ»: Ամէն մի անհատ, անասուն կամ բոյս ինչպէս նաեւ այն ինչ որ կը կոչենք անզգամ նիւթ՝ բոլորն ալ կը ներկայացնեն Աստուծոյ «մարմին»-ին մէջի «բջիջ»-ները: Ուրեմն պէտք չէ՞ նման հասկացողութեամբ վարուինք բոլորին հետ, ինչպէս Յիսուս ըսած է վերեւի Աւետարանի մէջբերումին մէջ. «Ամէն ասե՛ մ՛ ձեզ, որովհետեւ արարէք միում՝ յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք» եւ «Ամէն ասե՛ մ՛ ձեզ, որովհետեւ ո՛չ արարէք միում՝ ՚ի փոքրկանցս յայսցանէ, եւ ո՛չ ինձ արարէք»: Հետեւաբար մարդ արարած ինչ որ կ'ընէ բնութեան, բոյսի, անասունի կամ ոեւէ ուրիշ անձի մը, կ'ընէ Աստուծոյ՝ Քրիստոսի: Ամէն բանի հոգին, որ ամէն ինչ կը կենդանացնէ, Քրիստոսն է: Չե՞նք խորհիր, որ եթէ ամէն անհատ նման հայեացքով վարուի բոլորին հետ բոլորս ալ կ'արժանանանք յաւիտենական կեանքին եւ կ'իրականացնենք «երկրորդ գալուստը» ներկային մէջ: Միթէ յաւիտենական կեանքն ալ ժամանակի դրութեանէ դուրս ըլլալ եւ միայն ներկային մէջ ապրիլ չէ՞:

ԽԱՂԱՊՈՒԹԻՒՄ ԹԷ՛ ՍՈՒՐ ՈՒ ԲԱԺԱՆՈՒՄ

ԵՒ

ԱՇԱԿԵՐՑ ԸԼԼԱՎՈՒ ԳԻՒՆ

«Հո՛ւր եկի արկանել յերկեր: Եւ՝ զի՞նչ. կամիմ թէ արդե՛ն իսկ թորթո՛վէր: Եւ՝ մկրտո՞ւթիւն մի ունիմ մկրտել. եւ զիա՞րդ, փո՞ւթամ մինչեւ՝ կարարեցի: Համարի՛վ էթէ խաղաղո՞ւթի՞ւն եկի Կալ յերկեր, ո՛չ ասե՛մ Յէս, այլ թաժի՛նս: Զի եղիցին յայսմ Հեղե Հինգ՝ ՚ի Կա՛ն միո՞ւմ թաժանեալվ, երե՛վն՝ յերկո՞ց, եւ երկո՞վն՝ յերի՛ց: Բաժանեացի՛ Հայր՝ յորդո՞ոյ, եւ որդի՛ն՝ ՚ի Հօրէ. մայր՝ ՚ի դոսրէրէ, եւ դոսոսոր՝ ՚ի մօրէ. սկեաո՞ր՝ ՚ի Հարսնէ, եւ Հարսն՝ ՚ի սկեարէ իւրմէ»: (Ղոսկաա ժԻ՛: 49-53)

«Ես կրակ ձգելու եկայ երկրի վրայ, եւ ի՞նչ կ'ուզեմ՝ եթէ արդէն բորբոքած է: Բայց մկրտութիւնս՝ մը պիտի մկրտուիմ՝ եւ ի՛նչպէս կը կսկծիմ՝ մինչեւ որ կատարուի: Կը կարծէք թէ ես եկայ՝ երկրի վրայ խաղաղութի՞ւն տալու: Կ'ըսեմ ձեզի. Ո՛չ, Հապա՛ բաժանում: Որովհետեւ ասկէ ետք՝ մէկ տան մէջ Հինգը բաժնուած պիտի ըլլան իրարմէ. երեքը՝ երկուքէն, ու երկուքը՝ երեքէն: Հայրը պիտի բաժնուի որդիէն, ու որդին՝ Հօրմէն. մայրը՝ աղջիկէն, եւ աղջիկը՝ մօրմէն. կետուրը՝ իր Հարսնէ, ու Հարսը՝ իր կետուրէն»:

«Մի՛ Համարի՛վ էթէ եկի արկանել խաղաղո՞ւթիւն յերկեր. ո՛չ եկի արկանել խաղաղո՞ւթիւն. այլ սո՛ւր: Բանզի եկի վակե՛լ զայր՝ ՚ի Հօրէ իւրմէ, եւ զդոսոսորը ՚ի մօրէ, եւ զՀարսն ՚ի սկեարէ՛ իւրմէ: Եւ՝ թըշնամի՛վ ասն՝ ընդհանի՛վ իւր: Որ սիբէ զՀայր կամ զմայր ասուա՞ւել վան զիս, ո՛չ է ինձ արժանի: Եւ՝ որ սիբէ զդոսոսոր կամ զդոսոսոր ասուա՞ւել վան զիս, չէ՛ ինձ արժանի: Եւ՝ որ ո՛չ ասնոս զիս՝ չ իւր՝ եւ Գայ

պէննի իմ, չէ՛ ինչ արժանի: Որ Գրասնէ պանչն իւր՝
կորոսացէ՛ պնա, եւ որ կորոյս պանչն իւր վասն իմ,
Գրացէ՛ պնա»: (Մարթէոս Ժ:34-39)

«Մի՛ կարծէք թէ ես եկայ խաղաղութիւն ձգելու երկրի
վրայ: Ես եկայ ո՛չ թէ խաղաղութիւն ձգելու, հապա՛
սուր: Որովհետեւ եկայ զատելու մարդը իր հօրմէն, եւ
աղջիկը՝ իր մօրմէն, ու հարսը՝ իր կեսուրէն: Մարդուն
թշնամիները՝ իր տնեցիները պիտի ըլլան: Ա՛ն որ ինձ-
մէ աւելի կը սիրէ իր հայրը կամ մայրը՝ ինձի արժանի
չէ, եւ ա՛ն որ ինձմէ աւելի կը սիրէ իր որդին կամ
աղջիկը՝ ինձի արժանի չէ: Ա՛ն որ իր խաչը չ՛առնէր
ու իմ ետեւէս չի գար, ինձի արժանի չէ: Ա՛ն որ կը
գտնէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ա՛ն որ կը
կորսնցնէ իր անձը ինձի համար՝ պիտի գտնէ զայն»:

«Եւ երթայի՛ն ընդ նմա ժողովոսորդ թաղոսմի-
դարչաս՝ եւ ասէ ցնոսա: Եթէ ո՛վ Գա՛յ աս իս, եւ
ո՛չ ասրեայ պնայր իւր եւ պնայր, եւ պնի՛ն եւ
պորտիս, եւ պեղթա՛յրս եւ պիորս, նա՛ եւ պանչն
եւս իւր, ո՛չ կարէ իմ աշակէ՛րցո լինել: Զի որ ո՛չ
թառնայ պնաս իւր՝ եւ Գայ պննի իմ, ո՛չ կարէ իմ
աշակէրցո լինել: Ո՞վ ո՛վ ՚ի յէնջ կամիցի շինել աշ-
տարակ, եւ ո՛չ նախ նարեալ համարիցի՛ պթախան՝
եթէ ունիցի թաւակա՛ն ՚ի կարարոսմն: Զի Գոսցե
իբրեւ արկանիցե հիմն՝ եւ ո՛չ կարիցե կարարել,
ամենեւի՛նն որ քեանիցեն՝ սկանիցին թա՛ղք ասնել
պնա՛ եւ ասել: Թ՛է ա՛յս այր սկասա շինել՝ եւ ո՛չ
կարաց կարարել: Սամ ո՞ր թագաւոր՝ երթեալ քայցե
դարերասմ ընդ այլո՛ւմ թագաւորի. եւ ո՛չ նարեալ
նախ խորհիցի. եթէ կարո՞ղ իցե քասն հապարաս-
պրէ՛մ ունել պայնոսիկ որ Գայցե ՚ի վերայ նորս
վասն հապարաս: Լոյս թէ ոչ՝ մինչդեռ հեռա-

Գո՛յն իցե՛. Հրեշտակո՛ւթի՛նն առա՛վետալ՝ աղաշեփե՛
'ի խաղաղո՛ւթի՛նն: Լըդո՛ ա՛յսպէս ամենայն ո՛վ 'ի
Յէնջ, որ ո՛չ Հրաժարեփեփե՛ յամենայն ընշից իրօոց՝
ո՛չ կարէ իմ աշակերտո՛ւ լինել»: (Ղոսկաս ԺԻ:25-33)
«Իրեն Հետ մեծ բազմութիւններ կ'երթային. դառնալով
անոնց ըսաւ. «Եթէ մէկը ինծի գայ՝ բայց չատէ իր
հայրն ու մայրը, կ'ինը եւ զաւակները, եղբայրներն ու
քոյրերը, նաեւ իր անձը, չի կրնար իմ աշակերտս
ըլլալ: Ո՛վ որ չի կրեր իր խաչը եւ չի գար իմ ետեւէս,
չի կրնար իմ աշակերտս ըլլալ: Որովհետեւ ձեզմէ ո՛վ՝
եթէ ուզէ կառուցանել աշտարակ մը՝ նախ չի նստիր ու
հաշուեր ծախսը, թէ գայն լրացնելու կարողութիւն ունի՛.
որպէսզի երբ հիմը դնէ եւ չկարողանայ աւարտել, բոլոր
տեսնողները չսկսին ծաղրել զինք ու ըսել: Այս մարդը
սկսաւ կառուցանել, բայց չկարողացաւ աւարտել: Կամ
թէ ո՞ր թագաւորը՝ ուրիշ թագաւորի մը հետ պատերազմ-
մելու երթալէ առաջ՝ չի նստիր ու խորհրդակցիր, թէ արդ-
եօք տարը հազարով կրնայ դիմաւորել ան՝ որ քսան
հազարով կու գայ իրեն դէմ: Եթէ չի կրնար, քանի
դեռ ան հեռու է՝ դեսպան դրկելով խաղաղութիւն կը
խնդրէ: Ահա՛ այսպէս ալ ձեզմէ ան որ չհրաժարի իր
ամբողջ ինչքէն՝ չի կրնար իմ աշակերտս ըլլալ»:

**Վերեւի երեք տարբեր Աւետարաններէ առնուած
մէջբերումները կը թուին Յիսուս Քրիստոսը ներկա-
յացնել իբրեւ ընդհանուրին ըմբռնած հայեացքէն տար-
բեր նկարագրի տէր անձնաւորութիւն մը: Յիսուս եկաւ
մարդկութեան օգնելու համար եւ ինքզինք զոհեց մար-
դոց համար: Ի՞նչպէս կ'ըլլայ, որ ըսէ. «Հո՛ւր եկի արկա-
նել յերկիր» կամ «Մի՛ համարիք եթէ եկի արկանել
խաղաղութիւն յերկիր. ո՛չ եկի արկանել խաղաղութիւն.
այլ սո՛ւր»:** Յիսուս Քրիստոս այլուր ալ ըսած է. «Խա-
ղաղութիւն զիմ տամ ձեզ»: Այս երկու գաղափարները կը
թուին հակասական ըլլալ: Յիսուսի ոչ մէկ ըսածները
կամ ըրածները հակասական են, հետեւաբար ի՞նչ է
իմաստը վերեւի համարներուն:

Յիսուս նախ կը խօսի իր խաչելութեան մասին եւ

կսկծանք կը յայտնէ: Ոչ մէկ անձ կ'ուզէ նման չարչարանքի մը ենթարկուիլ: Բայց միանգամայն Յիսուս զայն կը կոչէ «մկրտութիւն»: «Մկրտութիւնը» անտարակոյս կը մատնանչէ «նոր սկիզբ» մը: Վերեւի երկու մէջբերումներուն մէջ Քրիստոս կը շեշտէ. «Չի որ ո՛չ բառնայ զիսաչ իւր՝ եւ գայ զկնի իմ, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել»: Ի՞նչ է իմաստը խաչը կրելուն: Մարդ պարտ է իր կեանքի բոլոր պատահարները՝ լաւ կամ վատ, առանց գանգատելու յօժարաբար ընդունիլ, իբրեւ Աստուծոյ կամօքը:

Անտարակոյս Քրիստոսի վերեւի բոլոր ըսածները կը ներկայացնեն կատարելութեան ուղին եւ մարդուն ճշմարիտ պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնը այս աշխարհիկ կեանքի ընթացքին, այսինքն իրեն աշակերտը ըլլալու պայմանները:

Ամէն զաւակի պարտականութիւնն է իր հայրը ու մայրը ինամեւ անոնց խոր ծերութեան օրերուն: Նաեւ ամէն հօր եւ մօր պարտականութիւնն է իրենց զաւակներուն ինամեւ ու դաստիարակել: Ուրեմն ի՞նչ է իմաստը երբ Քրիստոս կ'ըսէ. «Եթէ ոք՝ գա՛յ առ իս, եւ ո՛չ ատեսայ զհայր իւր եւ զմայր, եւ զկի՛նս եւ զորդիս, եւ զեղբայ՛րս եւ զքորս, նա՛ եւ զա՛նձս եւս իւր, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել»: Վստահաբար Քրիստոս չի յանձնարարեր ատել մեր ընտանեկան անդամները: Դժբախտաբար մարդ արարած կը կապուի իր ընտանիքին անդամներուն այնպիսի մը, որ կ'անտեսէ բոլոր ուրիշները: Որովհետեւ ան զանազանութիւնը կը կարծէ ճշմարտութիւն ըլլալ, չի կրնար հասկնալ, թէ ամէն ինչ եւ ամէն մարդ Քրիստոսն է: Քրիստոսի ըսածը սեփականացնելու եւ կապուածութեան դէմ է: Անտարակոյս ընտանեկան անդամները ինամեւ իրեն տրուած պատասխանատուութիւններէն մին է, որ անհատը պարտ է լաւագոյն կերպով ընել: Երբ մարդ իր ընտանիքին համար պատ-

ըստ է ուրիշներ գոհել, ատիկա ցոյց կու տայ թէ իր կապուածութիւնը եսասիրական է եւ ոչ մարդասիրական: Այս ուղղութեամբ յաջորդ մէջըբերումին մէջ Յիսուս Քրիստոս կը ստուգէ այս հայեացքը: Ընդհանուր ստեղծագործութիւնը Քրիստոսն է: Սիրել մին եւ ատել միւսը իսլաւամտութեան նշան է: Խաւարամիտն ալ չի կրնար Քրիստոսի աշակերտել: Քրիստոսի այդ ըսածը միայն ընտանեկան անդամներու համար չէ, այլ ամէն ինչի համար է: Հետեւեալ համարը ասոր օրինակն է. «Արդ՝ անյապես ամենայն ոք՝ ի ձեռք, որ ո՛չ հրաժարեցէ յամենայն ընչից իւրոց. ո՛չ կարէ իմ աշակերտ լինել»: Քրիստոսի համար նոյնիսկ վերոյիշեալ բոլոր ձերբազատումները կը թուին բաւարար չըլլալ: Քրիստոս յաւելեալ կ'ըսէ. «Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա, եւ որ կորոյս զանձն իւր վասն իմ, գտցէ զնա»: Մարդ ինքզինք նոյնիսկ ամբողջովին ձերբազատէ ընտանիքէ եւ ինչքերէ, ան դարձեալ կապուած կ'ըլլայ իր «Յս»-ին: Հետեւաբար ան որ չի կրնար ինքզինք ձերբազատել իր «Յս»-էն մարմնին մահուան հետ կը կորսնցնէ նաեւ իր անհատականութիւնը: Բայց եթէ իր անհատականութիւնը կարողանայ ինքզինք ձերբազատել իր «Յս»-էն եւ յարիլ իր ներքին Քրիստոսի (նշուած «վասն իմ» բառերով), մարմնին մահէն յետոյ իր անհատականութիւնը յարութիւն կ'առնէ (նշուած «գտնէ զնա» բառերով): Երբ մարդ Քրիստոսի աշակերտ կ'ըլլայ, ինք կը զատէ նեղ դուռը եւ կատարելութեան ուղին, ան կ'արժանանայ աւելի բարձր գիտակցութեան, ան նաեւ կը կերտէ «սուրբ սիրտ», կը տեսնէ միականութիւնը ամէն ինչի եւ ամէն անհատի: Իր կենցաղն ալ կը ցոլացնէ իր գիտակցութեան մակարդակը ու կը տեսնէ Քրիստոս ամենուրեք: Արդեօք կարելի է⁶, որ ինք կապուած ըլլայ ոեւէ ընտանեկան անդամի ու «տարբեր աչքով» նայի իր հարազատներուն եւ «ուրիշ աչքով» ալ նայի ոչ

Հարագատին: Միթէ բոլորն ալ նոյն Քրիստոսի արտա-
յայտութիւնները չե՞ն: Երբ Քրիստոս կ'ըսէ. «Եւ որ սիրէ
զուստը կամ զընտանիքս առաւել քան զիս, չէ՛ ինձ արժանի»,
որովհետեւ ան չի տեսներ անոնց մէջ Քրիստոսի ներ-
կայութիւնը եւ կը տեսնէ միայն արտաքինը, երեւելին՝
մարմինը, ինչպէս նաեւ միտքը եւ ոչ թէ զանոնք կեն-
դանացնողը, հետեւաբար ինչպէս արժանի կ'ըլլայ Քրիս-
տոսի յայտնութեան: Երբ Քրիստոս կ'ըսէ. «Մի՛ համա-
րիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ո՛չ եկի
արկանել խաղաղութիւն. այլ սո՛ւր», Ինք սուրը կը
ներկայացնէ իբրեւ կտրելու եւ զատելու միջոց: Որով-
հետեւ մարդ կը կարծէ թէ այդ ցանկութիւնները եւ
կապուածութիւնները իրեն ապահովութիւն, հետեւա-
բար խաղաղութիւն կու տան: Այդ խաղաղութիւնը
պարզ ժամանակաւոր մարդկային խաղաղութիւն մըն
է, որ յաճախ ենթակայ է խանգարումի: Երբ Քրիստոս
կ'ըսէ. «ո՛չ եկի արկանել խաղաղութիւն», Ինք այս մարդ-
կային խաղաղութեան համար է, որ կ'ըսէ: Բայց երբ
անձը կարողանայ լաւ աշակերտ ըլլալ, ան կ'արժանա-
նայ Աստուածային խաղաղութեան, որ է.

«Եւ խաղաղութիւնն Աստուծոյ՝ որ ՚ի վեր է ինն
զամենայն միտքս, պաշտօնս՝ զմիտքս յեր եւ զմիտքս ՚ի
Քրիստոս Յիսուս»: (Փիլիպեցիս Դ:7)

«Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ գերիվեր
է, պիտի պահպանէ ձեր սիրտերն ու մտածումները՝
Յիսուս Քրիստոսով»:

«Եւ անդ ժողովուրդն շուրջ զնովաւ նստելու եւ
իբրեւ ասացին ցնա, աւաւասիկ մայր ին եւ եղբարի
իս՝ կա՛ն արդարեայ, եւ խնդրեն զիւր: Պատասխանի
եց նոցա եւ ասէ. Ո՞չ է իմ մայր՝ կամ եղբարի:
Հայեցաւ շուրջ զիւրեւ զաշակերտսն զի նստելին,

Եւ ասէ. Եւս՛առիկ մայր իմ, եւ եղբարէ իմ:
Չի որ առնէ պկամս Եսորո՛ջոյ, նա՛ է իմ եղբայր՝
Եւ զո՛յր եւ մայր»: (Մարկոս Գ:32-35)

«բազմութիւնն ալ նստած էր անոր շուրջը: Երբ ըսին
իրեն. «Աւա՛ ջու մայրդ ու եղբայրներդ կը փնտռեն
քեզ դուրսը», ան ալ պատասխանեց անոնց. «Ո՞վ է իմ
մայրս, կամ որո՞նք են եղբայրներս»: Եւ նայելով իր շուր-
ջը նստողներուն՝ ըսաւ. «Աւա՛ մայրս ու եղբայրներս-
որովհետեւ ո՛վ որ կը գործադրէ Աստուծոյ կամքը,
անիկա՛ է իմ եղբայրս՝ քոյրս եւ մայրս»:

(Տես նաեւ Մատթէոս ԺԲ:48-50)

Վերեւի երեք մէջբերումներուն (Ղուկ. ԺԲ:49-53,
ԺԴ:25-33, Մատ. Ժ:34-39) մեկնաբանութեան մէջ ակնարկ
մը եղած էր Յիսուսի այս խօսքերուն վրայ: Յիսուս, որ
իր մէջ Քրիստոս լրիւ յայտնաբերած էր, կը տեսնէր
ամէն ինչի միականութիւնը: Յիսուս Քրիստոս որեւէ
խտրականութիւն չդրաւ իր հարազատներուն եւ ոչ
հարազատներուն միջեւ ու զանոնք իրարմէ չզանազա-
նեց, որովհետեւ Ան բոլորի մէջ միայն Քրիստոսի յայտ-
նութիւնը տեսաւ: «Չի որ առնէ զկամս Աստուծոյ»-ն է
այն անձը, որուն անհատականութիւնը կը յարի իր
ներքին Քրիստոսին եւ ոչ իր «Ես»-ին: Ճիշդ ասոր
համար է, որ ան կը կատարէ Աստուծոյ կամքը: Երբ
անհատականութիւնը կը յարի իր «Ես»-ին, այդ պարա-
զային ան կը կատարէ «Ես»-ին կամքը:



ՀԱԿԱՉԱԿՈՐԴԻՆ ՀԵՏ ՀՆԱՄՁԱՅԻՒԼ


«Ընդէ՞ր է- յանձանց իսկ ո՛չ ընդրեցէ՛լ պարժանն :
Յորժամ էրջայցես ընդ ոսոխի՛ շում առ իշխան,
'ի ճանապարհի՛ ցոր պահաշինն պերժանել 'ի նմանէ-
պի Գո-ցէ շարշիցէ՛ պէեպ առ դադա-որն, է- դա-
դա-որն մարտիցէ դահճի՛, է- դահճն արկանիցէ 'ի
բա՛նդ : Ըսէ՛մ վեպ, ո՛չ էլանիցես անդի՛ մինչէ- Ը-
դո-ցանիցես պէտրի՛ն բնիոնն» : (Ղուկաս ԺԲ : 57-59)
«Եւ ինչո՞ւ դուք ձեզմէ՛ չէք որոշեր իրաւունքը : Երբ
ստիկիւ Հետ երթաս իշխանին, ճամբան վուժա՛՝ ազատիլ
անկէ, որպէսզի դատաւորին առջեւ չքաշկուտէ քեզ,
դատաւորը՝ ստիկանին փյանձնէ քեզ, ու ստիկանն ալ
բանաւր չնետէ : Կը յայտարարեմ քեզի- Դուրս պիտի
չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին լուման» :

(Տես նաեւ Մատթէոս Ե:25-26)

*Յիսուս մարդկային կեանքէն այս օրինակը տալով
մեզի կը սորվեցնէ հոգեւոր կեանքի մէջ մեր դժուարու-
թիւնները պատշաճ կերպով լուծել : Ո՞վ է մարդուն
ոստիւր : Այս հարցումին պատասխանը կախեալ է թէ
այդ ո՞ր տեսանկիւնէ կը դիտենք : Մարդուն անհատակա-
նութեան ամենամեծ թշնամին իր «Ես»-ն է : Եթէ մարդ
արարած իր այս աշխարհիկ կեանքի մէջ իր «Ես»-ին
հետ ունեցած հարցը պատշաճ կերպով չլուծէ, ինք
դատաստանի պիտի ենթարկուի : Պատշաճ լուծումն ալ
ամբողջովին «Ես»-ը անտեսելն է եւ որեւէ կապ չունե-
նալ անոր հետ : Բայց մարդ ընդհանրապէս իր «Ես»-ին
կը յարի եւ անոր հետ ունեցած հակառակութիւնը կը
լուծէ : Նման պարագային իր բոլոր խորհուրդ, խօսք ու
արարքներն ալ կ'ըլլան ըստ իր «Ես»-ին կամքին : Ինք
ալ իր հոգին՝ Քրիստոս ընտրած կ'ըլլայ իբրեւ իրեն
հակառակորդ : Ինք պարտ է այս կեանքի ընթացքին իր
ստեղծած այս «թշնամութիւնը» հարթել : Ոչ թէ անհա-
տին հոգին անոր ոստիւն է, այլ ինք է, որ իր հոգիին կը*

հակառակի: Մարդուն մահուան օրը իր հոգին, որ անմահ է իր դատաւորը պիտի ըլլայ: Այս դատաստանը բացարձակ արդար է, որով մարդ ինքզինք կը դատէ եւ այս դատաստանի հիման վրայ հոգին կը վերամարմնանայ իր դասը սորվելու եւ բոլոր «պարտքերը» վճարելու համար: Յիսուսի ըսածն ալ այն է, թէ եթէ մարդ պիտի չուզէր դատուիլ, պարտ է մահէն առաջ ընթանայ կատարելութեան ուղիէն եւ յարի իր ներքին Քրիստոսին, քան թէ իր «Ես»-ին:

Մարդ ինք կը կերտէ իր ճակատագիրը եւ ինք կամ այս կամ ալ յաջորդ կեանքերու մէջ անկէ բախուստ չունի: Ահա՛, աս է Յիսուսի հետեւեալ խօսքին իմաստը. «ո՛չ ելանիցես անտի՛ մինչեւ հատուցանիցես պետի՛ն բնիոնն»:



Մ Ե Պ Ե Ր Ո Ւ Մ Հ Ա Տ Ո Ւ Յ Ո Ւ Մ

«Եկին ոմանի՛ ՚ի նմին ժամանակի, եւ պարտեցին նմա վասն Գալիլեացոցն, որոնց պարի՛ւնն Պեղասոս խառնեաց ընդ պահան նոցա: Պարասխանի ետ՛ եւ ասեցնոսա. Համարի՛վ ելել աս յն Գալիլեացի՞վ եղեն մեղաւոր՞վ ի վան պամենայն Գալիլեացիս, զի այնպիսի անցս կրեցին: Ո՛չ. ասե՛մ յեւ, այլ ելել ո՛չ առաջ խարիցել՛ ամենեկին նո՛յնպէս կորնշիջի՛վ: Կամ նովա ուրոսասանի՛ն, յորոց վերայ աշարարակն անկաւ՛ ՚ի Սիլովամ, եւ աղան՛ պնոսա. Համարի՛վ լել նովա՛ պարպառան՛վ եղեն ի վան պամենայն մարդիկ՛ որ լինակեալ են յերոսասղեմ: Ո՛չ. ասե՛մ յեւ, այլ լել ո՛չ առաջխարիցել՛ ամենեկեան նո՛յնպէս կորնշիջի՛վ»:

(Ղուկաս ԺԳ:1-5)

«Այդ ատեն ներկայ եղող ներէն ոմանք պատմեցին անոր այն Գալիլեացիներուն մասին, որոնց արիւնը Պիղատոս խառնեց իրենց գոհերուն հետ: Յիսուս պատասխանեց անոնց. «Կը կարծէ՞ք թէ այդ Գալիլեացիները ասելի մեղաւոր էին բոլոր Գալիլեացիներէն, քանի որ այսպիսի չարչարանքներ կրեցին: Կ'ըսեմ ձեզի՛ ո՛չ: Հապա եթէ չապաշխարէք՛, բոլորդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: Կամ թէ այն տասուլթ հոգիները, որոնց վրայ Սելովամի աշտարակը ինկաւ եւ սպաննեց զանոնք, կը կարծէ՞ք թէ անոնք Երուսաղէմ բնակող բոլոր մարդոցմէ ասելի յանցաւոր էին: Կ'ըսեմ ձեզի՛ ո՛չ: Հապա եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նմանապէս պիտի կորսուիք»:

Յիսուսի այս խօսքերը կը ներկայացնեն շարունակութիւնը նախորդ մէջբերումին: Ինչպէս վերեւ գրուած է, մարդիկ ազատում չունին իրենց կերտած ճակատագրէն: Յիսուս երկու զատ օրինակներ օգտագործելով կը շեշտէ տառապանքը եւ չարչարանքը: Օրինակներէն մին մարդկութեան գործածն է, իսկ միւսը՝ բնութեան: Ուրեմն մեր ճակատագրին յառաջ բերած

լաւ կամ վատ պատահարները կրնան մեզի պատահիլ իբրեւ բնութեան կամ մարդկութեան կողմէ եղած արարքներով, բայց Յիսուս այս անգամ կը խօսի միայն վատերուն մասին եւ իր գատած օրինակներն ալ վատ պատահարներու օրինակներ են ուր բազմաթիւ մարդիկ կը զոհուին՝ մեռնին: Հետաքրքրական է նաեւ Յիսուսի ըսածը, թէ միայն մեռնողները չեն որ յանցաւոր էին: Ուրեմն այս հիման վրայ, նաեւ հետեւցնելով նախորդ մէջբերումէն, ուր գրուած է, թէ ազատում չկայ մինչեւ վերջին լումային վճարումը, մարդ երբեմն իր կերտած ճակատագրին յառաջ բերած պատահարներուն կանուխէն կ'ենթարկուի, երբեմն ալ շատ աւելի ուշ: Ընդհանուր առմամբ այս ուշացումն է, որ արգելք կը հանդիսանայ, որ մարդ չկարենայ իր կենցաղին եւ իր ճակատագրին իրարու հետ ունեցած կապը տեսնել: Յիսուս երկու օրինակներուն մէջ կ'օգտագործէ մեռնողներու օրինակը եւ ոչ տարբեր աղէտներ: Աս ալ ակնարկ մըն է մարդուն իր մարմնին հետ իր անհատականութեան միասնաբար մահուան: Հոգին որ անմահ է, կերտուած ճակատագրին հիման վրայ, կը վերամարմնանայ եւ կ'առնէ նոր անհատականութիւն մը, բայց ոչ այն ինչ որ էր առաջուց: Ան մեռած ու անհետացած է:

Աւետարանին մէջ այլուր բացայայտ գրուած է.

«Զի Խոշակն մեղաց մաւ է»: (Հովհաննէս 9:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մաւ է»:

Յաջորդ մէջբերումը կը թուի բնական շարունակութիւնը ըլլալ Յիսուսի այս վերեւի երկու ըսած խօսքերուն: Յաջորդ մէջբերումին մէջ ալ Յիսուս բացատրութիւն կու տայ կատարելութեան ուղիին եւ փրկութեան մասին եւ կը մատնանշէ շատերու յաջողելու անկարողութիւնը:

Ելլէ՛ գոցէ դուռը եւ դուք մնաք դուրսը՝ ու սկսիք բախել դուռը եւ ըսել՝ Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց մեզի, ան ալ պիտի պատասխանէ՛ ձեզի. Ձեմ՝ ճանչնար ձեզ, ուրկէ՞ էք: Այն ատեն պիտի սկսիք ըսել. Մենք քու առջեւդ կեբանք ու խմեցիք, եւ դուն մեր հրապարակներուն մէջ սորվեցուցիր: Բայց ան պիտի ըսէ. Կ'ըսեմ ձեզի. «Ձեմ՝ ճանչնար ձեզ, ուրկէ՞ էք. հեռացէ՛ք ինձմէ՛ բոլորդ՝ անիրաւութիւն գործողներ»: Հոն պիտի ըլլայ լաց ու ակուաներու կըրճտում, երբ տեսնէք Աբրահամը, Իսահակը, Յակոբը եւ բոլոր մարգարէները՝ Աստուծոյ թագաւորութեան մէջ, իսկ դուք՝ դուրս հանուած: Այնտեղ պիտի գան արեւելքէն եւ արեւմուտքէն՝ հիւսիսէն ու հարաւէն եւ պիտի բազմին Աստուծոյ թագաւորութեան մէջ: Ու ահա՛ յետիններ կան՝ որոնք պիտի ըլլան առաջին, եւ առաջիններ՝ որոնք պիտի ըլլան յետին»:

(Տես նաեւ Մատթէոս է:13-14, 21-23)

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր, մոցե յարէայո-իւն-էրէնից, այլ որ ասնէ պէամս Ըոր իմոյ որ յերկինսն է» : (Մատթէոս է:21)

«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՛ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկիրքի թագաւորութիւնը, հապա ան՝ որ կը գործարէ իմ երկնաւոր Հօրս կամբը»:

Յիսուս իր այս խօսքերով կը ստուգէ կատարելութեան ուղիէն ընթանալու դժուարութիւնը: Ան զայն կը ներկայացնէ իբր «նեղ դուռ»-ը: Յիսուս դարձեալ կը յայտարարէ, թէ նոյնիսկ անոնք որոնք կը փափագին հոգեւոր կեանքը հետապնդել, մեծամասնութեամբ չեն յաջողիր մտնել նեղ դուռէն: Մարդ արարած կապուած իր մարմնին, «Ես»-ին եւ անհատականութեան, ընդհանրապէս զանոնք կորսնցնելու վախով կը վախնայ նաեւ մահէն: Ան անգիտակից է, թէ անոնք չեն ներկայացներ ճշմարտութիւնը եւ իր ճշմարիտ էութիւնը, այլ ճշմարտութիւնը այն է, թէ իր ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է: Երբ ինք կը զգայ, թէ մահը իրեն մօտեցած է, կը ջանայ իր խորհելակերպը եւ մտայնութիւնը փոխել եւ իր «Ես»-ը անտեսել, որպէսզի արժանանայ «յաւիտենա-

կան կեանքի»: Ան կ'աղօթէ փրկութեան համար: Աս կը համապատասխանէ Յիսուսին տուած օրինակին մէջի «տանուտէրին դուռը գոցելուն» եւ «ես ձեզ չեմ ճանչնար» ըսելուն: Նոյնիսկ այդ պահուն երբ մարդ «կ'ապաշխարէ» եւ կը ջանայ փրկութեան արժանանալ, ինք ցոյց կու տայ, թէ տակաւին իր «Ես»-ին կապուած է: Միթէ այլուր Յիսուս չէ՞ ըսած. «Ան որ փրկուիլ կ'ուզէ պիտի չփրկուի»: Նեղ դուրէն մտնելը մարդուն համար մեծ պայքար մըն է: Ուրեմն ան կը կարօտի հաւատքի, վճռականութեան եւ մեծ ջանքի: Կարելի չէ «փրկութեան» արժանանալ պարզապէս կը հաւատամ ըսելով: Նոյնիսկ մարդուն կեանքին նպատակը պէտք չէ փրկութիւնը ըլլալ, այլ՝ իրեն տրուած պարտականութիւնը լիովին կատարել: Այդ պարտականութիւնն ալ իր մէջ իր ներքին Քրիստոս յայտնաբերելն է: Երբ Յիսուս կ'ըսէ. «Եւ եկեսցեն յարեւելի՛ց եւ յարեւմտից, եւ՛ի Հիւսուսոյ եւ՛ի Հարաւոյ, եւ բազմեսցին յարքայութեան Աստուծոյ», կը նշանակէ թէ բոլոր ազգերէ եւ բոլոր կրօնքներէ յաջող անհատներ արժանի պիտի ըլլան Աստուծոյ թագաւորութեան: Դժբախտաբար ինչպէս քրիստոնէութեան մէջ կան յարանուանութիւններ, որոնք դժոխք «կը դրկեն» բոլոր անոնք, որ քրիստոնեայ չեն, շատ մը ուրիշ կրօնքներ ալ նոյնը կը «քարոզեն»: Նման հայեացք մը կը թուի հակառակ ըլլալ Յիսուսի սորվեցուցածներուն:

Վերելի Մատթէոսի է. գլուխէն առնուած համարն ալ յայտնի կ'ընէ թէ ընդհանուր քրիստոնէութեան բռնած ընթացքը սխալ է: Մենք կը պաշտենք Յիսուս Քրիստոս, քան թէ գործադրենք Հայր Աստուծոյ կամքը, որ մեզի տրուած պարտականութիւնն է: Անտարակոյս պարտ ենք պաշտել Յիսուս, ան մեր ուսուցիչն է: Բայց պաշտելը իրեն նմանիլն է եւ Հօր նման կատարեալ ըլլալը: Յիսուս այլուր սա ըսած է:

ԲՈՒԺԵԼ ԸՄՔԱԹ ՕՐՈՎ

«Եւ եղէւ 'ի մտանէլն նորա 'ի րո՛ւն ուրումն ի շխանակացն փարիսէցոց 'ի շաբաթո՛ւ ուրիւ Ըսաց Եւ նովա ապասէին նմա: Եւ աւա՛ ա՛յր ոմն էր անդ ջրգողեա՛լ առաջի նորա: Պարասխանի էր Յիսուս: Եւ ասէ ցօրինաորսն Եւ ցփարիսէցիսն. Եթէ արժա՞ն իցէ 'ի շաբաթո՛ւ թժշկել: Եւ նովա լո՛ւս եղէն: Եւ թ՛ո՛ւն Հարեալ զնմանէ՛ թժշկեա՛ց զնա, Եւ արշակեաց: Եւ ասէ ցնոսա. Ո՞ր ուրո՛ւն 'ի յէնջ է՛ շկամ է՛ զն անկանիցի 'ի ջրհոր, Եւ ո՛չ վաղվաղակի Հանիցէ զնա յառուր շաբաթո՛ւ: Եւ ո՛չ կարացին րա՛ւ նմա պարասխանի առ այն»: (Ղոսկաս ԺԴ:1-6)

«Երբ ինք Շաբաթ օր մը մտաւ Փարիսեցիներու պետերէն մէկուն տունը՝ Հաց ուտելու, անոնք կը Հսկէին իր վրայ: Եւ աւա՛ ջրգողեալ մարդ մը կար Հոն՝ իր առջեւ: Յիսուս խօսեցաւ օրինականներուն ու Փարիսեցիներուն՝ ըսելով. «Արտօնուած է Շաբաթ օրը բուժել»: Անոնք Հանդարտ կեցան: Իսկ ինք բռնեց զայն, բժշկեց եւ դրկեց. Ապա ըսաւ անոնց. «Ձեզմէ որո՞ւն էջը կամ եզը եթէ Հորը իցնայ, իսկոյն չի Հաներ զայն՝ Շաբաթ օրը»: Այս մասին չկրցան դիմադարձել անոր»:

Այս մէջբերումը պէտք չունի լայնածաւալ մեկնաբանութեան: Պարզ է Յիսուսի սորվեցուցած դասը: Հրեաները Շաբաթ օրը բնաւ չէին գործեր: Յիսուս Շաբաթ օրով հիւանդը բուժելով մեզի կը սորվեցնէ կրօնքի շատ մը անպէտ օրէնքները անտեսել եւ միայն Աստուածապաշտութիւն ընել: Իսկ Աստուածապաշտութիւնն ալ ծոնկի դալով եւ երկրպագելով չըլլար, այլ կարեկից ըլլալով, ուրիշին տառապանքը նուազեցնելով, ամէն ինչ սիրելով եւ Հոգատարութեամբ: Քանզի ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ արտայայտութիւնն է, հետեւաբար զայն խնամել կը նշանակէ զայն պաշտել:

ԽՈՒԱՐՀՈՒԹԻՒՄ ԵՒ ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՄ

«Ասաց էւ առ կոչնականան՝ առակ մի, Հայեց-
եալ թէ պիտի ըր Քարշընդի՛ր լինելին. ապէս զնոսս :
Յորժամ կոչեցէ ո՛վ պէ՛տպ ՚ի Հարսանիս՝ կամ ՚ի կո-
չունս, մի՛ Քապմեցիս յառաջին Քարշին. Գոցե
պարտականագո՞յն էս իսն պէ՛տպ իցէ կոչեցեալն
՚ի նմանէ. Եւ եկեալ՝ որ պէ՛տպն էս զնա՛ կոչեաց՝
ասիցէ պէ՛տպ՝ որո՛ւր սմա գեղի. էս ապա սկսանի-
ցիս ամօթով զչեցին գեղի՛ն ունել : Այլ յորժամ
կոչեցիս. երթեջի՛ր՝ Քապմեջի՛ր ՚ի յեցի՛ն գեղ-ող-
պի յորժամ Գայցէ որ կոչեացն պէ՛տպ. ասիցէ՛ ցէ՛տպ.
Բա՛րեկամ ՚ի վե՛ր մարի՛ր. յայնժամ եղիցին ի՛նչ
փա՛ռ-ի առաջի Քարշակցա՛ցն իոց : Զի ամենայն որ
Քարշրացոցանէ զանձն, խոնարհեացի՛ր. էս որ խո-
նարհեցոցանէ զանձն, Քարշրացի՛ր : Առէ՛ էս ցկոչ-
նարեղն. Յորժամ առնիցես ճա՛շ կամ ընթրիս, մի՛
կոչեր պիտարեկամս իո, էս մի՛ պեղքարս իո, էս մի՛
զապարհանս իո, էս մի՛ զտրացիս իո, էս մի՛ զմե-
ծամեծս. զի մի՛ էս նո՛վա փոխարէն կոչեացեն պէ՛տպ,
էս լինիցի ի՛նչ Հարոցոցոմն : Այլ յորժամ առնի-
ցես ընդունելութիւն. կոչեա՛ զաղիս՝ որս, էս զխե՛-
ղըս, զկա՛ղս էս զկո՛յրս : Եւ երանելի՛ լինիցիս. զի
ո՛չ ունին փոխարէն Հարոցոցանելոյ ի՛նչ. էս Հա-
րոցոցի ի՛նչ փոխարէն ՚ի յարութեան արդարոց» :

(Ղուկաս ԺԳ:7-14)

«Առակ մըն ալ ըսաւ Հրաւիրեալներուն, երբ տեսաւ թէ
Ինչպէս կ'ընտրէին առաջին բազմոցները : Ըսաւ անոնց.
«Երբ մարդէ մը Հրաւիրուիս Հարսանիքի, մի՛ նստիր առա-

Չին բազմոցին վրայ. որպէսզի եթէ քեզմէ աւելի պատուաւոր մէկը հրաւիրուած ըլլայ, ան՝ որ քեզ ու գայն հրաւիրեց, չգայ եւ չըսէ քեզի. Տե՛ղ տուր ասոր. ու անկէ ետք՝ սկսիս ամէնալավ գրաւել յետին տեղը: Հապա երբ հրաւիրուիս՝ գնա՛ եւ նստէ՛ յետին տեղը. որպէսզի երբ քեզ հրաւիրողը գայ՝ ըսէ քեզի. Բարեկամ՛, վե՛ր հրամմէ. այն ատեն փառք կ'ունենաս քեզի հետ սեղան նստողներուն առջեւ: Որովհետեւ ո՛վ որ կը բարձրացնէ ինքզինք՝ պիտի խոնարհի, իսկ ո՛վ որ կը խոնարհեցնէ ինքզինք՝ պիտի բարձրանայ»: Զինք հրաւիրողին ալ ըսաւ. «Երբ ճաշ կամ ընթրիք կը սարքես, մի՛ կանչեր բարեկամներդ, ո՛չ ալ եղբայրներդ. ո՛չ ազգականներդ, ո՛չ հարուստ դրացիներդ, որպէսզի անոնք ալ փոխարէնը չհրաւիրեն քեզ՝ ու հատուցում չըլլայ քեզի: Հապա երբ քոչունք կը սարքես՝ հրաւիրէ՛ աղքատները, պակասաւորները, կաղերը եւ կոյրերը, ու երանելի՛ պիտի ըլլաս, որովհետեւ անոնք չեն կրնար փոխարէնը հատուցանել քեզի. արդարեւ արդարներուն յարուժիւն առած ատեն՛ըլ փոխարէնը պիտի հատուցանուի քեզի»:

Յիսուսի այս տուած օրինակները ամփոփուած են իր հետեւեալ խօսքին մէջ. «Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեցնի. եւ որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրացնի»: Մարդկային եւ ընկերութեան ներկայ հայեացքը այն է, թէ ամէն անձ իր ըրած ծառայութեան, գործին համար պէտք է վարձատրուի: Այսօր նոյնիսկ բարեսիրական կազմակերպութիւններ, որոնք միայն նուիրատուութեամբ կը գոյատեւեն եւ կը գործեն, նուիրատուութիւն ապահովելու համար փոքր նուէրներ կը ղրկեն նուիրատուներուն: Որեւէ նուիրատուութիւն, օգնութիւն ... պէտք է ըլլայ առանց հատուցման ակնկալութեան: Մարդ պէտք չէ հպարտ ըլլայ իր ըրածով կամ տուածով: Միթէ Յիսուս իր լերան քարոզին մէջ չէ՞^օ ըսած հեզ եւ խոնարհ ըլլալ:

«Երանի Հեզոց, պի նոյա Ժառանգեացեն պերկիր» :

(Մարքէոսի Ե:5)

«Երանի՛ հեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը»:

Մարդը - Աշխարհի Աղբ

«Բարո՛ւն է աղ. ապա թէ ա՛ղն անճամբեացի, ի՞նչ
ճամբեացի: Ո՛չ յերկիր՝ եւ ո՛չ յաղբ է՛ պիտո-
նացո՛ւ, այլ ընկենո՛ւլ գնա արքադո՛ւ: Որ ունիցի
ականջս լսելոյ լուսիցէ»: (Ղուկաս ԺԳ:34-35)

«Աղը լաւ բան է. բայց եթէ աղը իր համը կորսնցնէ,
ինչո՞վ պիտի համեմուի: Ո՛չ հողի, ո՛չ ալ թրիքի
յարմար կ'ըլլայ. ուստի դուրս կը նետեն զայն: Ա՛ն որ
ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

(Տես նաեւ Մատթէոս Ե:13 եւ Մարկոս Թ: 49)

Անտարակոյս Յիսուս աղի մասին չէ, որ կը խօսի,
այլ Ան աղը կ'օգտագործէ ներկայացնելու համար
համայն մարդկութիւնը: Մատթէոսի Աւետարանին մէջ
Ինք բացայայտ կ'ըսէ. «Դուք էք աղը երկրի»: Մարդ
ստեղծագործութեան գազաթնակէտն է, որովհետեւ ան
կարող է իր գիտակցութեան մակարդակը բարձրացնել
եւ Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնել: Եւ
ահա՛, աս է մարդուն «համ»-ը: Բայց մարդկութեան
ջախջախիչ մեծամասնութիւնը իր «համ»-ը կորսնցու-
ցած է, որովհետեւ իր ստեղծուած նպատակին համար չի
գործեր: Ան կ'ապրի նման անասուններու՝ միայն ուտել,
խմել, բազմանալ եւ քնանալ: Ան գիտնալով հանդերձ,
թէ Աստուած է իր ստեղծիչը եւ ստեղծագործութեան
մէջ ալ նպատակ մը կայ, չի գործեր այդ ուղղութեամբ:
Առանց այդ վեհ նպատակին ապրիլն ալ կը նմանի
«աղ»-ին, որ «համ» չունի: Ան կ'ըլլայ անօգուտ, ան-
տեսուելու եւ «դուրս նետուելու» արժանի: Այդ անտես-
ուիլը ու նետուիլն ալ կը նշանակէ չարժանանալ յաւի-
տենական կեանքին: Առանց յաւիտենական կեանքի ալ
մարդուն անհատականութիւնն ալ կը մեռնի եւ
կ'անհետանայ իր մարմնին մահուան հետ, քան թէ
յաւիտենական կեանքի արժանանալով մարմնին մահէն
վերջ յարութիւն առնէ: Միթէ Յիսուս չէ՞ ըսած. «Ինծի
եկէք, վերջին օրը ձեզի յարութիւն պիտի տամ»:

ՆԻԹԱՊԱՇԵ ԹԷ՝ ԱՍՏՈՒԾԱՊԱՇԵ

«Ի՞բրեւ լսէին զայս ամենայն փարիսէացիքն՝ լանգի
արծաթասէրք էին. անկոսնէին զնա: Եւ ասէ ցնո-
սս. Դուք՝ որ արդարացոցանէք զանձինս առաջի
մարդկան, սակայն Աստուած Գիտէ՛ զսիրտս յեր-
շի որ առաջի մարդկան թարձր է, պի՛ղծ է առա-
ջի Աստուծոյ: Օրէնդն էւ մարգարէք՝ մինչէւ ցՅով-
Հակոբն. յայնմ Հեղէ արդայո՞րինն Աստուծոյ ա-
ւերարանի, էւ ամենա՛յն ո՞վ զնա թռնաթարէ: Դի-
րե՛ն իցէ երկնից էւ երկրի անցանել լան յօրե-
նացն մի՛ոյ նշանախեցի անկանել»: (Ղուսա Ժ:9:14-17)
«Փարիսեցիներն ալ՝ որոնք արծաթասէր էին՝ այս բոլոր
բաները լսելով՝ կը քամահրէին զայն: Եւ ըսաւ անոնց.
«Դո՛ւք էք որ մարդոց առջեւ կ'արդարացնէք դուք ձեզ,
բայց Աստուած գիտէ՛ ձեր սիրտերը. որովհետեւ մարդոց
մէջ բարձր գնահատուածը՝ գարշելի է Աստուծոյ առջեւ:
Օրէնքն ու Մարգարէները մինչեւ Յովհաննէս էին. այդ
ատենէն ետք Աստուծոյ թագաւորութի՛ւնը կ'աւետուի,
եւ ամէն մէկը կ'արտորայ մտնել անոր մէջ: Աւելի
գլխին է՝ որ երկիրքն ու երկիրը անցնին, քան Օրէնքէն
մէկ նշանագիր իյնայ»»:

(Տես նաեւ Մատթէոս ԺԱ:12-13)

*Ամէն անհատի գիտակցութիւնը Աստուծոյ գիտակ-
ցութիւնն է, հետեւաբար Աստուած տեղեակ է բոլորին
խորհուրդներէն՝ նոյնիսկ ամենածածուկէն: Արծաթա-
սիրութիւնը նշան մըն է, որ անհատը կապուած է «նիւ-
թական»-ին քան թէ «հոգեկան»-ին: Որովհետեւ մար-
դոց մեծամասնութիւնը նիւթապաշտ է, Յիսուս կ'ըսէ.
«Գի որ առաջի մարդկան բարձր է, պի՛ղծ է առաջի Աստու-
ծոյ»: Այս համարներով Յիսուս կը խօսի նաեւ կեղծաւո-
րութեան դէմ: Ակնարկը նաեւ ինքնախաբէհութեան մա-
սին է, երբ մարդ ինքզինք արդարացեալ կը նկատէ,
հետեւաբար նաեւ՝ արժանի Աստուծոյ թագաւորութեան:*

Այն ինչ որ մարդիկ իրենք զիրենք արդարացած կը նկատեն, եթէ Աստուծոյ դրած Ս. Հոգիի՝ տիեզերական օրէնքներուն ներդաշնակ չէ, Աստուծոյ համար արդարացուած չէ: Ամէն մարդ կը փափաքի Աստուծոյ թագաւորութեան արժանանալ: Անկարելի է որ ոեւէ անձ արժանանայ Աստուծոյ թագաւորութեան, եթէ ան կը գործէ օրէնքներու հակառակ, նոյնիսկ՝ մէկ օրէնքի: Ահա՛, աս է իմաստը Յիսուսի հետեւեալ խօսքին. «Ղիւրի՛ն իցէ երկնից եւ երկրի անցանել քան յօրինացն միո՛յ նշանախեցի անկանել»: Այս օրէնքները Աստուծոյ դրած տիեզերական օրէնքներն են: Անկարելի է այդ օրէնքներէն որեւէ մէկը անտեսել եւ արժանանալ Աստուծոյ թագաւորութեան: Իսկ երբ Յիսուս կ'ըսէ. «Օրէնքն եւ մարգարէք մինչեւ ցՅովհաննէս», այս անգամ նշուած օրէնքը մարդոց՝ «կրօնք»-ին դրած օրէնքներն են: Յիսուս Քրիստոսէ առաջ, ընկերութեան մէջ մարդոց կենցաղը կ'որոշուէր մարգարէներուն տուած օրէնքներով: Անոնք էին բարի, լաւ, օգտակար եւ հոգեւոր կեանքի առաջնորդող օրէնքներ: Բայց անոնք մարդկային՝ «կրօնական» օրէնքներ էին: Բայց Յիսուս Քրիստոսի ներկայութեամբ, քարոզչութեամբ եւ իր կենցաղով՝ օրինակով մարդուն սորվեցուցած տիեզերական օրէնքները գերազանցեցին նախկին մարդկային օրէնքները, ինչպէս նաեւ յայտնեցին Աստուծոյ թագաւորութեան արժանանալու միջոցը:



ԾԱՌԱՅԻ ՄԸ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՄԸ ԵՒ

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՐԻՆ

«Իսկ ո՞վ ո՞վ ՚ի յէնչ որ ունիցի Չառաւոյ Ընդա-
 Գործ կամ Ընդիւր, որ իբրեւ մարանիցէ՛ յագարա-
 կէ՛ ասիցե ցնա վաղվաղակի, Բէ անց Բաւաճեաց:
 Ընչ ո՛չ ասիցե ցնա. Բէ պարտաստեա՛ս պինչ ընթ-
 րելո՛ց իցեմ, Եւ Գօրի աժեալ պաշտեա՛ս պիտ՛ մին-
 շեւ կերա՛յց Եւ արբից. Եւ աստ կերիցէ՛ս դո՛ւ:
 Միթէ շնորհ ունիցի Չառային այնմիկ, պիտ արար
 պամենայն Ըրամանն: Սոյնպէս Եւ դո՛ւմ՛ յոր-
 ժամ առնիցէ՛կ պամենայն Ըրամայեալան յեւ, ասասջի՛մ
 Բէ Չառայի անպիտանի՛ եմի, պարտաստեա՛ս քն
 առնել՛ արարա՛մի»: (Ղոհա ԺԷ:7-10)
 «Բայց ձեզմէ ո՞վ, ունենալով երկրագործ կամ Ընդիւ
 ծառայ մը, երբ ան տուն մտնէ արտէն՝ իսկոյն կ'ըսէ
 անոր. Գնա՛, սեղան նստէ: Հապա չ'ըսեր անոր. Պատ-
 րաստէ՛ իմ ընթրիքս, ու գօտիք կապած՝ սպասարկէ՛ ինձի,
 մինչեւ որ ես ուտեմ եւ իմեմ. յետոյ դուն ալ կեր ու
 իմէ: Միթէ շնորհապարտ կ'ըլլայ այդ ծառային՝ իրեն
 Հրամայուած բաները ընելուն համար. չեմ կարծեր:
 Սոյնպէս դուք, երբ ընէք ձեզի Հրամայուած բոլոր
 բաները՝ ըսէ՛ք. Մենք անպէտ ծառաներ ենք. ըրինք ինչ
 որ պարտական էինք ընել»:

*Ինչպէս վերեւ գրուած է, Յիսուս կը շարունակէ
 սորվեցնել կատարելութեան ուղին: Մենք բոլորս ալ
 Աստուծոյ ծառաներն ենք: Ամէն աշխարհ եկող անհատ
 պարտականութիւն մը եւ պատասխանատուութիւն մը
 ունի: Ասոնք իր տիրոջ՝ Աստուծոյ կամքը կատարել է
 առանց գանգատելու, բայց ոչ իր «Ես»-ին կամքը:
 Մէջբերումին վերջին նախադասութիւնը շատ հետա-
 քրքրական է. «ասասջի՛ք՝ թէ ծառայք անպիտանք եմք,*

զոր պարտեա՛քն առնել՝ արարա՛ք»: Յիսուս իր պարտա-
կանութիւնը լիովին կատարող ծառան «անպիտան» կը
կոչէ: Որովհետեւ մեր երկրային այս կեանքին մէջ
մեզի տրուած բոլոր պատասխանատուութիւնները մեր
ճակատագրէն յառաջ եկած են եւ անոնք մեր «անպի-
տանութեան» պարտքերն են, ինչ որ պարտ ենք
«վճարել»: Ուրեմն պարտ ենք կեանքի մէջ ամէն ինչ՝
լաւ կամ վատ, ընդունիլ իբրեւ Աստուծոյ կամքը եւ
յօժարաբար զանոնք կատարել: Անոնք բոլորն ալ Ս.
Հոգիի դէմ գործուած մեղքերուն պարտքերն են, որ
աններելի են եւ պէտք է «վճարուին»:

Յաջորդ մէջբերումին մէջ դարձեալ Յիսուս կը
շարունակէ կատարելութեան ուղին սորվեցնել:

«Մարոնացանէին առ նա եւ մանկոր՝ զի մերջե-
նայցէ՛ ՚ի նոսա. իբրեւ ցեօին աշակերտքն՝ ասա-
րելին նոցա: Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ
ինչն՝ ասէ. Թո՛յլ րոտէ մանկոցոց Գա՛լ առ
իս. եւ մի՛ արժելոտէ զոնոսա. զի այդպիսեացոց
է արեւայոթիան Ասարոթոյ: Եմէն ասէ՛մ որ ո՛չ
ընդոննիցի զարժայոթիան Ասարոթոյ իբրեւ
զմանուկ, ո՛չ մրցել ՚ի նա»: (Ղուկաս ԺԸ: 15-17)

«Երախաներ ալ բերին իրեն՝ որպէսզի դպչի անոնց:
Աշակերտները տեսնելով՝ կը յանդիմանէին զանոնք:
Բայց Յիսուս իրեն կանչելով զանոնք՝ ըսաւ. «Թո՛յլ
տուէք այդ մանուկներուն՝ որ ինծի զան, եւ մի՛ արգի-
լէք զանոնք, որովհետեւ Աստուծոյ թագաւորութիւնը
այդպիսիներունն է: Ճշմարտապէս կը յայտարարեմ
ձեզի. Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը չընդունի
մանուկի մը պէս, բնա՛ւ պիտի չմտնէ անոր մէջ»:

(Տես նաեւ Մատթէոս ԺԹ: 13-15 եւ Մարկոս Ժ: 13-16)

Այս մէջբերումին մէջ Յիսուս կ'օրհնէ մանուկ-
ները: Մարդ ալ արժանի կ'ըլլայ Աստուծոյ օրհնութեան
երբ ինք ալ մանուկի նման հեզ եւ խոնարհ կ'ըլլայ:

Մանուկները միշտ հնազանդ կ'ըլլան իրենց ծնողաց: Անոնք կ'ընդունին իրենց տկարութիւնները եւ անկարողութիւնները եւ կ'ապաւինին իրենց ծնողաց կարեկցութեան: Մանուկները հոգիով աղքատ են, որովհետեւ չունին հպարտութիւն: Անոնք պարզ են:

Միթէ Յիսուս, իր լերան քարոզին մէջ չէ՞ ըսած.

«Լերանի աղէտաբայ Ըոգո՞ով, զի նոցայ է արեւոյտ-բիւն երկնից: ... Երանի Հեզոց, զի նովա ժառանգեացէն զերկիր»: (Մարթեոսի Ե: 3)
«Երանի՛ հոգևով աղքատներուն, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է: ... Երանի՛ Հեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը»:

Մանուկները բացարձակ հաւատք ունին իրենց ծնողաց վրայ: Մենք ալ պարտ ենք նման հաւատք ունենալ մեր երկնաւոր Հօր վրայ: Բայց մարդ ընդհանրապէս կապուած այս աշխարհին չ'ուզեր անկէ բաժնուիլ: Երբ Յիսուս կ'ըսէ. «Խաչդ առ եւ ետեւէս եկուր», անհատը չ'ուզեր իր «Ես»-ը խաչել եւ մարմինը թողուլ եւ անոր համար ալ իր բոլոր մեղքերը կը բեռցնէ Յիսուս Քրիստոսի վրայ եւ ինքզինք կը համարէ փրկուած:

Յաջորդ մէջբերումը տակաւին կը շարունակէ ցոյց տալ Յիսուսի կատարելութեան ուղիին մասին սորվեցուցածները:

*«Զգո՛յ՛ լերո՞ւնէ անձանց Գոցէ՛ ժանրանայցէն
«Իրդի՛ յեր շո՞ւայրո՞ղեամբ՝ եւ արբէցո՞ւբեամբ՝
եւ Ըոգո՞ովն աշխարհականօն, եւ յանկարծակի՛
Հասանիցե՛ ՚ի վերայ յեր օրն այն. Զի իբրեւ
զորոգա՛յնբ Հասանիցե՛ ՚ի վերայ ամենեցո՞ւն որ
բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի: Եր-
բո՛ւն կայցելէ այսո՞ւհեղեւ յամենայն ժամ առօ՛րն»*

արարելէ, զի արժանի լինիջիէ՛ պերժանել յայնմ
յամենայնէ որ լինելոց է եւ կա՛լ առաջի որդոց
մարդոց» : (Ղուկաս ԽԼ : 34-36)

«Ուշադիր եղէք դուք ձեզի՛ որպէսզի ձեր սիրտերը
չծանրանան կերուխումով, արբեցութեամբ եւ այս կեան-
քին հոգերով, ու այդ օրը անակնկալօրէն չհասնի ձեր
վրայ. որովհետեւ վարմի մը պէս պիտի հասնի ամբողջ
երկրի բոլոր բնակիչներուն վրայ: Ուրեմն հսկեցէ՛ք եւ
ամէ՛ն ատեն աղերսեցէք, որպէսզի արժանանաք գերծ
մնալու այս բոլորէն՝ որոնք պիտի ըլլան, ու կայնելու
մարդու Որդիին առջեւ»:

*Յիսուս անգամ մը եւս մեզ կը զգուշացնէ աշ-
խարհիկ ցանկութիւններ հետապնդելէ: Մարդուն մահ-
ուան օրը յանկարծ կու գայ եւ ինք իր անխոհեմու-
թեան համար պատասխանատու կ'ըլլայ: Աշխարհի մէջ
ապրելով հանդերձ մարդ պէտք չէ տարուի աշխարհիկ
ցանկութիւններէ եւ շեղի իր ընտրած կատարելութեան
ուղիէն: Յիսուսի այս ըսածներէն կրնանք նաեւ հետեւ-
ցընել, թէ պէտք չէ մտահոգուինք նոյնիսկ կեանքի
անբաղձալի պատահարներով, այլ զանոնք ընդունինք
իբրեւ Աստուծոյ կամքը եւ սորվինք անոնց մէջ թագ-
նուած դասերը: Յիսուս նաեւ կը զգուշացնէ հեռու կե-
նալ մահացու մեղքերէն՝ որկրամոլութենէ, ոգելից ըմ-
պելիներէ, որոնք ուղեղին վրայ ազդեցութիւն ունին,
հետեւաբար մտքին վրայ: Այդ ազդեցութեան հետե-
ւանք մարդ կարող չի կրնար ըլլալ «զգոյշ» ըլլալ: Որով
Յիսուս իր խօսքը կը սկսի «Չգոյշ լերուք» բառերով:*

*Հետեւեալ մէջբերումը կը թուի վերելի
մէջբերումին շարունակութիւնը ըլլալ:*


«... եւ ասէր. Թէ կարարե՛ալ է ժամանակ, եւ
հասեա՛լ է արժայոթիւնն Լսրոսոյ, ապաշխարե-
ցե՛լ՝ եւ հաւարացե՛լ յաւերարանն» : «Եւ ասէ
ցնոսա Յիսուս. Եկա՛յէ պէնի իմ, եւ արարից

պէ՛ւ պ՛ լինել որսո՛րդոս մարդկան» : (Մարկոս Լ:15 Է- 17)
«ու կ'ըսէր. «Ժամանակը լրացած է, եւ Աստուծոյ
Թագաւորութիւնը մօտեցած է. ապաշխարեցէ՛ք, ու
Հաւա- տացէ՛ք աւետարանին»»: «Յիսուս ըսաւ անոնց.
«Եկէ՛ք իմ ետեւէս, ու մարդո՛ց որսորդ պիտի ընեմ
ձեզ »»:

Վերեւի համարներուն մակերեսային եւ բառացի
հասկացողութիւնը այն է, թէ Քրիստոսի երկրորդ գա-
լուստը մօտ ժամանակէն տեղի պիտի ունենայ: Այսօր
չատեր կը հաւատան այս տեսակէտին ճշգոլթեան: Նոյն-
իսկ Յիսուսի ժամանակ իր աշակերտները կ'ակնկալէին
տեսնել այդ «երկրորդ գալուստը»՝ Աստուծոյ Թագաւո-
րութեան գալուստը: Անոնք բոլորն ալ մեռան գացին
եւ մօտաւորապէս երկու հազար տարի անցաւ անկէ ի
վեր եւ մարդիկ տակաւին կը սպասեն: Աւետարանին
մէջ յստակ գրուած է, թէ Աստուծոյ Թագաւորութեան
գալուստը դուրսէն երեւցած բաներով չի գար: Նաեւ
գրուած է, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը մեր մէջն է:
Ուրեմն այս հիման վրայ է, որ պէտք է մեկնաբանենք,
հասկնանք եւ ըմբռնենք վերեւ Յիսուսի ըսածները:
Յիսուս կը թելադրէ ապաշխարել, որպէսզի անձը արժա-
նանայ Աստուծոյ Թագաւորութեան: Եթէ Աստուծոյ
Թագաւորութիւնը արդէն մեր մէջ է, ի՞նչ է Աստուծոյ
Թագաւորութեան արժանանալուն իմաստը: Ան, Աստ-
ուածայայտութիւնը մեր մէջ իրականացնել, Յիսուսի
նմանիլ եւ երկնաւոր Հօր նման կատարեալ ըլլալն է:
Երբ Յիսուս կ'ըսէ. «Հասեա՛լ է արքայութիւնն Աստուծոյ»,
ակնարկութիւնը կարծեցեալ գալստեան ժամանակին
համար չէ: Յիսուսէն առաջ մարդիկ, հետեւելով մարգա-
րէներու քարոզչութեան, կը կարծէին թէ Աստուծոյ
Թագաւորութիւնը իրենցմէ դուրս, «վերը»՝ երկինքը
տեղ մըն է: Յիսուս իր տուած «աւետիս»-ով մեզի սոր-
վեցուց, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը մեր ներսի-
դին է, հետեւաբար մեզի շատ մօտ: Եթէ մարդ կարողա-

նայ Քրիստոս իր մէջ յայտնաբերել, ինք արդէն իսկ կ'ըլլայ յաւիտենական կեանքի մէջ: Յաւիտենական կեանքը ժամանակի դրուժենէ դուրս ըլլալն է, անձն ալ այլեւս ենթակայ չ'ըլլար ժամանակին: Ահա՛, Յիսուսի ըսած. «կատարե՛ ալ է ժամանակը»-ին իմաստը աս է:

Յիսուս կ'ըսէ. «Եկա՛յք զինի իմ»: Ի՞նչպէս երթալ իր ետեւէն: Միակ կերպը իր բոլոր ստրվեցուցածները իւրացնել եւ կիրարկել է մեր կեանքերուն մէջ: Ինչպէս նաեւ այլուր Յիսուս ըսած է. «Իսաչդ առ եւ ետեւէս եկուր», երբ մենք կը կարողանանք իրեն հետեւիլ եւ իրեն նմանիլ, այն ատեն մենք մեր կենցաղով բոլորին օրինակ կ'ըլլանք: Մեր սիրով, բարեացակամութեամբ եւ զոհողութեամբ կ'ըլլանք «որսո՛րդս մարդկան»:



ԸՆՈՒԽԱԿ ԱՆՈՒԹԱՆԵՐ

«Իբրև լուսա-Յիսուս՝ ասէ՛ր ցնոսա. Ո՛չ ինչ է
պիտոյ բժիշկ ողջոց, այլ Հիւանդա՛յ է- ո՛չ եկե
կոշել զարդարա՛ս՝ այլ զմեղա-որս»։ «Ո՛չ ո՛վ կա-
պերտ նո՛ր անխա՛փ արկանէ՛ ՚ի վերայ Հնացեալ Յոր-
Յոյ. ապա թէ ո՛չ՝ առնո՛ւ լրո-թեամբն իւրով նորն
՚ի Հնոյ անտի, է- շա՛ր է-ս պարսոսո-մն լինի։
Ե- ո՛չ ո՛վ արկանէ Գինի նոր՝ ՚ի րիկս Հինս.
ապա թէ ո՛չ՝ պայթո-ցանէ՛ Գինին զրիկսն, է- Գի-
նի Հեղոս, է- րիկին կորնշի՛ն. այլ Գիտի նոր՝ ՚ի
րիկս նո՛րս արկանելի է»։ (Մարկոս Բ։17 է- 21-22)
«Երբ Յիսուս լսեց՝ ըսաւ անոնց. «Ո՛չ թէ առողջներուն
բժիշկ պէտք է, հապա՛ հիւանդներուն։ Ես եկայ ո՛չ թէ
արդարները կանչելու, հապա՛ մեղաւորները»»։ «Ո՛չ
մէկը կը կարէ նոր լաթի կտոր մը հին հանդերձի
վրայ. որովհետեւ այդ նորը՝ որ անոր լրութեան համար
գրուած է, կը քաշէ հինը, ու պատուածքը աւելի գէշ
կ'ըլլայ։ Ո՛չ ալ մէկը կը դնէ նոր գինին հին տիկերու
մէջ. քանի որ նոր գինին կը պատուէ տիկերը, գինին
կը թափի, եւ տիկերը կը կորուին։ Հապա նոր գինին
գրուելու է նո՛ր տիկերու մէջ»»։

*Երբ Փարիսեցիները դիտողութիւն ըրին, թէ ին-
չո՞ւ Յիսուս մաքսաւորներուն եւ մեղաւորներուն հետ
կը ճաշէ, Յիսուսի պատասխանը եղաւ վերեւի առաջին
համարին մէջի գրուածները։ Իսկ երբ Փարիսեցիները
դարձեալ հարց տուին, թէ ինչո՞ւ Յիսուսի աշակերտ-
ները ծոմ չէին պահեր, Յիսուս իր նախնական պատաս-
խանին վրայ, որուն իմաստը բացայայտ է (Տես Աւետա-
րանին մէջ Համարներ 18-20), աւելցուց վերեւի համարնե-
րուն մէջ ներկայացուած խօսքերը։ Անոնք բոլորովին
տարբեր հասկացողութիւն մը կու տան վերեւի մէջբե-
րումին մէջ գրուածներուն։ Բայց չե՞նք ըսեր, թէ Յի-
սուս եկաւ համայն մարդկութեան փրկութեան համար։*

Ինչո՞ւ Յիսուս կ'ըսէ, թէ ինք միայն մեղաւորներուն համար եկած է եւ ոչ արդարներուն: Ո՞վ է արդարը: Այլուր Յիսուս ըսած է. «եթէ վերստին դամ արդեօք հաւատք պիտի գտնե՞մ»: Նախ Յիսուսի տուած պատասխանը Փարիսեցիները կը լռեցնէ, բայց աւելի կարեւոր իմաստը այն է, որ Յիսուս եկաւ կատարելութեան ուղին սորվեցնելու անոնց, որոնք իրենք գիրենք մեղաւոր կը նկատէին: Անոնց համար կարելի կ'ըլլայ ապաշխարել: Իսկ անոնք, որոնք իրենք գիրենք արդէն արդարացեալ կը նկատեն, ապաշխարութեան չեն ձգտիր: Անոնց հայեացքը այն է, թէ արդար մարդը ինչո՞ւ ապաշխարելու պէտք ունենայ: Վերելի մէջբերումին վերջին երկու համարները բացայայտ կ'ընեն Յիսուսի ըսածներուն բուն իմաստը: Յիսուս կ'օգտագործէ կարկրտանի եւ գինիի օրինակները: Երբ մարդոց միտքը հին զանազան անպէտ հաւատալիքներով կալանաւորուած է կարելի չէ անոնց նոր ճշմարտութիւն սորվեցընել: Անոնք, եթէ նոյնիսկ ընդունին ըսուածները, գանոնք պիտի խեղաթիւրեն որպէսզի հարմարեցնեն իրենց հաւատացած հին հաւատալիքներուն: Ահա՛, այդ է ինչ որ այսօր պատահած է: Քրիստոնէութիւն մը կը քարոզուի, որ շատ հեռու է Յիսուսի սորվեցուցածներէն: Յիսուսի ըսած. «հին հանդերձ»-ը եւ «հին տիկ»-ը կը ներկայացնեն հին հաւատալիքներով, հին հասկացողութեամբ, հին աւանդութիւններով, հին սովորութիւններով ... կալանաւորուած ու գոցուած միտքերը: Ճշմարտութեան խեղաթիւրումն ալ կ'ըլլայ «թափած գինի»-ն: «Նոր տիկեր»-ը բաց միտքերն են, որ պատրաստ են սորվիլ: Անոնք մեղաւորներն են, որ կ'ընդունին թէ «մեղաւոր են»՝ չեն գիտեր, հետեւաբար ընդունակ անօթներն են:

Յաջորդ երեք մէջբերումներուն մէջ Յիսուս կը խօսի մարդուն միտքը կալանաւորող այդ անպէտ կրօնական օրէնքներուն դէմ:

«Եւ ասէ ցնոսսս . Շաբաթ՝ զլասն մարտոյ՝ յեղեւ, եւ ո՛չ ելել մարտ զլասն շաբաթոս, ապա ուրեմն՝ որէ՛ր է որտի մարտոյ՝ եւ շաբաթոս» : (Մարկոս Բ:27-28)

«Եւ աւելցուց . «Շաբաթը եղաւ մարդո՛ւն Համար, ո՛չ թէ մարդը՝ Շաբաթին Համար: Հետեւաբար մարդու Որդին տէրն է նաեւ Շաբաթին»»:

«Եւ ասէ ցնոսսս . Զի՞նչ արժան է ՚ի շաբաթոս, Բարի՞ ինչ Գործել՝ ելել շա՛ր ասնել, ոգի մի ապրեցոսցանէ՛լ՝ ելել կորոսասնել» : (Մարկոս Գ:4)
«Շաբաթ օրը բարի՞ք ընել արտօնուած է՝ թէ չարիք ընել, անձ մը վրկե՞լ՝ թէ սպաննել»:

«Եւ ելել Գիտէ՛ի զի՞նչ է՝ զսոսոցոսթիւն կամիմ՝ եւ ոչ զսոս . ապա ուշ դատարարի՛ն զոսոս զանպարտան : Զի որէ՛ր է շաբաթոս՝ որտին մարտոս» : (Մարկոս ԺԲ:7-8)

«Եթէ զխոսայիք թէ ի՛նչ ըսել է . կարեկցութիւն կ'ուզեմ, ու ո՛չ թէ զոս, այն ատեն չէիք դատարարտեր անպարտները . որով Հետեւ մարդու Որդին տէրն է Շաբաթին»:

Այս երեք մէջբերումներուն մէջ Յիսուս կը խօսի Հրեաներուն անպէտ օրէնքներէն մէկուն դէմ՝ Շաբաթ օրը պահել: Մարդու Որդին Շաբաթ օրուան Տէրն է: Ամէն անհատի ճշմարիտ հոլթիւնը իր հոգին՝ Քրիստոս՝ Աստուծոյ Որդին է: Միթէ Քրիստոս, ոչ թէ միայն Շաբաթին, այլ ընդհանուր ստեղծագործութեան Տէրը չէ՞: Երբ Յիսուս կ'ըսէ. «ոգի մի ապրեցուցանե՛լ եթէ կորուսաներ», իր ահնարկութիւնը Հրեաներուն իբրեւ զոս մեռցուցած կենդանիներուն համար է: Երրորդ մէջբերումին մէջ ալ Յիսուս կ'եզրակացնէ իր ըսածները, թէ զոսը կարեւոր չէ այլ ճշմարիտ զոհողութիւնը՝ կարեկից ըլլալն է:



ՄԱՐԴ ԻՆՉՈ՞Ւ Կ'ԱՆՏԵԱՒ ՀՈԳԵԱՆՆ

«Եւ զայրացա՛ւ յոգի իւր՝ եւ ասէ. Զի՞ն է՛ զի
այգոս այս նշան խնորիւ, ամէն ասեմ յեզ, թէ՛ րացի
նշան այգիս այսմիկ»: (Մարկոս Ը:12)

«Ան ալ իր հոգիին մէջ հառաչելով՝ ըսաւ. «Ինչո՞ւ այս
սերունդը նշան կը խնդրէ: Ճշմարտապէս կը յայտարարեմ
ձեզի թէ այս սերունդին նշան պիտի չտրուի»»:

Յիսուսին այս խօսքը ակնարկութիւն մըն է մարդոց ունեցած հաւատքին: Ինչպէս Յիսուսի ժամանակ, այսօր ալ, մարդոց ջախջախիչ մեծամասնութիւնը նոյնացած իրենց մարմնին եւ միտքին հետ կը կարծեն, թէ միայն իրենց հինգ զգայարանքներէ ստացած տեղեկութիւնը ճշմարտութիւն մըն է: Անոնց միտքը կարող է ըմբռնել միայն ան, որ իրենց Ֆիզիքական փորձառութեան մաս կը կազմէ: Անոնք, որովհետեւ «հոգեկան»-ը կարող չեն իրենց հինգ զգայարանքներով «տեսնել»՝ հասկնալ, զայն կ'անտեսեն: Շատ անգամ նոյնիսկ Աստուծոյ գոյութեան չեն հաւատար որովհետեւ կարող չեն Աստուած տեսնել: Աստուծոյ հաւատալու համար ալ «նշան» կ'ուզեն: Անոնց համար նշանը հասկնալի է, որովհետեւ հինգ զգայարանքներով կը հասկնան: Բայց երբ անոնք նշան կ'ուզեն, բացայայտ կը յայտարարեն, թէ իրենք Յիսուսի խօսքերով սորվեցուցածներուն չեն հաւատար: Յիսուս ալ կ'ըսէ. «նշան պիտի չտրուի»: Ան որ հաւատք չունի Անոր վրայ, նաեւ հաւատք պիտի չունենայ Անոր տուած նշանին վրայ: Երբ Յիսուս դիւահարէն դեւ հանեց միթէ ատիկա նշան մը չէ՞ր, որ ինք տուած էր: Ի՞նչ ըսին: «Դեւերու իշխան Բէեղզբերուղով դեւը կը հանէ» ըսին եւ անոր ունեցած Աստուածային զօրութեան չհաւատացին: Հետաքրքրական է գրաբարի մէջ գրուածը. «Թէ՛ տացի նշան ազգիս այսմիկ»: Արդեօք Յիսուսի ակնարկութիւնը իր առաջուց կատարած հրաշքներուն համար է՞: Այսօր ալ, հակառակ այն իրողութեան որ մարդիկ կ'ըսեն, թէ Աստուծոյ կը հաւատան, սակայն եւ այնպէս նորէն ալ նշան կ'ուզեն:

ՏԱՃԱՐԻՆ ՊԻՏՈՒՄ

«Ուսուցանէր սնոսա եւ ասէր. Գրեալ է, թէ Կո-
նըր իմ քո՛ւն աղօթից կոչեսցի ամենայն Հեթանո-
սաց, եւ դո՛ւն արարէ՛նք սրա ա՛յրս աւասակաց» :
(Մարկոս ժԼ :17)

«Եւ սորվեցուց անոնց՝ ըսելով. «Միթէ գրուած է՞՞. Իմ
տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգերուն.
Բայց դուք զայն աւազակներու քարայր ըրիք»:

Յիսուս այս խօսքը ըսաւ տաճարէն բոլոր վաճառողները վռնտելէն յետոյ: Յիսուսի այս արարքը եւ սորվեցուցած դասը կարելի է երկու տարբեր տեսանկիւնէ դիտել: Անտարակոյս մին անոր բառացի իմաստն է: Քահանայապետին գլխաւորութեամբ բոլոր վաճառականները տաճարը, որ Աստուծոյ տունը կը նկատուի, շուկայի վերածած էին: Անտարակոյս աս ալ տաճարի պղծումն է: Անոնց համար նիւթականը աւելի կարեւոր ըլլալ կը թուէր, քան թէ հոգեկանը՝ աղօթքը: Մենք ալ մեր եկեղեցիներուն մէջ ուշադիր պէտք է ըլլանք եւ զանոնք չվերածենք շուկայի: Եղած են եկեղեցիներ, որոնք բախտախաղեր կազմակերպած են նիւթական հասոյթ ապահովելու համար: Նիւթականը կը թուի աւելի կարեւորութիւն ունենալ, քան թէ հոգեկանը՝ ծէսերը: Պէտք է ժամերգութիւնները կրճատուին, պարզ այն հասկացողութեամբ, թէ եկեղեցի եկողներուն թիւը կրնայ պակսիլ, որով հասոյթն ալ կրնայ նուազիլ: Պէտք է ծէսերուն լեզուն աշխարհաբարի վերածուի, որովհետեւ անոնց խորհրդաւորութիւնը կը կորսուի: Իսկ Յիսուսի այս սորվեցուցածին երկրորդ տեսակէտը՝ բացատրականը այն է, թէ Աստուծոյ տաճարը մարդուն մարմինն է: Երբ մարդ եսասիրութեամբ նիւթապաշտ եւ ազահ կ'ըլլայ, ինք պղծած կ'ըլլայ Աստուծոյ տաճարը: Այդ եսասիրութիւնը անտարակոյս իր «Ես»-էն կու գայ: Մարդուն պարտականութիւնը խարազանը ի

ձեռին իր միտքէն ու անհատականութենէն՝ Աստուծոյ տաճարէն դուրս վտարել է իր «Ես»-ը, որպէսզի իր տաճարն ալ սրբանայ: Մարդ միշտ արթուն պէտք է ըլլայ, որպէսզի «Ես»-ը չպղծէ զինք՝ Աստուծոյ տաճարը:

«Արեւն ան կայէ՛լ եւ յաղօթս կայէ՛լ, զի մի՛
մարմնի՛ն քի փորձո՛ւթիւն: Ոգիս յօժա՛ր է՛ Բայց
մարմինս ցկա՛ր» : (Մարկոս ԺԴ: 38)

«Արթուն մնացէք եւ աղօթեցէ՛ք, որպէսզի չմտնէք
փորձութեան մէջ. իրաւ է թէ հոգին յօժար է, բայց
մարմինը՝ տկար»:

Երբ Յիսուս Գեթսեմանիի մէջ աղօթելու գնաց, իրեն հետ երեք առաքեալներ եւս գացին: Երբ Յիսուս կ'աղօթէր անոնք քնացան: Յիսուս երբ զիրենք քնացած գտաւ արթնցուց եւ վերեւի մէջբերումին մէջի խօսքը ըսաւ անոնց: Յիսուսի յորդորը այն է, թէ մարդ հոգեկան գետնի վրայ պարտ է միշտ արթուն ըլլալ: Մարդ միշտ կը փափաքի կատարեալ ըլլալ եւ Աստուածահաճոյ կեանք մը ապրիլ, բայց մարմինը տկար է. Մարդ տարուած մարմնին ցանկութիւններէն, յաճախ կը մտնէ հոգեկան քունի մէջ: Մարդուն հոգին իր ներքին Քրիստոսն է: Երբ մարդ իր գիտակցութեան ուշադրութիւնը անընդհատ իր մարմնին ցանկութիւններով զբաղ պահէ առիթ չի տար որ իր մէջ քնացող Քրիստոս քունէն արթըննայ: Պէտք չէ մոռնալ թէ մարդուն գիտակցութիւնը, իր մէջի Քրիստոսի գիտակցութիւնն է, բայց յայտնուած միայն ցած մակարդակով: Ինչպէս երբ մենք քունի մէջ ցած գիտակցութիւն կ'ունենանք, նմանապէս երբ «նաւ»-ուն՝ մեր մէջ Քրիստոս կը քնանայ «նաւ»-ը՝ մենք զգացական, հոգեբանական եւ խորհուրդներու փոթորիկի կ'ենթարկուիք: Միայն հոգեկան արթնութեամբ, այսինքն ներքին Քրիստոսի պարզեւած բարձր գիտակցութեամբ կարող կ'ըլլանք մարմինէն եւ

«Ես»-էն եկած փորձութիւններէն չտարուիլ: Բարձր գիտակցութիւնը կու տայ օգտակարը վնասակարէն զանազանելու կարողութիւնը, այսինքն իմաստութիւնը: Ան նաեւ ճշմարտութիւնը աւելի լաւ հասկնալու կարողութիւնը կու տայ:



ՀԻՒԱՆՊՈԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԵՊԸ

«Եւ շանոցեալ Յիսուսի պարտորոս նոցա՝
ասէ ցնոսս. Ընդէր խորհի՛նք դուք շարիս՝ ի
սիրոս յեր: Զի՞նչ դիւրին ասել՝ Բողեալ լիցին
էեզ մեղէ՛նք, Բէ՛՛ ասել՝ արե՛՛ եւ շրջեա՛ց»:

(Մարքէոս 10:4-5)

«Յիսուս՝ գիտնալով անոնց մտածումները՝ ըսաւ. «Ինչո՞ւ
չար բան կը մտածէք ձեր սիրտերուն մէջ: Ո՞րը ասելի
գլխին է, մեղքերդ ներուած են ըսե՞լը, թէ՛ ոտքի՛ ելիր
ու քալէ՛ ըսելը»»:

Երբ Յիսուս անդամալոյծ մը կը բժշկէր ըսաւ.
«Թողեալ լիցին քեզ մեղք քո»: Իր այս խօսքը ներկաները
խռովեցուցած էր: Յիսուս Քրիստոս գիտնալով հոն
գտնուող ժողովուրդին ժխտական մտածումները, անոնց
վերեւի մէջբերումին մէջի խօսքը ըսաւ :

Յիսուսի այս խօսքէն սորվելիք մէկ դաս մը ու-
նինք, ան ալ բոլոր հիւանդութիւններուն պատճառները
մեր գործած մեղքերն են: Հետեւաբար երբ կը հիւանդա-
նանք հարց պէտք է տանք, թէ ինչո՞ւ: Դժբախտաբար
մարդ չի գիտեր թէ իր ունեցած հիւանդութեան պատ-
ճառն ինքն է: Մարդիկ յաճախ իրենց ծնողքէն ժառան-
գած ծիները (gene) իրենց հիւանդութեան պատճառը կը
նկատեն: Նախ պէտք է հարց տալ թէ ինչո՞ւ այդ ծնող-
քէն ծնած են: Որովհետեւ իրենց զօրութեան մարմինն՝
ոգիին թրթռացումի յաճախականութիւնը ներդաշնակ
եղած է իր ծնողքին զօրութեան մարմիններուն թրթը-
ռացումի յաճախականութեան հետ: Ապա, պէտք է
հասկնալ, թէ վատ ծինի մը ներկայութիւնը անպայման
հիւանդութիւն յառաջ չի բերեր, եթէ անոր կարենալ
արտայայտուելու առիթը չտրուի՝ յայտնուելու պատ-
շաճ միջոցորտ մը չստեղծուի: Այդ միջոցորտն ալ
մարդուն կենցաղէն կախեալ է եւ կ'ըլլայ իր գործած
մեղքը: Որկրամոլութիւնը թէ՛ շաքարախտի եւ թէ՛ սըր-
տի տագնապի պատճառ կ'ըլլայ:

ՔՐԻՍՏՈՍԸ ԴԱԲԱՆԻԼ

«Ամենայն որ խոսարովանեցի յիս առաջի մարդկան, խոսարովանեցիցի է- էս պնմանէ առաջի Հօր իմոյ որ յերկինսն է: Ես որ ուրասցի պիս առաջի մարդկան, ուրացայց է- է՛ս պնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է»: (Մարքէոս Ժ:32-33)

«Ուստի ո՛վ որ դաւանի զիս մարդոց առջեւ, ես ալ պիտի դաւանիմ զինք Հօրս առջեւ՝ որ երկինքն է: Իսկ ո՛վ որ ուրանայ զիս մարդոց առջեւ, ես ալ պիտի ուրանամ զինք Հօրս առջեւ՝ որ երկինքն է»:

(Տես նաեւ Ղուկաս ԺԲ:8-9)

Քրիստոսի այս խօսքը բացայայտ կ'ընէ մարդուն Աստուած «գտնելու» միջոցը: «Դաւանիլ»-ը խորին համոզում ունենալ եւ իր այդ համոզումը՝ համաձայնութիւնը յայտարարելն է: Հետեւաբար երբ անձ մը Քրիստոս կը դաւանի, կը նշանակէ թէ ան համոզուած է Քրիստոսի գոյութեան եւ կը հաւատայ ըստ Աւետարանի մէջի զանազան գրութիւններով Յիսուսի սորվեցուցածներուն, կը հաւատայ նաեւ թէ ինք Աստուծոյ տաճարն է, հետեւաբար Քրիստոս ալ իր մէջ իր հոգին է: Կան կարգ մը յարանուանութիւններ, որոնց հետեւողները ասդին ու անդին յաճախ կը յայտարարեն թէ իրենք կը հաւատան Յիսուս Քրիստոսի Աստուծոյ Որդին ըլլալուն: Երբ Քրիստոս ըսաւ. «խոստովանեցի յիս առաջի մարդկան», արդեօք իր ակնարկութիւնը այդ բառացի յայտարարութեան համար է՞ր: Անձը նախ պէտք է համոզում ունենայ Քրիստոսի գոյութեան նկատմամբ: Բայց այդ համոզումը պարզապէս պէտք չէ միայն հաւատալիք (belief) մը ըլլայ, այլ՝ փորձառական հաւատք (faith): Իսկ այն ատեն իր այդ համոզումը՝ հաւատքը յայտարարել կարելի կ'ըլլայ: Իսկ յայտարարելն ալ Քրիստոս իր մէջ յայտնաբերելն է եւ ոչ ասդին ու անդին խօսելով: Երբ անհատը կը նմանի իր վարդա-

պետին՝ Յիսուսին իր հաւատքն ալ յայտնի կ'ըլլայ համայն մարդկութեան: Այս հանգրուանին, անհատին կենցաղն է, որ կը յայտարարէ անոր հաւատքը: Երբ Քրիստոս մեր մէջ կը «քնանայ», որ կը համապատասխանէ մեր ունեցած ցած գիտակցութեան մակարդակին, առանց Քրիստոս մեր մէջ յայտնաբերելով ի՞նչպէս կրնանք Քրիստոսը դաւանիլ: Իսկ եթէ մենք Քրիստոսը չենք դաւանիր, ինչպէս Քրիստոս ալ մեզ «դաւանի Հօր առջեւ»: Բայց եթէ Քրիստոս արթուն ըլլայ անձին մէջ, որ կը համապատասխանէ նաեւ անձին բարձր գիտակցութեան, անձն ալ կը հասկնայ միականութիւնը ամէն ինչի եւ կը լուծուի Աստուծոյ մէջ: Ահա՛, աս է Քրիստոսի մեզ իր Հօր՝ Աստուծոյ դաւանիլը: Երբ Քրիստոս կ'ըսէ. «որ յերկինս է», աս ակնարկութիւն մըն է, թէ այս բոլորը կ'ըլլան զօրութեան գետնի վրայ եւ ոչ Ֆիզիքական:



ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՄ ՈՒ ԽՆԱՄԱԿԱՎՈՒԹԻՒՄ

«Յայնժամ ժամանակի պարասխանի էր Յիսուս՝
էւ առէ. Գոճանամ սէլէն Հա՛յր՝ որէր երկնի՛ եւ երկ-
րի. սի թաթկեցեր սայս յիմասարնոց էւ՝ ՚ի Գիդնոց,
էւ յայդնեցէ՛ր գոչայոց: Այո՛ Հայր. սի ա՛յսպէս Հա-
ճոյ էղէւ առաջի ի՞նչ: Ամենայն ինչ գոռա՛ւ ինչ
՚ի Հօրէ իմմէ: Եւ ոչ ո՛վ ճանաչէ սորդի՛ ելէ ոչ
Հայր. էւ ո՛չ սՀայր ո՛վ ճանաչէ՛ ելէ ոչ սրդի, էւ
ոռմ սրդին կամիցի յայդնէ: Եկա՛յդ առ իս ամենայն
վասարակեալէ էւ թեռնաորդ, էւ էս Հանգոցից
սչէս: Առէ՛վ սլոռժ իմ՛ի յէս, էւ ոռարո՛ւթ յի-
նէն՝ սի Հէ՛ս էմ էւ խոնարհ սրդի. էւ Գրջիդ
Հանգի՛ս պանչանց յերոց: Չի լոռժ իմ ի՛ս սցր
էւ թեռն իմ սո՛վրոգի՛»: (Մարթէոս ժԼ:25-30)

«Այդ ատեն Յիսուս ըսաւ. «Կը ներբողեմ քեզ, ով Հայր, Տէր երկիրքի ու երկրի, որ այս բաները ծածկեցիր իմաստուններէն եւ խելացիներէն, ու յայտնեցիր երախաներուն: Այո՛, Հայր, որովհետեւ այսպէս հաճելի եղաւ քու առջեւ: Ամէն բան յանձնուեցաւ ինծի իմ Հօրմէս, եւ ո՛չ մէկը կը ճանչնայ Որդին՝ բայց միայն Հայրը, ու ո՛չ մէկը կը ճանչնայ Հայրը՝ բայց միայն Որդին, եւ ա՛ն՝ որուն Որդին փափաքի յայտնել: Եկէ՛ք ինծի, դուք բոլորդ որ կը յողնիք ու բեռնաւորուած էք, եւ ես պիտի հանգստացնեմ ձեզ: Առէ՛ք իմ լուծս ձեր վրայ ու սորվեցէ՛ք ինձմէ՝ որ հեզ եմ եւ սիրտով խոնարհ, ու հանդատութիւն պիտի գտնէք ձեր անձերուն: որովհետեւ իմ լուծս հեշտ է, եւ իմ բեռս՝ թեթեւ»:

(Տես նաեւ Ղուկաս Ժ:21-22)

Այս համարներուն մեկնաբանութիւնը կարելի է երեք մասի բաժնել:

Առաջին մասը հետեւեալն է. «զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ՚ի գիտնոց, եւ յայտնեցէ՛ր սղայոց»: Յիսուսի

այս խօսքին յենելով շատեր կ'ըսեն թէ ուսումով ու գիտութեամբ կարելի չէ փրկուել, այլ՝ միայն հաւատքով: Բայց Աւետարանին մէջ այլուր գրուած է, թէ գիտութիւնը Ս. Հոգիի շնորհներէն մին է: Ուրեմն երկու գիտութիւններուն մէջ պէտք է տարբերութիւն մը ըլլայ: Այդ գիտութիւններէն մին մեզի տրուած տեղեկութիւններէն մեր սորվածներն են: Նման գիտութեան տիրանալն ալ կը կարօտի մարդուն իմացականութեան գործունէութեան: Անտարակոյս այդ գիտութիւնները բոլորն ալ իրենց օգուտները ունին, նախ մեր առօրեայ կեանքին համար, ինչպէս նաեւ սորվելու ու գիտնալու կատարելութեան ուղին: Այս վերջինն ալ Յիսուսի ըսած գիտութիւնը ստանալու ճամբան կը բանայ որ իմացականութեամբ կարելի չէ հասկնալ ու գիտնալ: Ինչպէս մանուկները իմացականութիւն չունին եւ իրենց տրուած տեղեկութիւնները կարող չեն վերլուծել եւ զատել կամ դատել: Այս երկրորդ գիտութիւնը կը կարօտի աւելի բարձր գիտակցութեան տուած «փորձառական» գիտութեան, որ իմացականութիւնը կարող չէ զայն հասկնալ: Այս հիման վրայ ալ Յիսուսի բոլոր ըսածները, սորվեցուցածները մարդիկ իրենց իմացականութեամբ կը քննեն ու կը մեկնաբանեն, որոշ բաներ կ'ընդունին ըստ իրենց հասկացողութեան եւ որոշ բաներ ալ կ'անտեսեն: Մարդիկ ընդհանրապէս կ'ընդունին այն բաները, որոնք իրենց հաւատացածներուն կը համապատասխանեն եւ կ'անտեսեն անոնք, որոնք չեն համապատասխաներ: Հետեւաբար, Յիսուսի բոլոր խօսքերը կարելի են մեկնաբանել զանազան կերպերով, որոնք կախեալ են անհատին յայտնաբերած գիտակցութեան մակարդակէն: Բարձր գիտակցութեան մակարդակը մարդուն կու տայ իմաստութիւն:

Այս մէջբերումին երկրորդ մասին մէջ Քրիստոս մեզի կը յայտնէ Աստուած «գտնելու» միջոցը:

Մարդու համար իր ունեցած միտքով եւ իր իմացականութեամբ կարելի չէ հասկնալ կամ գիտնալ՝ «ճանաչէ» Հայր Աստուած: Որովհետեւ մարդ կը կարծէ եւ կը հաւատայ զանազանութեան ճշմարտութիւն մը ըլլալը, ինք ալ՝ իր միտքով կ'ըմբռնէ Աստուած իբրեւ իրմէ դուրս հուշիւն մը: Ըստ իր ըմբռնումին Աստուած ալ կը նմանի մարդու: Ան, ըստ Մննդոց գիրքին հետեւեալ համարին. «Եւ արար Աստուած զմարդըն՝ ՚ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնա» կ'արդարացնէ իր տեսակէտը: Եթէ այս տեղեկութիւնը ճիշդ է, որուն մասին որեւէ կասկած չկայ, կամ Աստուած մարդու կը նմանի, կամ՝ մարդը Աստուծոյ: Որովհետեւ մարդ նոյնացած է իր մարմինն հետ եւ կը կարծէ, թէ ինք իր մարմինն է, ան նաեւ կը կարծէ թէ Աստուած իրեն կը նմանի: Իսկ եթէ մարդ հասկնայ, թէ ինք իր մարմինը չէ եւ ինք միայն այդ մարմինը գործածողն է, այն ատեն կարելիութիւնը կ'ունենայ հասկնալու, թէ իր ճշմարիտ հուշիւնը իր մէջ Աստուծոյ ներկայութիւնն է, որ Աստուծոյ Որդի՝ Քրիստոս կը կոչենք: Ան իր հոգին է: Այս հիման վրայ վերեւի մէջըբերումին մէջի Քրիստոսի ըսածը արդէն ինքնաբերաբար բացայայտ կ'ըլլայ: Քրիստոս ստեղծագործութեան մէջ «ամէն ինչ» է: Միթէ ինք չըսա՞ւ. «Ամենայն ինչ տուա՛ւ ինձ ՚ի Հօրէ իմմէ»: Միայն Հայր Աստուած կը ճանչնայ Որդին Քրիստոս: Մարդ զժբատաբար կարող չէ նոյնիսկ իր հուշիւնը՝ Քրիստոս ճանչնալ: Մարդ եթէ կարող չէ իր հուշիւնը ճանչնալ, զարմանք պէտք չէ պատճառէ, թէ ան նաեւ կարող չէ Հայր Աստուած ճանչնալ: Բայց երբ մարդ կը հետեւի Յիսուսի սորվեցուցածներուն, իր բնոյթը փոխէ, կատարելութեան ուղիէն ընթանայ, իր «Ես»-ը անտեսէ եւ յարի իր ներքին Քրիստոսին ու իր կենցաղը վերածէ շարունակական աղօթքի, կարելի է, որ Քրիստոս

ալ գինք արժանի նկատէ աւելի բարձր գիտակցութեան: Այդ բարձր գիտակցութիւնը նկարագրուած է նաեւ տարբեր բառերով, անոնցէ մի քանին են.

ա- «Յափշտակութիւն».- Մարդու գիտակցութիւնը միշտ յանկարծ կը փոխուի՝ կը յափշտակուի «արթուն», «երագ»-ի եւ «խորունկ քուն»-ի մակարդակներուն միջեւ, մէկէն միւսը: Նմանապէս մարդ իր գիտակցութեամբ նաեւ կրնայ յափշտակուիլ շատ աւելի բարձր գիտակցութեան մակարդակի մը:

բ- «Քրիստոսի յայտնութիւն».- Մարդուն այդ յայտնաբերած բարձր գիտակցութիւնը իրեն կը յայտնէ ճշմարտութիւնը եւ ճշմարտութիւնը հասկնալու իմաստութիւն կու տայ:

Որովհետեւ միայն Որդին է որ Հայրը կը ճանչնայ, որով եթէ Որդին՝ Քրիստոս անձին մէջ յայտնուած է, անձին կը յայտնէ Հայրը: Որդին՝ Քրիստոս անհատին ճշմարիտ էութիւնը, շատ լաւ կը ճանչնայ անհատը եւ գիտէ անոր բոլոր խորհուրդները եւ հակումները: Որդին կը յայտնուի անձին մէջ եւ անոր կը յայտնէ Հայրը միայն այն պարագային երբ Քրիստոս անհատը արժանի կը գտնէ:

Այս մէջբերումին երրորդ մասին մէջ Քրիստոս մեզի կու տայ մեր անդորրութիւնը գտնելու միջոցը: Մարդիկ ընդհանուր առմամբ, իրենց ստեղծած յուշերով եւ ցանկութիւններով բեռնաւորուած, կը կորսնցնեն իրենց անդորրութիւնը: Անտարակոյս ասոնց բոլորին պատճառը անոնց «Ես»-ն է: Անոնք կապուած իրենց «Ես»-ին յաճախ կը խորհին, կը խօսին ու կը գործեն եսասիրութեամբ, որ կը հակասէ տիեզերական՝ Ս. Հոգիի օրէնքներուն: Հետեւաբար անոնք կ'ենթարկուին շատ մը անբաղձալի հակազդեցութիւններու՝ պատահարներու, որոնք զիրենք կը նեղեն: Այն նեղութիւններով եւ դժուարութիւններով մարդիկ կ'ըլլան

բեռնաւորուած: Քրիստոսի խօսքին՝ «Եկա՛յք առ իս»-ին իմաստը մարդուն իր մտքին ուղղութիւն փոխելն է: Անհատին իր «Ես»-ը լրիւ անտեսելն է եւ իր անհատականութեան յարիւն է իր ներքին Քրիստոսին եւ ապրիլը ըստ Անոր կամքին: Ուրիշ անգամներ ալ Յիսուս յաճախ թելադրած է «Ես»-ը անտեսել: Երբ մարդ կը յաջողի ապրիլ ըստ իր ներքին Քրիստոսի կամքին, իր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան ըստ Քրիստոսի՝ Աստուծոյ կամքին, հետեւաբար ներդաշնակ տիեզերական՝ Ս. Հոգիի օրէնքներուն: Անհատն ալ կ'ենթարկուի բաղձալի եւ հաճելի պատահարներու եւ իր լուծն ալ կ'ըլլայ «քա՛ղցր եւ բեռն ալ փոքրոպի՛»:



ՀՐԵՇՏԱԿԱՆԵՐՈ՝ ԱՍՏԻՈՅ ՉՕՐՈՒԹԻՒՆ

«Եւ ասէ ցնոսա Ամէն ամէն՝ ասե՛մ րեւանիցէ՛վ
պերկինս բացեալ, եւ պէրեշրակս Ասորո-ժոյ՝ պի ելա-
նիցեն եւ իջանիցեն ՚ի վերայ որդւոյ մարդոյ» :
(Յովհաննոս Լ:51)

«Նաեւ ըսաւ անոր. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը
յայտարարեմ ձեզի. Ասկէ ետք պիտի տեսնէք երկինքը
բացուած, եւ Աստուծոյ Հրեշտակները՝ որ կ'ելլեն ու
կ'իջնեն մարդու Որդիին վրայ»»:

Յիսուս այս խօսքը կ'ըսէ Նաթանայէլին երբ զայն
կը զատէ իբրեւ տասներկուքէն մին: Նաթանայէլ անձ
մըն էր, որ իր մէջ բնաւ նենգութիւն չունէր եւ անմի-
ջապէս Յիսուս Քրիստոսը ճանչցաւ ու ըսաւ. «Ռաբբի՛,
դո՛ւն ես Աստուծոյ Որդին, դո՛ւն ես Իսրայէլի թագա-
ւորը»(Համար 49): Անոնք որոնք նենգութիւն չունին եւ
կարող են անմիջապէս ճշմարտութիւնը տեսնել, ունին
բարձր գիտակցութեան մակարդակ: Հետեւաբար անոնք
կը կարողանան տեսնել Ֆիզիքականէն զատ նաեւ հոգե-
կանը՝ բոլոր այն բաները, որոնք կ'ըլլան զօրութեան
գետնի վրայ:

Երբ Նաթանայէլ կ'ըսէ. «դո՛ւն ես Իսրայէլի
թագաւորը», կը կարծենք, թէ ան Իսրայէլ երկրին
համար կ'ըսէ: Անտարակոյս աս սխալ է: Յիսուս
անապատին մէջ, ոչ թէ միայն Իսրայէլ երկրին, այլ
ընդհանուր աշխարհի տիրապետելու փորձութեամբ
փորձուած էր եւ մերժած: Հետեւաբար Ան Իսրայէլ
երկրին թագաւորը չէր, ոչ ալ կ'ուզէր ըլլալ: Իսրայէլ
անունը առաջին անգամ Յակոբին տրուեցաւ, որով-
հետեւ ան Աստուածայինին համար պայքարեցաւ եւ իր
մարդկային բնոյթին յաղթեց: Հետեւաբար Իսրայէլ
անունը կը տրուի անոնց, որոնք հոգեկան գետնի վրայ
յաղթական կ'ըլլան: Յիսուս ալ իր հասած մակարդակով
անոնց բոլորին թագաւորն էր:

ՏԱՃԱՐՈ ՔԱՎԵԼ ՈՒ ՎԵՐԱԿԱՆՈՒԵԼ

«Պատասխանի՛ երոտն Հրեայի՛ն՝ եւ ասէն ցնաւ .
Չի՞նչ նշան ցոյցանէս դոտ մեզ՝ զի զայդ
ատնէս . Պատասխանի եր Յիսուտ եւ ասէ զնոտ .
Քակեցէ՛ ի զտաճարդ զայդ եւ զերիտ տոտրտ
կանգնեցի՛ց ցնա» : (Յովճաննէս Բ : 18-19)

«Հետեւաբար Հրեաները ըսին անոր . «Ի՞նչ նշան ցոյց
կու տաս մեզի՛, քանի կ'ըսես այդ բաները» : Յիսուս
պատասխանեց անոնց . «Քակեցէ՛ք այս տաճարը, ու երեք
օրուան մէջ պիտի կանգնեցնեմ զայն»» :

*Երբ Հրեաները նշան կ'ուզէին, այլուր Յիսուս
ըսած էր, թէ անոնց նշան պիտի չտրուի: Բայց հոս
Յիսուս ամենամեծ նշանին մասին կը խօսի: Բայց
Հրեաները չհասկցան Յիսուսին ըսածին իմաստը եւ
կարծեցին թէ Ան տաճարին շէնքերուն համար կ'ըսէ:
Այն տաճարը որ պիտի քակեն Յիսուսի մարմինն է, որ
պիտի սպաննեն, իսկ կանգնեցնելն ալ իր Յարութիւնը:
Միթէ այլուր չէ՞ գրուած . «Ձեր մարմինները Աստու-
ծոյ տաճարներն են» : Նմանապէս մենք ալ երբ Փիզիքա-
կանը՝ աշխարհայինը կ'անտեսենք՝ կը «քակենք», կարող
կ'ըլլանք յաւիտենական կեանքը «կանգնել» :*



ՎԵՐԱՏԻՆ ԾԱՌԱՐՈՒ

«Եւ էր՝ ա՛յր մի՛ ՚ի փարիսէացոց անորի՛ Նիկողեմոս անունն նորա իշխա՛նն Հրէից: Սա՛ն էկն առ նա Գիշերի՛ եւ ասէ ցնա. Ռա՛բբի՛ Գիորգեմէ՛ թէ յԱպրո-ժոյ եկեալ էս վարդապետք զի ո՛չ ո՛վ կարէ զայդ նշանս ասնել՝ զոր դուրդ ասնես. եթէ ոչ Ապրո-ժոյ իցէ ընդ նմա: Պարասխանի էր Յիսոս՝ եւ ասէ ցնա. Ամէն ամէն ասե՛մ չեզ. եթէ ոչ ո՛վ թնցի ՚ի վերջորին ո՛չ կարէ ցիտանել զարվայո-թիւնն Ապրո-ժոյ: Ասէ ցնա Նիկողեմոս. Զիա՛րդ կարէ մարդ թնանել ո՞ր թնեալն իցէ մի եթէ՛ մա՛րդ ինչ իցէ անդրէն յորովայն մօր ի-րոյ կրկին մտանել է- թնանել: Պարասխանի էր Յիսոս՝ եւ ասէ. Ամէն ամէն ասե՛մ չեզ. եթէ ոչ ո՛վ թնցի ՚ի ջրո՛յ եւ ՚ի Հոգո-ոյ ո՛չ կարէ մտանել յարվայո-թիւնն Ապրո-ժոյ: Զի թնեալն ՚ի մարմնոյ մարմին է եւ թնեալըն ՚ի Հոգո-ոյ՝ Հոգի՛ է: Դոս՝ մի՛ զարմանար, թէ ասացի չեզ՝ որո՛րք է յեզ թնանել վերային: Զի Հողմ՛ ուր կամի շնչէ՛. եւ զՅայն նորա լսես. այլ ո՛չ Գիորգեա ուսոր՛ Գայ՝ կամ յո՛ երթայ սոյնպէս՝ եւ ամենայն թնեալն ՚ի Հոգո-ոյն: Պարասխանի էր Նիկողեմոս՝ եւ ասէ ցնա. Զիա՛րդ մարթի աչոմ լինել: Պարասխանի էր Յիսոս՝ եւ ասէ ցնա. Դոս ես վարդապետք Իսրայելի՛ եւ զայդ՝ ո՛չ Գիորգեա: Ամէն ամէն ասե՛մ չեզ. զի զոր ինչ Գիորգեմէ՛ խօսեմէ՛ եւ զոր ցիտապէ՛ վկայեմէ՛ եւ զվկայո-թիւնն մեր ո՛չ ընդունի: Իսկ արդ՝ եթէ զերկրա-որս ասացի յեզ

Եւ ո՛չ Ըստարայտի՝ զիս՞րտ ելիւ զԵրկնաորան ասացից՝ Ըստարայտի։ Եւ ո՛չ ո՛վ յԵրկնն էլ ելիւ ո՛չ՝ որ Է՛ջն յԵրկնից որտի՛ն մարտոյ՝ որ Է՛ն յԵրկնն։ Եւ որպէս Մոլոէս Բարձրացոյց զՕ՛ջն յանապարին՝ նո՛յնպէս Բարձրանալ պա՛րտ է որտոյ մարտոյ։ Զի ամենայն որ Ըստարայ՛ի նա՛մ ընկալցի զԿէանսըն յա՛րիւնականս։ Զի ա՛յնպէս սիրեաց Լստոսաթ զաշխարհ, մինչէս զորտի՛ն ի՛ր միաթին Ետ զի ամենայն որ Ըստարայ՛ի նա՛մ մի՛ կորիցէ, այլ ընկալցի՛ զԿէանսն յա՛րիւնականս։ Զի ո՛չ առա՛վեաց Լստոսաթ զորտի՛ ի՛ր յաշխարհ՝ իւր տարեացի զաշխարհ, այլ զի սիրեացի աշխարհ նո՛վա։ Որ Ըստարայ՛ի նա՛մ ո՛չ տարատարտեացի Եւ որ ո՛չ Ըստարայ՛ նա՛մ արտէ՛ն իսկ տարատարտեալ զի ո՛չ Ըստարայ՛ յանոսն միաթին որտոյն Լստոսաթոյ։ Եւ ա՛յս իսկ է տարատարան՝ զի լոյս Էկն յաշխարհ, Եւ սիրեցին մարտիկ զիստա՛ր առա՛ել իան զլոյս զի Էին Գործի իրեանց շարտիւն։ Զի ամենայն որ զա՛ր Գործէ՛ աբե՛ւյ զլոյս Եւ ո՛չ Գայ առ լոյսն՝ զի մի՛ յանտիմանեացին Գործի նորա։ Իսկ որ առնէ զճը՜մարտիւն Գա՛յ առ լոյսն՝ զի յայտին իցին Գործի նորա՛ իւր Լստոսաթ Գործեցան»։ (Յով. Գ։1-21)

«Փարիսեցիներէն մարդ մը կար՝ Նիկողեմոս անունով, որ Հրեաներու պետ մըն էր։ Ասիկա գիշերուան մէջ եկաւ Յիսուսի քով եւ ըսաւ անոր. «Ռաբբի՛, գիտե՞նք թէ՛ դուն Աստուծո՞ւմէ վարդապետ եկած ես. որովհետեւ մէկը չի կրնար ընել այն նշանները՝ որ դուն կ'ընես, եթէ Աստուծո՞ւմէ իրեն հետ չըլլայ»։ Յիսուս պատասխանեց անոր. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. եթէ

մէկը վերատին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ թագաւորութիւնը»։ Նիկողեմոս ըսաւ անոր. «Ի՞նչպէս կրնայ ծնիլ մարդ մը՝ որ ծերացած է։ Կարելի՞ է, որ երկրորդ անգամ մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»։ Յիսուս պատասխանեց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. Եթէ մէկը ջուրէն ու Հոգիէն չծնի՝ չի կրնար մտնել Աստուծոյ թագաւորութիւնը։ Մարմինէն ծնածը՝ մարմին է, եւ Հոգիէն ծնածը՝ Հոգի է։ Դուն մի՛ գարնանար որ ըսի քեզի. Դուք պէտք է վերատին ծնիք։ Հովը կը փչէ ո՛ւր որ ուզէ. կը լսես անոր ձայնը, բայց չես գիտեր ուրկէ՛ կու գայ, կամ ո՛ւր կ'երթայ։ Ո՛վ որ Հոգիէն կը ծնի՝ ա՛յսպէս է»։ Նիկողեմոս ըսաւ անոր. «Ի՞նչպէս կրնայ ըլլալ ատիկա»։ Յիսուս պատասխանեց անոր. «Դուն Իսրայէլի մէջ վարդապետ մըն էս, ու չե՞ս գիտեր այս բաները։ Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք, եւ ինչ որ տեսանք՝ կը վկայենք, ու չէք ընդունիր մեր վկայութիւնը։ Եթէ երկրային բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չէք հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատաք՝ եթէ երկնային բաներու մասին խօսիմ ձեզի։ Ո՛չ մէկը երկինք բարձրացաւ, բացի անկէ՛ որ երկինքէն իջաւ, մարդու Որդին՝ որ երկինքն է։ Եւ ինչպէս Մովսէս բարձրացուց օձը անապատին մէջ, այնպէս պէտք է որ բարձրանայ մարդու Որդին. որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը։ Որովհետեւ Աստուծած ա՛յնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին, որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը։ Քանի որ Աստուծած աշխարհ գրկեց իր Որդին՝ ո՛չ թէ աշխարհը դատապարտելու, հապա՝ որպէսզի աշխարհը փրկուի անով։ Ա՛ն որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ա՛ն որ չի հաւատար՝ անիկա արդէն դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին։ Սա՛ է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց գործերը չար էին։ Որովհետեւ ո՛վ որ չարիք կը գործէ, անիկա կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին քով, որպէսցի չկշտամբուին իր գործերը։ Բայց ա՛ն որ կը կիրարկէ ճշմարտութիւնը՝ կու գայ լոյսին քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ գործուեցան Աստուծամով»։

Այս մէջըբերումը կը վերաբերի Յիսուսի Նիկողեմոսին հետ ունեցած խօսակցութեան եւ «վերստին ծնունդի» գաղափարին: Անտարակոյս «վերստին ծնունդը» անհրաժեշտ է փրկութեան համար: Յիսուսի տուած այս յորդորին համար քրիստոնէութեան մէջ կան յարանուանութիւններ, որոնք չափահաս տարիքի դարձեալ կը մկրտուին, Յիսուս Քրիստոս իրենց մէջ կը հրաւիրեն, նաեւ կը դաւանին Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ Որդւոյն, իրենց մեղքերու թողութեան համար խաչուելուն եւ յարութեան եւ այս հիման վրայ ալ իրենք զիրենք փրկուած կը նկատեն: Անկարելի է ուրանալ այդ յարանուանութեան շատ մը անդամներուն ունեցած եռանդը ու անկեղծութիւնը: Երանի ամէն մարդ նման եռանդով մը մօտենար իր հոգեկան բարելաման եւ կատարելութեան ուղիէն ընթանալու համար: Բայց արդեօք ճիշդ է՞ անոնց բռնած ընթացքը: Արդեօք հասկցա՞ծ են Յիսուսի ըսածներուն բուն իմաստը: Ինչպէս Նիկողեմոս սխալ հասկցաւ Յիսուսի ըսածը, նմանապէս շատեր ալ սխալ կը հասկնան այդ խօսքերը: Հասկնալը կախեալ է անհատին յայտնաբերած գիտակցութեան մակարդակէն: Նիկողեմոս օրէնքի մարդ, իր մտքին մէջ նոյնացած էր իր մարմնին հետ: Ան, ինչպէս նաեւ այօր շատեր, կը կարծէր, թէ իր ճշմարիտ էութիւնը իր մարմինը ու միտքն են: Այս հիման վրայ ալ Յիսուսին ըսածին. «եթէ ոչ ոք ծնցի՝ ի վերստին ո՛չ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ» համար զարմացաւ, թէ չափահաս տարիքի ինչպէս իր մօր որովայնը պիտի մտնէ եւ դարձեալ ծնի: Յիսուսի պատասխանը հետեւեալն էր. «եթէ ոչ ոք ծնցի՝ ի ջրո՛յ եւ ՚ի Հոգւոյ ո՛չ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ»: Յիսուս բացատրութիւն տուաւ, թէ ինչ է վերստին ծնունդը: Ներկայ «վերստին ծնունդ» ունեցողներու յարանուանութեան անդամներուն Յիսուսի այս վերջին

խօսքին ըմբռնումը եւ հասկացողութիւնը կը նմանի Նիկողեմոսի հասկացողութեան մակարդակին: Անոնց հասկացողութիւնը մարմնայինը չէ, այլ մկրտութիւնը եւ իրենցմէ դուրս եղող Յիսուս Քրիստոս ներս՝ իրենց ներսիդին հրաւիրելն է: Այս հիման վրայ անոնք նաեւ կը համարեն փրկուած ըլլալ: Շատեր վերստին ծնունդ կը քարոզեն մարդիկ փրկելու համար: Մարդուն նպատակը պէտք չէ ըլլայ փրկութիւնը, որովհետեւ այլուր Յիսուս բացայայտ ըսած է, թէ ան որ փրկութիւն կ'ուզէ ամենեւին փրկութիւն պիտի չգտնէ: Հետեւաբար այս վերելի հասկացողութեան մէջ սխալ մը պէտք է ըլլայ: Յիսուս հետեւեալ խօսքով. «Չի ծնեալն 'ի մարմնոյ մարմին եւ եւ ծնեալն 'ի հոգոյ՝ հոգի՛ է», նաեւ սորվեցողց, թէ մարդ իր մարմինէն զատ ունի նաեւ հոգի մը եւ երկուքը իրարու հետ կապ ունենալով հանդերձ իրարմէ տարբեր եւ նոյնիսկ անջատ են:

Վերլուծենք Յիսուսի ըսածները եւ հասկնանք, թէ ինչ է «վերստին ծնունդը»: Նախ բուն վերլուծումին չսկսած կարելոր է հասկացողութեան գետին մը պատրաստել: Ըստ Աստուածաշունչի մենք բոլորս Աստուծոյ որդիներ ենք: Մեր մարմինները Աստուծոյ տաճարներ են, հետեւաբար Աստուած իր տաճարին մէջ է: Ամէն անձ ունի Ֆիզիքական մարմին մը, մտային «մարմին» մը եւ զօրութեան «մարմին» մը, որ ոգի կը կոչենք: Ոգին մարդուն հոգին է, որ իր մէջ մարդուն կողմէ դրուած տեղեկութիւն կը պարունակէ: Մարդուն Հոգին Քրիստոսի ներկայութիւնն է անձին մէջ, որ կը կենդանացնէ միւս բոլոր «մարմիններ»-ը: Քրիստոս Աստուծոյ Որդին է եւ այս հիման վրայ ալ բոլոր մարդիկ կ'ըլլան Աստուծոյ որդիները: Մարդուն մէջ Քրիստոս նաեւ «դուռ»-ը՝ միջոցն է, որ մարդ արարած ստանայ Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը: Անհատին գիտակցութիւնն ալ իր ներքին Քրիստոսի՝ Աստուծոյ գիտակցու-

Թեան փոքր մէկ մասնիկն է: Ինչ չափով, որ մարդ կը կարողանայ Քրիստոս իր մէջ յայտնաբերել այն չափով ալ իր գիտակցութիւնը կը բարձրանայ: Ուրեմն ո՞ւր է սովորական մարդուն եւ Յիսուսի տարբերութիւնը: Յիսուսի մէջ Քրիստոս լրիւ յայտնուած էր: Ճիշդ ասոր համար Աստուծոյ Որդի կ'ըսենք, որովհետեւ Յիսուս Աստուծոյ Որդւոյն՝ Քրիստոսի յայտնութիւնն է: Իսկ մենք մեր մէջ Քրիստոսի ներկայութիւնը ունենալով հանդերձ, մեր բռնած ընթացքով՝ կենցաղով, չենք յայտնաբերեր Քրիստոս մեր մէջ: Ըստ Յիսուսի նաւուն մէջ քնանալով սորվեցուցածին, Քրիստոս ալ մեր մէջ կը քնանայ: Մեր կեանքն ալ իր երազն է: Երազողը երազին մէջ չի տեսնուիր եւ կը տեսնուի միայն երբ երազողը արթննայ: Այդ արթննալն ալ Քրիստոսի յայտնութիւնն է անձին մէջ: Աստուած մարդուն տուած է անհատականութիւն մը եւ նաեւ ազատ կամք: Մարդ դատելու եւ զատելու կարողութիւնը ունի, հետեւաբար ազատ է յարիլ դէպի իր անհատականութեան ժխտական բեւեռին՝ իր «Ես»-ին եւ ըստ այնմ ապրիլ, կամ՝ յարիլ դէպի դրական բեւեռին՝ Քրիստոսի եւ ըստ այնմ ապրիլ: Համայն մարդկութիւնը կապուած աշխարհի եւ իր «Ես»-ին ցանկութիւններուն կ'անտեսէ իր հոգին՝ Քրիստոս: Ան նոյնիսկ տեղեակ չէ, թէ ինք զօրութեան մարմին մը ունի:

Ուրեմն ի՞նչ է իմաստը «հոգիէն եւ ջուրէն ծնել»-ուն: Անտարակոյս մկրտութեան խորհուրդը մեզի կը սորվեցնէ այն ինչ որ մենք պարտ ենք իրագործել մեր մէջ: Բայց ան վերստին ծնունդը չէ: Քրիստոս արդէն մեր էութիւնն է, դուրսէն Յիսուս Քրիստոս մեր մէջ կանչելու պէտք չունինք: Շատ հաւանական է «վերստին ծնունդ» ունեցողներու յարանուանութեան անդամներուն ըսել ուզածը իրենց ներքին Քրիստոս յայտնաբերելն է: Բայց այդ, խօսքով չ'ըլլար, այլ ան ամբողջ

ընթացք մըն է, կենցաղ մըն է, նեղ դռնէն մտնելն է, կատարելութեան ուղիին աւարտին հասնիլն է, փրկութիւն չփնտռելն է եւ մանաւանդ փրկութիւն գտած ըլլալու հպարտութիւնը չունենալն է: Երբ մարդ իր կեանքին մէջ գործած սխալին կ'անդրադառնայ եւ կը զղջայ ու կ'ապաշխարէ, ինք այլեւս կ'անտեսէ իր «Ես»-ը եւ կը յարի դէպի իր ներքին Քրիստոսին: Ինք «սուրբ սիրտ» կը կերտէ: Միթէ Յիսուս չէ ըսած, թէ «սուրբ սիրտ» ունեցողները Աստուած կը տեսնեն: Սուրբ սիրտն ալ բարի խորհուրդներ ունենալ չէ: Անտարակոյս բարի խորուրդները վատ խորհուրդներէն լաւ են: Բայց «սուրբ սիրտ»-ը խորհուրդներէ եւ զգացումներէ մաքրուած սրբուած միտքն է: Աս ալ կարելի է խոկումով, որ աղօթքին ամենավեհ կերպն է: Նման կենցաղով մարդ կը կարողանայ իր ներքին Քրիստոսի փորձառութիւնը ունենալ: Այդ փորձառութիւնը Քրիստոսի յայտնութիւնն է: Անձն ալ «հոգիէն» «վերստին ծնած» կ'ըլլայ: Քրիստոս անհատին մէջ Ս. Հոգիի զօրութեան բարձր որակով հոսքին «դուռ»-ն է: Քրիստոս է, որ անհատին զօրութեան մարմնին վրայի կեդրոնները՝ խակրանները կը բանայ եւ զանոնք Ս. Հոգիի զօրութեան հոսքին ընդունակ անօթներ կ'ընէ: Այս բարձր որակով յաւելեալ Ս. Հոգիի կենսատու զօրութիւնն ալ անձին մէջ «ջուրէն» վերստին ծնիլ»-ն է: Զուրին փոխաբերական իմաստը Ս. Հոգիի զօրութիւնն է: Անձին մէջի այս փոփոխութիւնը Յիսուս «վերստին ծնունդ» կոչեց: Այդ յանկարծակի փոփոխութիւնը ուրկէ կու գայ եւ ինչպէս կ'ըլլայ մարդ կարող չէ հասկնալ: Ծիշդ ասոր համար ալ Յիսուս ըսաւ. «Չի հողմ՝ ուր կամի շնչէ՛. եւ զձայն նորա լսես. այլ ո՛չ գիտես ուստի՛ գայ՝ կամյո՛ երթայ սոյնպէս՝ եւ ամենայն ծնեալն՝ ՚ի հողմոյն»:


Նիկողեմոս զարմանք ցոյց կու տայ, թէ ինչպէս

կարող է մարդ Յիսուսին ըսածը ընել, իրեն անկարելի թուած էր: Ընդհանուր առմամբ մարդիկ կը դժուարանան նման կենցաղ մը կերտել եւ աշխարհէն եւ իրենց «Ես»-էն բաժնուիլ: Այս հիման վրայ անոնք Յիսուսի ըսածները կը մեկնաբանեն ըստ իրենց կամքին եւ զանոնք կը յարմարցնեն իրենց կենցաղին, քան թէ փոխեն իրենց կենցաղը եւ զայն յարմարցնեն Յիսուսի սորվեցուցածներուն: Յիսուս գիտնալով մարդկային միտքը թէ պիտի փոխեն իր ըսածները եւ պիտի չհաւատան իր ըսածներուն, կ'ըսէ հետեւեալը. «Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ եւ ո՛չ հաւատայք. զիս՞րդ եթէ զերկնաւորսն ասացից՝ հաւատայցէք»:

Յիսուսի հետեւեալ խօսքը շատ յատկանշական է. «Եւ ո՛չ ո՛ք յերկինս ել եթէ ոչ՝ որ Էջն յերկնից որդին մարդոյ՝ որ Է՛ն յերկինս»: Մարդու որդին Քրիստոսն է, որ «երկինք»-էն իջած է: Միթէ ամենուն հոգին Քրիստոս չէ՞: Երբ մարդ իր մէջ լրիւ կը յայտնաբերէ Քրիստոսը, անոր հետ մէկ կ'ըլլայ եւ Քրիստոս, որ «երկինք»էն իջած էր «երկինք» կը բարձրանայ:

Մէջբերումին յաջորդ մասին մէջ, Յիսուս իր ապագայ խաչելու թիւնը կը բաղդատէ Մովսէսի անապատին մէջ օձը բարձրացնելուն: Այս արարքով ինք օրինակ կ'ըլլայ մեզի, թէ ինչ պէտք է ընենք մեր կեանքին մէջ: Միթէ այլուր չէ՞ ըսած. «խաչդ առ ետեւէս եկուր»: Մենք ալ պարտ ենք իրեն նման մեր «Ես»-ը գամել խաչին վրայ, որպէսզի ներքին Քրիստոս, որ կը ննջէ «յարու թիւն» առնէ՝ յայտնուի: Քրիստոս մեզի յայտնուեցաւ Յիսուսի միջոցաւ, եթէ հաւատանք Յիսուս Քրիստոսի սորվեցուցածներուն, կ'արժանանանք յաւիտենական կեանքի: Բայց հաւատալը պարզապէս կը հաւատամ ըսելը չէ, այլ Յիսուսի բոլոր սորվեցուցածները մեր կեանքին մէջ կիրարկելն է, այսինքն յարիլ դէպի մեր ներքին Քրիստոսի, քան թէ՝ «Ես»-ին:

Քրիստոս մեզ չի դատեր: Երբ անձը կ'անտեսէ իր ներքին Քրիստոսը եւ կը յարի իր «Ես»-ին, իր խորհուրդներուն, խօսքերուն եւ արարքներուն մեծամասնութիւնը կ'ըլլան ըստ իր «Ես»-ին կամքին, որ յաճախ հակառակ են տիեզերական օրէնքներուն եւ անհատն ալ կ'ենթարկուի այդ օրէնքներուն յառաջ բերած հակազդեցութիւններուն: Ահա՛, աս է իմաստը. «Որ հաւատայ նա՛ արդէ՛ն իսկ դատապարտեալ զի ո՛չ հաւատաց նա՛ արդէ՛ն իսկ դատապարտեալ զի ո՛չ հաւատաց յանուն միաճսի որդւոյն Աստուծոյ»: Ով որ կը հաւատայ նաեւ կը յարի դէպի Քրիստոսի, իսկ ով որ չի հաւատար, կը յարի իր «Ես»-ին: Յաջորդ նախադասութիւնը կ'ամփոփէ այս գաղափարը. «Եւ ա՛յս իսկ է դատաստան. զի ըյս եկն յաշխարհ, եւ սիրեցին մարդիկ զիսաւա՛ր առաւել քան զըյս զի էին գործք իւրեանց չարութեան»: Լոյսը մարդուն մէջ Քրիստոսի ներկայութիւնն է: Լոյսին փոխաբերական իմաստն ալ գիտակցութիւնն է: Աստուծոյ գիտակցութիւնը մեր մէջ ըլլալով հանդերձ զայն լրիւ չենք յայտնաբերեր եւ խաւարի մէջ կ'ապրինք: Ահա՛, աս է, որ կը կոչուի խաւարամտութիւն: Խաւարամտութեան հետեւանք ալ պատրանքը կը տեսնենք իբր ճշմարտութիւն: Վարագոյրները կը գոցենք եւ չենք արտօներ, որ արեւին պայծառ լոյսը մեր «սենեակ»-ը լուսաւորէ եւ ճղծիմ մոմ մը կը վառենք: Ահա՛, մեր ընտրած կեանքը: Աս էր, որ Յիսուս ուզեց փոխել: Մէջբերումին մնացեալը բացայայտ է եւ պէտք չունի յաւելեալ մեկնաբանութեան:



ՅԻՍՈՒ ՄԵ ՍԱՄԱՐԱՅԻ ԿԻՐԸ

«Եւ ա՛յդ էր աղբէր մի Յակովբայ: Եւ Յիսուս վաստակեալ ՚ի ճանադարձէն, նսրէ՛ր ՚ի վերայ աղբերն, եւ էր ժամ իբրեւ վեցերորդ: Գայ կին մի ՚ի Սամարեայ Հանել ջո՛ր: Ըսէ ցնա Յիսուս. Տո՛ւր ինչ ըմպել: Զի աշակերտին նորա երթալ էին ՚ի փաղակ անդր՝ զի կերակորս գնեսցէ: Ըսէ ցնա կինն սամարացի. Դո՛ւ որ Հրեա՛յդ ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրեա ՚ի կնոջէ սամարացոյ: Զի ոչ երբէկ խառնակին Հրեայդ ընդ սամարացիս: Պատասխանի՛ եր նմա Յիսուս՝ եւ ասէ. Եթէ Գիտէ՛ր դո՛ւ զպարգեան Լսորձոյ եւ ո՞վ է՛ որ ասեդ ցէեզ՝ թէ դո՛ւր ինչ ըմպել դո՛ւ արդեւէ խնդրէիր ՚ի նմանէ եւ ցա՛յր չեզ ջո՛ր կենդանի: Ըսէ ցնա կինն. Տէր՛ դո՛ւ փանգի եւ դոյլ իսկ ո՛չ ունիս եւ ջրհորս խոր իսկ արդ՝ ուսրի՞ ունիցիս զջորն կենդանի: Մի՞թէ դո՛ւ մեծ ինչ ո՞վ իցեա փան զՀայրն մեր Յակովբ՝ որ զայս ջրհոր եր մեզեւ ինչն ասրի արբ՝ եւ որդիկ նորա, եւ խաշինի նորա: Պատասխանի՛ եր նմա Յիսուս՝ եւ ասէ Ըմե՛նայն որ ըմպէ՛ ՚ի ջրոյ յայդմանէ, միւսանգամ ծարաւէ՛. Բայց որ ըմպէ ՚ի ջրոյն զոր ես ցաց նմա մի՛ ծարաւեսցէ յաւիտեան: Ըյլ ջո՛րն զոր ես ցաց նմա, եղիցի նմա աղբէր ջրոյ Բղիւլոյ ՚ի կեանն յաւիտեանականս: Ըսէ ցնա կինն. Տէր՛ դո՛ւր ինչ զջորն զայն, զի մի՛ ծարաւեսցի՛ եւ մի՛ եկից այսր Հանել ջո՛ր: Ըսէ ցնա Յիսուս. Ե՛րբ կոչեա

զայր լո՛ւ է- է՛կ այսր: Պայասխանի եր նմա կի՛նն՝
է- ասէ: Չի՛ լո՛ւ այր: Ըսէ ցնա Յիսուս. Բարո՛ւ չ
ասացեր՝ թէ շի՛ լո՛ւ այր. զի Ըի՛նգ այր փոխեալ
է լո՛ւ, է- զոր այժմ ունիս՝ շէ՛ լո՛ւ այր զայտ ար-
դա՛ր ասացեր: Ըսէ ցնա կի՛նն. Տէր՝ թուի ինչ թէ
մարգարէ՛ իցես դո՛ւ: Հար՛ն մեր՝ ի լերի՛նս յայսմիկ
երկիր պագին է- դո՛ւ չ ասէ՛ թէ յԵրուսաղէմ
է-էթ՝ է՛ր ցեղի ուր արժան իցէ երկիր պագանել:
Ըսէ ցնա Յիսուս. Աի՛ն դո՛ւ՝ Հասարա՛ ինչ, զի
եկեացէ ժամանակ՝ յորժամ ո՛չ ՚ի լերի՛նս յայսմիկ է-
ո՛չ յԵրուսաղէմ երկիր պագանիցեն Հօր: Դո՛ւ էր-
կիր պագանել՝ որո՛ւմ ո՛չն գիցէ՛ մե՛ լէ երկիր պագա-
նեմ յ որո՛ւմ գիցէ՛ մէն զի փրկո՛ւթիւն ՚ի Հրէից է:
Ըյլ եկեացէ ժամանակ, է- այժմ իսկ յորժամ
ճշմարտիպէն երկրպագո՛ւ էրկիր պագանիցեն Հօր՝
Հագո՛ւ զ է- ճշմարտութեամբ. իանզի է- Հայր՝
այնպիսի՛ երկրպագո՛ւ ի-ր խնդրէ: Հագի՛ է Ըսր-
ուած, է- երկրպագո՛ւացն նորա՝ Հագո՛ւ զ է- ճրշ-
մարտութեամբ պա՛րս է երկի՛ր պագանել: Ըսէ
ցնա կի՛նն, գիցէմ զի մեսոսիս գա՛յ՝ անուանեալն
Քրիստոս. յորժամ եկեացէ, նա՛ պարմեացէ մեզ զա-
մենայն: Ըսէ ցնա Յիսուս. Ե՛ս էմ, որ խօսիմս
ընդ լէզ: Ե- յա՛յն քան եկին աշակերտի՛ն նորա,
է- զարմանայի՛ն զի ընդ կնօջն խօսեր քայց ո՛չ
ո՛ լ ասաց ՚ի նոցանէ թէ զի՛նչ խնդրէս կամ զի՛նչ
խօսիս ընդ դմա: Եթո՛ղ կի՛նն զսասորն ի-ր՝ է-
չոգա- ՚ի իաղա՛ն, է- ասէ ցմարտիկն: Եկայ՛

տեսնել է սուր մի որ ասաց ինչ սամեանայն՝ որ ինչ ի՛մ Գործեալ մե՞տե՛ նա՛ իցէ Քրիստոսն: Ելին ՚ի խառնելն՝ եւ Գայրն ասա՛ նա: Եւ մինչեւ՝ եկեալ էին նո՛րս, առաջէին սնա աշակերտին եւ ասէին. Ո՛ւր Բժիշի՛ Ընաց կեր: Սա՛ ասէ ցնոսա. Ես՛ կերալո՛ր ունիմ ոտել սոր տո՛ւն ո՛չ Գիտէի: Ըսէին աշակերտին ընդ միմեանս. Մե՞ք է՛ք Բժիշի ինչ ո՛վ դմա ոտել: Ըսէ ցնոսա Յիսոսա. Իմ կերակորս ա՛յն է սի արարից սկսման այնորիկ որ ասալեացն սխա եւ կարարեցից սորոջն նորա: Ո՞չ տո՛ւտ ասէի՛ երէ աս՛յլ ես շո՛րի ամիսի էն՝ եւ Ընչի Գան աւաւասիկ էս՝ ասե՛մ ամբարջէի սա՛շա յեր եւ տե՛սէի սարտոսայն, սի ստիպակացեալ էն՝ եւ ՚ի Ընչն չաւաւալ. Եւ որ Ընչէն՝ վա՛րձա ասնոս, եւ ժողովէ ստորոջ ՚ի կեանսն յա՛րտեանկանս: Ջի որ սերմանէն՝ եւ որ Ընչէ, Ըստարակաց ցնձացեն: Յայսմ իսկ է Բանն ճշմարիտ. սի ա՛յլ է որ սերմանէ, եւ ա՛յլ է որ Ընչէ: Ես ասալեցի սլէս Ընչէլ՝ սոր ո՛չ տո՛ւտ սերմանեցէի այլի՛ վաստակեցին, եւ տո՛ւտ ՚ի վաստակս նոցա մտէի:»

(Յովճաննո՛ւ Ի:6-38)

«Ուրեմն Յիսուս՝ ճամբորդութենէն յոգնած ըլլալով՝ նստաւ այդ աղբիւրին քով: Գրեթէ վեցերորդ ժամն էր: Սամարիայէն կին մը եկաւ ջուր քաշելու: Յիսուս ըսաւ անոր. «Ինձի ջուր սուրճ խմելու» (քանի որ իր աշակերտները քաղաքը դացեր էին՝ կերակուր գնելու համար): Ուստի սամարացի կինը ըսաւ անոր. «Դուն՝ որ Հրեայ ես, ի՞նչպէս կ'ուզես ջուր խմել ինձմէ՛ սամարացի կնոջմէ մը» որովհետեւ Հրեաները չեն հաղորդակցիր Սամարացիներուն հետ: Յիսուս պատասխանեց անոր. «Եթէ դուն գիտնայիր Աստուծոյ պարգեւը, եւ թէ ո՛վ է ան՝

որ կ'ըսէ քեզի՝ Ինձի ջուր տուր խմելու, դո՛ւն պիտի ուզէիր իրմէ, ու ինք կենարա՛ր ջուր պիտի տար քեզի»։ Կի՛նը ըսաւ անոր. «Տէ՛ր՝ դուն ոչինչ ունիս՝ ջուր քաշելու համար, եւ այս հորը խորունկ է։ Ուրեմն ուրկէ՞ պիտի ունենաս այդ կենարար ջուրը։ Միթէ՞ դուն աւելի՞՞ մեծ ես քան մեր հայրը՝ Յակոբ, որ սուսա մեզի այս հորը, ու ասկէ խմեցին ինք՝ իր որդիները եւ իր անասունները»։ Յիսուս պատասխանեց անոր. «Ո՛վ որ խմէ այս ջուրէն՝ դարձեալ պիտի ծարաւնայ, բայց ո՛վ որ խմէ այն ջուրէն՝ որ ես պիտի տամ անոր, յաւիտեան պիտի չծարաւնայ։ Հասկա այն ջուրը՝ որ ես պիտի տամ անոր, պիտի ըլլայ անոր մէջ ջուրի աղբիւր մը՝ որ կը բխի յաւիտեանական կենալքի համար»։ Կի՛նը ըսաւ անոր. «Տէ՛ր՝ տո՛ւր ինձի այդ ջուրը, որպէսզի չծարաւնամ, եւ հոս չգամ՝ ջուր քաշելու»։ Յիսուս ըսաւ անոր. «Գնա՛, կանչէ՛ ամուսինդ ու հո՛ս եկուր»։ Կի՛նը պատասխանեց. «Ես ամուսին չունիմ»։ Յիսուս ըսաւ անոր. «Ճի՛շդ ըսիր Ամուսին չունիմ, որովհետեւ դուն հինգ ամուսին ունեցեր ես, եւ ան որ հիմա ունիս՝ ամուսինդ չէ. ճի՛շդ ըսիր ատիկայ»։ Կի՛նը ըսաւ անոր. «Տէ՛ր, կը նշմարեմ թէ՞ դուն մարգարէ մըն ես։ Մեր հայրերը երկրպագեցին այս լեռան վրայ. բայց դուք կ'ըսէք թէ Երուսաղէմ է միակ տեղը՝ ուր պէտք է երկրպագել»։ Յիսուս ըսաւ անոր. «Կի՛ն, հաւատո՛ւ ինձի, որ ժամը պիտի գայ, երբ ո՛չ այս լեռան վրայ եւ ո՛չ Երուսաղէմի մէջ պիտի երկրպագէք Հօրը։ Դուք կ'երկրպագէք անո՛ր՝ որ չէք ճանչնար. մենք կ'երկրպագենք անո՛ր՝ որ կը ճանչնանք. որովհետեւ փրկութիւնը Հրեաներէն է։ Բայց ժամը պիտի գայ եւ հիմա ալ է, երբ ճշմարիտ երկրպագողները պիտի երկրպագեն Հօրը՝ հոգիով ու ճշմարտութեամբ, որովհետեւ Հայրն ալ կ'ուզէ այդպիսինե՛ր՝ իրեն երկրպագելու համար։ Աստուած Հոգի է, եւ իրեն երկրպագողներն ալ պէտք է որ երկրպագեն հոգիով ու ճշմարտութեամբ»։ Կի՛նը ըսաւ անոր. «Գիտեմ թէ Մեսիան պիտի գայ, (Քրիստոս կոչուածը.) երբ գայ՝ պիտի հաղորդէ մեզի ամէն բան»։ Յիսուս ըսաւ անոր. «Ես՝ որ քեզի հետ կը խօսիմ՝ ան եմ»։ Այդ ատեն իր աշակերտները եկան, ու գարմացան որ կը խօսակցէր այդ կնոջ հետ, բայց անոնցմէ ո՛չ մէկը ըսաւ. «Ի՞նչ կ'ուզես» կամ. «Ի՞նչ կը խօսիս անոր հետ»։ Ուստի կի՛նը թողուց իր սափորը եւ գնաց քաղաքը, ու ըսաւ քաղաքացիներուն. «Եկէ՛ք, ու տեսէ՛ք մարդ մը՝ որ ըսաւ ինձի ամէն ինչ որ գործեր եմ. արդեօք ան է Քրիստոսը»։

Անոնք ալ ելան քաղաքէն եւ կու գային անոր: Այդ միջոցին աշակերտները իրեն կը թախանձէին ու կ'ըսէին. «Ռաբբի', կե՛ր»: Ան ալ ըսաւ անոնց. «Ես՝ ուտելու համար՝ ունի՛մ կերակուր մը, որ դուք չէք գիտեր»: Ուրեմն աշակերտները կ'ըսէին իրարու. «Արդեօք մէկը ուտելիք բերա՛ւ իրեն»: Յիսուս ըսաւ անոնց. «Իմ կերակուրս՝ գործադրել է գլխ դրկողին կամքը, եւ աւարտել անոր գործը: Դուք չէ՞ք ըսեր. Տակաւին չորս ամիս կայ՝ որ Հունձքի ատենը գայ: Ահա՛ ես կը յայտարարեմ՝ ձեզի Բարձրացուցէ՛ք ձեր աչքերը եւ դիտեցէ՛ք արտե՛րը. արդէն՝ ճերմկած ու Հնձուելու պատրաստ են: Ան որ կը Հնձէ՛ վարձք կը ստանայ, եւ պտուղ կը ժողվէ՛ յաւիտենական կեանքի համար, որպէսզի սերմանողն ու Հնձողը ուրախանան միասին: Որովհետեւ այս բանին մէջ ճշմարիտ է այն խօսքը. Մէկը կը սերմանէ, եւ ուրիշ մը կը Հնձէ: Ես դրկեցի ձեզ Հնձելու գայն՝ որուն համար չաշխատեցաք. ուրիշները աշխատեցան՝ ու դո՛ւք մտաք անոնց աշխատանքին մէջ»»:

Այս մէջըբերումը, որ նախ Յիսուսի եւ սամարացի կնոջ միջեւ տեղի ունեցած խօսակցութիւնը եւ յետոյ ալ Յիսուսի եւ իր աշակերտներուն հետ ունեցած խօսակցութիւնը կը ներկայացնէ, իր մէջ Քրիստոսի մի քանի յատկանշական խօսքերը կը պարունակէ, որոնք արժանի են վերլուծման:

Յիսուսի սամարացի կնոջ հետ խօսիլը, իր աշակերտներուն մեծ զարմանք պատճառեց, որովհետեւ Հրեաները Սամարացիներուն հետ չէին հաղորդակցեր: Սամարացիները Մովսիսական կրօնքը ընդունած օտար ազգ մըն էին: Յիսուս իր այս արարքով ցոյց կու տար, թէ ինք բնաւ խտրութիւն չէր ընէր: Երբ սամարացի կինը կը զարմանայ, թէ Հրեայ մը իրմէ ջուր կ'ուզէ, Քրիստոս կ'ըսէ. «Եթէ գիտե՛իր դու զպարգեան Աստուծոյ եւ ո՛վ է՝ որ ասեգ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել դո՛ւ արդեւք ինդրէիր՝ ի նմանէ եւ տա՛յր քեզ ջուր կենդանի»»: Քրիստոսի ակնարկը այն է, թէ այն «Ջուր»-ը, որ Քրիստոս կու տայ Ս. Հոգիի կենսատու զօրութիւնն է: Ջուրին փոխաբերական իմաստը Ս. Հոգիի զօրութիւնն

է: Միթէ այլուր Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ դուռը»: Դժբախտաբար սամարացի կիներ դարձեալ չի հասկնար Քրիստոսի ըսածին իմաստը: Քրիստոս կը պատասխանէ. «Ամենայն որ ըմպէ 'ի ջրոյ յայդմանէ, միւսանգամ ծարաւէ. բայց որ ըմպէ 'ի ջրոյն զոր ես տաց նմա մի՛ ծարաւեսցէ յաւիտեան»: Անոնք որոնք իրենց ներքին Քրիստոսէ կը ստանան Ս. հոգիի անհուն զօրութիւնը կ'ունենան նաեւ բարձր գիտակցութիւն եւ կը «տեսնեն»՝ կը հասկնան ճշմարտութիւնը: Քրիստոսի ըսածին շարունակութիւնը. «Այլ ջուրն զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբեր ջրոյ բղխելոյ 'ի կեանսն յաւիտեականս» ցոյց կու տայ, թէ անհատը կը նոյնանայ Քրիստոսի հետ եւ կը լուծուի Անոր մէջ եւ կ'ունենայ յաւիտեական կեանքը: Ան յօժարաբար կը թողու իր մարմինը: Տիրգիքական մարմինն է, որ ջուրի պէտք ունի եւ կը ծարաւնայ եւ ոչ թէ զօրութեան մարմինը: Զօրութեան մարմնին հասած այդ մակարդակն ալ կը ներկայացնէ Քրիստոսի յայտնութիւնը անձին մէջ:

Քրիստոս այս հետեւեալ խօսքով. «Այն դու՛ հաւատա՛ ինձ, զի եկեսցէ ժամանակ յորժամ ո՛չ 'ի լերինս յայսմիկ եւ ո՛չ յԵրուսաղէմ երկիր պագանիցէն հօր: Դուք երկիր պագանէք՝ որում ո՛չն գիտէք մեք երկիր պագանէմք որում գիտէ մք», ցոյց կու տայ թէ Աստուածպաշտութիւնը սրբատեղեր երթալով չ'ըլլար եւ նաեւ կը յայտնաբերէ այն իրողութիւնը թէ նոյնիսկ անոնք, որոնք Աստուած կը պաշտեն, չեն գիտեր, թէ ո՞վ կամ ի՞նչ կը պաշտեն: Իսկ անոնք, որոնք Քրիստոսը իրենց մէջ յայտնաբերած են, կը ճանչնան Զայն, հետեւաբար կը պաշտեն Աստուած, Որուն հետ հաղորդուած են: Սամարացի կիներ տակաւին խօսակցութեան այս հանգըրուանին, նոյնիսկ իր կեանքին մասին Անոր ըրած գուշակութիւններէն վերջ, չի ճանչնար Յիսուս Քրիստոսը, մինչեւ որ Յիսուս կ'ըսէ. «Ե՛ս եմ, որ խօսիմս ընդ քեզ»:

Այսքանով սամարացին, որ Հրեայ չէ, կ'ընդունի Յիսուս Քրիստոսի Մեսիան ըլլալը: Իսկ Հրեաները Ձինք չեն ընդունիր եւ նոյնիսկ այսօր տակաւին Մեսիային գալուտը կը սպասեն:

Յաջորդ մասը կը վերաբերի Յիսուսի Իր աշակերտներուն հետ ունեցած խօսակցութեան: Ան կ'ըսէ. «Իմ կերակուր ա՛յն է զի արարի՛ց զկամս այնորիկ որ առաքեացն զիս եւ կատարեցի՛ց զգործս նորա»: Անտարակոյս Յիսուս «կերակուր» բառը կը գործածէ՛ փոխաբերական իմաստով: Ինչպէս կերակուրը Ֆիզիքական մարմնին կշտացած ըլլալու գոհունակութիւնը կուտայ, նմանապէս հոգեւոր գեանի վրայ մեզի Հայր Աստուծոյ կողմէ տրուած պարտականութիւնը լիովին կատարելն ալ մեր զօրութեան մարմնին՝ մեր հոգիին նման գոհունակութիւն կուտայ: Յիսուս Իր աշակերտներուն նաեւ կ'ըսէ. «Եւ որ Հսձէ՛ն՝ վա՛րձս առնու, եւ ժողովէ զպտուղ ՚ի կեանսն յաւիտեանականս: Չի որ սերմանէ՛ն՝ եւ որ Հսձէ, Հասարակա՛յց ցնծասցեն»: Հոնձքը Ս. Հոգիի զօրութիւնն է: Զայն սերմանողը մեր ներքին Քրիստոսն է: Երբ անձը ինքզինք արժանի կ'ընէ ստանալու Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւն, թէ՛ ինք կը «ցնծայ» եւ թէ՛ ալ սերմանողը՝ Քրիստոս: Քրիստոսի ցնծութիւնն ալ Անոր յայտնուիլն է անձին մէջ: Ճիշդ ասոր համար ալ Յիսուս կ'ըսէ. «Յա՛յսմ իսկ է բանն ճշմարիտ. զի ա՛յլ է որ սերմանէ, եւ ա՛յլ է որ Հսձէ»: Յիսուսի այս խօսքերուն մէջ հատկնաշական կէտ մը եւս կայ. «Հոգի՛ է Աստուած, եւ երկրպագուացն նորա՝ հոգւո՛վ եւ ճշմարտութեամբ պա՛րտ է երկի՛ր պագանէր»: Ուրեմն Աստուած հոգի է: Հոգին զօրութիւն է եւ մենք ալ պարտ ենք հոգիով եւ ճշմարտութեամբ Իրեն երկրպագել, այսինքն Ձինք պաշտել: Ի՞նչպէս Հոգիով եւ ճշմարտութեամբ երկրպագել: Ճշմարտութեամբ երկրպագել կը նշանակէ եռանդով, գիտակցութեամբ,

առանց կեղծիքի (lip service), հաւատքով, անձնուիրումով եւ սէրով Աստուած պաշտել: Ինչո՞ւ օգտագործել «ճշմարտութեամբ» բառը: Ընդհանուր առմամբ մարդ կ'ապրի պատրանքային կեանք մը, որ ինք զայն ճշմարտութիւն կը համարէ: Մարդկային կեանքը երազ մըն է եւ ճշմարտութիւն չէ: Հետեւաբար երազը՝ պատրանքը անտեսել եւ իսկական ճշմարտութեան փարիլը կը ներկայացնէ ճշմարտութեամբ երկրպագելը: Մարդ պարտ է աշխարհի շլացուցիչ բայց պատրանքային ցանկութիւնները անտեսել: Անոնք ժամանակաւոր են, որովհետեւ պատրանքային են: Անգամ մը որ անձը կը կարողանայ պատրանքայինը եւ ճշմարտութիւնը զանազանել կը կարողանայ Աստուծոյ ճշմարտութեամբ երկրպագել: Ի՞նչպէս կատարել այս երկրպագութիւնը: Ան կ'ըլլայ միայն «հոգի»-ով: Ի՞նչ կը նշանակէ հոգիով երկրպագել: Մարդուն ճշմարիտ էութիւնը իր հոգին՝ Քրիստոսն է, որ անմահ է: Հոգիով Աստուած պաշտելն ալ Քրիստոս իր մէջ յայտնաբերելն է, այն ինչ որ Յիսուս ըրաւ եւ մեզի ալ յորդորեց նոյնը ընել՝ Իրեն նմանիլ: Մարդ արարած զօրութեան մարմին մը ունի: Ինք կ'որոշէ այդ զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը: Ան որքան բարձր յաճախականութիւն կերտէ իր զօրութեան մարմնին՝ հոգիին մէջ, նոյն չափով ալ կը յայտնաբերէ Քրիստոս իր մէջ: Ինք «հոգիով երկրպագած» կ'ըլլայ Աստուծոյ: Ահա՛, աս է Աստուածայայտնութիւնը անձին մէջ, հետեւանք հոգիով եւ ճշմարտութեամբ երկրպագութեան:



ՈՐՊԻՒՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՄԸ

«Պատասխանի՛ր Եր ԅրոտա եւ ասէ ցնոսա. Ամէն ամէն ասէ՛մ ո՛չ կարէ որդի մարդոյ ասնել յանձնէ եւ ո՛չ ինչ, եթէ ոչ Կրեասնիցէ պայրն պի առնէ. պի պոր նայն ասնէ, պնոյն եւ որդի՛ն նմին Գործէ: Զի Հայր սիրէ պորդի, եւ պամենայն ինչ ցոցանէ նմա՝ պոր ինչն ասնէ: Եւ մեծամե՛ծա եւս խան պոյնս ցոցանէ նմա պգործա, ընդ որ դոտիդ պարմանայ: Զի որպէս Հայր յարոցանէ պեռեալս եւ կենդանի ասնէ նոյնպէս եւ որդի՛ պորս կամի կենդանի ասնէ: Եւ ոչ եթէ Հայր դարի պո՛ղ՝ այլ պամենայն դարաստարանն Եր որդո՛ւյ իրոյ պի ամենեկեան պարոտեացեն պորդի որպէս պարոտեն պայրն: Որ ո՛չ պարոտէ պորդին, ո՛չ պարոտէ պայր պարատիշն նորա: Ամէն ամէն ասէ՛մ պի որ պէսնն իմ լո՛ւ եւ Հասարայ ասնմ որ արատեացն պիս ընդոտնի պկեանն յարթեանակնս եւ՝ ի դարաստարանն ո՛չ մարանէ, այլ զիսեցա՝ ի մաւոտանէ ի կեանս: Ամէն ամէն ասէ՛մ պի Գայ ժամանակ եւ արդէն իսկ ե յորժամ մեռեալէ լսիցեն ճայնի որդոտյն Ապրոտոյ եւ որդ լսիցեն՝ կեցցեն: Զի որպէս Հայր ոտնի կեանս յանձնն իրոտմ նոյնպէս Եր եւ որդո՛ւյ ոտնել կեանս յանձնն իրոտմ: Եւ իշխանութի՛ւնն Եր նմա դարաստարանն ասնել եւ պի որդի մարդոյ ե, ընդ այն պի՞ պարմանայ: Զի եկեացէ ժամանակ՝ յորոտմ ամենեկին որ ՚ի Գերեզմանս կայցեն, լոտիցեն ճայնի նորա, եւ եկեացէ՛ն արդատն որոց պէս-

*րիս Գործեալ իցէ՝ ՚ի յարութիւնն կենաց եւ որոց
զշա՛ր արարեալ իցէ՝ ՚ի յարութիւնն դասաստանաց » :*
(Յովհաննոս Ե:19-29)

«Իսկ Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Որդին ինքնիրմէ ոչինչ կրնայ ընել՝ Հապա միայն ինչ որ տեսնէ՝ որ Հայրը կ'ընէ. որովհետեւ ինչ որ ան կ'ընէ, նմանապէս Որդին ալ կ'ընէ այդ բաները: Քանի որ Հայրը կը սիրէ Որդին, եւ ամէն բան ցոյց կու տայ անոր՝ ինչ որ ինք կ'ընէ: Ասոնցմէ աւելի մեծ գործեր ալ ցոյց պիտի տայ անոր, որպէսզի դուք գարմանաք. որովհետեւ ինչպէս Հայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ՝ անոնց որ ուզէ: Քանի որ Հայրը ո՛չ մէկը կը դատէ, Հապա ամէն դատաստան Որդին տուաւ. որպէսզի բոլորը պատուեն Որդին, ինչպէս կը պատուեն Հայրը: Ա՛ն որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը՝ որ դրկեց գայն: Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ մտիկ կ'ընէ իմ խօսքս, ու կը հաւատայ անոր՝ որ դրկեց զիս, ունի յաւիտեանական կեանքը, եւ չ'իյնար դատապարտութեան տակ, Հապա անցած է մահէն դէպի կեանք: Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ժամը պիտի գայ ու հիմա ալ է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդին ձայնը. եւ անոնք որ կը լսեն՝ պիտի ապրին: Որովհետեւ ինչպէս Հայրը ինքնիր մէջ կեանք ունի, այնպէս ալ Որդին տուաւ՝ որ ինքնիր մէջ կեանք ունենայ. նաեւ անոր տուաւ դատաստան կիրարկելու իշխանութիւն, քանի որ ան մարդու Որդին է: Մի՛ գարմանաք ասոր վրայ. որովհետեւ Ժամը պիտի գայ՝ երբ բոլոր գերեզմաններու մէջ եղողները պիտի լսեն անոր ձայնը, ու դուրս պիտի գան. անոնք որ բարիք գործեր են՝ կեանքի յարութեան համար, եւ անոնք որ չարիք գործեր են՝ դատապարտութեան յարութեան համար»:

Յիսուսի այս խօսքերը կը բացայայտեն Աստուծոյ եւ Որդին՝ Քրիստոսի իրարու հետ ունեցած յարաբերութիւնը եւ նաեւ անուղղակիօրէն տեղեկութիւն կու տան Յիսուսի եւ Քրիստոսի իրարու հետ ունեցած յարաբերութեան մասին: Յիսուս Որդին՝ Քրիստոսի

մասին կը գործածէ բային երրորդ դէմքը, քան թէ առաջին դէմքը: Յիսուս նման արտայայտութեամբ զատողութիւն կը դնէ իր եւ Քրիստոսի միջեւ: Քրիստոս «Հայր Աստուծոյ» արտաձգութիւնն (projection) է: Հետեւաբար նաեւ ունի իր Հօր կարողութիւնները եւ Յիսուս կ'ըսէ. «ո՛չ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ եւ ո՛չինչ, եթէ ոչ տեսանիցէ զհայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն եւ որդի՛ն նմին գործէ»: Քրիստոս Աստուծոյ «մարմին»-ն է: Քրիստոս ամէն անհատի հոգին՝ էութիւնն է: Ինչպէս Հայրը, նաեւ Քրիստոս ամէն անհատի կեանքն է, Յիսուս կ'ըսէ. «նոյնպէս եւ որդի՛ զորս կամի կենդանի առնէ»: Անտարակոյս Յիսուս Քրիստոս, Քրիստոսի լրիւ յայտնութիւնն էր: Ըստ Յիսուսի սորվեցողացածներուն, մեր կեանքին նպատակն ալ իրեն նմանիլ եւ նոյնը ընելն է, այսինքն Քրիստոս մեր մէջ լրիւ յայտնաբերել: Յիսուս կ'ըսէ. «Եւ մեծամէ՛ծս եւս քան զսոյնս ցուցանէ՛ նմա զբործս, ընդ որ դուքդ զարմանայք»: Անհատին դատապարտութիւնը իր վատ խորհուրդ, խօսք ու արարքներուն յառաջ բերած անբաղձալի պատահարներն են: Անոնք, իրեն կերտած ճակատագրին հետեւանքն են: Իսկ ճակատագիրն ալ անձին իր կենցաղով որոշած, կամ աւելի ճիշդ է ըսել արտօնած զօրութեան թրթռացումի յաճախականութիւնն է, որ այդ տեղեկութիւնը կը տեղաւորէ անոր զօրութեան «մարմնին» մէջ: Անհատին հոգին իր զօրութեան մարմնին մաս կը կազմէ, այս հիման վրայ ալ զինք դատողը կ'ըլլայ Որդին՝ Քրիստոս: Ճիշդ ասոր համար Յիսուս ըսաւ. «Եւ իշխանութի՛նս ետ նմա դատաստան՛ս առնել եւ զի որդի մարդոյ է, ընդ այն զի՛ զարմանայք»: Յիսուս այլուր ըսած է, թէ ինք չէ եկած աշխարհը դատելու, այլ՝ փրկելու: Ուրեմն դատելը Յիսուսի չէր տրուած այլ Քրիստոսի: Այդ դատաստանը ամենաարդարն է, որովհետեւ անձին էութիւնն է որ

զինք կը դատէ: Իսկ դատաստանն ալ կեանքէ կեանք իրեն պատահած բոլոր պատահարներն են, որոնց ինք կ'ենթարկուի: Այն անձը, որուն անհատականութիւնը չի յարիր դէպի իր ներքին Քրիստոսին եւ կը յարի դէպի իր «Ես»-ին, այդ անձը չի «պատուէր» որդին եւ ան որ չի «պատուեր» որդին նաեւ չի «պատուեր» հայրը: Հետեւաբար ի զուր է «Տէր Տէր» ըսել եւ մեր ներքին Քրիստոսին չյարիլ:

Յիսուս այլուր իր աշակերտներէն մէկուն ըսած էր. «մեռելները թող թաղեն մեռելները»: Ուրեմն այս տողերուն մէջ ալ Յիսուս դարձեալ ապրող մարդիկ կը նմանցնէ մեռելներու՝ «Չի եկեցէ ժամանակն յորում ամենքին որ 'ի գերեզմանս կայցեն, լուիցէ՛ն ձայնի նորա, եւ եկեցէ՛ն արտաքս»: Շատեր կը կարծեն, թէ ըստ մարդկային ըմբռնումով բոլոր մեռնողները, իրենց գերեզմաններէն դուրս պիտի ելլեն: Անտարակոյս այս հասկացողութիւնը սխալ է: Համայն մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը հոգեպէս մեռած են եւ իրենց գերեզմաններն ալ իրենց մարմիններն են, որոնց անոնք սերտօրէն կապուած են: Բայց ժամանակ պիտի գայ, երբ ամէն մարդ պիտի ունենայ հոգեկան արթնութիւն եւ «դուրս պիտի գայ իր գերեզմանէն» ինքզինք դատէ եւ ընդունի իր «պատիժ»-ը իր մէջ Քրիստոսի յարութեան համար: Յիսուս նաեւ բացայայտ կ'ընէ, թէ այդ ժամանակը հիմա է երբ Ան կ'ըսէ. «զի գայ ժամանակ եւ արդէն իսկ է» եւ ոչ ապագային, տարիներ կամ դարեր վերջ՝ աշխարհի վախճանին:



ՅԻՄՈՒ ՔՐԻՍՏՈՍ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

«Ո՛ր չ կարեմ էս յանձնե առնել՝ եւ ո՛չ ինչ այլ որպէս լսե՛մ՝ դատրեմ, եւ դատաստանն իմ արդար է: Զի ո՛չ ինքրեմ պկամս իմ, այլ պկամս այնորիկ՝ որ առաքելացն պիս: Եթէ է՛ս վկայեմ վասն իմ, վկայութիւն իմ չէ՛ ճշմարիտ: Ը՛յլ է որ վկայե վասն իմ. եւ դուք գիտե՛ք եթէ ճշմարիտ է վկայութիւնն զոր վկայեաց վասն իմ: Դուք առաքելցե՛ք առ Յովհաննէս, եւ վկայեա՛ց ճշմարտութեանն: Ը՛յլ էս՝ ո՛չ եթէ ՚ի մարդկանէ՛ առնում վկայութիւն. այլ զս՛յս ասեմ զի դուք աղբեաջի՛ք: Սա՛ էր ճրա՛գն՝ որ լոցեա՛լ էր եւ ծագէր եւ դուք կամեցարոք՝ ցնծա՛լ առ ժամանակ մի՛ ՚ի լոյս նորա: Ը՛յլ էս ոռնիմ վկայութիւն մե՛ծ եւս իմն զՅովհաննէսս՝ զգործսն՝ զոր ետ ցիս Հայր՝ զի կարարեցից զնոսս նովի՛ն իսկ գործի՛ն զոր գործեմ՝ վկայեմ վասն իմ եթէ Հայր առաքելաց պիս: Եւ որ առաքելացն պիս Հայր, նա՛ վկայեաց վասն իմ: Դուք ո՛չ զչայն նորա երթե՛ք լոարոք՝ եւ ո՛չ զտեսիլ նորա տեսե՛ք: Եւ ո՛չ զքան նորա ոռնի՛ք՝ ի յեւ թնակեալ. զի զոր նա առաքելաց, դուք նմա ո՛չ Հաւատարայ՛ք: Իննեցե՛ք զգործս. զի դուք Համարի՛ք նովա՛ք՝ ոռնել զկեանսն յառիտեանկանս: Եւ նովի՛ն իսկ էն որ վկայեմ վասն իմ, որովք Համարի՛քն ոռնել կեանս: Եւ դուք ո՛չ կամի՛ք Գա՛լ առ իս զի պեանսն ոռնիցի՛ք: Ես փառս ՚ի մարդկանէ ո՛չ առնում: Ը՛յլ գիտե՛մ զչեւ՝ զի զսե՛րն Եստրո՛թոյ ո՛չ ոռնի՛ք յանձնս: Ես եկի

յանունն Հօր իմոյ, եւ ո՛չ ընդունելի պիտի ելի ասլ
ող եկեացե յ՛ր անունն պնա՛ ընդունելիցի՛ ՚: Ջրա՛րդ
կարելի դոռել Հաւասրալ. պի միտաա՛ ՚ի միմեանց աս-
նոռել. եւ պիտա՛ս պաա՛ ՚ի միո՛յն Ասորո՛ւջոյ ո՛չ
խնդրելի: Մի՛ Համարելի ելի եւ շարախօ՛ս ինչ իցեմ
պլենջ աս Հօր Գո՛յ որ շարախօ՛ս կայ պլենջ՝ Մով-
սէ՛ս յոր դոռելն յոսացեալ էի: Ջր ելի Հաւասրայի
դոռել Մովսիսի, Հաւասրայի՛ ՚նարդեալ եւ ինչ. պի
նա վասն ի՛մ իսկ Գրեաց: Ջր ելի նորա Գրոցն ո՛չ
Հաւասրայի, պիտա՛ր իմոց Բանիցս Հաւասրայելի՛»:

(ՅովՀաննէս Ե: 30-47)

«Ես ինձմէ ոչ ինչ կրնամ ընել. ինչպէս կը լսեմ՝ այնպէս
կը դատեմ, եւ իմ դատաստանն արդար է. որովհետեւ ո՛չ
թէ իմ կամքս կը փնտռեմ, Հապա անոր կամքը՝ որ զրկեց
զիս: Եթէ ես վկայեմ իմ մասիս՝ իմ վկայութիւնն ճշմա-
րիտ չէ: Ուրի՛շ մըն է՝ որ կը վկայէ իմ մասիս. ու ես
գիտեմ թէ ճշմարիտ է այն վկայութիւնը՝ որ ինք վկայեց
իմ մասիս: Դուք մարդ զրկեցիք ՅովՀաննէսի, եւ ինք վկայ
եղաւ ճշմարտութեան: Բայց ես ո՛չ թէ մարդոցմէ վկայու-
թիւն կը ստանամ՝ Հապա այս բաները կ'ըսեմ՝ որպէսզի
դուք փրկուիք: Ան ճրագ մըն էր՝ որ կը վառէր ու կը
փայլէր, եւ դուք ուզեցիք ժամանակ մը ցնծալ անոր
լոյսով: Սակայն ես ունիմ աւելի մեծ վկայութիւն՝ քան
ՅովՀաննէսիը. որովհետեւ այն գործերը որ Հայրը տուաւ
ինծի՝ որպէսզի աւարտեմ գանոնք, այդ նոյն գործերը որ
ես կ'ընեմ՝ կը վկայեն իմ մասիս թէ Հայրը զրկեց զիս:
Եւ Հայրը, որ զրկեց զիս՝ ինք վկայեց իմ մասիս: Դուք
բնա՛ւ լսած չէք անոր ձայնը, ո՛չ ալ տեսած անոր կերպա-
րանքը. անոր խօսքն ալ բնական չէ ձեր մէջ՝ որովհետեւ
դուք չէք Հաւատար անոր՝ որ ինք զրկեց: Ջրնեցի՛ք Գիր-
քերը, որովհետեւ դուք կը կարծէք անոնցմով ունենալ
յաւիտեանական կեանքը. բուն անոնք են՝ որ կը վկայեն
իմ մասիս: Դուք չէք ուզեր ինծի գալ՝ որ կեանք ունենաք:
Ես փառք չեմ ստանար մարդոցմէ. բայց գիտեմ ձեզ, որ
չունիք ձեր մէջ Աստուծոյ սէրը: Ես եկայ իմ Հօրս
անունով՝ ու չէք ընդունիր զիս. եթէ ուրիշ մէկը գայ

Ինքնիր անունով՝ պիտի ընդունիք զինք: Ի՞նչպէս կրնաք
Հաւատալ, դո՛ւք որ փառք կը ստանաք իրարմէ՛, եւ չէք
փնտոեր այն փառքը՝ որ կու գայ միայն Աստուծմէ: Մի՛
կարծէք թէ ե՛ս պիտի ամբաստանեմ ձեզ Հօրը առջեւ:
Կայ՛ մէկը՝ որ կ'ամբաստանէ ձեզ, Մովսէս՝ որուն կը
յուսաք: Որովհետեւ եթէ Մովսէսի Հաւատայիք, ինծի՛ պլ
պիտի Հաւատայիք, քանի որ ան գրեց իմ մասիս: Բայց
եթէ չէք Հաւատար անոր գրածներուն, ի՞նչպէս պիտի
Հաւատաք իմ խօսքերուս»:

*Նախորդ մէջբերումին մէջ Յիսուս գործածած էր
բային երրորդ դէմքը, իսկ այս մէջբերումը, որ նա-
խորդին շարունակութիւնն է, Քրիստոս կը գործածէ
առաջին դէմքը: Նախորդին մէջ Յիսուս կը խօսէր
Քրիստոսի մասին, իսկ հոս Քրիստոս, որ յայտնուած է
Յիսուսի մէջ, կը խօսի Յիսուսի միջոցաւ: Յիսուսի
խօսքերը երբեմն կը ցոլացնեն իր մարդկային բնոյթը
եւ երբեմն ալ իր Աստուածային բնոյթը: Երբ Քրիստոս
կ'ըսէ. «դատաստանն իմ արդա՛ւր է» այն է, թէ մարդուն
ճշմարիտ հոլթիւնը՝ Քրիստոսն է, որ զինք պիտի
դատէ: Յիսուս այլուր ըսած է, թէ Ինք դատելու չէ
եկած այլ՝ փրկելու: Քրիստոսի դատաստանը Աստուծոյ
կամքն է: Դատաստանը Յիսուսի կամքը չէ այլ Հօր
կամքը: Բոլորս Աստուծոյ որդիներ ենք եւ Հայր Աստու-
ծոյ հրամանով՝ կամքով աշխարհ եկած: Հետեւաբար
Յիսուս կ'ըսէ. «Չի ո՛չ խնդրեմ վկամն իմ, այլ վկա՛ մն
այնորիկ՝ որ առաքեալն զիս»: Աստուծոյ կամքն ալ ներ-
կայացուած է Ս. Հոգիի տիեզերական օրէնքներուն
մէջ: Յիսուս կ'ըսէ. «Այլ է որ վկայէ վկամն իմ»,
Քրիստոսի համար է, որ կ'ըսէ, թէ կը վկայէ իրեն
համար: Յիսուս իր հետեւեալ խօսքով. «այլ զայս ասեմ
զի դուք ապրեսջի՛ք» նաեւ կը յայտարարէ իր սորվեցու-
ցածներուն նպատակը: Յիսուս մեզի սորվեցուց փրկու-
թեան միջոցները՝ այն ինչ որ մենք պարտ ենք
կիրարկել մեր կեանքին մէջ: Իր հետեւեալ խօսքն.
«զգործն» զոր ետ ցիս Հայր՝ զի կատարեցից զնոսս»*

յայտնի կ'ըլլայ թէ Հայր Աստուած ինչպէս Յիսուսին, բոլորիս ալ պարտականութիւն մը տուած է, որ պէտք է զայն կատարենք ու աւարտենք: Յիսուս իր այս յաջորդ խօսքով. «Դուք ո՛չ զձայն նորա երբէք լուարուք եւ ո՛չ զտեսիլ նորա տեսէք: Եւ ո՛չ զբան նորա ունիք՝ ի ձեզ բնակեալ. զի զոր նա առաքեաց, դուք նմա ո՛չ հաւատայք» մեզի կը սորվեցնէ Աստուած «ճանչնալու» միջոցը: Այդ միջոցը հաւատքն է: Այո, կան շատեր, որոնք Աստուծոյ կը հաւատան եւ դարձեալ Աստուած չեն լսած ու տեսած, որովհետեւ Աստուծոյ նկատմամբ անոնց հասկացողութիւնը սխալ է եւ հետեւաբար հաւատքն ալ սխալ: Լերան քարոզին մէջ Յիսուս ըսած է. «անոնք որոնք սուրբ սիրտ ունին Աստուած կը տեսնեն»: Իսկ վերելի համարին մէջ կ'ըսէ. «դուք տեսած չէք Անոր կերպարանքը»: Ի՞նչպէս Աստուած տեսնել: Ինչպէս մարդ կարող չէ լոյսը տեսնել, այլ միայն անոր ցոլացումը կը տեսնէ, նմանապէս մարդ նաեւ կարող չէ Աստուած տեսնել: Բայց ան Աստուծոյ ցոլացումը տեսնելու կարողութիւնը ունի: Ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ ցոլացումն է: Մենք ստեղծագործութեան մէջ կը տեսնենք զանազանութիւն եւ կարող չենք Աստուծոյ ցոլացումը տեսնել: Երբ անհատը կը յաջողի «սուրբ սիրտ» կերտել կը հասկնայ՝ կը տեսնէ ամէն ինչի միականութիւնը: Այն ատեն ինք ալ կ'անդրադառնայ թէ այդ բոլորը Աստուծոյ «ցոլացումն» է: Եւ ինք Աստուած կը տեսնէ ամենուրեք, ամէն անձի եւ ամէն բանի մէջ:

Վերել Յիսուս նաեւ ըսած է. «դուք լսած չէք անոր ձայնը...անոր խօսքն ալ բնակած չէ ձեր մէջ»: Մարդիկ կը կարծեն, թէ Ս. Գիրք կ'արդալով կը սրբանան կամ կ'արդարանան եւ նոյնիսկ Ս. Գիրքը իրենց ձեռքը ասդին ու անդին կը քարոզեն, բայց դժբախտաբար առանց հասկնալու հոն ներկայացուած կատարելութեան ուղին՝ առանց «ձայնը լսելու» եւ առանց «խօս-

քին իրենց մէջ բնակելուն» : Ճիշդ ասոր համար Յիսուս ըսաւ. «զի դուք համարիք նորա՛ւր ունել զկեանսն յաւիտեանականս» : Քրիստոս նաեւ կ'ըսէ. «Եւ դուք ո՛չ կամիք գա՛լ առ իս զի զկեանսն ունիցիք» : Մարդ ընդհանուր առմամբ կը յարի իր «Ես»-ին, քան թէ յարի Քրիստոսի, հետեւաբար ինք իր ձեռքով ինքզինք կը զրկէ յաւիտենական կեանքէն, որ Քրիստոս կու տայ ներկային մէջ : Այս ճախողութեան բուն պատճառն ալ Յիսուս կը մատնանշէ. «զի զսէ՛րն Աստուծոյ ո՛չ ունիք յանձինս» մեր Աստուծոյ հանդէպ սէր չունենալն է : Մարդ աշխարհը աւելի կը սիրէ քան թէ Աստուած : Յիսուսի այս խօսքն ալ. «Ես եկի յանուն հօ՛ր իմոյ, եւ ո՛չ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յի՛ւր անուն զնա՛ ընդունիցի՛ք : Չիա՛րդ կարէք դուք հաւատալ զի փառս 'ի միմեա՛նց առնուք. եւ զփա՛ռս զառ 'ի միո՛յն Աստուծոյ ո՛չ խնդրէք» ցոյց կու տայ, թէ ինչպէս մարդիկ կ'անտեսեն հոգեկան յառաջացման միջոցները, որովհետեւ անոնք չեն համապատասխաներ իրենց կենցաղին, բայց երբ մարդիկ կը քարոզեն խեղաթիւրուած հասկացողութիւններ, որոնք կը համապատասխանեն իրենց կենցաղին, անոնց կը հաւատան : Ասոր պատճառն ալ այն է, որ անոնք գիտեն մարդոց կողմէ փառաւորութիւլ, բայց փորձառութիւն չեն ունեցած Աստուծոյ փառքին : Մարդկային փառքը կը յառաջացնէ «Ես»-ը, իսկ Աստուծոյ փառքին յայտնութիւնը կը փճացնէ «Ես»-ը : Մարդ իր «Ես»-ին կապուած չուզեր զայն կորսնցնել, հետեւաբար չ'աշխատիր Աստուծոյ փառքը յայտնաբերել իր մէջ :



ՀԱՅՐ ԱՍՏԻՈՅՅ ԿԱՍԵՐ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ ԿԵԱՍԵՐ ՀԱՅԸ

«Եւ ի բժրէս Գորին պնա յա՛յնկոյս ժողո՞ւն ասէն պնա .
Ռա՛բբի՛ ե՞րբ եկիր այսր : Պարասխանի եր նոցա
Յիսոսա՛ եւ ասէ . Ըմէն ամէն ասէ՛մ խնորրէ՛վ դո՞ւք
պնա ի բժրէս ո՛չ երէ պն նշա՛նս ինչ րեաւէվ, այլ պն
կերա՛յվ ՚ի Հացե անոր՛ եւ յաԳեցարո՞ւք : Երբա՛յվ
Գործեցէվ՛ մի՛ պկորսրակա՛ն կերակո՞րն, այլ պկերա-
կո՞րն որ մնայ ՚ի կեա՛նսն յաւիտեանակա՛նս պոր որորն
մարդոյ րացէ՛վ անպն պն Հայր կնվեա՛ց Ըսրոսա՞ծ :
Ըսէն պնա . Զի՞նչ առնիցէմէ՛վ պն պԳործան Ըսրոսա՞ծոյ
Գործեցո՞ւք : Պարասխանի եր Յիսոսա՛ եւ ասէ պնո-
սա . Ըյս է Գործն Ըսրոսա՞ծոյ պն Հաւարասջիվ
յայն . պոր առախեացն նա : Ըսէն պնա . Զի՞նչ նշան
առնիցես . պն րեացո՞ւք եւ Հաւարացո՞ւք պն՞նչ
Գործիցես : Հա՛րվն մեր կերան պմանանայն յանադա-
րի անդ . որդէս եւ Գրեալ Հա՛ց երկնից է՛ր նոցա
ոտրէլ : Ըսէ պնոսա Յիսոսա . Ըմէն ամէն ասէ՛մ թէ
ո՛չ Մովսէս եր յեզ պՀա՛ցն յերկնից . այլ Հա՛յրն իմ
րացե յեզ պՀացն յերկնից պճշմարիտ : Զի՛ Հաց
յԸսրոսա՞ծոյ է . որ իջանէն յերկնից՝ եւ կեա՛նս րայ
աշխարհի : Ըսէն պնա . Տէր՛ յամենա՛յն ժամ րո՞ւր
մեզ պՀացն պայն : Ըսէ պնոսա Յիսոսա . Ես էմ Հացն
կենաց . որ Գայ առ իս՝ ո՛չ վազցիցէ . եւ որ Հաւա-
րայ յիս՝ ո՛չ երբէվ ժարաւեացի : Ըյլ առացի յեզ՛
երէ րեաւէվ պն, եւ ո՛չ Հաւարայվ : Զամենայն

զոր Կա՛յ ինչ Հայր, առ ի՛նչ եկեաց. ե- որ Գա՛յ
առ ին, ո՛չ Հանից արարա՛ւն: Զի իջի՛ ես յերկնից.
ո՛չ զի զկա՛մս իմ արարից այլ զկամս այնորիկ որ
առա՛վեացն զին: Ա՛յս էն կամի Հոր իմոյ որ առա՛վ-
եացն զին. զի զամենայն զոր է՛ր ցին Հայր՝ ո՛չ
կորո-սից ՚ի նմանէ, այլ յարո-ցի՛ց զնա յառ-ո-րն
յեղնո-մ: Ա՛յս էն կամի Հոր իմոյ. զի ամենայն որ
դե-սանիցէ զորդի՛ ե- Հա-արայցէ ՚ի նա, ընկալցի՛
զկեանն յա-իցեանկանս ե- ես՝ յարո-ցի՛ց զնա
յառ-ո-րն յեղնո-մ: Տրդնջէին զնմանէ Հրեայի՛ն, զի
ասաց՝ Ի՛նչ է՛ս եմ Հա՛ցն իջեալ յերկնից ե- ասէին.
Ո՞չ աս է որդի Յովսեփո-ս. զորոյ մե՛տ Գրեմի՛
զՀայրն իսկ արդ՝ զիս՛րդ ասէ՛ երէ ես յերկնից իջի՛:
Պարասխանի էր Յիսո-ս՝ ե- ասէ ցնոսս. Ա՛յ իջի-
մընջէի ընդ մեմեանս. ո՛չ ո՛վ կարէ Գալ առ ին,
երէ ոչ Հայրն՝ որ զին առա՛վեաց՝ չԳեացէ զնա ե-
ես յարո-ցից զնա յառ-ո-րն յեղնո-մ: Գրեա՛լ է ՚ի
մարգարէս. ե- էդիցին ամենե՛կեանս ո-սեալի յԱ-
դո-ժոյ: Ամենայն որ լսէ ՚ի Հորէ՛ ե ո-սանի՛ Գա՛յ
առ ին: Իբրե- ո՛չ երէ զՀայր՝ ո-րո-վ դե-սեալ իցէ
ոչ որ է՛ն յԱդո-ժոյ, նա՛՛ էրեւ զՀայր: Ամէն
ամէն ասե՛մ զի որ Հա-արայ՝ ընդո-նի՛ զկեանն
յա-իցեանկանս: Ե՛ս եմ Հացն կենաց: Հարդն յեր
կերան զմանանայն յանապարհն՝ ե- մեռ-ան: Ա՛յս է
Հացն, որ յերկնիցն իջեալ զի որ ո-րիցէ ո՛վ ՚ի
սմանէ՛ մի՛ մեռ-անիցի: Ե՛ս եմ Հացն կենդանի,
որ յերկնից իջեալ: Երէ ո՛վ ո-րիցէ ՚ի Հացէ

յայտմանէ՝ կեցցէ՛ ՚ի յաւիտեան: Եւ Հասցն զոր ես
դասց՝ մարմին իմ է, զոր ես դասց զման կենաց աշ-
խարհի: Մարդն շէրն ընդ միմեանս Հրէայէն ե-
ասէին. Չիս՞ ըտ կարէ սա՛ դա՛լ մեզ զմարմին ի-ր
յո-րեւ: Ըսէ ցնոսա Յիսուս. Ըմէն ամէն ասե՛մ չեզ,
եթէ ո՛չ կերիջի՞ զմարմին որդե-ոյ մարդոյ եւ արթ-
ջի՞ զարիւն նորա. ո՛չ ունի՞ կեանս յանձինս: Որ
ո-րէ զմարմին իմ՝ եւ ըմպէ զարիւն իմ ունի՞ զկեա-
նքս յաւիտեանկանս. եւ ես՝ յարո-ցից ցնա յա-ո՛ւրն
յեդնում: Չի մարմին իմ՝ ճշմարի՞ր կերակոր- եւ ե-
արիւն իմ՝ ճշմարի՞ր ըմպելի է: Որ ո-րէ զմարմին
իմ, եւ ըմպէ զարիւն իմ, յի՞ս թնակեացէ. եւ ես ՚ի
նա՛: Որպէս առաջեա՛ց զիս կենդանին Հայր, եւ
ես կենդանի՛ եմ զման Հօր. եւ որ ո-րէն զիս՝ եւ
նա՛ կեցցէ զման իմ: Ըյս է Հասցն՝ որ յերկնից իջեալ՝
Ո՛չ որպէս կերան Հարէն չեր զմանանայն՝ եւ մե-
սան. որ ո-րէ զՀասցս զյայս՝ կեցցէ՛ յաւիտեան:
Չայս սաս՛ց ՚ի ժողովրդեանն՝ յոսո-ցանելն ՚ի Աս-
փառնաում: Եւ թասո՛ւմէ յաշակերդացն իբրե-
ւումն՝ ասէն. Ի՛նչ որ է թանդ այդ. ո՞վ կարէ լսել
դմա: Իբրեւ գիբաց Յիսուս յանձն ի-ր՝ եթէ դրդըն-
ջէն զման այնորիկ աշակերդէն նորա. սսէ ցնոսա.
Ըյդ՝ Գայթաղեցո-ցանէ՞ զչեզ: Իսկ արդ՝ եթէ
դեաննիցէ՞ զորդի մարդոյ՝ զի ելանիցէ՛ ո-ր էր զա-
ռաջինն: Հոգին է կենդանարար, մարմին՝ ինչ ոչ
օգնէ: Չթանն զոր ես խօսեցայ ընդ չեզ՝ Հոգի է
եւ կեանի՞: Ըյլ էն ոմանի՞ ՚ի չէնջ՝ որ ո՛չ Հաս-

դասն: Քանչևի Գիտէ՛ր Յիսուս իսկզբանէ ո՛վ էն
այնո՞վիկ որ ո՛չն Հաւարան. եւ ո՛վ այն է որ
մարտելոցն է պնաս: Եւ ասէր. Վասն այնորիկ ասացի
Յեզ' Թէ ո՛չ ո՞վ կարէ Գալ առ իս. եթէ ո՛չ իցէ
դու-եալ ՚ի Ըօրէ իմմէ»: (ՅովՀաննէս .Գ:25-66)

«Երբ գտան զի՛նք՝ ծովուն միւս եզերքը, ըսին իրեն.
«Ռաբբի՛, ե՞րբ եկար Հոս»: Յիսուս պատասխանեց անոնց.
«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի.
Դուք զիս կը փնտռէք՝ ո՛չ թէ քանի որ նշաններ տեսաք,
Հապա՛ որովհետեւ նկանակներէն կերաք ու կշտացաք:
Գացէ՛ք, գործեցէ՛ք ո՛չ թէ կորստական կերակուրին Հա-
մար, Հապա այն կերակուրին Համար՝ որ կը մնայ
յաւիտենական կեանքին մէջ, եւ մարդու Որդի՛ն պիտի
տայ ձեզի, որովհետեւ Հայրը՝ Աստուած զի՛նք կնքեց»:
Ուրեմն ըսին իրեն. «Ի՞նչ ընենք՝ որպէսզի կատարենք
Աստուծոյ գործերը»: Յիսուս պատասխանեց անոնց. «Սա՛ է
Աստուծոյ գործը, որ Հաւատաք անոր զրկածին»: Ուստի
ըսին իրեն. «Բայց դուն ի՞նչ նշան կ'ընես՝ որ տեսնենք
ու Հաւատանք քեզի. ի՞նչ կը գործես: Մեր Հայրերը անա-
պատին մէջ մանանան կերան, ինչպէս գրուած է. Երկին-
քէն Հաց տուաւ անոնց՝ որպէսզի ուտեն»: Իսկ Յիսուս ըսաւ
անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ
ձեզի. Մովսէս չտուաւ ձեզի երկնային Հացը, բայց իմ
Հայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնային Հացը. որով-
հետեւ Աստուծոյ Հացը ան է, որ կ'իջնէ երկինքէն եւ
կեանք կու տայ աշխարհի»: Ուրեմն ըսին իրեն. «Տէ՛ր,
ամէ՛ն աստե՛ն տուր մեզի այդ Հացը»: Յիսուս ըսաւ անոնց.
«Ես եմ կեանքի Հացը. ան որ կու գայ ինձի՛՝ երբե՛ք
պիտի չանօթենայ, եւ ան որ կը Հաւատայ ինձի՛՝ պիտի
չճարաւնայ: Բայց ես ըսի ձեզի. Դուք զիս տեսաք ալ, ու
չէք Հաւատար: Բոլոր անոնք որ Հայրը կու տայ ինձի՛՝
պիտի գան ինձի, եւ ան որ կու գայ ինձի՛՝ բնա՛ւ պիտի
չվտարեմ: Որովհետեւ ես իջայ երկինքէն՝ գործադրելու
ո՛չ թէ ի՛մ կամքս, Հապա անո՛ր կամքը՝ որ զրկեց զիս:
Եւ զիս զրկող Հօրը կամքը աս՛ է, որ ո՛չ մէկը
կորսնցնեմ բոլոր անոնցմէ՛՝ որ ինք տուաւ ինձի, Հապա
յարուցանեմ գանոնք՝ վերջին օրը: Որովհետեւ զիս զրկո-
ղին կամքը աս՛ է, որ ո՛վ որ տեսնէ Որդիին ու Հաւատայ
իրեն՝ ունենայ յաւիտենական կեանքը. ես ալ պիտի

յարուցանեմ գայն՝ վերջին օրը»։ Ուստի Հրեաները կը տրտնջեին իրեն դէմ՝ որովհետեւ ըսաւ. «Ե՛ս եմ երկիրքէն իջած Հացը», եւ կ'ըսէին. «Ասիկա Յովսէփի որդին՝ Յիսուսը չէ՞, որուն Հայրն ու մայրը կը ճանչնանք։ Հապա ի՞նչ պէս ասիկա կ'ըսէ. Ես իջայ երկիրքէն»։ Յիսուս ալ պատասխանեց անոնց. «Մի՛ տրտնջեք ձեր մէջ։ Ո՛չ մէկը կրնայ գալ ինծի՝ եթէ զիս զրկող Հայրը չքաշէ գայն ու ես պիտի յարուցանեմ գայն՝ վերջին օրը։ Մարգարէներուն մէջ գրուած է. Բոլորն ալ սորված պիտի ըլլան Աստուծոյ։ Ո՛վ որ կը լսէ Հօրմէն ու կը սորվի՝ ինծի՛ կու գայ։ Ո՛չ մէկը տեսած է Հայրը, բացի անկէ՛ որ Աստուծոյն է. անիկա՛ տեսած է Հայրը։ Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը Հաւատայ ինծի՛ ունի՛ յաւիտեական կեանքը։ Ե՛ս եմ կեանքի Հացը։ Ձեր Հայրերը կերան մանանան անապատին մէջ, բայց մեռան։ Ա՛յս է այն Հացը՝ որ կ'իջնէ երկիրքէն, որպէսզի եթէ մէկը ուտէ ասկէ՛ չմեռնի։ Ե՛ս եմ կեանքար Հացը՝ որ իջայ երկիրքէն։ Եթէ մէկը ուտէ այս Հացէն՝ պիտի ապրի յաւիտեան. եւ այն Հացը որ ես պիտի տամ՝ իմ մարմինն է, որ պիտի տամ աշխարհի կեանքին Համար»։ Ուստի Հրեաները կը վիճէին իրարու հետ եւ կ'ըսէին. «Ի՞նչ պէս ասիկա կրնայ տալ մեզի իր մարմինը՝ ուտելու»։ Իսկ Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Եթէ չուտէք մարդու Որդիին մարմինը ու չխմէք անոր արիւնը, կեանքը չէք ունենար ձեր մէջ։ Ո՛վ որ կ'ուտէ իմ մարմինն եւ կը խմէ իմ արիւնն՝ ունի յաւիտեական կեանքը, ու ես պիտի յարուցանեմ գայն՝ վերջին օրը. որովհետեւ իմ մարմինն ճշմարտապէս կերակուր է, եւ իմ արիւնն՝ ճշմարտապէս խմելիք։ Ա՛ն որ կ'ուտէ իմ մարմինն ու կը խմէ իմ արիւնն՝ անիկա՛ կը բնակի իմ մէջս, եւ ես՝ անոր մէջ։ Ինչպէս ասպրող Հայրը զրկեց զիս, ու ես կ'ապրիմ Հօրը միջոցով, այնպէս ալ ան որ կ'ուտէ զիս՝ ի՛նք ալ պիտի ապրի ինձմով։ Ա՛յս է այն Հացը՝ որ իջած է երկիրքէն։ Ա՛ն որ ուտէ այս Հացը՝ պիտի ապրի յաւիտեան. ո՛չ թէ ձեր Հայրերուն պէս, որոնք կերան մանանան՝ բայց մեռան»։ Այս բաները խօսեցաւ ժողովարանին մէջ, երբ կը սորվեցնէր Կափառնայումի մէջ։ Իսկ աշակերտներէն շատերը՝ երբ լսեցին՝ ըսին. «Խիստ է այդ խօսքը, ո՞վ կրնայ մտիկ ընել գայն»։ Երբ Յիսուս ինքնիրեն Հասկցաւ թէ իր աշակերտները կը տրտնջեն ատոր Համար, ըսաւ անոնց. «Ասիկա կը գայ-թակդեցնէ՞ ձեզ։ Հապա ի՞նչ պիտի մտածէք, եթէ տեսնէք

մարդու Որդիին բարձրանալը հոն՝ ուր նախապես էր: Հոգի՛ն է կեանք տուողը. մարմինը օգո՛ւտ մը չունի: Այն խօսքերը որ կ'ըսեմ ձեզի՝ Հոգի ու կեանք են: Բայց ձեր մէջ կան ոմանք՝ որ չեն հաւատար: Որովհետեւ Յիսուս սկիզբէն գիտէր թէ որո՛նք են անոնք՝ որ չեն հաւատար, եւ ո՛վ է ան՝ որ պիտի մատնէ զինք: Ու ըսաւ. «Ասո՛ր համար ըսի ձեզի. Ո՛չ մէկը կրնայ գալ ինծի, եթէ իմ Հօրմէս տրուած չըլլայ անոր»:

Այս մէջ ջբերում ին մէջ Յիսուս յաւիտենական կեանքի մասին ընդարձակ տեղեկութիւն կու տայ ինչպէս նաեւ հացին եւ գինիին բուն իմաստները: Յիսուս Քրիստոս իր ըսածները քանի մը անգամ կը կրկնէ: Անտարակոյս Հրեաները բոլոր ըսուածները իրենց բառացի իմաստով կը հասկնան եւ կը գայթակղին: Յաջորդաբար նկատողութեան պիտի առնուին Քրիստոսի յատկանշական խօսքերը եւ անոնց խորհրդաւոր մեկնաբանութիւնները:

Յիսուս կ'ըսէ. «Երթա՛յք գործեցէք՝ մի՛ զկորստակա՛ն կերակուրն, այլ զկերակուրն որ մտայ՝ ՚ի կեա՛նսն յաւիտենակա՛նս զոր որդին մարդոյ տացէ՛ քանզի զնա հայր կընքեա՛ց Աստուած»: Մարդ իր կեանքի ընթացքին անընդհատ կ'աշխատի՝ կը գործէ իր ապրուստը ապահովելու համար: Ան ասիկա կ'ընէ իր Ֆիզիքական մարմինը ապրեցնելու համար: Այդ Ֆիզիքական մարմինն ալ օր մը պիտի մեռնի՝ «կորսուի» երթայ: Մարդկութեան մեծամասնութեան համար ալ իրենց բոլոր աշխատանքըն ալ կ'ըլլայ «կորստեան կերակուր»-ի համար: Յիսուս կը թելադրէ «աշխատիլ» այն «կերակուր»-ին համար, որ յաւիտենական կեանքը կ'ապահովէ: Անտարակոյս այդ «կերակուրը» Ս. Հոգիի զօրութիւնն է: Ս. Հոգիի զօրութեան դուռն ալ մեր ներքին Քրիստոսն է: Քրիստոս ալ ամէն անհատի ճշմարիտ էութիւնն է, հետեւաբար «Մարդու Որդին» է, որ այդ հոգեւոր «կերակուր»-ը մեզի պիտի տայ:

«Աստուծոյ գործը» մարդուն տրուած իր կեանքին պարտականութիւնն է: Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Այս է

գործն Աստուծոյ զի Հաւատաստիք յայն. զոր առաքեացն նա»: Այս խօսքով Քրիստոս կը յայտարարէ Աստուծոյ խօսքը: Անոր բառացի իմաստով շատեր կը կարծեն Յիսուսի Աստուծոյ Որդին ըլլալուն հաւատալ եւ այդ Աստուծոյ գործը կատարելու համար բաւ է: Անտարակոյս պէտք է հաւատանք Յիսուսի, բայց ճշմարտապէս հաւատալը, իր բոլոր ըսածներուն եւ սորվեցուցածներուն հաւատալը եւ զանոնք մեր կեանքին մէջ կիրարկելն է: Երբ անհատը «կ'աշխատի» Աստուծոյ գործին համար, ան կը ստանայ յաւիտենական կեանքի «կերակուրը»՝ «երկինքէն իջած հացը»՝ Ս. Հոգիի զօրութիւնը: Ասոր համար Յիսուս կ'ըսէ. «Ձի Հաց յԱստուծոյ է. որ իջանէն յերկնից՝ եւ կեանս տայ աշխարհի»: Քրիստոս դարձեալ կ'ըսէ. «Ես եմ Հացն կենաց. որ գայ առ իս՝ ո՛չ քաղցիցէ. եւ որ Հաւատայ յիս՝ ո՛չ երբէք ծարաւեսցի»: Ինչպէս հացը կ'ապահովէ Ֆիզիքական կեանքի գոյատեւումը, Քրիստոս ալ կ'ապահովէ անհատին թէ՛ հոգեկան՝ յաւիտենական եւ թէ՛ անոր Ֆիզիքական կեանքը: Նոյն-իսկ Ֆիզիքական մարմինը ապրեցնող զօրութիւնը, որ մարմինը իր կերած կերակուրէն՝ «հաց»-էն կը ստանայ, Քրիստոսի տուած կեանքին հետեւանքն է: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ՝ ամենափոքր հիւլէէն մինչեւ մարդ, Քրիստոսի կեանքն է որ կ'արտայայտեն: Քրիստոսի յաջորդ խօսքը. «Այս էն կամք Հօր իմոյ որ առաքեացն զիս. զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ո՛չ կորուսից 'ի նմանէ, այլ յարուցից զնա յառուրն յեանում», ստեղծագործութեան նպատակը հասկնալու համար մեծ իմաստ ունի: Ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Հետեւաբար Քրիստոս ամէն անհատի ճշմարիտ էութիւնն է եւ կեանքը: Ամէն ինչ Հայր Աստուծմէ Քրիստոսի տրուած է: Հայր Աստուծոյ կամքը այն է, թէ անոնցմէ ոչ մէկը չկորսուի: Աստուծոյ դրած բարեշրջման օրէնքին համաձայն համայն

մարդու լիցիտետը եւ ինչու էլ ընդհանուր ստեղծագործութիւնը պիտի տեսնէ «Որդին»՝ Քրիստոս եւ պիտի ունենայ յաւիտենական կեանք, որ Աստուծոյ մէջ լուծուելին է: «Որդին տեսնել»-ը անհատին մէջ Քրիստոսի յայտնուելին է: Ճիշդ ասոր համար ալ Քրիստոս կ'ըսէ. «զի ամենայն որ տեսանիցէ զորդի եւ Հաւատայցէ 'ի նա, ընկալի՛ զկեանսն յաւիտենականս»:

Քրիստոս նաեւ կ'ըսէ. «Իբրեւ ո՛չ եթէ զՀայր՝ ուրուք տեսեալ իցէ ոչ որ է՛ն յԱստուծոյ, նա՛ ետես զՀայր»: Հոս օգտագործուած «տեսեալ» բառը Ֆիզիքական աչքով տեսնելու մասին չէ, այլ՝ Հայր Աստուծոյ փորձառութիւնը ունենալն է: Մարդոց համար, իր ներկայ գիտակցութեամբ, աս անկարելի բան մ'ըն է, որովհետեւ միայն ան, որ Աստուծմէ եկած է, կարող է Հայրը հասկնալ: Միայն Աստուծմէ եկողն ալ Քրիստոսն է: Հետեւաբար միայն Քրիստոս Հայր Աստուծոյ փորձառութիւնը ունի: Մարդու համար Աստուծո՞ւ «տեսնել»-ը կարելի կ'ըլլայ միայն երբ ինք կը կարողանայ Քրիստոս իր մէջ լրիւ յայտնաբերել եւ Անոր մէջ ալ լուծուել:

Քրիստոսի հետեւեալ խօսքն ալ յատկանշական է. «Եւ Հայն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի»: Հրեաները զարմացան թէ ինչպէս Յիսուս իր մարմինը կու տայ ուտելու համար: Յայտնի է թէ անոնց հասկացողութիւնը միայն ըստածին բառացի իմաստն էր: Այսօր մենք ալ քիչ մը աւելի վերացական հասկացողութեամբ հիմնուած Յիսուսի վերջին ընթրիքին տուած հաղորդութեան խորհուրդին համաձայն պատարագին հացը եւ գինին Քրիստոսի մարմինը եւ արիւնը կը նկատենք: Այս հիման վրայ ալ հաղորդութիւն կ'առնենք եւ կը կարծենք թէ սրբացած ենք: Անտարակոյս հացը եւ գինին Քրիստոսի մարմինը եւ Արիւնն են: Անտարակոյս հաղորդութիւն առնել շատ կարեւոր է: Բայց պէտք է հասկնանք, թէ ան խորհուրդ

մըն է: Ամէն խորհուրդ, Ֆիզիքական գետնի վրայ արտայայտութիւնը կամ երեւոյթն է հոգեւոր ճշմարտութեան մը, որ պարտ ենք հասկնալ, զայն իւրացնել եւ «զայն» ապրիլ մեր առօրեայ կեանքին մէջ: Ապա թէ ոչ մեր հասկացողութիւնն ալ կը նմանի այն օրուայ Հրեաներուն հասկացողութեան եւ ծէսերը ու եկեղեցական բոլոր խորհուրդները կ'ըլլան միայն աւանդութիւններ: Ընդհանուր ստեղծագործութիւնը Քրիստոսի մարմինն է: Ան, որ Քրիստոս մեզի կու տայ իբրեւ իր մարմինը մեր Ֆիզիքական մարմինն է եւ աշխարհիկ կեանքը: Քրիստոսի արիւնն ալ Ս. Հոգիի կենսատու զօրութեան հոսքն է, որուն մեր մէջ ներգործման դուռը դարձեալ Քրիստոսն է: Քրիստոս դարձեալ կ'ըսէ. «Որ ուտէ զմարմին իմ՝ եւ ըմպէ զարիւն իմ՝ ունի զկեանս յաւիտեանականս. եւ ես՝ յարուցից ցնա յաւճարն յեսնում: Չի մարմին իմ՝ ճշմարիտ կերակուր է եւ արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է»: Երբ մարդ հաց կ'ուտէ, կարճ ժամանակ յետոյ հացը իր մարմինն մաս եւ բաժին կ'ըլլայ: Ան կը դադրի հաց ըլլալէ եւ կը նոյնանայ անհատին մարմինն հետ: Երբ Քրիստոս կ'ըսէ. «ով որ կ'ուտէ իմ մարմինս» անհատին Քրիստոսի մէջ ձուլուիլը եւ իր հետ մէկ ըլլալը կը նշանակէ: Իսկ ան, որ Քրիստոսի «արիւն»-ը կը խմէ, այսինքն Ս. Հոգիի զօրութիւնը կը ստանայ, մէկ կ'ըլլայ Աստուծոյ հետ եւ կ'ունենայ յաւիտեանական կեանք՝ ներկային մէջ: Միակ ճշմարտութիւնը Աստուած է, հետեւաբար երբ Քրիստոս կ'ըսէ. «մարմինս ճշմարտապէս կերակուր է եւ իմ արիւնս՝ ճշմարտապէս խմելիք» ակնարկը Ս. Հոգիի եւ Քրիստոսի, Հայր Աստուծոյ հետ միասին՝ երրորդութեան միակ ճշմարտութիւնը ըլլալուն մասին է: Յիսուս հետեւեալ խօսքով. «Հոգին է կենդանարար, մարմինն ինչ ոչ օգնէ: Չբանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ Հոգի է եւ կեանք» կը բացայայտէ թէ մարդուն հոգին է որ կեանք

ունի եւ մարմինն կեանք կու տայ: Մարմինը ինք իրմէ ոչինչ կարող է ընել: Յիսուս նաեւ յայտնի կ'ընէ թէ Իր բոլոր ըսածները պէտք չէ անոնց բառացի իմաստով առնուին: Ակնարկուած մարմինը Իր Ֆիզիքական մարմինը չէ եւ արիւնն ալ իր երակներուն մէջ հոսող կարմիր հեղուկը չէ, այլ անոնք անհատին հոգին եւ կեանքն են՝ Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը:



ՅԻՄՈՒԿ ԿԸ ՔԱՐՈՉԷ ՀԱՅՐ ԱՍՏՈՒՅՈՅ ՓԱՔԸՐ

«Պարասխանի եր նոցա Յիսուս՝ եւ ասէ. Ի՞մ վարդապետերունս շէ՛ր իմ. այլ այնորիկ որ ասա՛վէ- եացն զիս: Եթէ ո՛վ կամի զկամս նորա ասնել, Գերասացէ՛ վասն վարդապետերեանս, յԼսարո-ժո՞յ իցէ արդե՛-վ՛ եթէ է՛ս ինչ յանձնէ իմմէ խօսիմ: Որ յանձնէ ի-րմէ խօսի, փառս անձին ի-րո՛ւմ խնդ- րէ, իսկ որ խնդրէ զփառս անձնորիկ որ ասա՛վէ-ացն զնս՝ նա ճշմարի՛ր է եւ անիրաւո-թիւնն ո՛չ Գոյ՛ ՚ի նմա: Ոչ Մովսէս եր յեւ զօրէնան, եւ ո՛չ ո՛վ ՚ի յէնջ առնէ զօրէնան: Գի խնդրէ՛վ զիս սպանանել: Պարասխանի եր ժողովո-րդն՝ եւ ասէ. Ի՛ւր՝ Գոյ՛ ՚ի վեւ. ո՞վ խնդրէ զվեւ սպանանել. Պարասխանի եր նոցա Յիսուս՝ եւ ասէ. Գորժ մի Գորժեցի, եւ ամենեւնի զարմացեալ է՛վ. Վասն այնորիկ Մովսէս եր յեւ թղիարո-թիւնն զի ո՛չ եթէ ՚ի Մովսիսէ Էր, այլ ՚ի Տա՛րց անոր. եւ ՚ի շա՛բաթոս թղիարե՛վ զմարդ: Իսկ արդ՝ եթէ թղիարո-թիւնն՝ ասնո՛ւ մարդ ՚ի շա՛բաթոս զի մե՛ր օրէնն Մովսիսի լո-ժոցին ընդ իս ցո-սոցեա՛լ է՛վ՝ զի ողջո՛յն իսկ մա՛րդ թշտկեցի ՚ի շա՛բաթոս. Մի՛ ըսր անչա՛րտորի, այլ ո-ղբ զ րարասարա՛ն արարէ՛վ»: (Յովհաննէս Է: 16-24)

«Յիսուս պատասխանեց անոնց. «Իմ ուսուցումս՝ ի՛մս չէ, հապա գիս զրկողի՛նս է: Եթէ մէկը ուզէ գործադրել անոր կամքը, պիտի գիտնայ թէ այս ուսուցումը Աստուծո՛մէ՛ է, թէ ես ինձմէ կը խօսիմ: Ա՛ն որ կը խօսի ինք- նիրմէ՛ կը փնտռէ ի՛ր խկ փառքը, բայց ան որ կը փնտռէ գի՛նք զրկողին փառքը՝ անիկա՛ ճշմարտախօս է, եւ անոր քով անիրաւութիւն չկայ: Մովսէս չստու՛՛

ձեզի Օրէնքը. բայց ձեզմէ ո՛չ մէկը կը գործադրէ Օրէնքը: Ինչո՞ւ կը ջանաք սպաննել զիս»: Բազմութիւնը պատասխանեց. «Դե՛ւ կայ քու ներադ. ո՞վ կը ջանայ սպաննել քեզ»: Յիսուս պատասխանեց անոնց. «Գործ մը ըրի, եւ բոլորը ալ կը զարմանաք: Մովսէս տուաւ ձեզի թլփատութիւնը, (որ ո՛չ թէ Մովսէսն էր՝ Հապա նախնիքներէն,) ու մարդ կը թլփատէք Շաբաթ օրը: Եթէ մարդ կը թլփատուի Շաբաթ օրը՝ որպէսզի Մովսէսի Օրէնքը չլուծուի, կը դառնա՞ք ինծի դէմ՝ որ ամբողջ մարդ մը բժշկեցի Շաբաթ օրը: Մի՛ դատէք երեւոյթին Համեմատ, Հապա դատեցէք արդարութեամբ»:

Յիսուս իր այս խօսքերով կը յայտնէ, թէ ինք Աստուծոյ տիեզերական օրէնքները սորվեցնելու եկած է: Յիսուս նաեւ կը յայտարարէ, թէ միայն անոնք, որոնք կը սորվին ու սորվածնին կը գործադրեն պիտի գիտնան, թէ այդ ուսուցումը Աստուծմէ տրուած է: Յիսուս դարձեալ կը շեշտէ թէ ինք փառք չի փնտռեր, այլ բոլոր սորվեցուցածները Աստուծոյ փառքին համար են: Երբ մարդ Յիսուսի սորվեցուցածները կատարելով Աստուած իր մէջ կը յայտնաբերէ, Աստուած ալ փառաւորուած կ'ըլլայ: Ըստ Յիսուսի ըսածին այդ օրուայ Հրեաները չէին կիրարկեր Մովսէսին տուած օրէնքները: Նմանապէս այսօր ալ համայն քրիստոնէութիւնը չ'ապրիր ըստ Յիսուսի սորվեցուցած տիեզերական օրէնքներուն:

Յիսուս նաեւ կ'ըսէ. «Մի՛ ըստ անչս դատիք, այլ ուղի՛ դ դատաստան՝ արարէ՛ք»: Մարդիկ, առհասարակ, կը դատեն ըստ երեւցածին եւ ոչ թէ արդարամտութեամբ: Կարելի չէ «ճշմարտութեամբ» դատել, երբ չկայ կատարեալ հասկացողութիւն եւ կամ մ'թագնած է հասկացողութիւնը: Ահա՛, մարդկութեան ներկայ վիճակին բուն պատճառը իր մ'թագնած հասկացողութիւնն է հանդէպ իր կրօնքին, Աստուծոյ նպատակին, կատարելութեան ուղիին եւ յաւիտենական կեանքին: Մ'թագնած հասկացողութեան պատճառն ալ խեղաթիւրուած քարոզչութիւններն են:

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԱ Է ՄԵԱԻԱՆ

«Աղաղակեա՛ց Յիսուսն՝ ի պաճարին, ուսուցանէր՝
էս ասէր: Եւ զնա՛ն Գրիգէ՛ր, էս ուստի՛ն է՛մ Գրիգէ՛ր էս-
յանձնէ՛ իմմէ՛ ո՛չ էմ եկեալ: այլ է ճշմարի՛տ որ
առաջէկացն զնա՛ն զոր դո՛ւնն ո՛չ Գրիգէ՛ր: Եւ Գրիգէ՛մ
զնա՛ն. զի՛ն ձմանէ՛ իսկ էմ, էս նա՛ն առաջէկաց զնա՛ն: ...
Ըսէ Յիսուս. Փո՛ղբ մեա՛ն էս ժամանակ ընդ-
ջէ՛զ էմ. էս երթա՛մ առ ա՛յն՝ որ առաջէկացն
զնա՛ն: Խնդրիցէ՛ր զնա՛ն՝ էս ո՛չ Գրիգէ՛ր-ցէ՛ր էս
որ էան՝ երթամ դո՛ւնն ո՛չ կարէ՛ր Գալ»:
(ՅովՀաննէս Է: 28-29 եւ 33-34)

«Իսկ Յիսուս՝ սորվեցնելու ատեն՝ տաճարին մէջ աղաղա-
կեց. «Զի՛ս ալ կը ճանչնաք, եւ ուրկէ՛ր ըլլալս ալ գի-
տէք: Ես ինձմէ՛ եկած չեմ, Հապա ա՛ն որ զրկեց զիս՝
ճշմարիտ է: Դուք չէք ճանչնար զայն. բայց ես կը
ճանչնամ զայն, որովհետեւ ես անկէ՛ եմ, եւ ա՛ն զրկեց
զիս» ... Իսկ Յիսուս ըսաւ. «Քիչ՝ մը ժամանակ ալ ձեզի
հետ եմ, ապա կ'երթամ անոր՝ որ զրկեց զիս: Դուք
պիտի փնտռէք զիս՝ բայց պիտի չգտնէք, եւ չէք կրնար
գալ իմ եղած տեղս»»:

*Այս խօսքերով Յիսուս կը յայտնէ թէ ինք մեսիան
է, որովհետեւ սորվեցնելու պարտականութիւնը Աս-
տուծմէ իրեն տրուած է: Մարդ, իր մէջ Քրիստոսի
ներկայութիւնը ունենալով հանդերձ Աստուած չի ճանչ-
նար, որովհետեւ ան չէ կարողացած Ձայն յայտնաբերել:
Բայց Քրիստոս, որ Յիսուսի մէջ յայտնուած է, կ'ըսէ.
«Ես գիտե՛մ զնա. զի՛ն իմանէ՛ իսկ եմ»: Յիսուս նաեւ իր
մահը, յարութիւնը եւ համբարձումը կ'ակնարկէ: Քրիս-
տոս նաեւ կ'ըսէ. «Խնդրիցէք զիս՝ եւ ո՛չ գտանիցէք եւ
ուր էան՝ երթամ դուք ո՛չ կարէք գալ»: Մարդիկ այսօր կը
փնտռեն Աստուած՝ Քրիստոս հոս ու հոն: Անոնք ուխտա-
գնացողութեան կ'երթան, նաեւ սրբավայրեր, բայց Քրիս-
տոս չեն գտներ, անգիտակից, թէ Ան իրենց մէջն է:*

ԿԵՆԱՐԱՐ ՋՈՒՐԻ ԳԵՏԵՐ

«Ի վերջնում առաջ մեժի՛ր ցօնին կայր Յիսուս՝
աղաղակե՛ր եւ ասէր. Եթէ ո՛չ ժարասի իցէ առ իս՝
եւ արքցէ: Որ Հասարայ յիս՝ որդէս եւ ասեն Գիրի՛,
Գե՛րի յորովայնէ նորա Բղիւսցեն ջրո՛ց կենդանու-
թեան: Զայս ասէր՝ վասն Հոգւո՛յն զոր ընդունե-
լոց էին որ Հասարային ՚ի նա զի շե՛ւ էր Հոգի,
Վանսի Յիսուս շե՛ւ էր փառասորեալ»: (Յով. Է: 37-39)
«Տօնին վերջին մեծ օրը՝ Յիսուս կայնամ էր ու կ'աղա-
ղակէր. «Եթէ մէկը ծարաւ է, թող գայ ինձի եւ խմէ:
Ա՛ն որ հաւատայ ինձի, կենարար ջուրի գետեր պիտի
բխին անոր փորէն, ինչպէս Գիրքը կ'ըսէ»: Ասկա ըսաւ
Հոգիին մասին՝ որ իրեն հաւատացողները պիտի ընդու-
նէին. որովհետեւ Սուրբ Հոգին սրուած էր սակաւին,
քանի որ Յիսուս փառաւորուած էր սակաւին»:

*Քրիստոս բացայայտ կ'ընէ, թէ ջուրը փոխաբերա-
բար կը ներկայացնէ Ս. Հոգիի զօրութիւնը: Կենարար
ջուրի գետերը, անձին մէջ առատ Ս. Հոգիի զօրութեան
հոսքն է: Այդ առատ զօրութեան պիտի կարենան
արժանանալ միայն անոնք, որոնք Յիսուսի կը հաւա-
տան, հետեւաբար Անոր սորվեցուցածները կ'ընդունին
եւ կը կիրարկեն իրենց կեանքի ընթացքին: Միայն
Քրիստոսն է, որ Ս. Հոգին՝ Աստուծոյ զօրութիւնը կա-
րող է տալ: Յիսուս իր յարութեամբ մէկ եղաւ Քրիս-
տոսի հետ եւ Յիսուս ալ Քրիստոսի փառաւորութեամբ
փառաւորուեցաւ:*



ԴԱՏԵԼ ԹԷ ՉՊԱՏԵԼ

«Իսկ իբրեւ սրիպէցին Հարցանելով ցնա Հայեցեալ
'ի վեր' ասէ ցնոսա. Ընմեղն 'ի Յենջ, նա' ընկեացե
վա'ր 'ի վերայ դորա: . . . Պատասխանի եր Յիսուս'
եւ ասէ ցնա. Աին դու' ո՛ր են, ո՛չ ո՛վ զվեզ
դատադարդեաց: Եւ ասէ. Ո՛չ Տէր: Եւ ասէ Յի-
սուս. Եւ ո՛չ ե՛ս դատադարդեմ զվեզ ե՛րք՝ յայսքմ-
Հեղե՛ մի՛ մեղանշեր»: (ՅովՀաննէս Ը:7 Եւ 10-11)

«Սակայն երբ շարունակեցին Հարցնել իրեն, վեր
նայեցաւ եւ ըսաւ անոնց. «Զեզմէ անմեղ եղողը՝ առաջ
ի՛նք թող քար նետէ ատոր վրայ»: ... «Կի՛ն, ո՞ւր են
անոնք՝ որ կ'ամբատանէին քեզ. ո՞չ մէկը
դատապարտեց քեզ»: Ան ալ ըսաւ. «Ո՛չ մէկը, Տէ՛ր»: Յիսուս ըսաւ անոր. «Ե՛ս ալ չեմ դատապարտեր քեզ.
գնա՛, եւ ասկէ ետք ա՛լ մի՛ մեղանշեր»:

*Յիսուս այս խօսքերը ըսաւ անոնց, որոնք շնու-
թեան մէջ բռնուած կին մը քարկոծելու բերած էին:
Յիսուս չհակասեց հրեաներուն օրէնքին, բայց իր
տուած պատասխանով մեզի սորվեցուց չդատել: Ամէն
մարդ սա կամ նա ձեռով մեղաւոր է: Յիսուս իր այս
նախադասութեամբ. «Եւ ո՛չ է՛ս դատապարտեմ զքեզ
էրթ յայսմէտէ մի՛ մեղանշեր:» մեզի ներողամիտ ըլլալ
կը սորվեցնէ: Մարդոց չէ տրուած ուրիշներուն գործած
մեղքերուն հատուցումը՝ պատիժը տալ: Ան մեղքը
գործողին հոգիին՝ Քրիստոսի կը վերաբերի: Երբ մար-
դուն էութիւնը զինք դատէ, այդ դատաստանը ամենա-
արդարն է: Ճիշդ այս արդարութեան համար Քրիստոսի
հետեւեալ նախադասութիւնը. «Եւ ոչ եթէ Հայր դատի
զք՝ այլ զամենայն դատաստանն ետ որդւո՛յ իւրոյ»
ինչպէս նաեւ «Եւ իշխանութի՛նն ետ նմա դատաստա՛ն
առնել եւ զի որդի մարդոյ է» ու «որպէս լսե՛մ՝ դատիմ, եւ
դատաստանն իմ արդա՛ր է», նախկին մէջբերումներէն
միտն մէջ գրուած էր:*

Քրիստոս Աշուարհի Լոյսը

«Դարձեալ խօսեցա՛ւ ընդ նոսա Յիսուս՝ եւ ասէ. Ե՛ս եմ լո՛յս աշխարհի, որ Գայս պննի իմ՝ ընդ խարս մե՛ Գնասցէ. այլ ընկալցի՛ պլո՛յսն կենաց: Լսէն ցնա փարիսեցիքն. դո՛ւ վասն անձե՛ն շոյ վկայես, եւ վկայութիւն չե՛՛ ճշմարիտ: Պարասխանի եր Յիսուս՝ եւ ասէ ցնոսա: Թեպէր եւ ես վկայեմ վասն անձե՛ն իմոյ՝ վկայութիւն իմ ճշմարե՛ր պի գիտեմ ոստի եկի՛՛ եւ յո՛ երթամ. Բայց դո՛ւ չե՛՛ գիտէ՛ ոստի Գամ՝ կամ յո՛ երթամ: Դո՛ւ չե՛՛ ըստ մարմնոյ դարիքի, ես ո՛չ դատիմ եւ ո՛չ պո՛ղ: Թեպէր եւ դարիմ եւս պո՛ղ՝ դարաստանն իմ ճշմարե՛ր պի չե՛՛մ մեայն, այլ ես՝ եւ որ աստե՛կացն պիս Հայր: Եւ յօրէնան իսկ յեր գրեալ է, Դէ երկոսց մարդոց վկայութիւն ճշմարե՛ր պի է: Ես եմ որ վկայեմ վասն իմ եւ վկայե վասն իմ որ աստե՛կացն պիս Հայր: Լսէին ցնա. Ո՞ր է Հայր չո: Պարասխանի եր Յիսուս՝ եւ ասէ ցնոսա. Ո՛չ պիս գիտէ՛՛ եւ ո՛չ պահարն իմ երէ պիս գիտէ՛՛ եւ պահարն իմ Դերեւո գիտէ՛՛»:

(Յովհաննէս Ը:12-19)

«Յիսուս դարձեալ խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Ե՛ս եմ աշխարհի Լոյսը. ասն որ կը հետեւի ինձի՝ պիտի չքայէ խաւարի մէջ, Հապա պիտի ունենայ կեանքի Լոյսը»: Իսկ Փարիսեցիները ըսին անոր. «Դո՛ւն կը վկայես քու մասիդ. քու վկայութիւնը ճշմարիտ չէ»: Յիսուս պատասխանեց անոնց. «Թեպէտ էս կը վկայեմ իմ մասիս, իմ վկայութիւնս ճշմարիտ է, որովհետեւ գիտեմ ուրկէ՛ եկայ եւ ո՛ւր կ'երթամ. իսկ դուք չէք գիտեր ուրկէ՛ կու գամ կամ ո՛ւր կ'երթամ: Դուք կը դատեք մարմինի՛ն Համաձայն. ես ո՛չ մէկը կը դատեմ: Նոյնիսկ եթէ դատեմ՝ իմ դատաստանս ճշմարիտ է, որովհետեւ ես մինակ չեմ, Հապա՛ էս եւ Հայր»:

ըլ՝ որ զբկեց զիս: Ձեր Օրէնքին մէջ ալ գրուած է թէ երկու մարդու վկայութիւնը ճշմարիտ է: Ե՛ս եմ՝ որ կը վկայեմ իմ մասիս, ու Հայրն ալ՝ որ զբկեց զիս՝ կը վկայէ իմ մասիս»: Ուստի ըսին անոր. «Ո՛ւր է քու Հայրը»: Յիսուս պատասխանեց. «Ո՛չ զիս կը ճանչնաք, եւ ո՛չ՝ իմ Հայրս. եթէ ճանչնայիք զիս, պիտի ճանչնայիք նաեւ իմ Հայրս»:

Այս խօսքերով Քրիստոս կը յայտնէ, թէ Իրմով է որ աշխարհ գոյութիւն ունի: Լոյսը որ «գօրութիւն» է եւ անտեսանելի, սակայն եւ այնպէս ամէն ինչ տեսանելի կ'ընէ: Լոյսը փոխաբերաբար կեանք, ինչպէս նաեւ գիտակցութիւն եւ գիտութիւն կը ներկայացնէ: Գիտութիւնը ճշմարտութեան գիտութիւնն է: Մենք մեր կեանքը կ'ապրինք իսլաւրի մէջ, այսինքն անգէտ ենք՝ ճշմարտութեան նկատմամբ: Կ'ապրինք Հետեւաբար Լոյսը մեր մէջն ալ է, բայց շատ տկար: Անձին մէջ յայտնուած Լոյսին որակը կը ներկայացնէ անոր հասած գիտակցութեան մակարդակը: Մարդ արարած ալ աշխարհը կը տեսնէ ըստ իր գիտակցութեան մակարդակին: Ճիշդ ասոր համար է, որ մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը պատրանքը ճշմարտութիւն կը կարծէ: Ահա՛, աս է իսլաւրի մէջ ապրիլը: Երբ անձին գիտակցութեան մակարդակը բարձրանայ ինք գիտակից կ'ըլլայ ճշմարտութեան եւ կ'ունենայ «կեանքի լոյսը»: Այս պատճառով Քրիստոս ըսաւ. «այլ ընկալցի՛ զլոյսն կենաց»: Քրիստոս նաեւ ըսաւ. «Դուք ըստ մարմնոյ դատիք, ես ո՛չ դատիմ եւ ո՛չ զոք: Թէպէտ եւ դատի՛մ եւս զոք՝ դատաստանն իմ՝ ճշմարիտ զի չե՛մ միայն, այլ ես՝ եւ որ առաքեալն զիս Հայր»:

Մարդ արարած պատրանքը՝ Փիզիքահանը, մարմինը կը տեսնէ եւ ըստ այնմ կը դատէ, իսկ Քրիստոս հոգին կը տեսնէ եւ որով ըստ այնմ կը դատէ: Հայր Աստուծոյ դատաստանն ալ կ'ըլլայ ըստ Իր դրած Իր գօրութեան՝ Ս. Հոգիի՝ տիեզերական գօրութեան օրէնքներուն: Այս մէջբերումին մնացեալը նախորդներուն կրկնութիւնն է, կրկնակի բացատրութեան կարիքը չկայ:

ԸԼԼԱՎ ՎԱՐԷԱ ԹԷ ՎԵՐԷԱ

«Լսէ դարչեալ ցնոսա Յիսոսա. Ես երթամ, ե-
 խնդրեիցէ՛ք զիս. ես՝ ի մե՛զս յեր մեռանիջի՛ք զի ուր
 եսն երթամ, դուով ո՛չ կարէ՛ք գալ: Լսէին ճրեայդն. Մի՞թէ՛
 զի ուրովն երթայցէ, զի ասէ՛ թէ ուր եսն
 երթամ դուով ո՛չ կարէ՛ք գալ: Ես ասէ ցնոսա. Դուով
 ՚ի ներդո՛սս աստի է՛ք, ես՝ ՚ի վերո՛սս անտի
 եմ: Դուով՝ յաշխարհէ՛ր աստի է՛ք, ես՝ շէ՛մ յայսմ աշ-
 խարհէ: Բայց ասացի յեզ՝ թէ ՚ի մե՛զս յեր մեռանի-
 ցի՛ք: Զի թէ ո՛չ ճասարայցէ՛ք թէ ես եմ, մեռանի-
 ցի՛ք, ՚ի մեզս յեր: Լսէն ցնա. Դու ո՞վ ես: Լսէ
 ցնոսա Յիսոսա. Սախ՝ զի ես խօսի՛մս իսկ ընդ յեզ:
 Բայցու՛մ ինչ ունի՛մ զասն յեր խօսէ՛լ ես դարեւ այլ
 որ առա՛վետացն զիս՝ ճշմարի՛ր է: Ես ես զոր լոսն
 ՚ի նմանէ՛՛ զս՛յն խօսի՛մ յաշխարհի: Ես ո՛չ գիտացի
 թէ զԸօրէ ասեր ցնոսա: Լսէ ցնոսա Յիսոսա. Յորժամ
 Բարձրացո՛ցանիցէ՛ք զորդի մարդոյ յա՛յնժամ գի-
 րասջի՛ք՝ թէ ես եմ. ես յանձնէ իմմէ ինչ ո՛չ առ-
 նեմ, այլ որպէս ուսո՛յց զիս ճայրն իմ, զս՛յն խօ-
 սիմ: Ես որ առա՛վետացն զիս՝ ընդ ՚իս ո՛չ եթող զիս
 միայն, զի ես զճաճո՛յն նորա առնեմ ճանապարհ»: (Յովճաննէս Ը: 21-29)

«Յիսուս դարձեալ ըսաւ անոնց. «Ես կ'երթամ՝ ու պիտի
 փնտռեք զիս, պիտի մեռնիք ձեր մեղքերուն մէջ. ո՛վք
 ես կ'երթամ՝ դուք չեք կրնար գալ»: Ուրեմն չրեաները
 կ'ըսէին. «Միթէ ինքզինք պիտի սպաննէ, քանի որ կ'ըսէ-
 թէ ես կ'երթամ՝ դուք չեք կրնար գալ»: Ըսաւ անոնց.
 «Դուք վարէն էք, ես վերէն եմ. դուք այս աշխարհէն էք,
 ես այս աշխարհէն չեմ: Ուստի ըսի ձեզի թէ պիտի մեռ-
 նիք ձեր մեղքերուն մէջ. արդարեւ եթէ չճաւատաք թէ ես

եմ՝ պիտի մեռնիք ձեր մեղքերուն մէջ»: Ուրեմն ըսին անոր. «Դուն ո՞վ ես»: Յիսուս ըսաւ անոնց. «Ի՛նչ որ սկիզբէն կ'ըսեմ ձեզի: Շատ բաներ ունիմ ձեր մասին խօսելու եւ դատելու. բայց ան որ դրկեց զիս՝ ճշմարտախօս է, ու ես ի՛նչ որ լսեցի իրմէ՝ գա՛յն կը խօսիմ աշխարհի մէջ»: Անոնք չհասկցան թէ Հօրը մասին կը խօսէր իրենց: Ուստի Յիսուս ըսաւ անոնց. «Երբ բարձրացնէք մարդու Որդին, այն ատեն պիտի գիտնաք թէ ես եմ, եւ թէ ես ինձմէ ոչ ի՛նչ կ'ըսեմ, հապա կը խօսիմ այս բաները՝ ինչպէս Հայրը սորվեցուց ինձի: Ու զիս դրկողը ինձի հետ է: Հայրը մինակ չթողուց զիս, որովհետեւ ես ամէն ատեն կ'ընեմ իրեն հաճելի եղած բաները»:

Յիսուսի այս խօսքերուն մէջ յատկանշական մի քանի կէտեր կան: Յիսուս կ'ըսէ. «ուր ենն երթամ, դուք ո՛չ կարէք գալ»: Յիսուսի ակնարկութիւնը յաւիտենական կեանքի մասին է: Ինչպէս Յիսուս իր մարդկային կեանքի ընթացքին ժամանակին ենթակայ էր, նմանապէս, բոլոր մարդիկ իրենց այս կեանքին մէջ ժամանակին ենթակայ են: Ֆիզիքական կեանքը ժամանակին մէջն է, իսկ հոգեկան կեանքը ժամանակէն դուրս, միայն ներկային մէջ է: Ժամանակը մարդուն ուղեղին՝ մտքին ստեղծագործութիւնն է: Այսօր, նոյնիսկ գիտնականները կ'ըսեն, թէ անցեալի պատահածները եւ ապագայի պատահելիքները, բոլորն ալ կ'ըլլան հիմա՝ ներկային մէջ: Անցեալը կ'որոշէ ապագան եւ ապագան ալ կ'որոշէ անցեալը: Հետեւաբար ժամանակը պատրանքային է: Մարդն ալ իր ցած գիտակցութեան մակարդակով կը կարծէ թէ պատրանքը ճշմարտութիւն մըն է եւ իրեն համար անկարելի կ'ըլլայ յաւիտենական կեանքին արժանանալ: Եթէ մարդ չհաւատայ Յիսուսի սորվեցուցածներուն եւ զանոնք չկիրարկէ, իր կեանքին մէջ ինքն ալ անկարող կ'ըլլայ երթալու հոն, ուր Յիսուս գնաց: Սորվածը կիրարկելն ալ, այս կեանքի ընթացքին, Քրիստոս իր մէջ յայտնաբերելն է:

Երկրորդ կէտը, Յիսուսի այս խօսքն է. «Դուք ՚ի ներքո՛ւստ աստի էք, եւ ես՝ ՚ի վերո՛ւստ անտի եմ: Դուք՝

յաշխարհէ՛ աստի էք, ես՝ չէ՛մ յայսմ աշխարհէ»: Երբ Յիսուս կ'ըսէ «դուք վարէն էք», ակնարկութիւնը մարդոց ցած գիտակցութեան մակարդակին համար է: Իսկ, «Ես վերէն եմ»-ն ալ Յիսուսի ունեցած բարձր՝ Քրիստոսի գիտակցութեան մակարդակը կը ներկայացնէ: Ինչպէս վերեւ շեշտուած է, «դուք այս աշխարհէն էք»-ը մարդուն աշխարհին եւ անոր շլացուցիչ «սա», «դա» եւ «նա»-երուն կապուածութիւնը կը նշանակէ, իսկ «Ես այս աշխարհէն չեմ»-ն ալ Յիսուսին աշխարհի հրապուրիչ այլազանութեան կապուած չըլլալը:

Երրորդ յատկանշական կէտն ալ հետեւեալն է. «Բայց ասացի ձեզ՝ թէ՛ ՚ի մէ՛ղս ձեր մեռանիցիք»: Յիսուս բազմիցս խօսած է, թէ մեղքին «թողակ»-ը մահ է: Երբ մարդ կը կապուի աշխարհին, ինքնաբերաբար ինքզինք կը հեռացնէ Քրիստոսէն, հոգեկան կեանքէն եւ յաւիտենական կեանքէն: Ասոնց բոլորն ալ Յիսուսի սորվեցուցածներուն անփոփոմն են: Մարդն ալ Յիսուսի սորվեցուցածները անտեսած կ'ըլլայ, ինչ որ արդէն իսկ մեղքն է եւ իր այս զատողութեամբ ինքզինք դատապարտած կ'ըլլայ:

Չորրորդ կէտը «Եւ ես զոր լուսնս՛ ՚ի նմանէ՛ զայն խօսիմ յաշխարհի: Եւ ո՛չ գիտացին թէ զՏօրէ ասեր ցնոսա»-ն է: Երբ Յիսուս կ'ըսէ «ինչ որ լսեցի», պէտք է հասկնանք իր բարձր գիտակցութեան տուած ճշմարտութեան նկատմամբ ունեցած փորձառութիւնը եւ ոչ լսած խօսակցութեան մը ձայնը: Յիսուս նաեւ համայն մարդկութեան սորվեցուց իր ունեցած ճշմարտութեան փորձառութիւնը ունենալու միջոցը: Դժբախտաբար Հրեաները չհասկցան թէ Յիսուս Հայր Աստուծոյ մասին կը խօսէր, որ միակ ճշմարտութիւնն է: Յիսուսի յաջորդ խօսքն ալ. «Եւ որ առաքեացն զիս՝ ընդ իս ո՛չ եթող զիս միայն, զի ես զհաճո՛յս նորա առնեմ՝ հանապազ», աւելի յստակ ձեւով կը բացատրէ իր նախորդ

ըսածը: Որովհետեւ միակ ճշմարտութիւնը Աստուած է, Քրիստոսի ներկայութիւնը ամէն անհատի մէջ Աստուծոյ ներկայութիւնն է: Աստուած միշտ մեր՝ բոլորիս հետ է եւ բնաւ մեզ չի թողուր: Մենք ենք, որ Ձինք կ'անտեսենք եւ իր կամքը չենք կատարեր: Բայց Յիսուս, Որուն մէջ Քրիստոս լրիւ յայտնուած էր, միշտ կը կատարէր Աստուծոյ կամքը:

Հետեւեալ մէջբերումն ալ նախորդին շարունակութիւնն է:

ԸԼԼԱԼ ԱՉՍԻ ԹԷ ԳԵՐԻ

«Իբրեւ զայն խօսեցաւ, Քաչո՛ւմէ Հաւարացին ՚ի նա: Եւ ասէ՛ր Յիսուս աս Հրէայն Հաւարացեալսն. եթէ դո՛ւ չկայջի՛նէ՛ ՚ի Քանի իմո՛ւմ ճշմարիտ պաշակէ՛րդ իմ է՛վ եւ ժանիջի՛նէ՛ զճշմարտութիւնն, եւ ճշմարտութիւնն ազատեցէ՛ զյէկզ: Պարասխանի երո՞ւն նմա՛ եւ ասէն. Զասակ Եբրահիմո՛ւ էմէ՛, եւ ո՛չ ումէ՛ ժառանգեցա՛նք զիս՞րդ ասեա եթէ ազա՛րդ լինիջի՛նէ՛: Պարասխանի եր նոցա Յիսուս. Ըմէն ամէն ասէ՛մ թէ ամենայն որ ասնէ զմեզս՝ ժառանգ է մեղաց: Եւ ժառանցն՝ ո՛չ յաւիտեան կայ ՚ի պան, իսկ որդին ՚ի յաւիտեան կայ: Իսկ արդ՝ եթէ որդին զյէկզ ազատեցո՛ցէ ճշմարիտ ազարդ լինիջի՛նէ՛: Գիտէ՛մ զի զասակ Եբրահիմո՛ւ է՛ն այլ խնդրէ՛վ ադանանէ՛լ զիս. զի Քանին իմոյ շի՛նէ՛ զեղի ՚ի յէկզ: Ես՛ զորդ եսի աս Հոր իմո՛ւմ՝ խօսի՛մ եւ դո՛ւ զոր լո՛ւսնէ՛ ՚ի Հորէն յերմէ՛՛ ասնէ՛նէ՛: Պարասխանի երո՞ւն նմա՛ եւ ասէն. Հայր մեր Եբրահիմ է: Ըսէ ցնոսա Յիսուս. եթէ որդի՛ն Եբրահիմո՛ւ էի՛նէ՛՛ զԳործան Եբրահիմո՛ւ Գործէի՛նէ՛: Ըյլ այժմիկ խընդ-

րէի սոսանանէ՛լ պիտի պայտ մի որ յէպ պճշմարտորո-
թիւնն խօսեցայ՝ պոր լուսայ՝ ՚ի Հօրէ իմմէ. պայտ՝
Աբրահամ ո՛չ արար: Դու՛ի առնէ՛ի պարտա Հօրն
յերոյ: Ասէն ցնա. Մէի՛ ՚ի պրահայութենէ շէմէ՛ ժըն-
եալ. մի է Հայր մեր, Աստուած: Ասէ ցնասա Յի-
սուս. Եթէ Աստուած էր Հայր յեր, սիրէի՛ի ար-
դեւի՛ պիտի, պի էս յԱստուծոյ էլի՛ է- եկի է- ո՛չ
եթէ յանձնէ՛ ինչ էկի այլ նա՛ առաիւտայ պիտի: Ըն-
դէր պիտի սո իմ ո՛չ Գիտիէ՛ի դու՛ի. վասն պի ո՛չ
կարէի լսել պիտի նն իմ: Դու՛ի ՚ի Հօրէ ՚ի սասանայէ՛
էի, է- պահանջութիւնս Հօրն յերոյ կամիէ՛ առնել.
պի նա մարտաստան էր իսկ պիտի, է- ՚ի ճշմարտորո-
թեան ո՛չ էկայ պի ո՛չ Գոյ ճշմարտորոթիւնն ՚ի նմա
յործամ խօսիցի՛ սուր՝ յիւրոյ՛ անպի խօսի պի սո՛ւր
է է- Հայր նորա: Իսկ էս՝ պի պճշմարտորոթիւնն խօ-
սիմ, ո՛չ Հասարայի ինչ: Ո՞ր ո՛ի ՚ի յէնջ յանդիմանեա-
ցէ պիտի վասն մեղաց էթէ պճշմարտի՛ քն ասեմ, ընդ-
էր ո՛չ Հասարայի ինչ: Որ է՛ն յԱստուծոյ, պիտի
Աստուծոյ լսէ՛. է- դու՛ի վասն այնորիկ ո՛չ
լսէի, պի շէի՛ յԱստուծոյ»: (Յովհաննոս Ը: 30-47)
«Երբ այսպէս խօսեցաւ՝ շատ մարդիկ Հաւատացին իրեն:
Ուստի Յիսուս ըսաւ իրեն Հաւատացող Հրեաներուն. «Եթէ
իմ խօսքիս մէջ մնաք, ճշմարտապէս իմ աշակերտներս
կ'ըլլաք. ու ճշմարտութիւնը պիտի գիտնաք, եւ այդ
ճշմարտութիւնը պիտի ազատէ ձեզ»: Պատասխանեցին
իրեն. «Մենք Աբրահամի գարմն ենք, ու երբեք ստրուկ
չենք եղած ոեւէ մէկուն: Դուն ի՞նչ պէս կ'ըսես. Ազատ
պիտի ըլլաք: Յիսուս պատասխանեց անոնց. «Ճշմարտա-
պէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ո՛վ որ մեղք
կը գործէ, անիկա մեղքին ստրուկն է: Եւ ստրուկը տան

մէջ յաւիտեան չի կենար, բայց որդին յաւիտեան կը կենայ: Ուրեմն եթէ Որդին ազատէ ձեզ, ի՛րապէս ազատ պիտի ըլլաք: Գիտե՛մ թէ Աբրահամի վարմն էք. բայց կը ջանաք սպաննել զիս, որովհետեւ իմ խօսքս տեղ չունի ձեր մէջ: Ես ինչ որ տեսայ իմ Հօրս քով՝ զա՛յն կը խօսիմ, ու դուք ալ ինչ որ տեսաք ձեր Հօր քով՝ զա՛յն կ'ընէք»: Պատասխանեցին անոր. «Մեր Հայրը՝ Աբրահամն է»: Յիսուս ըսաւ անոնց. «Եթէ Աբրահամի որդիները ըլլայիք, Աբրահամի՛ գործերը պիտի ընէիք: Բայց հիմա կը ջանաք սպաննել զիս, այնպիսի մարդ մը՝ որ խօսեցաւ ձեզի ճշմարտութիւնը, որ լսեցի Աստուծոմէ: Աբրահամ չըրաւ այդ բանը: Դուք կ'ընէք ձե՛ր Հօր գործերը»: Անոնք ալ ըսին անոր. «Մենք պոռնկութենէ ծնած չենք. մենք ունինք մէ՛կ Հայր, որ Աստուած է»: Յիսուս ըսաւ անոնց. «Եթէ Աստուած ըլլար ձեր Հայրը՝ պիտի սիրէիք զիս, որովհետեւ ես Աստուծոմէ՛ եկայ ու եկայ. ո՛չ թէ ես ինձմէ եկայ, Հապա ի՛նք զըզկեց զիս: Ինչո՞ւ չէք Հասկնար իմ խօսածս. քանի որ չէք կրնար մտիկ ընել իմ խօսքս: Դուք ձեր Հօրմէն՝ Չարխօսէն էք, եւ կ'ուզէք ձեր Հօ՛ր ցանկութիւնները գործադրել. ան սկիզբէն մարդասպան էր, ու ճշմարտութեան մէջ չկեցաւ՝ որովհետեւ անոր մէջ ճշմարտութիւն չկայ: Երբ ան սուտ խօսի՝ կը խօսի բո՛ւն իր հոլթենէն, քանի որ ան ստախօս է՝ եւ սուտին Հայրը: Բայց որովհետեւ ես կը խօսիմ ճշմարտութիւնը՝ չէք Հաւատար ինծի: Զեզմէ ո՞վ կընայ կշտամբել զիս՝ մեղքի Համար. իսկ եթէ ես կը խօսիմ ճշմարտութիւնը, ինչո՞ւ չէք Հաւատար ինծի: Ա՛ն որ Աստուծոմէ է՝ մտիկ կ'ընէ Աստուծոյ խօսքերը. ուստի դուք մտիկ չէք ըներ, քանի որ Աստուծոմէ չէք»:

Աւետարանէն առնուած Յիսուս Քրիստոսի այս խօսքերուն մէջէն հետեւեալները նկատողութեան առնուած են: Առաջինը հետեւեալն է. «Եթէ դուք կացջի՛ք՝ ի բանի իմում ճշմարիտ աշակերտք իմ էք եւ ծանիջի՛ք զճշմարտութիւնն, եւ ճշմարտութիւնն ազատեսցէ՛ զձեզ»: Յիսուսի այս նախադասութեան իմաստը շատ պարզ է եւ բացայայտ: Եթէ մարդ արարած Յիսուսի սորվեցողցածները իր կեանքին մէջ կիրարկէ, այն ատեն է, որ ինք Յիսուսի ճշմարիտ աշակերտը կ'ըլլայ եւ ոչ՝ անուանական աշակերտը: Երբ Յիսուս «Իմ խօսքիս մէջ

մնաք» կ'ըսէ, իր խօսքին կատարուելը կը շեշտէ: Երբ անհատը կը կարողանայ ճշմարտապէս աշակերտ ըլլալ, կը գործադրէ այն բոլորը, որ Յիսուս սորվեցուցած է: Այդ կիրարկումն ալ անհատին բարձր գիտակցութիւն ունենալու կարողութիւնը կու տայ: Բարձր գիտակցութեան տէր անձը կը հասկնայ իր ներկայ կեանքին՝ գանազանութեան պատրանդ մը ըլլալը եւ կը տեսնէ՝ հասկընայ ճշմարտութիւնը: Միակ ճշմարտութիւնը Աստուած է, անհատն ալ Աստուծոյ փորձառութիւնը կ'ունենայ: Այդ փորձառութիւնը անոր կը յայտնէ ամէն ինչի միականութիւնը, ամէն ինչի միայն Աստուծոյ մէկական արտայայտութիւնը ըլլալը: Ինք Աստուած կը տեսնէ ամենուրէք եւ ամէն ինչի մէջ: Աս ալ ինքնաբերաբար պատրանգային տառապանքէն ազատումը կ'ըլլայ:

Նկատողութեան առնուելիք յաջորդ կէտը հետեւեալն է. «Ամէն ամէն ասե՛մ թէ ամենայն որ առնէ զմեզը՝ ծառայ է մեղաց: Եւ ծառայն՝ ո՛չ յաւիտեան կայ՝ ՚ի տան, իսկ որդին՝ ՚ի յաւիտեան՝ կայ: Իսկ արդ՝ եթէ որդին զձեզ ազատեցուցէ ճշմարիտ ազատք լինի՞լիք»: Ամէն մարդ, որ մեղք կը գործէ, իր գործած մեղքին գերին է: Ի՞նչ է մեղքը եւ ի՞նչ ըսել է մեղքին գերի ըլլալ: Մարդուն կենցաղը՝ բոլոր այն խորհուրդները, խօսքերը ու արարքները, որ կը հակասեն կամ ներդաշնակ չեն տիեզերական օրէնքներուն մեղք են: Մարդ իր կենցաղով կ'որոշէ իր զօրութեան «մարմինն» թրթռացումի յաճախականութիւնը: Իր զօրութեան «մարմինն» մէջի այդ տեղեկութիւնը կ'որոշէ իր կեանքի պատահարները, որով ան իրեն ներդաշնակ թրթռացում ունեցող պատահարներ իրեն կը քաշէ: Մարդն ալ կամայ թէ՛ ակամայ այդ պատահարներուն կ'ենթարկուի եւ հաս՛, աս է մեղքին գերի ըլլալը: Ստրուկը՝ գերին տան մէջ յաւիտեան չի կենար, նմանապէս մեղաւոր մարդուն անհատականութիւնն ալ «տան մէջ» յաւիտեան չի կենար: Յիսուս

այլուր տարբեր բառերով ալ նոյն գաղափարը յայտնած է ըսելով: «մեղքին թոշակը մահ է»: Իսկ «որդին» «տան մէջ» յաւիտեան կը կենայ: Որդին Քրիստոսն է, անհատին հոգին, որ անմահ է: Մարմնին մահուան հետ մարդուն անհատականութիւնն ալ կը մեռնի կ'երթայ, բայց անոր հոգին կը մնայ, որով ան Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Բայց երբ անհատը Յիսուսի ճշմարիտ աշակերտը կ'ըլլայ, ան մեղք չի գործեր ու կը կերտէ բարձր գիտակցութիւն: Աս ալ Քրիստոսի յայտնութիւնն է անձին մէջ: Երբ Քրիստոս կը յայտնուի անձին մէջ, «Որդին» ազատած կ'ըլլայ անհատը: Այս ազատութիւնն ալ Քրիստոսի այլուր ըսած «յարութիւն պիտի տամ ձեզի»-ն է: Ահա՛, աս է ճշմարիտ ազատութիւնը:

Յաջորդ նկատողութեան արժանի կէտն ալ «Այլ ինդրէք սպանանել զիս. զի բանին իմոյ չիք տեղի 'ի ձեզ» նախադասութիւնն է: Յիսուս այս խօսքը ըսաւ Հրեաներուն: Բայց Իր ըսածը այժմէական է եւ նաեւ մեզի ուղղուած: Համայն մարդկութիւնը չի գործադրեր Քրիստոսի սորվեցուցածները, որովհետեւ մարդիկ կը յարին դէպի իրենց «Ես»-ին եւ կ'անտեսեն ներքին Քրիստոսը: Անոնք մտիկ չեն ըներ ներքին լուռ ձայնին, որ Աստուծոյ կամքն է: Անոնք մտիկ չեն ըներ իրենց խիղճին, որ ներքին Քրիստոսի ձայնն է: Անոնք անխիղճ ըլլալով կը ջանան «սպաննել» այդ խիղճին ձայնը՝ Քրիստոս: Անոնք հնարող տրամաբանութեամբ մը կը չէզոքացնեն խիղճին ձայնը եւ կ'արդարացնեն իրենց գործած մեղքերը: Անոնք այս բոլորը կ'ընեն որովհետեւ անոնք կապուած են իրենց «Ես»-ին: Յիսուսի սորվեցուցածները եւ եսասիրութիւնը իրարու հակասական են եւ «Ես»-ին համար Յիսուսի սորվեցուցածները «տեղ չունին» անձին մէջ:

Յաջորդ կէտը ամփոփուած է հետեւեալ նախադասութեան մէջ. «Ընդէ՛ր զիս՝ սս իմ՝ ո՛չ գիտէք դուք. վասն

զի ո՛չ կարեք լսել զբա՛նն իմ»: Յիսուս կը յայտնէ, թէ ինչո՞ւ մարդիկ իր ըսածները չեն կրնար հասկնալ եւ կ'ըսէ, որովհետեւ անոնք իրեն մտիկ չեն կրնար ընել: Յիսուս այլուր նաեւ ըսած է, թէ առականերով կը խօսի, որպէսզի «տեսնելով չտեսնեն եւ լսելով չլսեն»: Երբ մարդուն միտքը անընդհատ զբաղ է զանազան աշխարհիկ խորհուրդներով, իր գիտակցութիւնը Քրիստոսի ըսածները հասկնալու համար ազատ չ'ըլլար: Յիսուս միշտ փոխաբերական օրինակներով խօսած է եւ ոչ ամբողջովին բացայայտ: Երբ մարդուն միտքը յաճախ զբաղ է, անոր միտքը կ'ըմբռնէ միայն ըսուածներուն բառացի իմաստները եւ ոչ անոնց փոխաբերական իմաստները: Փոխաբերական իմաստը հասկնալու համար անձին պարտ է գոնէ սովորականէն քիչ աւելի բարձր գիտակցութեան մակարդակ մը կերտած ըլլալ: Մարդուն միտքը, որ անհատին «Ես»-ին հնազանդ է, անկարելի է, որ Յիսուսի ըսածները լսէ՝ ըմբռնէ:

Հետեւեալ նախադասութիւնն ալ նախորդը կը լրացնէ. «Դուք՝ ՚ի Հօրէ՝ ՚ի սատանայէ՛ էք, եւ զցանկութիւնս Հօ՛րն ձերոյ կամիք առնել. զի նա մարդասպա՛ն էր իսկզբանէ, եւ ՚ի ճշմարտութեան ո՛չ եկաց զի ո՛չ գոյ ճըշմարտութիւն՝ ՚ի նմա յորժամ խօսիցի՛ սուս՝ յիւրո՛ց անտի խօսի զի սո՛ւտ է եւ Հս՛յր նորա»: Յիսուս այս խօսքով բացայայտ կ'ըսէ, թէ «Ես»-ը սատանան է եւ մարդուն յաճախ զանազան ցանկութիւններ կու տայ: Մարդիկ իրենք զիրենք Աստուծոյ Որդի ընելու տեղ սատանայի որդի ըրած են, հետեւաբար Յիսուս սատանային համար կ'ըսէ. «ձեր Հօր»: Սատանան սկիզբէն մարդասպան էր, որովհետեւ իր յառաջացուցած մեղքերով պատճառ եղաւ մարդու անհատականութեան մահուան: Երբ Յիսուս կ'ըսէ. «ճշմարտութեան մէջ չկեցաւ եւ անոր մէջ ճշմարտութիւն չկայ», բացայայտօրէն կ'ըսէ, թէ «Ես»-ին ստեղծած բոլոր աշխարհիկ զանազանութիւնները,

ցանկութիւնները ճշմարտութիւն չեն եւ այս հիման վրայ է, որ պէտք է հասկնանք, թէ այս մեր ճշմարտութիւն կարծած աշխարհիկ կեանքը պատրանք մըն է եւ ոչ ճշմարտութիւն մը: Միթէ պատրանքը սուտ չէ^օ: Ուրեմն պատրանքի մէջ ամէն ինչ ալ սուտ պէտք է ըլլայ: Ճիշդ ասոր համար ալ Յիսուս կ'ըսէ. «Ան սուտ կը խօսի բուն իր էութենէն, քանի որ ան սուտին հայրն է»:

Այս մէջբերումին վերջին կէտն ալ հետեւեալն է. «Որ էն Աստուծոյ, զբանս Աստուծոյ լսէ՛. եւ դուք վասն այնորիկ ո՛չ լսէք, զի չէք Աստուծոյ»: Նախորդ համարներուն մէջ տեսանք, թէ մարդ ինչպէս կը յարի դէպի իր «Ես»-ը եւ անոր ստրուկը կ'ըլլայ: Բայց մարդ ստեղծուած է ազատ կամքով եւ կարողութիւնը ունի զատելու իր անհատականութեան ժխտական բեւեռ՝ իր «Ես»-ը, կամ՝ դրական բեւեռ՝ Քրիստոս: Ան որ իր «Ես»-ը կ'անտեսէ, ինչպէս Յիսուս բազմիցս ըսած է, կ'ըլլայ «Աստուծմէ», որովհետեւ ան կ'ապրի ըստ իր ներքին Քրիստոսի՝ Աստուծոյ կամքին: Այն ատեն ինք կը կարողանայ «մտիկ ընել»՝ հասկնալ Աստուծոյ «խօսքերը», որովհետեւ ան իր ներքին Քրիստոսէն ստացած յաւելեալ Ս. Հոգիի զօրութեան՝ շնորհներուն հետեւանք կը կերտէ աւելի բարձր գիտակցութիւն, որ է իմաստութիւն:



ԱՍՏԻՎՈՅ ՏԵՍԵԼ ՈՒ ՃԱՆՉԱԼ

«Ամէն ամէն ասե՛մ յեւ, եթէ ո՛չ սքանն իմ պահեա-
ցէ սմահ մի՛ր ցեացէ՛ր յաւիտեան»: ... «Պարասխա-
նի եր Թիսուս. Եթէ ես փառաւորեմ սանչն իմ,
փառին իմ՝ ո՛չ ինչ են. Է Հայր որ փառաւորէ սիս,
սորմէ դռնին ասե՛վ՝ թէ Ասորուս մեր եւ ո՛չ ճա-
նաչե՛վ սնա: Բայց ես գիտեմ սնա: Եւ թէ ասեմ,
թէ ո՛չ գիտեմ սնա, յեւ նման սո՛ր լինիմ. այլ
գիտեմ սնա, եւ սքան նորա պահե՛մ: Աքրահամ
Հայր յեր ցանկացա՛ւ ցեաննէլ սո՛ր իմ, երբե՛ս՝ եւ
որա՛ն ի եղեւ: Ասէն սնա Հրեայնն. Թիսուսն ամ
չե՛ւեւս է ի՞նչ, եւ սԱքրահամ ցեաննէ՛ր: Ասէ սնաս
Թիսուս. Ամէն ամէն ասե՛մ յառա՛ջ իմն սլինելն
Աքրահամոս եմ ես»: (Յովհաննոս Ը: 51 եւ 54-58)

«Ճշմարտապէս՝ ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Եթէ
մէկը պահէ իմ խօսքս, մահ պիտի չտեսնէ յաւիտեան»:
... Յիսուս պատասխանեց. «Եթէ ե՛ս զիս փառաւորեմ՝ իմ
փառքս ոչ ի՛նչ է: Իմ Հայրս է՛ որ կը փառաւորէ զիս,
որուն համար դուք կ'ըսէք թէ մեր Աստուածն է, բայց
չէք ճանչնար զայն: Իսկ ես կը ճանչնամ զայն, ու եթէ
ըսի թէ չեմ ճանչնար զայն, ձեզի պէս ստախօս կ'ըլ-
լայի մինչդեռ ես կը ճանչնամ զայն, եւ կը պահեմ
անոր խօսքը: Զեր հայրը՝ Աքրահամ՝ ցանկաց տեսնել իմ
օրս, ու տեսաւ եւ ցնծաց»: Իսկ Հրեաները ըսին անոր.
«Դուն տակաւին յիսուն տարեկան չես. Աքրահամն ալ
տեսար»: Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարտապէս, ճշմարտա-
պէս կը յայտարարեմ ձեզի. Աքրահամի ըլլալէն առաջ՝
ես եմ»:

*Այս մէջըբերումին մէջն ալ Յիսուս դարձեալ կը
խօսի յաւիտեանական կեանքի եւ Աստուծոյ փառքին
վրայով: Առաջին հերթին, Յիսուս կը բացատրէ յաւիտե-
անական կեանքի արժանանալու միջոցը: Այդ միջոցը
յայտնուած է իր այս խօսքին մէջ. «Եթէ որ զբանն իմ՝*

պահեցէ զմահ մի՛ տեսցէ՝ ի յաւիտեանս»: Հետեւաբար յաւիտենական կեանքի արժանանալու համար պէտք է հասկընանք Յիսուսի բոլոր սորվեցուցածները եւ «պահենք իր խօսքը», այսինքն զանոնք մեր կեանքին մէջ կիրարկենք: Յիսուսի ըսած յաջորդ խօսքը Աստուծոյ փառքին համար է. «Եթէ ես փառաւորեմ՝ զանձն իմ, փառքն իմ՝ ո՛չ ինչ էն. է Հայր որ փառաւորէ զիս, զորմէ դուքն ասէք՝ Թէ Աստուած մեր եւ ո՛չ ճանաչէք զնա»: Երբ մարդ ինք զինք կը «փառաւորէ», այդ եսասիրութիւն եւ հպարտութիւն է եւ այդ «փառք»-ը ոչինչ է: Մարդիկ յաճախ կ'ուզեն ուրիշներու կողմէ փառաւորուիլ եւ իրենք զիրենք հպարտ կը զգան: Աս ինքնախաբէտութիւն է եւ յոխորտանք: Բայց երբ անհատը իր «Ես»-ը անտեսելով կը կարողանայ Քրիստոս իր մէջ յայտնաբերել, ինք կը փառաւորուի Աստուծոյ փառքով եւ ան կը յայտնաբերէ Աստուծոյ փառքը: Բայց մարդ արարած կ'ըսէ թէ Աստուած կը պաշտէ, բայց ինք Զայն չի ճանչնար: Ի՞նչպէս մարդ կրնայ իր չճանչցած Աստուծոյ փառքը յայտնաբերել:

Յիսուսի յաջորդ խօսքէն կարելի է շատ բան հետեւեցնել: Յիսուս ըսաւ. «Աբրահամ Հայր ձեր ցանկացա՛ւ տեսանել զՕ՛ր իմ, ետես՝ եւ ուրա՛խ եղես»: Երբ Յիսուս Աբրահամի համար կ'ըսէ. «ցանկաց տեսնել իմ օրս», ըսել կ'ուզէ, թէ Աբրահամ ալ ցանկաց Քրիստոս յայտնաբերել իր մէջ եւ ըստ Յիսուսի ըսածին յաջողեցաւ: Յիսուս նաեւ կ'ըսէ. «եւ ցնծաց»: Ցնծութիւնը Աստուածային երանութեան փորձառութիւնը ունենալն է: Հրեաները Յիսուսի ըսածին իմաստը չհասկցան եւ անիմաստ հարցում հարցուցին: Ի՞նչ է Քրիստոսի ըսած. «իմ օրս»-ը: Ան Քրիստոսի յայտնութեան օրն է: Ան յաւիտենական կեանքի փորձառութիւնն է: Աբրահամ յաջողեցաւ յաւիտենական կեանքի արժանանալ: Բայց այդ չեղաւ պարզապէս կը հաւատամ ըսելով, այլ ան

եղաւ հաւատքը գործնականօրէն ցոյց տալով: Միթէ Աբրահամ պատրաստ չէ՞ր Աստուծոյ համար իր որդին գոհել: Իսկ մենք, ոչ թէ մեր զաւակը, այլ Աստուծոյ համար նոյնիսկ մեր «Ես»-ը՝ սատանան չենք գոհեր:

Այս մէջըբերումին յաջորդ նկատողութեան առնուելիք կէտը Հրեաներուն անիմաստ հարցումին Քրիստոսի տուած պատասխանն է. «Ամէն ամէն ասէ՛մ յառա՛ջ քան զիննն Աբրահամու եմ՝ ես»: Քրիստոս Փիզիքական գետնի վրայ Աստուծոյ արտայայտութիւնն է: Քրիստոս Աստուծոյ Որդին է: Քրիստոս ստեղծագործութեան սկիզբէն գոյ է: Քրիստոս Աստուծոյ «բան»-ին՝ զօրութեան մարմնացումն է: Յիսուս Քրիստոսը իր մէջ լրիւ յայտնաբերեց: Բայց Քրիստոս Ամէն բանէ առաջ գոյ էր: Քրիստոս նաեւ ժամանակի ենթակայ չէ եւ ճիշդ ասոր համար Քրիստոս իր պատասխանին մէջ կ'ըսէ. «Աբրահամի ըլլալէն առաջ՝ ես եմ»: Քրիստոս կ'օգտագործէ «ըլլալ» բային ներկայ ժամանակ առաջին դէմքը. «ես եմ»: Շատ լաւ գիտենք, թէ Աբրահամ դարեր առաջ ապրած եւ մեռած էր: Հետեւաբար քերականական օրէնքներու համաձայն Քրիստոս պէտք էր ըսած ըլլալ. «ես էի»: Բայց որովհետեւ Քրիստոս ժամանակի ենթակայ չէ, հետեւաբար Անոր համար «անցեալ» եւ «ապագայ» գոյութիւն չունին եւ Ան միայն ներկային մէջ է, որ յաւիտենականութիւն է, ըսաւ. «ես եմ»: Ահա՛, այսպէս է, որ Քրիստոս մեզի կը սորվեցնէ: Պարզ մէկ բառի «եմ»-ի եւ «էի»-ի տարբերութիւնը մեզի հսկայական հասկացողութիւն եւ տեղեկութիւն կու տայ: Պարտ ենք ուշիմ ըլլալ եւ նոյնիսկ բառ մը անգամ չփախցնել:



ՀՈԳԵԱՆ ԿՈՐՈՒԹԻՒՄ

«Լուսնն Յիսուսն է՞ն է Լանինն զնա արդարեւ է-
իբրեւ եգիբր զնա՝ ասէ ցնա. Դու՝ Լուսարամս յորդի
Լսարո-ճոյ: Սա պարասխանի էր՝ էւ ասէ. Տէր
ո՞վ է՝ զի Լուսարացից ՚ի նա: Ըսէ ցնա Յիսուս-
ն. գիտէ՞ր զնա, էւ որ խօսիդ ընդ ինչ՝ նա՛ է:
Ըս նա ասէ. Հաւարամ Տէր: Ըս երկիր էդա՞ր նմա:
Ըս ասէ Յիսուս. Ի դարասարանս եկի յաշխարհս
յայս, զի որ ոչն գիտանեն՝ գիտցէ՛ն, էւ որդ գիտա-
նենն՝ կուրացի՛ն: Լուսնն ո՞մանի՞ ՚ի փարիսէց-ոցն՝
որդ ընդ նմա էին էւ ասէն ցնա. Մի՞ջէ՛ էւ մէ՞ծ
կոյր իցեմի: Ըսէ ցնասս Յիսուսն. Ըսէ կոյրդ էի՞՞ն՝ ո՛չ
էր յեր մեղ թայց արդ ասէ՞ ՚ի գիտանեմի, է-
մեղի՞ն յեր ՚ի յէ՛զ Լուսարարեալ էն»: (Յով. Թ՝: 35-41)
«Յիսուս լսեց թէ վտարեցին զայն. երբ գտաւ զայն՝
ըսաւ անոր. «Դուն կը Հաւատամս Աստուծոյ Որդիին»:
Ան պատասխանեց. «Տէ՛ր, ո՞վ է՝ որ Հաւատամ անոր»:
Յիսուս ըսաւ անոր. «Թէ՛ տեսար զայն, թէ՛ ալ ի՛նքն է
քեզի Հետ խօսողը»:
Ան ալ ըսաւ. «Կը Հաւատամ՝, Տէ՛ր»,
ու երկրպագեց անոր: Յիսուս ըսաւ. «Ես այս աշխարհը
եկայ՝ դատաստանի Համար, որպէսզի չտեսնողները՝
տեսնեն, իսկ տեսնողները՝ կուրանան»:
Փարիսեցիներէն ոմանք, որ իրեն Հետ էին, լսելով ասիկա՝ ըսին իրեն.
«Մի՞թէ մե՞նք ալ կոյր ենք»:
Յիսուս ըսաւ անոնց. «Եթէ կոյր
ըլլայիք՝ մեղք չէիք ունենար. բայց Հիմա կ'ըսէք.
Կը տեսնենք. ուրեմն ձեր մեղքը կը մնայ ձեր վրա»:

Յիսուս Շաբաթ օրով կոյր մը բուժեց: Փարիսեցիները բուժուած անձը հարցաքննելէ ետք զայն վտարեցին: Անոր վտարումէն վերջ Քրիստոս այս մէջբերումին մէջ ներկայացուած խօսակցութիւնը ունեցաւ անհատին եւ յետոյ ալ այդ խօսակցութիւնը լսող Փարիսեցիներուն հետ: Քրիստոս կը յայտնէ թէ Յիսուսի

բերնով խօսողը Ինքն է: Յիսուս Քրիստոսի յայտնութիւնն մեզի ցոյց տուաւ: Քրիստոսի հետեւեալ խօսքը. «Ի դատաստանս եկի յաշխարհս յայս, զի որ ոչն տեսանեն տեսցեն, եւ որք տեսանենն՝ կուրասցին» կը կարօտի լուրջ մեկնաբանութեան: Հետաքրքրական է կարգալ, թէ Քրիստոս կ'ըսէ. «աշխարհ եկայ դատաստանի համար» իսկ այլուր Յիսուս ըսած է. «Ես դատելու չեմ եկած այլ փրկելու»: Այս երկու գաղափարները կը թուին իրար հակասել: Բայց եթէ հասկնանք, թէ Յիսուս իր մարդկային բնոյթով առաքելութիւն մը ունէր, իսկ Քրիստոս, որ ամէն անհատի ճշմարիտ էութիւնն է, Ինքն է, որ կը դատէ ամէն մի անհատ, հետեւաբար՝ աշխարհը: Յիսուսի առաքելութիւնը մարդկութեան փրկութիւնն էր, ուրեմըն Յիսուս չէր եկած աշխարհը դատելու: Այլ ամէն անհատ կը դատուի իր էութեան կողմէ՝ իր հոգիէն՝ Քրիստոսէ: Որովհետեւ անհատը ինք գինք կը դատէ, այդ դատաստանը ամենաարդարն է: Հետեւաբար Քրիստոսի վերեւի ըսածին եւ Յիսուսի այլուր ըսածին միջեւ բնաւ հակասութիւն չկայ: Քրիստոսի խօսքին երկրորդ մասը կը ներկայացնէ անհատին ներքին Քրիստոսի ազդեցութիւնը իր անձին վրայ: Անոնք որոնք «չտեսնողներ»-ն են, այսինքն չեն գիտեր կատարելութեան ուղին եւ յաւիտեանական կեանքը ժառանգելու միջոցը, բայց ճշմարտապէս անտեսելով իրենց «Ես»-ը կը յարին դէպի Քրիստոս, Քրիստոսն ալ անոնց կու տայ բարձր գիտակցութիւն եւ յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւն եւ անոնք ալ կը «տեսնեն»՝ կը հասկնան ճշմարտութիւնը եւ կատարելութեան ուղին: Իսկ անոնք, որոնք իրենք գիրենք ուսեալ կը համարեն եւ կը կարծեն ու կը յայտարարեն, թէ ինչ որ պիտոյ է գիտեն՝ «կը տեսնեն», իրենց «Ես»-ին տուած հպարտութիւնը եւ յոխորտանքը զանոնք ճշմարտութեան նկատմամբ ալ աւելի կոյր կ'ընէ: Ան որ կը կարծէ թէ գիտէ, չի փնտռեր: Ան որ կատարելութեան

ուղիէն կ'ընթանայ պէտք չունի յայտարարելու, անոր կենցաղը ինքնաբերաբար այդ իրողութիւնը կը յայտարարէ:

Քրիստոսի յաջորդ խօսքը ուղղուած Փարիսեցիներուն հետեւեալն է. «Եթէ կոյրք էիք՝ ո՛չ էր ձեր մեղքայց արդ ասէք՝ թէ տեսանեմք, եւ մեղքն ձեր՝ ՚ի ձե՛զ Հաստատեալ են»: Քրիստոսի ըսածը այն է, թէ ամէն անձ իր գիտակցութեան մակարդակին համաձայն կը դատուի: Խաւարամտութեան հետեւանք եթէ ան անգիտակցաբար զանազան մեղքեր կը գործէ, իր «պատիժ»-ն ալ աւելի մեղմ կ'ըլլայ կամ կը ներուի: Բայց անոնք, որոնք կ'ըսեն, թէ գիտեն եւ իրենց գործած մեղքերը գիտակցաբար կ'ընեն, իրենց գործած մեղքին պատշաճ պատիժ ին կ'ենթարկուին:



ՔՐԻՍՏՈՒ ԲԱՐԻ ՀՈՎԻՒՄ

«Շո՛ւք իղեն պնովաւ Ըրեային՝ եւ ասեն. Մինչեւ յերբ թափես պոգիս մեր, եթէ դու ես Քրիստոսն՝ ասա՛ մեզ Ըամարչակ: Պարասխանի եր նոցա Յիսուս՝ եւ ասէ. Ասացի՛ յեզ՝ եւ ո՛չ Ըաւարայի ինչ: ԶԳործան պոր ես Գործեմ յանուն Ըոր իմոյ՝ նովին վկաւ յեն վասն իմ: Այլ դու՛ է ո՛չ Ըաւարայի, պի շէ՛ղ յոշխարաց անդի իմոց. Ոշխարի իմ Յայնի իմում լսե՛ն, եւ ե՛ս Ճանաչեմ պնոսս, եւ պնի իմ Գա՛ն. եւ ես ցա՛մ նոցա պնեանսն յաւիտենականս եւ մի՛ կորիցեն ՚ի յաւիտեան եւ մի՛ ող յափշտակեացէ պնոսս՝ սս ՚ի յեռաց իմոց: Հայրն իմ որ եր ինչ պնոսս՝ մե՛ծ է վան պամենայն եւ ո՛չ ող կարէ յափշտակել ՚ի յեռաց Ըոր իմոյ: Ես եւ Ըայր իմ մի եմէ՛լ»: ... Պարասխանի երոն նմա Ըրեային. Սասն թարոն Գործոյ ո՛չ ասնեմի պնեզ վարկոթ, այլ վասն Ըայհոյութեան. եւ պի դու մարդ ես, եւ պանչն իս Աստուած ասնեա: Պարասխանի եր նոցա Յիսուս. Ո՛չ յօրենսն յեր Գրեալ ես ասացի թէ աստուած է իցեղ: Իսկ եթէ պնոսս աստուածս ասէ, առ որս թանն Աստուծոյ եղեա. եւ շէ՛ մարթ եղծանել Գրոյն. Իսկ պոր Ըայր արթեաց՝ եւ ասաղեաց յաշխարհ դու՛ է ասեղ՝ թէ Ըայհոյե՛ս. պի ասացի՛ թէ որդի Աստուծոյ եմ: Եթէ ո՛չ Գործեմ պործաւ Ըոր իմոյ մի՛ Ըաւարայի ինչ: Այս թէ Գործեմ, թէ եւ ինչ ո՛չ Ըաւարայի, սակայն Գործոցն Ըաւարայեղէ՛լ պի Գրասաջիղէ եւ

Չանիջի՛ ի՛ ելեւ Հայր յիս, եւ ես ՚ի Հայր» :

(Յովհաննէս Ժ:24-30 եւ 33-38)

«Ուստի Հրեաները շրջապատեցին զինք եւ ըսին իրեն. «Մինչեւ ե՞րբ պիտի մտատանջես մեզ. եթէ Քրիստոսը դո՛ւն ես՝ բացորոշապէս ըսէ՛ մեզի»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ըսի՛ ձեզի, ու չէք հաւատար: Այն գործերը՝ որ ես կ'ընեմ իմ Հօրս անուամբ, անո՛նք կը վկայեն իմ մասիս: Բայց դուք չէք հաւատար՝ որովհետեւ իմ ոչխարներէս չէք, ինչպէս ըսի ձեզի: Իմ ոչխարներս կը լսեն իմ ձայնս, ես ալ կը ճանչնամ զանոնք, եւ կը հետեւին ինծի: Ես կու տամ անոնց յաւիտեանական կեանքը, ու յաւիտեան պիտի չկորսուին, եւ ո՛չ մէկը պիտի յափշտակէ զանոնք իմ ձեռքէս: Իմ Հայրս՝ որ ինծի տուաւ զանոնք՝ բոլորէն մեծ է, ու ո՛չ մէկը կրնայ յափշտակել իմ Հօրս ձեռքէն: Ես եւ Հայրը մէկ ենք» ... Հրեաները պատասխանեցին անոր. «Քեզ չենք քարկոծեր բարի գործի համար, հապա՛ հայհոյութեան համար. որովհետեւ դո՛ւն՝ որ մարդ ես, դուն քեզ Աստուած կ'ընես»: Յիսուս պատասխանեց անոնց. «Միթէ՛ ձեր Օրէնքին մէջ գրուած չէ՞. Ես ըսի. “Դուք աստուածներ էք”: Եթէ աստուածներ կը կոչէ անոնք՝ որոնց տրուեցաւ Աստուծոյ խօսքը, ու կարելի չէ որ այդ գրուածը աւրուի, հապա գայն՝ որ Հայրը սրբացուց եւ աշխարհ դրկեց, դուք ի՞նչպէս կ'ըսէք անոր. Կը հայհոյես, որովհետեւ ըսի. Աստուծոյ Որդի եմ: Եթէ չեմ ըներ իմ Հօրս գործերը՝ մի՛ հաւատաք ինծի: Իսկ եթէ կ'ընեմ, թէպէտ չէք հաւատար ինծի՝ գոնէ գործերո՛ւն հաւատացէք, որպէսզի գիտնաք եւ հաւատաք թէ Հայրը իմ մէջս է, ու ես՝ անոր մէջ»:

Այս մէջըբերումը կը ներկայացնէ Յիսուսի հրեաներուն հետ ունեցած մէկ խօսակցութիւնը: Ըսուածներէն յայտնի է թէ հրեաները կը մերժէին Յիսուսի քարոզչութիւնը եւ Քրիստոսի յայտնութիւնը Յիսուսի մէջ: Հետեւաբար Յիսուս կ'ըսէ. «Ասացի՛ ձեզ՝ եւ ո՛չ հաւատայք ինձ»: Քրիստոս նաեւ պատճառը կ'ըսէ, թէ ինչու Յիսուսի չեն հաւատար: Աս յայտնի է Քրիստոսի հետեւեալ խօսքով. «դուք ո՛չ հաւատայք, զի չէք յոյխարաց անտի իմոց. Ոչխարք իմ ձայնի իմում լսէ՛ս, եւ էս

ճանաչե՛մ զնոսա, եւ զկնի իմ՝ գա՛ն»։ Անոնք, որոնք կ'անտեսեն իրենց «Ես»-ը եւ կը յարին դէպի իրենց ներքին Քրիստոս անոնք «կը լսեն» ներքին Քրիստոսի ձայնը եւ իրենց կենցաղն ալ ընդ այնմ կը փոխուի եւ անոնց բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներն ալ կ'ըլլան Աստուածահաճոյ։ Անոնք նաեւ կ'ըլլան Քրիստոսի «ոչ-խարներ»-ը։ Անոնք կը կատարեն Աստուծոյ կամքը եւ իրենց գործերով ալ կը ճանչցուին Աստուծմէ։ Անոնք նաեւ արժանի կ'ըլլան յաւիտենական կեանքի եւ անոնց անհատականութիւնը «չի կորսուիր» իրենց մարմնին մահուամբ։ Այս կէտն ալ Քրիստոս կը բացայայտէ իր հետեւեալ նախադասութեամբ. «եւ ես տա՛մ նոցա զկեանսըն յաւիտենականս եւ մի՛ կորիցեն՝ ի յաւիտեան եւ մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա՝ ՚ի ձեռաց իմոց»։ Այն անձը, որ յաւիտենական կեանքի կ'արժանանայ «Ես»-ը՝ սատանան ալլեւս չի կրնար զայն խաբել եւ «յափշտակել»։

Քրիստոս ինչպէս այլուր բազմիցս մատնանշած է, թէ ինք եւ Հայրը մէկ են, անգամ մը եւս կը մատնանշէ այդ իրողութիւնը երբ կ'ըսէ. «Ես եւ Հայր իմ՝ մի եմք»։ Քրիստոս Աստուծոյ զօրութեան մարմնացումն է։ Այլուր Յիսուս ըսած է. «Աստուած հոգի է»։ Հայր Աստուած, Ս. Հոգի եւ Աստուծոյ Որդին կը թուին երեք զատ «էութիւն»-ներ ըլլալ, բայց այդ ըմբռնումը սխալ է։ Անոնք միայն մէկ Աստուծոյ զանազան արտայայտութիւններն են։ Գուցէ հետեւեալ օրինակով այս դադափարը աւելի դիւրաւ հասկնալի կ'ըլլայ։ Ամուսնացեալ այր մարդ մը, նախ իր ծնողքին զաւակն է, ապա՝ իր կնոջ ամուսինը, ինչպէս նաեւ իր զաւկին հայրը։ Նոյն անձը թէ՛ զաւակ է, թէ՛ ամուսին եւ թէ՛ ալ հայր։ Միայն մէկ անձնաւորութիւն, երեք տարբեր հանգամանքներով։

Եթէ ամէն անձի ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է, Յիսուսի Հին Կտակարանէն ըրած մէջբերումով. «Ո՛չ

յօրէնան ձեր գրեալ ես ասացի թէ աստուածք իցէք»
յայտնի կ'ըլլայ, թէ Քրիստոսի մեր մէջ ներկայու-
թեամբ բոլորս ալ Աստուծոյ որդիներ ենք: Իսկ անոնք,
որոնք կը յաջողին Յիսուսի նման Քրիստոս իրենց մէջ
լրիւ յայտնաբերել Հայր Աստուած զանոնք կը սրբացնէ
եւ անոնց կը տրուի Աստուծոյ խօսքը: Եթէ Աստուած
մեզ ստեղծած է եւ Քրիստոս մեր էութիւնն է կը
նշանակէ, թէ Աստուած մեզ աշխարհ դրկած է: Բայց
դժբախտաբար մարդ իր խաւարամտութեամբ «Ես»-ին
կ'ողմէ կը յափշտակուի եւ չի ծառայեր իր կեանքի
բուն նպատակին: Ան «Ես»-ին ազդեցութեան տակ պատ-
րանքը կ'ընդունի իբրեւ ճշմարտութիւն: Այդ պատրան-
քէն՝ երազէն տարուած ըստ այնմ կը գործէ անտեսելով
ճշմարտութեան իրողութիւնը: Ընդհանուր ստեղծա-
գործութիւնը Աստուծոյ «մարմին»-ը կը ներկայացնէ
կամ աւելի ճիշդ է ըսել Հայր Աստուծոյ երազն է:
Ստեղծագործութիւնը Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է:
Հետեւաբար Քրիստոս Հօրը մէջն է, ինչպէս երազը
երազողին մէջն է: Թէեւ երազողը իր երազին մէջ ամե-
նուրեք է, սակայն ան ինքզինքին տեսանելի չէ: Հետե-
ւաբար Հայր Աստուած ալ Որդւոյն Քրիստոսի մէջ է:
Ճիշդ ասոր համար Քրիստոս հրեաներուն կ'ըսէ. «զի
զիտասջիք եւ ծանխջիք՝ եթէ Հայր յիս, եւ ես 'ի Հայր»:



ԻՍԱՍՏՈՒԹԵԱՆ ԼՈՅՐ ԵՒ ԽԱԽԱՐԱՄՏՈՒԹԻՒՄ

«Պատասխանի եր Յիսուս. Ոչ երկոգրասան ժամ
է յառուր. եթէ ոչ Գնայ 'ի Կոռնթնքեան' ո՛չ
Գայթապղի, Կի Կոյս աշխարհիս այսորիկ
Կեսանէ, ապա թէ ոչ Գնայ Գիշերի՝ Գայթապղի,
Կի Կոյս ո՛չ Գոյ ընդ նմա»: (Յովհաննու ժԼ:Թ-10)
«Յիսուս պատասխանեց. «Օրը տասներկու ժամ է՞: Եթէ
մէկը ցերեկը քալէ՝ չի սայթաքիր, որովհետեւ այս աշ-
խարհի լոյսը կը տեսնէ. բայց եթէ մէկը գիշերուան մէջ
քալէ՝ կը սայթաքի, որովհետեւ իրեն հետ լոյս չկայ»:

Այս խօսքով Յիսուս կ'օգտագործէ ցերեկուայ արե-
ւին լոյսը եւ գիշերուայ մութը, անոնց փոխաբերական
իմաստներով, մատնանշելու համար մարդուն բարձր
գիտակցութեան մակարդակը եւ անոր խաւարամտու-
թիւնը: Բարձր գիտակցութիւնը Աստուծոյ Լոյսն է:
Անոնք, որոնք չեն ձգտիր ու չեն կերտեր բարձր գիտակ-
ցութեան մակարդակ, իրենց խաւարամտութեան հե-
տեւանք, կեանքի մէջ յաճախ կը «սայթաքին»: Ի՞նչ է
խաւարամտութիւնը, եթէ ոչ այն բոլոր հաւատալիք-
ները, որոնք մեզի տրուած են սկսեալ մեր մանկու-
թեան օրերէն: Անոնք կը պաշարեն մեր միտքը եւ մեր
բնոյթը եւ մեզի կու տան ճշմարտութիւնը գտած ըլլա-
լու գաղափարը: Այդ հիման վրայ ալ անձը կը դադրի
պրպտելէ եւ սորվելէ: Խաւարամտութիւնը նաեւ անձին
կը յայտնէ միայն ըսուածներուն բառացի իմաստները
եւ ոչ անոնց փոխաբերական խորհրդաւոր իմաստները:
Այս հիման վրայ ալ մարդ կը ստեղծէ կրօնք մը, որ
չատ հեռու է Յիսուսի սորվեցուցածներէն: Պէտք չէ
մոռնալ, թէ «Ես»-ը շատ խորամանկ է եւ անձին կու
տայ իր գիտցածին ճշմարտութիւն ըլլալու վստահու-
թիւնը, հոգ չէ թէ գիտցածը կապ մը իսկ չունենայ
ճշմարտութեան հետ: Եթէ կը ձգտինք յաւիտենական
կեանքի պարտ ենք նախ ստանալ Աստուծոյ Լոյսը՝
բարձր գիտակցութիւն:

ՄԱՐԿՈՒՄ ԱՆՁԸ ՅՈՐԵՆԻ ՀԱՏԻՎԸ

«Եւ Յիսուսս պատասխանի՛ր Էդ նոցա՛ Էւ ասէ՛ր Եւ Հաս՛ս Ժամս զի փառասորեացի՛ր որդի մարդոց: Եւ մէն ամէն ասէ՛մ Եթէ ոչ Հասին ցորենոց անկեալ յերկիր մեռանիցի ի՛նչն միայն կայ. սպաս Եթէ մեռանիցի, Բասպո՛ւմ արդիւնս ասնէ: Որ սիրէ զա՛նչն իւր՝ արձակէ՛ զնս. Էւ որ արեայ զանչն իւր յաշխարհիս յայսմիկ, ՚ի կեանան յաւիտենականս պահեսցէ զնս: Եթէ ո՛վ զի՛ս պաշտօնէն իմ եկեսցէ. Էւ որ Է՛ան Էմ, ա՛նդ Էւ պաշտօնէն իմ եղիցի: Եթէ ո՛վ զի՛ս պաշտօնէ, պատուեսցէ՛ զնս Հայրն իմ»:

(Յովհաննէս ԺԲ: 23-26)

«Յիսուս ալ պատասխանեց անոնց. «Ժամը Հասաւ՝ որ մարդու Որդին փառաւորուի: Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Եթէ ցորենին Հատիկը Հողին մէջ իյնալով չմեռնի՛ ինք մինակ կը մնայ. բայց եթէ մեռնի՛ շատ պտուղ կը բերէ: Ա՛ն որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ա՛ն որ կ՛ստէ իր անձը այս աշխարհի մէջ՝ յաւիտենական կեանքին Համար պիտի պահէ զայն: Եթէ մէկը կը սպասարկէ ինծի՛ թող Հետեւի ինծի. ու ես ո՛ւր որ եմ, իմ սպասարկուս ալ Հո՛ն պիտի ըլլայ. եթէ մէկը կը սպասարկէ ինծի, Հայրը պիտի պատուէ զինք»:

Յիսուս այս խօսքով ակնարկուածիւն մը կ'ընէ Իր իրաչելութեան եւ յարութեան: Յիսուս Իր մահով իսկ մեզի կը սորվեցնէ մեր կեանքին նպատակը: Յարութիւնը մարդու Որդիին փառաւորուիլն է: Յիսուս ցորենի Հատիկը փոխաբերաբար կ'օգտագործէ իբրեւ օրինակ: Մարդուն «Ես»-ը ցորենի Հատիկն է: Եթէ ցորենը՝ մարդուն «Ես»-ը չմեռնի եւ չանհետանայ «բազում արդիւնք» չի տար: «Բազում արդիւնք»-ին փոխաբերական իմաստն ալ անհատին բարձր գիտակցութեան մակարդակն է: Պէտք է մոռնալ, թէ մարդուն

գիտակցութիւնը Քրիստոսի ներկայութիւնն է: Եթէ «Ես»-ը չմեռնի կը մնայ միայն մարդուն ցած գիտակցութիւնը եւ օր մը ան ալ մարմնին մահուան հետ ամբողջովին կ'անհետանայ, ինչպէս հինցած ցորենի հատիկն ալ նոյնիսկ հողին տակ դրուի արդիւնաբեր չ'ըլլար: Իսկ բարձր գիտակցութիւնն ալ Քրիստոսի անձին մէջ յայտնութիւնն է եւ անհատին կու տայ յարութիւն եւ յաւիտենական կեանք, որոնք մաս կը կազմեն «բազում արդիւնք»-ին: Յիսուս իր յաջորդական խօսքով կը շեշտէ այս մեկնաբանութեան ճշգրտութիւնը, կ'ըսէ. «Որ սիրէ զա՛նձս իւր՝ արձակէ՛ զնա. եւ որ ատեա՛յ զանձս իւր յաշխարհիս յայսմիկ, ՚ի կեա՛նսն յաւիտենականս պահեսցէ զնա»: Ան, որ իր «Ես»-ը կը սիրէ պիտի կորսնցնէ զայն, իսկ ան որ զայն կ'ատէ, ան իր անհատականութիւնը պիտի պահէ յաւիտենական կեանքի համար: Աս ալ անհատականութեան յարութեան ակնարկութիւնն է: Յիսուսի այս խօսքէն. «Եթէ ոք զի՛ս պաշտիցէ զկնի՛ իմ՝ եկեսցէ. եւ ուր ե՛սն եմ, ա՛նո՞ւ եւ պաշտօնեա՛յն իմ՝ եղիցի» մեր սորվելիք վերջին կէտն ալ այն է, թէ պարտ ենք Քրիստոս պաշտել: Ի՞նչ է իմաստը այս պաշտելուն: Հետաքրքրական է նաեւ օգտագործուած բառը՝ «սպասարկէ» աշխարհաբար թարգմանութեան մէջ: Ուրեմն կը թուի թէ «պաշտել» «սպասարկել» կը նշանակէ: Երբ մարդ կը յարի իր անհատականութեան ժխտական բեւեռին, ինք թէ՛ պաշտած կ'ըլլայ իր «Ես»-ը, թէ՛ ալ անոր սպասարկած: Իսկ երբ անհատը կը յարի իր անհատականութեան դրական բեւեռին, ան թէ՛ կը պաշտէ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս, թէ՛ ալ կը կատարէ Անոր կամքը, հետեւաբար սպասարկած կ'ըլլայ Քրիստոսի: Եթէ անհատին միտքը եւ գիտակցութիւնը կը կեդրոնանայ իր ներքին Քրիստոսի վրայ, քան թէ իր «Ես»-ին յառաջ բերած զանազան ցանկութիւններուն վրայ, ինք ալ կ'ըլլայ հոն ուր Քրիստոս է:

Հետեւաբար Քրիստոս կ'ըսէ. «Եւ ուր է՞սն եմ, ա՛նդ եւ պաշտօնեա՛յն իմ՝ եղիցի»: Որովհետեւ Քրիստոս Հայր Աստուծոյ արտայայտութիւնն է, ով որ կը յայտնաբերէ Քրիստոս իր մէջ կ'արժանանայ Հայր Աստուծոյ գնահատանքին, որ Իր տուած «պատիւ»-ն է:



ՅԻՄՈՒ ՔՐԻՍՏՈՍ «ԼՈՅՐԱ» ՅԱՅՏԱՆԻՊԵՏ

«Բայց այժմ անչն իմ խոսովեալ է. Եւ զի՞նչ ասացից՝ ելել Ըստ ասորեցո զիս՝ ի ժամանակէ ասորի յայսմանէ այլ վասն այնորիկ եկի ՚ի ժամս յայս: Հայր՝ փառասորեալ սորոյի շո: Եկն Քարթաւոս յերկնից եւ փառասոր արարի, եւ դարձեալ փառասոր արարից: Եւ ժողովորդն որ կայր եւ լսէր, ասէին՝ որոհո՞մն լինել, կէսվն ասէին, Ըրեշտակ խօսեցաւ ընդ նմա: Պատասխանի եր Յիսոս եւ ասէ. Ո՛չ վասն ՚իմ ինչ եկն Քարթաւոս այս, այլ վասն յէ՛ր: Ե՛ր յժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեացի արդա՛վ: Եւ ես՝ յորժամ Քարցրացայ յց յերկրէ զամենեան՝ չԳեցից աս իս: Զայս ասէր, նշանակեալ թէ որո՞վ մահոս մեռանելոց իցէ: Պատասխանի եր նմա ժողովորդն. Մե՛կ լոսա՛վ յօրինաց՝ ելել Քրիստոսն յասիբեա՛ն կայ, եւ դոս զիս՞ ըտ ասէս՝ թէ պա՛րբ ե Քարձրանալ որդոս մարդոս ո՛վ է ասն որդին մարդոս: Ըսէ ցնոսս Յիսոս. Փո՛վր մեռս ժամանակ լոյս ընդ յէ՛զ Գնացէ՛վ մինչդեռ զլո՛յսն ունի՛վ զի մի՛ խաւար յէ՛զ Ըսացէ. զի որ Գնայ ՚ի խաւարի, ո՛չ Գիբէ յո՛ երթայ: Մինչդեռ զլոյսն ընդ յէ՛զ ունի՛վ Ըսացացէ՛վ ՚ի լոյսն, զի որդի՛վ լոսոս իղիճի՛վ»: (Յովհաննէս ԺԳ: 27-36)

«Հիմա իմ անձս վրդոված է, եւ լո՞նչ ըսեմ. «Հայր, ազատէ՛ զիս այս ժամէ՞ն»: Բայց ես եկած եմ ասոր Ըսմար՝ այս ժամուն: Հայր, փառաւորէ՛ քու անունը»: Ուստի ձայն մը եկաւ երկինքէն. «Փառաւորեցի ալ, ու դարձեալ պիտի

փառաւորեմ»: Բազմութիւնը՝ որ կայնամ էր ու կը լսէր, կ'ըսէր. «Որտում կ'ըլլայ»: Ոմանք ալ կ'ըսէին. «Հրեշտակ մը խօսեցաւ իրեն հետ»: Յիսուս պատասխանեց. «Այս ձայնը եկաւ ո՛չ թէ ինծի համար, հապա՛ ձեզի համար: Հիմա է այս աշխարհի դատաստանը, հիմա պիտի վտարուի այս աշխարհի իշխանը: Ես ալ, երբ բարձրանամ երկրէն, բոլորդ ալ պիտի քաջեմ ինծի»: Այս բանը կ'ըսէր՝ մատնանշելով թէ ի՛նչ տեսակ մահով պիտի մեռնէր: Բազմութիւնը պատասխանեց անոր. «Մենք լսեցինք Օրէնքէն թէ Քրիստոս յաւիտեան կը մնայ: Դու՛ն ի՞նչ պէս կ'ըսես. Մարդու Որդին պէտք է բարձրանայ: Ո՞վ է այդ մարդու Որդին»: Ուստի Յիսուս ըսաւ անոնց. «Ք'իչ մը ատեն ալ լոյսը ձեզի հետ է. քալեցէ՛ք՝ մինչ տակաւին լոյսը ունիք, որպէսզի խաւարը չհասնի ձեր վրայ. որովհետեւ խաւարի մէջ քալողը չի գիտեր թէ ո՛ւր կ'երթայ: Մինչ լոյսը ունիք՝ հաւատացէ՛ք այդ լոյսին, որպէսզի լոյսի որդիներ ըլլաք»:

Յիսուս նախատեսելով Իր չարչարանքը ու խաչելութիւնը, ներկաներուն վրդոված կը խօսի Իր մահուան մասին: Որեւէ անձ չի ախորժիր Ֆիզիքական ցաւ քաշելէ, հետեւաբար պէտք չէ զարմանալ, թէ Յիսուս վրդոված էր: Պէտք չէ մոռնալ, թէ Յիսուս ունէր մարդկային բնոյթ: Բայց Յիսուս ընտրեց կատարել Հօրը կամքը: Իր Աստուածային բնոյթը՝ Քրիստոս ըսաւ. «Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս»: Աշխարհի իշխանը սատանան՝ մարդուն «Ես»-ն է: Անկարելի է Աստուած մեռցնել, հետեւաբար Յիսուսի «Ես»-ն էր որ մեռաւ խաչին վրայ եւ ոչ Քրիստոս: Այս ուղղութեամբ նոյնիսկ ներկաները կ'ըսեն. «Մէք լուս'ք յօրինայ՝ եթէ Քրիստոսն յաւիտեան կայ, եւ դու զիս'րդ ասես՝ թէ պա՛րտ է բարձրանալ որդւոյ մարդոյ ով է ա՛յն որդին մարդոյ»: Քրիստոս անմահ է: Միթէ խաչին վրայ Յիսուս մեռնելէ առաջ չըսաւ. «Աստուած իմ Աստուած իմ զիս ի՞նչութողցիր»: Մարդու Որդի՛ Յիսուսին անհատականութիւնն էր, որ յարութիւն առաւ: Յիսուս Քրիստոս նոյնիսկ Իր վրդովանքին մէջ եւս Իր ողորմածութիւնը ցոյց

կու տայ, երբ ան կ'ըսէ. «Եւ ես՝ յորժամ բարցրացայ յերկրէ զամենեսի՛ն ձգեցից առ իս»: Ըստ Քրիստոսի այս խօսքին համայն մարդկութիւնը օր մը պիտի արժանանայ յաւիտենական կեանքի, որովհետեւ Քրիստոս ուշ կամ կանուխ բոլորս ալ Իրեն պիտի քաշէ:

Աւետարանէն այս մէջբերումին վերջին կէտն ալ Քրիստոսին մարդուն Լոյսը ըլլալն է: Անտարակոյս Աւետարանին մէջ գրուած Լոյսը կարելի է հասկնալ իբր Յիսուսի ներկայութիւնը աշխարհի վրայ եւ խաւարն ալ Իր բացակայութիւնը՝ մահը եւ համբարձումը: Բայց Յիսուսի ամէն խօսքը միշտ աւելի կարեւոր վերացական իմաստ ունի: Լոյսը ամէն անհատի ներքին Քրիստոսը՝ իր հոգին է, որ իրեն կու տայ գիտակցութիւն: Յիսուսի ըսածը այն է, թէ երբ տակաւին աշխարհի վրայ կ'ապրիք, բարձր գիտակցութեան տէր եղէք, որպէսզի խաւարամիտ չըլլաք: Խաւարամիտը կարող չէ ճշմարտութիւնը տեսնել, հետեւաբար «չի գիտեր թէ ուր կ'երթայ»: Անտարակոյս այս վերջինը անհատին հոգեկան կեանքի համար ըսուած է: Երբ Յիսուս կ'ըսէ. «Փո՛քր մեա ժամանակ լոյս ընդ ձե՛զ» մարդու աշխարհիկ կեանքին շատ կարճ ժամանակ մը ըլլալուն ակնարկութիւնն է: Երբ մարդ պատանի է կամ նոյնիսկ երիտասարդ, չի հասկնար կեանքին շատ կարճ ըլլալը: Երբ ան հասուն՝ ծերութեան տարիքի կը հասնի, միայն այն ատեն հարց կու տայ. թէ «ե՞րբ բոլոր կեանքը անցաւ»: Պէտք չէ մոռնալ թէ ժամանակը յարաբերական է:



ՄԱՐԻ ԻՍՉԻ ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՄ ԿՈՒ ՏԱՅ

ԵՒ

ԻՍՉ ԲԱՍ Կ'ԱՏԱՏԱԷ

«Եւ այնչափ նշանա արարեալ էր առաջի նոցա. եւ նո՛վա ո՛չ Հաւարային ՚ի նա. զի լիցի՛ր թանն Եսայայ մարգարէի՝ զոր ասացն Տէր՝ ո՞ Հաւարայց ՚ի լոր մէր, եւ թաշտկ Տէառն ո՞մ յայրնեցաւ: Վասն այնորիկ ո՛չ կարէին Հաւարալ, զի միտանաւ մամ ասէ Եսայի. Թէ կորացոյց զա՛շտ նոցա, եւ ասիշեցոյց զսիրտս նոցա զի երէս զփառան նորա, եւ խօսեցա՛ւ վասն նորա: Բայց սակայն եւ յիշխանաց անդի թաշտ՛մէ Հաւարացիին ՚ի նա այլ վասն փարիսեցոցն ո՛չ յայրնէին, զի մի ՚ի Ժողովրդէնէն էլանիցեն: Բանզի սիրեցին զփառա մարդկան, առաւել իան զփառա Լսրոնժոյ: Եւ Յիսոս աղաղակէ՛ր եւ ասէր. Որ Հաւարայ յիս, ո՛չ Հաւարայ յիս, այլ յա՛յն որ առա՛վեացն զիս: Եւ որ րեւանէ զիս, զա՛յն րեւանէ որ առա՛վեացն զիս: Եւ լո՛յս աշխարհի եկի. զի ամենայն որ Հաւարայ յիս, ՚ի խաւարի մի՛ մնասցէ: Եւ եթէ ո՛վ լո՛ւիցէ թանից իմոց՝ եւ ո՛չ պահեացէ. ես ո՛չ դարբմ զնա. իանզի ո՛չ եկի թէ դարեցայց զաշխարհ այլ զի փրկեցի՛ց զաշխարհ: Որ անարգէ զիս, եւ ո՛չ ընդոնի զթանս իմ Գո՛յ որ դարբ զնա. թանն զոր ես խօսեցայ՝ նա՛ դարբ զնա յառոն յեղնոմ: Զի ես յանձնէ իմմէ ո՛չ խօսեցայ այլ որ առա՛վեացն զիս Հայր, նա՛ եր ինձ պարտէր՝ զինչ ասացից եւ զինչ

խօսեցայց : Եւ Գրիգէմ ելել պատրուէրն այն կէտանի են
յաւորեանականի արդ' պոր է'ան խօսիմ, որդեա ասաց
ինչ Հայրն, ա'յնպէս խօսիմ» : (Յովհաննէս ժԻ : 37-50)
«Թէպէտ այնքան նշաններ ըրած էր անոնց առջեւ, անոնք
չէին հաւատար իրեն որպէսզի իրագործուի Եսայի մարգա-
րէին խօսքը՝ որ ըսած էր. «Տէ՛ր, ո՞վ Հաւատաց մեր տուած
լուրին, ու Տէրոջ բազուկը որո՞ւն յայտնուեցաւ» : Չէին
կրնար հաւատալ՝ քանի որ Եսայի դարձեալ ըսած է. «Կուր-
ցուց անոնց աչքերը եւ կարծրացուց անոնց սիրտը, որ-
պէսզի չտեսնեն իրենց աչքերով, չհասկնան իրենց սիրտով
ու դարձի չզգան, եւ ես չբժշկեմ զանոնք» : Եսայի ըսաւ
սփիկա՛ երբ տեսաւ անոր փառքը ու խօսեցաւ անոր մասին :
Սակայն միաժամանակ՝ պետերէն ալ շատեր հաւատացին
իրեն. բայց չէին դաւաներ զայն՝ Փարիսեցիներուն պատ-
ճառով, որպէսզի չվառարուին ժողովարանէն. որովհետեւ
աւելի սիրեցին մարդոց փառքը՝ քան Աստուծոյ փառքը :
Յիսուս կ'աղաղակէր. «Ա'ն որ կը հաւատայ ինձի, կը
հաւատայ ո՛չ թէ ինձի, Հապա՛ զիս զրկո՛ղը : Ես աշխարհ
եկայ իբր լոյս, որպէսզի ո՞վ որ հաւատայ ինձի՛ չմնայ
խաւարի մէջ : Եթէ մէկը լսէ իմ խօսքերս ու չհաւատայ՝
եւ չեմ դատեր զինք, քանի որ ես եկայ՝ ո՛չ թէ դատելու
աշխարհը, Հապա՛՝ փրկելու աշխարհը : Ա'ն որ կ'անարգէ
զիս եւ չ'ընդունիր իմ խօսքերս, ունի մէկը՝ որ կը դա-
տէ զինք. այն խօսքը՝ որ ես ըսի, անիկա՛ պիտի դատէ
զինք՝ վերջին օրը : Որովհետեւ ես ինձմէ չխօսեցայ, Հապա
Հայրը՝ որ զրկեց զիս, ի՛նք պատուիրեց ինձի թէ ի՛նչ պի-
տի ըսեմ եւ ի՛նչ պիտի խօսիմ : Եւ գիտեմ թէ անոր պատ-
ուիրածը՝ յաւիտենական կեանքն է. ուրեմն ինչ որ կը
խօսիմ, ա՛յնպէս կը խօսիմ՝ ինչպէս Հայրը ըսաւ ինձի» :

**Այս մէջըբերումին մէջ կան Եսայի մարգարէի Յիսուսի նկատմամբ ըսածները : Անոնք որոնք չեն ընթա-
նար կատարելութեան ուղիէն եւ չեն ձգտիր յաւիտենա-
կան կեանքի, անոնք են որ չեն հաւատար Յիսուսի սոր-
վեցուցածներուն : Անոնք նաեւ չեն հասկնար ըսուած-
ներուն բուն իմաստը : Յիսուս ինք ալ ըսած է, թէ
առականերով կը խօսի, որպէսզի տեսնելով չտեսնեն եւ
լսելով չիմանան : Ան, որ չի հաւատար Յիսուսի չի**

հաւատար նաեւ Աստուծոյ: Կան նաեւ անոնք, որոնք կը հաւատան Յիսուսի, բայց կը նախընտրեն մարդոց «փառք»-ը քան թէ Աստուծոյ «փառք»-ը, հետեւաբար հաւատալով հանդերձ չեն գործադրեր իրենց սորվածը:

Յիսուս կ'ըսէ թէ Ինք աշխարհը դատելու չէ եկած այլ զայն փրկելու: Երբ Յիսուս կ'ըսէ. «Որ անարգէ զիս, եւ ո՛չ ընդունի զբանս իմ գո՛յ որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ՝ նա՛ դատի զնա յաւուրն յեանում» յայտնի կ'ընէ թէ Ինք անհատը պիտի չդատէ: Անհատը իր մէջ ունի Քրիստոս իբրեւ իր ճշմարիտ հոլթիւնը եւ անհատին իր հոլթիւնը՝ Քրիստոսն է, որ զինք պիտի դատէ: Ճիշդ ասոր համար Յիսուս ըսաւ. «Ունի մէկը՝ որ դատէ զինք»: Քրիստոս անհատը պիտի դատէ ըստ անոր տրուած յորդորներուն եւ դասերուն: Անհատին կը պարտի իրեն տրուած յորդորները մտիկ ընել եւ գործադրել եւ տրուած դասերէն ալ սորվիլ: Եթէ անձը անոնք չիւրացնէ եւ չգործադրէ ըստ այնմ ալ պիտի դատուի: Ճիշդ ասոր համար ալ Յիսուս կ'ըսէ. «այն խօսքը՝ որ ես ըսի, անիկա՛ պիտի դատէ զինք՝ վերջին օրը»:

Այս մէջբերումին վերջին մասն ալ կը ներկայացընէ Յիսուսի սորվեցուցածներուն ճշմարտութիւնը: Յիսուս իրմէ չէ, որ կը խօսէր, այլ Հայր Աստուծոյ արտայայտութիւնը՝ Քրիստոսն էր, որ կը խօսէր Յիսուսի բերնով: Ասոր համար ալ Յիսուս կ'ըսէ. «Եւ գիտեմ եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք արդ՝ զոր է մն խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն, ա՛յնպէս խօսիմ»: Քրիստոսի սորվեցուցածն ալ յաւիտենական կեանքն էր:



ՅԻՍՈՒԲ ՏՈՒԱԾ ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

«Պատուիրանն նոր ցամ յեզ. զի սիրեցէ՛լ զմեմեանս .
որպէս սիրեցի ես զյեզ, զի եւ դու՛ն սիրեսջի՛լ
զմեմեանս: Յա՛յամ Գերասացեն ամենեկեան՝ եթէ
իմ աշակերտի՛ ելի, եթէ սիրեցէ՛լ զմեմեանս»:
(Յովհաննոս ԺԳ:34-35)

«Նոր պատուիրան մը կու տամ ձեզի. Սիրեցէ՛ք զիրար.
ինչպէս ես սիրեցի ձեզ, դո՛ւք ալ սիրեցէ՛ք զիրար: Ասո՛վ
բոլորը պիտի գիտնան թէ իմ աշակերտներս էք, եթէ սէր
ունենաք իրարու հանդէպ»:

Այս երկու համարներով Յիսուս կ'ամփոփէ իր բոլոր սորվեցողացածները: Բաղդատմամբ նախկին կրօնքներու Յիսուս նոր պատուիրան մը տուաւ՝ զիրար սիրել: Սէրը Աստուծոյ ներկայութիւնն է: Աստուած սէր է: Ճիշդ ասոր համար Յիսուս այլուր նաեւ ըսած էր «սիրեցէ՛ք ձեր թշնամիները»: Երբ կը տեսնենք Քրիստոս անխտիր ամէն անհատի մէջ, արդեօք կարելի է՞ բոլորն ալ չսիրել: Եթէ կ'ըսենք թէ Աստուած կը սիրենք, հետեւաբար պէտք է սիրենք ամէն բոյս, անասուն ու անհատ: Ընդհանուր ստեղծագործութիւնը «Աստուծոյ մարմին»-ն է եւ Անոր արտայայտութիւնը: Մարդ միայն իր խաւարամտութեան հետեւանքն է, որ կը տեսնէ զանազանութիւն եւ զայն կը կարծէ ճշմարտութիւն, փոխանակ տեսնելու այդ պատրանքային զանազանութեան միականութիւնը: Բայց աս կը կարօտի բարձր գիտակցութեան: Երբ անձը կը նոյնանայ այդ միականութեան հետ այլեւս որեւէ զատողութիւն չի դնել իր եւ ուրիշներու միջեւ: Ան ինչպէս ինք զինք կը սիրէ նաեւ կը սիրէ բոլորը համահաւասար: Ահա՛, աս է իմաստը Յիսուսի տուած նոր պատուիրանին: Եթէ կարողանանք մեր «Ես»-ը մոռնալ եւ տեսնել բոլորին միականութիւնը, միայն այն ատեն կ'ըլլանք մեր վարդապետին ճշմարիտ աշակերտները:

ԱՍՏԻՈՅ ՏԱՆ ԲԱՎԱՐԱՆԱԵՐԸ

«Ա՛յ խոսվեացին սիրորէ յեր այլ Հաւարացե՛կ յԱստ-
ուած, եւ յ՛ս Հաւարացե՛կ: Ի պան Շոր իմոյ օ՞րէ-
վանէ Բաստ՛ւմ էն. ապա թէ ո՛չ՝ ասացեա՛լ էր իմ
յեզ էթէ երթամ եւ պարտաստեմ յեզ պեղի: Եւ էթէ
երթամ եւ պարտաստեմ յեզ պեղի, դարձեալ Գա՛մ
եւ առնում զյեզ առ իս զի ուր է՛ան իցեմ, եւ
դու՛ն անդ իցե՛կ: Եւ ուր երթամն՝ Գիպիցե՛կ է-
զճանապարհն Գիպիցե՛կ: Ասէ ցնա Թ՛ո՛վմաս. Տէր՛
ո՛չ Գիպեմէ՛կ յո՛վ երթաս, եւ զիա՛րդ զճանապարհն
կարասցու՛ն Գիպել: Ասէ ցնա Յիսուս. Ե՛ս եմ ճանա-
պարհն՝ եւ ճշմարտութիւնն եւ կեա՛նէ՛կ ո՛չ ո՛վ Գայ
առ Հայր՝ էթէ ոչ ինէ՛ւ: Եթէ զիս Գիպելի՛,
ապա եւ զՀայր իմ Գիպելի՛, եւ այսուհետեւ
Գիպասջի՛կ զնա, եւ պե՛տէ՛կ զնա՛: Ասէ ցնա Փի-
լիպոս. Տէր՛ ցո՛յց մեզ զՀայր՝ եւ շա՛ր է մեզ: Ասէ
ցնա Յիսուս. Այսչափ ժամանակս՝ ընդ յե՛զ եմ, եւ
ոչ ժանեար զիս Փիլի՛պպէ. որ երե՛ս զիս՝ երե՛ս
զՀայրն. եւ դու՛ն զիա՛րդ ասեա՛՛ էթէ ցո՛յց մեզ
զՀայր: Ո՞չ Հաւարաս էթէ ես ՚ի Հայր՝ եւ Հայր
յիս է: Բանն զոր ես խօսեմ ընդ յեզ. ո՛չ էթէ
յանձնէ ինչ խօսեմ, այլ Հայրն որ յիս Բնակեա՛լ,
նա Գործէ զԳործսն: Հաւարայէ՛ ինչ՝ էթէ ես
՚ի Հայր՝ եւ Հայր յիս: Ապա թէ ո՛չ՝ Գոնէ վասն
Գործոցն Հաւարացե՛կ ինչ. Ամէն ամէն ասե՛մ թէ
որ Հաւարայն յիս զԳործս զոր ես Գործեմ, եւ
նա Գործեսցէ, եւ մեծամեծս է՛ս ինն զնոյնս

Գործեացե պի ես առ Հայր Երթամ: Եւ պոր ինչ
խնդրիցե՞լ յանձն իմ, արարից պայն. պի փառապո-
րեացի՛ Հայր յորդի: Եւ պոր ինչ խնդրիցե՞լ յանձն
իմ, արարից պայն»: (Յովհաննոս ԺԴ: 1-14)

«Զեր սիրտը թող չվրդովի. Հաւատացէ՛ք Աստուծոյ՝ Հաւա-
տացէ՛ք նաեւ ինձի: Շատ բնակարաններ կան իմ Հօրս
տան մէջ. եթէ այդպէս չըլլար, միթէ պիտի ըսէի՞ ձեզի
թէ կ'երթամ՝ որ տեղ պատրաստեմ ձեզի: Երբ երթամ եւ
տեղ պատրաստեմ ձեզի, դարձեալ պիտի գամ ու քովս
ընդունիմ ձեզ, որպէսզի ո՛ւր ես եմ՝ դո՛ւք ալ Հոն ըլ-
լաք: Գիտէք ո՛ւր կ'երթամ, գիտէք նաեւ ճամբան»: Թով-
մաս ըսաւ անոր. «Տէ՛ր, չենք գիտեր ո՛ւր կ'երթաս, եւ
ի՞նչպէս կրնանք գիտնալ ճամբան»: Յիսուս ըսաւ անոր.
«Ե՛ս եմ ճամբան, ճշմարտութիւնն ու կեանքը. ո՛չ մէկը
կու գայ Հօրը քով՝ բաց միայն ինձմով: Եթէ ճանչնայիք
զիս՝ պիտի ճանչնայիք նաեւ իմ Հայրս. եւ այժմէն իսկ կը
ճանչնաք զայն, ու տեսած էք զայն»: Փիլիպպոս ըսաւ
անոր. «Տէ՛ր, ցո՛յց տուր մեզի Հայրը, ու կը բաւէ մեզի»:
Յիսուս ըսաւ անոր. «Ա՛յսքան ժամանակ ես ձեզի հետ եմ,
եւ չճանչցա՞ր զիս, Փիլիպպո՛ս: Ա՛ն որ տեսաւ զիս՝ տե-
սաւ Հայրը. դուն ի՞նչպէս կ'ըսես. Յո՛յց տուր մեզի Հայ-
րը: Զե՞ս Հաւատար թէ ես Հօրը մէջն եմ, ու Հայրը իմ
մէջս է: Այն խօսքերը՝ որ կ'ըսեմ ձեզի, ես ինձմէ չեմ
ըսեր. Հապա Հայրը՝ որ բնակած է իմ մէջս, անիկա՛ կ'ը-
նէ այդ գործերը: Հաւատացէ՛ք ինձի, թէ ես Հօրը մէջն
եմ, ու Հայրը իմ մէջս է: Այլապէս՝ գոնէ գործերո՛ւն
Համար Հաւատացէք ինձի: Ճշմարտապէս, ճշմարտապէս
կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը Հաւատայ ինձի, ի՛նք
ալ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ
աւելի՛ մեծ գործեր պիտի ընէ, որովհետեւ ես կ'երթամ
Հօրս քով: Ի՛նչ որ խնդրէք իմ անունովս՝ պիտի ընեմ
զայն, որպէսզի Հայրը փառաւորուի Որդիով: Եթէ որեւէ
բան խնդրէք իմ անունովս, պիտի ընեմ»:

*Այս մէջըբերումին մէջ Քրիստոս բացայայտօրէն
կը յայտարարէ ամէն ինչի միականութիւնը, նա մասնա-
ւանդ իր եւ Հայր Աստուծոյ միականութիւնը: Նման
հասկացողութեամբ մարդ կը կարողանայ հասնիլ այն
եզրակացութեան, թէ եթէ ինք փորձառականօրէն գիտ-*

նայ՝ ճանչնայ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս, ան նաեւ կը գիտնայ՝ «կը տեսնէ» Հայր Աստուած: Քրիստոսի առաջին պատգամը հետեւեալն է. «Հաւատացէք Պատուած, եւ յի՛ս Հաւատացէք»: Քրիստոսի այս խօսքը մեզի կը սորվեցնէ, թէ մեր կեանքի բոլոր պատահարները Աստուծոյ կամ քն են: Պարտ ենք ամէն ինչ ընդունիլ առանց վարանումի եւ հաւատանք, թէ այդ, նոյնիսկ վատ, արարքը մեր օգտին համար է: Ընդհանուր տիեզերքի ինչպէս նաեւ աշխարհի մէջ պատահածները Հայր Աստուծոյ «երազ»-ն է, հետեւաբար Անոր կամ քը: Ամէն մի անհատի կեանքը իր ներքին Քրիստոսի «երազ»-ն է, հետեւաբար Անոր կամ քը: Ուրեմն պէտք չէ՞ որ հաւատանք թէ բոլոր պատահարները՝ անհատական կամ հաւաքական, Աստուծոյ կամ քն են:

Քրիստոս նաեւ կ'ըսէ. «Ի տան Հօր իմոյ օթեւանք բազմ'ւմ են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ եւ եթէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գա՛մ եւ առնում զձեզ առ իս զի ուր է սն իցեմ, եւ դուք անդ իցէք»: Միջնադարուն Կաթողիկէ եկեղեցին հաւատացեալներուն «երկինք»-ի մէջ բնակարան կը ծախէր: Շատ հաւանաբար այդ վաճառքը կը կատարուէր ըստ Քրիստոսի այս խօսքին բառացի հասկացողութեան: Անտարակոյս, այս խօսքը պէտք չէ բառացի իմաստով առնել: Հայր Աստուծոյ «տուն»-ը ընդհանուր ստեղծագործութիւնն է: Այդ տան մէջի «չատ բնակարան»-ները մարդոց մարմիններն են: Միթէ այլուր չէ՞ ըսուած. «Ձեր մարմինները Աստուծոյ տաճարներ են»: Քրիստոս կը բնակի ամէն անհատի մէջ եւ բնակարանները մեզի համար կը պատրաստէ, այսինքն կը պատրաստէ ամէն անհատ Աստուածայայտնութեան եւ միականութեան համար: Երբ ամէն անհատ միականութեան փորձառութիւնը կ'ունենայ, կ'ըլլայ հոն ուր Քրիստոս է: Ահա՛, աս է իմաստը «որպէսզի ո՛ւր ես եմ՝ դո՛ւք ալ հոն ըլլաք»-

ին: Ահա՛, աս է անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնը:

Քրիստոս երբ կ'ըսէ. «Եւ ուր երթամն՝ գիտիցէ՞ք եւ զճանապարհն գիտիցէք», այս մէկ խօսքով կ'ամփոփէ իր բոլոր սորվեցուցածները՝ յաւիտենական կեանքի արժանանալու միջոցը: Զարմանալին այն է, թէ նոյնիսկ իր աշակերտները, երեք տարի իրեն հետ ապրելով եւ պտըտելով հանդերձ չէին հասկցած Քրիստոսի սորվեցուցածները: Քրիստոս անոնց հարցումներուն վրայ աւելի բացայայտ տեղեկութիւն կու տայ վերեւի ամփոփումին նկատմամբ ու կ'ըսէ. «Յ'ս եմ ճանապարհն՝ եւ ճշմարտութիւն եւ կեանք ո՛չ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինե՛ւ»: Քրիստոս այս խօսքով կը մատնանշէ իր բոլոր սորվեցուցածներուն երեք հիմնական կէտերը: Քրիստոս կը յայտարարէ, թէ ինք Աստուածն է: Միթէ չե՞նք ըսեր միակ ճշմարտութիւնը Աստուածն է: Քրիստոս ալ իր Աստուածութիւնը կը հաստատէ երբ կ'ըսէ, թէ ինք ճշմարտութիւնն է: Քրիստոս նաեւ ամէն մարդու ճշմարիտ էութիւնն է, անոնց հոգին՝ կեանքը: Առանց հոգիին մարդուն մարմինն ալ կը մեռնի: Մարդուն կեանքը Քրիստոսի ներկայութիւնն է իր մէջ: Երբորդ կէտն ալ այն է, թէ Քրիստոսն է ճանապարհը՝ Հայր Աստուծոյ հասնելու միջոցը: Եթէ մարդ չյաջողի իր մէջ Քրիստոս լրիւ յայտնաբերել, չի կարողանար միակնութիւնը գիտնալ եւ Աստուծոյ մէջ լուծուիլ: Որովհետեւ Քրիստոս Հայր Աստուծոյ արտայայտութիւնն է, Հայր Աստուած եւ Քրիստոս մէկ են: Ծիշտ ասոր համար Քրիստոս այլուր ըսած է. «Ես եւ Հայր իմ մի եմք»: Հետեւաբար Քրիստոսի յաջորդ երկու խօսքերը. «Եթէ զիս գիտէիք, ապա եւ զՀայր իմ գիտէիք, եւ այսուհետեւ գիտասջի՞ք զնա, եւ տեսէք զնա՛» եւ «որ ետէ՛ս զիս՝ ետէ՛ս զՀայրն» պէտք չէ զարմանք պատճառէ:

Քրիստոսի յաջորդ խօսքը կը թուի նախորդ երկու խօսքերուն շարունակութիւնը ըլլալ. «Հաւատա՛յք ինձ

եթէ ես 'ի Հայր՝ եւ Հայր յիս»: Եթէ կը հաւատանք, թէ միակ ճշմարտութիւնը Աստուած է, ստեղծագործութիւնը որ իբրեւ ճշմարտութիւն կ'ըմբռնենք պէտք է պատրանքային ըլլայ, հետեւաբար երազ մը: Ան Հայր Աստուծոյ երազն է: Ան Աստուծոյ Որդին Քրիստոսն է: Հետեւաբար Քրիստոս Հայր Աստուծոյ երազը ըլլալով Հայր Աստուծոյ մէջն է: Բայց երագողն ալ միշտ իր երագին մէջն է, բայց ան հոն ըլլալով ամէն ինչի փորձառութիւնը եւ ամէն ինչի գիտակցելով հանդերձ, ան հոն չի տեսնուիր: Հետեւաբար, ստեղծագործութիւնը երագող Հայր Աստուած ալ ստեղծագործութեան մէջն է: Բայց ստեղծագործութիւնը Աստուծոյ Որդին Քրիստոսն է, հետեւաբար, Հայր Աստուած ալ Քրիստոսի մէջն է: Այս հիման վրայ Քրիստոս ալ ըսաւ.«Ես Հօրը մէջ եմ ու Հայրը իմ մէջս է»:

Յիսուսի յաջորդ խօսքը յատկանշական իմաստ մը ունի: Ան կ'ըսէ. «Ամէն ամէն ասէ՛մ թէ որ հաւատայ՛ս յիս զգործս զոր ես գործեմ, եւ նա գործեսցէ, եւ մեծամեծս է ևս քան զնոյնս գործեսցէ»: Ընդհանուր Քրիստոսնէութեան մէջ այն գաղափարը կայ, թէ Յիսուս Աստուծոյ Որդին է, հետեւաբար ան կարող է բնութեան օրէնքները գերազանցել եւ հրաշքներ գործել: Իսկ մենք մահկանացու մարդիկ այդ կարողութիւնները չունինք: Բայց Յիսուս ինք մեզի կ'ըսէ, թէ մենք կարողութիւնը ունինք իր ըրածներէն՝ գործած հրաշքներէն, աւելի մեծ գործեր ընել: Յիսուս ըսած է նաեւ, թէ աշակերտը պէտք է իր վարդապետին նմանի: Բոլոր Յիսուսի գործած արարքները, որ մենք հրաշք ըլլալ կը համարենք, ամենեւին բնութեան օրէնքներուն հակառակ չէին, այլ՝ հակառակ անոր, որ մենք գիտենք բնութեան օրէնքներուն նկատմամբ: Յիսուս, Քրիստոսի լրիւ յայտնութիւնը, նաեւ տէր Քրիստոսի բարձր գիտակցութեան, հետեւաբար տեղեակ տիեզերական՝ Ս. Հոգիի բոլոր օրէնքներուն,

այդ օրէնքները ներդաշնակօրէն օգտագործելով գործեց այն բոլորը, որոնք մենք հրաշք կը համարենք: Ըստ Յիսուսի ըսածին, եթէ մենք հաւատանք Իր սորվեցուցածներուն եւ զանոնք կիրարկենք եւ Իրեն նման յաջողինք Քրիստոս լրիւ յայտնաբերել մեր մէջ, մենք ալ կ'ունենանք բարձր գիտակցութեան մակարդակ: Հետեւաբար բոլոր տիեզերական օրէնքներուն տեղեակ, կը կարողանանք գործել այն բոլորը, որ Յիսուս ըրաւ եւ աւելին: Քրիստոս նախորդ մի քանի տողերուն մէջ տրուած տեղեկութիւնը աւելի կը յստակացնէ ըսելով. «Եւ զոր ինչ խնդրիցէք յանձն իմ, արարից զայն. զի փառաւորեսցի՛ Հայր յորդի»: Այս համարին յենելով շատեր Աստուծոյ կ'աղօթեն եւ Աստուծմէ կը խնդրեն այն բոլորը, որ իրենք կը ցանկան ունենայ: Այս ցանկութիւններուն մեծ մասը անոնց «Ես»-ին յառաջ բերած ցանկութիւններն են: Անոնք նոյնիսկ չեն հասկցած, թէ այն ինչ որ մեզի պիտոյ է կամ անհրաժեշտ, Աստուծաւ արդէն մեզի կու տայ: Անոնք իրենց աղօթքները կը վերջացնեն «Յիսուս Քրիստոսի անունով կը խնդրենք» նախադասութեամբ եւ կը կարծեն, թէ իրենց ուզածները աւելի լաւ պիտի իրականանան: Քրիստոսի ըսածին իմաստը այդ չէ: Քրիստոսի անունով խնդրել, կը նշանակէ Աստուծոյ կամքը ուզել, տիեզերական օրէնքներուն ներդաշնակ գործել եւ ոչ «Ես»-ին ուզածները Աստուծմէ խնդրել: Մարդ Աստուծմէ միայն մէկ բան պէտք է խնդրէ եւ անկէ զատ՝ ոչինչ: Աստուծաւ սէր է եւ ողորմած: Աստուծոյ շնորհքները կը տեղան բոլորին վրայ անխտիր: Մենք ենք, որ մեր խորհուրդ, խօսք ու արարքներով կը խափանենք անոնց ներգործումը մեր մէջ: Այն մէկ խնդրանքը, որ Աստուծմէ պէտք է խնդրենք՝ Քրիստոսի յայտնութիւնն է մեր մէջ: Այդ ալ կարելի կ'ըլլայ միայն երբ մենք Յիսուսի սորվեցուցածները կիրարկելով՝ կատարելութեան ուղիէն չչեղելով, զմեզ

*արժանի կ'ընենք այդ յայտնութեան: Եթէ յաջողինք
արժանանալ եւ Քրիստոս մեր մէջ յայտնուի, Հայր
Աստուած ալ Իր Որդիի յայտնութեամբ փառաւորուած
կ'ըլլայ, որովհետեւ Հայրը եւ Որդին մէկ են:*



Քրիստոս «ԴՈՒՈՒ» Ա. ՀՈԳԻ ԶՕՐՈՒԹԵԱՆ

«Եթէ սիրէ՞ք զիս՝ զպապոս-իբրանա իմ պաճեւտքի՞: Ե-
տա աղաշեցից զճայր, եւ ա՛յլ մեծարելոյ քացե զի
ընդ յէ՛զ թնակե՛ացե՛ր յա-իբեան. զճոգի՛ն ճշմար-
պոս-իբեան զոր աշխարհս ա՛յ չկարէ ընդոսնել. զի ա՛յ չ
իբասանէ զնա՝ եւ ա՛յ ճանաչէ զնա: Բայց դոս-՞ ճա-
նաչէ՞ք զնա, զի առ յէ՛զ թնակեացե, եւ ընդ յէ՛զ
եղիցի: Ո՛չ թողից զյէ՛զ որքո՛ւ. Գա՛մ առ յէ՛զ: Փո՞ղբ
մեա եւս, եւ աշխարհս ա՛յ եւս չիբասանէ զիս քայց
դոս-՞ չիբասանիցէ՞ք զիս. զի ես կենդանի՛ եմ, եւ
դոս-՞ կենդանի՛ չիենելոց է՞ք: Յայնմ առ-որ Գիբրաս-
ջի՞ք դոս-՞ զի ես ՚ի Ըօ՛ր իմոսմ, եւ դոս-՞ յիս, եւ ես
՚ի յէ՛զ: Որ ոսնի զպապոս-իբրանա իմ՝ եւ պաճե զնո-
սս, նա՛ է որ սիրէ զիս: Եւ որ սիրէն զիս՝ սիրեցի՛
՚ի Ըօրէ իմմէ, եւ ես սիրեցի՛ց զնա, եւ երեւեցոս-
ցի՛ց նմա զիս: Ըսէ ցնա Յոսեփ՝ ա՛յ Սկարիբովքա-
ցին, Տէր՝ զի՞՞ եղեւ՝ զի մե՛զ յայդնելո՛ց ես զէ՛զ՝
եւ ա՛յ աշխարհի: Պապասխանի եր Յիսոս՝ եւ առ
ցնա. Եթէ ո՞չ սիրէ զիս՝ զբա՛նն իմ պաճեացե եւ-
ճայր իմ սիրեացե՛ զնա. եւ առ նա՛ եկեացոս-՞ք, եւ
օրեւզա՛նս առ նմա արացոս-՞ք. Եւ որ ոչն սիրէ
զիս՝ զբանս իմ ա՛յ պաճե: Եւ բանն իմ զոր լսէ՞ք՝
ա՛յ է իմ, այլ Ըօ՛րն՝ որ առա՞՞քեացն զիս: Ջայս
խօսեցայ ընդ յէ՛զ մինչ առ յէ՛զս եմ: Իսկ մեծար-
ելոյն Ըոգի՛ն սոսրթ՝ զոր առա՞՞քեացե ճայր յանոսն
իմ, նա՛ ոսոսացե յէ՛զ զամենայն, որ ինչ առացի
յէ՛զ, եւ յիշեցոս-ացե՛ յէ՛զ: Խաղաղոս-ի՞ն թողոս՝

Յեւզ՝ պիտի աղաղակուի՝ որ ան պիտի որոնէ՝ որ զորոքեալ աշխարհու
որոյ՝ որոնք եւ Յեւզ: Մի՛ խոտովեացին անորոք Յեր, ե-
մի՛ն պանդխտեացեան: Լուսնոյն պիտի ասացի եւ Յեւզ՝ Դե-
տրեամ եւ Գամ՝ ասու երեւ անրեւիչ պիտի՝ ասոյ ուրոն խ
լիեալ եր Յեր՝ երեւ եւ ասու Լայր երեւամ, պիտի Լայր
իմ մէ՛ջ է ինն պիտի: Եւ ասոյն ասացի Յեւզ մինչեւ՝
եղեալ. պիտի յորժամ լինիցի, Լուսնայանջի ի: Ո՛չ եւս
այլ շար խօսեցայ ընդ Գամ՝ ի շխան աշխարհիս
այսորիկ, եւ յիս ինչ ո՛չ Գորանէ: Ը՛յլ պի-
տանիցե աշխարհ՝ երեւ անրեւ պիտի եւ որոքեա
պարտութեաց ինչ Լայրն ասոյն ասուեմ: Ը՛ն-
արի՛ ի Գանացո՛ւն ասորի»: (Յովհաննէս ԺԳ: 15-31)

«Եթէ կը սիրէք զիս՝ պահեցէ՛ք իմ պատուիրաններս: Ես
պիտի պիտի թախանձեմ Հօրը, եւ ուրիշ Միտիթարիչ մը
պիտի սոյ ձեզի, որպէսզի յաւիտեան բնակի ձեզի հետ-
ձգմարտութեան Հոգին, որ այս աշխարհը չի կրնար
ընդունիլ, որովհետեւ չի տեսներ զայն ու չի ճանչնար
զայն. բայց դուք կը ճանչնաք զայն, որովհետեւ կը
բնակի ձեր քով եւ պիտի ըլլայ ձեր մէջ: Զեզ որք
պիտի չթողում. պիտի գամ ձեզի: Քիչ մը ատենէն ետք
աշխարհը ա՛լ պիտի չտեսնէ զիս. բայց դուք պիտի
տեսնէք զիս, որովհետեւ ես կ'սպրիմ, եւ դուք պիտի
սպրիք: Այն օրը պիտի գիտնաք թէ ես իմ Հօրս մէջ եմ,
ու դուք՝ իմ մէջ, ես ալ՝ ձեր մէջ: Ա՛ն որ ունի իմ
պատուիրաններս եւ կը պահէ զանոնք, անիկա՛ն է զիս
սիրողը: Ա՛ն որ կը սիրէ զիս՝ պիտի սիրուի իմ Հօրմէս.
ու ես պիտի սիրեմ զայն, եւ զիս պիտի յայտնեմ անոր»: Յուդա (ոչ Իսկարիովացին) ըսաւ անոր. «Տէ՛ր, ի՞նչպէս
կ'ըլլայ՝ որ դուն քեզ պիտի յայտնես մեզի, բայց ոչ՝
աշխարհին»: Յիսուս պատասխանեց անոր. «Եթէ մէկը
սիրէ զիս՝ պիտի պահէ իմ խօսքս, ու իմ Հայրս պիտի
սիրէ զայն. եւ պիտի գանք անոր ու բնակինք անոր
հետ: Ա՛ն որ չի սիրեր զիս՝ չի պահեր իմ խօսքերս: Այն
խօսքը որ կը լսէք՝ իմս է, Լապա Հօրս՝ որ զրկեց զիս:
Այս բաները խօսեցայ ձեզի, քանի դեռ կը մնամ ձեր

քով: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը պիտի դրկէ իմ անունովս, անիկա՛ պիտի սորվեցնէ ձեզի ամէնը, եւ ինչ որ ըսի ձեզի՛ պիտի յիշեցնէ ձեզի: Խաղաղութիւն կը թողում ձեզի, ի՛մ խաղաղութիւնս կու տամ ձեզի: Ես չեմ տար ձեզի ա՛յնպէս՝ ինչպէս աշխարհը կու տայ: Ձեր սիրտը թող չվրդովի ու չերկնչի: Լսեցիք թէ ըսի ձեզի: Ես կ'երթամ, բայց դարձեալ պիտի գամ ձեզի: Եթէ սիրելիք զիս, պիտի ուրախանայիք՝ որ ես կ'երթամ Հօրը քով, որովհետեւ իմ Հայրս ինձմէ մեծ է: Եւ այժմէն՝ դեռ չեղած՝ ըսի ձեզի, որպէսզի երբ ըլլայ՝ հաւատար: Ա՛լ շատ պիտի չխօսիմ ձեզի հետ, որովհետեւ այս աշխարհի իշխանը կու գայ: Բայց ո՛չ մէկ հեղինակութիւն ունի իմ վրաս: Սակայն աշխարհը թող գիտնայ թէ ես կը սիրեմ Հայրը, եւ կ'ընեմ ա՛յնպէս՝ ինչպէս Հայրը պատուիրեց ինձի՛ Ոտքի՛ ելէք, երթա՛նք ասկէ»:

Այս համարներուն մէջի խօսքերով Քրիստոս բացայայտ կ'ընէ Հայր Աստուծոյ, Ս. Հոգիի եւ Որդւոյն Քրիստոսի «գործունէութիւն»-ները: Պատշաճ է այս մէջբերումին մէջի խօսքերուն մեծամասնութիւնը մէկ առ մէկ մեկնաբանել: Առաջին խօսքը հետեւեալն է. «Եթէ սիրէք զիս՝ զպատուիրա՛նս իմ պահեսջիք»: Յիսուս Քրիստոս ոչ թէ «պաշտեցէք զիս», այլ՝ «պատուիրաններս պահեցէք» կ'ըսէ: Նախ հասկնանք, թէ ինչ ըսել է Յիսուս Քրիստոս «սիրել»: Այսօր քրիստոնեաներուն մեծամասնութիւնը կ'ըսէ, թէ Յիսուս Քրիստոս կը սիրէ, բայց անոնք կը կատարեն իրենց «Ես»-ին ցանկութիւնները: Ինչպէս մայր մը իր զաւակը կը սիրէ եւ պատրաստ է իր զաւակին ապահովութեան համար ամէն ինչ զոհել, նոյնիսկ իր կեանքը, նմանապէս մենք ալ եթէ ճշմարտապէս կը սիրենք Քրիստոս պէտք է պատրաստ ըլլանք զոհել ամէն ինչ, ներառեալ մեր «Ես»-ը, նա մանաւանդ մեր «Ես»-ը: Այս զոհողութիւնը Յիսուսի տուած ամենակարեւոր պատուիրաններէն մին է: Եթէ կ'ատենք նոյնիսկ մէկ հոգի, մէկ ազգ, մէկ կրօնք ... եւ կ'ըսենք Յիսուս Քրիստոս կը սիրենք, ստախօս կ'ըլլանք: Անկարելի է ճշմարիտ սէր ունենալ եւ պատուի-

րանները չպահել: Այս հանգրուանին յարմար է հարց մը տալ: Արդեօ՞ք հայերու մէջ կան անձեր, որոնք Թուրքը կամ Մահմետական կրօնքը կ'ատեն բայց կ'ըսեն, թէ Յիսուս Քրիստոս կը սիրեն: Իբրեւ աշխարհի վրայ առաջին Քրիստոնեայ ազգ, ո՞րքան կը սիրենք Քրիստոս: Ամէն անհատ թող ինք իրեն այս հարցումին պատասխանը տայ:

Քրիստոսի այս յաջորդ նախադասութիւնը. «Եւ ես աղաչեցից զհայր, եւ ա՛յլ միսիժարիչ տացէ զի ընդ ձե՛զ բնակէ սցէ՛ ՚ի յաւիտեան. զՀոգի՛ն ճշմարտութեան զոր աշխարհս ո՛չ կարէ ընդունել: զի ո՛չ տեսնէ զնա՝ եւ ո՛չ ճանաչէ զնա» կը բացատրէ Աստուածային Երրորդութեան իմաստը: Միսիժարիչը Ս. Հոգիի զօրութիւնն է: Քրիստոս զայն կը կոչէ «Ճշմարտութեան Հոգի»: Ս. Հոգին Հայր Աստուծմէ կը բղիխի, հետեւաբար Հայր Աստուած է, որ Զայն մեզի կու տայ: Իսկ Քրիստոս ըսած է նաեւ, թէ ինք «դուռն» է: Այս մէջբերումին մէջ եւս, աւելի վերջ Քրիստոս կ'ըսէ. «Իսկ միսիժարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ»: Ուրեմն Ս. Հոգին մեր ներքին Քրիստոսի «անուռով»՝ միջոցաւ կը ստանանք: Ահա՛, աս է իմաստը «Ես եմ դուռը» նախադասութեան: Քրիստոս նաեւ կ'ըսէ, թէ աշխարհը՝ մարդիկ չեն կրնար Ս. Հոգիի գաղափարը ընդունիլ, որովհետեւ ան անտեսանելի է, հետեւաբար մարդ կարող չէ Զայն ճանչնալ իր հինգ զգայարանքներով: Նոյնիսկ բնագիտութեան մէջ, արդեօք կարելի է՞ որեւէ զօրութիւն տեսնել: Մարդ կարող է միայն զօրութեան արդիւնքները տեսնել: Միթէ ընդհանուր ստեղծագործութիւնը Ս. Հոգիի զօրութեան արդիւնքը չէ՞: Ս. Հոգիի մարմնացումը Քրիստոսի ներկայութիւնն է: Ս. Հոգին «Ճշմարտութեան Հոգի»-ն է, որովհետեւ միակ ճշմարտութիւնը Աստուած է եւ Ս. Հոգին ալ Աստուծոյ Հոգին՝ Զօրութիւնն է: Յաջորդ նախադասութիւնը

հետաքրքրական է. «նա՛ (Ս. Հոգին) ուսուցե՛ ձեզ զամենայն, որ ինչ ասացի ձեզ, եւ յիշեցուցե՛ ձեզ»: Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞ր, որ սորվեցուց այն ինչ որ պիտոյ է յաւիտեանական կեանքը ժառանգելու համար: Ուրեմն ինչո՞ւ Քրիստոս կ'ըսէ. «Ս. Հոգին ձեզի պիտի սորվեցնէ»: Հետաքրքրականը այն է, թէ Քրիստոս նաեւ կ'աւելցնէ ըսելով. «ձեզի պիտի յիշեցնէ»: Յիսուսի աշակերտներուն հետ ունեցած խօսակցութենէն յայտնի է, թէ աշակերտները, նման այդ օրերու այլ հրեաներուն, չէին հասկցած Յիսուսի սորվեցուցածներուն բուն իմաստները, որովհետեւ անոնք անոնց միայն բառացի իմաստները «կ'իմանային»: Երբ անձը իր ներքին Քրիստոսէն կը ստանայ Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւն, իր գիտակցութեան մակարդակն ալ կը բարձրանայ: Բարձր գիտակցութեան մակարդակն ալ հասկացողութիւն կու տայ: Ահա՛, աս է իմաստը Ս. Հոգիին «սորվեցնելուն»: Երբ այդ բարձր գիտակցութեամբ անոնք հասկնան բոլոր Յիսուսի սորվեցուցածներուն վերացական իմաստները այն ատեն Ս. Հոգին իրենց «յիշեցուցած» պիտի ըլլայ այդ բոլորը:

Յիսուս կ'ըսէ. «Փոքր մեա եւս, եւ աշխարհս ո՛չ եւս տեսանէ զիս»: Անտարակոյս աս ակնարկ մըն է իր մահուան, յարութեան եւ համբարձումին: Բայց հետաքրքրական կէտը այն է, թէ Քրիստոս կը շարունակէ ըսել. «բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի՛ եմ, եւ դուք՝ կենդանի՛ լինելոց էք»: Այս խօսքերուն իմաստը այն է, թէ Քրիստոս ամէն էակի հոլթիւնն է, անոնց «կեանք»-ն է: Բայց մարդիկ իրենց խաւարամտութեան հետեւանք այս ճշմարտութեան չեն անդրադառնար: Բայց երբ մարդ իր ստացած յաւելեալ Ս. Հոգիի զօրութեամբ եւ անոր պարգեւած բարձր գիտակցութեամբ կը հասկնայ՝ փորձառութիւնը կ'ունենայ ճշմարտութեան, ինք այլեւս չի խաբուիր պատրանքէն: Այդ փոր-

ձառութիւնը իրեն «ցոյց կու տայ» ամէն ինչի միականուլթիւնը եւ ամէն ինչի՝ անզգայ նիւթ, բոյս, անասուն կամ անհատ, Քրիստոսի արտայայտուլթիւնները ըլլալը: Այս հիման վրայ ալ աշակերտները Ձինք պիտի տեսնեն ամենուրեք: Ճիշդ ասոր համար ալ Քրիստոս ըսաւ. «բայց դուք պիտի տեսնէք զիս»: Երբ անոնք միականուլթեան այդ փորձառուլթիւնը ունենան այն ատեն պիտի հասկնան Քրիստոսի. «Յայնմ՝ անուր գիտասլիք դուք զի ես՝ ՚ի Հօ՛ր իմում, եւ դուք յիս, եւ ես՝ ՚ի ձեզ» այս խօսքին իմաստը: Իսկ Քրիստոսի անձին մէջ այդ յայտնուլթիւնը կարելի է միայն Ձինք սիրելով: Քրիստոս սիրելուն իմաստն ալ Անոր բոլոր պատուիրանները պահել, «Ես»-ը ամբողջովին անտեսել եւ անձին անհատականութեան դէպի իր ներքին Քրիստոսին յարիլն է: Միայն այն ատեն է, որ Քրիստոս պիտի յայտնուի անձին: Պէտք է մոռնալ, թէ Քրիստոս մեր էութիւնը, մեր կեանքը եւ մեր գիտակցութիւնն է, հետեւաբար կարելի է «Ես Աստուած կը սիրեմ, ես Յիսուս Քրիստոս կը պաշտեմ» խօսքերով Աստուած խաբել: Կարելի է մարդիկ խաբել, բայց ոչ Աստուած: Ճիշդ այս նպատակով ալ Քրիստոս ըսաւ. «Որ ունի զպատուիրանս իմ եւ պահէ զնոսս, նա՛ է որ սիրէ զիս: Եւ որ սիրէս զիս՝ սիրեցի՛ ՚ի Հօրէ իմմէ, եւ ես սիրեցի՛ց զնա, եւ երեւցուցի՛ց նմա զիս»:

Երբ անհատը կը յաջողի Քրիստոս իր մէջ յայտնաբերել, որ պարզապէս իր մէջ փորձառական անդրադարձ մըն է, Քրիստոս կը խոստանայ հետեւեալը. «Խաղաղութի՛ն թողում՝ ձեզ. զխաղաղութի՛ն զիմ տամ ո՛չ որպէս աշխարհս տայ՝ տամ՝ ես ձեզ»: Աշխարհիկ կեանքի մէջ ալ մարդ կարող է որոշ չափով խաղաղութիւն ունենալ: Բայց աշխարհի տուած խաղաղութիւնը ընդհանուր առմամբ թէ՛ սահմանափակ է եւ թէ՛ ժամանակաւոր: Աշխարհիկ կեանքը կը նմանի երազի

մը, որ երբեմն հաճելի է եւ երբեմն ալ վախազդու: Բայց անոնք բոլորն ալ կ'անհետանան երբ անհատը քունէն արթննալով երազին վերջ տայ: Այն ատեն է, որ անհատը այդ երազէն ազատելու խաղաղութիւնը կ'ունենայ: Նմանապէս երբ անձը միականութեան փորձառութիւնը կ'ունենայ նաեւ կը հասկնայ թէ այս աշխարհիկ կեանքն ալ ոչ թէ երազի կը նմանի այլ երազ մըն է եւ ինք երազէն արթննալով կը գտնէ բացառիկ Աստուածային խաղաղութիւնը:

Երբ Յիսուս կ'ըսէ. «գա՛յ իշխան աշխարհիս այսորիկ, եւ յիս ինչ ո՛չ գտանէ» ակնարկը Ձինք սպաննողներուն համար է: «Աշխարհի իշխան»-ը սատանան է եւ սատանան ալ անհատին «Ես»-ն է: Ուրեմն բոլոր անոնք, որոնք եսասիրութեամբ կը գործեն մաս կը կազմեն այդ «սատանայ»-ին: Միթէ այսօր ալ համայն մարդկութեան, նա մանաւանդ կառավարութիւններու բռնածընթացքն ալ այդ եսասիրութիւնը չի՞ ցոլացներ: Զանազան կրօնքներու իրարու հանդէպ ունեցած անհանդուրժողութիւնը այդ նոյն եսասիրութիւնը չի՞ ցոլացընէր: Քրիստոս նաեւ ըսաւ. «Այլ զի ծանիցէ աշխարհ եթէ սիրեմ՝ զհայր եւ որպէս պատուիրեաց ինձ Հայրն ա՛յսպէս առնես!»: Հակառակ որ անոնք որեւէ հեղինակութիւն չունէին Քրիստոսի վրայ, հետեւաբար Յիսուսի վրայ, որ Քրիստոսի յայտնութիւնն էր, Յիսուս յօժարաբար ենթարկուեցաւ սատանային յարձակումին, որպէսզի համայն աշխարհ գիտնայ թէ ինք կը հնազանդէր իր Հօր կամքին՝ «պատուէր»-ին, որովհետեւ ինք կը սիրէր Հայրը: Ասկէ ալ պէտք է հասկնանք, թէ «սիրել» կը նշանակէ հնազանդիլ:



ՃՇԱՐԻՏ ՈՐԹԱՏՈՒԿԸ

«Ե՛ս եմ ո՛րքն ճշմարտից՝ եւ Հայր իմ մշակէ՛: Ամե-
նայն ուս որ յի՛ս է՛ եւ ո՛չ թերեւ պրոտո-ղ կարեւ պնա-
եւ ամենայն որ թերեւ պրոտո-ղ սրբէ՛ պնա, պի առա-
ւել եւս պրոտո-ղ լիցի: Դու-՛ն արդէն իսկ սո՛ւրբ
է՛ն վասն թանին՝ պոր խօսեցայ ընդ յեւ: Կայէ՛ն ի
յիս՝ եւ ես ՚ի յե՛ւ: Որպէս ո՛ւսն ո՛չ կարեւ պրոտո-
ղ թերեւ յանձնէ իրմէ եթէ շիցէ՛ Հասարակեալ յո՛րքն,
նոյնպէս եւ դո՛ւ-՛ն՝ եթէ ո՛չ յիս Հասարակեալ իցէ՛ն:
Ես եմ որք՝ եւ դո՛ւ-՛ն ո՛ւս որ Հասարակեալ է յիս՝
եւ ես ՚ի նա՛, նա՛ թերեւ պրոտո-ղ յոյժ. պի առա՛նց իմ
ո՛չինչ կարեւն առնել: Եթէ ո՛ն է Հասարակեալ
յիս, է՛լ նա արդարեւ իբրեւ պո՛ւսն, եւ ցամախե-
ցա՛ւ եւ ժողովէն պնա, եւ ՚ի Հո՛ւր արկանեն՝ ե-
այրի: Եթէ կայէ՛ն յիս, եւ թա՛նին իմ ՚ի յե՛ւ կայցեն,
պոր ինչ կամեցի՛ն խնդրեալն՝ է՛ւ լինիցի՛ն յեւ:
Յա՛յմիկ զառաւորեցա՛ւ Հայր իմ, պի պրոտո-ղ յոյժ
թերեցէ՛ն, եւ եղիճի՛ն իմ աշակերտի: Որպէս սիրեաց
պիս Հայրն իմ, եւ է՛ս սիրեցի պնեւ: Հասարակո՛ւն
կայէ՛ն ՚ի սեր իմ: Եթէ պա՛հեցէ՛ն պարոտ-իբանա իմ,
կայճի՛ն ՚ի սեր իմ. որպէս ես պարոտ-իբանա Հօր
իմոյ պա՛հեցի, եւ կա՛մ ՚ի սեր նորա: Ջայս խօսեցայ
ընդ յեւ, պի ուրախութիւնն իմ ՚ի յե՛ւ իցէ, ե-
՛ն ի ուրախութիւնն լցեա՛լ եղիցի: Ե՛ս է պարոտ-իբ
իմ, պի սիրեալն՝ ի պիմեանս, որպէս եւ ես սիրեցի
պնեւ: Մե՛ծ եւս՝ ինչ պայս սեր՝ ո՛չ ո՛ն ունիցի, եթէ
պանձն իր զիցէ՛ն ՚ի վերայ թարեկամաց իրոց: Դու-՛ն

Բարեկամ՝ մէկ էի իմ, եղև առնիցէի զոր էան պատու-
րեմ յէս: Ո՛չ էսս կոշեմ զյէս շատայս, զի շա-
տայն ո՛չ Գրիէ զինչ Գործէ՛ Տէրն նորա այլ զյէս
կոշեցի Բարեկամս զի զամենայն զոր լուսայ՛ի Ըօրէ
իմմէ՛ շանուցի: Ո՛չ եղև դուի ընդրեցէի զեսս,
այլ է՛ս ընդրեցի զյէս. էս էդի զյէս՝ զի դուի
երկայցէի էս պողաբէ՛րի լինիցիի էս պողոտն
յեր կայցէի: Ես զոր ինչ խնդրեցէի ՚ի Ըօրէ
իմմէ՛ յանուս իմ ցայէ յէս: Զայս պատուիրեմ,
զի սիրեալի՛ն էի զմիմեանս»: (Յովհաննուս ԺԵ: 1-17)

«Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ իմ Հայրս՝ մշակն է:
Ամէն ճիւղ՝ որ իմ վրաս է ու պտուղ չի բերեր, կը
վերցնէ գայն. իսկ ամէն ճիւղ որ պտուղ կը բերէ՝ կը
մաքէ գայն, որպէսզի ա՛լ աւելի պտուղ բերէ: Դուք
արդէն մաքուր էք այն խօսքով՝ որ ըսի ձեզի: Ի՛մ մէջս
մնացէք՝ ու ես՝ ձեր մէջ. ինչպէս ճիւղը չի կրնար
ինքիմէ պտուղ բերել՝ եթէ որթատունկին վրայ չմնայ,
նոյնպէս ալ դուք չէք կրնար՝ եթէ իմ մէջս չմնաք: Ես
որթատունկն եմ, եւ դուք ճիւղերն էք. ան որ իմ մէջս
կը մնայ, ու ես՝ անոր մէջ, անիկա՛ շատ պտուղ պիտի
բերէ, որովհետեւ առանց ինծի ոչինչ կրնաք ընել: Եթէ
մէկը իմ մէջս չմնայ, ան դուրս կը նետուի՝ ճիւղի մը
պէս, եւ կը չորնայ. գանոնք կը ժողվեն ու կրակը կը
նետեն, եւ անոնք կ'այրին: Եթէ դուք մնաք իմ մէջս, ու
իմ խօսքերս ալ մնան ձեր մէջ, ի՛նչ որ ուզէք՝ պիտի
խնդրէք, եւ պիտի ըլլայ ձեզի: Իմ Հայրս կը
փառաւորուի՝ երբ դուք շատ պտուղ բերէք. այսպէս՝ իմ
աշակերտներս կ'ըլլաք: Ինչպէս Հայրը սիրեց զիս, է՛ս
ալ սիրեցի ձեզ. մնացէ՛ք իմ սիրոյս մէջ: Եթէ պահէք իմ
պատուիրաններս՝ պիտի մնաք իմ սիրոյս մէջ, ինչպէս ես
պահեցի իմ Հօրս պատուիրանները եւ կը մնամ անոր
սիրոյն մէջ: Այս բաները խօսեցայ ձեզի՝ որպէսզի իմ
ուրախութիւնս մնայ ձեր մէջ, ու ձեր ուրախութիւնը
լման ըլլայ: Սա՛ է իմ պատուիրանս՝ որ սիրէք զիրար,
ինչպէս ես սիրեցի ձեզ: Ո՛չ մէկը ունի աւելի մեծ սէր,
քան այն՝ երբ մէկը կ'ընծայէ իր անձը իր

բարեկամներուն համար: Դուք իմ բարեկամներս էք, եթէ ընէք ի՛նչ որ ես կը պատուիրեմ ձեզի: Այլեւս ծառայ չեմ կոչեր ձեզ, որովհետեւ ծառան չի գիտեր թէ իր տէրը ի՛նչ կ'ընէ: Հապա ես բարեկամ կոչեցի ձեզ, որովհետեւ ամէն ինչ որ լսեցի իմ Հօրմէն՝ գիտցուցի ձեզի: Ո՛չ թէ դո՛ւք ընտրեցիք զիս, Հապա ե՛ս ընտրեցի ձեզ, ու նշանակեցի ձեզ՝ որպէսզի երթաք եւ պտուղ բերէք, ու ձեր պտուղը մնայ: որպէսզի ի՛նչ որ խնդրէք Հօրմէն՝ իմ անունովս, տայ ձեզի: Ասիկա՛ կը պատուիրեմ ձեզի, որ սիրէք զիւրար»:

Այս մէջբերումին մէջջի խօսքերով Քրիստոս անգամ մը եւս կը շեշտէ այն բոլորը, որ ըսած էր նախորդ մի քանի մէջբերումներուն մէջ: Հոս Ան որթատունկը կ'օգտագործէ փոխաբերաբար սորվեցնելու համար մարդուն, Քրիստոսի եւ Հայր Աստուծոյ իրարու հետ ունեցած յարաբերութիւնը:

Քրիստոսի առաջին խօսքը «Ե՛ս եմ ո՛րթն ճշմարիտ» ստեղծագործութեան ճշմարտութիւնը կը յայտարարէ: Որթատունկը մէկ է, բայց շատ ճիւղեր ունի: Քրիստոս մէկ է եւ ամէն ինչ Անոր ճիւղերն են: Հետեւաբար մենք ալ ճիւղերուն նման որթատունկին մաս կը կազմենք, հետեւաբար պէտք է հասկնանք, թէ Քրիստոսով բոլորս ալ մէկ ենք: Պէտք է հասկնանք ամէն ինչի միականութիւնը: «Որթատունկ»-ը ճշմարիտ է, որովհետեւ Ան Աստուծոյ արտայայտութիւնն է: Միթէ չե՞նք ըսեր. «միակ ճշմարտութիւնը Աստուած է»: Աստուծոյ Որթատունկը Հօր խնամքին տակ է: Քրիստոս Աստուծոյ Որդին է եւ Հայրը զայն կը «խնամէ»: Հօր խնամքը Ս. Հոգիի գորութեան հոսքն է եւ Ս. Հոգիի գորութեան՝ տիեզերական օրէնքները: Հետեւեալ խօսքին. «Ամենայն ուռ որ յի՛ս է՝ եւ ո՛չ բերէ պտուղ կտրէ զնա. եւ ամենայն որ բերէ պտուղ՝ սրբէ՛ զնա, զի առաւել եւս պտղաբէ՛ր լիցի» իմաստը այն է, թէ անոնք, որոնք Աստուծոյ նպատակին չեն ծառայեր, այսինքն իրենց տրուած պարտականութիւնը եւ պատասխանա-

տուրուր թիւնները լիովին չեն կատարեր, կը «նետուին»՝ կը մեռնին կ'երթան: Անոնք «պտուղ չեն տար», իսկ անոնք, որոնք «պտղաբեր» կ'ըլլան կը խնամուին: Պտղաբեր եղողները անոնք են, որ իրենց պարտականութիւնները կը կատարեն ըստ Աստուծոյ կամքին: Անոնք աւելի կը խնամուին՝ Հայրը «կը մաքրէ» զանոնք: Այս խնամքը անհատին ստացած յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւնն է, որ անոր կու տայ աւելի բարձր գիտակցութիւն, հետեւաբար հասկացողութիւն, գիտութիւն ու կարողութիւն: Քրիստոսի խօսքը «Կացէ՛ք յիս՝ եւ ես՝ ի ձե՛զ» խօսքը կը ներկայացնէ այն իրողութիւնը, թէ ամէն անհատի ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է, հետեւաբար ըսած խօսքը. «Ես՝ ձեր մէջ»: Իսկ «Ի՛մ մէջս մ'նացէ՛ք»-ին իմաստը Յիսուսի այլուր տուած յորդորն է. անտեսել «Ես»-ը եւ յարիլ դէպի մեր անհատականութեան դրական բեւեռը՝ դէպի մեր ներքին Քրիստոսի: Քրիստոսի յաջորդ խօսքը. «Որպէս ո՛ւնն ո՛չ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ եթէ չիցէ՛ Հաստատեալ ո՛ր թիւ, նոյնպէս եւ դո՛ւք՝ եթէ ո՛չ յիս Հաստատեալ իցէք» կը յայտնէ, թէ մեր ունեցած կեանքը, որ մեզի կու տայ խորհելու, զգալու եւ գործելու կարողութիւնները, մեր հոգիին՝ Քրիստոսի մեզի տուած շնորհքն է: Երբ հոգին մարմինը թողու, մարդ ինք ոչինչ է, ոչ անհատականութիւն կը գոյատեւէ եւ ոչ ալ միտք կամ իմացականութիւն, այլ միայն դիակ մը, որ հողէն եկած էր եւ հողին կը վերադառնայ: Միթէ՛ Քրիստոս նաեւ չըսա՞ւ. «զի առա՛նց իմ ո՛չինչ կարէք առնել»: Առանց Քրիստոսի մեր մէջ ներկայութեան անհատը գոյութիւն չ'ունենար: Քրիստոս մեր մէջ ըլլալով հանդերձ եթէ մենք Քրիստոսի մէջ չըլլանք, այսինքն մեր կենցաղով չկատարենք Անոր կամքը՝ մեր անհատականութիւնը չանտեսէ մեր «Ես»-ը եւ չյարի ներքին Քրիստոսին, մենք «պտղաբեր» չենք կրնար ըլլալ, այսինքն Աստու-

ծոյ չենք կրնար ծառայել:

Քրիստոսի յաջորդ «Եթէ կացէք յիս, եւ բա՛նքն իմ՝ ՚ի ձե՛զ կայցեն, զոր ինչ կամիցիք ինդրեսձի՛ք՝ եւ լինիցի՛ ձեզ» խօսքին իմաստը բացայայտ է: Եթէ «Ես»-ը անտեսենք եւ Ներքին Քրիստոսի յարինք եւ Քրիստոսի բոլոր սորվեցուցածները մեր կեանքին մէջ կիրարկենք, մեր բոլոր խնդրանքները պիտի իրականանան, որովհետեւ անոնք այլեւս «Ես»-էն եկած ցանկութիւններ պիտի չըլլան, այլ բոլորն ալ Քրիստոսի՝ Աստուծոյ կամքը: Անոնք բոլորն ալ ներդաշնակ են տիեզերական օրէնքներուն եւ անոնց չեն հակասեր:

Երբ լիովին կը կատարենք մեզի տրուած պարտականութիւնը, որ ամէն անհատի տրուած նոյն պարտականութիւնն է եւ այդ պարտականութիւնն ալ Աստուծոյ այստեղութիւնը մեր մէջ իրականացնելն է, այն ատեն Հայր Աստուած փառաւորուած կ'ըլլայ: Ահա՛, այդ է Քրիստոսի հետեւեալ խօսքին իմաստը. «Յայժմիկ փառաւորեցա՛ւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք, եւ եղի՛ջիք իմ աշակերտք»: Անոնք, որոնք այս ուղղութեամբ կը յաջողին կ'ըլլան Քրիստոսի ճշմարիտ աշակերտները, որովհետեւ անոնք սորված են այն ինչ, որ Յիսուս Քրիստոս սորվեցուց եւ նաեւ սորվածնին ալ կիրարկած են: Ինչ արժէք ունի եթէ մէկը բժշկական համալսարան երթայ ու շրջանաւարտ ըլլայ եւ բժշկութիւն չընէ: Իր սորվածը որեւէ օգուտ չ'ունենար ոչ իրեն եւ ոչ ալ ուրիշներուն: Նմանապէս ինչ օգուտ ունի Յիսուս Քրիստոսի սորվեցուցածները սորվիլ եւ զանոնք չկիրարկել մեր կեանքին մէջ: Ան ոչ մեզի, ոչ ուրիշի եւ ոչ ալ Աստուծոյ կը ծառայէ: Ի՞նչ է Հայր Աստուծոյ կամքը: Սիրելն է: Աստուած սէր է, հետեւաբար Աստուծոյ այստեղութիւնն ալ անձին մէջ սիրոյ յայտնութիւնն է: Հետեւաբար Քրիստոս կը թելադրէ «սիրել» եւ ան կ'ըսէ. «Հաստատո՛ւն կացէք ՚ի սէր իմ»: Ի՞նչ է Քրիստոսի

սիրոյն մէջ մնալու միջոցը: Քրիստոսի յաջորդ խօսքը պատասխանն է այս հարցումին. «Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացլի՛ք 'ի սէր իմ'»: Քրիստոսի սիրոյն մէջ մնալու գաղտնիքը իր «պատուիրանները» բոլոր սորվեցուցածները «պահելն» կիրարկելն է: Յիսուս Քրիստոսի մեզի բոլոր սորվեցուցածները կարելի է ամփոփել մէկ պատուիրանով եւ այդ պատուիրանը Քրիստոս կը յայտարարէ իր յաջորդ խօսքով. «Այս է պատուեր իմ, զի սիրեսլի՛ք զմիմեանս, որպէս եւ ես սիրեցի զձեզ: Մեծ եւ՛ քան զայս սէր՝ ո՛չ ոք ունիցի, եթէ զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց»: Այդ մէկ պատուէրը, որ կ'ամփոփէ բոլորը «սիրեցէք զիրար»-ն է: Ինչպէս Քրիստոս մեզ կը սիրէ, մենք ալ պարտ ենք զիրար սիրել, ոչ իբրեւ «բերնի ծամոց սիրել», այլ սիրել ամէն ինչ եւ ամէն անհատ ինչպէս մայր մը կը սիրէ իր նորածին զաւակը: Սիրել մ'ինչեւ նաեւ ուրիշին համար զոհուելու աստիճան եւ ահա՛, աս է «ընծայել անձը բարեկամներուն համար»-ին իմաստը: Միթէ Յիսուս ալ նոյնը չըրա՞ւ: Բայց շատ հաւանական է շատեր ըսեն. «Ինչո՞ւ ես իմ անձն ընծայեմ ուրիշին համար, իմ շահս ինչ է ասոր մէջ»: Անտարակոյս նման հարց մը անհատին իր «Ես»-էն կու գայ, որովհետեւ «Ես»-ը չի տեսներ ամէն ինչի միականութիւնը եւ կը տեսնէ միայն ինք զինք: Բայց Քրիստոս մեզի նաեւ կ'ըսէ այն ինչ որ անհատը կը շահի իր բարեկամին համար իր «անձը ընծայելով»: Քրիստոս կ'ըսէ. «Չայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւնն իմ՝ 'ի ձե՛զ իցէ, եւ ձեր ուրախութիւնն լցեա՛լ եղիցի»: Անհատին այդ զոհողութեան շահը արժանի ըլլալ է Քրիստոսի «ուրախութեան»: Այդ ուրախութիւնը Աստուածային երանութիւնն է, որ կը գերազանցէ աշխարհիկ որեւէ ուրախութիւն եւ երջանկութիւն:

Քրիստոս նաեւ ըսած է. «Դուք բարեկամք էք իմ, եթէ աւնիցէք զոր ենս պատուիրեմ ձեզ: Ո՛չ եւս կոչեմ

զձեզ ծառայս, զի ծառայն ո՛չ գիտէ զինչ գործէ՛ Տէրն»:
Մեր կրօնքը մեզի սորվեցուցած է, թէ մենք Աստուծոյ
ծառաններն ենք: Մեր այս աշխարհիկ կեանքին մէջ
մենք բոլորս ալ Աստուծոյ ծառաններն ենք: Բայց երբ
կը կատարենք Յիսուս Քրիստոսի մեզի բոլոր սորվեցու-
ցածները՝ կը պահենք իր պատուիրանները, կը յաջո-
ղինք Քրիստոս մեր մէջ յայտնաբերել: Այն ատեն
անհատը մէկ կ'ըլլայ Քրիստոսի հետ եւ այլեւս ծառայ
չէ այլ Անոր հաւասար՝ բարեկամ: Ինչպէս Քրիստոս
գիտէ Հօր կամքը, անհատն ալ կը գիտնայ Աստուծոյ
կամքը: Եթէ անհատը մնայ միայն ծառայ, ան ամենե-
ւին պիտի չգիտնայ Աստուծոյ կամքը: Անհատին
Քրիստոսի «բարեկամը» ըլլալը պարզապէս ուզելով
չ'ըլլար: Քրիստոսն է, որ կ'ընտրէ Իր «բարեկամները»:
Քրիստոսն է, որ կ'որոշէ յայտնուիլ անձի մը մէջ:
Հետեւաբար Քրիստոս ըսած է. «Ո՛չ եթէ դուք ընտրեցէք
զիս, այլ ե՛ս ընտրեցի զձեզ»: Ինչպէս մարդ կրնայ
պատրաստուիլ քնանալու, բայց չի կրնար քուն բերել,
բայց քունը ակնթարթի մը մէջ յանկարծ անոր գի-
տակցութիւնը արթուն գիտակցութեան մակարդակէն
քունի աւելի ցած գիտակցութեան մակարդակի մը կը
յափշտակէ: Նմանապէս, Քրիստոսի յայտնութիւնն ալ
կ'ըլլայ ակնթարթի մը մէջ, երբ անհատին գիտակցու-
թիւնը կը յափշտակուի արթուն մակարդակէն շատ
աւելի բարձր գիտակցութեան մակարդակի մը: Այն
ատեն անհատը կը «տեսնէ» Ճշմարտութիւնը՝ ամէն
ինչի միականութիւնը եւ ինք ալ կ'ըլլայ Քրիստոսի
հետ մէկ՝ երանութեան մէջ:

Ինչպէս նախորդ մի քանի մէջբերումներուն մէջ
Քրիստոս ըսած էր, անգամ մը եւս կը կրկնէ. «Եւ զոր
ինչ ինպրիցք՝ ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ տայէ ձեզ»: Հող չէ
թէ կրկնութիւն ըլլայ, պատշաճ է անգամ մը եւս
կրկնել Քրիստոսի այս խօսքին իմաստը: Ան չի նշանա-

կեր մեր «Ես»-էն եկած բոլոր ցանկութիւններուն ցանկը մեր աղօթքներուն մէջ Աստուծոյ ներկայացնել եւ աղօթքն ալ վերջացնել «Յիսուս Քրիստոսի անունով կը խնդրեմ» բառերով եւ յուսալ, որ մեր խնդրանքները իրականանան: Մարդ կարող է Քրիստոսի անունով խնդրել երբ ինք նոյնացած է Քրիստոսի հետ եւ այլեւս Անոր «ծառայ»-ն չէ, այլ՝ «բարեկամ»-ը: Այդ հանգրուանին անհատը գիտակից կ'ըլլայ նաեւ Աստուծոյ կամ քին եւ այդ է, որ ինք ալ միայն կը փափաքի: Եթէ Աստուծոյ կամ քն է, արեօք կարելի է^o, որ այդ փափաքը չիրականանայ:

«Լսէ՛մ յեզ, թէ յայսմ Հեպէ՛ ո՛չ արբից որ-
թոյ մինչեւ եկեսցէ արվայոս-թիւն Ասորո-ժոյ»: (Ղուկաս ԻԲ:18)

«Արդարեւ կը յայտարարեմ ձեզի՛ բնա՛ւ որթատունկին բերքէն պիտի չխմեմ՝ մինչեւ որ գայ Աստուծոյ թագաւորութիւնը»:

Յիսուս իր աշակերտներուն այս խօսքը ըսաւ վերջին ընթրիքին: Անտարակոյս Յիսուս իր մահուան եւ յարութեան մասին կ'ակնարկէր: Եթէ ըսուածը բառացի իմաստով առնենք եւ ըստ շատ մը քրիստոնեաներու հաւատացածին, թէ աշխարհի վերջաւորութեան Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստով Աստուծոյ թագաւորութիւնը պիտի գայ, այն ատեն կ'եզրակացնենք, թէ Յիսուս այլեւս դարերով գինի պիտի չխմէ, մինչեւ աշխարհի վերջաւորութեան: Բայց եթէ աշխարհ վերջ գտնէ արդեօք առանց աշխարհի կարելի է^o, որ որթատունկ գոյութիւն ունենայ եւ պտուղ տայ եւ կարելի ըլլայ անոր պտուղէն՝ «բերք»-էն՝ խաղողէն ալ գինի չինել: Պէտք չէ մոռնալ, թէ ինչպէս վերեւ, նախկին մէջբերումին սկիզբը, գրուած է, Յիսուս նաեւ ըսած էր. «Ե՛ս եմ ո՛րթն ճշմարիտ՝ եւ Հայր իմ մշակե՛լ»: Եթէ Յիսուս Քրիստոս «որթատունկ»-ն է, ուրեմն ի՞նչ է «որթա-

տունկ»-ին «բերք»-ը: Ըստ նախկին մէջբերումին, եթէ մենք այդ որթատունկին՝ Քրիստոսի ճիւղերն ենք, մեր յառաջ բերած պտուղներն ալ «որթատունկ»-ին «բերքն» են: Իսկ մեր «պտղաբեր» ըլլալն ալ Քրիստոսի յայտնութիւնն է մեր մէջ՝ անհատին իր ներքին Քրիստոսի հետ հաղորդութիւնը: Միթէ եկեղեցին մեր առած հաղորդութեան իմաստն ալ այդ չէ՞, հաղորդուիլ Քրիստոսի հետ: Անձին մէջ Քրիստոսի այդ յայտնութիւնն ալ անձին համար Աստուծոյ թագաւորութեան դալուստն է:



նաեւ ձեզ. եթէ պահեցին իմ խօսքս, պիտի պահեն նաեւ ձերը: Բայց այս բոլոր բաները պիտի ընեն ձեզի՝ իմ անունիս համար, որովհետեւ չճանչցան ան՝ որ զըրկեց զիս: Եթէ ես եկած եւ խօսած չըլլայի անոնց՝ մեղք չէին ունենար. բայց հիմա պատրուակ մը չունին իրենց մեղքին: Ան որ կ'ատէ զիս՝ կ'ատէ նաեւ իմ Հայրս: Եթէ իրենց մէջ ըրած չըլլայի այն գործերը, որ ուրիշ ո՛չ մէկը ըրած է, անոնք մեղք չէին ունենար. բայց հիմա տեսան եւ ատեցին զիս ալ, իմ Հայրս ալ: Սակայն ատիկա եղաւ, որպէսզի իրագործուի այն խօսքը՝ որ գրուած է իրենց Օրէնքին մէջ. Զուր տեղը ատեցին զիս: Բայց երբ Միտիթարիչը գայ՝ որ ես Հօրմէն պիտի զրկեմ ձեզի, ճշմարտութեան Հողին՝ որ կը բխի Հօրմէն, անիկա՛ պիտի վկայէ իմ մասիս: Եւ դո՛ւք ալ կը վկայէք, որովհետեւ սկիզբէն ՚ի վեր ինծի հետ էք»:

Յիսուս Քրիստոս իր այս խօսքերով համայն մարդկու թիւնը կը բաժնէ երկուքի: Որովհետեւ Ան կ'օգտագործէ «աշխարհ» բառը ներկայացնելու համար բոլոր անոնք, որոնք աշխարհին կապուած են, կը նշանակէ թէ այդ բառով Յիսուս կ'ակնարկէ համայն մարդկութեան ջախջախիչ մեծամասնութեան: Մարդ աշխարհին կապուած կ'ըլլայ, որովհետեւ զայն ճշմարտութիւն կը կարծէ եւ չի հասկնար թէ ան պատրանգ մըն է: Այս սխալ հասկացողութեան պատճառն ալ անտարակոյս մարդուն «Ես»-ն է: Հետեւաբար անոնք, որոնք կը յարին իրենց «Ես»-ին եւ կապուած են անոր կ'ըլլան եսասէր: Անտարակոյս եսասիրութիւնը կը հակասէ որեւէ քարոզչութեան, որ կը թելադրէ անտեսել «Ես»-ը եւ մարդասէր ըլլալ: Նման քարոզչութիւն մը անձին կը յայտնէ իր տկարութիւնները եւ սխալները, որ կը խանգարէ անձին անդորրութիւնը: Անձը չ'ախորժիր խանգարուած անդորրութիւն ունենալէ եւ ցոյց կու տայ հակազդեցութիւն, որ Յիսուս Քրիստոսի վերելի ըսած ատելութիւնն է: Մարդ արարած իր «Ես»-ին կապուելով եւ իր ներքին Քրիստոս անտեսելով, Զայն ատած կ'ըլլայ: Աս անոր գործած ամենամեծ սխալն է,

որովհետեւ այս ատելութիւնը «գուր տեղը» եղած է: Կարելի չէ ճշմարտութիւնը ատել եւ «ապրիլ»: Բայց կարելի է պատրանքը ատել: Ճիշդ ասոր համար Յիսուս քանիցս ըսած է. «Ան որ իր անձը չ'ատեր կը կորսնցնէ զայն»: Բոլոր ասոնց իմաստը այն է, թէ հոգեւոր կեանքին մէջ եւ կատարելութեան ուղիէն պատշաճ կերպով ընթանալու համար մարդ պարտ է իր «Ես»-ը անտեսել՝ «ատել»:

Ինչպէս նախորդ մէջբերումներէն մէկուն մէջ գրուած էր, այս մէջբերումին վերջին մասը անգամ մը եւս կը շեշտէ Ս. Հոգիին Հայր Աստուծոյ բղխած զօրութիւն ըլլալը եւ անհատին մէջ Անոր ներգործման համար «դռները» բացողն ալ Քրիստոսն է:

Յաջորդ մէջբերումը կը թուի վերեւինին շարու-նակութիւնը ըլլալ

«Զայս խօսեցայ ընդ յեւ՝ պի մի՛ Գայթապլեւ-ջիէ: Ի Ժողովրդոց իրեանց Հանցե՛ն պչեւ: Լոյ եկեացե Ժամանակ՝ պի ամենայն որ սպանանիցե պչեւ Համարիցի պաշտօն մարտօցանել Լսորո-ժոյ: Եւ պայն արասցեն ընդ խանպի ո՛չ Ժանեան պահար՝ եւ ո՛չ պիս: Լոյ եւ պայս խօսեցայ ընդ յեւ. պի յորժամ եկեացե Ժամանակ՝ յիշեցե՛՛ք թե ե՛ս ասացի յեւ»:

(Յովհաննոս ԺԶ: 1-4)

«Այս բաները խօսեցայ ձեզի՝ որպէսզի չգայթակղիք: Իրենց ժողովարաններէն պիտի վճռեն ձեզ. նոյնիսկ ժամը պիտի գայ, երբ ո՛վ որ սպաննէ ձեզ՝ այնպէս պիտի կարծէ թէ պաշտամունք կը կատարէ Աստուծոյ: Եւ այս բաները պիտի ընեն ձեզի, որովհետեւ ո՛չ Հայրը ճանչցան, ո՛չ ալ՝ զիս: Բայց այս բաները խօսեցայ ձեզի, որպէսզի երբ ժամը գայ՝ յիշէք թէ ես ըսի ձեզի»:

Յիսուս Քրիստոսի այս խօսքերը անգամ մը եւս կը յայտարարեն եսասէրներու ատելութիւնը եւ ճշմարիտ հաւատացեալներուն վտարումը իրենց ժողովա-

ընդհանրապես: Եւ անոնք իրենց բռնած այս դիրքը կը համարեն Աստուածպաշտութիւն: Միթէ մահամետականներէն շատեր չե՞ն հաւատար, թէ անհաւատ մը, «կյա-վուր» մը՝ քրիստոնեայ կամ հրեայ, եթէ մեռցնեն իրենք «երկինք»-ի պիտի արժանանան եւ այդ արարքը Աստուածպաշտութիւն կը նկատեն: Նման տեսակէտ մը ո՞րքանով միականութեան հետ հաշտ է: Արդեօք կարելի է՞, որ Նիկիոյ 325 տարւոյ ժողովին, կայսրին փափաքած ձեւի քրիստոնէութեան համակարծիք չեղող եպիսկոպոսներու ձեծուիլը, սպաննութիւնը եւ աքսորումը Յիսուի վերեւի ըսածին գործադրութիւնն էր: Այն ատեն հարց պէտք է տանք, թէ ո՞վ ճիշդ էր: Երբ կը տեսնենք աշխարհի ներկայ վիճակը, պէտք է հասկնանք թէ ո՞վ ճիշդ էր. անոնք, որոնք «վռնտուեցան», թէ անոնք, որոնք մնացին եւ մեզի տուին մեր այսօրուայ «Քրիստոնէութիւնը»:



Ս. ՀՈԳԻՒ զՈՐԾԸ

ԵՒ

ՏՆՈՐԻԹԻՒ ՈՒ ՈՒՐԱՆՈՒԹԻՒ

«...Բայց արդ երբեմն էս առ առաջինն իմ. է-
ո՛չ ո՛վ ՚ի յեկնջ Հարցանէ ցիս, թէ յո՞վ երթաս: Այլ
պի պայս խօսեցայ ընդ յեզ. ցրցամոթի՛նն էլից
պսիրբս յեր: Այլ էս պճշմարտիցն ասեմ լաւ է յեզ
երէ էս երթամ պի երէ էս ոչ երթայց մեծարեցնն ո՛չ
եկեացէ առ ապա երէ երթամ առաջէ- ցի՛ց պնա
առ յեզ: Եւ նա՛ եկեալ, յանդիմանեացէ՛ պաշխարհ,
վասն մեղա՛ց, է- վասն արդարութեան, է- վասն
դատաստանի՛: Վասն մեղաց՛ պի ո՛չ Հաւարան յիս:
Վասն արդարութեան՛ պի առ Հայր իմ երթամ, է-
ո՛չ է-ս ցեասնէ՛վ պիս: Վասն դատաստանի՛ պի իշ-
խան աշխարհիս այսորիկ դատաստարցեա՛լ: Եւս քա-
պոմ ինչ ունիմ ասել յեզ այլ ո՛չ կարէ՛վ Հանդար-
դել այժմիկ: Յորժամ եկեացէ նա Հոգին ճշմարդո-
թեան առաջնորդեացէ՛ յեզ ամենայն ճշմարդո-
թեամբ՛ պի ո՛չ երէ յանձնէ ինչ խօսիցի, այլ պոք լսի-
ցէ՛ խօսեացի, է- պարտոցն պարմեացէ յեզ: Սա պիս
փառաւորեացէ, պի յիմմէ՛ անորի առնուցո՛ւ է-
պարմեացէ յեզ: Չամենայն ինչ պոք ունի Հայր՛ իմ
վասն այնորիկ ասացի յեզ թէ յիմմէ՛ անորի առնո՛ւ՛-
է- պարմէ յեզ: Փո՛վր մի, է- ո՛չ է-ս ցեասնիցէ՛վ
պիս է-ս ապա սակաւիկ մի, է- ցեասնիցէ՛վ պիս.
է- էս երթամ առ Հայր: ... Ամէն ամէն ասե՛մ յեզ,
պի լացջի՛վ է- ողբասջի՛վ դո՛ւ է- աշխարհ խըն-

Դասացէ՛ . Դո՞ւ զ՞ որ արարմէ-աջի՛, աչլ արարմո-րի-նն Յէր
յո-րախո-րի-նն է-ղիցի: Կի՛ն յորժամ ժնանիցի՛ արար-
մո-րի-նն է նմա, պի՛ Ըստեա՛լ է ժամ նորա . աչլ
յորժամ ժնցի պմանուկն, ո՛չ է-ա յիշէ պնեղո-
րի-ննն զման խնդո-րի-եանն, պի՛ ժնա- մա՛րդ յաշ-
խարԸ: Ե- Դո՞ւ զ՞ աչժամ արարմո-րի-նն ո-նի՛. աչլ
Դարձեալ Կե-րից պՅեպ, է- ո-րա՛խ լիցի՛ն սիրտի՛ Յէր
է- պո-րախո-րի-ննն Յէր ո՛չ ո՛ղ Ըստիցէ՛ ՚ի Յէնջ:
Ե- յայնմ ա-ո-ր պի՛ա ինչ ո՛չ Ըստցանիցէ՛: Ըմէն
ամէն ասէ՛մ . Զի՛ պո-ր ինչ խնդրիցէ՛ ՚ի Ըօրէ իմմէ
յանու-ն իմ Կասցէ՛ Յեպ: Մի՛նչէ- պայժամ ո՛չ ինչ
խնդրիցէ՛ յանու-ն իմ . խնդրիցէ՛ է- ա-նու-ցո-ղ
պի՛ ո-րախո-րի-ննն Յէր լցեա՛լ է-ղիցի»: :

(Յովճաննու ԺԶ : 5-16 է- 20-24)

«Սակայն Հի՛մա կ'երթամ գիւ զըկողին քով, եւ ձեզմէ
ո՛չ մէկը կը Հարցնէ ինծի. Ո՞ր կ'երթաս: Բայց քանի որ
այս բաները խօսեցայ ձեզի, ձեր սիրտը արտմութեամբ
լեցուեցաւ: Սակայն ես ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի.
Աւելի օգտակար է ձեզի՛ եթէ ես երթամ: Որովհետեւ եթէ
չերթամ՝ Միիթարիչը չի գար ձեզի. իսկ եթէ մեկնիմ՝
զինք պիտի զըկեմ ձեզի: Ու երբ ինք գայ՝ պիտի կըշ-
տամբէ աշխարհը մեղքի Համար, արդարութեան Համար
ու դատատանի Համար: Մեղքի Համար՝ քանի որ չեն
Հաւատար ինծի. արդարութեան Համար՝ որովհետեւ ես
կ'երթամ իմ Հօրս քով, եւ ա՛լ պիտի չտեսնէք գիւ. դա-
տատանի Համար՝ քանի որ այս աշխարհի իշխանը դատ-
ուած է: Տակաւին շատ բաներ ունիմ՝ ձեզի ըսելու, բայց
Հի՛մա չէք կրնար Հանդուրժել: Իսկ երբ ինք՝ ճշմարտու-
թեան Հոգին գայ, ամբողջ ճշմարտութեան պիտի առաջ-
նորդէ ձեզ . որովհետեւ պիտի չխօսի ինքնիրմէ, Հապա
ինչ որ լսէ՛ գայն պիտի ըսէ, ու գպիքները պիտի Հա-
ղորդէ ձեզի: Ինք պիտի փառաւորէ գիւ, որովհետեւ պի-
տի ատանայ իմինչս ու Հաղորդէ ձեզի: Ամէն ինչ որ
Հայրը ունի՛ ի՛մա է. ուստի ըսի ձեզի թէ պիտի առնէ

Խմինէս ու Հաղորդէ ձեզի: Քիչ մը ատենէն՝ ա՛լ պիտի չտեսնէք զիս. եւ քիչ մը ատենէն՝ դարձեալ պիտի տեսնէք զիս, քանի որ ես կ'երթամ Հօրը քով»: ... «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Դուք պիտի լաք ու ողբաք, բայց աշխարհը պիտի ուրախանայ. դուք պիտի տրտմիք, սակայն ձեր տրտմութիւնը պիտի փոխուի ուրախութեան: Կին մը տրտմութիւն կ'ունենայ ծննդաբերութեան ատեն, որովհետեւ իր ժամը Հասած է. բայց երբ ծնանի մանուկը՝ ա՛լ չի յիշեր տառապանքը, ուրախանալով որ մարդ մը ծնաւ աշխարհի մէջ: Ուրեմն դո՛ւք ալ տրտմութիւն ունիք Հիմա. բայց ես դարձեալ պիտի տեսնեմ ձեզ ու ձեր սիրտը պիտի ուրախանայ, եւ ո՛չ մէկը ձեզմէ պիտի յափշտակէ ձեր ուրախութիւնը: Այդ օրը՝ ոչինչ պիտի Հարցնէք ինծի: Ըշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ի՛նչ որ խնդրէք Հօրմէն՝ իմ անունովս, պիտի տայ ձեզի: Մինչեւ Հիմա՝ ոչինչ խնդրեցիք իմ անունովս. խնդրեցէ՛ք՝ ու պիտի ստանաք, որպէսզի ձեր ուրախութիւնը լման ըլլայ»:

Այս մէջըբերումին մէջ Քրիստոսի առաջին խօսքը հետեւեալն է. «Այլ ես զճշմարիտն ասեմ՝ լաւ է ձեզ եթէ ես երթամ զի եթէ ես ոչ երթայց միսիժարիչն ո՛չ եկեսցէ առ ապա եթէ երթամ առաքեցից զնա առ ձեզ»: Յիսուս Քրիստոսի յայտնութիւնն էր: Աշակերտները Յիսուսով Քրիստոսի հետ էին եւ պէտքը չտեսան Քրիստոս յայտնաբերել իրենց մէջ: Ինչպէս նախորդ մի քանի մէջըբերումներուն մէջ, այս անգամ ալ Քրիստոս կը մատնանըչէ, թէ Ս. Հոգիի զօրութիւնը, որ Հայր Աստուծմէ կը բղխի, անհատին մէջ հոսքը իր ներքին Քրիստոսէն կու գայ: Ս. Հոգիի յաւելեալ զօրութեամբ անհատը կ'ունենայ շատ աւելի բարձր գիտակցութեան մակարդակ ու կը հասկնայ ճշմարտութիւնը: Աս ալ կը համապատասխանէ անձին մէջ Քրիստոսի յայտնութեան: Անձը միականութեան փորձառութիւնը կ'ունենայ եւ կը հասկնայ թէ ամէն ինչ Քրիստոսի արտայայտութիւններն են: Ճիշդ ասոր համար Քրիստոս կ'ըսէ. «Փոքր մի, եւ ո՛չ ես տեսնիցէք զիս եւ ապա սակաւիկ մի, եւ տեսնիցէք զիս»: Այս խօսքին առաջին մասը ակնարկ մըն է Յիսուսի խաչելու-

Թեան, մահուան, յարույթեան եւ համբարձման: Յիսուսի համբարձմամբ աշակերտներն ալ այլեւս Քրիստոս պիտի չտեսնէին: Իսկ երկրորդ մասը ակնարկ մըն է Քրիստոսի յայտնութեան իրենց մէջ, հետեւաբար Քրիստոս կ'ըսէ: «Քիչ մը ատենէն դարձեալ պիտի տեսնէք զիս»:

Քրիստոս կը բացատրէ Ս. Հոգիի գործերը: Այս հանգրուանին պատշաճ է կրկնել, թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են: Քրիստոս այս հետեւեալ խօսքով. «Եւ նա՛ եկեալ յանդիմանեսցէ՛ զաշխարհ, վասն մեղաց, եւ վասն արդարութեան, եւ վասն դատաստանի՛» անգամ մը եւս կը յայտարարէ աններելի մեղքերուն յառաջ բերած հակազդեցութիւնները՝ «պատիժները», զորս պիտի կրէ համայն մարդկութիւնը: Այդ «պատիժ»-ները Ս. Հոգիի «յանդիմանութիւն»ները՝ «կշտամբանք»-ներն են: Հետաքրքրական է տեսնել թէ մարդ երեք տեսակ «պատիժ»-ի պիտի ենթարկուի: Մարդ արարած կը գործէ իր մարմինով, իր միտքով՝ խորհուրդ ու զգացումներով եւ իր իմացականութեան միջոցով: Հետեւաբար Քրիստոս կ'ըսէ. «Վասն մեղաց՝ զի ո՛չ հաւատան յիս»: Ի՞նչ է մեղքը: Երբ մարդ չի հաւատար, թէ Քրիստոս իր ներսն է, իր ճշմարիտ էութիւնն է եւ զայն կ'անտեսէ, ան յայտնի կ'ընէ թէ ինք իր տրամաբանելու կարողութիւնը պատշաճ կերպով չ'օգտագործեր: Ինք իմացական գետնի վրայ մեղանշած կ'ըլլայ, որովհետեւ ինք նախընտրած կ'ըլլայ խաւարամտութիւնը քան թէ իմաստութիւնը, որ Ս. Հոգիի շնորհներէն միւս է: Յովհաննու Աւետարանին առաջին գլուխին մէջ ալ գրուած է. «Նովաւ կեանք էր, եւ կեանքն՝ էր ըստ մարդկան. եւ լոյսն՝ ՚ի խաւարի անդ՝ լուսատւր էր եւ խաւար՝ նմա ո՛չ եղել հասու»: Կեանքը Ս. Հոգիի կենսատու զօրութիւնն է եւ այդ կեանքը մարդուն «Լոյս»-ը՝ գիտակցութիւնն է, բայց մարդ իր խաւարամտութեամբ չհասկցաւ, չճանչցաւ եւ չյայտնաբերեց այդ «Լոյս»-ը իր մէջ: Ահա՛, աս է

իմացական ահռելի մեղքը մարդիկ գատեցին խաւարը՝ պատրանքը քան թէ Լոյսը՝ Ճշմարտութիւնը:

Ըստ Քրիստոսի ըսածին Ս. Հոգիի հանդիմանութեան երկրորդ պատճառը մարդուն միտքին՝ խորհուրդներուն եւ զգացումներուն մասին է: Քրիստոս կ'ըսէ. «Վասն արդարութեան՝ զի առ Հայր իմ երթամ, եւ ո՛չ եւս տեսնուք զիս»: Քրիստոս Յիսուսի միջոցաւ յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւն շնորհեց շատերուն եւ անոնց մեղքերուն հակազդեցութիւնները ինք իր վրայ առաւ եւ զանոնք ազատեց իրենց մեղքերուն յառաջ բերած «պատիժ»-ներէն: Բայց Քրիստոսի այս խօսքէն յայտնի կ'ըլլայ, թէ Յիսուսի մեկնումով այս շնորհքը այլեւս պիտի չ'ըլլար: Քրիստոնէութեան մէջ շատեր կ'ըսեն, թէ Յիսուս մեր մեղքերուն համար մեռաւ, որով եթէ իրեն Աստուծոյ Որդի ըլլալուն հաւատանք, կը փրկուինք: Այդ գաղափարը կը թուի հակասել Քրիստոսի վերելի ըսածը: Եթէ Յիսուսի միջոցաւ Քրիստոսի շնորհած այդ ողորմածութիւնը այլեւս գոյութիւն պիտի չունենայ, ամէն անձ ալ իր ժխտական խորհուրդ եւ զգացումներուն յառաջ բերած հակազդեցութիւններուն պիտի ենթարկուի: Երբ մարդ կը գործէ Ս. Հոգիի զօրութեան օրէնքներուն դէմ՝ աններդաշնակօրէն, ինք ալ կ'ենթարկուի անոնց յառաջ բերած հակազդեցութիւններուն՝ իր կեանքի անբաղձալի պատահարներուն: Պէտք չէ մոռնալ թէ ամէն արարք նախ ծագում կ'առնէ իբրեւ խորհուրդ: Կեանքի պատահարներն ալ կը կազմեն արդարութիւնը: Միթէ չէ՞ ըսուած. «Ինչ որ ցանկենք, նոյնն ալ կը հնձենք»:

Ս. Հոգիի երրորդ յանդիմանութիւնը հետեւեալն է. «Վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսօրիկ դատապարտեա՛լ»: Աշխարհի իշխանը սատանան է, այսինքն մարդուն իր ներքին «Ես»-ը: Մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կը կառավարուի իր «Ես»-էն: Աս ալ

մարդուն կու տայ եսասիրութիւն քան թէ Աստուածասիրութիւն, մարդասիրութիւն, զոհողութիւն եւ կարեկցութիւն: Եսասէրը կը գործէ միայն ինք իր շահին համար: Ըստ Մննդոց Գիրքին սատանան դատապարտուած է եւ անիծուած: Հետեւաբար երբ մարդ կը յարի իր «Ես»-ին, ան կը յարի դատապարտելին եւ անիծելին: Միթէ պէ՞տք է զարմանք պատճառէ, եթէ ինք ալ կ'ենթարկուի յանդիմանութեան:

Մէջբերումին մէջէն նկատողութեան առնուած յաջորդ խօսքը. «Յորժամ եկեցէ նա Հոգին ճշմարտութեան առաջնորդեցէ՛ ձեզ ամենայն ճշմարտութեամբ»-ն է: Երբ Ս. Հոգիի զօրութիւնը անձին մէջ բարձր որակով կը հոսի, անհատին կու տայ նաեւ բարձր գիտակցութեան մակարդակ: Այդ բարձր գիտակցութեան մակարդակն ալ մեզ կ'առաջնորդէ դէպի ճշմարտութիւն եւ ճշմարտութեան անձնական փորձառութեան:

Քրիստոսի հետեւեալ երկու խոսքերն ալ շատ հետաքրքրական են եւ կու տան որոշ հասկացողութիւն: Ասոնց առաջինը «Նա զիս փառաւորեցէ, զի յիմե՛՛ անտի առնուցո՞ւ եւ պատմեցէ ձեզ»-ն է: Երբ անհատը յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւն կը ստանայ եւ բարձր գիտակցութիւն կը կերտէ Քրիստոս իր մէջ կը յայտնուի եւ այդ յայտնութեամբ ալ Քրիստոս փառաւորուած կ'ըլլայ: Ս. Հոգիի զօրութիւնը Քրիստոսէն կը տրուի մեզի, հետեւաբար Քրիստոս կ'ըսէ. «պիտի ստանայ իմ ինչս»: Բայց Քրիստոս նաեւ կ'ըսէ. «ու պիտի հաղորդէ ձեզի»: Ասոր իմաստն ալ Ս. Հոգիի շնորհած բարձր գիտակցութեան հետեւանք մենք ալ պիտի հաղորդուինք Քրիստոսի հետ: Քրիստոս դարձեալ կ'ըսէ. «Չամենայն ինչ զոր ունի Հայր՝ ի՛մ»: Հայր Աստուծոյ ունեցածը ամէն ինչ է, ընդհանուր ստեղծագործութիւնը: Աստուծոյ զօրութեան մարմնացումը Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Ստեղծագործութիւնը՝ նիւթը Ս. Հոգիի զօրութեան մարմ-

նացումն է: Հետեւաբար ընդհանուր ստեղծագործութիւնը Քրիստոսն է: Ճիշդ ասոր համար Քրիստոս կ'ըսէ. «Ամէն ինչ որ Հայրը ունի՝ ի՛մս է»:

Այս մէջբերումին մէջի Քրիստոսի յաջորդ խօսքը «զի լացջիք եւ ողբասջիք դուք եւ աշխարհ խնդասցէ՛. դուք սորտմեսջիք, այլ սորտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի»՝ ակնարկ մըն է այն իրողութեան, թէ բոլոր անոնք, որոնք կը գատեն կատարելութեան ուղին կը շահագործուին խաբէբաներու եւ եսասէրներու կողմէ: Ասոնց բոլորը տառապանքի՝ լացի ու ողբի պատճառ պիտի ըլլան: Բայց բոլոր անոնք, որոնք համբերութեամբ կը հանդուրժեն իրենց դէմ կատարուած բոլոր անարդարութիւններուն եւ չեն շեղիր իրենց ընտրած կատարելութեան ուղիէն, կ'արժանանան բարձր գիտակցութեան եւ անոր տուած հասկացողութեան եւ երանութեան: Ահա՛, աս է իմաստը «տրտմութիւնը պիտի փոխուի ուրախութեան»-ին: Երբ Քրիստոս կ'ըսէ. «այլ դարձեալ տեսից զձեզ, եւ ուրախ լիցին սիրտք ձեր եւ զուրախութիւնն ձեր ո՛չ ոք հանիցէ՛ ՚ի ձէնջ»՝ ակնարկ մըն է անձին մէջ Քրիստոսի յայտնութեան: Երբ Քրիստոս կը յայտնուի անձին մէջ, անհատը փորձառութիւնը կ'ունենայ միակնութեան եւ կը նոյնանայ Քրիստոսի հետ: Ան կը տեսնէ Քրիստոսի ներկայութիւնը ամէն ինչի եւ ամէն անհատի մէջ: Ինքն ալ կ'ըլլայ երանութեան մէջ: Ոչ մէկ աշխարհիկ բան իրմէ կրնայ յափշտակել իր այդ երանութեան զգացումը: Երբ վախազդու երազ մը մեր անդորրութիւնը կը խանգարէ, արդեօք կարելի է, որ այդ խանգարումը շարունակէ արթննալէ վերջ ալ երբ գիտենք թէ այն միայն երազ մըն էր:

Այս մէջբերումին վերջին խօսքը «Զի զոր ինչ ինդրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ տացէ՛ ձեզ» կրկնութիւն մըն է, որուն մասին նախորդ մէջբերումներուն մէջ տեղեկութիւն տրուած էր:

ԱՆՆԱՐԸԻ ՎՐԱՅ ՅԱՊԹՈՒԹԻՒՄ

«Զայն առանկօ՛ղ խօսեցայ ընդ եկեացե ժամանակ յորժամ ո՛չ էս առանկօղ խօսեցայ ընդ այլ յայդնապէ՛ս պէ՛տքս պարտեցի յեզ: Յայնմ առաջ խնդրեալքի՛ յանուն իմ ո՛չ ասեմ յեզ՝ եթէ էս Հարցից պահար վասն յեր. պի ինձն ինչ Հայր սիրէ պէտք. պի դոռո՛ղ պի՛ս սիրիցէ՛ղ. էս Հասարացէ՛ղ եթէ էս յԱսորո՛ւթոյ ելի: Ելի՛ ի Հօրէ՛՛ էս եկի յաշխարհ. դարձեալ թողո՛ւմ պաշխարհ, էս երթա՛մ առ Հայր: Ասեմ ցնա աշակերդն. Ահա՛ արդ յայդնո՛ւթեամք խօսիս էս առանկ էս ո՛չ մի ինչ ասես: Այժմեկ Գիտեմէ՛՛ եթէ Գիտե՛ս պամենայն էս ոչինչ պիտոյ է՛՛ եթէ ո՛ղ Հարցանիցե պէտք յայսմեկ Հասարա՛մէ՛՛ եթէ յԱսորո՛ւթոյ ելեր. Պարասխանի էդ նոցա Յիսուս՝ էս ասէ. Այժմ Հասարա՛յէ: Ահա՛ եկեացե ժամ, էս եկեա՛լ ինչ պի ցրո՛ւտալքի՛ յի՛րա՛վանչի՛ր ցեղիս էս պիս միա՛յն թողո՛ցո՛ղ, էս շեմ միայն, պի Հայր ընդ ի՛ս է: Զայն խօսեցայ ընդ յեզ՝ պի ընդ իս խաղաղո՛ւթի՛ն ունիցի՛ղ. յաշխարհի ասոր՝ նեղո՛ւթի՛ն ունիցի՛ղ. այլ ի՛նչալերեցարո՛ւթ պի է՛ս յաղբեցի աշխարհի»: (Յովհաննոս Ժ.Զ: 25-33)

«Այս բաները առականերով խօսեցայ ձեզի. բայց ժամը պիտի գայ, երբ ա՛լ առականերով պիտի չխօսիմ ձեզի, հապա բացորոշապէս պիտի հաղորդեմ ձեզի Հօրը մասին: Այդ օրը՝ իմ անունովս պիտի խնդրէք: Ձեմ ըսեր ձեզի թէ պիտի թախանձեմ Հօրը՝ ձեզի համար. քանի որ ի՛նք՝ Հայրը կը սիրէ ձեզ, որովհետեւ դուք սիրեցիք զիս ու հաւատացիք թէ ես Աստուծոմէ ելայ: Հօրմէն ելայ եւ աշխարհ եկայ. դարձեալ կը թողում աշխարհը ու կ'երթամ Հօրը քով»: Իր աշակերտները ըսին իրեն. «Ահա՛ բացորո՛-

չապէս կը խօսիս Հիմա, եւ առա՛կ մըն ալ չես ըսեր: Գիտենք Հիմա՝ թէ դուն գիտես ամէն բան, եւ պէտք չունիս որ մէկը Հարցնէ քեզի որեւէ բան: ասո՛վ կը Հաւատանք թէ Աստուծո՛վ ելար»: Յիսուս պատասխանեց անոնց. «Կը Հաւատա՞ք Հիմա: Ահա՛ ժամը պիտի գայ ու Հասած ալ է, երբ պիտի ցրուիք՝ իւրաքանչիւրը իր տեղը, եւ մինակ պիտի թողուք զիս. բայց եւ մինակ չեմ, որով- Հետեւ Հայրը ինձի Հետ է: Այս բաները խօսեցայ ձեզի, որպէսզի խաղաղութիւն ունենաք ինձմով. աշխարհի մէջ տառապանք պիտի ունենաք, բայց քաջալերուեցէ՛ք, եւ յաղթեցի աշխարհին»):

Այս մէջբերումին մէջ նկատողութեան առնուելիք միայն մի քանի կէտեր կան: Անոնք ընդհանուր առմամբ կրկնութիւններ են: Հետեւեալ խօսքը. «Չայս առակօ՛ք խօսեցայ ընդ եկեայէ ժամանակ յորժամ ո՛չ եւս առակօք խօսեցայց ընդ այլ յայտնապէ՛ս զՏօրէ պատմեցից ձեզ» կ'արժէ նկատողութեան առնել: Յիսուսի այս խօսքէն պէտք է Հասկնանք, թէ իր բոլոր ըսածները բացորոշ չէին եւ ընդհանուր առմամբ փոխաբերական իմաստներ ունէին: Հետեւաբար սխալ է Յիսուսի սորվեցուցածները բառացի իմաստներով մեկնաբանել ու իւրացնել: Զարմանալին այն է, թէ բացայայտ ըսածներէն ոչ մէկ բան գրուած է Աւետարաններուն մէջ: Նոյնիսկ երբ աշակերտը կ'ըսէ. «Ահա՛ արդ յայտնութեամբ խօսիս եւ առակ եւ ո՛չ մի ինչ ասես», յայտնութեամբ խօսածներէն ոչինչ ներկայացուած է բացի Քրիստոսի ըսածը. «Ելի՛ ի Տօրէ՛ եւ եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ, եւ երթա՛մ առ Հայր»: Յիսուս Քրիստոս առաջուց եւս բազմիցս նման արտայայտութիւններ ունեցած էր եւ այդ չի ներկայացնէր Անոր բացայայտ սորվեցուցածները:

Այս մէջբերումին վերջին կէտը կրկնութիւն մը չէ, այլ՝ Յիսուսի մեզի տուած քաջալերանքը: Յիսուսի խօսքը. «յաշխարհի աստ՝ նեղութիւն ունիցիք. այլ քաջալերեցարո՛ւք զի է՛ս յաղթեցի աշխարհի» ցոյց կու տայ, թէ երբ մարդ աշխարհի կը կապուի, անտարակոյս իր

կեանքին խաղաղ եւ հաճելի պահերուն առնթեր նաեւ պիտի ունենայ տառապալից պահեր: Բայց Յիսուս մեզ կը քաջալերէ ըսելով, թէ Ինք յաղթեց աշխարհին: Յիսուսի ըսել ուզածը այն է, թէ եթէ իբրեւ մարդկային բնոյթ ունեցող Ինք կարողացաւ աշխարհին յաղթել, ուրեմն մենք ալ, որպէս մարդկային բնոյթ ունեցող, պէտք է կարող ըլլանք աշխարհին յաղթել: Ի՞նչ ըսել է աշխարհին յաղթել: Ինչպէս Աւետարանին մէջ գրուած է, աշխարհի իշխանը սատանան է: Սատանան ալ մեր «Ես»-ն է: Մարդ արարած իր «Ես»-ին ազդեցութեան տակ կը կարծէ, թէ աշխարհը՝ պատրանքը ճշմարտութիւն մըն է: Ահա՛, բոլոր տառապանքներուն պատճառն ալ աս է, որ յառաջ կու գայ խաւարամտութենէն: Խաւարամտութեան պատճառն ալ ցած գիտակցութեան մակարդակն է: Յիսուս նաեւ ըսած էր, թէ պէտք է Իրեն պէս ըլլանք եւ Հօր պէս կատարեալ: Այդ է աշխարհին յաղթելու միակ միջոցը: Իսկ Յիսուսի նմանելու համար ալ պարտ ենք «Ես»-ը անտեսել, հասկնալ թէ զանազանութիւնը պատրանք մըն է, ձգտիլ ճշմարտութեան յայտնութեան, յարիլ դէպի ներքին Քրիստոսին, կերտել բարձր գիտակցութիւն, այդ գիտակցութեամբ ալ Յիսուս Քրիստոսի բոլոր սորվեցուցածները հասկնալ եւ իւրացնել ու ըստ այնմ ապրիլ, այսինքն մեր կենցաղով ընթանալ կատարելութեան ուղիէն եւ որեւէ ջանք չխնայել մինչեւ որ մեր նպատակակէտին հասնինք: Այն ատեն աշխարհին կը յաղթենք եւ կը հասկնանք անոր պատրանք՝ երազ մը ըլլալը եւ յօժարաբար կ'երթանք կը լուծուինք մեր Հօր մէջ ուրկէ եկած էինք:



ՅԻՄՈՒԻ ԱՊՈԹՔԸ

«Զայս իբրև խօսեցա՝ Յիսուս, ամբարշտս զայս իր յերկինս՝ եւ ասէ. Հայր՝ Հասեալ է ժամ, փառաւորեալ զորդի ին, զի եւ որդի ին փառաւորեացէ՛ զիւնս: Որպէս երբոր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ զի ամենայնի զոր երբոր նմա, ցացէ զիւնսն յաւիտեականս: Այս էն յաւիտեական կեանի, զի ժանիցեն զիւնս մեայն ճշմարտից Լսորոսաթ, եւ զոր առաքելցեր զՅիսուս Քրիստոս: Եւ զիւնս փառաւորեցի՛ յերկրի զԲորթն կարարեցի՛ զոր երբոր ցիս զի արարից: Եւ այժմ փառաւորեալ զիս Հայր առ ՚ի ին փառօվն զոր ունէի յառաջ ինն զիւնսն աշխարհի առ ՚ի ինն: Յայրնեցի՛ զանուն ին մարտկան զորս երբոր ինն յաշխարհէ ին՝ էին, եւ ինն երբոր զնոսա. եւ զբանն ին պահեցի՛ն: Արդ Գրիցացին՝ էիւն զամենայն ինն զոր երբոր ինն, երբոր նոցա. եւ նոնա ընկալան, եւ ժանեան ճշմարտութեամբ՝ իւն առ ՚ի ինն էիւն եւ Հասարացին՝ էիւն որոս առաքելցեր զիս: Արդ ես՝ զանն նոցա աղաշեմ, եւ ո՛չ զանն աշխարհի աղաշեմ. այլ զանն նոցա զորս երբորն ինն. զի ին՝ էին: Եւ որ ինն իմ է, ամենայն ին՝ եւ որ ինն ին՝ է. այն իմ է փառաւորեալ էմ ՚ի նոսա: Եւ ես՝ ոչ ես էմ յաշխարհի, եւ նոնա յաշխարհի էն, եւ ես՝ առ իննս Գամ. Հայր: Սո՛րբ պահեալ զնոսա յանուն ին, որով երբորն ինն. զի եղիցին մի՛, որպէս եւ

մե՛կ մե՛կ եմ՛կ: Մի՛նչ էի յաշխարհի ընդ նոսա, է՛ս
պահէի զնոսա յանո՛ն ի՛ն՝ որով երո՛ւրն ին՛չ է-
պահեցի՛. եւ ոչ ո՛վ ՚ի նոցանէ կորեաւ, թայց
որդին կորստեան, զի Գիրն լցցի՛: Բայց արդ առ-
վե՛զ Գամ: Եւ զայս խօսիմ յաշխարհի, զի ունի-
ցին զորախո՛րհիւնն իմ լի՛ով յանձինն իրեանց:
Եւ երո՛ւ նոցա զքանն ի՛ն, եւ աշխարհս արեա՛կ
ցնոսա. զի շե՛ն յաշխարհէ, որպէս եւ ես շե՛մ
յաշխարհէ: Ո՛չ զայս աղաշեմ զի թարջցես զնոսա
յաշխարհէ, այլ զի պահեացէ՛ս զնոսա ՚ի շարէ:
Յաշխարհէ աստի շե՛ն, որպէս եւ ես՝ շե՛մ յաշ-
խարհէ: Սո՛րք արա՛ զնոսա ճշմարտութեամբ
ի՛ն զի ի՛ն թանդ ճշմարտութիւն՝ է: Որպէս զիս
առա՛կեցեր յաշխարհ. եւ է՛ս առա՛կեցի զնոսա
յաշխարհ. եւ ՚ի վերայ նոցա ես սո՛րք առնեմ
զանցն իմ, զի եղիցին եւ նո՛վս՝ արեալի ճշմար-
տութեամբ: Ե՛յլ ո՛չ վասն նոցա միայն աղաշեմ,
այլ եւ վասն ամենա՛յն Հասարակցեւոց թանիւն
նոցա զի ամենե՛կին մե՛կ իցեն, որպէս դո՛ւ չայր
յիս՝ եւ ես ՚ի վե՛զ, զի եւ նո՛վս ՚ի մե՛զ իցեն:
Զի եւ աշխարհ Հասարակե՛ր էիլ դո՛ւ առա՛կե-
ցեր զիս: Եւ ես զփառսն զոր երո՛ւր ին՛չ՝ երո՛ւ
նոցա, զի իցեն մե՛կ՝ որպէս եւ մե՛կ մե՛կ եմ՛կ: Ե՛ս ՚ի
նոսա, եւ դո՛ւ յի՛ս, զի եղիցին կարարեալի ՚ի
մի: Եւ Գիրասցե՛ր աշխարհ՝ էիլ դո՛ւ առա՛կեցեր
զիս եւ սիրեցի զնոսա որպէս դո՛ւ զիս սիրեցեր:
Չայր, զորս երո՛ւրն ին՛չ, կամիմ՝ զի ուր ես եմ,


Եւ նորէն իցեն ընդ իս. զի որեւանիցէ՛ն զփառան
զիմ, զոր Երոսրն ցիս. զի սիրեցէ՛ր զիս յառաջ
ձան զլինելն աշխարհի: Զայր արդար՝ Եւ աշ-
խարհ զիւզ ո՛չ թանեաւ ալ Ես զիւզ թանեա՛յ:
Եւ նորէն թանեան՝ Ելիլ դոս առաջեցեր զիս:
Եւ թանոցի՛ նոցա զանոն ձո՛ Եւ թանոցի՛ց.
զի սերն զոր սիրեցեր զիս՝ ՚ի նոսա՛ իցե Եւ Ես
՚ի նոցա»: (Յովհաննոս ժԷ: 1-26)

«Երբ Յիսուս խօսեցաւ ասոնք, բարձրացուց իր աչքերը դէպի Երկինք եւ ըսաւ. «Հայր, ժամը հասած է. փառաւորէ՛ քու Որդիդ, որպէսզի քու Որդիդ ալ փառաւորէ՛ քեզ, քանի իշխանութիւն տուիր իրեն ամէն մարմնի վրայ, որ տայ յաւիտեանական կեանքը բոլոր անոնց՝ որ տուիր իրեն: Եւ սա՛ է յաւիտեանական կեանքը. ճանչնալ քեզ՝ միմիայն ճշմարիտ Աստուածը, ու Յիսուս Քրիստոսը՝ որ դուն գրկեցիր: Ես փառաւորեցի քեզ երկրի վրայ. աւարտեցի այն գործը՝ որ տուիր ինձի ընելու: Եւ հիմա, Հայր, փառաւորէ՛ զիս քու քովդ այն փառքով՝ որ ունէի քովդ աշխարհի ըլլալէն առաջ: Բացայայտեցի քու անունդ այն մարդոց՝ որ տուիր ինձի աշխարհէն: Քուկդ էին՝ եւ ինձի տուիր զանոնք, ու պահեցին քու խօսքդ: Հիմա գիտցան թէ ամէն ինչ որ տուիր ինձի՝ քեզմէ՛ է. որովհետեւ այն խօսքերը որ տուիր ինձի՝ ես տուի անոնց, անոնք ալ ընդունեցին եւ ճշմարտապէս գիտցան թէ ես քեզմէ՛ ելայ, ու հաւատացին թէ դո՛ւն գրկեցիր զիս: Ես կը թախանձեմ անոնց համար. ո՛չ թէ կը թախանձեմ աշխարհին համար, այլ անոնց համար՝ որ դուն տուիր ինձի, որովհետեւ անոնք քուկդ են: Եւ ամէն ինչ որ իմս է՝ քո՛ւկդ է, եւ ինչ որ քուկդ է՝ ի՛մս է, ու ես փառաւորուած եմ անոնցմով: Ա՛լ ես աշխարհի մէջ չեմ. բայց անոնք աշխարհի մէջ են, ու ես կու գամ քեզի: Սո՛ւրբ Հայր, պահէ՛ քու անունովդ անոնք՝ որ դուն տուիր ինձի, որպէսզի մէ՛կ ըլլան՝ ինչպէս մենք մէկ ենք: Մինչ անոնց հետ էի աշխարհի մէջ, զանոնք կը պահէի քու անունովդ: Անոնք որ դուն տուիր ինձի՝ ես պահեցի, եւ անոնցմէ՛ ո՛չ մէկը կորուսեցաւ, բայց միայն՝ այն կորուստի որդին, որպէսզի գրուածը իրա-

գործուի: Ա՛լ Հիմա կու գամ քեզի, եւ այս բաները կը խօսիմ աշխարհի մէջ, որպէսզի իմ ուրախութիւնս լման ըլլայ իրենց մէջ: Քու խօսքդ տուի անոնց, եւ աշխարհը ատեց զանոնք՝ որովհետեւ աշխարհէն չեն, ինչպէս ես աշխարհէն չեմ: Ձեմ թախանձեր որ վերցնես զանոնք աշխարհէն, Հապա՛ որ պահես զանոնք չարէն: Անոնք աշխարհէն չեն, ինչպէս ես աշխարհէն չեմ: Սրբացո՛ւր զանոնք քու ճշմարտութեամբդ. քու խօսքդ ճշմարտութիւն է: Ինչպէս դուն աշխարհ զրկեցիր զիս, ես ալ աշխարհ զրկեցի զանոնք: Անոնց Համար ես զիս կը սըրբացնեմ, որպէսզի իրենք ալ սրբացած ըլլան ճշմարտութեամբ: Բայց կը թախանձեմ ո՛չ միայն անոնց Համար, այլ նաեւ անոնց Համար՝ որ պիտի Հաւատան ինծի իրենց խօսքով: Որպէսզի բոլորն ալ մէ՛կ ըլլան, ինչպէս դուն՝ Հա՛յր՝ իմ մէջս, ու ես՝ քու մէջդ. որ անոնք ալ մէկ ըլլան մեր մէջ, որպէսզի աշխարհը Հաւատայ թէ դո՛ւն զրկեցիր զիս: Այն փառքը՝ որ դուն տուիր ինծի, ես տուի անոնց, որպէսզի մէկ ըլլան՝ ինչպէս մենք մէկ ենք. (ես՝ անոնց մէջ, ու դուն՝ իմ մէջս.) որպէսզի իրենք կատարելապէս մէկ ըլլան, եւ աշխարհը գիտնայ թէ դո՛ւն զրկեցիր զիս, ու սիրեցիր զանոնք՝ ինչպէս սիրեցիր զիս: Հա՛յր, անոնք որ տուիր ինծի, կ'ուզեմ որ իրենք ալ ըլլան ինծի Հետ՝ ո՛ւր որ ես եմ, որպէսզի տեսնեն իմ փառքս՝ որ տուիր ինծի. որովհետեւ դուն սիրեցիր զիս աշխարհի Հիմնադրութենէն առաջ: Արդա՛ր Հայր, աշխարհը չճանչցաւ քեզ. բայց ես ճանչցայ քեզ, եւ ասոնք գիտցան թէ դո՛ւն զրկեցիր զիս: Քու անունդ ճանչցուցի անոնց, ու պիտի ճանչցնեմ. որպէսզի այն սէրը՝ որով դուն սիրեցիր զիս՝ ըլլայ անոնց մէջ, ու ե՛ս ալ անոնց մէջ»:

Վերեւի մէջբերումը այս գիրքին մէջի վերջին մէջբերումն է: Ան կը ներկայացնէ Յիսուսի աղօթքը: Յիսուս Քրիստոս իր այս աղօթքին մէջ կ'անփոփէ իր ընդհանուր առաքելութիւնը եւ կը յայտնէ ամէն ինչի Աստուծով միականութիւնը, ինչպէս նաեւ կը շեշտէ Աստուծոյ միակ ճշմարտութիւնը ըլլալը: Յիսուս այս աղօթքով Հօրմէն կ'աղաչէ՝ կը թախանձէ իր բոլոր աշակերտներուն Համար, որպէսզի անոնք ալ իր ունեցած փառքին Հասնին եւ այդ Աստուածային փառքով ալ մէկ ըլլան, անտարակոյս եթէ Հաւատան

Իրեն եւ կիրարկեն իր բոլոր սորվեցուցածները՝ որոշեն կատարելութեան ուղիէն ընթանալ եւ իր աշակերտը ըլլալ: Այս մէջբերումին մեկնաբանութիւնը հոս համար-առ-համար պիտի չգրուի, որովհետեւ անոնք բոլորն ալ այս գիրքին նախորդ էջերուն մէջ արդէն գրուած են: Կարգացողին համար աւելի յարմար է իւրաքանչիւր համարին վրայ խորհրդածել եւ նախապէս կարգացածներուն հիման վրայ զանոնք մեկնաբանել: Աս ալ անձին համար ինքնաքննութիւն մը կ'ըլլայ:





ԿԱՆԹԵՂԸ

Այս տիեզերքին մէջ անհուն
Աստուծոյ ըյսն է փայլուն,
Որ կը փարատէ խաւարը խոր
Շտորհերով կեանք մը անոր:

Աշխարհն է Իր կանխեղը
Ծովերուն ջուրերն ալ իւրը
Արեւն ալ վառ բոցը ուժգին
Կ'անհետացնէ խաւարը արտաքին:

Երբ մարդ վառէ կանխեղը գիտակցութեան
«Վմանով» մը Աստուածպաշտութեան
Սիրոյ մէջ թաթխուած միտքն ալ պատրոյգը
Ինքնաճանաչումն ալ կ'ըլլայ փայլուն բոցը:

Եւ երբ ան կ'անհետացնէ խաւարը ներքին,
Փորձառութիւնը կ'ունենայ Աստուծոյ փառքին
Կ'անտեսէ ընդհանուր աշխարհը արտաքին
Ու կը վայելէ երանութիւնը Աստուածային:

Վ. Ս.

ՎԵՐՁԱԲԱՆ

ԵՒ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՆՉ Է ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնէութիւնը կրօնք մը չէ: Յիսուս նոր կրօնք մը չքարոզեց: Յիսուս հին «մովսիսական» հրեաներուն կրօնքն ալ չքարոզեց: Յիսուս գործադրեց Մովսէսի սորվեցուցած կատարելութեան ուղին, որ հրէական կրօնքին մէջ զանազան անպէտ օրէնքներով խեղաթիւրուած եւ կորսուած էր:

«Մի՛ Ըամարի՛ էլի եկի լո՛ւթանել զօրէնս կամ զմարգարէս, ո՛չ եկի լո՛ւթանել՝ այլ լնո՛ւ»: (Մարթէոս Ե:17)

«Մի՛ կարծէք ես եկայ՝ արելու Օրէնքը կամ Մարգարէները: Եկայ ո՛չ արելու՝ Հապա՛ գործադրելու»:

Պօղոս առաքեալն էր, որ նոր կրօնք մը ստեղծեց որ յառաջիկային Քրիստոնէութիւն անուանուեցաւ:

Քրիստոնէութիւնը Յիսուսի բոլոր սորվեցուցածները հասկնալ, իւրացնել եւ կիրարկելն է: Ի՞նչ են Յիսուսի սորվեցուցածները: Աստուծոյ հաճելի որդի ըլլալ, ինչպէս Ինք Աստուծոյ հաճելի Որդին էր: Կերտել Աստուածահաճոյ կենցաղ մը եւ նմանիլ Իրեն: Յիսուս իր արարքներով, առականերով եւ խօսքերով այդ բոլորը մեզի սորվեցուց:

Քրիստոնէութիւնը ապրելակերպ մըն է, կենցաղ մըն է, որպէսզի իրականացնենք Հայր Աստուծոյ մեզի տուած պատասխանատուութիւնը եւ պարտականութիւնը: Քրիստոնէութիւնը ծիսակատարութիւն մըն ալ չէ: Բայց ծիսակատարութիւնները կարեւոր են մեզի սորվեցնելու համար անոնց մէջ թագնուած կատարելութեան ուղին՝ Աստուծոյ մեզի տուած պատասխանատուութիւնը եւ պարտականութիւնը: Պէտք է որեւէ ջանք

Իննայել հասկնալու համար անոնց մէջ գտնուող իմաստասիրութիւնները: Ուրեմն, Ի՞նչ է Աստուծոյ մարդուն տուած պատասխանատուութիւնը եւ պարտականութիւնը, որ մարդ պարտ է իր ներկայ կեանքին ընթացքին կատարել եւ լաւագոյնս կատարել: Մարդուն տրուած պատասխանատուութիւնը սիրել է ստեղծագործութեան մէջ ամէն ինչ՝ բոյս, անասուն եւ բոլոր անհատները, անոնք ըլլան ընտանեկան անդամ, բարեկամ, ընկեր, օտար կամ թշնամի, ինչպէս նաեւ որեւէ բանի վնաս չհասցնելն է: Իսկ մարդկային կեանքի պարտականութիւնն ալ Աստուածայայտնութիւնը իր անձին մէջ իրականացնելն է: Մարդ կը կարծէ, թէ նման արարք մը մարդուն համար անկարելի է եւ կ'ըսէ. «Յիսուս կարողացաւ Քրիստոս յայտնաբերել, որովհետեւ Ան Աստուծոյ Որդին էր»: Նման հայեացք մը Յիսուսի սորվեցուցածներուն հակառակ է: Մենք ալ բոլորս Աստուծոյ որդիներ ենք: Մենք միայն իր հաճելի Որդիները չենք: Իրեն հաճելի ըլլալու համար ինչո՞ւ ջանք չենք ընել:

«Ո՛չ է աշակերտ լա՛ւ – ինչն սովորեալէր իւր, ամենայն կարարեալն՝ եղիցի իբրեւ սովորեալէր իւր»: (Ղուկաս Գ:4)

«Աշակերտը իր վարդապետին գերիւկեր չէ. բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

«Արդ եղբրո՞ւնդ որո՞ւնք կարարեալդ, որպէս է – Հայրն յեր երկնաւոր կարարեալ է»: (Մատթէոս Ե:48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր հայրը կատարեալ է»:

«... Ամէն ամէն ասե՛մ թէ որ Հաւասարայն յիս սովորածս սոր էս գործեմ, էս նա՛ գործեսցէ էս մեծամեծս է՛ս – ինչն սնոյնս գործեսցէ ... »:
(Յովհաննէս ԺԴ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի-
Ա՛ն որ կը հաւատայ ինձի, ի՛նք ալ պիտի ընէ այն
գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր
պիտի ընէ, ...»:

**Քրիստոնէութիւնը մկրտուիրն ալ է: Այլ ան ըստ
յաջորդող համարներուն Ս. Հոգիի յաւելեալ զօրու-
թեամբ օժտուիրն է: Ան Քրիստոսի տուած «Չուր»-ով
մկրտուիրն է: Այդ համարներուն մէջ Յիսուս «Չուր»-ը
օգտագործած է իր փոխաբերական իմաստով, որ Ս.
Հոգին կը ներկայացնէ: Քրիստոնէութիւնը որեւէ ջանք
չինայելն է, որպէսզի Ս. Հոգիի զօրութիւնը առատա-
պէս մեր մէջ հոսի:**

«Պատասխանի՛ եր Յիսուս՝ եւ ասէ. Ամէն ամէն
ասե՛մ չեւ ելէ ելէ ոչ ո՛ր շնչի ՚ի ջրոյ եւ ՚ի
Ըոգոյ ո՛չ կարէ մտանել յարեւոյտի-ն
Աստուծոյ»: (Յովհաննոս Գ:5)

«Յիսուս պատասխանեց, ճշմարտապէս, ճշմարտապէս կը
յայտարարեմ քեզի, եթէ մէկը Չուրէն ու Հոգիէն չծնի՛
չի կրնար մտնել Աստուծոյ թագաւորութիւնը»:

«Պատասխանի՛ եր նմա Յիսուս եւ ասէ.
Ամէնայն որ ըմպէ ՚ի ջրոյ յայդմանէ, մի-սան-
Գամ Չարաւէ՛, Բայց որ ըմպէ ՚ի ջրոյն զոր ես
դաս մնա մի՛ Չարաւէսցէ յա-իդեան: Այլ ջրոն
զոր ես դաս նմա եղիցի աղբի-ր ջրոյ Բղիւնոյ ՚ի
կեանան յա-իդեանկան»: (Յովհաննոս Գ:13-14)

«Յիսուս պատասխանեց անոր. Ո՛վ որ խմէ այս Չուրէն՝
դարձեալ պիտի ծարաւնայ, բայց ո՛վ որ խմէ այն
Չուրէն՝ որ ես պիտի տամ անոր, յաւիտեան պիտի
չծարաւնայ: Հապա այն Չուրը՝ որ ես պիտի տամ անոր,
պիտի ըլլայ անոր մէջ Չուրի աղբիւր մը՝ որ կը բխի
յաւիտեանական կեանքի համար»:

«Որ Հա-սարայ յիս որպէս եւ ասէն Գիրի՛,
Գե՛ր չի յորովայնէ նորա Բղիւնոցէն ջրո՛ց

կենդանութեան» : (Յովհաննոս Է:38)

«Ա՛ն որ հաւատայ ինձի, կենարար ջուրի գետեր պիտի բխին անոր փորէն, ինչպէս Գիւրքը կ'ըսէ»:

Ս. Հոգիի զօրութիւնը ի՞նչպէս առատապէս մեր մէջ հոսեցնել: Այս կարելի է միայն աղօթքով եւ աղօթքին ամենավեհ ձեւով, որ խոկումն է: Խոկումին նպատակը բացարձակ իշխանութիւն կերտել է մեր զգացումներուն եւ մտքին վրայ, որպէսզի կարենանք զսպել բոլոր զգացումները, յուզումները եւ խորհուրդները եւ տէր ըլլալ «սուրբ սրտի», այսինքն զգացումներէ եւ խորհուրդներէ սրբուած՝ մաքրուած միտքի մը: Երբ այդ միտքը կը կեդրոնացնենք Քրիստոսի վրայ, Իրմէ կը ստանանք Ս. Հոգիի առատ զօրութիւնը:

«Երանի այնոցիկ՝ որ սորբէ են սրտիւմ, պի նոխ

պէսսորոսաժ տեսցեն» : (Մարթէոսի Է:8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

Քրիստոնէութիւնը նաեւ պարզապէս եկեղեցի երթալ չէ: Այլ Քրիստոնէութիւնը Աստուածպաշտութիւն մըն է: Աստուածպաշտութիւնն ալ սիրել եւ խնամել է ընդհանուր ստեղծագործութիւնը, որ Աստուծոյ ձեռագործը՝ «ներկած նկարն» է: Ստեղծագործութիւնը Աստուծոյ մարմինը, արտայայտութիւնը, ներկայութիւնն է:

Ինչպէ՞ս Աստուածապաշտ ըլլալ: Վերելը արդէն գրուած է սիրել եւ խնամել Աստուծոյ ձեռագործը: Բայց Աստուածապաշտ ըլլալու համար պարտ ենք մեր «Ես»-ը չհզոքացնել՝ զայն խաչը հանել եւ մահուան դատապարտել: Կարելի չէ թէ՛ «Ես»-ը պահել, եւ թէ՛ ալ Աստուած պաշտել՝ Անոր ծառայել: Չենք կրնար երկու տիրոջ ծառայել:

«... Ո՛չ կարելի էսորոսաժո՛յ թառայել եւ մամոնայի» : (Ղոսկաս Ժ.9:13)

«... Ձեք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Քրիստոնէութիւնը հաղորդութիւն առնելն ալ չէ: Այլ Քրիստոնէութիւնը հասկնալ է, թէ Քրիստոս մեր ճշմարիտ էութիւնն է եւ այս աշխարհիկ կեանքի ընթացքին Աստուծոյ՝ Քրիստոսի հետ հաղորդուիլն է: Երբ եկեղեցի կ'երթանք եւ հաղորդութիւն կ'առնենք, ահա՛, աս է որ պէտք է սորվինք այս արարքով: Սորվիլ, թէ մենք ալ մեր կեանքին մէջ պարտ ենք իրականացնել եւ հաղորդուիլ մեր ներքին Քրիստոսի՝ Աստուծոյ հետ:

Ինչպէ՞ս հասկնալ, թէ Քրիստոս մեր ճշմարիտ էութիւնն է: Վերեւ ներկայացուած առատ Ս. Հոգիի զօրութեան հոսքը ապահովելու միջոցառումը, որ «սուրբ սիրտ» կերտելն է, մեզի կու տայ, ոչ իմացական հասկացողութիւն, այլ Քրիստոսի մեր մէջ ներկայութեան փորձառութիւնը: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Երանի անոնց, որ սուրբ են սրտով, անոնք Աստուած պիտի տեսնեն»: Աս կ'ըլլայ գիտակցութեան մակարդակի բարձրացումով, որ Քրիստոսի կողմէ յափշտակուիլն է: Անձն ալ Քրիստոսի հետ կը նոյնանայ, հետեւաբար փորձառականօրէն հաղորդակցած կ'ըլլայ Անոր հետ:

«Իսկ մեխիթարիչն Հոգին Սուրբ՝ զոր աստիճացէ
Հայր յանուան իմ, նա՛ ուսուցէ յեզ զամենայն
որ ինչ ասացի յեզ եւ յիշեցո՞ւցէ՛ յեզ»:
(Յովհաննոս ԺԴ:26)

«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը պիտի
ըրկէ իմ անունովս, անիկա՛ պիտի սորվեցնէ ձեզի
ամէնը՝ եւ ինչ որ ըսի ձեզի՝ պիտի յիշեցնէ ձեզի»:

«Իայց յորժամ եկեսցէ մեխիթարիչն, զոր է՛ս
աստիճացի յեզ՝ ՚ի Հօրէ զՀոգին ճշմարտութեան
որ ՚ի Հօրէ ելանէ նա՛ վկայեսցէ վասն իմ»:
(Յովհաննոս ԺԵ:26)

«Բայց երբ Մխիթարիչը գայ՝ որ ես Հօրմէն պիտի
ըրկեմ ձեզի, ճշմարտութեան Հոգին՝ որ կը բերի

Հօրմէն, անիկա՛ պիտի վկայէ իմ մասին»:

Քրիստոնէութիւնը «**Ես Յիսուս Քրիստոսի կը հաւատամ, որ Ան Աստուծոյ Որդին է եւ իմ մեղքերուս համար մեռաւ եւ ես իր արիւնով լուացուած եւ սրբուած եմ, հետեւաբար փրկուած եմ**» ըսել ալ չէ: **Քրիստոնէութիւնը, ըստ Յիսուսի սորվեցուցածին, պարզապէս Զինք պաշտելը չէ, այլ Անոր նման ըլլալն է եւ Անոր Հօրը կամքը կատարելն է: Այն ատեն է, որ Զինք իսկապէս պաշտած կ'ըլլանք:**

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր, միցէ յարձայո՞ւթիւն երկնից, այլ որ ասնէ պիտի Ըօր իմոյ որ յերկնան է»: (Մատթէոս 1:21)

«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՛ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թաղաւորութիւնը, հապա ան՝ որ կը գործադրէ իմ երկնաւոր Հօրս կամքը»:

Անտարակոյս Յիսուս Քրիստոսը պարտ ենք պաշտել: Ան մեր ուսուցիչն է: Ան Աստուծոյ հաճելի Որդին է: Ան Աստուծոյ յայտնութիւնն է: Յիսուս Քրիստոս չպաշտել Աստուած չպաշտել կը նշանակէ: Բայց ինչպէս վերեւ գրուած է Յիսուս Քրիստոս պաշտել իր հօրը կամքը կատարել է եւ պարզապէս «կը սիրեմ, կը պաշտեմ» ըսելը չէ:

«... Եթէ ո՛չ սիրէ պիտի պիտի անն իմ պահեսցէ եւ Ըայր իմ սիրեսցէ պիտի»: (Յովհաննոս ԺԳ:23)

«... Եթէ մէկը սիրէ զիս՝ պիտի պահէ իմ խօսքս, ու իմ Հայրս պիտի սիրէ զայն»:

Իսկ փրկութիւնը պարզապէս կը հաւատամ ըսելով կարելի չէ ձեռք ձգել, այլ փրկութիւնը կու գայ անոր, որուն կեանքը կ'ըլլայ անընդհատ աղօթք մը եւ իր կեանքի բոլոր լաւ ու վատ պատահարները՝ բոլորն ալ կ'ընդունի ուրախութեամբ իբր Աստուծոյ կամքը:

«Ի՞նչ որ Համբերեսցն ՚ի սպասու, նա կ'եսցէ»: (Մատթէոս ԻԳ:13)

«Բայց ո՛վ որ տոկայ մինչեւ վախճանը՝ անիկա՛ պիտի վրկուի»:

«... առ այն՝ թէ պա՛րոք է յամենայն ժամ կա՛լ

նոցա յաղօթա՛ն եւ մի՛ շանցրանալ» : (Ղուկաս ԺԼ : 1)

«... որ գիտնան թէ պէտք է ամէ՛ն ատեն աղօթել՝ առանց ձանցրանալու»:

Քրիստոնէութիւնը մահէն վերջ երկինք երթալ եւ յաւիտեան՝ անվերջ ժամանակ երջանիկ ապրիլ չէ: Կամ դժոխք երթալ եւ յաւիտեան կրակով այրիլ եւ տառապիլ ալ չէ: Այլ Քրիստոնէութիւնը Աստուծոյ երանութեան մասնակից ըլլալ է եւ մարմինը՝ միջոցը եւ ժամանակը յօժարաբար թողուլ եւ յաւիտեանականութեան ձգտիլ է: Ժամանակի դրութենէ դուրս ըլլալն է, այսինքն միայն ներկային մէջ ապրիլն է:

Երբ Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ ըլլանք՝ բարձր գիտակցութեան տէր, կը նմանինք Իրեն: Աս ալ կարելի է եթէ Իր Հօրը կամքը լիովին կատարած ենք: Այն ատեն կը վայելենք Աստուածային երանութիւնը եւ կ'ապրինք միայն ներկան, որ յաւիտեան է: Աստուծոյ սէրն ալ մեզմէ կը հոսի դէպի բոլորին, նոյնիսկ այն խաւարամտին որ կու գայ մեզ սպաննելու եւ կը փաթթուինք իրեն սիրոյ արտայայտութեամբ եւ կ'աղօթենք իրեն համար: Աս ալ ապաւինիլ է Աստուծոյ եւ հասկնալ թէ այդ խաւարամտին մեզ մեռցնելու արարքը պէտք է Աստուծոյ կամքը ըլլայ:

Քրիստոնէութիւնը պատժող եւ վրէժխնդիր Աստուծոյ մը հաւատալ չէ: Այլ Քրիստոնէութիւնը Աստուծոյ սիրոյն արտայայտութիւնը ապահովել եւ իրականացնելն է: Աստուած սէր է: Աստուած չի պատժեր: Բայց մարդ պարտ է իր ցանած հունտերուն հունձքը ինք քաղել:

«Մի՛ խաբի՛, Աստուած ո՛չ արժամարհի: Զի

պոր ինչ սերմանէ մարդ պնոյն եւ Հնչեացէ՛» :

(Գաղաթագրիս Զ:7-8)

«Մի՛ խաբուիք՝ Աստուած չի ծաղրուելիք, որովհետեւ ի՛նչ որ մարդ կը սերմանէ՝ գա՛յն ալ պիտի հնձէ»:

«աստ՛մ վե՛ս, ո՛չ ելանիցես անոր՛ մինչեւ Հասո-
ո-ցանիցես սլեդո՛ն թե-խոնն» : (Գուգաս ԺԲ:59)

«Դուքս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին լուման»:

Քրիստոնէութիւնը սիրոյ Աստուծոյ հետ մէկ ըլլալ է, իր ներողամտութիւնը եւ իր ողորմածութիւնը վայելել է: Քրիստոնէութիւնը Աստուծոյ ապաւինիլ, կեանքի բոլոր լաւ թէ՛ վատ պատահարները ընդունիլ եւ անոնց համար փառք տալ է: Որովհետեւ մեզի ինչ որ կը պատահի՝ լաւ թէ՛ վատ, մեր օգտին համար է եւ Աստուծոյ կամքն է:

Բայց մարդ իր խաւարամտութեամբ բոլոր վերոյիշեալ «Քրիստոնէութիւնը ... չէ»-երը առած եւ անոնց հիման վրայ կրօնք մը ստեղծած եւ այդ կրօնքին ալ հետեւելով ինքզինք կը համարէ Քրիստոնեայ: Նման հասկացողութեամբ մը մարդ արարած կը շարունակէ իր «Ես»-ին «երկրպագել» եւ նոյն ժամանակ ինքզինք համարել քրիստոնեայ:

Ո՛չ ո՛վ կարէ երկո՛ւց տերանց թառայել. սի ե՛րէ՛ սմին՝ ասորիցէ, եւ սմե-սըն սիբե՛. կամ սմին՝ մեթարիցէ, եւ սմե-սըն արհամարի- ցե՛: Ո՛չ կարե՛վ Լասո-թո՛յ թառայել եւ մամոնայի» : (Գուգաս ԺԶ:13)

«Ո՛չ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ. որովհետեւ կամ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կամ մէկուն պիտի յարի ու միւսը արհամարէ: Չէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Վերոյիշեալ «Քրիստոնէութիւնը չէ»-ները իրաւա-ցիօրէն շատ կարեւոր են իբրեւ առաջին քայլ: Անտա-րակոյս պարտ ենք մկրտուիլ, եկեղեցի յաճախել, հա-

ղորդութիւն առնել: Բայց անոնք երբեք պէտք չէ վերջակէտ մը ըլլան: Այլ անոնք պէտք է խթան մը ըլլան մեզի, որպէսզի անոնց մէջ թագնուած իմաստասիրութիւնը պրպտենք, գտնենք եւ մեր կեանքերուն մէջ ալ կիրարկենք: Անոնք միայն առաջին քայլն են կատարելութեան ուղիին մէջ: Զինական առածը կ'ըսէ. «Հազար մղոն հեռաւոր ճամբորդութիւն մը կը սկսի առաջին քայլով»: Եթէ մեր կենցաղը չէ փոխուած կը նշանակէ, թէ մեր առաքելութեան մէջ ձախողած ենք: Կատարելութեան ուղիին մէջ առաջին քայլէն անդին չենք յառաջացած: Կատարելութեան ուղին անհուն ճամբորդութիւն մըն է, որովհետեւ անոր վերջակէտը Քրիստոսի յայտնութիւնն է, Աստուծոյ հետ մէկ ըլլալ է: Միթէ Աստուած ալ անհուն չէ⁶: Հաղորդութիւն առնելը պարզապէս մեր մեղքերուն ներուած ըլլալը կարծել եւ դարձեալ նոյն մեղքերը գործել ու դարձեալ հաղորդութիւն առնել չէ: Մեղքերը կը ներուիին երբ մենք մեր դասը սորված կ'ըլլանք եւ նոյն մեղքերը դարձեալ չենք կրկնել:

Աղօթքն ալ պէտք է Քրիստոսի հետ հաղորդուելու տենչանքը ըլլայ եւ ոչ Աստուծմէ աս ու ան ինդրել նամանաւանդ մեր կեանքի վատ ժամանակներուն: Այդ վատ պատահարները բոլորն ալ մեր ցանած հունտերուն հունձքերն են: Յիսուս Քրիստոս ողորմած է եւ կարող մեզ այդ դժուարութիւններէն ազատել: Բայց պէտք չէ մոռնալ թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքը աննեղելի է եւ այդ կ'ըլլայ մեր պարտքը, որ ուշ թէ կանուխ պարտ ենք վճարել: Յիսուս երկու հազար տարի առաջ իր ողորմածութեամբ շատեր բուժեց եւ անոնց մեղքերը ներեց: Բայց այդ «պարտքերը» չանհետացան, այլ ինք զանոնք իր վրայ առնելով, ինք այդ պարտքերը խաչին վրայ վճարեց: Աս ցոյց կուտայ իր անհուն ողորմածութիւնը: Ես իմ գործած մեղքիս

յառաջ բերած «պարտքէն» ազատելու համար արդեօք պիտի ուզէի՞, որ Յիսուս մեղքիս պատիժը քաշէ: Աս կ'ըլլայ եսասիրութեան զագաթնակէտը: Եթէ այդ չարչարանքը կրելով մենք մեր դասը սորված ենք, մեր աղօթքը պէտք է ըլլայ խնդրել, որ Աստուած մեզի այդ մեր կեանքի վատ պատահարներուն համար ընդունակութիւն եւ տոկալու համբերութիւնը տայ: Որովհետեւ Աստուած ողորմած է եւ մարդասէր, եթէ իսկապէս դասերնիս սորված ենք եւ վճռականօրէն որոշած չկրկնել նոյն մեղքը, Աստուած ինք կը մեղմացնէ մեր տառապանքը առանց մեր Իրմէ խնդրանքին: Իսկ եթէ մենք մեր դասը չենք սորված, որքան ալ աղօթենք կարեւորութիւն չունենար, ինչպէս նաեւ օգուտ:

Ի՞նչ կը խորհինք: Արդեօ՞ք պէտք է գոհանանք պարզապէս անուանի Քրիստոնեաներ ըլլալով: Ո՛չ, ընդհակառակը, պէտք է որ ջանք չխնայենք եւ ճշմարիտ Քրիստոնեաներ ըլլանք: Դիւրին է անուանի Քրիստոնեայ ըլլալ բայց շատ դժուար է իսկական Քրիստոնեայ մը ըլլալ: Յիսուս այս երկուքէն ո՞րը ապրեցաւ եւ Իր կեանքով ալ մեզի անոնցմէ ո՞րը սորվեցուց:



ԻՆՉ Է ԿՐՕՆՔԸ ԵՒ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՅ

Յիսուս Քրիստոսի սորվեցուցածները կատարելու թեան ուղին էին: Յիսուս Քրիստոսի սորվեցուցած կատարելու թեան ուղին հետեւողները կը կազմեն եկեղեցին, ինչ որ կը նշանակէ հաւատացեալներու հաւաքական խումբ: Այս խումբը առաջին անգամ Անտիոքի մէջ է որ «Քրիստոնեայ» կ'անուանուի: 301 թուականին հայերը ազգովին կը որոշեն «Քրիստոնեայ» կոչուած Յիսուսի սորվեցուցած կատարելու թեան ուղին յառաջանալ: 325-ին գումարուած Նիկիոյ ժողովին կայսրին տնօրինութեամբ «Քրիստոնէութիւն» կոչեալ նոր կրօնք մը կը հիմնուի:

Ի՞նչ է կրօնքի մը անպատեհութիւնը: Որեւէ կրօնքի մը պատկանողներ իրենք զիրենք աւելի արդարացեալ կը նկատեն, քան թէ բոլոր անոնք, որոնք այլ կրօնքներու կը պատկանին: Օրինակը բացայայտ է: Ըստ Մահմէտականներու քրիստոնեայ մը մեռցնել դրախտ երթալու համար արժանիք եւ վաստակ կը համարուի: Ահա՛, այսպէսով Մահմէտականները իրենք զիրենք արդարացեալ կը նկատեն: Միթէ Քրիստոնէութեան մէջ ալ «փրկուածներու եւ վերստին ծնունդ ունեցողներու» խմբակներուն անդամներն ալ միւս բոլոր կրօնքները «սատանայական» կամ կռակաշտութիւն չեն համարեր: Այլ կրօնքներուն հետեւողները, վերել յիշուած խմբակներու հետեւողներուն միտքերուն մէջ դժոխք երթալու արդէն իսկ դատապարտուած են, անշուշտ, եթէ անոնք իրենց կրօնքը չփոխեն եւ իրենց նման «Քրիստոնեայ» չըլլան: Յաւալին այն է, թէ անոնք նոյնիսկ Քրիստոնեայ կրօնքին պատկանողները, որոնք իրենց հաւատացած ձեւով չեն հաւատար, զանոնք ալ դժոխքի կը դատապարտեն:

Աստուած մէկ է, եւ միականութիւն կը ներկայացնէ: Աստուած արդար է: Նաեւ չե՞նք ըսեր. «Առանց

Աստուծոյ հրամանին տերեւ մը անգամ չի շարժիր»: Ուրեմն, եթէ կան զանազան կրօնքներ, բոլորն ալ պէտք է ծնունդ առած ըլլան համաձայն Աստուծոյ կամքին: Զանազան ժողովուրդներ իրենց իմացականութեամբ եւ նամանաւանդ իրենց գիտակցութեամբ տարբեր մակարդակներու վրայ կը գտնուին: Ուստի Աստուած ալ անոնց տուած է իրենց մակարդակին համապատասխան եւ անոնց համար ըմբռնելի կրօնք մը: Բոլոր կրօնքները իրենց խորքին մէջ, նոյն իմաստասիրութիւններն են որ կը սորվեցնեն: Բայց մարդիկ, մակերեսային հասկացողութեամբ մը, զանոնք հարմարցուցած են իրենց վատ կենցաղներուն եւ իրենք գիրենք կը համարեն բացարձակ հաւատացեալ, այպանելով ուրիշներ եւ կը շարունակեն երկրպագել իրենց «Ես»-ին: Բոլոր տիեզերքը Աստուծոյ մարմինն է եւ Իր Որդին՝ Քրիստոսն է: Քրիստոս ամէնուն մէջ ներկայ է եւ միականութիւնը եւ լիութիւնը կը ներկայացնէ: Յիսուս Քրիստոսի մեզի սորվեցուցածը աս էր: Ան բնաւ խորութիւն չդրաւ ոչ Սամարացի կնոջ, ոչ Հրովմէացի հարիւրապետին, ոչ Հրեային եւ ոչ ալ «հեթանոս»-ին միջեւ: Իսկ մենք (իբր Քրիստոնեայ) եթէ իսկապէս Յիսուս Քրիստոսի կը հետեւինք, ինչո՞ւ խորութիւն կը դնենք մարդոց եւ կրօնքներու միջեւ: Ինչպէս վերեւ գրուած է, ի՞նչ է կրօնքին անպատեհութիւնը: Երբ մարդ արարած ինքզինք կը համարէ որոշ կրօնքի մը պատկանող անձ, զատողութիւն է որ կը յառաջացնէ: Երկուութիւնը՝ զատողութիւնը իսլաւարամտութեան հետեւանք է: Ծղմարտութիւնը այն է թէ ամէն ինչ մէկ է: Միթէ չէ՞ գրուած. «Ես եմ Ալֆան եւ Օմէղան», այսինքն «Առաջինն ու Վերջինը»: Ան, որ առաջինը եւ վերջինն է, ամէն բան է: Երբ մարդ կը սկսի իր կրօնքին եւ այլ կրօնքներու միջեւ զատողութիւն դնել, շուտով կը սկսի իր կրօնքն ալ տարբեր տարբեր զատ մասերու բաժնել: Ինչո՞ւ չէ:

Մարդ միշտ իր վարժուած բնոյթին համաձայն կը գործէ: Եթէ իր բնոյթը զատողութիւն կը յառաջացնէ, ինք ալ ամէն ինչ կը սկսի զատել: Նման բնոյթ մը «Ես»-էն կը ծագի: Ճիշդ այս պատճառով Յիսուս բազմիցս կրկնեց ու սորվեցուց «Ես»-ը անտեսել: Այս հասկացողութեամբ մարդիկ աշխարհն ալ բաժնած են զանազան ազգերու, զանազան լեզուներու եւ զանազան երկիրներու: Քրիստոնեայ կրօնքը հիմնուեցաւ Նիկիոյ մէջ: Կարճ ժամանակէ մը վերջ պատահեցաւ Կաթողիկէ եւ Ուղղափառ եկեղեցիներու բաժանումը: Իսկ միջնադարեան շրջանին Մարթին Լութէրի (Martin Luther) կազմած «բողոքական» եկեղեցիէն վերջ բաժանումները ալ աւելի արագ ընթացան: Նմանաւանդ վերջին հարիւր տարուայ ընթացքին հազարաւոր «Քրիստոնեայ» յարանուանութիւններ, աւելի ճիշդը աղանդներ, գոյացած են: Արդեօք ա՞ս էր Յիսուսի սորվեցուցածները: Արդեօք մարդ արարած ե՞րբ պիտի արթննայ իր հոգեկան թմբիրէն: Պարտ ենք սորվիլ Յիսուսի սորվեցուցածները եւ պարտ ենք ըլլալ Աստուածասէր եւ Աստուծապաշտ, ոչ թէ կրօնասէր եւ կրօնապաշտ: Այլուր գրուած է, թէ ինչ է Աստուածապաշտութիւնը եւ Աստուծասիրութիւնը: Պարտ ենք յարգել այլ կրօնքները: Անոնք, որոնք տարբեր կրօնքներու հանդէպ որոշ հետաքրքրութիւն ունին, պէտք է ազատ զգան զանոնք ուսումնասիրել: Իսկ եթէ հասկնան անոնց մէջ թագնուած իմաստասիրութիւնները, բայց ոչ հարեւանցի, մակերեսային հասկացողութեամբ մը, պիտի տեսնեն, թէ անոնք ալ կը քարոզեն նոյն իմաստասիրութիւնները, այն ինչ որ Յիսուս սորվեցուց: Բայց «Ես»-ը՝ սատանան խորամանկ է եւ խաբեբայ: Եթէ այլ կրօնքներ ուսումնասիրենք, ան մեզի կու տայ մեր կրօնքին դաւաճանած ըլլալու գաղափարը եւ դժոխք երթալու վախը: Այդ ազդեցութեամբ ան կը յաջողի մեր միտքերը գոցել: Գոց

միտկող ալ մարդ անկարող կ'ըլլայ նոյնիսկ իր պատկանած կրօնքին մէջ թագնուած իմաստասիրութիւնները հասկնալ: Ան միայն մակերեսային հասկացողութեամբ մը կ'ապրի իր կեանքը, աւելի ճիշդ է ըսել, հոգեւոր յառաջացման մէջ, կը վատնէ իր կեանքը: Ժողովըրդային ասացուածքը կ'ըսէ. «Մարդու միտքը նման է անկարգելի (parachute), եթէ չբացուի օդուս չունի»:

Ի՞նչու բոլոր կրօնքները իրենց առաքելութեան մէջ ձախողած են: Որովհետեւ, դժբախտաբար, կառավարութիւններ, իմբակներ եւ անհատներ, շահագործելով ամբոխներու խաւարամտութիւնը, խաբած են ընդհանուր ժողովուրդը օգտագործելով կրօնքներուն խեղաթիւրուած եւ մակերեսային մեկնաբանութիւնը եւ այդ մեկնաբանութիւնն ալ ներկայացնելով որպէս ճշմարտութիւն: Այս ձեւով իրենց համար կարելի եղած է ընդհանուր մարդկութիւնը աւելի դիւրաւ կառավարել, զանոնք իրենց անձնական շահերուն համար օգտագործել եւ ստրուկի նման գործածել:

Պարտ ենք խաւարամտութիւնը վանել, մեր միտքերը «բանալ» եւ ջանք չիւնայել ու յարատեւ պրպտել մինչեւ որ գտնենք եւ հասկնանք մեր ճշմարիտ վարդապետին՝ Յիսուս Քրիստոսի սորվեցուցած բոլոր իմաստասիրութիւնները ինչպէս նաեւ կատարելութեան ուղին եւ չչեղիլ այդ ուղիէն ու կերտել համապատասխան կենցաղ մը: Այս ուղղութեամբ մարդուն ամենամեծ թշնամին իր «Ես»-ն է: «Ես»-ը կը քանդէ մարդուն խիղճը ու անհատին կատարելութեան ուղիին մէջ յառաջացման արգելք կ'ըլլայ եւ անոր հոգեկան կործանումին ճամբան կը բանայ: Յիսուսի սորվեցուցած կենցաղը՝ կատարելութեան ուղին, պէտք է ըլլայ մեր «կրօնք»-ը, այսինքն հասկնալ մեր պատասխանատուութիւնները եւ մեր պարտականութիւնները ու զանոնք լաւագոյնս կատարել: Մանուկները եւ պատանիները պարտ են յար-

գել երէցները, իրենց ծնողքը եւ իրենց ուսուցիչները, եւ գերազանցել ուսման մէջ: Զօրաւորները պարտ են պաշտպանել տկարները, իսկ ուսեալներն ալ՝ ընկերութիւնը առաջնորդել դէպի բարգաւաճում, ինչպէս նաեւ դէպի կատարելութեան ուղին: Ճշմարիտ «կրօնք»-ը Աստուծոյ ձգտիլ եւ Աստուծոյ հետ ըլլալն է: Աստուած ներկայ է հոն, ուր սէրը գոյութիւն ունի: Աստուած ներկայ է հոն, ուր մարդկայնականութիւնը եւ յարգանքը գոյութիւն ունին: Աստուած ներկայ է հոն, ուր թէ՛ բնութեան եւ թէ՛ անասուններու հանդէպ սէր, հոգատարութիւն եւ կարեկցութիւն գոյութիւն ունին: Աստուած ներկայ է հոն, ուր անձնուիրում կայ: Նման «կրօնք»-ի մը հետեւիլ կը նշանակէ կեանքը վերածել շարունակական «աղօթք»-ի մը: Միտքը կեդրոնացած միշտ ներկային վրայ, որ յաւիտեան է, ինչպէս նաեւ Քրիստոսի վրայ, որ անձին ճշմարիտ էութիւնն է: Սէրը, հաւատքը, վստահութիւնը եւ համբերութիւնն ալ կ'ըլլան անհատին իր կեանքին ընթացքին կերտած առաջնակարգ առաքինութիւնները, ինչ որ Աստուած գտնելու ճամբան կը բանայ: Երբ մարդ Աստուծոյ կը «նայի» առանց որեւէ ուրիշ շահագոգութեան, կ'անդրադառնայ թէ Աստուած ալ միշտ իրեն կը նայի: Երբ անձը իր անհատականութեամբ կը նուիրուի իր ներքին Քրիստոսին, միշտ Աստուծոյ օգնութեան կ'արժանանայ՝ առանց որեւէ ծիսակատարութեան: Երբ անձը իր հաւատքը կը դնէ իր ներքին Քրիստոսին վրայ առանց որեւէ վարանումի, Աստուած ալ իրեն կը յայտնէ իր կեանքին նպատակը՝ իր պատասխանատուութիւնները եւ իր պարտականութիւնները: Այդ հաւատքը ան է, թէ Աստուած է մեր կեանքերուն մէջ միակ գործողը, ամէն մի պատահարին եւ կացութեան ստեղծիչը, գոյատեւեցնողը եւ դադրեցնողը: Այս հիման վրայ մարդն ալ կը հասկնայ Երրորդութեան իմաստը: Ի՞նչ է այդ նուիրումը: Մար-

դուն Աստուծոյ տալիք ամենայարգելի նուէրը ճշմարիտ ապաշխարութեան արցունքի մը կաթիլն է: Ահա՛, աս է ճշմարիտ պաշտամունքի նշանը: Երբ անձը իր անհատականութիւնը Քրիստոսի կը նուիրէ, պարտ է զոհած ըլլայ յոխորտանքը, ինքնահաւանութիւնը, սնապարծութիւնը, բարկութիւնը եւ ազահութիւնը ու ձերբազատուած այս բոլորէն: Այս ուղղութեամբ ներողամտութիւնն ալ կարեւոր է: Ներել կարելի է երբ դիմացինը դատաստանի չենք ենթարկեր: Կարեւորը կրօնքը չէ, այլ՝ մարդուն բռնած դիրքը՝ իր կենցաղը, որ կ'ըլլայ Յիսուսի սորվեցուցած ճշմարիտ «կրօնք»-ը: Մարդ այնպէս է ինչպէս ինք ուրիշները կը «տեսնէ»: Մարդ, առանց անդրադառնալու, թէ՛ ինքն իրեն եւ թէ՛ ուրիշներուն յանցաւոր եղած ըլլալու զգացումը կու տայ: Ներողամտութիւնը անհատին իր «Ես»-ը անտեսած ըլլալու փաստն է: Ահա՛, աս է փրկութեան ճամբան: Եւ ի՞նչ է փրկութիւնը: Ան Աստուծոյ հետ ըլլալն է: Մարդ որքան իր անհատականութիւնը Աստուծոյ՝ ներքին Քրիստոսին կը մօտեցնէ ինք ալ նոյնքան դրախտին կը մօտենայ: Իսկ երբ անհատականութիւնը հեռանալով Քրիստոսէն կը յարի «Ես»-ին, ինք ալ կ'ըլլայ դժոխքին մէջ: Երկինքը՝ դրախտը Աստուծոյ հետ մէկ ըլլալն է: Երբ միականութենէ կը հեռանանք դժոխքին կը մօտենանք:

Մարդ, Աստուծոյ իրեն շնորհած իմացականութիւնը պարտ է պատշաճ կերպով գործածել: Պարտ է Աստուածաբանութիւն ուսումնասիրել եւ Աստուծոյ եւ կեանքի նկատմամբ գիտութիւն ամբարել: Բայց եթէ ինք անձնապէս ճշմարտութեան փորձառութիւնը չունենայ, բոլոր ստացած գիտութիւնները անօգուտ կ'ըլլան: Ինք պէտք է հասկնայ, թէ այս աշխարհը պատրանք մը՝ երազ մըն է: Երբ ինք փորձառութիւնը կ'ունենայ ներքին Քրիստոսի Լոյսին միայն այն ատեն խաւարամտութիւնը կ'անհետանայ եւ ինք ալ կը ցոլացնէ այդ Լոյսը:



-Բ-

ՅԱՒԵԼՈՒԱԾԱԿԱՆ

- Ա - Վազգէն Ա. Կաթողիկոսը Պատգամները
- Բ - Խաչատուրեան Պատրիարքի Խօսքը
- Գ - Աստուծոյ Ծննդայելը
- Դ - Կոմիտասի Խօսքը Մանկիկ Վազագանի
- Ե - Մաշտոցի Կարօքը - ռսանախոր
- Զ - Երկոթեան Ստղատերը
- Է - Խորհրդոյն Տալայ Լսեցան - Ա
- Ը - Խորհրդոյն Տալայ Լսեցան - Բ
- Թ - Մերոյն եւ ճանճը
- Ժ - Մոռիթեան Օրէնքը
- ԺԱ - Ծղկաքարոյ Խորհրդոյն Ընդառնանք
- ԺԲ - Կոյ Գան ու Կ'երթան - ռսանախոր
- ԺԳ - Մարտի եւ Իր Անշնանաւորութիւնը
- ԺԴ - 24 Պատգամաւոր Խորհրդաժողովուրդներ



Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատգամները

**Մեզանից շատ-շատերը եկեղեցի են գնում
բուն նպատակից բոլորովին հեռու
տրամադրութիւններով և մղումներով:**

**5 այդպիսի պարագաներ, ըստ ՎԱԶԳԷՆ Ա. Ամենայն
Հայոց Կաթողիկոսի՝**

ա) Ոմանք եկեղեցի են գալիս իբրև ժամանցի տեղ,
այնպէս, ինչպէս զբօսանքի կամ թատերական ներկայաց-
ման պիտի գնային:

բ) Ոմանք էլ եկեղեցի են գալիս մարդ տեսնելու,
խօսակցելու կամ իրենց հագուստներն ու զարդերը
ցուցադրելու: Այսպիսի մարդկանց, բնականաբար, պէտք է
դատապարտել, ապա սովորեցնել եւ բացատրել եկեղեցի
գալու բուն նպատակը:


գ) Կայ մարդկանց մի ուրիշ դաս, որ եկեղեցի է
գալիս ըստ ասանդական սովորութեան, մի տեսակ որպէս
ազգային պարտականութիւն, որպէս հայկականութեան
ապացոյց իրենց խղճի և ուրիշների առջեւ: Բնական է, որ
դատապարտելի չէ այս պատճառը, եւ լաւ է, որ մարդ
սովորութեան վերածի որեւէ լաւ գործունէութիւն, սակայն
պայմանով, որ այդ սովորութիւնը լոկ ձեւ չդառնայ, այլ իր
խորքի իմաստն ու նշանակութիւնը պահի, որ մեր մի շարք
հաւատացեալների պարագան չէ: Եկեղեցին իր խորքով
զուտ հոգեւոր, տիեզերական մի երեւոյթ է, իսկ իր ձևով՝
ազգային: Ուրեմն, ակներեւ է, թէ եկեղեցի գալու հոգեկան

անհրաժեշտութեան զգացումը չպետք է շփոթել ազգային գիտակցութեան հետ:

դ) Շատերը եկեղեցի են գալիս հրապուրուած Ս. Գրքի ընթերցումների եւ զանազան աղօթքների բանաստեղծականութեամբ, մեր եկեղեցու զմայլելի երաժշտութեամբ կամ եկեղեցու քանդակների և նկարների ձեւերից, գոյներից ու պատկերներից: Իրապէս գեղարուեստական հաճոյք են պատճառում այս բոլորը եւ ամէն մի քաղաքակիրթ մարդու հոգում խօսում են խորապէս եւ նրան բարձրացնում են դէպի գեղեցիկի աշխարհը, սակայն սխալ պիտի լինէր այդ գեղարուեստական հաճոյքը շփոթել կրօնական նպատակի հետ: Աղօթքների ու երաժշտութեան բանաստեղծութիւնը լոկ միջոցներ են բուն հոգեւոր ապրումին բարձրանալու համար:

ե) Վերջապէս՝ կան մարդիկ, ովքեր եկեղեցի են գալիս աղօթելու համար ի ցոյց մարդկանց կամ իրենք իրենց խաբելու, այդ մի քանի աղօթքներով իրենց մեղքերը մաքրուած կարծելով: Ու գոհ, յաղթական տրամադրութեամբ մեկնում են տուն: Ահա՛, Աստուծոյ բարութիւնը շահագործող մարդու մի տիպար, որ խաբում է ոչ միայն իր նմաններին, այլ նաեւ իր սեփական խիղճը: Այդպիսին է Գրիգոր Զոհրապի <<Մեղայ, Տէր>> նորավեպի մէջ նկարագրուած հերոսը:





ԳԱՐԵԳԻՆ Ա. ՏՐԱՊԵՉՈՒՅԻ
(ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ)

Օրմանեան Պատրիարքի «Հայոց Եկեղեցին» գրքին չորրորդ տպագրութեան աւթիւ (Պուհնոս Այրէս-1949) Գարեգին Եպս. Տրապիզոնի (Խաչատուրեան) իր նախաբանի վերջընթեր պարբերութեան մէջ հետեւեալը կը գրէ.

*«Մեր ժողովուրդը, ցաւալի է Հաստատել, չի ճանչնար իր Եկեղեցին անոր էութեան մէջ:
Նոյն իսկ, ամօթ է խոստովանիլ, թէ Հոգեւորական դասէն եւս շատեր, մանաւանդ ծիսակատարութեան Համար լոկ կոչուած քահանաներ, անտեղեակ են այն իրական արժէքներուն – իսկական նկարագրին՝ որոնցմով մեր Եկեղեցին կը դառնայ պատկառելի – պաշտելի Հաստատութիւն»:*



ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌ-ԱՅԵԼԸ

Աստուծոյ նուիրուիլ, ինքզինքը անոր ծառայութեան տալ ամբողջովին եւ տեւական կերպով այս է ահա կրօնական կեանքին, այսինքն ճշմարտութեան, արդարութեան եւ բարութեան գաղափարին արժանաւոր նուիրումը, որուն մէջ չկան այլ եւս անշարժացած կենցաղի մը նիւթական, մեքենական եւ ծիսական ձեւակերպութիւնները, այլ մշտաշարժ, հոգ եռանդն եւ գործօն կեանքի մը բովանդակ ոգեւորութիւնը: Ի մի բան, Աստուծոյ ծառայելու յօժարութիւնը պարտականութեանց կեանքի մը լծուելու յանձնառութիւնն է. ...

Երբ հաւատքն է պարտականութեանց ներշնչողը, մարդիկ անկեղծ կ'ըլլան իրենց բարեկամութեան մէջ, յարատեւող՝ բարեսիրութեան մէջ, անձանձրոյթ՝ աղօթքի մէջ, անխոնջ՝ աշխատութեան մէջ, զուարթառատ՝ նուիրատուութեան մէջ, անդանդաղ՝ հիւրասիրութեան մէջ, ներողամիտ՝ թշնամեաց հանդէպ, համբերող՝ նեղութեանց միջոցին, անյիշաչար՝ հակառակորդներու վերաբերմամբ, բարեաւ յաղթական՝ չարին վրայ:

Ամեն. Տ. Թորգոմ Արք. Գուշակեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի
Չրդ կիրակի մեծի պահոց, 1937

Կոմիտասի խօսքը՝ Վահագն անունով մի տղայի Մանկիկ Վահագնին



«Միրուն մանկիկ, կայտառ մանկիկ, օր մը դուն
ալ պիտի մեծնաս ու մարդ դառնաս: Քեզի մէկ պզտիկ
խրատիկ մը տամ:

Միտքդ մարզէ ազնիւ գիտութիւններով եւ մաքուր գեղարուեստով: Իմաստունի ծովածաւալ մտքէն որսա՛ գիտութիւն եւ գեղարուեստագէտի սրտէն բարի բարի զգացումներ: Գրքերն ու ձայները մեռած հոգիներու մտքի ու սրտի տապաններն են:

Հետեւէ բնութեան դպրոցին միտքդ բաց ու կարդա՛ անոր ծով միտքը, որու մի կաթիլն է քո մէջ Արարչի շնորհած ձիրքը. Միրտդ բաց եւ թող արձագանգէ հոն նորա խորհրդաւոր ու գաղտնի ձայները, զի քո սիրտն այլ անոր անեզր ձորի մէկ փոքրիկ ձորակն է, որ շնորհել է քեզ երկինքը՝ հոն պաշարելու ազնիւ զգացումներ:

Կարդա՛ բնութեան գիրքը, որ կարելի չէ ո՛չ մէկ բանով գրել, ո՛չ մէկ ձայնով արձանագրել, ո՛չ մէկ գոյնով նկարել եւ ո՛չ մէկ գործքով դրոշմել...: Բնութեան երեւոյթներն անհունապէս յեղյեղուկ են. այնտեղ կեանք կայ, որ չէ կարելի անկենդան տատերով ու ձայներով, գրիչներով ու բրիչներով, վրձիններով ու չափերով դրոշմել – պարփակել. նա նման է արշալոյսին, միշտ թարմ, միշտ նոր, միշտ կենդանի, միշտ կենսատու, միշտ մայր ու ծնող մտքի ու սրտի եւ քեզի պէս մանուկներու նման միշտ մանուկ ու պարզուկ:

Միրուն մանկիկ, պայծառ մանկիկ, սիրէ բնութիւնը...»:

Կոմիտաս Վարդապետ
1911, Յունիսի 10, Աղեքսանդրիա



ՄԱՀՈՒԱՆ ԿԱՐՕՏԸ

*Ով իմ անձս, ինչո՞ւ էս վրդոված
Մօտ է օրը երբ պիտի ոչնչանաս:*

*Ցաւերդ վերջանան պիտի,
Սիրտդ ալ Հանգչի պիտի:
Մարմինդ թաղուի պիտի,
Ու անունդ ալ մոռցուի,*

*Բայց Հոգիդ պիտի թռչի
Ու աստղդ ալ պիտի փայլի:*

*Սօլօ Նիկոսեան
Նոյեմբեր 2018
Թորոնթօ, Գանատա*



ԵՐԿՈՒՈՐԵԱԿ ՍԱՂՄԵՐԸ

Մօր մը արգանդին մէջ երկուորեակ սաղմեր կ'աճին: Անոնց միջեւ հետեւեալ «խօսակցութիւն»-ը տեղի կ'ունենայ:

ա- «Կը հաւատաս որ երկունքէն (delivery) յետոյ դեռ կեանք կա՞յ»:

բ- «Հարկաւ ինչո՞ւ չէ: Երկունքէն յետոյ հարկ է որ գոյատեւում ըլլայ: Հաւանական է որ մենք հոս ենք, որպէսզի մենք զմեզ պատրաստենք այդ ապագային»:

ա- «Պարապ խօսք: Երկունքէն վերջ կեանք գոյութիւն չունի: Ի՞նչ տեսակ կեանք կրնայ ըլլալ որ»:

բ- «Չեմ գիտեր, բայց վստահ եմ այստեղէն աւելի լուսաւոր պիտի ըլլայ: Կարելի է ոտքով պիտի քալենք եւ բերանով ալ ուտենք: Կարելի է ուրիշ զգացումներ ալ պիտի ունենանք, որ հիմա չենք հասկնար»:

ա- «Ըսածդ անիմաստ է: Քալել անկարելի է եւ բերանով ուտե՞լ: Թիծաղելի: Մնունդը եւ այն բոլորը, որ մեզի պիտոյ է պորտալարէն (umbilical cord) կու գայ: Պորտալարը շատ կարճ է, որով տրամաբանական չէ եւ անկարելի է, որ երկունքէն ետք որեւէ կեանք գոյութիւն ունենայ»:

բ - Պնդեկով. «Կը խորհիմ թէ բան մը կայ: Շատ հաւանական է, որ այս ներկայ կեանքէն տարբեր ըլլայ: Կարելի է այս պորտալարին այլեւս պէտք պիտի չունենանք»:

ա - «Ըսածներդ անիմաստ են: Եթէ հոն կեանք ըլլար, ինչո՞ւ որեւէ մէկը անկէ ետ չէ եկած: Երկունքը կեանքին վերջն է եւ երկունքէն վերջ ոչինչ կայ, միայն մթու թիւն, լուս թիւն եւ մոռացութիւն, մեզի անօգուտ»:

բ - «Լաւ, վստահ չեմ, բայց գիտեմ, թէ մեր մօր պիտի հանդիպինք եւ ան մեզի պիտի հոգայ»:

ա - «Մա՞յր: Դուն իսկապէս մօր գոյութեան կը հաւատա՞ս: Իսկապէս շատ ծիծաղելի ես: Եթէ մայրը գոյութիւն ունի, հիմա ուր է՞ ան»:

բ - «Ան ամենուրէք է, մենք իրմով չըջապատուած ենք: Մենք անոր մէկ մասնիկն ենք: Մենք իր մէջ է որ կ'ապրինք: Առանց իրեն այս մեր «աշխարհ»-ը գոյութիւն պիտի չ'ունենար»:

ա - Ես գինք չեմ տեսներ, ուրեմն տրամաբանական է ըսել, թէ ան գոյութիւն չունի:

բ - «Երբեմն երբ լուս թեան մէջ կեդրոնանաս եւ մտիկ ընես, իր ներկայութիւնը կը զգաս եւ իր ձայնը կ'իմանաս, կարծես վերէն կը խօսի:

Աս, կը թուի ըլլալ Աստուծոյ գաղափարին ամենալաւ մէկ բացատրութիւնը :



«Ամեն օր քալեցեք...» Խորհուրդներ Տալայ Լամային

ԱՐԵՒԵԼՔ--10 Փետրուար 2019 , 22:11



Տալայ Լամա. 6 տարեկանին զինք հեռացուցած են հայրենի տունեն: 15 տարեկանին ան արդէն ռազմական առաջնորդ էր, իսկ 25 տարեկանին Թիպէթէն Հնդկաստան կը փախչի: Հիմա Տալայ լաման 83 տարեկան է, բայց անոր դէմքին կնճիռներու փոխա-

րէն ժպիտ է:

Ամէն օր 10-էն 30 վայրկեան քալեցեք: Երբ կը քալէք, ժպտեցեք:

Ամենաքիչը 10 վայրկեան անցուցէք լռութեան մէջ:

Ամենաքիչը 7 ժամ քնացէք:

Խաղեր շատ խաղցէք: Գիրքեր շատ կարդացէք:

Ժամանակ յատկացուցէք եոկայի, մտախոհութեան (Meditation), աղօթքի համար, քանի որ անոնք կը վերականգնեն եռանդը:

Ժամանակ անցուցէք 70-էն բարձր եւ 6 տարեկանէն վար մարդոց հետ:

Շատ երազեցէք:

Աւելի շատ կերէք այն սնունդները, որոնք կ'աճին ծառերու վրայ եւ աւելի քիչ գործարաններու մէջ արտադրուածները:

Շատ ջուր խմեցէք:

Օրական ամենաքիչը երեք մարդու ստիպեցէք, որ ժպտին:

Ձեր թանկագին եռանդը մի ծախսէք բամբասանքի վրայ:

Մոռցէք անցեալի խնդիրները:

Հարազատներուն եւ ընկերներուն մի յիշեցնէք անցեալի վէճերը:

Այդ կը խանգարէ ձեր ներկայ երջանկութիւնը:

Ձեր գլխէն դուրս նետեցէք բացասական մտքերը եւ նայեցէք միայն դրական կողմերուն:

Հասկցէք վերջապէս, որ կեանքը դպրոց է, եւ դուք եկած էք, որ սորվիք:

Խնդիրները դպրոցական ծրագրի մէկ մասն են:

Անոնք կ'աւարտին, ինչպէս ուսողութեան դասաժամը, իսկ ձեռք բերած գիտելիքները կը մնան յաւերժ:

Կեանքը շատ կարճ է, որպէսզի ան ծախսէք ատելութեան վրայ:

Մի ատէք:

Ձեր անձը շատ լուրջ մի ընդունիք:

Ոչ ոք ձեզ լուրջ կ'ընդունի:

Բոլոր վէճերու մէջ յաղթելու կարիք ամենեւին ալ չկայ:

Սորվեցէք ընդունիլ, որ դուք սխալ էք:

Հաշտուեցէք ձեր անցեալին հետ, որպէսզի ձեր ներկան չփճանայ:

Մի համեմատէք ձեր կեանքը ուրիշներու հետ:

Դուք ոչինչ գիտէք անոր մասին:

Ձեր սիրելին մի համեմատէք ուրիշ անձի մը հետ:

Ոչ ոք, բացի ձեզմէ, չի հոգար ձեր երջանկութեան մասին:

Ներել սորվեցէք:

Թէ ինչ կը մտածեն ուրիշները ձեր մասին, ձեր գործը չէ:

Յիշեցէք՝ իրավիճակը որքան ալ լաւ կամ վատ ըլլայ, այն պիտի փոխուի:

Ձեր աշխատանքը ձեր մասին չի հոգար, եթէ դուք հիւանդանաք:

Ընկերները կը հոգան:

Մի կորսուիք:

Ազատուեցէք այն բոլորէն, որ անօգուտ է, տգեղ կամ չ'ուրախացնէր:

Նախանձը ժամանակի վատնում է:

Մէկ է, դուք արդէն ունիք այն ամէնը, որ ձեզի պետք է, մնացածն ալ ժամանակի ընթացքին կ'ունենաք:

Լաւագոյնը դեռ գալիքի մէջ է:

Կարեւոր չէ, թէ ինչպէս կը զգաք. արթնցէք, հագուեցէք եւ շփուեցէք մարդոց հետ:

Ճիշդ վարուեցէք:





Արթնձիր Աշխարհ

Ատուհսանձիր միայն երբ **յուսրուս ես**
ե՛ք ո՞չ թե՛ **երեստիկն սարեպնէն** առաջ:

Հննգստեան Կոշոռի **բաշոռի յուբերո՛ւ**
ե՛ք ո՞չ թե՛ **Հինգ միլիոն տղարո՛ւ:**

Երբ **աշիե՛ծի** առջ մը,
քան թե՛ **Ձեռնարկո՛ւ:**

Միրաւարոռի **սերբին գեղե՛ծկոռիթեան**
ե՛ք ո՞չ թե՛ **գեղե՛ծի** առջի մը:

Ծնողքի թող Հոյարս ըլլան,
գիտնալո՛ւ թե՛ դոռն **որքան երջանիկ ես**
ե՛ք ո՞չ թե՛ քո՛ **Հաւաճի՛ր քանակոռիթեամբ:**

Ունե՛ծիր **անկեղծ ընկերներ,**
քան թե՛ **բաժնաթի՛ր ընկերներ:**

Երջանկոռիթիւն գճիր **յուրջին մէջ,**
քան թե՛ **յուերճանքիւն:**

Գճիր մէկը, որ **առանձ** աւոր **Ձեա Կրնար** աւորիլ,
քան թե՛ առջ մը որոռն **Հէ՛՛՛՛՛ Կրնան** աւորիլ:



ՄԵՂՈՒՆ ԵՒ ՃԱՆՃԸ



Փորձագետներ խուժք մը մեղդուններ եւ խուժք մըն ալ ճանճեր երկար շիշի մը մէջ կը դնեն, որուն գոց կողմը դէպի լոյս դարձուած է, իսկ բաց կողմն ալ՝ դէպի մութ: Բոլոր մեղդունները դէպի լոյս կ'երթան, բայց շիշին այդ կողմը գոց ըլլալուն դուրս չեն կրնար ելլել: Այս միջոցին ճանճերը դէպի շիշին բաց կողմը կերթան, դուրս կ'ելլեն եւ կ'անհետանան: Շիշին դէպի բերնին մութ կողմը մէկ մեղու իսկ չ'երթար եւ շիշին գոց կողմը՝ ապակիին դէմ, դուրս ելլելու համար անդադար կը պայքարին, բայց՝ ապարդիւն:

Այս երեւոյթին առջեւ մարդ կ'եզրակացնէ թէ մեղդունները ճանճերէն աւելի բթամիտ են ու ճանճերը աւելի «խելացի»: Այս եզրակացութիւնը սխալ է: Մարդ արարած շատ լաւ գիտէ թէ մեղդունները ճանճերէն շատ աւելի «խելացի», մաքուր ու աշխատասէր միջատներ են, իսկ ճանճերը՝ գէշ, ազտոտ եւ հիւանդութիւն տարածող: Մարդ մեղուէն կը վախնայ, որովհետեւ ան կարող է խայթել, բայց ճանճէն՝ կը գանի:

Մէկ քիլօ մեղր շինելու համար 40,000 մեղդուններ 6,000,000 ծաղիկ կը պտըտին ու մէկ փեթակ մը մեղրով լեցնելու համար 100,000,000 ծաղիկի հիւթը կը հաւաքեն եւ 100,000 քմ կը թռչին: Երբ խուժքի մեղդուններէն մին, որ աս կ'ընէ, հարց չի տար, թէ միւս մեղդունները իրեն չափ կ'աշխատին թէ ոչ: Անոնք իրարու հանդէպ բացարձակ վստահութեամբ կը գործեն, կեդրոնացած միայն իրենց նպատակակէտին վրայ: Անոնք այս բոլորը կ'ընեն անհասկնալի եռանդով մը եւ ծուլութիւնը ինչ է չեն գիտեր: Որեւէ մեղու մը նոյնիսկ միտքէն անգամ չ'անցներ իր պատրաստած մեղրէն իրեն համար բաժին

մը մէկդի դնել: Անոնք արեւածագին հետ կը սկսին գործել եւ մայրամուտին ալ հանգստանալ: Ոչ մէկ մեղու «ինչո՞ւ թագուհին համար պիտի աշխատիմ» ըսած եւ գործաթող ընել չէ խորհած: Որեւէ մեղու իր փեթակը չէ թողած ու ուրիշ փեթակ մը չէ գացած: Անոնք ուրիշ փեթակներու մեղուներուն նախանձելով անոնց վրայ չեն յարձակած: Անոնք ուրիշ մեղուներու ըրածը չեն քննադատած եւ չեն յանդգնած անոնց վրայ ինքզինքնին վերակացու հռչակել: Բնաւ իմացած է՞ք, թէ մեղու մը ուրիշ մեղու մը խայթած ըլլայ: Անոնք միշտ խոհեմութեամբ գործած են: Իրենց փեթակը վեցանկիւն բիւրեղի ձեւով կարուցած են, որպէսզի քիչ մեղրամոմով տոկուն՝ բոլոր մեղրին ծանրութիւնը կրող, փեթակ մը չիսնեն:

Բոլոր անոնք, որոնց ուղին դէպի «Լոյս» է, միշտ խոչնդոտներու եւ դժուարութիւններու կ'ենթարկուին: Բայց անոնք հակառակ բոլոր դժուարութիւններու իրենց առաքելութենէն չեն շեղիր ու չեն յուսահատիր: Անոնք, «Լոյս»-ին հասնելու համար չեն դադրիր յարատեւ փորձելէ ու մաքառելէ: Ասոնք կը յաջողին քաջ, կամ քի տէր, սէրով լի, պարկեշտ եւ իրենց սկզբունքներուն եւ նպատակակէտին հաւատարիմ ըլլալ: Անոնք կարող են նման առաքիւնութիւններով ապրիլ, որովհետեւ իրենք իրենց անձերուն՝ էութեան բացարձակ յարգանք ունին: Ան որ ինքզինք կը յարգէ, կը յարգէ նաեւ ընկերութիւնը՝ համայն մարդկութիւնը ինչպէս նաեւ բնութիւնը:

Ճանձերը մութին մէջ առիթէն օգտուելով կը բախին: Շիշին բերնին խաւարի բացուելը իրենց համար կարեւորութիւն չունի: Անոնք խորամանկ, ծածկամիտ, առանց որեւէ սկզբունքի հաւատարիմ, անխիղճ եւ վախկոտ, կ'ապրին միայն իրենց համար: Իրենց համար միայն իրենց գոյատեւումը կարեւոր է:

Ուր որ ուտելիք կայ եւ ուր որ հանգիստ կայ հոն կ'երթան: Անոնց համար խաւարը կարեւորութիւն չունի: Նմանապէս մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնն ալ կ'ապրի նման հայեացքով մը եւ անհոգ է թէ խաւարամտութեամբ կ'ապրի:

Եթէ մեղուէն պրծիլ ուզէք, ան կը պայքարի եւ արգելքներուն կարեւորութիւն չի տար: Իր ջանքը միայն իր նպատակին հասնիլն է: Երբ կը խայթէ, իր մահը գիտնալով կը պայքարի եւ ուրիշներուն համար կը մեռնի, որով իր նպատակը փեթակը եւ միւս մեղուները պաշտպանել է: Իսկ ճանճերը վախկոտ միշտ կը բախին, բայց յետոյ կարծեք քեքեւելով կը լպրծին ու ետ՝ նոյն տեղը, կու գան եւ իրինց աղտոտ ոտքերով մեր ճաշերուն կամ թեւերուն վրայ կը քալեն:

Ինչ կը խորհինք, մեղու մը ըլլա՞նք թէ ոչ ճանճ:

Սէր ու յարգանք բոլոր անոնց, որոնք կը ջանան մեղուի մը նման ապրիլ եւ իրենց նպատակակէտը «Լոյս»-ին հասնիլն է եւ բոլոր անոնց, որոնք իրենց շուրջը «Լոյս» կը սփռեն:

Թարգ. Վ. Ս.



ՄԻՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ

Բնութեան մէջ ամէն ինչ որ գոյութիւն ունի, ի վերջոյ կը դառնայ իր Արարչին՝ Աստուծոյ ծոցը՝ հո՛ն, ուրկէ ելաւ եւ ստեղծուեցաւ: Բնութեան մէջ ո՛չ մէկ բան կը կորսուի, այլ կը ձեւափոխուի միշտ պահելով իր սկզբնական էութիւնը:

Մարդն ալ՝ մարդ էակն ալ, որպէս բնութեան մէկ մասը, նո՛ յնպէս, ինչպէս ամէն ստեղծուած, կը դառնայ իր Աստուծոյն ծոցը՝ ուրկէ ստեղծուեցաւ՝ կեանք եւ գոյութիւն ստացաւ:

Բնութեան մաս կազմող ամենէն աննշան տարր մը, գոր օրինակ, դաշտի վրայ բուսած խոտը բնութեան այս անայլայլելի եւ մշտնջենական օրէնքին կը հպատակի եւ կերթայ կը միանայ իր Արարչին, եւ կ'ամբողջանայ միութեան մէջ:

Երկրի վրայ գտնուող ամէն էութեան, եւ նաեւ «մարդ»ուն, հարցում մը կարելի է հարցնել. «Ուրկէ՞ կու գաս», «ո՞ւր կ'երթաս», եւ «ո՞ւ վ դուն, մա՛րդ». հաւասարապէս խորհրդաւոր հանելուկային հարցում մըն է ասիկա. «ուրկէ՞ կու գաս, ո՞ւր կ'երթաս...»: Ահաւասիկ ամբողջ կեանքին նպատակը եւ իմաստը կ'ամփոփուի այս պարզ բայց խորհրդաւոր, եւ ո՛րքան խորհրդաւոր՝ այնքան անպատասխանելի հարցումին մէջ: Ո՞վ երբեք կը համարձակի յստակ պատասխան մը տալու այս կենսական հարցումին:

Զանազան գիտնականներ, իմաստասէրներ փորձեցին «պատասխան» մը տալ, բայց անոնց պատասխանները բաւարար չեղան վերցնելու խորհրդաւորութեան քօղը «անպատասխանելի» հանելուկին վրայէն: Ան մնաց միշտ «խորհուրդ»:

Գիտութիւնը մարդկային մտքին հունաւորութեան մէջ սահմանափակուած է:

Եւ այս «հանելուկ»ին պատասխանը Աստուծոյ մտքին մէջ պահուած է: Մա անուրանալի իրողութիւն մըն է թէ՛ տիեզերքը, իր ամբողջ պարունակութեամբը Աստուծոյ մտքովը միայն ըմբռնելի է: Կամ, մարդ «Աստուած ըլլալու է», որպէսզի կարող ըլլայ իր հարցումներուն գոհացուցիչ կերպով պատասխաններ տալ:

Եւ այս «ինքնահաւան մարդ արարած»ը Աստուած չեղած՝ Աստուծոյ մտքին տիրանալ կը ջանայ...: Անկարելիին ետեւէն ինկած է, եւ օր մը պիտի խոնարհի իր մտքին սահմանաւորութիւնը խոստովանելով...:

Ուստի պէտք է Աստուծոյ մտքին մօտենալ «հաւատք»ով եւ ո՛չ թէ գիտութեան յաւակնութեամբ, բաւական է մարդու համար «հաւատալ» թէ՛ Աստուած գիտէ իր բոլոր հարցումներուն պատասխանները: Այս ուղղութեամբ, հաւատքը գիտութեան չափ, եւ գիտութենէն իսկ աւելի՛, արժէք ունի:

Բա՛ւ է հաւատալ եւ ըսել՝ թէ Աստուծմէ եկաւ մարդը եւ Աստուծոյ կը դառնայ ի վերջոյ: Այս իսկ պատճառով, Աստուծոյ եւ մարդու միջեւ «միութեան կապ»ը անբաժանելի՛ է:

Չոր օրինակ, բնութեան մաս կազմող աննշան տարր մը, մոլորուն խոս մը այդ «միութեան օրէնք»ին ապացոյցն է: Ուրկէ՞ կցուած էր սա խոտը որ Բնութեան մէկ ուժին միջամտութեամբը, խզուեցաւ իր «մօր»մէն, եւ իբրեւ անօգնական որբ մը՝ մոլորեցաւ ճգմուելու մարդոց ոտքերուն տակ եւ ծեծուելու անձանօթ հարուածներէն եւ քայքայուելու, մեռնելու, ոչնչանալու...:

Անողորք, անխուսափելի վճիռը արձակուած է ամէն նիւթեղէն գոյութեան դէմ. «Հող էիր, հողի՛ն դառնաս»: Նոյնպէս եւ սա դողդոջուն աննշան խոտին դէմ...:

Եւ այս խոտը հողի կը վերածուի եւ կը վերսկսի իր կեանքի շրջանը, երբ ծառի մը արմատներուն սնունդ կըլլայ եւ կը վերածուի «ստեղծագործիչ ուժ»ի մը, որ կը յայտնուի՝ անգամ մըն ալ որպէս բոյս մը, խոտ մը դարձեալ թերեւս...: Ահաւասիկ, ա՛յս է կեանքի մշտնջենաւորութիւնը, շարունակականութիւնը՝ անվերջ գոյութիւնը, կենդանութի՛ւնը:

Ի՛նչ խորհրդաւոր այլակերպութիւն. խոտը հողէն էր, հողին դարձաւ: Բնութեան մէջ «միութեան անյեղի օրէնք»ը իր տեղը կը գտնէ այսպէս ահաւասիկ: Ամէն ինչ կը վերադառնայ իր սկզբնական վիճակին, իր սկզբնաւորութեան, միանալու անոր՝ ուրկէ ելած է:

Նոյնպէս՝ մարդ էակը. ինչպէս խոտը հողին՝ նո՛յնպէս մարդը կը դառնայ իր Աստուծոյն ծոցը՝ ուրկէ ելաւ: Ահաւասիկ, ա՛յս է «միութեան օրէնք»ը:

Ուստի մարդ արարածին բնութեան խորագոյն տենչը եւ նպատակն է դարձ Աստուծոյ:

«Ինչպէս եղջերուն ջուրի վտակներուն կը փափաքի՝ նոյնպէս ալ իմ անձս քեզի կը փափաքի, ո՛վ Աստուած»:

«Իմ հոգիս հանգիստը պիտի չգտնէ մինչեւ որ Քեզ գտնէ...»:

«Ո՛վ Աստուած իմ... առտուանց եւ քեզ կը փնտռեմ. հոգիս կը ծարաւի Քեզի, եւ մարմինս Քեզ կը փափաքի...»:

«Առտուանց սպասողներէն աւելի՛ իմ անձս Տիրոջը կը սպասէ...»:

Ահաւասիկ վկայութիւններ Սուրբ Գիրքէն՝ թէ մարդ ինչպէ՛ս կը փափաքի Աստուծոյ միանալ...:

Արդարեւ, այս մշտնջենաւոր եւ անայլայլելի «միութեան օրէնք»ը՝ որ յայտնի՛ է ֆիզիքական աշխարհին մէջ՝ նաեւ բացայայտ կերպով ապացուցանելի է հոգեւոր փորձառութիւններու աշխարհին մէջ:

Մարդու «ճակատագիր»ը զատող ուժերու ենթակայ չէ՛ երբեք. բնութիւնը միշտ միացնող՝ ամբողջացնող հանգամանք մը ունի, անոր մէջ ամէն ինչ կը միանայ՝ «մէկ» կըլլայ, ինքն իր մէջ կամբողջանայ, քանի որ «Մէկ»էն է եկած...:

Արդարեւ, աստուածային արարչութեան ծրագիրն ալ հաստատուած է «միութեան» վրայ, քանի որ Ծրագրողը Մէ՛կ է եւ անբաժանելի՛:

Ուստի ամէն արարած եւ անշուշտ մարդը կոչուած չեն միայն փրթելու այն բունէն՝ որուն փակչած էին, եւ դարձեալ իր եղած տեղը չորնալու, փճանալու եւ ոչնչանալու չէ՛ն ծրագրուած: Ապրիլ, աճիլ, զարգանալ եւ ի վերջոյ վերադառնալ իր բունին եւ միանալ անոր: Եւ այս իմաստով իսկ, մարդուն ժառանգութիւնը Աստուած է՝ յաւիտենական կեանքը: Իսկ «յաւիտենական կեանք» կը նշանակէ միանալ իր բունին, ամբողջանալ եւ երանութեան հասնիլ:

Կեանքը իրակա՛ն է. այո՛, տարակոյս չկա՛յ այդ մասին, բայց նաեւ «խաբուսիկ» այդ իրականութեան մէջ: Մարդուս վիճակը չէ կարելորը, այլ՝ այն կապը՝ որ ունի, եւ կը պահէ, ի՛նչ վիճակի մէջ ալ որ ըլլայ, Աստուծոյ հետ: Այդ «կապ»ը հաւաստի՛քն է յաւիտենական կեանքին...:

ՄՍՇՏՈՑ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԸՆԴՄԷՋԷՆ



Մեծապէս ուրախացի՛ր, ո՛վ Սիոնի աղջիկ,
Յնծութեամբ աղաղակէ՛, ո՛վ Երուսաղէմի աղջիկ.
Ահա քու թագաւորդ քեզի կու գայ.
Անիկա արդար ու փրկիչ է,
Հեզ է ու իշու վրայ հեծած
Եւ իշու ձագի, ասանակի վրայ:
(Զաք. 9.9)

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ մեր, Մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Ս. Քաղաք Երուսաղէմ մուտքը՝ Ծաղկազարդի կիրակիի սեմին կը գտնուինք: Դժբախտաբար վերջ տալու ստիպուեցանք բոլոր հաւաքական արարողութիւններուն, ի պէտս ժողովուրդի առողջութեան: Մեր հոգիները անշուշտ աւելի ուրախ պիտի ըլլային այս սուրբ օրերուն, երբ կը պատրաստուինք մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութեան, եթէ այս վատահամբաւ հիւանդութիւնը ամբողջ աշխարհի ժողովուրդներու սիրտերն ու հոգիները չայլեկոծէր ու վրդովանք չպատճառէր՝ ցուցնելով մահուան դալկահար ու սարսափելի երեսը... Եւ մենք կարենայինք հաւաքուիլ մեր սուրբ տաճարներու երդիքին տակ:

Քայքայ իբրեւ հաւատացեալ, այս օրերուն փոխանակ վախնալու՝ ամուր կանգնելու ենք, քանի մեր Տէրը ամէն առիթով մեզ կը վատահեցնէ այն հաստատ ու զօրաւոր

խօսքովը՝ ըսելով. «Մի՛ վախնաք»: Մահն է, որ միշտ մեր սիրտերը կը վախցնէ, իսկ Աւետարանը կը մխիթարէ հետեւեալ խօսքերով՝ «Ո՛ւր է, ո՛վ մահ, քու խայթոցդ, ո՛ւր է, ո՛վ գերեզման, քու յաղթութիւնդ» (Ա Կորնթ 15:55):

Երբ կը պատրաստուինք Քրիստոսի հրաշափառ Յարութեան, կը յիշենք նաեւ այն պատգամը, թէ մահը Քրիստոսի յարութեամբ արդէն պարտուած է:

Ինչպէս գիտենք, այս կիրակի Օաղկազարդ է եւ պիտի տօնենք Տէր Յիսուսի Ս. Քաղաք Երուսաղէմ յաղթական մուտքը: Ս. Գիրքի ամէն մէկ պատմուածք բարոյական եւ մարդասիրական պատմութիւններ փոխանցելէ աւելի, կը պատմէ Աստուծոյ այն մեծ ծրագիրը, որ պատրաստուած է մեր փրկութեան համար: Յիսուս նախքան Երուսաղէմ քաղաք մուտքը, պատուիրեց իր աշակերտներուն, որպէսզի երթան այն գիւղը, ուր պիտի գտնեն էշ մը եւ աւանակ մը ու զանոնք քակելով բերեն իրեն: Երբ աշակերտներ բերին զանոնք՝ Յիսուս իշու վրայ հեծնելով մուտք գործեց Երուսաղէմ քաղաք: Յիսուսի կը հետեւէր հոծ բազմութիւն մը, որ մեծ մասամբ կը բաղկանար իր աշակերտներէն ու իրեն քարոզները լսող հետեւորդներէն, որոնք բարձրաձայն կ'աղաղակէին. «Ովսա՛ննա, Որդի Դաւթի: Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ. Ովսա՛ննա ի բարձունս» (Մտ 21:9): Մատթէոս աւետարանիչ մեզի կըսէ. «Այս բաները եղան, որպէս զի կատարուի մարգարէին խօսքը որ կըսէ. Ըսէք Սիոնի աղջկան. “Ահա քու Թագաւորդ քեզի կու գայ, հեզ ու իշու վրայ հեծած եւ իշու ձագի, աւանակի, վրայ”» (Մտ 21:4): Այսպէսով Աստուծոյ մարգարէներու կողմէ մարդոց յայտնուած ծրագիրները կիրականանային, նաեւ այս դէպքերը զարմանք չէր պատճառէր անոնց, որոնք Ս. Գիրքերը կարդացած եւ Յիսուսի բերանէն ալ լսած էին:

Ուրեմն եթէ այս տրամաբանութեամբ կարդանք Ս. Գիրքը եւ պրպտենք այն գիրերը, որոնք գրուած են Յիսուսի

մասին, նոյնպէս մենք ալ պիտի հասկնանք Աստուծոյ ծրագիրը: Միրելի ժողովուրդ մեր, եկէք, տեսնենք, թէ ինչ կը պատգամեն այս բոլորը մեզի, որպէսզի աշակերտներու ու այդ օրուան ժողովուրդի նոյն ուրախութիւնն ու ապրումը մենք եւս ունենանք:

Աստուածաշունչի Դատաւորաց բաժնին մէջ կը կարդանք, որ երբ Աստուծոյ ժողովուրդը կը հեռանար Աստուծմէ, Աստուած կը մատնէր զանոնք իրենց թշնամիներուն (13:1): Այն թշնամիներուն, որոնք մինչեւ այդ օր իրենց շուրջ ըլլալով հանդերձ բնաւ վնաս չէին կրցած պատճառել անոնց: Բայց երբ Աստուծոյ կը դառնային ու կը քալէին Տիրոջ խօսքերով միշտ կը յաջողէին իրենց թշնամիներուն դէմ: Պատմութեան մէջ թշնամին միայն զենքերով զինուած բանակները չեն եղած, այլ եղած են այն ամէն մէկ փորձանք, որոնք կը սպառնան մարդոց, ընտանիքներու ու ժողովուրդներու: Անտարակոյս սատանան եւս մեր ամենամօտիկ եւ ամենամեծ թշնամին է, նաեւ անհաւատութիւնը կրնանք աւելցնել թշնամիներու ցանկին մէջ:

Զաքարիա մարգարէի այն խօսքերը, որ իբրեւ բնաբան ունինք, առնուած են իններորդ գլուխէն, որ կը սկսի «Տիրոջը խօսքին պատգամն է» ասոյթով: Շատ անգամ փոխանակ մեր կարդացած ու լսած խօսքերուն իմաստին թափանցելու, պարզ ասոյթ մը ըլլալով կրնկալենք զանոնք, մանաւանդ ոչ թէ մեզի ուղղուած, այլ դարեր առաջ ապրող մէկու մը կամ այդ օրուան ժողովուրդներու ուղղուած կը կարծենք եւ մեզի համար իմաստ չի ներկայացնէր: Աւելի՛ն. մեզի առասպելական կը թուին: Պէտք չէ մոռնալ, որ եկեղեցիներու մէջ Աւետարան կարդալէ առաջ նոյն խօսքը կը կրկնէ եկեղեցւոյ պաշտօնեան «Ասէ Աստուած» ըսելով: Այսինքն Աստուած է որ կը խօսի: Ս. Գիրքի, Աստուածաշունչի էջերուն մէջէն Աստուած է, որ կը խօսի մարդոց հետ: Երբ խօսողը Աստուած է, զարհուրելու, սթափելու եւ ականջ տալու ենք, քանի մեր Արարիչն ու

Տէրն է, որ կը խօսի մեզի հետ: Ինչպէս մեր խօսքը մեզ կը ներկայացնէ, Աստուծոյ խօսքն ալ Աստուած կը ներկայացընէ, քանի Աստուծոյ խօսքը եւ Աստուած մէկ են: Նոյնը ըսաւ Յիսուս. «Ես եւ Հայր մէկ ենք» (Յով10:30): Ուրեմն Աստուած կը խօսի մարդոց հետ, նաեւ իրեն երկիւղածութեամբ մօտեցողներու ու աղօթողներու ալ կը լսէ. (Եսայի, 66:2): Աստուած կ'ուզէ իր խօսքով մարդը փրկել սատանայի ներգործութենէ, իսկ սատանան Աշխարհի միջոցով մարդը շարունակ իր Տիրոջմէն հեռու կեանքի մը կառաջնորդէ: Սատանան աշխարհի միջնորդութեամբ՝ ամէն առիթով կ'ուզէ իշխել մարդոց վրայ ու մեղքի խայթոց մահուամբ կը սպառնայ մարդկանց, պատերազմներով, հիւանդութիւններով եւ ամէն տեսակի սարսափազդու սարքերով կը ստեղծէ խուճապ, որպէսզի այդպէսով անոր հնազանդիկնք ու ան մեր վրայ թագաւորէ:

Աշխարհ չէ անշուշտ այս բաները ընողը, այլէ՛ աշխարհ ձեռք անցընող սատանան, ինչպէս ուզեց նաեւ փորձել Յիսուսը նոյն սուտերով:

Իսկ Յիսուս կը պատուիրէ, որ աշխարհի մէջ ըլլանք, բայց աշխարհի սատանայի ապրանք չդառնանք ու սպասենք միշտ անոր թագաւորութեանը՝ «Եկեցէ արքայութիւն Քո»: Ճիշդ այս պատճառով Յիսուս կ'ըսէր. «Մի վախնաք մահէն այլ վախցէք այն բանէն որ մահուրնէ յետոյ գեհեկի կը մատնէ, որ այդ զօրութիւնը միայն Աստուած ունի» (Մատթ 10:28): Բոլոր սուրբեր եւ Աստուծոյ ապաւինողներ այսպէս քալեցին եւ դիմադրեցին թշնամին:

Ներկայիս գրեթէ բոլոր աշխարհ զօրութեամբ ու զիտութեամբ, նաեւ այլ յառաջադիմութիւններով կը պարծենայ, սակայն պարտուած է ամենափոքր թշնամիի՝ ժահրի մը ձեռքը, ինչպէս Իսրայէլի այդ օրերուն Աստուծմէ հեռացողներ պարտուեցան իրենց թշնամիներուն: Այնպէս ինչպէս Սամփսոն իր աստուածատուր ուժը անտեսեց ու իր իսկ ծաղրած թշնամիներուն մատնուեցաւ: (Դատա-

ւորաց 16): Պետք է գիտնալ, թէ մարդկութիւնը չեղած ալ գիտութիւնը կար: Մարդկութիւնը գիտութեան գաղտնիքները ժամանակի ընթացքին փորձառութեամբ ձեռք ձգած է. գիտութիւնը մարդոց հնարքը եւ ստեղծագործութիւնը չէ երբեք: Ուրեմն, Եկեղեցին գիտութեան հակառակ տեսնել տրամաբանական չէ, ինչպէս շատեր կը փորձեն տեսնել: Եկեղեցին Աստուած կը ճանչնայ իբրեւ գիտութեան Տէրը, նաեւ իբրեւ իմաստուն բժիշկ եւ ճարտարապետ, զոր կրնայ միայն բժշկել մեր հոգիի եւ մարմնի բոլոր հիւանդութիւնները: Մենք իբրեւ Նոր Սիովնի որդիներ եւ Աստուծոյ ժողովուրդ, աղօթենք Աստուծոյ, որպէսզի փրկէ մեզ մեր փոքր ու մեծ թշնամիներէն:

Ուրեմն, Յիսուս իբրեւ մեր Աստուածը ու Փրկիչը Երուսաղէմ մուտք կը գործէ հեզ եւ խոնարհ իշու վրայ, իր կնքած նոր ուխտի արիւնով իրեն հաւատացող բոլոր ժողովուրդները փրկելու եւ թշնամին պարտութեան մատնելու: Եկեք, մեր հոգեւոր աչքերը բանալով, ելլենք մեր երկնային Թագաւորը՝ Յիսուս Քրիստոսը դիմաւորելու: Աստուծոյ ու Անոր թագաւորութեան սպասողներու երջանկութիւնը այս է: Մեր ապրելակերպն ալ այս փորձանքը իբրեւ առիթ ընկալելով եւ ապաշխարութեան միջոցի վերածելով, նաեւ մեր մեղքերը աչքի առջեւ ունենալով, աստուածավայել կեանք մը ապրելու հետեւինք:

Վերջապէս բոլորս վստահ ըլլանք, որ Աստուած իմաստութիւն պիտի տայ բոլոր անոնց, որոնք կոյզն մարդոց կեանքը փրկել: Բոլոր գիտնականներ ձեռք ձեռքի տքնաջան կ'աշխատին, նոյնիսկ իրենց կեանքը ի սպաս դնելով, նաեւ Աստուծոյ օգնութեամբ՝ հասակով փոքր, վնասով մեծ թշնամին պարտելու համար:

ԿՈՐԻԻՆՍ Ա. ՔԱՀԱՆԱՅ ՖԷՆԷՐՃԵԱՆ
Շաբաթ, Ապրիլ 4, 2020



ԿՈՒԳԱՆ ՈՒ Կ'ԵՐԹԱՆ

Չախորդ օրերը ձմրան նման կու գան ու կ'երթան,
Վհատելու չէ, վերջ կ'ունենան, կու գան ու կ'երթան.
Դառն ցաւերը մարդու վրայ չէն մնար երկար,
Որպէս յաճախորդ շարուէ շարան կու գան ու կ'երթան:

Փորձանք, Հալածանք եւ նեղութիւն ազգերի գլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան, կու գան ու կ'երթան.
Աշխարհ բուրաստան է յատուկ, մարդիկը՝ ծաղիկ.
Որքա՞ն մանիշակ, վարդ, պալաստան կու գան ու կ'երթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ սկարը տխրի,
Փոփոխակի անցքեր զանազան կու գան ու կ'երթան.
Արեւը առանց վախնալու ցայտում է իր լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կու գան ու կ'երթան:

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական կու գան ու կ'երթան.
Աշխարհը Հիւրանոց է, Ջիւան, ազգերը Հիւր են,
Այսպէս է կանոնը բնական, կու գան ու կ'երթան:

Աշուղ Ջիւանի



Շարական Բարեկենդանի

Այսօր յօրինակ նախաստեղծին Ադամայ,
Որ դրախտին փափկութեան
ուրախանայր ընդ հրեշտակս,
Ցնծասցուք և մեք ի յօրհնութիւնս հոգևորս:
Այսօր ի խորհուրդ աստուածաստեղծ նախահօրն,
Որ ի պտղոյն աղենայ ճաշակելով զուարճանայր,
Ճաշակեսցուք և մեք զպատուիրանս Աստուծոյ:
Այսօր ի տիպ պատմութեանին առաջնոյ,
Որով պճնեալ զարդարիր ի փառս մարդն առաջին,
Չարդարեսցուք և մեք աստուածային օրհնօք:
Ցնծա՛, Մարիամ, արեգական արդարութեան արևելք.
Եւ աղաչեա զամ ի քէն զծնեալն Աստուած վասն մեր,
Չի դարձուցէ վերստին զմեզ ի
դրախտին ժառանգութիւն:

Թարգմանություն.

Այսօր նախաստեղծ Ադամի նման,
Որ դրախտում ուրախանում էր հրեշտակների հետ,
Մենք էլ հրճվենք հոգևոր օրհներգությամբ:
Այսօր աստվածաստեղծ մեր նախահոր հետ,
Որ եղեմի պտուղներից ճաշակելով ուրախանում էր,
Մենք էլ ճաշակենք ԱՍՏՈՒ ՊԱՏՎԵՐՆԵՐԸ:
Այսօր անմեղության առաջին պատմութեանով,
Որով պճնված՝ փառավորապես
զարդարված էր առաջին մարդը,
Նաև մենք զարդարվենք Աստվածային օրհներով:
Ցնծա՛, Մարիամ, արդար արեգակի արևելք.
Եվ քեզից ծնված Աստծուն աղաչիր մեզ համար
Որ դրախտի ժառանգությանը
վերստին արժանի անի մեզ:

ՄԱՐԴԸ

ԵՒ ԻՐ

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՀՈԳԻՆՆ +

- «ԵՍ»-Ը

Հոգին, կ'ուզէ համայն մարդկութեան ծառայել:

Եսը, կ'ուզէ ինքզինքին ծառայել:

Հոգին կ'ուզէ ներքին ճշմարտութիւնը փնտռել:

Եսը, կ'ուզէ ուրիշներէն զնահատուիլ:

Հոգին, կեանքը կը նկատէ որպէս նուէր:

Եսը, կ'ուզէ կեանքը տեսնել որպէս մրցակցութիւն:

Հոգին կ'ուզէ համայն մարդկութեան ապահովութիւնը:

Եսը, կ'ուզէ իր անձին ապահովութիւնը:

Հոգին ներհայեցող է:

Եսին, ուշադրութիւնը դէպի «դուրս» է:

Հոգին ինքզինք բաւարարուած կը նկատէ:

Եսը, միշտ աւելիին կը ցանկայ:

Հոգին, յաւիտենական է:

Եսը, մահկանացու է:

Հոգին, սիրոյ կը ձգտի:

Եսը, ցանկութեան կը ձգտի:

Հոգին, իմաստութիւնն է:

Եսը, իմաստութիւն կը փնտռէ:

Հոգին, ճամբորդէլէ կ'ախորժի:

Եսը, մրցանակէ կ'ախորժի:

Հոգին, ապաքինման պատճառն է:

Եսը, ցաւին պատճառն է:

Հոգին, Աստուծոյ կը յարի:

Եսը, Աստուած կը մերժէ:

Հոգին, յաւիտենական լիութիւնն է:

Եսը, միշտ ազահ է:

Հոգին, մենք՝ միասնականութիւնն է:


Եսը, նոյն ինքն անձն է:

Թարգ. Վ.Ս.



*Ահա՛, մարդուն իր ֆիզիքական
առողջութեան համար զատած
նախընտրանքը:*


*Այն ինչ որ կ'ընէ ֆիզիքականին համար
կ'ընէ իր հոգեւոր կեանքի մէջ եւս, իր
հոգեկան առողջութեան համար:*




ՆԵՐԿԱՅ ՄԱՐԴՈՒՆ ԿԵՆՅԱՂԸ ԵՒ ԻՐ ԿՐՕՆՔԸ

*Աստուած մարդուն տուած է այն ինչ որ
անոր պիտոյ է: Բայց ան, իր ձրիաբար
ստացածը, հետեւաբար ունեցածը, ինք իր
ձեռքով կը կործանէ, առանց
անդրադառնալու, թէ ան Աստուծոյ մէկ
արտայայտութիւնն էր:*

*Ան իրեն կուրք մը կը շինէ եւ յարատեւ
կ'աղօթէ՝ որպէսզի ստանայ այն ինչ որ ինք
առաջուց ունէր եւ զայն կործանած էր:*




ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ



ԶԳԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԻՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Երբ մարդուն մեջ այս երեքը համահաստար եւ համերաշխ կերպով կը գործեն, մարդն ալ իր հաւասարակշռութիւնը չի կորսնցնէր եւ խաղաղ կ'ըլլայ:



«... Մինէ կարեցէ՞ կոյր կորի՛ առաջնորդել,
ոչ ապա՛նէն երկո՛ւնն ՚ի խորխորաց անկանիցնն» :
«... Կոյրը կընա՞յ առաջնորդել կոյրը. միթէ երկո՛ւքն
ալ փոքը պիտի չլընա՞ն» : (Ղա-կառ 9 : 39)

**Մարդոց մեծամասնութեան հետեւած
«Հողեւոր ճանապարհը» :**




Միակ ճշմարտությունը Աստուած է եւ Աստուած ստեղծած է բոլոր տիեզերքը, Հետեւաբար ստեղծագործութեան մեջ ամէն ինչ Աստուծոյ մեկական արտայայտութիւնն է: Ու որ Աստուծոյ կը պատկանի, արդէն Աստուծոյ Հետ է, Հետեւաբար ամէն անհատ ալ արդէն Աստուծոյ Հետ է: Բայց այս ճշմարտութիւնը մարդու գիտակցութեանն խոյս կու տայ: Կեանքին նպատակը այդ գիտակցութեան տիրանալն է: Օր մը ամէն մարդ այդ գիտակցութեան պիտի տիրանայ:

Այդ գիտակցութեան տիրանալ՝ «Հոգեւոր ճանապարհէն ընթանալ», մարդուն Համար շատ պարզ է եւ ուղիղ: Բայց մարդ ինք իր «ձեռքով» այդ ճանապարհը կը փակէ եւ այդ գիտակցութեան Հաննելու Համար ոլորածալ ճանապարհ մը կ'ընտրէ եւ ինքզինք երկար տառապանքի կ'ենթարկէ:




ՄԱՐԴՈՒՄ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՄ


Մարդը իր կեանքի ընթացքին, մինչև մահ, դրամին ետեւէն «կը վազէ» ու կը վատնէ իր կեանքը, փոխանակ իրեն տրուած այդ կեանքը արժէքաւորելով՝ զայն օգտագործելով իր կեանքին բուն նպատակին համար, ինչ որ իր հոգեկան բարեշրջումն է Քրիստոսի իր մէջ յայտնուլթեան իրականացումը:



Ընկերությունը՝ կառավարությունները իրենց սրամադրության տակ գանուող բոլոր լրատուական միջոցները՝ հեռատեսիլ, ձայնասփիւռ, լրագիր, համակարգիչ ... օգտագործելով, նոյնիսկ մեր մանկությունն սկսեալ, մեր միտքերը կը գրաւեն եւ մեզ կը կառավարեն ըստ իրենց հասկացողության ու իրենց կամքին, որպէսզի հանրությունը իրենց յարմարի եւ իրենց շահաբեր ըլլայ եւ չհակառակի:




*Աշխարհ իր խաղաղութիւնը պիտի
գտնէ միայն այն ատեն, երբ
մարդուն մէջ սիրոյ զօրութիւնը
գերիշխէ իշխելու զօրութեան:*




*Մարդ իր մանկության օրերուն
տրամաբանելու կարողութիւնը չունի,
սակայն բոլորին Հանդէպ սիրով լի է:*

*Բայց երբ տարիքի յառաջացումով տրամաբանելու
կարողութիւնը կը կազմուի,
կը սկսի ամէն ինչ դատել,
քան թէ առանց դատելու ամէնուն Հանդէպ
սէր տաճել:*



*Հակառակ այն իրողութեան որ
անտառը հետզհետէ կը նօսրանար,
ծառերը միշտ ի նպաստ կացինին
քուէարկեցին, խորհելով թէ
կոթը փայտ էր, որով՝ իրենցմէ է:*



Ասրե֊որ շէ,
Եւ ցրամատրելի խնի՛ խնի՛
միջոցներ՝ աղբի֊րներ ունիս,
այնխան ասրեն որ
անոնցմէ օգտուիլը շէս Գիտեր,
անոնի էրբեի Բաւականաշափ պիտի
շըլլան :



... Եւ երբ կեանքը կը կարծուի՝ կը շարունակուի իր բնականոն հունին մէջ ողջերու մեռած աշխարհին մէջ, մեռածներու ողջ աշխարհը ծնունդ կու տայ մեծերու, որոնք այլեւս պիտի չպատկանին ողջ-մեռածներու դասուն, այլ մեռնող-ողջերու գունդերուն մաս պիտի կազմեն:

Գիտե՞ք, կեանքի երկարութիւնն ու կարճութիւնը չէ՛ որ կեանքին իմաստ եւ որակ կու տայ, որովհետեւ ժամանակագրական երկարութիւնն ու կարճութիւնը ո՛չ մէկ ձեւով կրնայ իմաստաւորել կեանքը, որովհետեւ կը տեսնենք անհատներ, որոնք կ'ապրին աւելի քան ութսուն տարիներ... ապարդիւն եւ անօգուտ, մինչ ուրիշներ իրենց երիտասարդ տարիքին, իրենց կարճ կեանքի ընթացքին այնպէս կ'որակաւորեն իրենց կեանքը, որոնց պտուղը կարելի կ'ըլլայ քաղել աւելի քան տասնամեակներ:

**Մենք՝ լարդիկսս ԿԸ ԿԱՐԾԵՆԸ, ԽԷ
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԱՐԱՐԱԾՆԵՐՆ
ԵՆԸ:**

**ԱՍՕԹ, ԱՍՕԹ ԱԵԶԻ, ՈՐ «ՎԱՅՐԻ» ԿԵՆՂԱՆԻՆԵՐԸ
ԿԸ ԿՈՏՈՐԵՆԸ:**



*Երբ եգ առիւծ մը եւ իր ձագը արօտադաշտը
կ'անցնէին, տաքութեան չափազանցութեան
հետեւանք ձագը քալելու դժուարութիւն կ'ունենայ:*

*Փիղ մը կ'անդրադառնայ, թէ ձագը պիտի
մեռնի, որով զայն կ'առնէ իր պատիճին վրայ եւ
անոր մօրը հետ քալելով զայն կը փոխադրէ
մինչեւ ջրակոյտ:*

Եւ մենք այդ կենդանիները վայրի կ'անուանենք:

*Ահա՛, «քաղաքակրթեար» մարդոց հիանալի դաս
մը, որոնք անընդհատ աննպատակ կը կռուին եւ
կը մեռնին:*



ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

**ԱՆՀԱՏԻՆ ԻՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ
ԱՆՊԱՄՆԵՐՈՒՄ ԱԿԱՏԱՎԱՔ ՈՒՆԵՅԱԾ
ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՄ ԱՐՐՈՅ ԱՐՊԻՒՄ Է,
ԻՍԿ ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՀԱՆՊԵՊՂԱՐԳԱՆԵՐ:**

**ԱՆՀԱՏԻՆ ԻՐ ԱՆՁԻՆ ԱԿԱՏԱՎԱՔ
ՈՒՆԵՅԱԾ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՄ ԾՆՈՒՄ
Կ'ԱՌՆԷ ԻՆՔՆԱԿԱՏԱՀՈՒԹԵՆԷ,
ԻՍԿ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆՊԵՊ՝ ՀԱՄԱՏԵՒ:**

ԱՐՄԵՐԹ ՏԷ ՍՈՒԶԱ




ԲԱՐԿՈՒԹՒՒՆ

**Մի՛ բարպանար:
Բարկոութիւնը անտի չանար
վնասանար է:**

**Եթէ դուք արդար ես, բարպանալու
կարիք ՉԿԱՅ,**

**Իսկ եթէ սոսալ ես՝
Իրախոխքը ՉՈՒՆԻԱ:**

ԱՐՄԵՐԹ ՏԷ ՍՈՒԶԱ



ԺԱՄԱՆԱԿԸ

**Անձեալի մասն շահ մի՛ հորհրո,
Արձուհը Կը բերէ:**
**Առագայի մասն աբելի մի՛ հորհրո,
Վանս Կը բերէ:**
**Աորէ՛ ներկան ժողտերես,
Որախոռիթիս Կը բերէ:**

ԱՐՄԵՐԹ ՏԷ ՍՈՒԶԱ



ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

ԿԵԱՆԵՐԻ ՄԷՋ ԱՄԷՆ ԴԷՊՔ
ՄԵՉԻ ՏՐՈՒԱԾ ԴԱՍ ՄՐԱ Է:
ԱՆՈՆԵ ԿՐԱՆ ԱԵՉ ԱԻԼԻ ԿԱԿԾԵՅՆԵԼ,
ԿԱՄ ԱԻԼԻ ԶՕՐԱՅՆԵԼ:
ԸՆՏՐՈՒԹԻՒՄԸ ՄԵՐԱ Է՝
ՈՂԱԼ ԶՈՆ, ԿԱՄ յԱԴԹԱԿԱՆ:

ԱՐՄԵՐԹ ՏԷ ՍՈՒԶԱ



ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ

Ո՛՞՞ ԱՄԷՆ ԳԵՂԵՅԻԿԸ
ԲԱՐԻ Է ՈՒ լԱԿ,

ԲԱՅՅ ԱՄԷՆ ԲԱՐԻ ԵՒ լԱԿ՝
ԳԵՂԵՅԻԿ:

ԱՐՄԵՐԹ ՏԷ ՍՈՒԶԱ



ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆ


**ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՉ
ԿԸ ՔԱՊՅՐԱԾԱՆԷ,**

**ԻՍԿ ՔԱՊՅՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ
ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՊԲԻՐՆ Է:**

ԱՐՄԵՐԹ ՏԷ ՍՈՒՋԱ



ԹՇԱԱՄԻՊ
ՉԷՉՈՔԱՅՆԵԼՈՒ
ԼԱԻԱԳՈՅՆ ՁԵԻՐ
ՉԻՆՔ ՔԵՉԻ
ԲԱՐԵԿԱՄ
ՊԱՐՁՆԵԼՆ Է:






**ԽՈՐՈՒՆԿ ՔՈՒՆԸ
ԱՆԳԻՏԱԿԻՉ
ԽՈԿԱԼՆ Է,
ԻՍԿ
ԽՈԿԱԼԸ՝
ԳԻՏԱԿԻՉ
ԽՈՐՈՒՆԿ ՔՈՒՆԸ:**





**ԵՐԲ ՈՒՐԻՇԱԵՐՈՒՄ ԾԱՄԲԱՆ
ԼՈՒԱԿՈՐԵԱ,
ՔՈՒ ԾԱՄԲԱԿ ԱԼ
ԿԸ ԼՈՒԱԿՈՐՈՒԻ:
ՊՈՒՍՍՍ**



**ԵԹԷ ԿԸ ՓԱՓԱԳԻՄ
ԿԵՆՅԱՂԴ ՓՈՒՏԵԼ,
ՆԱՄ ՓՈՒՏԷ
ՔՈՒ ԽՈՐՀԵԼԱԿԵՐՊԸ**

**Այն ինչ որ թշնամի մը
ԿՐՆԱՅ ՎՆԱՍԵԼ ԻՐ ԹՇՆԱՄԻՆ
ԵՒ**

**Այն ինչ որ ՀԱԿԱՌԱԿՈՐԴ ՄԸ
ԿՐՆԱՅ ՎՆԱՍԵԼ ԻՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ,
ՉՉԱՊՈՒԱԾ ՉԱՐԱՄԻՏ ՄԻՏՔ ՄԸ
ՇԱՏ ԱԻԵԼԻ ՎՆԱՍ ԿՐՆԱՅ ՀԱՍՅՆԵԼ ԱՆՀԱՏԻՆ:**

**Այն ինչ որ մայր մը, Հայր մը ԿԱՄ ՈՒՐԻՇ
ՐՆՏԱՆԵԿԱՆ ԱՆԴԱՄ ՄԸ ԿՐՆԱՅ ՕԳՆԵԼ ԱՆՀԱՏԻՆ,
ՈՒՊՂԱՄԻՏ ՄԻՏՔ ՄԸ
ՇԱՏ ԱԻԵԼԻ ՕԳՏԱԿԱՐ ԿՐՆԱՅ ԸԼԼԱԼ ԱՆՀԱՏԻՆ:**

Պիսսս



ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՒՆ ՄԷՋ ՀԻՆԳ ՆԱԽԱԳԻԾ

ՋԱՆԱԼ ՈՒԷԷ ԿԵԱՆԵՐ ԶՎԱՍԱԵԼ:

ՄԻՋՈՅ - ԶԱՊԵԼ ԲԱՐԿՈՒԹԻՒՄ, ԱՏԵԼՈՒԹԻՒՄ ԵՒ ՎԱՆՍԸ

ՋԱՆԱԼ ԱՄԷՆ ՏԵԱԿ ԳՈՂՈՒԹԵԱՆ ԽՈՒՍԱՓԻԼ:

ՄԻՋՈՅ - ԶԱՊԵԼ ԱԳԱՀՈՒԹԻՒՄ, ԱՆԽԱՆՁԸ ԵՒ ԻՇԽԵԼՈՒ ՓԱՓԱԳԸ

ՋԱՆԱԼ ԱՏԵՂԱԻՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՄՆԵՐԸ ԶՎԱՍԱԵԼ:

ՄԻՋՈՅ - ԶԱՊԵԼ ԿԻՐՐԸ ԵՒ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱՐԱՅՆ ԾԱՆՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ


ՋԱՆԱԼ ԱՄԵՆԵԻՆ ԱՆՍԱԼ ԶԽՕՍԻԼ:

ՄԻՋՈՅ - ԽՈՒՍԱՓԻԼ ՍՈՒՏ ԽՕՒԵԼԷ, ԲԱՆԲԱՍԱՆՔԷ, ՀԱՅՀՈՂԵԼԷ, ԱՆԻԾԵԼԷ, ԶՐՊՍԱՐՏՈՒԹԵԱՆ, ԶԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ, ԿՈՇՏ ԿԱՄ ԽԻՍՏ ԽՕՒԵԼԷ ԵՒ ԺԱՆԱԿԱՃԱՌ ԱՆՊԷՏ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՄՆԵՐԷ:

**ՋԱՆԱԼ ԱՐՐԵՅՈՒՅԻՉ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՄՆԵՐ
ԳՈՐԾԱԾԵԼԷ ԽՈՒՍԱՓԻԼ:**

ՄԻՋՈՅ - ԱՐՐԵՅՈՒՅԻՉ ԸՄՊԵԼՐՔՆԵՐԷ, ԳԵՆԷ, ԳԱՐԵՅՈՒՄԷ ԻՆՉՊԵՍ ԱՆԷ ԹԱՐԵՅՈՒՅԻՉ ԿԱՄ ԱՐՏԵՐ ՎՐԱ ԱԶՊԵՅԻԿ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՄՆԵՐԷ ԽՈՒՍԱՓԻԼ:

Պmissu



ԱՇԱ՛,
ԱՍ Է
ՄԱՐԴԿԱՅԻՆ
ԽԱԲԱՐԱՄՏՈՒԹԵԱՆ
ԱՐԴԻԻՆՔԸ



**ԴՈՒՄ ԵՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԸ
ՄԱԿԱՅՆ ԵՒ ԱՅՄՈՒՄՆ ՏԱԿԱԻՆ
ԿՐ ԽՈՐՀԻՄ
ԹՔ ՈՒՐԻՇ ԲԱՆ ՄՐ ԵՄԱ ԿԱՂ**

Xuefeng Yicun Յ.Ք. 822-902

ՏԷՐ ՀՈՎՈՒԵԱԾԷ ԶԻԱ, ԵՒ ԻՆՁ ԻՆՁ ՈՉ ՊԱԿԱՍԵԱԾԷ:



**ԹԷՊԷՏ ԵՒ ԳԱԱԾԻԾ ԷԱ Ի ՍԷՉ
ԱՏՈՒԵՐԱԾ ՍԱՀՈՒ, ՈՉ ԵՐԿԵԱՅԾ
Ի ՉԱՐԷ ԶԻ ԴՈՒ ՏԷՐ ԸՆԴ ԻԱ ԷԱ:**

